



276-2001

147

JUN 2010

«[illegible] ՄԻ ԶԱՐԿՆ ԵՄ ՀՈՌ ԿՈՒՈՒԻ...»

2 013

Բագին

ԱՄՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

ԼԲ. ՏԱՐԻ 9-12 ՍԵՊՏ.-ԴԵԿՏ. 1993 ՊԷՅՐՈՒԹ

ԱՆԿՐԿՆԵԼԻՆԵՐՈՒ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԸ...

Մեր մամուլին, մանաւանդ այս ճակատի օրաթերթերուն, շաբաթաթերթերուն ու երկշաբաթաթերթերուն մէջ Արցախեան ազատամարտին ինկած հերոսներէն բաւական թիւ մը ներկայացուցաւ ու ընթերցողը, զգացած ցաւին հետ՝ նաեւ հպարտութեամբ հետեւեցաւ անոնց կենսագրական գիծերուն ու անձնաւորութեանց բնութագրումին:

Արդէն ծանօթ այդ դէմքերը, եւ առաւել՝ դեռ անյայտ մնացած կարելի թիւ մը միաժամանակ ներկայացնելու միտքը սկսաւ խռովել խմբագրութիւնս այնպէս՝ ինչպէս պատահած էր ատիկա մեր մեծ ցաւին ու հրաշափառ յարութեան ի յուշ, Ապրիլեան Եղեռնին ու Սարդարապատեան դիւցազնամարտերուն առիթներով:

Նոր յաղթանակը իրենց արիւնով սրբագործած քաջերը առանձին համարով մը ներկայացնելու սոյն գաղափարը դեռ բոլորովին չէր ձեւաւորուած մեր մտքին, երբ այս տարուան Ցունիս ամսոյն սկիզբը բախտ եղաւ կրկին այցելել Հայաստան, ուր առ այդ յայտարարութիւններ կատարուեցան Երեւանի պատկերասփիւռէն, ձայնասփիւռէն ու մամլոյ էջերէն, թէ՝

«Արցախեան դիւցազնամարտի վեցերորդ տարեդարձին առիթով, Պէյրութի «Բագին» գրական ամսագիրը ծրագրած է հերոս-նահատակներուն նուիրել բացառիկ համար մը, ուր տեղ պիտի գրաւեն

հերոսներուն կենսագրականները, լուսանկարները եւ իրենց գրած ու իրենց մասին գրուած բանաստեղծութիւնները, յուշերն ու տպաւորապաշտ էջերը։

«Եւ այդ, ջերմօրէն կը խնդրուի իրենց հարազատներէն ու բարեկամներէն՝ առաջիկայ 15 օրերու ընթացքին իրենց տրամադրութեան տակ գտնուող համապատասխան նիւթերը փութացնել «Երկիր» օրաթերթի խմբագրատունը»։

Ցայտարարութիւնները, ինչպէս սպասելի էր, անմիջապէս արձագանգ գտան եւ հերոսներուն հարազատները, զեմի ընկերներն ու գաղափարակիցները սկսան նշանակուած հասցէին փութացնել տպագիր, մեքենագիր ու ձեռագիր համապատասխան նիւթեր։

Միաժամանակ, տուեալ 15 օրերու ընթացքին, մտաւորական մեր բարեկամներուն ու ընկերներուն գործակցութեամբ՝ մամլոյ նախորդ տարիներուն տրամադրելի հաւաքածոները ենթարկուեցան մանրակրկիտ պրպտումի, որ յաջորդ շաբաթներուն ու ամիսներուն շարունակուեցաւ հոս ու շարունակուեցաւ հոն եւ ցպատակադրուած բացառիկը ստացաւ անձախընթաց այս ծաւալը։

Այսուհանդերձ...

«Բագին» բացառիկ թիւը շատ հրատարակած է, քանի աւելի, ամէն անգամ ու անխուսափելիօրէն ապրած բերկրանքին հետ կրելով թերի գործեր կատարած ըլլալու սուր խղճախայթեր։ Վերջինը, ա՛յս մէկը, մինակը քսան անգամ աւելի խորացուց մեր կսկիծը, այն պատճառով մանաւանդ, որ հակառակ ի գործ դրուած երկարատեւ ճիգերուն, պարզուեցաւ, որ մէկտեղուած տուեալները շատ հեռու էին ամբողջական ըլլալէ։ Ունինք միայն այն պզտիկ մխիթարութիւնը, որ սահմանուած ժամանակին, այսինքն՝ մինչեւ Սեպտեմբերի վախճանը մեզի հասած ու մեր յայտնաբերած բոլոր նիւթերը տեղ գտած են սոյն բացառիկին մէջ, առանց հերոսներուն միջեւ հրէի եւ հեթանոսի խտրութիւն դնելու, առաջնորդուելով այն ոգիէն, որ հայրենիքին ազատութեան ու ազատ ապրելու իրաւունքին համար իրենց թանկ արիւնը շռայլած հերոսներէն իւրաքանչիւրը վեր կը համարէ բոլոր նկատումներէն...

Մեր մեծանուն փետայիներուն ու անոնց պատմակշիռ մեծագործութիւններուն անդրադարձող ժամանակակիցները թէ յաջորդ տասնամեակներուն շնչած ու շնչող սերունդները, իրենց երեւակայութեան ու կշիռներուն մէջ՝ անկրկնելի նկատած են Արաբոն, Սերոբ Աղբիւրը, Հրայր Դժոխքը, Նիկոլ Դումանը, Գէորգ Չաւուշը, Սեբաստացի Մուրատը, Նժդեհը, շատ են, կարելի չէ բոլորը թուել, անկրկնելի են բոլորը, անվիճելիօրէն անկրկնելի։ Կանգ պիտի առնենք սակայն ու ամենայն համարձակութեամբ ըսենք, որ «Բագին»ի հետագայ էջերուն դիմաց՝ հայ մարդը իր երեւակայութեան մէջ ահագնացած հին անկրկնելիներուն քով սիրով ու արբութեամբ պիտի աւելցնէ այս նոր անկրկնելիները, այնպիսի՛ կիսաստուածներ, զորս երբեւի կրնան շաղախել միայն հայրենասիրական ապրումները, ազատութեան անդիմադրելի տենչը, տղամարդկային շաղախը։

Ըսել պէտք է տակաւին, որ հերոսները յանկարծօրէն չեն ծնիր, անոնք կը ճեւաւորուին նախորդներուն ժառանգութեան մէջ, խորունկ *վէրքէ* մը խոցուած պէտք է ըլլան անպայման, համատարած *կայծերէ* տաղուած ըլլան օր մը, *ուրախ լուրեր* առած պէտք է ըլլան, կրկնած ըլլան հրաշագործ *հայհոյանք* մը, Կովկասէն պատգամ մը՝ *վէրքերու խորութեան համաձայն զարնելու*, ներծծած ըլլան վերջապէս կանխողներուն սխրագործութեանց բոլոր հիւթերը: Այդպէս: Ատոր համար է գուցէ, որ ճակատ մեկնելէ առաջ, Ներկայ Հայաստանի սահմանները անձեռնմխելի ու Արցախի տարածքը ազատագրելու տենդով ծառացած նորերէն իւրաքանչիւրը, հայրենական սրբութիւններուն առընթեր՝ իր երդումը կ'ընէ իր նախատիպարին անունով, կ'ընտրէ կամ կը կնքէ մարտական իր խումբը «Տիգրան Մեծ», «Արաբօ», «Նիկոլ Դուման», «Գէորգ Չաւուշ», «Նժդեհ», եւայլն, եւայլն:

Աւելցնելով պիտի ըսէինք անմիջապէս, որ եթէ իրական երկինք մը կայ ու աստուածային ստորոգելիներով զարդարուած Հայոց պատմութեան մեծերը կը շնչեն հոն, անտարակոյս կը ցնծայ անոնց հոգին՝ ի տես իրենց ճանապարհներով ու յայտնաբերած վարքով փոթորկած այս նորայայտ անկրկնելիներով...

Ըսինք նաեւ վարքով, չանցնինք սակայն արագ, այլ ընդգծենք մարդկայնական այն գիծը, որ յատուկ էր հիներուն ու անպակաս եղաւ նորերուն մօտ: Արդարեւ, ութսուն, իննսուն, հարիւր տարի առաջ գործած մեր հերոսներուն պէս, նա՛ւ եզերապահ գունդերուն թէ Արցախեան ջոկատներուն քաջերը մահը արհամարհող դիւցազներ չեղան միայն, այլ ամենադժնդակ պայմաններուն մէջ անգամ, պիտի տեսնէք յանախ, կրցան տոստոեւսկիական առումով մարդ մնալ, հակադրաբար ուսխին, որ նոյնիսկ մարդկայնական պայմաններու մէջ պարտք համարեց ցուցադրել ցեղային իր գազանաբարոյ խառնուածքը:

Հարկ չկայ նման երեւոյթներու մատնանշումներով աւելի ծաւալիլ: Մնաց որ, ներսի էջերուն կարգ մը բաժիններուն մէջ ընթերցողը պիտի հանդիպի այնպիսի գեղեցիկ մեկնաբանութիւններու, որ խմբագրական խորհրդածութիւնները գրեթէ աւելորդ կը թուին:

Ըսողներ պիտի ըլլան հարկաւ, որ «*Բագին*»ը գրական բեմ է եւ հերոսներու ու հերոսապաշտութեան մատեաններ կազմելէ աւելի՝ անիկա իր էջերը բաց պէտք է պահէ գրական տիպարներու եւ երկերու: Առարկութիւնը, սակայն, բոլորովին ճիշդ չէ, տրուած ըլլալով, որ գրականութեան բաժինը բնաւ արհամարհելի քանակ մը չի ներկայացներ հոս, եւ երկրորդ՝ թէկուզ հարեւանցիօրէն՝ արձանագրուած են այնպիսի ապրումներ, որոնք իրենք իրենց մէջ վարակիչ ու յանկուցիչ ըլլալով հանդերձ, կրնան աւելի ընդարձակ պոեմներ սնուցանել կամ դառնալ ծաւալուն վէպերու առանցք:

Բոլոր պարագաներուն, գրականութեան ուղղափառներէն բարեկամաբար ու բացառաբար պիտի խնդրէինք, որ այս բացառիկին ընեն բացառութիւն մը եւ ներշնչեալներու ժամագրավայր մը համարելէ աւելի՝ զայն համարեն ներշնչարան մը...

•

Ղարաբաղի բնիկ ժողովուրդին ինքնորոշման համար տեղի ունեցաւ ծանօթ պոռթկումը, բայց Ղարաբաղի մէջ չսահմանափակուեցաւ անիկա, այլ բռնութիւններու վարժուած ոտոխին բիրտ կամքով տարածուեցաւ Ներկայ Հայաստանի արեւելեան, հիւսիսային ու հարաւ-արեւմտեան սահմաններուն վրայ, Նոյեմբերեանէն մինչեւ Վարդենիս եւ Գորիս ու Ղափանէն մինչեւ Երասխ։

Այս իրականութենէն մեկնելով, նոյն վայրերուն ու Հայաստանի տարբեր կեդրոններուն վրայ կազմուեցան եղբայրակցական գունդեր, որոնք անսակարկ նուիրումով մը պաշտպանեցին հայրենիքի վտանգեալ ծայրամասերը եւ ունեցան ահագին թիւով զոհեր։

Առանձնացուցինք այս իրականութիւնը, աւելցնելու համար, որ Ղարաբաղեան շարժումին առիթով զոհուած քաջերուն նուիրուած այս բացառիկը, նոյն ատեն պէտք է նուիրուած համարել հայրենի միւս եղերքներուն ինկած զոհերուն, որոնք, ընթերցողը չուտով պիտի նկատէ, իրենց օճախը, գիւղը, շրջանը պաշտպանելով աւարտած չհամարեցին իրենց պարտքը, այլ իրենց տէ՛ւնը համարեցին ողջ Հայաստանը եւ չտապեցին հո՛ն՝ ուր վտանգ մը կը սպառնար, կը պահանջուէր իրենց արիւնը։

Կը սկսինք Եռագոյնը առաջին անգամ Հայաստանի Խորհրդարանին վրայ բարձրացուցած ու Շարժումին առաջին նահատակներէն համարուող Մովսէս Գորգիսեանով, շարունակելով շարքը հերոսներու նահատակութեանց թուականներուն կարգով։

ԵՐԳ

ՄՈՎՍԷՍ ԳՈՐԳԻՍԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երասխաւանը դարձաւ նոր Սուլուխ,
Դալթեց նոր գնդակ ինչպէս հրաբուխ,
Դեռ չթոլորած քսանուց տարին,
Դաժան գնդակը գտաւ հայ քաջին։

Կրկներգ.–
Դե՛հ, ուրի՞ գնա՛ք, ով հայոց քաջեր,
Ասկեար չպիտէ մեր սուրբ խաչքարեր,
Թող ցեղերն այդ բիրտ ու թափառական,
Սարսափով թողնեն հողը հայկական։

Բազում հայ քաջեր հոգու ուժ առան,
Վանի գաղափարի մարտիկներ դարձան,
Եռագոյնը մեր դեռ կը հասնի Վան,
Որ նորից թնդայ Անկախ Հայաստան։

Կրկներգ.–
Դե՛հ, ուրի՞ գնա՛ք,...

Ծիծեռնակաթերդ մեր սուրբ բարձունքում,
Ծատ քաջերի պէս նա էլ է հանգչում,
Այդ ինչպէս ընկար եւ ում գնդակից,
Վեր կաց, ո՛վ Մովսէս, վեր կաց խոր քնից։

Կրկներգ.–
Դե՛հ, ուրի՞ գնա՛ք,...

ԳՈՐԳԻՍԵԱՆ ՄՈՎՍԷՍ ԳԷՈՐԳԻ



Քո փոխարէն այսօր երթի առջեւից Գոճար դուստրդ է քայլում, քո պարգած Եռագոյնը ձեռքին, որ այսօր պետական է դարձել։

Ծնուել է 1961 թ. Դեկտեմբերի 3ին՝ Երեւանում։ Ընտանեկան կացմը՝ կին, մէկ անչափահաս երեխայ, ծեր մայր։ Մասնագիտութիւնը՝ ռեժիսոր։ Մասնակցել է Երասխի ինքնապաշտպանական մարտերին։ Զոհուել է 1990ի Յունուարի 19ին՝ Երասխում։ Թաղուած է Միծեռնակաբերդի լանջին։

●

Անունդ տալիս զգաստանում եմ։ Ասում էիր. «Ես հայասէր չեմ, ես հայ եմ»։ Ազգիդ գնահատելով էիր պաշտում։ Հանգստութիւնը քեզ համար չէր։ Անմնացորդ էիր տրուել գործին եւ գիտէիր, որ թանկ կը վճարես, բայց գնի մասին երբեք չէիր սակարկում։ Դեռ ինչքա՜ն բան ունէիր անելու։ Քո անցած արահետն այսօր մայրուղի է դարձել, վառածդ լոյսը՝ մեծ փարոս, անունդ՝ Անմահութիւն։ Քո ապրած ու նաեւ չապրած կեանքով համոզեցիր մեզ, որ եթէ ապրել՝ այդպէս, եթէ կռուել՝ այդպէս, եթէ մեռնել նոյնիսկ՝ էլի այդպէս։

Այնքան շատ էիր, այնքան մեծ էիր, այնքան վեհ էիր, այնքան զօրու էիր։

Ինչո՞ւ գնալուցդ առաջ հրաժեշտ չտուեցիր։ Ախր, դու միշտ ամենակարճ բաժանման դէպքում էլ ո՛չ միայն հրաժեշտ, այլեւ ցուցումներ էիր տալիս։

Կռուի դաշտում հեշտ է՝ կա՛մ դու ես կրակում, կա՛մ քեզ վրայ են կրակում։ Իսկ թիկունքում առանց թիկունք՝ սարսափելի է։

Ամբողջ գիշեր աղօթել եմ ձեզ համար։ Ես քեզ երբեք չեմ առանձնացրել միւսներից։

Քեզ բերեցին։ Գլխիդ վիրակապը ինձ սաստիկ ցաւ պատճառեց, իսկ դու այլեւս ցաւ չէիր զգում, իմ վիրաւոր Զինուոր։

Ես ցաւս խեղդելով պէտք է ամուր լինէի: Ինչպէս վայել էր քո կնոջը:

Որոշեցինք քեզ քո Ծիծեռնակաբերդ տանել եւ քեզանով հերոս հայորդիների պանթէոնի սկիզբը դնել: Յաջորդ օրը հրաժեշտ տուեցինք մէկ այլ զինուորի: Առաջին անգամ բազմամարդ հրապարակում քո փոխարէն ես խօսեցի: Քեզ կրկնեցի. «Սուգը յաւերժ է, երբ պայքար չկայ»:

Քո փոխարէն այսօր երթի առջեւից Գոհար դուստրդ է քայլում, քո պարզած Եռագոյնը ձեռքին, որ այսօր պետական է դարձել:

Յաւերժ քո եւ քո զինակից՝

ՌՈՒԶԱՆ ԳՈՐԳԻՍԵԱՆ

ԶԷՅՆԱԼԵԱՆ ԳԷՈՐԳ ԵՍԱՅՈՒ

Թէ վերեւում Աստուած կայ,
թող Գէորգիս չապրած
տարիները Վարդանիս
բաշխի, որ նա մեծանայ,
հօր վրէժը առնի...

Մնուել է 1961ի Հոկտեմբերի 10ին՝ Արարատի շրջանի Արմաշ գիւղում: Ընտանեկան կազմը՝ կին, որդի (անչափահաս): Մասնագիտութիւնը՝ գիւղմեխանիզատոր: Արմաշի խորհրդային տնտեսութիւնում բանուոր էր: Զոհուել է 1990ի Յունուարի 18ին՝ Երասխում: Թաղուած է Արմաշի գերեզմանատանը:

●

Գէորգս հիմնականում դրսում էր: Կա՛մ դաշտում, կամ էլ մեր հողամասում, անընդհատ լուռ աշխատում էր: Երեկոները, չնայած յոգնածութեանը, մասնակցում էր գիւղի ինքնապաշտպանութեան կազմակերպմանը: Ականջը միշտ Երեւանի կողմն էր, միտինգների...

Համոզուած էր, որ Արցախը կը վերամիաւորուի Հայաստանին, եթէ ոչ այսօր, ապա՝ վաղը:

Այդ օրը առաւօտուանից տանը չէր: Յետոյ եկաւ, սափրուեց. ձեռքով մեծ լուացք էի արել, մատներս արիւնոտուել էին՝ դեղ դրեց, կապեց: Շատ մօտիկից կրակոցի հետզհետէ ուժգնացող ձայներ լսուեցին: Գիւղում խառնաշփոթ էր: Շուտով լսուեցին պատասխան կրակոցները: Խնդրեցի որդուս, որ դուրս չգայ, վտանգաւոր է, տանը մնայ: Շատ խնդրեցի:

—Այ մէր, ո՞նց չգնամ, ամէն տեղից եկել, օգնում են մեր գիւղի պաշտպանութեանը, ես տա՞նը նստեմ:

Գիտէի, որ ճիշտ է, բայց սիրտս վատ բան էր գուշակում, չէի ուզում գնայ: Նորից փորձեցի համոզել՝ «Ախր, զէնք էլ չունես, բա քեզ որ մի բան պատահի, մտածե՞լ ես»...

—Ոչինչ, բա այնտեղ չլինե՞մ, որ եթէ ընկերոջս խփեն, գոնէ նրա զէնքը վերցնեմ: Բա հօ թոյլ չենք տալու, որ գան մտնեն մեր տունը:

Ճանապարհին մտել էր հիւանդանոց, օգնել երկու ծանր վիրաւորների տեղափոխել, յետոյ վազել էր դէպի սահման...

Հպարտանում էր իր որդու անունով՝ Վարդան: Սիրում էր կրկնել՝ տղաս Վարդան զօրավար պիտի դառնայ:

Թէ վերեւում Աստուած կայ, թող Գէորգիս չապրած տարիները Վարդանիս բաշխի, որ նա մեծանայ, հօր վրէժը առնի...

ԳԷՈՐԳ ՋԷՑՆԱԼԵԱՆԻ ՄԱՅՐԸ

ՊԱՊԻԿԵԱՆ ՎԱՐԴԱՆ ԳԵՐՄԱՆԻ

Ծնուել է 1974 թ. Մարտի 1ին՝ Երեւանում: Ընտանեկան կազմը՝ ծնողներ, եղբայր, քոյր: Սովորում էր Երեւանի թիւ 51 դպրոցի 9րդ դասարանում: Մասնակցել է Գետաշէնի, Կոռնիձորի, Երասխի ինքնապաշտպանական մարտերին: Գերուել է 1990 թ. Յունուարի 19ին: Անյայտ կորած է:

●

13 տարեկան էր Վարդանը, երբ սկսուեց Շարժումը: Ոչ մի միտինգից չէր բացակայում: Միտինգներից տուն էր գալիս, մեզ ստիպում, որ պատմենք 1915ի, Արցախի, Նախիջեւանի մասին, ուզում էր մինչեւ վերջ հասկանալ, թէ ինչ է կատարուել եւ ինչու...: Տակաւին երեխայ էր:

Օրերով թերթում էր Հայկական հանրագիտարանը, շարունակ ինչոր փաստ էր որոնում...: Գնալով աւելի ինքնամփոփ էր դառնում: Գի-

13 տարեկան էր Վարդանը, երբ սկսուեց Շարժումը: Ոչ մի միտինգից չէր բացակայում: Միտինգներից տուն էր գալիս, մեզ ստիպում, որ պատմենք 1915ի, Արցախի, Նախիջեւանի մասին, ուզում էր մինչեւ վերջ հասկանալ, թէ ինչ է կատարուել եւ ինչու...

շերները ուշ էր վերադառնում, թաքցնում էր իր ուր լինելը: Անհանգստանում էինք, յանդիմանում՝ դեռ փոքր ես, աշխատիր հետու մնալ, վտանգաւոր է, եւայլն: Պատասխանը մէկն էր՝ ամէն ինչ էլ հնարաւոր է, որ պատահի, յետոյ՝ ինչ...: Փոխուել էր անդառնալի: Հասունացել էր: 1989ի Մայիսին ոտաբոպիկ հասել էր Մուսալեռ: Երկրաշարժից յետոյ պատրաստուեց գնալ Լենինական: Մի կերպ կարողացանք ետ պահել, համոզեցինք, որ գնայ «Զուարթնոց» օդանաւակայան, օգնի բեռնաթափման աշխատանքներին: Ֆրանսիայից եկած փրկիչները նրան իրենց հետ տարել էին Սպիտակ: Վերադարձաւ ցնցուած, ալլալլուած:

Զինուած ինքնապաշտպանութեան ալիքը նրան ամբողջովին կլանեց: Սահմանամերձ շրջաններից օրերով չէր վերադառնում: Յունուարի 16ին Կոռնիձորից վերադարձաւ: Խոստացաւ երեք օր տանը մնալ: Երկու օր անց, ամսի 18ին ուրախ ներս մտաւ եւ յայտարարեց, որ պէտք է նորից գնայ, հպարտութեամբ աւելացնելով՝ Մովսէս Գորգիսեանի հետ: Պատասխանի չսպասելով դուրս թռաւ:

Գիշերը գնացինք շտաբ: Այնտեղ էր: Մովսէսը նրան չէր տարել: Տխուր էր: Ասաց՝ գնացէք, ես մի ժամից կը գամ: Անցաւ մէկ ժամ, յետոյ երկրորդը, երրորդը... ու մինչեւ հիմա...

ԳՐԻԳՈՐԵԱՆ ԼԻԶԱ՝ ՄԱՅՐԸ

ԲԱԶԻԿԵԱՆ ՌՈՒԲԷՆ ԹԵՒԱՆԻ

Ծնուել է 1950թ Յունիսի 1ին՝ Արարատի շրջանի Գոռաւան գիւղում: Ընտանեկան կազմը՝ կին, չորս երեխայ (երկուսն՝ անչափահաս): Մասնագիտութիւնը՝ տնտեսագէտ-հաշուապահ: Արա-

Այն տագնապալի օրերին Ռուբէնը գրեթէ ամէն օր այնտեղ էր։ Գալիս, զրուցում էր աշխարհազօրայինների հետ, հետաքրքրւում՝ ինչի կարիք ունեն, իր լաւատեսութեամբ ոգեւորում, թեւ էր տալիս տղաներին։

բատի շրջկոմի գլխաւոր հաշուապահն էր։ Զոհուել է 1990ի Յունուարի 18ին՝ Երասխում։ Թաղուած է Գոռաւանի գերեզմանատանը։

●

Նրա ծոցատետրի վրայ մի կլոր անցք կար։ Հրազէնի գնդակից էր։

Այդ անցքը մահացու յետագծի մի կարճառօտ հարուածն է, այն չարաղէտ յետագծի, որը կտրեց Ռուբէն Բազիկեանի արիւնատար զարկերակը...

Ծոցատետրում Բէյրութում տպագրուած՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 100ամեայ յոբելեանի խորհրդանշով օրացոյց կայ եւ մի թերթիկ, որի վրայ (ճակատագրի ինչպիսի՞ քմայք) գրուած է՝ «թուրքական դեսպանատուն»...

Այն տագնապալի օրերին Ռուբէնը գրեթէ ամէն օր այնտեղ էր։ Գալիս, զրուցում էր աշխարհազօրայինների հետ, հետաքրքրւում՝ ինչի կարիք ունեն, իր լաւատեսութեամբ ոգեւորում, թեւ էր տալիս տղաներին։ Յունուարի կէսերին նա իր անձնական նախաձեռնութեամբ լուծել էր Երասխում հերթապահող տղաներին շրջանի հասարակական սննդի ձեռնարկութեան հաշուին սննդով ապահովելու հարցը եւ միջոցներ էր որոնում նրանց տաք հագուստով ապահովելու համար։

Լուր ստացուեց, որ Երասխում փոխհրաձգութիւն է սկսուել։ Անմիջապէս ուղեւորուեցինք այնտեղ։ Առաջինը նրան հանդիպեցինք։ Աւտոմեքենան կանգնեցրել էր մայթեզրի մօտ, իսկ ինքը մեն-մենակ կանգնած էր սառցակալած մայթին։ «Ինչո՞ւ ես անգէն կանգնել այստեղ, վտանգաւոր է»։ Ժպտաց եւ հայեացքով ցոյց տուեց աւտոմեքենայի մէջ դրուած որսորդական հրացանը։ «Այնուամենայնիւ, այստեղ կանգնելը վտանգաւոր է»,— պնդեցինք։ «Դուք գնացէք, ես մի քիչ յետոյ կը գամ»։

Ընդամէնը մի քանի քայլ էինք արել, երբ...

ՌՈՒԲԷՆ ԲԱԶԻԿԵԱՆԻ ԸՆԿԵՐՆԵՐԸ

ՍԱՂՈՒՄԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ ԱՐՏՈՒՇԻ

12 տարեկան հասակում Սեւանում երեխայ փրկեց: Դա իր առաջին քննությունն էր: Չէր ներում արտագաղթող հայրենակիցներին. «Աւելի լաւ է չոր հաց՝ սեփական տանը, քան բազում կերակուրներ՝ օտար հողում»:

Ծնուել է 1958ի Փետրուարի 20ին՝ Երեւանում: Ընտանեկան կազմը՝ հայր, մայր, եղբայր: Մասնագիտութիւնը՝ մեխանիկ: Աշխատում էր «Անի» գ/մ-ում, որպէս տպագրական մեքենաների մեխանիկ: Զոհուել է 1990ի Յունուարի 20ին՝ Երասխում: Թաղուած է Ծիծեռնակաբերդի լանջին:

●

Նա ամէն տեղ էր: Երկրաշարժից մի քանի ժամ անց եւ դրանից յետոյ ամէն Շաբաթ ու Կիրակի Լենինականում կամ Սպիտակում էր: Օգնում էր ինչով կարող էր: Չէր խօսում: Հերթական վերադարձից յետոյ մի օր չդիմացաւ. գլուխը բռնած գոռալով լաց եղաւ:

Նրա համար ուրիշի հոգս չկար: 12 տարեկան հասակում Սեւանում երեխայ փրկեց: Դա իր առաջին քննությունն էր:

Չէր ներում արտագաղթող հայրենակիցներին. «Աւելի լաւ է չոր հաց՝ սեփական տանը, քան բազում կերակուրներ՝ օտար հողում»:

Ես չէի վախենում, չէի սպասում, չէի պատկերացնում, չէի հաւատում, որ նրան կարող էր որեւէ բան պատահել: Ցաճախ էր կրկնում. «Երջանիկ է նա, ով կ'ընկնի մարտում յանուն հայրենի սուրբ հողի, յանուն արդար գործի»:

Եթէ տանն էր, ուրեմն՝ քարտէսի վրայ կռացած, անվերջ «մեր սահմաններն էր ճշտում»: Ամէն մի թիզ հողը սուրբ էր նրա համար:

Ոգեւորուած պատմում էր, թէ ինչպէս Նախիջեւանի հալածուած հայերին Հայաստան տեղափոխեցին, ինչպէս Գորիսից գողացած անասունները իրենց տէրերին վերադարձրին...

Գետաշէնից նոր էր վերադարձել, Երասխում տագնապալի էր վիճակը: Հիւանդ էր: Չկարողացայ համոզել, որ գոնէ երկու օր տանը մընայ, բուժուի, նոր գնայ:

Իմ որդին պէտք է երկար ապրէր, որ պայքարէր: Պէտք է օգնէր իր հայրենակիցներին, իր սուրբ գործը չպէտք է անաւարտ մնար: Ինչո՞ւ Աստուած չպահպանեց նրան...

Այսօր միւս որդիս՝ Դաւիթն է կրում զինուորագրուած եղբօր առաքելութիւնը:

Թող ես վերջին որդեկորոյս մայրը լինեմ:

ԵՐՈՒԱՆԴ ՍԱՂՈՒՄԵԱՆԻ ՄԱՅՐԸ

ՍԱՀԱԿԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ ԱՐՇԱԿԻ



Ծնուել է 1951 թ. Մայիսի 20ին՝ Թումանեանի շրջանի Լորուտ գիւղում: Ընտանեկան կազմը՝ կին, ծեր ծնողներ, երեք անչափահաս երեխաներ: Երեւանի «Աստրոս» արտադրական միաւորումում պահեստապետ էր աշխատում: 1990 թ. Յունուարի 19ին Երասխի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ գերի է տարուել Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան Սադարակ գիւղը: Անյայտ կորած է:

●

Այդ օրը առաւօտեան, սովորականի պէս, գնաց բենզին լցնելու: Ետ չեկաւ: Երեկոյեան միտինգում իմացանք, որ Երասխի ինքնապաշտպանութեան մարտիկներից եօթը Սադարակի մօտակայքում մօտեցել են կրակի շուրջ հաւաքուած մարդկանց, կարծելով հայեր են: Ասուեց նաեւ, որ նրանցից չորսին յաջողուեց փախչել, իսկ միւսները մարտի են բռնուել, յետոյ գերուել: Անունները չտրուեցին:

Տուն շտապեցինք նրան պատմելու լուրի մասին, նրանից մանրամասներ հարցնելու: Չկար: Գերուածների մէջ էր: Ասում են...

Շենք հաւատում, սպասում ենք («Հայաստանի Հանրապետութիւն», 22 Յունուար 1991):

ԿԻՆ, ՈՐԴԻՆԵՐ, ԾՆՈՂՔ

ՆՈՐԱՅՐԸ, ԲԵՐԴԱՁՈՐԻ ՆՈՐԱՅՐԸ

Եկան, ապրեցին մեր կողքին, լուսատու աստղերի նման վառուեցին ու ասուպի պէս անհետ հեռացան՝ խառնուելով հայոց սրբացած անուններին...

Այդպէս էլ հրամանատարը՝ Բերդաձորի Անդրանիկը, չհասցրեց «մի երկու բառ» ասել իր մարտական ընկերների մասին: Անընդհատ խուսափում էր, դժուարանում խօսել: Այդ պահերը այնքան հասկանալի էին: Եկան, ապրեցին մեր կողքին, լուսատու աստղերի նման վառուեցին ու ասուպի պէս անհետ հեռացան՝ խառնուելով հայոց սրբացած անուններին, մեզ թողնելով լոկ լուշի բեկորներ...

Միայն մէկ անգամ հրամանատարը «բացուեց». «Ի՞նչ ես ուզում, նրանց մասին ոչինչ պէտք չի ասել, նրանք իրենց կեանքով ամէն ինչ ասացին...»: Յետոյ լռեց, խոժոռուեց, ապա դէմքին մեղմ ժպիտ երեւաց՝ «Զգիտեմ ո՞ւմ մասին կը գրես, բայց Նորոյին չմոռանաս, Նորոն...»:

1965 թ. ծնուած պատանուն կորուստներով լի Հայոց պատմութիւնը հանգիստ չէր տալիս: Դեռեւս մանկահասակ, բայց իրեն փիդայի էր անուանում: Ծնողները զգուշացնում էին, բայց եւ ներքին հպարտութիւն ապրում: Ահա թէ ինչու նրանց համար անսպասելի չէր, երբ առաջին անգամ Նորայրից լսեցին Բերդաձոր անունը, այնտեղ մեկնելու ու ոսոխի դէմ պայքարելու հաստատ վճռակամութիւնը:

Շատերի հետ, երեք տարի շարունակ Նորայրը հայրենի եզերքի արթուն պահակներից մէկը դարձաւ՝ երբեք չմտածելով հանգստանալու, տուն վերադառնալու մասին:

—Միայն մեկ անգամ «արտաճերթ» եկաւ: Ես ու ամուսինս աշխատանքից վերադարձանք եւ տունը թալանուած գտանք: Լուր հասցրինք Նորիկիս, միայն մեկ օր մնաց, գայրացաւ, որ կանչել ենք՝ «Էնտեղ հայրենիք ենք կորցնում, դուք տան իրերի համար էք ագում...»:

Վերջին անգամ հայրենի տուն դժբախտ առիթը բերեց Նորայրին: Կարծես գուշակում էր, որ վերջին այցն է. ուշադիր էր ամէն ինչի նկատմամբ, մանկութեան յուշերն էր փնտռում, նամակների գգրոցը նորից խառնում: Ի՞նչ էր փնտռում, այդպէս էլ չասաց ոչ ոքի: Ու նորից գնաց: Որովհետեւ չէր կարող չգնալ, որովհետեւ կանչ կար նրա հոգում, որովհետեւ հաւատաւոր ընկերների կեանքը գնդակների տարափին պարզած քաջակորով մարդկանց սիրելին էր, հոգատար ու հարազատ ընկերը:

Բերդաձոր, Քարինտակ հասնում էին ոտքով՝ յաղթահարելով թշնամու որոգայթները, հայրենի հողը լուսնում էր, անլսելի էր դարձնում նրանց քայլերի ձայնը: Քանի՞-քանի՞ անգամ է Նորայրը անցել այդ մահուան ճամբով:

Մի բուռ հայորդիներ հրոսակների վոհմակի դէմ անհաւասար մարտի ելան: 1990 թ. Յունուարի 27ին թշնամին, փակելով բոլոր ելքերը, ձգտում էր վերջնականապէս լուծել Քարինտակ-բերդաձորեան առեղծուածը: Այդ մարտի մասին շատ է գրուել: Թշնամին որոշ յաջողութեան հասաւ, բայց հուժկու հարուած ստանալով՝ նահանջեց: Ծանր գնով բերուեց յաղթանակը: Մարտի սկզբում զոհուեցին երկու ազատամարտիկ: Մէկը Նորայրն էր:

Ընկերները հերթով գրկեցին մահացու վիրաւորին, առիւծի նման մրոնչացին:

Քսանհինգ գարուն ապրեց Նորայրը, չհասցրեց իր զաւակի առաջին ճիչը լսել: Անկատար մնաց ծնողներին տուած խոստումը. «Երբ յաղթենք ու ազատագրենք Արցախ հայրենիքը, ձեզ կը տանեմ, ձեր աչքերով կը տեսնէք այդ հրաշք երկիրը...» («Երկիր», 18 Սեպտեմբեր 1992):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԱՏԻԿԵԱՆ

ԿԱՐԷՆ ԱԻԵՏԻՍԵԱՆ

Կարէն Աւետիսեան։

Մնուել է 1969ին՝ Երեւանում։ 1984-86ին սովորել է Երեւանի թիւ 10 դպրոցի հայագիտական թեքումով դասարանում եւ դեռ դպրոցական հասակում ազգային դրականութիւն բազմացնելու եւ տարածելու համար յայտնուել ՊԱԿում։ 1987-89ին ծառայել է Խորհրդային բանակում, մասնակցել՝ Աֆղանական պատերազմին։ Զօրացրուելուց անմիջապէս յետոյ կամաւորագրուել է ինքնապաշտպանութեան «Ազգային լեգէոն» զօրաջոկատին, որի կազմում մասնակցել է Կոռնիձորի, Երասխի եւ Մեղրու կռիւներին։ Զոհուել է 1990ի Մարտի 22ին՝ Մեղրու շրջանում, զինակից Վարդան Յովակիմեանի հետ (28 Փետրուար 1992)։

«ԵՐԿԻՐ»



ՄԵՂՐԻ

Երկու օր անց, այդ տեղանքը գնելիս, մեր սահմանապահ ուժերը յայտնաբերում են Թուրքի վեց դիակ եւ նահատակուած Սամուէլին։

ԳՈՐԾՈՎ ԵՒ ԿԵԱՆՔՈՎ

Մեր ժողովուրդը ապրում է ծանր օրեր։ Սահմանների պատերազմ է, տնտեսութիւնը՝ քայքայուած։ Մարդիկ զբաղուած են օրուայ հացի խնդրով, ոմանք էլ միլիոններ դիզելու մոլուցքով են տառապում։ Բայց կան հայրենասէրներ, որոնք վեր են այս ամէնից, որոնք ապրում են ու գործում անկեղծ, զոհւում են անկեղծ։

Սամուէլ Ստեփանի Յարութիւնեանը ծնուել է 1953 թ. Երեւանում։ Սովորել է թիւ 1 միջնակարգ դպրոցում։ Մասնակցել է Խորհրդային բանակում։ 1981 թ. աւարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրոնիկայի բաժինը։ 1981 թուականից մինչեւ 1990 թ. աշխատում էր Արովեանի «Սիրիուս» գործարանում որպէս ինժեներ։ 1990ին մշտական բնակուելու եւ սահմանը պաշտպանելու համար մեկնում է Գորիսի շրջանի Ծամոզ գիւղ՝ նպատակ ունենալով նաեւ լքուած գիւղը վերաբնակեցնել։ Աւա՜ղ, Սամուէլ Յարութիւնեանին հետեւողներ չեղան, եւ մինչեւ իր կեանքի վերջը ապրեց՝ պաշտպանելով իր բաժին սահմանը՝ միայնակ՝ մօր հետ...

Ս.թ. Մարտին մօրը կաթուածահար տեղափոխում է Երեւան։ Մայրը որոշ չափով ապաքինուելուց յետոյ Ապրիլի 6ին կրկին մեկնում է իր դիրքերը (սահմանի այդ հատուածը մնացել էր անպաշտպան)։

Ապրիլի 13ին՝ թուրքերի մէկ տասնեակից աւելի հետախուզական ջոկատը մտնում է գիւղ։ Սամուէլը փակում է նրանց ճանապարհը՝ միայնակ մարտի բռնելով ջոկատի հետ։ Նա կռւում է մինչեւ վերջին փամփուշտը։ Թշնամին նահանջում է։ Երկու օր անց, այդ տեղանքը գնելիս, մեր սահմանապահ ուժերը յայտնաբերում են թուրքի վեց դիակ եւ նահատակուած Սամուէլին։

Անհաւասար մարտում զոհուեց գիւղի միակ բնակիչ-պաշտպան Սամուէլ Յարութիւնեանը։ Թերի մնաց նրա նպատակը։ Բայց նա կեանքով ցոյց տուեց, թէ ինչ է ճշմարիտ հայրենասիրութիւնը։

Ցուսով ենք, կը գտնուեն Սամուէլի նման հայորդիներ, կը մեկնեն լքուած սահմանամերձ գիւղերը՝ պաշտպանելու, շէնացնելու։ Եւ կը գայ ժամանակ, որ Ծամոզի նոր բնակիչները գիւղը կը վերանուանեն Սամուէլաշէն՝ այդ գիւղի միակ բնակիչ-պաշտպանի անուամբ (**«Երկիր»**, 19 Մայիս 1993)։

ԵՐԶԱՆԻԿ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ԳԷՈՐԳ ՆԻԿՈԼԻ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գէորգ Նիկոլի Առաքելեանը 1988 թ. Օգոստոսից եղել է Ազգային Ինքնորոշում Միաւորման անդամ: Ակտիւօրէն մասնակցել է ԱԻՄի կողմից կազմակերպուած բոլոր զանգուածային միջոցառումներին: Մինչեւ իր կեանքի վերջը եղել է բարեխիղճ, կատարել է կազմակերպութեան կողմից տրուած յանձնարարութիւնները:

1990 թ. Մայիսի 27ի դէպքերի ժամանակ ինքնապաշտպանութեան ջոկատների հետ մասնակցել է Նուբարաշէնի պաշտպանողական գործողութիւններին եւ գոհուել է այդ ժամանակ (Մեքենագիր):

ԱԻՄի ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Է. ՇԱՇԻԿԵԱՆ

16 Յուլիսի 1993 թ.

ԱՐԹՈՒՐ ՄԻՔԱՅԷԼԻ ՄԵՍՐՈՊԵԱՆ

Արցախի ազատամարտիկ Արթուր Մեսրոպեանի մասին կենսագրական տեղեկութիւնները շատ ժլատ են: Մեզի տրրամադրուած լուսանկարին ետին արձանագրուած է միայն, որ ան ծնած է 1965ին ու զոհուած 30 Յունիս 1990ին:

Հերոսին մայրը, Յասմիկ Ղարայեանը, այս տարի Երեւանի մէջ իր ծախքով լոյս ընծայեց *«Ցաւի խաղիկ»* անունով բանաստեղծութիւններու գրքոյկ մը, ձօնուած *«Որդուս՝ Արթուր Մեսրոպեանի յիշատակին»*:

Հետագայ ոտանաւորները առնուած են յիշեալ գրքոյկէն:

* * *

Դու այդպէս փակ աչքով մի նայիր,
Դու որբ չես, մենակ չես, իմ աղջիկ,
Թանկագին իմ զաւակ...Ֆիդայի,
Յոգնե՞լ ես՝ եկ ննջիր իմ ծնկին...

Ու յետոյ էլ կռուի քո զէնքով,
Հայ ազգի դու զաւակ, ես՝ սուրբ մայր,
Եկ կռուենք յաղթութեան հուր-տենչով,
Մեր հողը ազատենք, սար ու քար...

Եկ յեղենք մեր ոտքը մայր հողին
Եւ զինուենք, որդեակ իմ, անվարան,
Թէ անգամ սուր մխուի մեր կողին՝
Չունենանք մեր դէմքին սեւ-խարան...

* * *

Ոտնաձայները հեռուից են գալիս,
Նժոյգն է դոփում արծիւ-տղայի,
Մարտիկի սիրտն է կրակին տալիս՝
Սեւ աչքերի մէջ՝ վրէժը վայրի...

Ֆիդայի է նա՝ խիզախ այս տղան,
Քաղաք է իջել շահել կնոջ հետ,
Վեց զաւակ ունի՝ վեց սիւն անսասան,
Բայց վաղը կրկին դառնալու է ետ...

Եկել է մի քիչ ծխելիք տանի,
Շուտով կը թոչի նորից Խոջալու,
Վաղը լեռներում Արցախ աշխարհի
Նրա նժոյգն է խօլ վրնջելու...

7-02-1992

ՅԱՍՄԻԿ ՂԱՐԱՅԵԱՆ

ՄԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

«Մամ ջան, Եռագոյնը բարձրացրինք», ու հայեացքով տեղ էր փնտռում ձեռքի փոքրիկ Եռագոյնն ամրացնելու,— պատմում է Գրետա մայրիկը։ —Այստեղ լաւ է, միշտ աչքի առաջ...



Գրետա մայրիկը խմբագրութիւն զանգահարեց Փետրուարի 26ին։

—Բարե՛ւ, տղաս,— ասաց,— ձեր թերթի թիւ 14ի լուսանկարներից մէկում որդիս է՝ Վաղինակը,— ձայնն անշափ բարի էր, մեղմ ու... շատ տխուր,— խնդրում եմ, եթէ հնարաւոր է, այդ լուսանկարը տրամադրէք ինձ։

—Սիրով, մայրիկ,— ասացի,— թող Վաղինակը հանդիպի՝ վերցնի։

—Վաղինակը չի կարող... Վաղինակը չի կարող գալ, տղաս, Վաղիկը զոհուեց Բերդաձորում...

Ահա այսպէս տխուր ու անսպասելի սկսուեց այս լուսանկարի պատմութիւնը, այսպէս սկսուեց իմ ծանօթութիւնը 22ամեայ մի ազնիւ ու հայրենասէր հայ տղայի կեանքի կարճատեւ, բայց լուսաւոր պատմութեանը։

...Վաղինակենց տանն եմ։ Հեշտութեամբ գտայ։ Երեւանի Մուրացան փողոցում բոլորը՝ մեծից փոքր, ճանաչում են նրան։ Ծէնքի մուտքին սեւ երիզով Եռագոյնն է կախուած։ Դուռը բացում է (անհնար է սխալուելը) Գրետա մայրիկը։ Չգիտեմ ինչպէս սկսեմ զրոյցը։ Պարզ, սովորական կահաւորանքով բնակարան է։ Իսկոյն աչքի է զարնում մաքրութիւնն ու կարգուկանոնը, նաեւ անսովոր անդորրը։ Մտնում եմ հիւրասենեակ ու առաջինը հանդիպում... Վաղինակին՝ զինուորական համազգեստով, գեղեցկատես, առնական ու մտախոհ հայեացքով։ Նկարի հեղինակը Վաղիկի ընկերներից է, նուիրել է Գրետա մայրիկին։ Ու էլի ամէնուր լուսանկարներ։ Ահա այս մէկում զինուորական ծառայութիւնից նոր է վերադարձել։ 1988 թ. Յունիսն է։ Ընդամէնը

մի քանի օր անց արդէն անդամագրուեց Հայոց Համազգային Շարժմանը:

Զահից փոքրիկ Եռագոյն դրօշ է կախուած: Ինքն է կախել: Այդ օրը ուրախութեանը չափ չկար. «Մամ ջան, Եռագոյնը բարձրացրինք», ու հայեացքով տեղ էր փնտռում ձեռքի փոքրիկ Եռագոյնն ամրացնելու,— պատմում է Գրետա մայրիկը:—Այստեղ լաւ է, միշտ աչքի առաջ,— ասաց ու կախեց ջահից,—մամ, յանկարծ չհանես...»:

Նոյեմբերի կէսերին Վաղինակ Զաքարեանը մեկնեց Բերդաձոր: Այնտեղ ծանր էր իրադրութիւնը: Խոստացաւ մայրիկին, որ երեք-չորս օր յետոյ տանը կը լինի: Բայց...: Այս անգամ չկարողացաւ խօսքի տէրը լինել: Յետոյ՝ տղաները կը պատմեն Նոյեմբերի 23ին Բերդաձորի բարձունքում տեղի ունեցած մարտի մանրամասները: Գուցէ այդ մասին պատմեն նաեւ ադրբեջանցի ելուզակները՝ զարմացած այն անօրինակ քաջութեամբ, որ ցուցաբերեցին երկու հայ երիտասարդ տղաներ, մինչեւ վերջին փամփուշտը մարտ մղելով մի ամբողջ հորդայի դէմ:

Վաղինակն ու բերդաձորցի Սամուէլը այս անգամ չիջան բարձունքից: Բայց եւ թշնամին չկարողացաւ գրաւել այն («Կանչ», 13 Մարտ 1991):

ՊԱՒԵԼ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Արցախեան շարժման, մեր ազգային զարթօնքի տարեդարձին նուիրուած թերթի յատուկ համարում («Կանչ», թիւ 14) շատ էին լուսանկարները նրանցից մէկում, որպէս շարժման յաղթանակ, փողփոդում է Եռագոյնը։ Այն ծածանւում է այս փոքրիկ հայորդու ձեռքերում, նրան շրջապատող մարդկանց հոգիներում, այս երիտասարդ տղաների սրտերում։ Լուսանկարը տպագրելուց յետոյ կը յանձնենք լուսանկարուած այս երեք տղաներից մէկի (ամենց առաջինը)՝ Վաղինակ Զաքարեանի մայրիկին։

«ԵՍ ՄԻ ԶԱՐԿՆ ԵՄ ՀՈ ԿՈՒՈՒԻՈՒ»

ՍՏԵՓԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Մանոթ՝ Ստեոպ անունով։ Եղած է Բերդաձորի ինքնապաշտպանության ազատամարտիկ։ 1989-1991 մասնակցած է Բերդաձորի ինքնապաշտպանության բոլոր կռիվներուն։

Անդամ էր Հ.Ց.Դաշնակցության։

Նահատակուած է 17 Յունուար 1991ին, Հայրենի Եղծահող գիւղը վերադարձին։

Ստեփանը, աւելի յայտնի Ստեոպը, Բերդաձորի պաշտպանութեան տղաներից է, որոնց անունները երկու տարուց աւելի է խորհրդանշական են դարձել, որոնցմով կանգուն են Արցախ աշխարհի դարպաս հանդիսացող Բերդաձորի չորս հայկական գիւղերը: Բերդաձորում նրան Եղծահողի Ստեոպ էին կոչում: Ստեոպի անուան հետ կապուած է Եղծահողի խիզդն ու ցաւը եւ դժուար է պատկերացնել Եղծահողը, Բերդաձորը՝ առանց նրան...

Քանի՞-քանի՞ անգամ մեն-մենակ խիզախ հայորդին շրջել, հսկել էր հայրենի եզերքը: Հսկել, որ չլարձակուեն, չկոտորեն, չգողանան:

Յանդուգն, անվեհեր ֆիդային ճիշտ էր իրագործել Նիկոլ Դումանի սկզբունքը՝ մէկին տասը պատասխանելով: Նա ժառանգել էր մեր նախորդ ֆիդայիների վէպ ու պատում դարձած յատկանիշները եւ օրինակներ էր տալիս իր փորձով ու գործով: Ֆիդայու քաջութիւնը, խրատապահանջութիւնը, մշտական մարտական կեցուածքը, արտակարգ համեստութիւնը Ստեոպ ֆիդայու բնորոշ գծերն էին: Իր մղած կռիւներում հերոսական արարքների մասին երբեք չէր խօսում: Իսկ որքա՞ն էր զայրանում ֆիդայու սուրբ անունը շահարկող արատաւորների վրայ: Նա չէր պատկերացնում, որ հնարաւոր է նման բան: Կեանքում էլ պարզ էր, ազնիւ, շիտակ ու կենսուրախ: Երբ առիթ էր լինում կարճ ժամանակով լինել տանը, մօրը խոստանում էր յաջորդ անգամ անպայման մտածել ամուսնութեան մասին: Սակայն դաժան օրեր ապրող

Բերդաձորը նորից կանչում էր իր նուիրեալին, որը քանիերորդ անգամ իր անզուգական արծուապաշտներով հերոսական կռիւներ էր մղում:

Եւ ահա չարաբաստիկ Յունուարի 17ը, երբ հայրենի գիւղ վերադառնալիս Ստեփանը եւ միւս չորս ֆիդայիները ընկան ազգամիջեան բախումները «զսպող» սաֆոնովեան պարտաճանաչների դարանը: Թէպէտ հերոսական ճիգերով խիզախ հայորդիները դուրս եկան դարանից, բայց Ստեփանը արդէն զարնուած, միւսները ծանր վիրաւոր էին...

Սգում է Հայաստանը, սգում է Արցախը: Հայոց նահատակների սրբամատեանը լրացաւ նաեւ Բերդաձորի Ստեփանի անունով: Նրանց պանթէոնում աւելացաւ թարմ մի շիրմաթումբ, իսկ անմահների փաղանգում կանգնեց նոր ֆիդայի, նոր զինուոր... («Կայծեր», Ը. տարի, թիւ 3):

ՎԱՐԴԱՆ ԲԱԽՇԵԱՆ

Բերդաձոր, Հին Շէն գիւղ

ՅԱՐԱՏԵԻ ԿՌՈՒԻ ԶԻՆՈՒՈՐԸ

Նրա ու նրա նման հերոսների արեան գնով է, որ ապրում եւ պայքարում է Արցախը։

Մարտիրոս Արշակի Շահնազարեան։ Անդամ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան։ Մնուել է 1960 թ., Շամխորի շրջանի Բարսում գիւղում։ 1969 թ. ընտանիքով մշտական բնակութեան են տեղափոխուել Նայիրիի շրջանի Նոր Երզնկա աւան։ Մինչ 1988 թուականը՝ չինարար։ Այնուհետեւ մասնակցեց Երասխաւանի, Ոսկեպարի, Կոռնիձորի, Գետաշէնի ինքնապաշտպանական կռիւներին։

Մարտիրոս Շահնազարեանը չինարար էր եւ զինուոր։ Նա պէտք է լինէր այնտեղ, ուր պիտի կառուցուէին կամ պաշտպանէին կառուցածը։ Նեղսրտեց, վրդովուեց, տեղը չգտաւ, մինչեւ որ լսեցնուեց Նոր Մուսալեռում՝ Գետաշէնում, ուր ընդհատուել էր հայ շինականի աշխատանքը, եւ թշնամին սպառնում էր նուաճել գիւղը։

Ապրիլի 9ին՝ Մարտիրոս Շահնազարեանը Արցախեան պատերազմական աշխարհի դիւերային անդորրը պաշտպանելիս, զոհուեց ՕՄՕՆականների արձակած գաւազիր գնդակից։ Նրա ընկերները վրէժխնդիր եղան զոհուած ընկերոջ համար։ Այնուհետեւ, վրէժխնդրութեան օրէնքին հայ Ֆիդայու հաւատարմութեան մէջ համոզուեցին Կուչլի Արմաւիր գիւղի «Նորածիլ հարեւանները», համոզուեց թշնամին, եւ նրանք, ովքեր կը փորձեն ձեռք բարձրացնել հայ կեանքի վրայ։ Կարո՞ղ էր չլինել այս զոհը։ Այո, կարող էր, բայց նրա ու նրա նման հերոսների արեան գնով է, որ ապրում եւ պայքարում է Արցախը։ Մարտիրոսն իր ընտրութիւնն արել էր այն պահից, երբ Արցախի ճայնին ունկնդիր՝ զինուորագրուեց հայ մարդու կեանքի ու պատուի պաշտպանութեան սուրբ գործին։

Նուիրեալ հայորդու մարմինը Ապրիլի 7ին, «Վէրքերով լի» երգի ուղեկցութեամբ, ամփոփուեց Նոր Երզնկա աւանի 1915թ. Յեղասպանութեան զոհերի յուշակոթողի մօտ (1991, թիւ 6)։

«ԱԶԱՏԱՄԱՐՏ»

ՅՈՒՇԱՐՁԱՆ՝ ՀԵՐՈՍ ՆԱՀԱՏԱԿԻՆ



Ապրիլի 7ին, Նոր Երզնկա տաճարի կենտրոնում՝ 1916 թուականի Մեծ եղեռնի յուշարձանից ոչ-հեռու, բարձրացաւ մէկ յուշարձան եւս: Այն նուիրուած է մէկ տարի առաջ Գետաշէնում զոհուած Նորերզնկացի ազատամարտիկ Մարտիրոս Շահնազարեանի յիշատակին:

Մարտիրոսը Հ.Յ.Դաշնակցութեան զինուորագրեալներից էր, առաջին զոհերից մէկը, որ կուսակցութիւնը տուեց Արցախեան ազատամարտի ընթացքում: Յուշարձանը յառնեց նրա մանկութեան ընկերների, զինակիցների, երախտագէտ Նորերզնկացիների ջանքերով: Ընդարձակ պատուանդանի երկու կողմերում բարձրացող քարակոթողների կամարակապ խոռոչների մէջ կախուած են պղնձէ զանգեր, իսկ խորքում՝ յիշատակի խաչքարն է: Քարէ խաչի հիմքի վրայ հայոց թեւատարած արծիւն է՝ մագիլների մէջ երկսայրի մի սուր: Արծուից աւելի ցած՝ դիտողի հայեացքի դէմ-դիմաց շուրջանակի վահանի մէջ՝ Հ.Յ.Դ. զինանշանն է:

Յուշարձանի բացման արարողութեանը հոծ բազմութիւն էր հաւաքուել: Ազատամարտիկի կրտսեր որդին՝ չորսամեայ Արշակը, կտրում է յուշահամալիրը երիզող սեւ ժապաւէնը, եւ հոգեւոր հայրերը օրհնութեան ծիսակարգ են կատարում: Երգիչ Սահակ Սահակեանը հնչեցնում է աւանդական *«Վէրքերով լի ջան ֆեդայի եմ»* երգը, եւ ծաղկեփնջեր ու ծաղկեպսակներ են գալիս հանգչելու յուշարձանի պատուանդանին: Ապա զոհուած ազատամարտիկի յիշատակին յարգանքի եւ երախտագիտութեան խօսքեր են ասում Հ.Յ.Դ. Բիւրոյի Երեւանի գրասենեակի պատասխանատու ընկ. Խաչակ Տէր-Գրիգորեանը, Հ.Յ.Դ. Հայաստանի Կենտրոնական կազմակերպչական ընկ. Լեւոն Շիրինեանը, Հ.Յ.Դ. Նայիրիի «Դրօ» կոմիտէի նախագահ ընկ. Աբրահամ Աբրահամեանը, Մարտիրոսի մանկութեան ընկեր եւ զինակից Սարօ Փամբուխչեանը եւ ուրիշներ:

Գիւղի միջնակարգ դպրոցի տնօրէնը հրապարակեց մանկավարժական անձնակազմի որոշումը՝ դպրոցը Մարտիրոս Շահնազարեանի անուամբ կոչելու մասին:

Բոլոր ներկաներին, իր որդու ընկերներին ու գաղափարակիցներին երախտագիտութեան խօսք ասաց հերոսի հայրը:

Նշենք, որ յուշահամալիրի հեղինակն է երիտասարդ քանդակագործ Լեւոնիկ Մալխասեանը (9 Ապրիլ 1992):

«ԵՐԿԻՐ»

ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նրա միակ աշխարհը, մտածումները անհանգստացումն սիրելի Արցախն էր։ Ապրում էր նրա շնչով, ուրախանում լաւ օրով, տխրում՝ երբ տխրում էր Արցախը։

Արթուր Կարապետեանը ծնուել է 1967 թուականի Յունիսի 19ին՝ Երեւան քաղաքում։

1984 թ. աւարտելով Մուրացանի անուան թիւ 18 միջնակարգ դպրոցը՝ ընդունւում է թիւ 20 տեխնիկական ուսումնարան, որն աւարտում է գերազանցութեան դիպլոմով։

1985 թ. ընդունւում է Երեւանի ժողովրդական տնտեսութեան ինստիտուտի երեկոյեան ուսուցման ֆակուլտետի «Առեւտրի էկոնոմիկա» մասնագիտութեան առաջին կուրս։ 1985-1987 թ.թ. Խորհրդային բանակում ծառայելուց յետոյ ուսանողական իրաւունքները վերականգնում է ապրանքագիտութեան եւ առեւտրի էկոնոմիկայի ֆակուլտետի նոյն մասնագիտութեան առաջին կուրսում։ Ուսումնասիրութեան տարիներին Արթուր Կարապետեանը աչքի է ընկել օրինակելի վարքով, վայելել մանկավարժական կոլեկտիւի եւ ուսանողութեան յարգանքը։

Նրա միակ աշխարհը, մտածումները անհանգստացումն սիրելի Արցախն էր։ Ապրում էր նրա շնչով, ուրախանում լաւ օրով, տրխրում՝ երբ տխրում էր Արցախը. ի միջի այլոց պէտք է նշեմ, որ Արթուրը քրոջ հետ երկուորեակներ էին։

Արթուրը ամբողջովին իր կեանքը նուիրել էր հայ ժողովրդի ազատութեան գործին, որին վինուորագրուել էր Ղարաբաղեան շարժման առաջին իսկ օրերից։ Արթուր Կարապետեանը Հ.Յ.Դ. անդամ էր 1990 թուականից։

Վերջին մարտը մղեց Գետաշէնում (Ձեռագիր)։

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ՆԱ ՀԻՄԱ ԵՐԿՆՔԻՑ Է ՆԱՅՈՒՄ ՄԵԶ

Հայ ազգային-ազատագրական նորօրեայ շարժումները նրան դարձրել էին Հ.Յ.Դ. «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութեան անդամ...։ Եւ նա առաջին գծում էր՝ Գիւլիստանում, Մարտունաշէնում, Գետաշէնում։

24 տարին դեռ նոր պիտի լրանար։ Ժողտնտեսութեան ինստիտուտի վերջին կուրսի քննութիւններն էր յանձնելու։

Բայց նախնիների կանչը արթնացել էր նրա մէջ, հայ ազգային-ազատագրական նորօրեայ շարժումները նրան դարձրել էին Հ.Յ.Դ. «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութեան անդամ...։ Եւ նա առաջին գծում էր՝ Գիւլիստանում, Մարտունաշէնում, Գետաշէնում։

Շիտակ էր, ուղղամիտ, յամառ։ Իսկական նուիրեալ էր։ Մշակել էր Գետաշէնի պաշտպանութեան պլանը, որն ընդունուել էր ընկերների կողմից։ Բայց ինչ իմանար, որ թուրք-ազերիների հետ հսկայական զրահատեխնիկայով իրենց վրայ պիտի յարձակուէր Խորհրդային անբարոյ բանակը, որի շարքերում ծառայել էր երկու տարի։

Եւ նա ընկաւ անհաւասար մարտում՝ 1991 թ. Ապրիլի 28ին, Գետաշէնում, իրենից երկու տարով մեծ Թաթուլ Կրպէեանի հետ։ Թշնամին քարուքանդ արեց Արթուրի ապրած բնակարանը, ոչնչացրեց տրագրերը, նրա վերջին յիշատակները։

Բայց ոչ մի ՕՄՕՆ, ոչ մի նզովեալ թուրք չի կարող ոչնչացնել հայի ոգին։ Եւ նրա ոգին մնաց իր մարտնչող ընկերների հետ։ Մնաց իր ծնողների՝ Միքայէլի ու Սուսլայի, քոյրերի՝ Ցաամիկի ու Նարինէի ու մեծ եղբօր՝ Գագիկի հետ։ Բոլորիս հետ։

Իր նամակներից մէկում մօրը գրում էր. «Ես շատ լաւ եմ։ Մամա ջան, շնորհաւորում եմ քո ծննդեան օրը, ցանկանում երկար տարիների կեանք։ Մէկ ուրիշ անգամ մօրը գրել էր, որ եթէ իր երկուորեակը՝ Նարինէ քոյրիկը ամուսնանալու հարց կ'ունենայ, թող ամուսնանայ. իր գալուն չսպասի։ Ինքն, հաւանաբար գիտէր, որ կըռիւներն օրհասական են, եւ ինքն ու իր նման ազատամարտիկները իրաւունք չունեն ժողովրդին լքելու։

Ահա մի քանի օր է իմ սեղանին են մեր անմահ քաջի՝ Արթուր Կարապետեանի լուսանկարները երգելիս, պարելիս, ժպտալիս, զէնքը ձեռքին, խոհուն ու անմեղ հայեացքով։ Նրա ամբողջ կեանքը դեռ առջեւում էր։ Եւ այս ինչպէ՞ս է լինում, որ առեւտրի բաժնի վերջին կուրսեցի պատանին, թողած դիպլոմն ու առեւտրի շուկայական-շահութաբեր հեռանկարը, իր կեանքը նուիրում է իր ժողովրդի



Արթուր Կարապետեանի յուշարձանին բացման հանդիսութիւնը

գոյատեւմանը, իսկ իր տարեկիցներից շատ-շատերը արտասահմանեան ծամոն ու ծխախոտ են վաճառում երեւանեան փողոցներում՝ ճանճ-բոյթի թմբիրով բթացած։ Ինչպէ՞ս է լինում։ Ինչո՞ւ է լինում։

Արթուրը իսկական հայ էր ո՛չ միայն ազգանունով, այլեւ՝ էութեամբ։ Եւ պատահական չէ, որ գրից ու գրականութիւնից հեռու պատանին սրտնեղում էր.

Գրերի վրայ փոշի է նստել,
Բայց մաքրող չկայ։
Սրբավայրերում ոչխարներն ու
կովերն են արածում։
Շատ եկեղեցիներ ու վանքեր հայոց
Գոմեր են դարձել կովի, ոչխարի։
Նրանց պատերին մամուռ է պատել,
Բայց մաքրող չկայ։

Նա իր մարտական ընկերների հետ մաքրեց Գեղաշէնի վանքը, կախեց զանգը, մոմակալներ դրեց։ Բայց, աւա՜ղ, Գեղաշէնը ընկաւ։

Արթուրը դարձաւ մեր կեանքը մաքրողներից մէկը։ Արցախահայութեանը փրկող ազատամարտիկներից մէկը։

Երբ անցնեն այս դժուար ժամանակները, նրա ու նրա ընկերների մասին տաքեր կը գրուեն։ Իսկ հիմա մեր յարգանքի տուրքը տանք նրա մահուան տարելիցին։

Ապրիլի 30ին ժ. 13ին Շէնգաւիթի Մուրացանի անուան դպրոցում տեղի կ'ունենայ Արթուր Կարապետեանի յուշատախտակի հանդիսաւոր բացումը։ Իսկ Մայիսի 2ին ժ. 14ին Շէնգաւիթի մետրոյի շրջակայքում կը բացուի նրա անմահութեան յուշաքարը։

Կրկին անգամ յիշենք նրան եւ չմոռանանք, նաեւ՝ հպարտանանք. նա երկնքից է մեզ նայում («Երկիր», 28 *Ապրիլ* 1992)։

ՀԱՄԼԵՏ ԿԱՐՃԻԿԵԱՆ

ԱՋԱՏԱՄԱՐՏԻԿ ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Արիւնկզակ խեւ թշնամին
Աւերում է տունը Հայոց,
Եւ այս ցաւը այնպէս է հին,
Որ դարձել է լափլիզող բոց։

Իսկ դու ո՞ւր ես, ո՞ւր ես, Արթո՛ւր,
Ո՞ր անկիւնում հայ երկնքի՛,
Ազատութեան մարտիկ ու թուր՝
Մեր սրբազան հայրենիքի՛։

...Տենչանքներով քո գեղեցիկ,
Դու հաց եղար հողի համար,
Ոչ մի մորմոք խոր, ազդեցիկ,
Չի բերի քեզ՝ նորից աշխարհ։

Բայց քանի դեռ թուր թշնամին
Հայոց հողը կ'ապատակի,
Թեւ կը լինի քո լոյս ոգին՝
Զաւակների՞ն Հայոց ազգի՛։

(Մեքենագիր) *ՌԱՉՄԻԿ ԳԱԼՍՏԵԱՆ*

ՆՐԱ ԱՆՏԵՍ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՄԲ

Հերոսացած անուն, որ յատկապէս այս օրերին մեծ խորհուրդ ունի:

Ապրիլի 21ին պիտի բոլորէր Նրա 27ամեակը: Այլ կերպ պիտի նշուէր այդ օրը, եւ ինքն էլ պիտի զգար, ապրէր ծննդեան տարեդարձի ուրախութեամբ: Փոյթ չէ, թէ լինէր մարտադաշտում՝ զինակիցների հետ, կամ գուցէ այդ օրը կրկին լինէր Գետաշէնի դպրոցում՝ իր աշակերտներով շրջապատուած, գուցէեւ տանը՝ հարազատների, մտերիմների հետ: Բայց պիտի լինէր, լինէր իր կենդանի ժպիտով, յոյս, հաւատ, արիութիւն ներշնչող իր առնական կեցուածքով...: Մէկ տարի առաջ Ապրիլի 30ին կեանքի 26րդ գարունը դեռ նոր-նոր բոլորած՝ հերոսաբար ընկաւ Գետաշէնի պաշտպանութեան մարտերում: Նահատակուեց՝ «մնալ եւ մինչեւ վերջ պաշտպանել հայրենի հողն ու բնակչութեանը...» իր իսկ պատգամած հաւատամքը հոգում:

Եւ սակայն հերոսներն անմեռ են, միշտ կենդանի: Ու ամէն անգամ պիտի զգացուի նաեւ նրանց անտես ներկայութիւնը: Այդպէս էր եւ այս անգամ, երբ Թաթուլի ծննդեան օրը նշուեց Երեւանի Պետական համալսարանի պատմութեան ֆակուլտետում, որը, աւա՜ղ, նա չհասցրեց աւարտել: Մինչ շատ համալսարանականներ մեկնել էին Թաթուլի ծննդավայր, գետաշէնցի նրա 12 աշակերտներ, որոնք այսօր մայրաքաղաքի տարբեր բուհերի ուսանողներ են, եկել էին մայր բուհ՝ յարգանքի տուրք մատուցելու իրենց սիրելի ուսուցչի յիշատակին: Ցուշ-ցերեկոյթը տեղի ունեցաւ լսարաններից մէկում, որը նախատեսուած էր նուիրել հայ ազատամարտիկների յիշատակին եւ կոչել Թաթուլի անուամբ: Այստեղ արդէն մօտ մէկ ամիս է փակցուած է հերոսի մեծադիր դիմանկարը: Գետաշէնցի պատանիների եւ աղջիկների բերած ծաղիկ-

ԹԱԼԻՆՅԻ ԹԱԹՈՒԼ

Մեր հրաչք հեքիաթ Գետաշէնի մէջ,
Առիւծի նման կռուեցիր անվերջ,
Ցանուն հայ ազգի, յանուն վրէժի,
Ազգիդ արիւնը գայլը չխմի։

Խմբապետ Թաթուլ,
Վեր առար քո սուր,
Կռուեցիր քաջ-քաջ,
Սեւ դեւի առաջ,

Որ բերես դարուն,
Զթափուի արիւն,
Զրմ հոգի արեւ,
Խմբապետ Թաթուլ,
Զրմ հոգի ախպէր,
Թալինցի Թաթուլ։

Արցախն հայոց քաջ ու բանիմաց,
Քեզ համար ողբաց, արեց սուգ ու լաց,
Դու ընկար արծիւ հայոց լեռների,
Քո հոգին յաւերժ թող փարոս լինի,
Դու ընկար արծիւ հայոց լեռների,
Համազասպ, ազգիդ քաջին դովերգիր։

Խմբապետ Թաթուլ...

(Ջեռագիր - 21 Ապրիլ) *ԳՈՒՍԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ*

ները լուռ հանգչում էին նկարից ժպտացող Թաթուլի հալեացքի ներքոյ, վառուող մոմերի կողքին:

Թաթուլի համալսարանական օրերի, նրա՝ որպէս լաւագոյն ուսանողի եւ ազնիւ մարդու մասին յուշեր պատմեցին ֆակուլտետի դեկան Մ. Յովհաննիսեանը, դեկանի տեղակալ Ա. Դարբինեանը եւ Հայոց պատմութեան ամբիոնի վարիչ Լ. Խուրշուդեանը: Նրա հետ անցկացրած կարճ, բայց լեցուն եւ անմոռանալի ժամանակահատուածից մանրամասներ յիշեցին եւ Թաթուլի աշակերտները: Ու թւում էր, նա ժպտում է ոչ միայն նկարից. նրա շունչը կար իր աշակերտների եւ ուսուցիչների գլխավերեւում: Ոսոխի հենց գնդակից մարած նրա կեանքը պիտի շարունակուի ազնիւ մղմամբ մաքառող ամէն հայի մէջ: Պիտի շարունակուի Թաթուլի ու ազգին նուիրեալ նրա զինակիցների մեծ հաւատով (**«Երկիր»**, 26 Ապրիլ 1992):

ԱՆԱՀԻՏ ԲՐՈՒՏԵԱՆ

ՍԻՐԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉ ԹԱԹՈՒԼ ԿՐՊԷԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ա՛խ, թէ քնած ես՝ վե՛ր կաց, քա՛ջ տղայ,
Թշնամին նորից գրոհ է տալիս,
Մի՛ թոյլ տուր մահը կեանքիդ հետ խաղայ,
Քո Ասպրա՛մն է որբի պէս լալիս։

Սակայն չե՛ս լսում աղերս ու յորդոր,
Փակ են աչքերդ այս աշխարհի դէմ,
Իմ մարա՛ծ ծաղիկ, իմ վէ՛րք խորախոր,
Մօրիցդ խլուած դրախտ ու եդեմ։

Քո մատաղ հոգում սուրբ Անդրանիկ կար
Եւ լոյս Նժդեհ կար, քաջի՛ խենթութիւն,
Դու Մխը-կաթինից չառաչով ընկար,
Ընկար՝ դառնալով լուսէ պատմութիւն։

Արդ, ներս ու դրսից ես փլուզո՛ւմ եմ
Եւ խենթանո՛ւմ եմ հօրդ արցունքից,
Անափ վշտի մէջ անհո՛ւն սուզուում եմ,
Իսկ դու նայում ես՝ քաջիդ բարձունքից։

Ա՛խ, ի՛նչ Մայիս է։ Կակա՛չ Մայիս է,
Պուրպո՛ւր Մայիս է՝ հայաարիւնո՛տ,
Ցաւի՛ Մայիս է, մահի՛ ամիս է,
Դու հեռանում ես, մենք՝ քեզնից կարօ՛տ։

Թաթո՛ւլ, անունդ իրենց չուրթերին
Հայորդիներ դեռ մարտի՛ կը գնան,
Որպէս փրկութեան հաւա՛տ մի վերին,
Որպէս հայ ազգի յո՛յս յաւերժական։

(Մեքենագիր)

ՌԱԶՄԻԿ ԳԱԼՍՏԵԱՆ

ԳԵՏՆՇԵՐՆ

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

(Թաթուլ Կրպէեանի յիշատակին)

Դուք հողածի՞ն էք, թէ՞ վերից իջած,
Որ երկնաւորի կամօք իջաք ցած։
Վաղուց իմաստուն մի խօսք է ասուած,
Երբ ոգէ դռները փակում է Աստուած,
Մէկն էլ բացում է անպայմանօրէն,
Որ այստեղ կեանքը յաւերժի նորէն։
Քաջերդ՝ դուք մեր այդ բացուած դուռն էք,
Դուք՝ մեր Մհերն էք, մեր Սասնայ ծուռն էք,
Այն ո՞վ է ասել հրաշքներ չկան,
Հապա մի նայէք այն լոյս աղջկան,
Որ հայ ֆիդայու հագուստ է կրում,
Որ կրակի տակ փամփուշտ է կրում,
Կուում ընկածին եղբօր պէս գրկում,
Վիրակապում է, կեանքեր է փրկում։
Այդպէս եղել է, այդպէս է հիմա,
Այդպէս կը լինի, թող լաւ իմանան՝
Ովքեր հրաշքին չէին հաւատում,
Ուժի դիրքերից սահմանը հատում,
Երբ համբերութեան սահմանն էլ հատուեց,
Անքէն ու անոխ հայն էլ չմնատուեց,
Հրաշքը եղաւ՝ Թաթուլը երդուեց,
Վայր դրեց գիրքը ու զինաւորուեց։
Աշխարհի ապշած աչքերի առաջ
Մանկավարժն ելաւ տանկին ընդառաջ
Ու հէնց այստեղ էլ հրաշք կատարուեց,
Տանկն անձնակազմով նա գերեվարեց։
Ու դարձաւ գիւղի Գէորգ Զաւուշը,
Այստեղ չի խամրի Թաթուլի յուշը։
Հրաշքը տեսաւ դահիճն իր աչքով,
Խառնեց հաշիւներն այդ իսկ հրաշքով
Ու մտարերեց Ղուրանի տառը,
Մտքով վերլուծեց ամէն մի բառը՝
«Պատում է ուժդ՝ անխնայ խփիր,
Անզօր ես յաղթել՝ ուրեմն խաբիր»
Նա՝ մանկութիւնից դաւելու վարպետ,
Դու՝ քո բնութեամբ այս դարի ասպետ։
Ա՜խ, քեզ մահ չկար, թէ գիտենայիր,
Որ մարդ չէ ամէն մարդուց ծնուածը։
Թիկունքիդ խփեց ստոր ծախուածը։
Թաթուլ, սիրելիս, դու հանգիստ ննջիր,
Ո՛չ, կռուի դաշտում դու չպարտուեցիր։
Դժոխք Հրայրի ոգին էր քեզ հետ,
Փա՞ռք քո ծնողին, փա՞ռք քեզ ապաւէտ։
Գիտցիր, քո զէնքը չի լռել երբեք
Ու չի լռելու...
Նորերն են գալիս հերոսանալու։

04-03-92թ.

ԳԱՌՆԻԿ ԱՐՍԷՆԵԱՆ

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ Է



«Ես չեմ ուզում մեռնել անկողնիս մէջ, երազանքս է զէնքը ձեռքիս հայրենիքիս ազատութեան, անկախութեան համար թուրքի դէմ կռուելիս զոհուել»։

Հօրս աչքերի մէջ Տէր-Զօրի անապատներում 86 հոգանոց Աշիգկէօզեան գերդաստանի 78 նահատակների անհուն տառապանքը կար, կոկորդում բանտարկուած էր նրանց սեղմուած ճիչը, հոգու մէջ ցաւը՝ անդարմանելի, անբուժելի:

Տարիներ առաջ, երբ փոքր երեխայ էի, լսեցի հօրս խոստովանութիւնը.— *«Ես չեմ ուզում մեռնել անկողնիս մէջ, երազանքս է զէնքը ձեռքիս հայրենիքիս ազատութեան, անկախութեան համար թուրքի դէմ կռուելիս զոհուել»։*

Ո՞ւմ մտքով կ'անցնէր, որ տարիներ յետոյ, եւ Խորհրդային կոչուող ինտերնացիոնալ վիժուածք երկրում նորից հայի արիւն պիտի թափուի, այս անգամ ազերիների կողմից, եւ նորից հայորդին զէնք պիտի վերցնի իր ձեռքը եւ կենաց մահու կռուով հայրենի հողը պաշտպանի:

Սիմոն Յովհաննէսի Աշիգկէօզեանը ծնուել է 1939 թ. Փետրուարի 6ին, Ռումինիայի Գալաց քաղաքում: Հայրը՝ վեզիրքէօրրեցի Յովհաննէսը, 1915 թ. Եղեռնից մազապուրծ յայտնւում է Ռումինիայում եւ մեծանում որբանոցներից մէկում: 1946 թ. ընտանիքը առնելով, հայրենիքի կարօտը սրտի մէջ, տեղափոխւում է Խորհրդային Հայաստան:

Սիմոնը գերազանց գնահատականներով աւարտում է դպրոցը եւ Հայաստանի Պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետը եւ աշխատանքի անցնում Գիտութիւնների Ակադեմիայի երկրաբանութեան ինստիտուտում: 70ից աւելի գիտական աշխատութիւնների հեղինակը նաեւ դասաւանդում էր համալսարանում, նկարում էր, գրում պատմուածքներ, բանաստեղծութիւններ, որոնցից շատերը նուիրուած էին ընկերներին, հարազատներին:

Հայրս սիրում էր երգել: Ամէն անգամ, երբ ընկերների խումբը հաւաքւում էր խնճոյքի սեղանի շուրջը, նա կիթառը ձեռքն էր առնում եւ մեղմ, թաւ ձայնով երգում էր հայկական յուզիչ երգեր, որոնց մէջ կար ե՛ւ ռամիկի, ե՛ւ մտաւորականի, ե՛ւ կորցրած հայրենիքի՝ Հայոց աշխարհի հրաշք բնութեան կարօտը, հայ տղայի եւ աղջկայ մաքուր սէրը: Յետոյ՝ հոգին ապստամբում էր, բացւում էին տան պատուհանները եւ հակառակ բոլոր արգելքների եւ վախերի, ձեռնոց էր նետում Խորհրդային

իշխանություններին, եւ նրա հետ բարձրաձայն եւ ոգեւորությամբ երգում էինք դաշնակցական, հայրենասիրական, ազատասիրական երգեր:

Մեզ համար զարմանալի չէր, որ կեանքի 30 տարիները հայրենի երկրաբանության նուիրած առաջատար գիտնականի համար, որին սիրում եւ գնահատում էին Խորհրդային Միության եւ աշխարհի շատ երկրների գիտնականներ, մատչելի չէին համայնավար ղեկավարների կողմից երկաթեայ պահարաններում բանտարկուած, հօրս իսկ ձեռքով ստեղծուած շատ քարտէսներ եւ մասնագիտական փաստաթղթեր: Միայն 1988 թ. երկրաշարժից յետոյ, երբ նա նշանակուեց երկրաշարժաբանների միջազգային ջոկատի ղեկավար, նոր միայն բացուեցին այդ դռները եւ ես յիշում եմ հօրս ուրախությունը այդ առիթով:

1988 թ. Փետրուարը շատ կապանքներ փշրեց:

Հայրս գալիս էր տուն համաժողովրդական հաւաքներից, որոնք կայանում էին նախկին Թատերական, այսօր՝ Անկախություն կոչուող հրապարակից, յոգնած, բայց ոգեւորուած: Յիշում եմ հօրս, սպիտակած մազերով եւ մօրուքով այդ 60ամեայ գիտնականին, որ հացադուլ էր յայտարարել եւ Ակադեմիայի աստիճաններին նստած խորը արհամարհանքով նայում էր մետաղեայ բարձր ճաղերով ժողովրդից սահմանազատուած դիմացի շէնքին՝ համայնավարների կուսակցության Կենտրոնական Կոմիտէի շինությանը, որտեղ նստած մարդիկ պէտք է որ ամաչէին հայ կոչուելուց, սակայն, ինչ խօսք, համայնավարական անամօթությունը սահմաններ չէր ճանաչում:

Ծուտով համազգային հաւաքների, գործադուլների եւ հացադուլների ժամանակը հօրս համար աւարտուեց:

1990 թ. Յունուարին, «Արաբօ» երկրապաշտպանական ջոկատի չորս հրամանատարներից մէկը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության Հայաստանի «Երեւան» կոմիտէի անդամ Սիմոն Աչիգկէօզեանը, Պապը, ինչպէս նրան կոչում էին ամենատարիքովը լինելու համար, վերցրեց ուսապարկը, զէնքը եւ եղբօրս հետ մեկնեց Եղեգնաձորի Խաչիկ գիւղը, որը յարձակումների էր ենթարկւում Նախիջեւանի կողմից: Հինգ ամիս հօրս չտեսանք: Տուն վերադարձաւ միայն մասնակցելու համար խորհրդարանի ընտրություններին, որտեղ առաջադրուած էր որպէս երեսփոխանության թեկնածու, Գիտությունների Ակադեմիայի կողմից: Հ.Հ.Ծ.ի յաղթարշաւի շնորհիւ հայրս չընտրուեց, սակայն Հոկտեմբերին նոյն Հ.Հ.Ծ.ն, ասես զգալով իրա սխալները, հօրս առաջադրեց Երեւանի քաղաքային խորհրդի երեսփոխան, եւ նա ընտրուեց:

Սակայն ոչինչ չէր կարող նրան պահել Երեւանում, նորից մեկնեց Եղեգնաձոր, Վարդենիս, մասնակցեց Իջեւանի կռիւներին: 1991 թ. Մարտին մեկնեց Յանիմեան, ստանձնելով Մարտունաշէնի պաշտպանությունը: Գնալուց առաջ, իմ հարցումին, թէ ե՞րբ պիտի վերադառնայ, պատասխանեց. «Կամ կը գամ, կամ ոչ,— եւ աւելացրեց,— զոհուելուց չեմ վախենում, միայն թուրքի պիղծ ձեռքը մարմնիս չկպչի»:

Մի քանի օր անց՝ ծնուեց եղբօրս առաջնեկը, որին հայրս այդպէս էլ չտեսաւ:

ՍԻՄՈՆ ԱՇԻԳԿԷՕԶԵԱՆ

Ծնած է 1937ին, Ռումանիա։ 1951ին հաստատուած է Հայրենիք։ Երկրաբան եւ դիտութիւններու թեկնածու։ Կ'աշխատէր Գիտութիւններու Ակադեմիայի երկրաբանական հիմնարկին մէջ։ 1990ին ընտրուած է Երեւանի քաղաքային խորհուրդի պատգամաւոր։

Անդամ էր Հ. Յ. Դաշնակցութեան։

1990էն մաս կը կազմէր «Արաքս» ջոկատին։

Մասնակցած է Իջեւանի, Եղեգնաձորի եւ Գետաշէնի կռիւներուն։ 1991 Փետրուարէն սկսեալ Մարտունաշէնի պաշտպանութեան ղեկավարն էր։

Նահատակուած է 29 Ապրիլ 1991ին, Մարտունաշէնի ինքնապաշտպանութեան կռիւներուն։

30 Ապրիլի 1991ին, Մարտունաշէնի եւ Գետաշէնի վրայ ձեռնարկուեց բոլորիս յայտնի «Օղակ» խոշոր յարձակումը։ Ինչպէս հետագային ռազմարուեստի գիտնականներն էին արտայայտում, այդ երկու գիւղերի վրայ յարձակուած Խորհրդային «փառապանծ» բանակի ներկայացուցիչները ե՛ւ թուապէս, ե՛ւ կիրառուած տեխնիկայի որակով, բաւական կը լինէին Երկրորդ Համաշխարհայինի ժամանակ Պերլինը գրաւելու։

Հայրս, որպէս հրամանատար, դիմադրութիւն ցոյց տալու որոշում կայացրեց։

Կարծելով, որ զինուած ջոկատը հեռացել է գիւղից, Խորհրդային զինուորականները եւ ազերիների զինուած խաժամուժը մտան գիւղ։ Գիւղի առաջին չորս տները մտնելով, հայ ընտանիքներին փորձեցին ստիպել բռնագաղթել, նախապէս ստորագրութիւն պահանջելով, որ իբրեւ բռնի ձեւով չի այդ արուում։ Չորս ընտանիքների հայրերն էլ հրաժարուեցին եւ սպանուեցին իրենց տների մէջ։

Այդ ժամանակ արդէն հայրս երեք ընկերների հետ դիրք գրաւեց գիւղի տներից մէկում եւ տանիքից սկսեց կրակել։ Անակնկալի եկած զինուորականները ընկրկեցին։

Մի քանի ժամ մի քանի հոգով կրակը պահելու շնորհիւ, ողջ բնակչութիւնը եւ ջոկատը ճեղքեցին շրջափակումը եւ հեռացան։

Ուղղաթիռները պտտուելով գիւղի վրայ, դիմացի բլրին տեղակայուած զինուորականներին տեղեկացրին հօրս գտնուած վայրի մասին։

Տանկերից արձակուած առաջին կրակոցից փուլ եկաւ տանիքը, որտեղ հայրս էր գտնւում։ Ներքեւից ընկերները ձայն տուեցին, որ իջնի եւ հեռանան, բայց նա վիրաւորուած էր եւ հրաժարուեց, որպէսզի բեռ չդառնայ, հրամայելով նրանց հեռանալ, իրենց հետ տանելով մէկ այլ վիրաւոր ընկերոջ։ Մարտական ընկերներից մէկը փորձեց բարձրանալ տանիք, երբ լսուեց հօրս ձայնը։ Նա կիսապառկած, մի ձեռքով սեղմե-

լով որովայնի վէրքը, բարձրաձայն երգելով Դաշնակցութեան հիմնը՝ շարունակում էր կրակել:

Տանկերից արձակուած երկրորդ եւ երրորդ ռումբերը լոեցրին ե՛ւ հօրս երգը, ե՛ւ գնդացիրը: Տանիքը ամբողջութեամբ փուլ եկաւ:

Գիշերը, աւերուած Մարտունաշէն մտան մի քանի գիւղացի եւ փորելով հանեցին հօրս մարմինը փլատակների տակից: Փայտի կտորներից եւ իրենց սեւ հագուստներից դագաղ պատրաստեցին եւ երեք օր շարունակ ոտքով եւ գրահամեքենայով, ցերեկները թաքնուելով, գիշերները շարժուելով, երախտապարտ գիւղացիները Իգոր Մուրադեանի օգնութեամբ հասցրին հօրս մարմինը Ծաղումեան, որտեղից ուղղաթիռով Մայր հայրենիք տեղափոխուեցին հօրս եւ Գետաշէնում նոյն օրը զոհուած իր չորս մարտական ընկերների՝ Թաթուլ Կրպէեանի, Արթուր Կարապետեանի, Վալերի Նազարեանի եւ Զարգանդ (Հրաչ) Դանիէլեանի մարմինները:

Մայիս 3ը համազգային սուգի օր յայտարարուեց:

Խոր Վիրապի եկեղեցիում «Նարեկ» երգչախումբը պատարագ երգեց ամէն Կիրակի օրուայ պէս, սակայն այդ օրը իր շարքերում չկար Սիմոնը, երգչախմբի աւագը: Նրա փոխարէն երգում էր Սիմոնի զաւակը՝ եղբայրս:

1991 թ. Ապրիլին հօրս՝ Սիմոն Յովհաննէսի Աշիգկէօզեանի հոգին միացաւ 1915 թ. Ապրիլին նահատակուած միլիոնաւոր հայերի հոգիներին, սակայն այս անգամ ոչ որպէս նահատակի, այլ նրանց վրէժը արծանի ձեւով լուծած մարտիկի:

«Ես չեմ ուզում մեռնել անկողնիս մէջ...»:

Երանի՜ նրանց, ովքեր իրենց երազած մահով գնացին:

ԱՆԺԻԼ ԱՇԻԳԿԷՕԶԵԱՆ

ՏԱՅ ԱՍՏՈՒԱԾ

Մարտունաշէնում զոհուած
Սիմոն Աշիգկէօզեանի յիշատակին

Այս պայքարը կը լինի երկար ու անողոք,
Եւ կը շարունակուի մինչեւ վերջ,
Այս պայքարում իւրաքանչիւրս կը լինենք զոհ,
Բայց կը փրկուի Հոգին՝ անմահ ու անչէջ:

Այս պայքարում կը լինեն եւ յուսահատներ
Մարդկանցից, որոնք չեն էլ պայքարում,
Յուսահատութիւնից մինչ դաւաճանութիւն
Մի քայլ է միայն՝ ասում եմ ձեզ ես...

Տայ Աստուած,
Որ ես ու դու
Զդառնանք դաւաճան,
Եւ միմեանց նայենք չիտակ,
Կարօտով, սիրով լիշենք այն օրերն,
Երբ ազգը զարթնեց, կանգնեց անխորտակ...

Այս պայքարում կը ճանաչենք մենք մեզ,
Մեզ, որ այնքան լաւ էին մեզնից թաքցրել,
Անմահ մեր ազգին մահ էին ներարկել,
Կոտրել մեր ոգին, որ բուռ դառնանք, հեզ,

Եւ ծառայելով, ուրիշի դրան
Շունը դառնալով՝ հասանք այս օրուան,
Իսկ նրանք, ովքեր պայքարում մեռան,
Կեանք հաղորդեցին երկրին անկենդան...

Տայ Աստուած,
Որ ես ու դուք
Զդառնանք դաւաճան,
Որ նրանց նայենք չիտակ,
Սերունդների յուշում չառանանք նզովք,
Որ թողինք պայքարը՝ անյողդողդ անզօր...

Էլ չողբանք նրանց, որ ազգի համար
Այրուեցին, ինչպէս խարոյկ խաւարում,
Բայց ազանք նրանց մենք անմխիթար,
Որ գերի էին խորթ գաղափարում։

Այն կէս միլիոնին՝ հլու հօտի պէս,
Որ համալրեցին բանակն ոսոխի,
Մեր ապագայի բանակն էր կարճատես,
Ա՛խ, պարարտացրած ցանքերը սոխի...

Տայ Աստուած,
Որ ես ու դու
Զդառնանք դաւաճան,
Եւ միմեանց նայենք չիտակ,
Կարօտով, սիրով լիշենք այն օրերն,
Երբ ազգը զարթնեց, կանգնեց անխորտակ։

12 Մայիս 1991 ՎԱՀՐԱՄ ԹԱԹԻԿԵԱՆ

ԱՐՄԷՆ ԵԴՈՒԱՐԴԻ ՂՈՒՆԵԱՆ

Ճշմարտութիւններ կան, որոնցից մէկն ասում է՝ ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայիր նրա երիտասարդութեանը: Արմէնը այդ երիտասարդութեան մի մասն էր, ում մէջ արմատաւորուած էր ոչ թէ «քաւորի սեղան»ն ու արճարանները, այլ նրանցից, ով իր ուսերի վրայ պիտի տանէր ազգի ճակատագիրը: Ծնունդով արցախցի էր՝ Հադրութի շրջանի Մեծ Թաղլար գիւղից, եւ այդ էր պատճառը, որ նրա մէջ կար արցախցու ոգին: Նա պիտի դառնար բժիշկ, բայց կոչումով զինուոր էր, աւելի շուտ՝ ռազմիկ: Նա առանց հայրենասիրութեան այն էր, ինչ որ մարմինը առանց հոգու, եւ հայրենիքի համար զոհուեց: Սառնաղբիւրի (Աղբուլաղ) կռիւը տարաւ նրան: Նա զոհուեց ինչպէս վայել է մարտիկին: Զոհուեց, բայց մեր մէջ մնաց Արմէն ռազմիկը, Արմէն բժիշկը եւ Արմէն ուսանողը: Նրա նկատմամբ մեր տածած սէրը բխում էր իր հոգու վեհութիւնից: Նա ո՛չ միայն լաւ ռազմիկ էր, այլեւ՝ լաւ ուսանող:

Արմէնը մեզ հետ է ամէն օր, ամէն պահ: Նրա շունչը մեզ միշտ պիտի վրէժի մղի, վրէժ, որի իրականացումը պէտք է լինի Հայաստան աշխարհի հզօրացումը եւ բարգաւաճումը (10 Յունիս 1992):

«ԱՊԱԳԱՅ ԲԺԻՇԿ»

* * *

Ամէնուր, ուր օսմանցին դրել է իր ոտքը, սրբազան բնօրրանի որդիները հայդուկներ են դարձել, զէնք վերցրել, վեր կացել սատարելու հող հայրենին, փրկելու իրենց զաւակներին կեռ եաթաղանից, թոյլ չտալու, որ անառակ հրոսակները նախամարդու վայրագութեամբ սրբապղծեն մօր, քրոջ, կնոջ պատիւը...

Հունգարիայում, Բուլղարիայում, Սերբիայում, Խրուաթիայում, Մակեդոնիայում, Մոլդավիայում, Վալախիայում եւ այլուր հայդուկներ են կոչուել նրանք, մեզանում՝ ֆիդայիներ։

Ասում էին, թէ ֆիդայիները ուսապարկերում հաց ունէին, փամփուշտներ ու չօգտագործուած ճերմակ կտոր, որը իրենց իսկ թաղման ժամանակ էր օգտագործուում. ո՞վ իմանար՝ որտեղ կը զոհուեն, ո՞ր ձորակում, ո՞ր ժայռի ծերպին...

Իրենց մահուան դատապարտած այս տղաները մի երկու տարի առաջ անհաւանական լեգենդ էին թւում, այնքան անսովոր, այնքան տարբեր մեր օրերի երիտասարդներից...

Մինչդեռ հնչեց պահը ու դարձեալ առանձնացան, բարձրացան ու նորից զէնքը ձեռքներին առան կամաւոր իրենց մահուան դատապարտուած տղաները՝ ֆիդայիները։ Նրանք մեր կողքին էին, մեր մէջ, իսկ մենք հերոսներ էինք փնտռում շատ հեռու։ Բոլորը հերոս լինել չեն կարող, սխալ է բոլորից պահանջել զէնք վերցնել ու մարտի գնալ՝ առանց մտածելու տունդարձի ճանապարհի մասին։ Բոլորը հերոս լինել չեն կարող, հերոս դառնում են անհատները։

Արմէն Ղունեաեր հերոս էր ոչ միայն այն պատճառով, որ մարտնչում էր Արցախում, ոչ միայն այն պատճառով, որ զոհուեց Արցախում...

Երբ Աղբուլաղ գիւղի պաշտպանութեան համար դիրքաւորւում էին, Արմէնը իր նռնականետով տեղաւորուեց գիւղի մուտքի մօտ։ Սա նշանակում էր, որ առաջին հարուածը նա էր ստանալու։

«Արմէն, մեզանից ամէնից շատ դու ես նման ֆիդայու, նրանց նման թիկնեղ ես, բարձրահասակ, պարթեւ, հսկայ, ազդեցիկ դէմքով»,— Արմէնի զոհուելու առթիւ սդոյ միտինգում յիշում էր նրա մարտական ընկերը՝ Մուրադ Մուրադեանը, յիշում էր եւ Արմէնի պատասխանը՝ «Մենք ինչ ֆիդայիներ ենք, մենք ընդամէնը զինուորներ ենք, ֆիդայիներն ուրիշ էին...»։

...Հետախոյզները լուր բերեցին, որ գիւղի վրայ երեք տանկ է գալու։

—Դա մեծ ուժ չէ, մէկին կը խփեմ, միւս երկուսը կը փախչեն,— վստահեցրեց Արմէնը...

Բայց տանկերը ո՛չ երեքն էին, ո՛չ հինգը...։ Տանկերից յետոյ էլ բեռնատարներն էին՝ հետեւակով։ Տղաները գիւղը պահեցին ինչքան հնարաւոր էր։ Երբ Արմէնը վիրաւորուեց, կրակն իր վրայ վերցրեց նրանից 150 մետր հեռաւորութեան վրայ դիրքաւորուած Աչոտը։ Իմանալով, որ թշնամին գտնելով իր վիրաւոր ընկերոջը անպայման տանջամահ կ'անի, կը խոշտանգի, որ կռուել չիմացող թուրքը «հերոսանում է» միայն վիրաւոր ֆիդայիների հանդիպելիս, նրանց դիակների մօտ, Աչոտը թաքցնում է Արմէնի դիակը։ Սակայն...

Ուժերը շատ էին անհաւասար եւ վիրաւոր Աչոտին գերի վերցնելուց յետոյ նրան ծառին կապելով, մասնատեցին։ Իսկ Արմէնի դին քանի օր դրուած էր ի տես իր ջոկատի տղաների՝ հեռուից հեռու։ Թուրքերը լաւ գիտեն, որ վիրաւորի, ընկերոջ դիակի յետեւից անպայման ֆիդայիները պէտք է գնային, սպասում էին...

Եւ երբ Ստեփանակերտից օգնութիւն ու համալրում ստացած ջոկատը յարձակման անցաւ, փախչող թուրք խուժանը, ի թիւս իր զոհերի, թողեց նաեւ Արմէնի ու Աչոտի դիակները։ Տղաները Արմէնին հողին յանձնեցին հայրենի գիւղում՝ Հադրութի շրջանի Մեծ Թաղլարում։

Ինստիտուտի բուժական ֆակուլտետի 2րդ կուրսի ուսանող Ար- մէն Ղունեանը մեր լաւագոյն ուսանողներից էր, ջոկատում՝ ամե- նաշատ նմանը ֆիդայու...։ Պատմում են, թէ ինչպէս էր պարում Շուշիի գրաւման օրը...

Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն։ Դու անմահութեան էիր արժանի եւ արժանացար, քանզի գիտակցաբար, հայդուկաբար ընդունեցիր այդ մահը, իմացեալ մահը... (**«Ապագայ բժիշկ»**, 10 *Յունիս* 1992)։

ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ,
«ԱՐՑԱԽ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ,
ՄԱՐՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Արմէն Եդուարդի Ղունեանը ծնուել է 1972 թ. ԼՂՀ Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գիւղում։ 1989 թ. ընդունուել է Երեւանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետի I կուրս։ 1991 թուականին լինելով II կուրսի ուսանող, յարում է ԱՍԱԼԱՅԻՆ եւ նրանց յանձնարարութեամբ մօտ մէկուկէս ամիս բացակայում է քաղաքից (մեկնում է Մոսկուա, զինամթերք հայթայթելու. այս փաստը յայտնի դարձաւ նրա զոհուելուց յետոյ)։ Այդ բացակայութիւնները պատճառ դարձան, որ նա տարեկէտում ձեւակերպեց ու մեկնեց Արցախ, որտեղ արդէն մոլեգնում էր սաֆոնովեան վարչակարգը։ Արմէնի անհանգիստ հոգին այդտեղ էլ հանգիստ չէր մնում, անընդհատ մասնակցում էր շրջանում կազմակերպուող անհնազանդութեան ակցիաներին ու դիվերսիոն գործողութիւններին։ 1991 թ. նա եկաւ Երեւան ուսումը շարունակելու, միաժամանակ անդամագրուեց «Նիկոլ Դումանի»ի անուան ջոկատին։ Ջոկատը Ապրիլին պէտք է գնար Արցախ յատուկ առաջադրանքով։ Արմէնի ուրախութեանը չափ չկար։ Այնուհետեւ պատմում են իր մարտական ընկերները, որ Արմէնը ջոկատի հոգին էր, անփոխարինելի հետախոյզը։ Մայիսի 10ին, Շուշիի գրաւման յաջորդ օրը, ջոկատը պէտք է յետ գար, բայց, աւա՜ղ, թշնամին գազազած Շուշիի անկման պատճառով, բազմաթիւ զրահատեխնիկական ու մարդկային ուժեր ներդրեց Ասկերանի շրջանի Սառնաղբիւր գիւղի ուղղութեամբ։ Նրանց դէմ դուրս եկաւ Արմէնը՝ իր հինգ ընկերների հետ։ Եւ դա եղաւ Արմէնի վերջին կռիւը։ Թուրք խառնամբոխը չէր թողնում դիակները հանելու (Արմէնի եւ Աշոտի)։

Մի շաբաթ յետոյ նրա քեռին՝ Վոլոդեա Հայրապետի Աղաբեկեանը պէտք է կրակի դաշտից հանէր սիրելի քրոջ որդու դիակը ու ինքն էլ մօտ երեք ամսից յետոյ պէտք է զոհուէր՝ միանալով անմահներին։

Արմէնը մինչեւ այդ մասնակցել էր Երասխաւանի առաջին կռուին՝ Նոյեմբերեանի շրջանի պաշտպանութեանը։ Նրա կուրքը Նժդեհն էր՝ իր ազգային ուսմունքով (Ձեռագիր)։

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ՅՈՒԾԱՐՁԱՆ ՀԵՐՈՍԻՆ

Երբ չկայ անմնացորդ նուիրումի այդ անփոխարինելի ներուժը, դադարում է ցեղի ոգու շարժը: Այդպիսիները ազգի ողնաշարն են: Նրանցից մէկն էր Համլետ Մինասեանը:

Նախնեաց արեան կանչով ոգմի դաշտ ելած ազատամարտիկը, ցեղամարդը, նահատակը իր ազգի յարատեւման եւ դիմադրութեան անհրաժեշտ նախապայմանն է: Երբ չկայ անմնացորդ նուիրումի այդ անփոխարինելի ներուժը, դադարում է ցեղի ոգու շարժը:

Այդպիսիները ազգի ողնաշարն են: Նրանցից մէկն էր Համլետ Մինասեանը՝ իր պապերի արիական ժառանգն ու զինակիրը: Ազատամարտիկը մարտիրոսուեց անցած տարուայ Դեկտեմբերին, Թոդան գիւղի համար մղուած մարտերում:

Զինուորական էր, նախկին Միութեան ո՞ր ծայրամասում ասես չէր ծառայել Համլետը՝ Սախալինում, Հեռաւոր Արեւելքում, Կամչատկայի Պետրոպաւլովսկում, Վլադիկավկազում, Նախիջեւանում եւ այլուր: Երբ ալեկոծուեց 1988 թ. Փետրուարը, Համլետն ակնթարթօրէն պայքարի հրապարակ նետուեց եւ միացաւ այն հոծ բազմութեանը, որն ոգում էր անկախ լինի Հայաստանը, եւ ազատագրուած՝ Արցախը:

Երբ Հայաստանում եւ Արցախում սկսուեցին պատերազմական գործողութիւնները, փորձուած զինուորականը բազմիցս մեկնեց սահմանամերձ շրջաններ, Ղարաբաղ, մասնակցեց գրեթէ բոլոր վճռական կռիւներին: Նրան յատկապէս ձգում էր հայրենի Գորիսը: Ձգտում էր իր առաւելագոյնը տալ Զանգեզուրի ինքնապաշտպանութեանը:

Նա եզակի մասնագէտ էր: Սակրաւոր էր, ականների յայտնաբերման ու ոչնչացման գիտակ, եւ իր վերջին կռուի նախօրէին կարեւոր մարտական յանձնարարութիւն էր կատարում: Թէեւ առաջադրանքն արդէն կատարուած էր, բայց հաշուի առնելով ծաւալուող մարտական գործողութիւնների կարեւորութիւնը, վճռեց մնալ եւ անձամբ մասնակցել առաջիկայ կռուին:

Թոդանը ադրբեջանական ՕՄՕՆականների յենակէտ էր եւ ամէնօրեայ լուրջ սպառնալիք էր դարձել Շաումեանի բնակչութեան համար: Ուրիշ երեսուն քաջեր որոշեցին ոչնչացնել այդ կրակակէտը եւ պաշարեցին Թոդանը: Գիւղում կային լաւ զինուած չորս հարիւր յիսուն ելուզակներ: Բայց երբ սկսուեց գրոհը, թշնամին չկարողացաւ դիմադրել եւ խուճապահար փախուստի դիմեց:

Հինգ հայորդի զոհուեց այդ անհաւասար մարտում, որոնց թւում էր նաեւ Համլետ Մինասեանը: Հայկական ուժերի շարքերից պակասեց եւս մէկ սպայ...

...Երախտապարտ գորիսեցիները չմոռացան անձնուէր հայրենասէրի խիզախութիւնը: Հիմա Հարճիս գիւղի միջնակարգ դպրոցը նրա անունով է կոչւում: Իսկ վերջերս Երեւանի Զանգեզուր թաղամասի գերեզմանատանը, ուր հանգչում է հերոսի աճիւնը, կանգնեցուեց նրա մահարձանը... («Երկիր», 24 Դեկտեմբեր 1992)

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԵԱՆ

ԱՐԱԲՕ–ԱՆՈՒՇԱՒԱՆ

Ինքը երեք զաւակ ունէր։ Հորորդին էին սպասում։ Վստահ էր, որ տղայ է ծնուելու։ «Արաբօ եմ դնելու անունը,— ասում էր,— որ հայրենիքի պաշտպան ու թուրքի սարսափ դառնայ»...

Ղարաբաղեան շարժման առաջին օրերին քչերն էին այն համոզմունքին, որ միայն զէնքով կայ հային փրկութիւն։ Այդ քչերից առաջինները Բերդաձորի ինքնապաշտպանութեան ջոկատի անդամներն էին։ Նրանց մէջ՝ Անուշաւանը։ Պատմում է ազատամարտիկի քոյրը. «Ողջ Հայաստանն այդ օրերին ցոյց ու միտինգ էր անում. բոլորի շուրթերին «Ղարաբաղ» ու «Միացում» էր։ Ցոյց ու միտինգի տենդ էր։ Այդպիսի մի օր էր, երբ Անուշաւանը տուն եկաւ ու կնոջը՝ Անժելային ասաւ. «Պատրաստուիր, երեխաների հետ գնում ենք Բերդաձոր»։ Գնացին։ Այնտեղ մտաւ Հ. Ց. Դ-ի շարքերը։ Ինքնապաշտպանական ջոկատներ էին կազմակերպում, մեծ դժուարութեամբ զէնք ու զինամթերք էին հասցնում Բերդաձոր։ Լաչինի միջանցքը փակ էր։ Ուղղաթիռներով, թշնամու որջերի վրայով էին թռչում։ Երեւանում ազատամարտիկներին հետապնդում էր ՊԱԿը, իսկ այնտեղ դարանակալ սպասում էր ՕՄՕՆն ու ռուսական զօրքը։ Զինտարրներն ամէն անգամ օդ էին բարձրանում՝ մահն աչքերի առջեւ ունենալով։ Գրպաններում միշտ պատրաստ ունէին սուրբայր ածելիներ, որ չրջապատման մէջ ընկնելիս կարեն երակները, գերի չընկնեն...։ Վերջին անգամ քիչ էր մնում ծուղակն ընկնէին, սակայն բարեբախտաբար չուտ նկատեցին դարանն ու վայրէջք կատարեցին ոչ թէ Բերդաձորում, այլ մօտակայ ադրբեջանական գիւղի մօտ՝ անտառի բացատում։ Այնտեղից գիշերով, շալակով, դժուարանց արահետներով զէնքն ու զինամթերքը հասցրին Բերդաձոր։ Զէնք տեղափոխելուց բացի Անուշաւանը վերանորոգում էր գիւղի հացի փուռը։ Սակայն ընդամէնը մի շաբաթ կարողացաւ հաց թխել ու բաժանել ժողովրդին։ 91 թ. Մայիսի 16ին ռուսական զօրքն ու ՕՄՕՆը մտան գիւղ։ Մտան ու... գիտէին, գիտէին՝ ով ով է։ Իսկոյն չրջապատեցին մեր տունն ու իմ աչքի առջեւ, տան մէջ, գնդակահարեցին եղբօրս՝ Անուշաւանին։ Զոհուեց սիրասուն եղբայրս։ Զոհուեց, հաւատացած, որ Բերդաձորն ազատագրուելու

է, առնական զաւակներ է ծնելու։ Ինքը երեք զաւակ ունէր։ Զորրորդին էին սպասում։ Վստահ էր, որ տղայ է ծնուելու։ «Արաբո եմ դնելու անունը,— ասում էր,— որ հայրենիքի պաշտպան ու թուրքի սարսափ դառնայ»...։ Զոհուելուց քսան օր անց ծնուեց արու զաւակ։ Կնքեցին Արաբո-Անուշաւան։ Հիմա թլուատ հարցնում է՝ ո՞ւր է պապաս։ Ցեմ կարողանում պատասխանել։ Կը դայ օրն ու նա կ'իմանայ հօր տեղը՝ այնտեղ, ուր Արցախի համար զոհուած նահատակներն են, եղբօրս զինակից ընկերները՝ Վարդանը (Բախչեան), Ստեփան, Նորիկը, Վաղոն, Անդոն (Առնօ), Հրաչիկը, Գագոն (Արվիզ)...»։

88թ ի վեր շատ բան է փոխուել։ 91ի Մայիսի 15ին ընկաւ Բերդաձորը։ Ընկաւ Անուշաւանը։ 92ի Մայիսի 15ին, մի տարի անց, ազատագրուեց։ 93ի Մայիսի 15ին լրանում է Բերդաձորի ազատագրման մի տարին, լրանում է Անուշաւանի նահատակման երկու տարին։ Այդ ընթացքում կորցրեցինք Շահումեանն ու Մարտակերտը։ Բայց ազատագրուեց Շուշին, բացուեց Լաչինի միջանցքը, Արցախում թուրք չմնաց, ազատագրուեց Քարավաճառը։ Ստեղծուեց Արցախի բանակը, որն ամէնուր ջախջախիչ հարուածներ է հասցնում թշնամուն...։ Այդ ընթացքում ոտքի ելաւ ու լեզու առաւ Անուշաւանի որդի Արաբո-Անուշաւանը, որը բնազդով արդէն անպայման գիտէ հօր տեղը՝ անմահների մէջ։ Ու երբ գայ օրը եւ անմահները հրամայեն նրան՝ կ'ելնի հօր հետքերով՝ հզօր, անսասան եւ յաղթական ու երջանիկ, քանզի նրա ընթացքը պաշտպանելու են երկու վիթխարի ոգի՝ Արաբո եւ Անուշաւան («Երկիր», 15 Մայիս 1993)։

Ց. Ս.

«ԵՍ ՄԻ ՋԱՐԿՆ ԵՄ ՔՈ ԿՌՈՒԻ...»

ՆՐԱՆՔ՝ ԵՐԿՐԻ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ

Նրանք ծնում են, որ արդարացնեն
մահկանացուների գոյությունը,
Նրանք ծնում են, որ իմաստավորեն
հայրենիքի գաղափարը,
Նրանք ծնում են, որ հաստատեն ժողովրդի
արժանապատվության զգացումը,
Նրանք ծնում են, որ պաշտպանեն ազգի
պատիվն ու ապահովությունը,
Նրանք ծնում են, որ քաղաքական խաղերի
ու դաւերի դէմ հաստատեն ուժի եւ
ըմբոստության օրէնքը։

Նրանք դժուար են ծնում, որովհետեւ ծնում են ազգի հաւաքական ուժից, բարոյականությունից, բնազդից, ոգուց։ Դժուար են ծնում, որովհետեւ իրենք աստուածներ են, որ ծնում են մահկանացուներից։ Այն մահկանացուների հաւաքականությունից, որը չի սպառուել, չի մեռել, չի կորցրել ինքնահաստատման յարատեւ կըռուի կամքը։ Նրանք չլինէին, մենք չէինք լինելու։ Նրանք յաւերժի ճամբորդներն են, որ լաւագի պէս ժայթքում են ազգի խռովուած արգանդից ու իրենց տաք գրկի մէջ առած հայրենիքը, պաշտպանում են նրան սեփական մարմնով։

Սարգիս Մաթեւոսեան

Նրանք ճանաչել են գոյատեւման պայման-բանաձեւերը եւ միայն իրենց համար ոչինչ չեն արել ու ոչինչ չեն յայտնագործել։ Որովհետեւ նրանք անձնուրաց, անկաշառ, անշահախնդիր աստուածներ են՝ Երկրի աստուածները։ Յաւերժի ճամբէքով Երկրի Աստուածները գալիս հաւասարում են մեզ, մեզնից առաջ են անցնում ու ուռնահեքերը

Ներսէս Բէրբէրեան

Աշոտ Խաչատրեան

խոտերի, ջրերի, ամպերի վրայ թողնելով՝ հեռանում են դէպի յաւերժութիւն։ Երկրի ամենահանճարեղ, ամենաանկաշառ, ամենանուիրուած, ամենաշմբոստ, ամենաքիչխրուն, ամենաչարաճճի երեխէքը խոտերի, ջրերի, ամպերի վրայ յայտնաբերում են աստուածների հետքերը եւ հիւանդանում են աստուածային հիւանդութեամբ։ Նրանք թողնում են խաղերը, հաղնում են սաղաւարտները, վերցնում են զէնքերը ու, յաւերժի ճամբէն բռնած՝ գնում են երկրի աստուածների հետքերով...

Մայիսի 24ին ազերիները յարձակուեցին Շահումեանի շրջանի Հայ Բորիս գիւղի վրայ, փորձելով առեւանգել գիւղի հօտը։ Մի խումբ երիտասարդներ, որ փորձել էին արգելք հանդիսանալ, դէմ առ դէմ են յայտնուել ՕՄՕՆականներին եւ Խորհրդային զօրքին։ Ցուցաբերելով հայ զինուորին վայել քաջութիւն, անհաւասար մարտում նահատակուեցին մեր ժողովրդի 5 զաւակները։

Ցիշենք նրանց անունները եւ հպարտութեամբ գրանցենք հայ ժողովրդի գոյատեւման պայքարի պատմութեան բոցաշունչ էջում՝

Սարգիս Մաթեւոսեան, անդամ Հ. Յ. Դաշնակցութեան
Ներսէս Բէրբէրեան, անդամ Հ. Յ. Դաշնակցութեան
Աշոտ Մէյրոյեան, անդամ Ազգային Ինքնորոշման Միաւորման
Մայիս Յովհաննիսեան, անդամ Հ. Յ. Դաշնակցութեան
Աշոտ Խաչատրեան, անդամ Հ. Յ. Դաշնակցութեան։

(30 *Մայիս* 1991) «ԱԶԱՏԱՄԱՐՏ»

ԻՄԱՑԵԱԼ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

Անմահներ չեն ծնւում, պարզապէս յանուն հայրենեաց իմացեալ մահով անմահանում են՝ անմահացնելով ազգն ու հայրենիքը։

«Մայիս 9ին լրանալու է իմ հայրիկի 30րդ տարին։ Իմ հայրիկը իր կեանքի վերջին գարունը բոլորեց Արցախ աշխարհում՝ մնացած գարունները նուիրելով Արցախի հայ մանուկների կեանքի ապահովութեանը»։ Այսպէս է իմաստաւորել իր հօր մահը 1991 թ. Մայիսի 24ին Շահումեանի շրջանի Հայ Բորիս գիւղում անմահացած Մայիս Յովհաննիսեանի 12ամեայ դուստր Հերմինէն։ Անմահներ չեն ծնւում, պարզապէս յանուն հայրենեաց իմացեալ մահով անմահանում են՝ անմահացնելով ազգն ու հայրենիքը։ Մայիս Յովհաննիսեանը ծնուել էր Երեւանում, 1956ի Մայիսի 9ին, շատերի պէս դպրոցն աւարտել (154րդ) եւ ծառայել էր Խորհրդային բանակում։ Ամուսնացած էր, աշխատում էր նուրբ բրդեայ գործուածքների կոմբինատում, ունի երկու դուստր։ Կենսագրական սխեմատիկ այս տուեալները, սակայն, ոչինչ չեն ասում անշահախնդիր ու մեծահոգի ընկերոջ, ուղղամիտ ու համեստ, պարզ ու դիւրահաւատ Մայիս անհատի, անձնազոհ ազատամարտիկի, հայրենիքի նուիրեալի, երդուեալ դաշնակցականի էութեան, նրա ոգու եւ ազգային վեհ նպատակների մասին։ 1988 Փետրուարեան ազգային զարթօնքով վերածնուած Մայիսը առաջիններից էր, որ մոռացած տուն, կին, երեխայ, ծնող, աշխատանք, փարուեց ազգային-ազատագրական պայքարին՝ ակտիւօրէն մասնակցելով նստացոյցերին, բողոքի երթերին, գործադուլներին ու միտինգներին։ Միաժամանակ առաջիններից էր, որ շուտով համոզուեց, *«որ միայն զէնքով կայ հայոց փրկութիւն»*։ Այդ գիտակցմամբ էլ նա անձնուրացօրէն մասնակցեց Կոռնիձորի, Երասխաւանի ու Նոյեմբերեանի մարտերին։ Արցախի ու արցախցու համար, իր իսկ խօսքերով, խելքը իրենը չէր, եւ պայքարում էր յանուն Արցախի ազատագրութեան, յանուն բռնադատուած հայրենի հողի վերամիաւորման։ Մայիսի համար Արցախը Հայաստանի Հանրապետութեան այսօրուայ պետական սահմանն էր՝ նրա արեւելեան պարիսպը։ Նրա համոզմամբ Արցախով էր սկսւում Մասիսի ճամբան։

Նուիրական այդ նպատակի իրականացման ճանապարհին էլ մարտիրոսուեց Մայիսը՝ մէկ անգամ եւս ապացուցելով մեզ, որ հայրենի հողը պաշտպանում կամ ազատագրում են ամէնից առաջ սեփական արեամբ։

Մայիս Յովհաննիսեան

Մեր պարտքն է ըմբռնել, որ նրանք զոհւում են բոլորիս համար, մեր հայրենիքի համար, Ազատ, Անկախ ու Միացեալ Հայաստանի համար։ Մեզ՝ ապրողներիս է վերապահուած շարունակելու նրանց սուրբ գործը, դրանով իսկ իմաստաւորելու նրանց իմացեալ մահը՝ նրանց անմահութիւնը։ Նրանց պայքարի շարունակութեան եւ այն յաղթանակով պսակելու մէջ է Մայիսների անմահութեան բուն իմաստը, այդ է նաեւ ազգային մեր գերխնդրին հասնելու պատմութեամբ մեզ պարտադրուած յարատեւ կռուի ողջ իմաստը («Երկիր», 12 Մայիսի 1992)։

ՌՈՒԲԷՆ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԶԱՐԶԱՆԴ (ՀՐԱՉ) ԴԱՆԻԷԼԵԱՆ



Ծնած է 1961ին, Հրազդանի շրջանի Աղաւնաձոր գիւղը: 1976ին աւարտած է դպրոցը եւ ապա աշխատած գիւղի կրանիթի հանքին մէջ: Ամուսնացած էր եւ երկու զաւակի հայր: 1988ին, եղած է Ղարաբաղեան շարժման յառաջամարտիկներէն: Մասնակցած է Տաւուշի, Այգեպարի, Զոդի, Ռակեպարի, Շաումեանի եւ Գետաշէնի կռիւներուն:

Նահատակուած է 29 Ապրիլ 1991ին, Գետաշէնի հերոսական կռիւներուն:

ՎԱԼԵՐԻ ՆԱԶԱՐԷԹԵԱՆ

Ծնած է 1961ին, Արցախի Խանլար շրջանի Գետաշէն գիւղը: Աշխատած է Գետաշէնի կոլտնտեսութեան բաժինին մէջ, իբրեւ հողամշակ: Ամուսնացած էր եւ երկու զաւակի հայր:

1990ին ընդունուած է Հ.Յ.Դաշնակցութեան շարքերը եւ մասնակցած՝ Գետաշէնի ինքնապաշտպանութեան բոլոր կռիւներուն:

Նահատակուած է 29 Ապրիլ 1991ին, Գետաշէնի հերոսական կռիւներուն:

ԲԱՅՑ ՉԷՆ Ի ՁԵՌ ՈՏՔԻ ԿԱՆԳՆԵՑԱՆ

Ջիան Աբրահամեան

Շահումեանի շրջանում վերջին օրերին կատարուող իրադարձութիւնները, այս էլ ո-րերորդ անգամ, ապացուցում են, որ Արցախեան հարցը «քաղաքական» լինելուց վաղուց է դադարել, որ Արցախում մղում է իսկական պատերազմ:

Օրեր առաջ դատարկուեցին Բուզլուխը, Մանաշիդը, Էրքեջը, որոնց բնակիչները պատրաստարուել են մերձակայ անտառներում: Եւ ահա, Յուլիսի 20ին նորից ուժեղ ռմբակոծութեան ենթարկուեցին դատարկուած գիւղերը, շրջապատուեցին Խորհրդային զօրքերով, ՕՄՕՆականներով, զրահամեքենաներով ու տասնեակ հրաձգիներով: Նախորդ օրը, Վերին Ծէնի վրայով ամբողջ օրը թռել են զինուորական ուղղաթիռներ: Այդ ուղղաթիռներից օրուայ երկրորդ կէսին, գիւղից երկու քիլոմեթրի վրայ դեսանտ է իջեցուել, ժամը 16ին դեսանտ է իջեցուել նաեւ Էրքեջի եւ Բուզլուխի միջեւ: Դեսանտային ները յարձակուել են եւ անտառում պատրաստարուածների վրայ: Հայ ինքնապաշտպանական ուժերը հերոսական դիմադրութիւն ցոյց տուեցին, չընկրկեցին նոյնիսկ հրաձգիների ու զրահամեքենաների առջեւ, որոնցից մէկը ոչնչացրին: Կռիւն անհաւասար էր, սակայն ՕՄՕՆականներին եւ Խորհրդային բանակին չյաջողուեց յաղթահարել մեր պաշտպանական գծերը: Սա ռազմական յաղթանակ էր, նաեւ՝ ոգու յաղթանակ: Մեր կողմից եղան 16 վիրաւորներ եւ 4 զոհ, 4 քաջարի հայորդիներ, որոնց գնացին միանալու անմահների փաղանգին՝ իրենց արեամբ եւս մի անգամ վերլիշելով, որ հայրենի հողը կանգուն է միայն յարատեւ կռուով, միայն արեամբ: Հպարտութեամբ, նաեւ դառն ափսոսանքով պէտք է յիշել նրանց պայծառ անունները:

Ցաւերժ փառք նրանց:

Համոզուած ենք, որ ուրբի կ'ելնեն նոր հերոսներ՝ հայ քաջորդիների արեամբ արբեցած Շահումեանի հողը պաշտպանելու համար (Յուլիս 1991):

«ԱԶԱՏԱՄԱՐՏ»

Նիկոլայ Հայրապետեան

ԽՈՆԱՐՀ ՀԵՐՈՍԸ



Ընկ. Անդրանիկ Պետրոսեանը ծնուած է 1961 թուականին՝ Թումանեանի շրջանի Աքորի գիւղում։

Նա սովորել է Ստեփանաւանի անասնաբուծական-անասնաբուժական տեխնիկումում, աշխատում էր Ալավերդու լեռնամետալուրգիական կոմբինատում։

Ամուսնացած է, ունի երկու երեխայ։

1988 թուականից մասնակցել է ԼՂԻՄի ինքնապաշտպանական բոլոր կռիւներին։

* * *

Յուլիսի 22ին՝ Շահումեանի ինքնապաշտպանական մարտերում զոհուած Հ.Յ.Դաշնակցութեան անդամ Անդրանիկ Պետրոսեանի դին՝ դէպի ծննդավայր ճանապարհին, դիմաւորում էին շրջանների, գիւղերի բնակիչները, իրենց յարգանքի տուրքը մատուցելով յանուն հայրենիքի զոհուած մարտիկին։

Երեքշաբթի օրն՝ իր զոհուած զաւակին ընդունեց Ալավերդին։ Սգոյ արարողութիւնը շարունակուեց Ալավերդու մարզադաշտում, ուր Անդրանիկ Պետրոսեանին իրենց վերջին հրաժեշտը տալու համար հաւաքուել էին Ալավերդու եւ հարեւան շրջանների ու գիւղերի բնակիչները։ Հրաժեշտի խօսք ասացին Հ.Յ.Դ. Ստեփանաւանի, Կիրովականի, Իջեւանի շրջանային կոմիտէութիւնների ներկայացուցիչները։

Ժամը 14ին սգոյ թափորը հասաւ Անդրանիկ Պետրոսեանի ծննդավայրը՝ Աքորի գիւղը։ Մարտիկի մարմինը հողին յանձնուեց մարտական ընկերների համազարկների ներքոյ (Յուլիս 1991)։

«ԱԶԱՏԱՄԱՐՏ»

ՎԱՐԴԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԻ ՏԷՐՏԷՐԵԱՆ

Վարդանը վերջին անգամ մասնակցելով Վերին Շէնի ազատագրմանը, իր երկու ընկերների՝ Ջիւանի եւ Կոլիայի հետ միասին փրկել է 20 ազատամարտիկների կեանք:

Վարդան Յարութիւնի Տէրտէրեանը ծնուել է 1968 թ.: Սովորել եւ աւարտել է մարզական թեքումով թիւ 115 դպրոցում, որպէս կոփամարտիկ: Ունեցել է մաստերսպորտի կոչում, պարգեւատրուել է պատուագրերով եւ ունեցել շատ սպորտային յաջողութիւններ: Մրցումներով մասնակցել է Խորհրդային տարբեր քաղաքներում: Ծառայել է Խորհրդային բանակում:

Վերադարձել է 1988 թ.: Այդ ժամանակ սկսուել է Ղարաբաղեան շարժումը եւ մասնակցել է այդ շարժմանը: Այնուհետեւ այդ ընթացքում միաժամանակ ընդունուել է Նոր Հաճնի գիւղատնտեսական տեխնիկումի տնտեսագիտական բաժնում՝ հեռակայ: Իսկ երբ ստեղծուեց յատուկ գունդը, Վարդան Տէրտէրեանը տեղափոխուում եւ ընդունուում է յատուկ գնդում, որպէս մարտիկ: Վարդան Տէրտէրեանը եղել է համեստ, խելացի եւ բոլորի կողմից յարգուած ու սիրուած: Մասնակցել է Երասխաւանի, Արցախի մարտերին, նաեւ Ծաղումեանի շրջանի Էրքեջ, Մանաշիդ գիւղերի ազատագրմանը:

Վարդանը վերջին անգամ մասնակցելով Վերին Շէնի ազատագրմանը, իր երկու ընկերների՝ Ջիւանի եւ Կոլիայի հետ միասին փրկել է 20 ազատամարտիկների կեանք: 1991 թ. Յուլիսի 21ին զոհուում է Վարդան Տէրտէրեանը (Ջեռագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ՄՈՒՇԵՂ ՄԽՈՅԵԱՆ (ՄԻՇԻԿ)

Եւ վտանգի առաջին իսկ պահից մարտադաշտում էր՝ Երասխում լինէր, Կոռնիձորում, Նոյեմբերեանում, թէ... Տաւուշում, որի հողը նրա վերջին խիզախութեան վկան եղաւ

Ազատութեան հրապարակում, նրան վերջին հրաժեշտ տալիս, այսպիսի խօսքեր հնչեցին. «Նա զոհուեց իր նմանը։ Նա չէր կարող սովորական մահկանացուի նման հեռանալ այս աշխարհից, նա չէր կարող նաեւ գերի յանձնուել թշնամուն։ Սահմաններ չճանաչող նրա խիզախութիւնն ու ազատասէր ոգին թոյլ չէին տայ։ Ազատագրական շարժման առաջին օրերից նա ո՛չ միայն Ազատութեան հրապարակում էր, այլեւ՝ այդ հրապարակի պաշտպանը։ Եւ վտանգի առաջին իսկ պահից մարտադաշտում էր՝ Երասխում լինէր, Կոռնիձորում, Նոյեմբերեանում, թէ... Տաւուշում, որի հողը նրա վերջին խիզախութեան վկան եղաւ։ Մուշեղ Մխոյեանը (Միշիկը) ո՛չ միայն նուիրուած ու անվախ մարտիկ էր, այլեւ իրագործութիւններում արագ կողմնորոշուող ու սթափ մտածող. դրա լաւագոյն օրինակներից մէկը 1990ի Մայիսի 27ն էր, երբ նաեւ նրա մեծ ջանքերի շնորհիւ կանխուեց արիւնահեղութեան շարունակութիւնը։

Միշիկը, այո, իր պէս ապրեց եւ ընկաւ, ինչպէս ազգի նուիրեալը կ՚ընկնէր։ Եւ ինչպէս բոլոր հերոս նահատակները, նրա հոգին մեզ հետ կը լինի, իր ժողովրդի հետ եւ նրա խիզախութիւնն ու հայրենիքին անմնացորդ նուիրուածութիւնը օրինակ կը լինեն սերունդների համար, կեանքի կը կոչեն նորանոր խիզախներ... (8 *Մայիս* 1991, *թիւ* 18)։

«ՀԱՅՐ»

ԵՐԿՈՒ ՇԻՐԻՄ, ԵՐԿՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ

Զինուոր ու հրամանատար է եղել, կռուել ու կռուի է առաջնորդել Երասխաւանում, Խաչիկում, Շահումեանում, Գետաշէնում, Էրքեջում, Մարտունաշէնում, Մանաշիդում, Մարտակերտում, Դրմբոնում: Ու հանգչել Հաթերքում...

Աշխարհում քանի՞ հայ կայ, որի մարմինը մի տեղ է թաղուած, սիրտը՝ մէկ այլ: Աշխարհում քանի՞ մարդ կայ, որի մարմինն ու հոգին կիսուել են կայծակնահար ծառի բնի նման: Քանի՞սն են նրանք, ընտրեա՞լ են, մե՞ծ, ոչ-սովորական մահկանացո՞ւ, ի՞նչ խորհուրդ է թաքնուած այս ճակատագրի տակ...

Գուրգէն Առաքելեանի մարմինը հանգչում է Երեւանում, Թոխմախի գերեզմանոցում, իր երկու զինուորների կողքին: Իսկ սիրտը Հաթերքում է: Երկու շիրիմ ունի Գուրգէնը, երկու գերեզմանաքար...

Երկատուած չի ապրել: Հայաստանի ծնունդ էր, կռւում էր Արցախում, բայց Արցախն ինքը Հայաստան է: Երկու հայրենիք չի ունեցել: Մէկ, միասնական Հայրենիքի համար է մարտնչել: Մենակ չի մարտնչել: Ընկերոջ՝ Մանուէլի հետ ջոկատ են ստեղծել. «Գարեգին Նժդեհ»: Զինուոր ու հրամանատար է եղել, կռուել ու կռուի է առաջնորդել Երասխաւանում, Խաչիկում, Շահումեանում, Գետաշէնում, Էրքեջում, Մարտունաշէնում, Մանաշիդում, Մարտակերտում, Դրմբոնում: Ու հանգչել Հաթերքում...

Երբուանի՞ց է մարտերի մէջ: Ընկերները ստոյգ օրը չեն յիշում: Որովհետեւ ոչ ոք ստոյգ չգիտի առաջին մարտի օրը: Իսկ նա մարտերին մասնակցել է առաջին իսկ օրերից՝ 88 թուականից: Գրեթէ տանը չէր լինում: Առաջին որդու ծնունդը չտեսաւ՝ մարտադաշտում էր: Երկրորդ որդու ծնունդը չտեսաւ՝ նահատակ էր:

91 թուականի Յուլիսի 28: Գուրգէնի ծննդեան օրը: Հաթերք: Զոկատի հինգ անդամներ մարտի էին բռնուել թուրք—ռուսական միացեալ ջոկատի դէմ: Ինչպէս միշտ՝ կռիւն անհաւասար էր: Ինչպէս միշտ՝ կռուում էին խիզախօրէն: Գուրգէնն ընկաւ: Գիշեր էր, շրջապատում էին: Թուրքերը գիտէին ով է իրենց դէմ կռուում, գլխի էին ընկել, թէ ինչ է տեղի ունեցել: Ուզում էին գերել դին...

Հաստաբուն ծառի տակ թաղեցին Գուրգէնին: Չորս օր անց, դարձեալ գիշերով, հանեցին, տարան Հաթերք: Սիրտը հողին յանձնեցին Հաթերքում: Իսկ մարմինը բերեցին Երեւան, հողին յանձնեցին Թոխմախում: Նոյն օրը, երեկոյեան, աշխարհ եկաւ Գուրգէնի երկրորդ որդին՝ փոքրիկ Գուրգէնը: 91 թուականի Օգոստոսի չորսն էր...

Երկատուեց Գուրգէնը, որ միմեանց կապուեն Արցախն ու Հայաստանը: Եւ ի՞նչ իմանաս, գուցէ հէնց ա՞յս է նրա ճակատագրի խորհուրդը... («Երկիր», 4 Օգոստոս 1993):

Յ. Ս.



ՄԱՆԱՇԻԴ

ԼԱՒԱԳՈՅՆ ՏՂԵՐՔԸ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՆ

Մնած է Երեւանի Շահումեան շրջանը։

1988ին սկսեալ մասնակցած է Հայաստանի սահմանային գիւղերու ինքնապաշտպանութեան կռիւներուն՝ Գորիս, Երասխաւան, Նոյեմբերեան։ 1991 գարնան անդամակցած է Հ.Յ.Դաշնակցութեան։

Նահատակուած է 26 Սեպտեմբեր 1991ին, Բուզլուխի ինքնապաշտպանութեան կռիւներուն։

Ամէն օրուայ հետ դրան փեղկը ասես քամուց յետ է հրում, տարուրերում ճոռալով ու ցուրտը խուժում է դատարկ սենեակ...

Լաւագոյն տղերքը հեռանում են, ու մնում է այս սառնութիւնը՝ այնքան անյարիր նրանց էութեանը, որ կրակ էր, ջերմութիւն. «Բարով արժանանամ հրեղէն գնդակի համբոյրին»:

Սաքոն...

Մարդիկ տարբեր են: Ամէն մէկը իւրովի է մտածում, ամէն մէկն ապրելու իր ձեւով է անցնում կեանք կոչուող ճանապարհը: Եւ բոլորին չի տրուած սուրբ նպատակի գիտակցութիւնը:

Սաքոն յախուռն էր, տարերային. Նժդեհի հետեւորդ ցեղակրօնութեան պատգամներն էր կրում իր մէջ: 88ի Շարժման հէնց սկզբից գիտակցաբար նուիրուել էր ազգային-ազատագրական պայքարին: Կըռուեց Գորիսի շրջանում, Երասխաւանում, Նոյեմբերեանում:

Յիշում եմ այն օրերը, երբ փողոցներում անընկարագրելի յուզում էր, ահռելի բազմութիւն, որ վանկարկում էր. *«Հայե՛ր, միացէ՛ք...»։* Ո՞ւր է միաբանութեան այդ շրջան, որ պիտի սահման դառնար մեր սահմանին: Հիմա ուղղաթիռները յետ են բերում մէկին, երկուսին, երեքին...

Սարգիս Խիթարեանը 1991ի գարնանը անդամագրուեց Հ.Յ.Դաշնակցութեանը եւ մեկնեց Շահումեանի շրջան: Մարտիկի հոգեբանութիւնն ուրիշ է, նա կարօտում է զէնքին, պայքարին: Նրանց երբեմն հունից հանում են քաղաքական մանեւրները, որոնց հետեւանքով ընտիպուած են լինում անորոշութեան եւ սպասումների մէջ տարուբերուել: Մայիսի 27ին Շահումեանի շրջանից վերադառնալուց յետոյ, ձեռքը ոչ մի գործի չէր կպչում, տանը նստած զէնքերն էր կարգի բերում, լից-

քաւորում: Մօր յորդորներին պատասխանում էր.— *«Իմ տեղը Եռաբլուրն է, ուրիշ ճանապարհ չունեմ»։*

Սեպտեմբերի 23ին նա նորից գնաց, իսկ 26ին Բուզլուխ գիւղի ինքնապաշտպանութեան մարտի ժամանակ նահատակուեց...: Գնաց միանալու իր ընկերներին, որոնց վրէժը լուծելու համար էր նաեւ կռուի ելել:

Մենք գիտենք, որ հայրենիքի համար պայքարի ելնող ամէն ոք մահուանն ընդառաջ է գնում յանուն յաղթանակի: Բայց դէպի յաղթանակ տանող կամուրջը լենուած չէ հողին...

Ես իմ աղերսն եմ յղում առ Աստուած, որ յաղթանակին արժանի անի տղաների արիւնը, եւ հանգիստ իջնի նրանց հոգիներին («Երկիր», 2 Հոկտեմբեր 1991):

Ա. ԳԱԼՍՏԵԱՆ

ԲՈՒԶԼՈՒԽ

ԱՅՍՊԷՍ ԸՆԿԱՆ

ԱԹԱԲԵԿ ՎԱՐԴԱՆԵԱՆ

12 Հոկտեմբեր 1991ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մամլոյ եւ տեղեկատու կենտրոնի թղթակիցը Հանգիպում ունեցաւ Շահումեանի շրջանի Ղարաչինար գիւղի պաշտպանութիւնն ստանձնած ջոկատներից մէկի խմբապետի հետ, խնդրելով ներկայացնել գիւղում եւ շրջանում տիրող կացու-

...Յերեկուայ հանգիստ պահերին Արշաւիրը երեխաների հետ մարզական պարապմունքներ էր անցկացնում, Աթաբեկը կրօնական թեմաներով զրոյցներ էր ունենում գիւղացիների հետ: Անընդհատ շարժման մէջ էին, հետախուզական լայն աշխատանք էին կատարում: Համարձակ էին կռուի մէջ եւ խուճապի չէին մատնւում: Նրանք մասնակցել էին նաեւ Բերդաձորի պաշտպանութեան մարտերին:

Սեպտեմբերի 5ից մեր 10 հոգանոց ջոկատը գտնւում էր Շահումեանի շրջանի Ղարաչինար գիւղում: Մենք ծանօթացանք այն դիրքերին, որը յանձնւում էր մեր պաշտպանութեանը: Մեր դիրքը Ղարաչինար գիւղն էր, որը բաղկացած է երեք մասից՝ Գաղտուտ, Մանասաշէն եւ Ղարաչինար: Ադրբեջանական Շեֆէկ գիւղը փաստօրէն կենտրոնում գտնուող Ղարաչինարի շարունակութիւնն է կազմում: Առաջին օրերը անցնում էին յարաբերաբար հանգիստ եւ ադրբեջանական կողմի կրակոցներին գրեթէ չէինք պատասխանում: Սեպտեմբերի 10ից գնալով հակառակորդ կողմը սաստկացրեց կրակը, եւ մենք հարկադրուած էինք պատասխանել: Որոշեցինք պատասխան հարուած հասցնել, որպէսզի ադրբեջանցիները իմանան, որ գիւղը պաշտպանում է: Դրանով նպատակ ունէինք կանխելու նրանց աւելի մեծածաւալ յարձակումները: Եղած զինամթերքով պատրաստուեցինք եւ շարժուեցինք դէպի Գաղտուտի անասնապահական ֆերմա, որը չէզոք գօտում է գտնւում: Գիշերով մօտենալով ֆերմային՝ մօտաւորապէս ուղիղ գծով 100-150 մետր հեռաւորութիւնից ռմբակոծեցինք Շեֆէկ գիւղի այն հաւանական կէտերը, որտեղից կրակում էին Ղարաչինարի վրայ: Հատուկենտ պատասխան կրակոցներ եղան: Յաջորդ օրը ադրբեջանական լրատուութիւնից տե-

ՄԵՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Թիւնը եւ հայկական ինքնապաշտպանութեան ջոկատների գործունէութիւնը։ Յիշեցնենք, որ այս ջոկատի մաս էին կազմում Թալինից Աթաբեկ Վարդանեանը եւ Արշաւիր Ասլանեանը, որոնք զոհուեցին Հոկտեմբերի 11ին՝ Ղարաչինարում։

ԱՐՇԱՒԻՐ ԱՍԼԱՆԵԱՆ

ղեկացանք, որ զոհուել են 8 ՕՄՕՆականներ եւ 15 հոգի վիրաւորուել են։ Հետագայ օրերը համեմատաբար հանգիստ անցան։

Մեր խմբապետի վիրաւորուելուց յետոյ խմբապետի պարտականութիւնը ստանձնեցի ես։ Մի քանի օր անց ադրբեջանական կողմից սկսուեց հրանօթային յարձակում մեր դիրքերի վրայ. կրակում էին հակակրատային հրանօթներից։ Մենք ուժեղացնում էինք մեր պահակակէտերը համապատասխան կրակ բացելով թշնամու վրայ, որպէսզի թոյլ չտանք հետեւակային յարձակում մեր գիւղերի վրայ։ Հոկտեմբերի 10ի լոյս 11ի գիշերը 6 հոգով հսկում էինք դիրքերում, իսկ միւսները աւելի ուշ պիտի գային մեզ փոխարինելու։ Առաւօտեան մեզ փոխարինեցին Աշոտը, Աթաբեկը եւ միւսները։ Գնացինք հանգստանալու։ Յերեկուայ ժամը 12ին մօտ յայտնուեց մի ուղղաթիռ։ Լսելով, որ ուղղաթիռը փորձում է վայրէջք կատարել, մենք վերցրինք զէնքերը եւ վազեցինք այդ ուղղութեամբ։ Ուղղաթիռին չհասած՝ 200 մետրի վրայ, ՕՄՕՆականների կրակահերթերը մեզ արգելեցին մօտենալ։ Տղաները ուզում էին կրակ բացել, սակայն կասկած կար, որ ուղղաթիռը կարող է հայկական լինել։ Ադրբեջանցիները Շեֆէկի կողմից կրակ էին բացել, մտածելով, թէ ուղղաթիռը հայկական է։ Քիչ անց ուղղաթիռից սկսեցին կրակել մեզ վրայ։ Մենք պատասխան կրակ բացեցինք։ Ուղղաթիռը օդ բարձրացաւ եւ մենք ամէն կողմից մօտ 50 գնդացիրներով սկսեցինք կրակել նրա վրայ։ Ուղղաթիռը մօտեցաւ Շեֆէկի վերեւում գտնուող կարկտային կայանին եւ անհետացաւ բլրի ետեւում։ Նրա անհետանալուց յետոյ բլրի ետեւից սեւ ծուխ բարձրացաւ եւ ուժգին բոց։ Ովքեր աւելի մօտ էին եղել դէպքի վայրին, կարծում են, որ ուղղաթիռը ոչնչա-

ցել է: Դրանից յետոյ ես անմիջապէս բարձրացայ դէպի Արշաւիրի եւ Աթաբեկի գրաւած դիրքը, որպէսզի պարզեմ, թէ ինչու իրենց կողմից կրակոց չեղաւ: Դիրքին չհասած՝ տղաներից մէկը ասաց, որ նրանք եղել են ուղղաթիռի մօտ:

Ներկաների վկայութեամբ, Արշաւիրը եւ Աթաբեկը տեսնելով ուղղաթիռը, տղաներից մէկին թողել են դիրքում եւ իրենք շտապել են ուղղաթիռի կատարած վայրէջքի տեղը: Զգուշութեամբ մօտենալով պարզել են, որ ուղղաթիռը ադրբեջանական է եւ մառախլապատ եղանակի պատճառով սխալմամբ իջել էր մեր սահմանում: Աթաբեկը զէնքով սպառնացել է օդաչուին, որ հանգցնի ուղղաթիռի շարժիչը: Արշաւիրը այդ ժամանակ շտապել է ուղղաթիռից իջած ուղեւորների կողմը եւ նրանց վերցրել է հսկողութեան տակ: Այդ ժամանակ ադրբեջանաբնակ Շեֆէկ գիւղից սկսուել է ուժգին գնդացրային կրակ: Այնուհետեւ ուղղաթիռից ոչ-հեռու պայթել են արկեր, որոնցից սպանուել են Արշաւիրը եւ Աթաբեկը: Ուղղաթիռից իջած ուղեւորները ընկնելով երկկողմանի կրակի տակ, նորից ետ են դարձել ուղղաթիռ, քարշ տալով երկու վիրաւորների կամ սպանուածների: Ուղղաթիռին յաջողուել է օդ բարձրանալ: Գետնից կտրուելուց յետոյ ուղղաթիռի բոլոր պատուհաններից սկսել են կրակ տեղալ մեր դիրքերի վրայ: Շեֆէկի ադրբեջանցիները այդ միջոցին հասկանալով, որ ուղղաթիռը ադրբեջանական է, կրակի ուղղութիւնը տեղափոխել են գիւղի կողմը: Գաղտուտ գիւղում վիրաւորուել են 4 մարդ, որոնցից մէկը՝ ծանր:

Դէպքից յետոյ գտանք Արշաւիրին եւ արդէն մահացած տեղափոխեցինք Շահումեանի հիւանդանոց: Աւելի ուշ տղաները գտել եւ հիւանդանոց էին տեղափոխել Աթաբեկին, որը նոյնպէս մահացած էր արդէն:

Այսպէս ընկան մեր ընկերները, մարտի մէջ, զէնքը ձեռքին...

«ՈՒՐԲԱԹ»

Գէորգ Վարդանեանը Տոհմածառի յուշատետրով էր դաստիարակել որդուն: Յուշատետրի առաջին էջում պատկերուած է մի մեծ տոհմածառ, որի արմատների տակ գրուած է՝ Սասնոյ հող ու ջուր: Մաս, որի արմատները դրկուել են հայրենի ջրից ու հողից, սակայն ճիւղերը են տալիս: Յաջորդ էջերում հայրենասիրական տարբեր պատմութիւններ են, որոնք վերաբերում են իրենց գիւղի, Գելեգուզանի, Տալորիկի հերոսամարտերին: Կան զանազան մէջբերումներ, անուանի մարդկանց մտքեր, հետաքրքիր դէպքեր նրանց կեանքից: Ու այդ էջերում՝ «Ամենայն տեղ մահը մի է...», «Շունչդ տո՛ւր, հոգի՛դ, բայց հայրենիքդ մի՛ տար թշնամուց...», «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն...»:

Ինձ համար պարզ դարձան այն ակունքները, որոնցից սնունդ էր առել Աթոյի խիզախ հոգին («Լուսաւորիչ», 14 Մայիս 1992, թիւ 15):

ՀԱՅԿԱՆՈՒՇ, ՄԵՍՐՈՊԵԱՆ

ԸՆԿԱՆ ՅԱՐԱՏԵԻ ԿՌՈՒԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մարտիկներն էին նահատակ մեր ընկերները։ Ա՛յն կազմակերպութեան, որ այսօր կրկին վերադարձել է կենդանի պայքարի դաշտ, այդ պայքարին նուիրաբերելով ամենաընտիրները՝ ծաղի՛կը իր շարքերի։

1991 թ. Հոկտեմբերի 11ին, Արշաւիր Սարգսեանը եւ Աթաբեկ Վարդանեանը ընկան հայրենի հողի պաշտպանութեան կռուում։ Հայաստանի Թալինի շրջանից Հիւսիսային Արցախի կարաչինար գիւղ տանող ճանապարհը նրանք անցան «Էրգիր» գնացող ֆիդայու քայլերով՝ հաստատակամ, անվերադարձ...։ Գնացին ու միացան անձնուրացների այն հսկայ փաղանգին, որ հարիւր տարիներ առաջ ազատագրութեան դրօշը պարզեց Սասնայ լեռներում, անկոտրում հաւատքով քայլեց դժոխքի արիւնոտ խորխորատներով, կերտեց Սարդարապատ ու Մայիս 28 եւ որի այսօրուայ նուիրեալները Հայաստանի սահմանների վրայ թէ Արցախի սարերում՝ արդէն գործի՛ ու առօրեայ կեանքի՛ են վերածել քրիստափորեան «Ցարատեւ կռուի» պատգամը։

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մարտիկներն էին նահատակ մեր ընկերները։ Ա՛յն կազմակերպութեան, որ 1905ին, Բաքւում, Ղարաբաղում, Արարատեան դաշտում եւ ամբողջ Անդրկովկասում ջախջախիչ հարուած տալուց յետոյ թաթարական՝ նո՛յն ազերի թուրքական նկրտումներին, այսօր կրկին վերադարձել է կենդանի պայքարի դաշտ, այդ պայքարին նուիրաբերելով ամենաընտիրները՝ ծաղի՛կը իր շարքերի։

Ամէն մի նահատակի իղձը մէ՛կն է՝ այնպէս լինի, որ ընկածների մէջ ինքը վերջինը լինի ու իր մահով՝ տօնուի վերջնական յաղթանակը պայքարի։ Սակայն այնքան ժամանակ քանի դեռ հայ ժողովրդի մարդկային ու ազգային իրաւունքները ոտնահարւում են ամէնուրեք, այնքան ժամանակ քանի դեռ «Գորշ գայլը» իր բաց երախով կանգնած է մեր առաջ եւ մարդ ու հող ունենք վտանգուած, անխուսափելի են զոհերը, խուսափում չկայ արեան թանկ գնից, որ պիտի վճարուի ամենաթանգին՝ ազատութեան դիմաց։

Հայաստանի ու հայութեան համար, մեր ընկերները այդ գինը վճարեցին իրենց սեփական երակներից։ Եւ նրանք պատդամում են. համառարած անտարբերութեան ծովում չմոլորել, այլ առաւելՙ յանձնառութեամբ կառչել պայքարին, հրաժարուել եռգարձի ու փախուստի ճանապարհներից, եւ այստեղից ու այնտեղից հրամցուող մեղկ «լուծումների» փոխարէն, ապաւինել մեր մտքի ու բազկի զօրութեանը, ու վերջապէսՙ վախճանական մեր նպատակների իրագործման համար, անսայթաքՙ անսասանՙ եւ հաւատաւորՙ գնալ «Ցարատեւ կռուի» միակ փրկարար ուղիով (1991, թիւ 33)։

«ԱԶԱՏԱՄԱՐՏ»

Երկու տարի առաջ Աթոն հօր՝ Գէորգ Վարդանեանի հետ Էրգիր գնաց։ Գնաց՝ կարօտը, զայրոյթը եւ ցասումը սրտում։ Գնաց Սասունի Արխունի գիւղ, գնաց իր պապ Աթոյի տունը։ Զգաց Մարիամ տատի եւ Աթօ պապի շունչը։ Տեսաւ նրանց երկրարկանի տունը, պապի տնկած ծառերը, Ծովասարն ու Անդոկ սարը, Բինգէոլն ու Արխունդի աղբիւրը։ Տեսաւ իր պապերի եղեմական երկիրը։ Տեսաւ...։ Ապա ասես ականջին հասան սպանուած պապերի, արնաշաղախ մանուկների վերջին ճիչերը։ Սասնայ հողի վրայ երդում տուեց հազարամեայ հայրենիքին։ Կորցրածի կարօտն ու ցաւը փոխանցուեց նրան, փոխանցուեց ու վրէժի կրակը թէժ մնաց հոգում։

Կարօտի ու վրէժի այդ կրակն էր, որ Թալինի շրջանի դաւթաշէնցի Աթոյին եւ իր նմաններին Արցախ առաջնորդեց՝ վտանգուած հայրենիքը թշնամուց պաշտպանելու։

«Հայրենիքի կանչը ամենազօրեղն է, ամենաուժգինը, իսկ եթէ հայրենիք ունես, այն էլՙ վտանգուած, ինչպէ՞ս կարող ես հանգիստ մնալ։ Եթէ իմ հողի վրայ լաց կայ, արիւն ու արցունք, եթէ պապիս սպանողը հիմա էլ ինձ վրայ է ձեռք բարձրացնում, ինչպէ՞ս պայքարի դուրս չգամ»։

Այսպէս էր մտածում, այսպէս էր ապրում Աթոն։

Աթաբեկն ու իր նման նահատակները լաւ գիտէին, որ անցեալի դասերը տառապանքի համար չեն, այլՙ ուսանելու, որ թշնամու դէմ հարկաւոր է ընդվզել, մարտնչել մինչեւ յաղթանակը։ Նրանք գիտէին, որ մեր թշնամին նման է անկուշտ գազանի, որի հոգին ուրիշին թալանելով է կշտանում միայն։ Թալանեցին մեր պապերի եւ նախապապերի հայրենիքը, չկշտացան։ Այսօր էլ է գործում նոյն գազանային բնազդը։

Մեր ազգային ոգու առաքինութիւններից չենք կարող հրաժարուել, սակայն դարերի փորձն ու իմաստութիւնը թելադրում են, որ հարկաւոր է սթափուել, հասկանալ, որ քանի դեռ աշխարհում չարը գոյութիւն ունի, խաչ կրողը սուր էլ պէտք է ունենայ։

Մեր ժողովուրդը կորուստներ շատ է կրել եւ գիտի հերոսներին սրբացնել։ Դաւթաշէնում Աթաբեկի ոճիրը Հայրենականում ընկած հերոսների յուշարձանի կողքին հանգչեց։ Հոգին Սասնայ ու Մուսա լեռներում թեւածող հայ հերոսների ոգուն միացաւ։

Թաղման ժամանակ մոլորուած մի կռունկ պտոյտ գործեց գիւղի գերեզմանոցի վրայ ու ճախրեց դէպի Էրգիր («Երկիր», Նոյեմբեր 1991)

(Ծապաւումներով) ԱՆԱՀԻՏ ԴԱՒԹԵԱՆ

ԱԹԱԲԵԿ ԳԷՈՐԳԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ

(Ա Թ Օ)

Երբ Աթոն լինում էր ջոկատում,
կամ խմբում, թում էր, թէ թեւ ենք
առնում, այդտեղ պարտութիւն չկայ,
շուտ էր կողմնորոշւում մարտում...:
Հայրենի հողի, հայ ժողովրդի կեանքի
ու պատուի պաշտպանութիւնը բարձր էր
դասում ամէն ինչից:

Ծնուել է 1953 թուականի Սեպտեմբերի 21ին՝ Հայաստանի Հանրապետութեան Թալինի շրջանի Դաւթաշէն գիւղում:

1961 թ. սովորել է գիւղի 8ամեայ դպրոցում, ապա 1971 թ. աւարտել Կաթնաղբիւրի միջնակարգ դպրոցը: 1976 թուականին աւարտել է Երեւանի հիդրոմելիորատիւ տեխնիկումը: Աւարտելուց յետոյ աշխատել է շրջանի շինարարական օբյեկտներում որպէս աշխղեկ:

Պարտաճանաչ եւ կարգապահ աշխատող էր, գործունեայ: Գեղեցիկ տղամարդ էր, բարձրահասակ, լայնաթիկունք, գանգրահեր, միշտ ուրախ ժպիտը դէմքին:

Կեանքում չէր սիրում անազնուութիւնը, սուտ խօսելը, քծնանքը, դաւաճանութիւնը, բամբասանքը:

Կեղծաւոր չէր, ունէր պարզ, ազնիւ ու շիտակ հոգի, միշտ իր խօսքին տէր: Անվախ էր, վերջին աստիճանի գաղտնապահ:

Ընկերասէր էր, հիւրասէր ու մարդամօտ:

Մեծ յարգանք էր վայելում ընկերների շրջանում:

Վրէժխնդրութիւն, քէն, ատելութիւն, չարիք ու նախանձ՝ չգիտէր ինչ բան է:

Բանակային ծառայութիւնը անցկացրել է Գերմանիայում: Ամուսնացել է 1980 թուականին, ունի 2 աղջիկ եւ 1 տղայ: 1988 թ. երբ սկսուեց Ղարաբաղեան շարժումը, նա միշտ Երեւանում էր՝ միտինգների ու ցոյցերի անբաժան մասնակիցը:

1988 թուականի Դեկտեմբերի 7ի աճաւոր երկրաշարժի առաջին իսկ օրից (Լենինականում) Գիւմրիում մասնակցեց փրկարար աշխա-

տանքներին: Այնուհետեւ, երեք ամսից աւելի՝ հացի գործարանի վերաբնորոգմանը:

1989 թուականի Հոկտեմբեր ամսին, Աթոն եղաւ Թուրքիայում եւ Սուրիայում: Նա եղաւ Սասուն, Արխանդ գիւղում, եղաւ իր Աթо պապի ծնուած ու ապրած տանը, տեսաւ այնտեղ ապրող իր հարազատներին:

Տեսաւ ապ ու պապերի Էրգիրը, որ այնքան երազում էր: Աթոն տեսաւ հայոց վեհ՝ Անդոք, Կեպին, Ծովասար, Մարաթուկ, Սիփան, Նեմրութ սարերը, ուր թուրքական կանոնաւոր զօրքի դէմ կռուել են Արաբոն, Աղբիւր Սերոբը, Գէորգ Չաուշը, Հրայր Դժոխքը, Անդրանիկը եւ մնացած քաջ ֆիդայիները:

Աթոն ապրեց ֆիդայիների ողջ կեանքով:

Եղաւ Կարս, Էրզրում (Կարին), Բինգէոլ, Տիգրանակերտ, Ադանա, Այնթապ, Բիթլիս եւ Վան քաղաքները:

Լողացաւ Վանայ լճում:

Նա տեսաւ հայկական գիւղերը եւ քաղաքները անշէն, իսկ պապական հողը՝ օտարի լծի տակ...

Վրէժն այրում էր հոգին...

1990 թուականին՝ Աթոն մասնակցեց Գորիսի, Կապանի, Մեղրիի, Նոյեմբերեանի, Իջեւանի շրջանների ինքնապաշտպանութեան մարտերին:

Նախքան կռիւ գնալը,— ասում էր Աթոն,— Էրգիր, ֆիդայիները երգ ու պարով են գնացել կռուի:

Նեուվադի (Մեղրի) դաժան կռուից առաջ, Աթոն ասաց.— Մենք էլ քաջ ֆիդայիների նման երգ ու պարով պէտք է մարտի գնանք:

Ջոկատի տղաները բռնեցին պար: Առաջինը Արարատն էր, երկրորդը՝ Խաչիկը, երրորդը՝ Աթոն, ապա տղաները: Այսպէս երգ ու պարով մենք մտանք մարտի (կայ նկարահանուած ժապաւէնը):

Աթոն անվախ էր, վերջին աստիճանի զգոյշ եւ հոգատար ընկերների նկատմամբ, քաջալերող: Երբ Աթոն լինում էր ջոկատում, կամ խմբում, թւում էր, թէ թեւ ենք առնում, այդտեղ պարտութիւն չկայ, շուտ էր կողմնորոշւում մարտում:

Պատմում են մարտական ընկերները:

Աթոն անդամագրուել է Հ.Յ.Դ. կուսակցութեանը: Նուիրեալ մարտիկ էր: Ջերմ հայրենասէր ու հայասէր:

Հայրենի հողի, հայ ժողովրդի կեանքի ու պատուի պաշտպանութիւնը բարձր էր դասում ամէն ինչից:

Ցանխակի երբ զրուցում էինք, նա ասում էր.— Ի՞նչ է, սպասենք մինչեւ ադրբեջանցիները գան հասնեն Երեւա՞ն, հասնեն մեր գիւղերը եւ տնե՞րը:

—Պապա,— ասել է Աթոն,— դու լաւ գիտես, թէ ինչ է նշանակում հայրենիք: Հայրենական մեծ պատերազմում դու տուել ես քո արեան կէսը եւ վերադարձել հաշմանդամ, եթէ հարկ լինի, հայրենիքի համար, ես իմ արիւնը կը տամ լրիւ:

Եւ իրօք, տուեց լրիւ...

1991 թ. Սեպտեմբերին Աթոն կրկին Արցախում էր, Շահումեանի

շրջանի Ղարաչինարում: Նա 40 օր մասնակցեց մարտերին, ընկերներով բազմիցս գնացել են հետախուզության, ոչնչացրել թշնամու կրակակետերը:

«Աթոն Ղարաչինարի համար իսկական հերոս էր: Երբ մի օր նա որոշել էր գնալ մեկ այլ գիւղ, որտեղ աւելի թէժ մարտեր էին, գիւղացիները չէին թողել՝ ասելով, թէ ամբողջ գիւղը իր յետեւից կը գնայ»:

Հոկտեմբերի 11ին Աթոն եւ իր ընկերը՝ Արշաւիրը, տեսնելով, դիրքերից ոչ-հեռու ուղղաթիռ է իջնում, շտապել են վայրէջքի տեղը: Զգուշութեամբ մօտենալով պարզել են, որ ուղղաթիռը ադրբեջանական է՝ ՕՄՕՆականներով լցուած:

Աթոն զէնքով սպառնացել է օդանաւին, որ հանգցնի շարժիչը, իսկ Արշաւիրը հսկողութեան տակ է վերցրել իջած ՕՄՕՆականներին: Կարծելով, որ ուղղաթիռը հայկական է, ադրբեջանցիները Շեֆէկ գիւղից սկսել են ուժեղ կրակ:

Այնուհետեւ ուղղաթիռից ոչ-հեռու պայթել են արկեր: Աթոն՝ 1991 թուականի Հոկտեմբերի 11ին ՕՄՕՆականներով լցուած թշնամու ուղղաթիռը գերելու ժամանակ՝ ընկնում է հերոսի մահով:

Աթոյի անունը յաւերժացնելու նպատակով, գիւղի Ցամեայ դպրոցը կոչել են Աթաբեկ (Աթօ) Վարդանեանի անունով (Զեռագիր):

ԳԷՈՐԳ ԱԹՈՅԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՔԱՋ ՖԻԴԱՅԻՆԵՐ

Սարերից իջաւ մի խումբ ձիաւոր,
Մուսենին ձեռքին, պատրոնած մէջքին.
Արդեօք ովքե՞ր են, ի՞նչ կտրիճներ են,
Մասիսը վկայ՝ հայոց քաջերն են:

Դէ կռուէք տղերք, զարկեցէք քաջ-քաջ,
Ջարդէք շուն թուրքին, փրկէք Հայաստան.
Արդեօք ովքե՞ր են, ի՞նչ կտրիճներ են,
Մասիսը վկայ՝ ֆիդայիներն են:

Անդրանիկն է քաջ իջնում սարերից,
Շուն թուրքն է փախչում տնից ու տեղից.
Արդեօք ովքե՞ր են, ի՞նչ կտրիճներ են,
Մասիսը վկայ՝ ֆիդայիներն են:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Հայրենիքի համար պայքարի ճանապարհին նրան յետ չպահեց անգամ միակ որդին՝ չորս ամսական Արգիշտին:

Քաջարի հայորդիները շարունակում են իրենց պայքարը՝ ամէն ճիգ գործադրելով Արցախը պաշտպանելու համար: Նրանք անում են նոյնիսկ անհնարինը, միայն թէ փրկուի մեր պատմական հայրենիքը, միայն թէ գլխիկոր ու անպատասխան չմնանք այն տղաների անմահ յիշատակին առջեւ, որոնք իրենց կեանքը չխնայեցին:

Երէկ Երեւանի հիւանդանոցներից մէկում մահացաւ Նոյեմբերի 30ին Էրքեջ գիւղի մօտ մարտական առաջադրանք կատարելիս վիրաւորուած Տիգրան Սարգսեանը:

«Մեծն Տիգրան» աշխարհազօրայինի շտաբի պետին շատերը ճանաչում էին Երասխաւանի, Նոյեմբերեանի, Վայքի, Սիսիանի ինքնապաշտպանութեան մարտերից: Նա չէր կարող նստել, սգալով սպասել ու լռելեայն ընդունել Արցախից եկած տագնապալի լուրերը: Առաւել եւս վիրաւորական էր պատերազմի դաշտում կռուող հայ ազատամարտիկների գործողութիւններին հեռուից հետեւելը: Համալսարանի ուսանողն ու Երեւանի քաղխորհրդի պատգամաւորը՝ իր պարտքին յանձնառու, հայրենիքի հողի պաշտպանութեան առաջին շարքում էր: Այդ էր իր տեղը: Մի քանի ամիս Տիգրանը չէր վերադառնում տուն: Հայրենիքի համար պայքարի ճանապարհից նրան յետ չպահեց անգամ միակ որդին՝ չորս ամսական Արգիշտին:

Հայոց հողն իր գիրկն ընդունեց եւս մէկ նահատակի՝ 27 տարին դեռ չբոլորած Տիգրան Սարգսեանին, որի անունն ու գործը ո՛չ միայն ներշնչելու եւ ոգեկոչելու են մեզ, այլեւ դառնալու են սուրբ մասունք սերունդներին ի պահ (11 Դեկտեմբեր 1991):

«ԵՐԿԻՐ»

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Տիգրան Սարգսի Սարգսեանը ծնուել է 1965 թ. Ապրիլի 27ին՝ Երեւանում։

1982 թուին աւարտել է Երեւանի թիւ 162 միջնակարգ դպրոցը՝ գերազանց գնահատականներով եւ օրինակելի վարքով։ 1983 թուին զօրակոչուել է Խորհրդային բանակ եւ ծառայութիւնը անցկացրել Լվովում տեղաբաշխուած Հայկ Բժշկեանի (Գայի) անուան «Երկաթեայ դիվիզիայում»։ Եղել է հրետանու հետախուզական ջոկի հրամանատար։ 1985 թ. զօրացրուել է եւ նոյն տարին ընդունուել Երեւանի Պետական համալսարանի իրաւաբանական ֆակուլտետի երեկոյեան բաժանմունքը։

Բարձրահասակ էր, լայնաթիկունք, խստահայեաց ու արծուաքիթ, շաղանակագոյն, ալիքաւոր մազերով։ Սիրում էր նկարել, գնահատում էր ինչպէս դասական, այնպէս էլ ժամանակակից երաժշտութիւնը։ Զբաղւում էր սպորտով (լող, ձեռնամարտ)։

Կատարելապէս տիրապետում էր ռուսերէն, ֆրանսերէն, անգլերէն լեզուներին։ Կարդում եւ թարգմանում գերմաներէն, իտալերէն լեզուներով։

Վարժ տիրապետում էր զէնքի բոլոր տեսակներին։ Սիրում էր ընթերցել հայ, ռուս, արտասահմանեան գրականութիւն՝ հիմնականում բնագրերով։

1990 թուի Նոյեմբերին ընտրուել է Երեւանի քաղաքային խորհրդի պատգամաւոր, աշխատանքներն անցկացրել իրաւաբանական յանձնաժողովի կազմում։

1990 թուին ամուսնացել է եւ ունի մէկ զաւակ՝ Արգիշտի։

1988 թուին սկսուած ազգային-ազատագրական Շարժման ակտիւ մասնակից էր։ 1989 թուին ստեղծեց «Մեծն Տիգրան» աշխարհազօրային գունդը եւ ընտրուեց գնդի շտաբի պետ։ Մասնակցել է Երասխաւանի, Խնձորեսկի, Կոմնիձորի, Նոյեմբերեանի պաշտպանական մարտերին։ Մշակել եւ իրականացրել է հիւսիսային Արցախի Շահումեանի շրջանի էրքեջ, Մանաշիդ, Բուզլուխ գիւղերի ինքնապաշտպանական մարտերը։

Զոհուել է 1991 թ. Դեկտեմբերի 9ին՝ էրքեջ գիւղի մօտ (Զեռագիր)։

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ՍԽՐԱԳՈՐԾ ՄԵՐՈՒԺԱՆԸ

«Բարձր կը պահենք Մուսա լեռան եւ մուսալեռցիների պատիւը, կը կռուենք նրանց նման մեր փոքրիկ հայրենի հողի համար...»։

Մերուժան Սուրէնի Սարգսեան. ծնուել է 1955 թուի Հոկտեմբերի 18ին, Մուսա լեռ աւանում, հողագործի ընտանիքում։ 1971ին սովորել ու աւարտել է ծննդավայրի «Ֆրանց Վերֆէլի» անուան միջնակարգ դպրոցը, այնուհետեւ՝ Փարաքար գիւղի ուսումնարանը։ Ծառայել է Խորհրդային բանակում։ Ամուսնացել է եւ ունի երկու անչափահաս երեխաներ։ Ընտանիքը պահելու համար աշխատում է վարորդ, ապա՝ էջմիածնի շրջանի երկաթ-բետոնեայ կոնստրուկցիաների գործարանում որպէս բանուոր։ Սիրել է կարդալ։ Դեռեւս դպրոցում. եղած ժամանակ կարդում է Ֆրանց Վերֆէլի «Մուսա լեռան քառասուն օրը» վէպն ու հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցչուհի օրիորդ Վեզիրեանին ասում է.

—Հիացած եմ այս գրքով եւ մուսալեռցիների քաջագործութեամբ։ Կ'ուզէի նրանց նման ես էլ...

1988ին սկզբնաւորուեց Արցախեան պայքարը։ Մերուժանի սիրտը թունդ ելաւ եւ անմիջապէս անդամագրուեց այդ սրբազան պայքարին։ Մասնակցեց գործադուլներին ու հանրահաւաքներին։ Շատ բան տեսաւ ու սովորեց, դարձաւ «Տիգրան Մեծի» անունը կրող վաշտի անդամ։ Նախքան Արցախ մեկնելը, հայրենիքում կառուցուած Մուսա լեռան յուշարձանի առաջ վարժ զինուորի նման շարուում են Մուսա լեռ աւանի «Տիգրան Մեծի» անուան ֆուտբոլի նուիրեալները, կրկնում են մուսալեռցիների երդումը եւ աւելացնում.— Բարձր կը պահենք Մուսա լեռան եւ մուսալեռցիների պատիւը, կը կռուենք նրանց նման մեր փոքրիկ հայրենի հողի համար...»։

Մանր էր նրանց բեռը, բայց պիտի տանէին։ Վաշտի տղաները բոլորն էլ ունէին փոքրիկուն, ազատատենչ ոգի։ Մարտերն սկսուել էին Արցախում. այրւում էին նրա բոլոր սահմանները, Ստեփանակերտ քաղաքը, սահմանամերձ գիւղերը։ Փակ էր Լաչինի միջանցքը, բայց օդային ճանապարհով հասան մարտադաշտ՝ Շահումեանի շրջ-

ջան։ Ընկերներով այդտեղ էր նաեւ Մերուժանը։ Նրա մէջ պապի ոգին էր եռում, որն եղել էր փառապանծ զօրավար Անդրանիկի զինուորը, յետոյ՝ հաւատարիմ թիկնապահը։ Նա համոզուած էր, որ միայն զէնքով կը լինի հայոց փրկութիւն, որ անձնազոհ մարտիկի պայքարը կարող է յաղթանակ բերել իր արդար իրաւունքների համար մարտնչող Արցախի հանրապետութեանը։ Առաջին մարտը ընկերների հետ մղեց Թոդան գիւղում, երկրորդը՝ Էրքեչում, երրորդը՝ Մանաչիդում։ Անցնում են գիւղից գիւղ, որտեղ պէտք է՝ օգնում են, ազատագրում գրաւուած գիւղերը, աւանները։ Կռւում են ո՛չ միայն ադրբեջանցիների, այլեւ՝ ռուս վարձկանների դէմ։ Այս կռիւներում յաւ անուն վաստակեց «Տիգրան Մեծի» անուան վաշտը։ Կռուի թէժ ժամանակ, 1991 թուականի Դեկտեմբերի 10ին էր, որ Մերուժանը մի քանի ընկերներով ընկնում է շրջափակման, կրակէ օղակի մէջ։ Երկար ժամանակ մնում են սառոյցի վրայ պառկած, սպասում օգնութեան։ Մերուժանը չի համբերում, եռեւեփւում է ինքն իր մէջ, կանգնում է պառկած տեղից ու ձայնում.

–Տղանե՛ր, առա՛ջ, ճեղքել մահուան օղակը, հասնել մերոնց...

Բայց չար գնդակն այդ պահին խոցում է նրա սիրտը։ Սողալով օգնութեան է հասնում մարտընկերը՝ Անդրանիկ Պեպիսեանը, մի կերպ գրկում, ուզում է տեղաշարժել նրան, բայց անօգուտ։ Վրայ է հասնում թշնամու կրակահերթը եւ նորից են քարանում։ Ինքը՝ Մերուժանը, չի խփում դիմացը յառնած հայերէն խօսող ազեր-զինուորներին, հայ է ասելով, բայց ինքն է խփւում նրանից եւ այստեղ էլ աւարտւում է նրա արբազան առաքելութիւնը։

Դա 1991ի Դեկտեմբերի 10ին էր՝ Թոդան գիւղում։

Այս քաջ ու առնական նուիրեալը՝ ընդամէնը 36 գարուններ ապրած Մերուժանը պատուով կատարեց իր տուած երդումը, բարձր պահեց իր անունն ու ընկերների պատիւը եւ նրա մասին միշտ հիացմունքով ու առանձնակի ոգեւորութեամբ են խօսում մարտավիկաները։ Իր աննախադէպ սխրագործութեան համար առաջինը նա թաղուեց Մուսա լեռան յուշարձանի հարեւանութեամբ, որպէս սխրագործ նահատակ...

Թաղման օրից շատ չանցած, ծննդավայրի «Ճիրանց Վերֆէչի» անուան միջնակարգ դպրոցի յաւագոյն դասարաններից մէկը՝ չորրորդ Բ. դասարանը, որտեղ սովորում է նաեւ ազատամարտիկի դուստրը, ուսուցչական խորհրդի որոշմամբ անուանակոչուեց Մերուժան Մարգսեանի անունով (Մէջենագիր)։

25 Յունիս 1993
Զուարթնոց

ԳԷՈՐԳ ՎՐԹԱՆԷՍԵԱՆ
Մանկավարժ

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ԱՐԾԻՒԸ



Մրսում են, սառում, սակայն չեն ընկճուում։ Որսորդ-զինուորը կրակում է դիպուկ ու անվրէպ, կուում, ապացուցում իր «ծուռ» մուսալեռցի լինելը։

Պեպիսեան Անդրանիկ Սարգսի. արմատով մուսալեռցի, ծնուել է 1946ին՝ Լիբանանի Այնճար աւանում։ 1947ին ընտանեօք ներգաղթում են։ 1949ին աքսորւում են Ալթայի երկրամաս։ Եօթ տարի ճաշակում են բռնաքսորի դառնութիւնը, իսկ Ստալինի մահից յետոյ արդարանում եւ 1957ին վերադառնում Հայաստան եւ բնակութիւն հաստատում Մուսա լեռ աւանում։ Սովորում է Էջմիածին քաղաքի թիւ 2 միջնակարգ դպրոցում եւ աւարտում է 1965ին։ Չորս տարի ծառայում է Խորհրդային բանակում եւ ստանում աւագ սերժանտի կոչում։ Որսորդութեան սիրահար Անդրանիկը ամուսնանում է, ունի երկու տղայ, երկու աղջիկ։ Ընտանիքին պահելու համար աշխատում է Էջմիածնի երկաթ-բետոնեայ կոնստրուկցիաների գործարանում որպէս բանուոր, փականագործ, ապա կոմնկավար՝ մինչեւ Արցախ մեկնելը։

1988ի սկզբին փոթորիկ էր Արցախ աշխարհում։ Կռիւ էր։ Կռուելը խաղ ու պար չէ։ Սպանւում են անմեղ մայրեր ու մանուկներ։ Այս լուրերը փոթորկում են Մուսա լեռան արծուի հոգին։ Ճտապում, կամաւորագրւում է «Տիգրան Մեծ»ի անուան Մուսա լեռ աւանի ճիւղում եւ բազում տղաների հետ հասնում է Արցախի Շահումեանի շրջանի կռուի թէժ կէտերը։ Այրւում են հայաշէն, հայաբոյր քաղաքն ու շէն գիւղերը։ Հրասայլերից կրակ է թափւում քաղաքի վրայ, այրւում, աւերւում է ամէն ինչ։ Նրանք էլ՝ Անդրանիկը, Ժոզէֆը, Վահանը, Վանիկը, Մայիսը եւ վաշտի միւս տղաները մտնում են թէժ մարտի մատոյցներից ներս, վարդանացած, Գայլ Վահան ու Անդրանիկ դարձած՝ կուում են դաժան ոսոխի դէմ։ Կուում են Թոդան, Մանաշիդ, Էրքեջ եւ Բուզլուխ գիւղերում, որ ազատագրեն գիւղերը դիւահրէշների ձեռքից։ Անխնայ զոհւում են հայ դիւցազունները, վիրաւորւում, բայց չեն զիջում իրենց դիրքերը։ Գիւղերն անցնում են ձեռքից ձեռք եւ աւերւում...

Անցնում են օրեր, ամիսներ, դիրքապահ մարտիկները յոգնում են։ Երկու ամիսը մէկ անգամ փոխում են գումարտակի զինուորներին, որ հանգստանան եւ թարմացած նորից մտնեն մարտադաշտ։ Այսպէս էլ

Պեպիսեան Անդրանիկ (աջէն ձախ՝ ոտքի՝ հինգերորդը) եւ «Տիգրան Մեծ» ջոկատէն խումբ մը ազատամարտիկներ։

Անդրանիկը հինգ անգամ մասնակցում է մարտերին։ Իսկ 1992ի Յունուար-Փետրուարին վաշտը երկու անգամ ցուրտ ձմրանն ընկնում է շրջափակման մէջ։ Վերջինս Թոդան գիւղում էր։ Տասներկու ժամ սառոյցի վրայ պառկած են մնում։ Չորս կողմից կրակ է թափւում գիւղի վրայ։ Փոքր շարժումը մահ էր։ Սպասում են օգնութեան, բայց, աւա՜ղ...։ Չեն կարողանում ճեղքել կրակէ օղակը։ Մրսում են, սառում, սակայն չեն ընկճւում։ Ոտորդ-գինուորը կրակում է դիպուկ ու անվրէպ, կուում, ապացուցում իր «ծուռ» մուսա լեռցի լինելը։

Վերջին անգամ, երբ հանդիպեցի նրան,— Փա՛ռք մեր հայրերի վարած կռուին,— ասաց Անդրանիկը,— որ միայն մի մասնագիտութիւն ունէին՝ գինուոր, եւ միայն մէկ գործ՝ կռուելը...։ Իսկ մենք նրանցից ինչով ենք պակաս։

—Արցախը մեր բոլորի հերոսական վարքն է,— շարունակեց նա, բայց այլեւս չկարողացաւ ոտք անգամ գնալ մարտադաշտ եւ այնտեղ...

Նեղում է նրան մրսած լեարդն ու խոցուած ստամոքսը եւ կամաց-կամաց գամւում է սառը անկողնին։ Մարտական ընկերները գալիս են տեսակցութեան, ե՛ւ ափսոսում են, ե՛ւ խրախուսում, սիրտ տալիս նրան ու գնում։ Թուլանում են արծուի թեւերը, մթագնում յիշողութիւնը, մոռանում ամէն ինչ, միայն մի բան է յիշում ու դողդոջ շուրթերով վերջին անգամ ասում է կնոջը.

—Արցախն ի՞նչ եղաւ, ինձ էլ տարէք այնտեղ, որ... որ...— փակում է սեւ աչքերը։

Իսկ թաղման ժամանակ մարտընկերները յուզուած ասացին.

—Սիրելի Անդրանի՛կ, դու անձնուիրաբար կատարեցիր հայրենեաց հանդէպ քո սրբազան պարտքը՝ կեանքդ զոհելով ի բարօրութիւն ընդհանուրի։ Մենք լի ենք վճռականութեամբ՝ շարունակել քո անաւարտ մնացած գործը...

Ցաւերժութիւն քեզ, Մուսա լեռան արծիւ (*Մեքենագիր*)։

25 *Յունիսի* 1993թ.
(*Զուարթնոց*)

ԳԷՈՐԳ ՎՐԹԱՆԷՍԵԱՆ
Մանկավարժ

ԽՆԿԱՐԿԵՆՔ ՅԻՇԱՏԱԿԴ ՈՒ... ԵՐԴՈՒԵՆՔ

ԱՆՄԱՀՆԵՐԻ ՓԱՂԱՆԳՈՒՄ ԿԱՆԳՆԵՑ ՆՈՐ ՖԻԴԱՅԻ, ՆՈՐ ՋԻՆՈՒՈՐ

Իսկ այդ օրերին Վարդանի խօսքը հայրենիքի մասին էր, մարտակոչ էր հայրենեաց պաշտպանութեան։ Իր պաշտելի հերոս-ֆիդաեների՝ Նիկոլ Դումանի, Դրոյի, Նժդեհի մասին էր՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մասին էր։

Գէորգ Չաւուշը խփուեց...

Աղբիւր Սերոբն ու Նիկոլ Դումանը, Դրոն, Արամն ու Ռուբէնը չկան...

Դղրդիւնով արձագանգեցին այս անունները Հայոց երկնակամարում։ Յետոյ եղաւ լռութիւն։ Միայն արեգակի կռիւը մնաց լռութեան դէմ, մինչեւ որ ուշքի գայինք այդ կորուստներից, արթնանայինք։ Արթնանայինք ըմբոստացած մեր հաւատը հեգնողների, մեր անցեալի պատմութիւնը եղծողների դէմ։ Արթնանայինք՝ վկայակոչելով մեր նահատակ որդոց պատգամը. «Ով որ յաղթէ, նա է արդարը»։ Ցանկացիր եւ կ'ունենաս...։ Կրկնեցինք ու հաւատացինք։ Հաւատացինք ու յամառեցինք՝ ի զէն։

Ու եղաւ լոյս Հայաստանում։

Վերագտնուած երջանկութեան, բախտաւոր զգացման վայելքի մէջ յանկարծ նորից չանթուեցինք՝ հայրենիքի ազատութիւնը իրենց մահով սրբագործած տղաների անունները լսելով։

Վարդանը զոհուեց...

Վարդանը զոհուեց...

Վարդանը զոհուեց...։

Ասում էինք, նայում իրար ու պապանձւում։ Ուզում էինք սուտ լինէր։ Գիտէինք ամէնքս։ Անշուշտ եւ ինքը՝ Վարդանը գիտէր, որ յաղթութեան գինը արիւն-կռիւն է։ Եւ գնացին նրանք, ովքեր աւելին էին, քան սովորական մարդը, քան մահկանացուն։ Նրանք, ում զարկերակի տրոփիւնի մէջ ելեւէջւում էր մահուանն ուխտ արած անմնուրացների կանչը. «Եւ մի ազգ, եթէ ուզում է մնալ յարգուած, եթէ չի ուզում կորչել, պէտք է լինի զէնքի ընդունակ, միշտ պէտք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանութեան համար»։

Օրը ցուրտ էր, ու ցուրտ էր ամէնքիս հոգիներում։ Տրամադրութիւն չկար։ Ում ձեռքը կը գնայ մի ուրախ բանի մասին գրել։ Անհամբեր ենք, ուզում ենք ամէն վայրկեան Ղարաբաղից լուր առնել։ Ամէն տխուր լուրից յետոյ նզովում ենք նախախնամութեանը, որը յամառում է՝ մեզ նահատակութեամբ ստուգելու պայմանի մէջ։ Ընդվզում ենք ճակատագրի դէմ...։ Սակայն քիչ յետոյ սթափւում ենք կրկին՝ մտաբերելով Ֆիդայի որդու չիրիմի առջեւ խոնարհուած մօրը, որի մորմոքուող ձայնի մէջ հպարտութիւն կայ։

Ապչելու է, չէ՞... մայրը չի ասում. «Ջեմ ուզում հերոսութիւն, թող ապրէր որդիս»։

Այսպէս է հաւանօրէն աստուածանում մարդը։

Այսպէս տեսայ Վարդանի մօրը՝ Աիդային։ Ես երբեք չեմ մօտեցել նրան։ Համոզուած եմ՝ չկայ որեւէ մխիթարանք միակ որդուն կորցրած մօր համար։ Բայց այս պահին էլ եւ միշտ մտքիս մէջ զրնգում են նրա խօսքերը. «Հերոս որդիս»։ Աիդա մայրիկի համար մենք չունենք մխիթարանքի խօսք, բայց ինքը մեզ՝ Վարգանի ընկերների համար ունի՝ «Հերոս որդի»։

Ղարաբաղում վայրկեանի արագութեամբ թէժանում էր կռիւը...։ Մանր լուրերը անհանգիստ էին դարձնում ամէնքիս։

Վարդանն էլ յիշողութիւն դարձաւ...

Երկու ամիս Բերդաձորում մնալուց յետոյ վերադարձել էր։ Բայց նորից մտածում էր գնալու մասին։ Մի տեսակ խորթացել էր Երեւանից։ Թէպէտ երբեք էլ ոգեւորուած չի եղել մայրաքաղաքով։ Չնայած ծնուել է Երեւանում, իրերի բերումով ապրել Հոկտեմբերեանում, սակայն հոգեկան մտերմութեամբ կապուած էր Զանգեզուրին, իր ծնողների ծննդավայրին՝ Կապանին։

Ձնչւում էր, ուզում էր ժամ առաջ մեկնել Արցախ։ Անընդհատ կրկնում էր. «Կեանքը Ղարաբաղում է, այստեղ չեն ապրում մարդիկ, հոգով մեռնում են»։

Հիացմունքով էր խօսում Բերդաձորի մասին, հպարտանում գիւղը պաշտպանող տղաներով։ Մարտական ընկերների արածների մասին պատմում էր ոգեւորութեամբ, իր մասին լռում էր։ Վարդանը անմնացորդ նուիրուել գիտէր։ Եթէ ինչ-որ գործ էր ձեռնարկում, պիտի անթերի կատարէր։

Ինձ չզարմացրին նրա ընկերների պատմութիւնները։

Կռուի դաշտում մարդ բացայայտւում է մինչեւ վերջ։ Վարդանն այնտեղ էր, ուր կրակ կար, ուր վտանգ էր սպառնում ընկերոջ կեանքին ու հայրենի հողին։

Վարդանին բերդաձորցիները սիրեցին իրենց որդու պէս։ Ինչ ընտանիքում որ հիւրընկալւում էր, այլեւս ցանկալի ու սպասելի էր դառնում. «Մի քիչ էլ մնա՛, Վարդան ջան, մի քիչ էլ խօսիր, մեր երեխաները քեզնից շատ բան ունեն սովորելու»։

Իսկ այդ օրերին Վարդանի խօսքը հայրենիքի մասին էր, մարտակոչ էր հայրենեաց պաշտպանութեան։ Իր պաշտելի հերոս-ֆիդայիների՝ Նիկոլ Դումանի, Դրոյի, Նժդեհի մասին էր՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մասին էր։ Ազգային գաղափարին զինուորագրուելը պատասխանատուութեան ու պարտքի է կոչում իւրաքանչիւրին։

Բայց ամէնքը չէ, որ խորութեամբ են ընկալում «Ազատութիւն կամ մահ» պատգամը։ Նա գիտէր ազգի հերոսներին, սերտել էր հայ ժողովրդի պատմութիւնը ո՛չ միայն սերունդներին փոխանցելու, այլ նաեւ հերոսական պատմութեանը կեանքի, անձնական օրինակով էջեր աւելացնելու համար։ Այդպէս էլ ապրում էր։ Շատերն էին սովորում նրանից։ Ոեւէ մէկին դասեր չէր տալիս, չէր պարտադրում իր նման մտածել, իր պէս ապրել։ Ինքն ապրում էր ու հէնց այդ ապրած կեանքն էր դաստիարակիչը, «նախանձելի» օրինակը։

ՎԱՐԴԱՆ ԱԶԱՏԻ ԲԱԽՇԵԱՆ

Ծնուել է 1966 թ. Յունիսի 1ին՝ Երեւանում։ 1989 թ. աւարտել է Հանրապետութեան պատմութեան ֆակուլտետը եւ ընդունուել ասպիրանտուրա։ Միաժամանակ աշխատել ԵՊՀի քարտէսագրութեան լաբորատորիայում։

Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներից էր։ 1991թ. Ապրիլին ծրդ Պատգամաւորական Ժողովում ընտրուել է Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան անդամ։

Հ.Յ.Դ. անդամ է 1990 թուականից։

Մասնակցել է ինքնապաշտպանական մարտերին։ Զոհուել է Հասանաբադի պաշտպանութեան ժամանակ։

–Ամէն անգամ Ղարաբաղ մեկնելուց առաջ ասում էինք, որ ինքը այստեղ էլ շատ անելիք ունի։ Այսօր ազատագրուած մեր տարածքները պիտի ապագայում պաշտպանողներ ունենան։ Իսկ դրա համար ազգային դաստիարակութիւն է պէտք, ազգային ոգին փոխանցողներ են պէտք,– պատմում է քոյրը՝ Աննան։

Բայց, ցաւօք, ոչ ոք նրան չկարողացաւ յետ պահել իր ընտրած ճանապարհից։

«Իմ առաջին անելիքն այսօր հայրենիքի պաշտպանութիւնն է»։

Վարդանը իրօք այստեղ շատ անելիքներ ունէր։ Դասաւանդում էր Երեւանի Խրիմեան Հայրիկի անուան դպրոցում, Պետական համալսարանի պատմութեան ֆակուլտետի ասպիրանտ էր, գրում էր աւարտաճառ՝ «Հայաստանի վարչական բաժանումները ըստ Օսմանեան արքունական մատեաններին»։ Հ.Մ.Ը.Մ.ի կենտրոնական Վարչութեան անդամ էր։ Ռադիոներով դասախօսութիւններ էր կարդում՝ ունկնդիրներին հաղորդակից դարձնելով Հ. Յ. Դաշնակցութեան իրական պատմութեանը։ Վիրաւորուած էր այդ պատմութեան խեղաթիւրման համար։

Այս բոլորն էլ կարեւոր էին Վարդանի համար, այս ամէնին մօտենում էր ամենայն պատասխանատուութեամբ, բայց

ՎԱՉԷ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՌՈՍՏՈՄԵԱՆ

Ծնուել է 1961թ. Էջմիածնի շրջանի Գոռիբոյեդով գիւղում։ Աւարտել է ակադեմիկոս Շահինեանի անուան ֆիզմաթ դպրոցը։ ԵՊՀի երկրաբանական ֆակուլտետը աւարտելուց յետոյ աշխատել է «Հայպրոնախագիծ» ինստիտուտում։ Վերջին երկու ամիսներին հայրենի գիւղի դպրոցում ուսուցիչ էր աշխատում։

Հ.Յ.Դ. անդամ է 1990 թուականից։

Մասնակցել է Գիւլիստան, Էրքեջ, Բուզլուխ, Վերին Շէն, Ումուդլու, Կրկժան գիւղերի ինքնապաշտպանական մարտերին։ Զոհուել է Հատանաբադի պաշտպանութեան ժամանակ։

համոզուած էր եւ համոզում էր, որ ինքը նախ եւ առաջ զինուորի պարտաւորութիւն ունի Արցախ աշխարհում։

Գնաց Վարդանը, գնաց՝ փաստելու, որ հայրենիքի փրկութեան համար չկայ որեւէ սահման, ամէնքը պարտաւոր են զէնքի կոչուել, եթէ պահանջւում է։ Գնաց՝ փաստելու, որ անմեռ է ազգի մտաւորական նուիրեալների ոգին։

—Հասանարադում էլ անհաւասար մարտ էր մղւում։ Դաւադիր թուրքը մեծաքանակ զօրքով ու զինամթերքով շրջապատել էր գիւղը։ Այստեղ նրանց միացել էին նաեւ ռուսները։

Դիրքաւորուել են։ Անընդմէջ տեղացող կրակահերթերից խուճապի չեն մատնուել տղաները, շարունակել են պաշտպանութիւնը։ Ու յայտնուել են շրջապատման մէջ։ Վարդանը մի քանիսի հետ աւելի առաջապահ դիրքերում է լինում։ Կողքին վիրաւորւում է ընկերներից մէկը։ Վարդանը նետւում է առաջ՝ օգնելու ընկերոջը ու… խփւում։

Այս գիւղի պաշտպանութեան համար զոհուեցին նաեւ Վաչէն ու Գագիկը։

Այս պատմութիւնները համազօր են աստուածների պատմութիւններին, որոնք անսկիզբ են ու անվերջ։

Նահատակների անուններն այլեւս պատկանում են Հայոց պատմութեանը։ Վարդան Բախչեան անունն էլ միացաւ այն աստղաբոյլին, որը առաջնորդելու է մեզ՝ որպէս միտք, որպէս նուիրում ու զոհաբերութիւն։

—Վերջին ամիսներին Վարդանը չափից աւելի ինքնամփոփ էր դարձել, մտախոհ էր ու տխուր։ Նրա ուրախութիւնն էլ, տրխրութիւնն էլ կապուած էին միայն Արցախին,— յիշում է Աննան։

Անհատականութիւն էր, բայց եւ բացառիկ յարգանք ունէր իւրաքանչիւրի կարծիքի հանդէպ։ Շրջապատում աշխատում էր ամէնքին պահել ուշադրութեան կենտրոնում։ Տանել չէր կարող, երբ ոեւէ մէկին փորձում էին վատաբանել։ Ատում էր մարդու նսեմացումը։

Այսպէս էր ապրում։ Այսքան անկեղծ, այսքան անմիջական։ Առաջին հայեացքից կենսախինդ, ամէն ինչին թեթեւ նայողի տպաւորութիւն կարող էր թողնել։ Սակայն բաւական խաբուսիկ էր նրա արտաքին պահուածքը։ Խորքում չափից աւելի լուրջ էր, քան ընորոշ է իր տարեկիցներին։ Փորձում էր ցանկացած երեւոյթ գնահատել մանրամասն վերլուծելուց յետոյ միայն։

—Ես միշտ հպարտ եմ եղել, որ Վարդանի քոյրն եմ։ Նրա նահատակութիւնը չէ, որ ինձ հպարտութիւն է ներշնչում։ Վարդանի գնահատումները անառարկելի ճշմարտութիւններ էին, չափանիշ, որոնցմով կողմնորոշուել եմ միշտ եւ այսօր էլ։

Քրոջ՝ Աննայի այս խօսքերը բնական են, բայց Վարդանի մասին այսպէս են արտայայտւում շատերը։

Ապրեց Վարդանը մեր աչքի առաջ, բայց ամէն ինչ չէր, որ կարողանում էինք տեսնել։ Նա մտաւորական զինուորի այն տե-

սակն էր, որին աւելի լաւ պէտք էր զգալ, ճանաչելը բաւարար չէր։

Ես թերթեցի Վարդանի օրագիրը, որտեղ Ղարաբաղում ապրած օրերի գրառումներն էին։ Զուսպ տողեր են, հիմնականը՝ պահանջ իրենից ու միւսներից. «...Արգելւում է խօսել, ծխել շարքում, կատարել միայն հրամանատարի հրահանգը՝ անձնական կարծիքը պահելով, գերագոյն յարգանք ու հանդուրժողականութիւն ընկերների հանդէպ, զերծ մնալ քաղաքական գունաւորումներից եւ գնահատումներից»։

Հաւանաբար կայ նախախնամութիւն, եւ Աստուած միշտ ընտրում է ամենալաւագոյններին։ Սա պատիժ չէ, կորուստը մեզ աւելի է ամրացնում, գտնում ենք մեզ եւ յոյսերս մեր վրայ դնում։ Անշուշտ ամէնքս Վարդան չենք կարող լինել, բայց իւրաքանչիւրս պարտաւոր ենք պատուախնդիր լինել այդ անուան հանդէպ, ինչպէս ինքն էր վերաբերում Մեծ Վարդանին, իր երկրպագած միւս հայրենասէրներին։ Ու երբեք չմոռանանք, որ մեր յաղթանակներով են յաւերժանալու այդ լիշատակները, արժանապատիւ ապրելով ենք վաստակելու նրանց անունը տալու իրաւունքը։

Համոզուած եմ՝ Վարդանն իմացաւ Շուշիի ազատագրման լուրը, որին այնքան կարօտով էր սպասում։ Համոզուած եմ՝ այդ պահին լոյս ճառագեց նրա լիրմաթմրից։ Այդ լոյսից պիտի ուժ առնենք ու երդուենք նրա չապրած կեանքով։ Այս են պահանջում հայոց ոգին յաւերժացնողները։ Երդուենք...։ «Որովհետեւ ամէ՛ն յոյս զՔեզ կը յուսայ, եւ ամէն Ապագայ զՔեզ կը պաղատի, զա՛րկ, վասնզի ամէն Ազատութիւն ու ամէն Արեւ քու հարուածիդ կայծերէն պիտի ծնանին»։

Ափսոս...։ Վարդանի տեղը միշտ դատարկ է մնալու ապրողներիս կողքին։ Եւ միշտ յետ ենք նայելու. «Քո բազկի ուժով պիտի է՛լ աւելի հզօրանար Ազատ, Անկախ Հայաստանը, քո մտքի զօրութեամբ պիտի աւելի յստակ ուրուագծուէր Միացեալ Հայաստանի տեսլականը։ Չեմ կարող չյանդիմանել քեզ՝ ինչո՞ւ այս անգամ ողջախոհ չեղար» («Երկիր», 1 Յունիս 1992)։

ՌՈՒԶԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

«Արցա՛խ, սիրասուն իմ հող, Քո բախտի եւ վաղուայ համար Յաւերժի ճամբորդ եմ դարձել...»

Գագիկ Գրիգորի Գրիգորեան: Հայրենի Արցախի համար նահատակուած կենսախինդ երիտասարդը՝ յաւերժօրէն ապրելու իրաւունքով սրբագործեց այն ճշմարիտ իմաստութիւնը, որ կոչւում է հայրենասիրութիւն:

Միւնեաց աշխարհի դստեր եւ դարաբաղցի հօր անդրանիկ զաւակը ծնուել է 1971 թ. Ապրիլի 23ին՝ Էջմիածնի շրջանի Առատաշէն (Ն. Զէյվա) գիւղում: Նրա մանկական ու պատանեկան երազները դարձել են Արցախն ու արծուասիրտ արցախցին:

Սովորել է Առատաշէնի ուսումնատուներում վերջին երկու տարիներին՝ Երեւանի 149 միջնակարգ դպրոցներում:

1989ին ընդունուել է Երեւանի Ժողտնտեսութեան ինստիտուտի ԺՏՊ ֆակուլտետ: Ինստիտուտի «Նժդեհ» ջոկատի առաջին մարտիկներից էր:

1990թ. անդամագրուել է Հ.Յ.Դ. «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութեանը: Նրա քաղաքական հայեացքների ձեւաւորման գործում անգնահատելի է Նժդեհի, Նիկոլ Դումանի, Արամ Մանուկեանի եւ այլոց կեանքն ու գրական ժառանգութիւնը:

Օրինակելի ուսանող էր, յարգուած շրջապատի կողմից: Ազատ ժամանակը նուիրում էր երաժշտութեանը եւ ընթերցանութեանը:

Մասնակցել է Էրքեջի, Գետաշէնի, Հադրութի, Բերդաձորի մարտերին, եղել է Երասխաւանի պաշտպանական դիրքերում:

1990ից գրանցուել է Ծահումեանի Էրքեջ գիւղում:

1991 թուից Դեկտեմբերի 16ին, Հասանաբադ գիւղում թշնամու դէմ անհաւասար մարտում, Գագիկ Գրիգորեանը զոհուեց հերոսաբար, եւ հերոսի տապանաքարին գրուեց նրա կեանքով հաստատուած երդումը.

«Արցա՛խ, սիրասուն իմ հող, Քո բախտի եւ վաղուայ համար, Յաւերժի ճամբորդ եմ դարձել...»

Հերոսներն անմահ են, անմահ է եւ Գագիկը, որի կեանքը շարունակում է ապրողների մէջ, ապրողների համար **(Զեռագիր)**:

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ՄԱՀԱԶԴ

Գուժում ենք հերոսական մահը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մարտիկներ, ընկ. ընկ. ԿԱՄՈ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ, ՄԱՐՏԻԿ (ՄԱՐԱՏ) ԱՒԱՆՆԷՍԵԱՆԻ, ՆԵՐՍԷՍ (ՆԵՐՍՕ) ՋԱՔԱՐԵԱՆԻ, ՎԱՉԷ (ՎԱՉՕ) ՌՈՍՏՈՄԵԱՆԻ, ԳԱԳԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ, ՎԱՐԴԱՆ ԲԱԽՇԵԱՆԻ, որոնք ընկան վատի գնդակից պատնէշի վրայ՝ հայրենի հողն ու սեփական ժողովրդի կեանքն ու պատիւը պաշտպանելիս։

Կամոն Շահումեանի շրջանի վերջերս ազատագրուած Էրքէջ գիւղի Դաշնակցական խմբի խմբապետն էր, որ ընդունեց նահատակութեան պսակը Դեկտեմբերի 11ին, Շահումեանի անցեալ շաբաթուայ ընթացքում ազատագրուած Թոդան եւ Սարիսու գիւղերի պաշտպանութեան կատաղի մարտերում։

Մարտիկն ու Ներսէսը հերոսական մահով Դեկտեմբերի 15ին գնացին միանալու Դաշնակցական նահատակների մեծ փաղանգին, Ջամիլլու գիւղի ազատագրման մարտերի ընթացքում։ Մարտիկը 25 տարեկան էր (ծն. 1966ին՝ Մարտունու Թարաքենդ գիւղում), Իսկ Ներսէսը՝ 18 (ծն. 1973ին՝ Ստեփանակերտում)։

Ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող Հասանաբադ գիւղի պաշտպանութեան մարտերում Դեկտեմբերի 17ին հերոսական մահով ընկան Վաչէն, Գագիկն ու Վարդանը։ Վաչէն ու Գագիկը երկուսն էլ Էջմիածնից էին, առաջինը 30 տարեկան (ծն. 1961թ.), իսկ երկրորդը՝ 20 (ծն. 1971թ.)։

Հոկտեմբերեանում 1965թ. ծնուած Վարդան Բախշեանը 26 տարեկան, որ գիրք ու ուսում թողած միացել էր ազատամարտիկների խմբին՝ հայրենի հողին ու սեփական ժողովրդի կեանքի ու պատուի պաշտպանութիւնը վեր դասելով ամէն բանից, միաժամանակ մաս էր կազմում Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) Կենտրոնական Վարչութեան, որի անդամ էր ընտրուել 1991ի ամրանը, Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի կողմից։

Նրանց թափած արեամբ կը շրդեղուեն հայրենիքի պաշտպանութեան դիրքերում գտնուող ներկայ ու ապագայ բոլոր սերունդները, նրանց նահատակութեամբ կը դարբնուի Հայաստանի յաւերժութեան գրաւականը եւ անկասկած նրանց օրինակը կը դառնայ վարակիչ, որպէսզի ամուր հիմքերի վրայ վեր բարձրանայ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանը։

Յարգանք նրանց անմոռաց յիշատակին (*«Երկիր»*, 19 Դեկտեմբեր 1991)։

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՕ

ԻՆՉ Է ԱԶԴԱՐԱՐՈՒՄ ՋԱՆԳԸ

ՈՉ ՄԻ ՄԱՐԴ ՄԵԿՈՒՍԱՑԱՄ, ԻՆՔՆ ԻՐ ՀԱՄԱՐ ԱՊՐՈՂ ԿՂԶԻ ՉԷ։ ԻՐՔԱՆՉԻՒՐ ՄԱՐԴ ՄԻ ԿՏՈՐՆ Է ՄԱՅՐՑԱՄԱՔԻ, ՄԻ ՄԱՄՆ ԱՄԲՈՂՋ ՅԱՄԱՔԻ։ ԵԹԷ ԾՈՎԸ ՔՇԻ-ՏԱՆԻ ՄԵՐՁԱՓՆԵԱՅ ԺԱՅՌԸ, ԵՒՐՈՊԱՆ ԿԸ ՓՈՔՐԱՆԱՅ, ԻՆՉՊԷՍ ԿԸ ՓՈՔՐԱՆԱՐ, ԵԹԷ ՏԱՆԷՐ ՄԻ ՀՐՈՒԱՆԴԱՆ, ՏԱՆԷՐ ՔՈ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԿԱՄ ՔՈ ՄԵՓԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՔԸ։ ԻՐՔԱՆՉԻՒՐ ՄԱՐԴՈՒ ՄԱՀԸ ՓՈՔՐԱՑՆՈՒՄ Է ԻՆՉ, ՈՐՈՎՀԵՏԵՒ ԻՄ ՄԷՋ ԱՄԲՈՂՋ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆՆ Է։ ԵՒ ԴՐԱ ՀԱՄԱՐ ԷԼ ԵՐԲԵՔ ՄԻ ՀԱՐՑՐՈՒ ՌՍՄ ՄԱՀՆ Է ԳՈՒԺՈՒՄ ՋԱՆԳԸ։ ՔՈ ՄԱՀՆ Է ԳՈՒԺՈՒՄ։

ՋՈՆ ԴՈՆ

«Սասնայ Ծռերում կուում էին չորս Գէորգեաններ՝ ինքը, եղբայրը, երկու որդիները եւ հիմնականում հերթափոխում էին միմեանց՝ այնպէս որ մշտապէս ջոկատը մարտի մէջ էր։

Այս ամէնը գրելուց առաջ երկար, շատ երկար մտածել եմ, որոշել-որոշարկել եւ, այնուամենայնիւ, ինքս էլ ինձ համար չեմ պարզել...։ Ու հիմա գրում եմ, որովհետեւ այս ամէնը չգրուել չի կարող...։ Առաջին հայեացքից թւում է՝ «ՄԱՅՐԵՆԻՆ» ձեռընպահ պիտի մնար մարտական քրոնիկոնից. լրագրերը ճչում են այդ մասին անընդհատ, ռադիոն, հեռուստատեսութիւնը, ճիշտ է, միագիծ, բայց ռազմաճակատային լրատուութեան մշտական աղբիւր են։ Ու-

րեմն...: Ուրեմն առաջին հայեացքից իրոք անտեղի է թւում: Բայց պատերազմ է, եւ պատերազմն օրէցօր իր շօշափելի ներկայութիւնն է պարտադրում: Պատերազմ է, մարդիկ են մեռնում, ամէն օր: Եւ ուրեմն՝ կործանւում է կեանքն ու աշխարհը, ամէն օր, օրը մի քանի անգամ: Եւ, այնուամենայնիւ, կեանքը շարունակւում է, յարատեւո՛ւմ է, ուրեմն... այս ամէնը պիտի գրուի ապրողների համար: Պիտի գրուի մա՛նաւանդ «ՄԱՑՐԵՆԻ»ում, որովհետեւ միւս բոլոր պարբերականներից առաւել, այն դպրոցի համար է: Վերջերս յամառօրէն բոլորս զբաղուած էինք կայացած-կայունացած, թող որ յաճախ շինծու, անամէջ, արժէքների խորտակմամբ: Ճիշտ էր, ճիշտ չէր—հարցի մի կողմն է, առաւել կարեւոր է, թէ ինչ հաստատուեց ի տրիտուր: Եւ հաստատուե՞ց արդեօք: Մինչդեռ դա կենսական պահանջ է: Պաւլիկ Մարոզովների, Պաւել Կորչագինների, օտարանուն եւ հայանուն շատ ու շատ «հերոսների» ու հերոսների պսակազերծումից յետոյ ի՞նչ պիտի ասենք երեխային, ո՞ւմ օրինակ բերենք, ո՞ւմ դարձնենք իդէալ դաստիարակութեան, հասունացման, անհա՛տ ձեւաւորելու համար: Յատկապէս կարեւոր է իդէալի ընտրութիւնը հիմա, երբ «սեղանիկների սերունդ» են սպառնում դառնալ դրամի ֆետիշացմամբ մանկութիւնը կորցրած մեր երեխաները: Եւ այդ իդէալը պէտք է յատկապէս համոզիչ լինի, կեանքից ու բնիկ, տոհմիկ...

Անկախութիւնը ու պետութիւնը կայանում են տեւականօրէն, ինչպէս երեխայի մեծանալու, պետութեան կայացման համար ժամանակ է պէտք...: Մեր պարագայում նաեւ դաստիարա՛կ ու դաստիարակութիւն: Մենք անկախ պետականութիւն հռչակեցինք, բայց վերջինիս քաղաքացիութիւնը չպաղթահարեցինք հոգեբանօրէն...: Ամէն ինչ շատ արագ էր, իմաստաւորելու քիչ ժամանակ եղաւ: Հիմա էլ պատերազմ է, հիմա ամէն ինչ նաեւ պատերազմով բարդեցուած պիտի պարզաբանուի:

Մենք կործանեցինք մեր երէկուայ «հերոսներին», բայց արդեօ՞ք մենք կործանեցինք: Արդեօ՞ք հէնց իրենք չէին իրենց կործանողը: Մենք ընդամէնը Անդերսենի նշանաւոր հեքիաթի մանկան նման բացեցինք մեր աչքերը եւ տեսանք, որ արքան մերկ է, ու չթաքցրեցինք այդ ճշմարտութիւնը: Սա, սակայն, ա՛յլ հարց է...: Կեանքն այսօր բերում է նոր հերոսներ, մեր ամրագրուած ընկալումների համար անսովոր, երբեմն թէ նաեւ տարօրինակ հերոսներ, որոնք ոչ մի հերոսապատուկ առանձնայատկութիւն չունեն...: Նրանք մեր կողքին էին, մեր ընկերները, շա՛տ սովորական մարդիկ, գիտէինք նրանց, ճանաչում էինք շա՛տ լաւ: Բայց ահա Հայրենիքի տագնապի զանգը հնչեց, ու նրանք գնացին: Գնացին առաջինը: Անհետաձգելի գործեր ունէին, ընտանեկան ու անձնական հոգսեր, հիւանդութիւններ, պրոբլեմներ, բայց գնացին, որովհետեւ առաջինը հասկացան, որ ժամանակը երկատուեց, ու հիմա պայքարի պահն է նախ եւ առաջ: Սամուէլ Գէորգեանն այդ առաջիններից առաջինն էր: Գնա՛ց: Ընդամէնը երեսունութ տարեկան էր: Տու՞ն-ընտանի՞ք-հո՞գս — լիքը ունէր: Ապրած քառասուներկու տարիներին հասցրել էր երեք զաւակ ունենալ՝ 16ամեայ Արթուրը եւ 16ամեայ Արտեմը (ի դէպ, Նոյեմբերեանի կռուի ժամանակ երկուսն էլ հօր հետ էին եւ

ընդհանրապէս կռուի ժամանակ բոլորն էին նրա զաւակները, առանց խտրականութեան) եւ տասնամեայ Արկադին: Սկզբում գնաց Երասխաւան, յետոյ Երասխի պաշտպանութեան կազմակերպումին հետեւեցին Ոսկեպարի կռիւներն արդէն իր կազմաւորած ջոկատով: Մայիսի 27ին նա Սովետաշէնում էր, յորդորում էր հեռանալ, խուսափել բանակի հետ ընդհարումից: Ապա Արծուաշէնն էր պաշտպանում եւ գերիների փոխանակմամբ բազմաթիւ հայորդիների փրկեց: Նոյեմբերեանից Իջեւան ռուսական բանակի շրջափակումից (Ոսկեպար-Բաղանիս գծում) դուրս բերեց իր ողջ ջոկատն անվնաս: Մի կարճ դադար եղաւ, որի ընթացքում զբաղուած էր զէնք եւ զինամթերք հայթայթելով եւ ջոկատի մարտական զինավարժութեամբ, եւ երբ նորից անհրաժեշտութիւն ծագեց իր նոր «Սասնայ Ծռեր» ջոկատով (ի դէպ, «Սասնայ Ծռեր»ում կռւում էին չորս Գէորգեաններ՝ ինքը, եղբայրը, երկու որդիները եւ հիմնականում հերթափոխում էին միմեանց՝ այնպէս որ մշտապէս ջոկատը մարտի մէջ էր) գնաց Արցախ, Ասկերանի շրջանի «Ցաղթանակ» կոլտնտեսութիւնից անգամ շնորհակալագիր ստացաւ՝ պաշտպանութեան համար: Եւ արդեօ՞ք միայն մի կոլտնտեսութիւնից, իսկ Կրկժա՞նը, Խոջալո՞ւն, իսկ Ասկերանի միւս գիւղե՞րը, վերջապէս Մարտակե՞րտը...: Սա նրա պաշտօնական-մարտական կենսագրութիւնն է, իսկ իրական կենսագրութիւնն այն էր, որ մասնագիտութեամբ մարզիչ-մանկավարժ, սպորտի վարպետ, Մաշտոցի շրջխորհրդի պատգամաւոր Սամուէլ Գէորգեանը միայն զինուոր չէր, միայն հայրենիքի ազատամարտիկ չէր, նա պայքարի ոգի էր, զէնք էր: Սամուէլի հետ ու Սամուէլի կողքին կռուելը, որքան էլ արտառոց հնչի, բախտ էր, դա՛ս էր, դպրո՛ց էր, մարդկութե՛ն, մարդկայնութե՛ն, տղամարդկութե՛ն: Եւ եթէ լինում են քաջեր, նա քաջերի քաջն էր: Եթէ լինում են ռազմավարներ, նա ռազմավարների ռազմավարն էր...: Ինչպէս ու ինչու յանձնուեց Շահումեանը, կը ճշտեն այլ մարդիկ, բայց Սամուէլ Գէորգեանը այն եզակի մարդկանցից էր, որ չյանձնեց Շահումեանը, նա մնաց ու կռուեց: ընՍպասեց խոստացուած տանկերին ու չհեռացաւ իր մարտական դիրքերից, որովհետեւ հրաման էր եղել՝ դիրքը պահել: Նա զինուոր էր, եւ ուրեմն՝ դիրքը լքել չէր կարող: Ու երբ արդէն իր 26 հոգիանոց ջոկատով մեն-մենակ էր մնացել հեռացած շտաբի, կտրուած կապի ու ապրել-չապրելու իր որոշման հետ, Սամուէլ Գէորգեանն ընտրեց կեանքը, ընկերների՛ կեանքը, նստեց մեքենան ու քշեց... տանկերի վրայ, որ ժամանակ ու հնարաւորութիւն տայ ջոկատին հեռանալու...: Նրա ընմանների մասին մեղք է ասելը, թէ խփուեց: Ոչ, նրա դին չի գտնուել, ուրեմն... Սամուէլն ապրում է, Սամուէլը կայ... լեգենդ դարձած:

Աղբիւր Սերոբի, Գէորգ Չաուշի զոհուելուց յետոյ ո՞վ էր ասում, թէ խփուել են...: Ասում էին՝ «Զէնքով պիտ մաքրենք մեր հաշիւ» ու կռւում էին նրա՛նց փոխարէն, նրանց համար...: Հայրենիքի՛ համար...

Եւ, այնուամենայնիւ, մարդն ապրում էր ու հիմա չկայ: Կսկիծն ու անզօրացումն անխուսափելի, բայց, յաղթահարելի պիտի լինեն: Որովհետեւ կեա՛նքն է դա պահանջում: Ամէն ինչ կորցնում է իմաստը, երբ հեռանում է հարազատդ, մտերիմդ, թւում է՝ ինքդ էլ հեռացել ես, եւ

այդպէս է իրօք՝ ամէն կորուստ մեզնից տանում է ճիշտ այնքան, ինչքան մենք կարող էինք լինել նրանցով ու նրանց մէջ: Եւ, այնուհանդերձ...: Մենք ընդամէնը մի օղակն ենք այն մեծ շղթայի, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարն է կոում: Մենք վերջին հատուածը չենք, մասն ենք: Միայն մասը, բայց շա՛տ էական, ճակատագրական մասը, որովհետեւ մեզ է տրուած որոշել պայքարի ընթացքը կասեցնելը կամ շարունակելը: Պատմութիւնը, ինչ խօսք, մեզնով չի աւարտում, բայց պատմութիւնն ունենում է ժամանակներ, երբ տրուած է որոշելու ի՛ր արագութիւնը եւ ի՛ր ուղղութիւնը: Ընտրենք, ուրեմն, դադարը, չընտրենք մեր ազգային գենի սառեցումը, արընթաց են դարձել ժամանակները, մեզ չի՛ սպասի աշխարհը: Մենք պիտի հոգեբանօրէն անկախանանք, հոգեբանօրէն դառնանք անկախ Հայաստանի քաղաքացիներ, իսկ դա ամէնօրեայ աշխատանք է, համարեա՛ ֆիզիկա՛ն աշխատանք: Ազգը ծովի նման մշտապէս ինքնամաքրումի ուժ ունի ամբարած, ալիք է պէտք. 1988ին եղաւ իններորդ ալիքը, եւ ալեբախութիւնը չի աւարտուել...:

Ես գրեցի միայն Սամուէլ Գէորգեանի մասին, թէեւ շատերի մասին կարող էի գրել, բազում անուններ ու դէպքեր շարադրել, որովհետեւ նա իմ մտերիմ ընկերն էր, կոուել էինք միասին, շրջապատուել ու ճեղքել օղակը, յաղթել ու... Ու հիմա ես մտածում եմ, որ Սամուէլի յիշատակը այն ուժն է, որ պիտի մղի ապրելու, կոուելու, ծանր է մարտի դաշտում, բայց առաւել ծանր է թիկունքում, որովհետեւ կոուողը ունի հոգեբանական վիթխարի առաւելութիւն, նա պայքարի առաջի՛ն գծում է, իսկ թիկունքը, թէեւ ապահով, բայց առաւել է վտանգաւոր. ընկճում է, հոգեբանօրէն ճնշում ու երկատում, քառատում մարդու...

Իսկ գուցէ սխալ է այս բաժանումը, չկայ առաջին գիծ, չկայ թիկունք, կայ հայրենիք, որը վտանգուած է, եւ կայ կռիւ, որ այդ հայրենիքի համար է...: Եւ այդ կռիւը կուսակցական պատկանելիութիւն չի հարցընում, ոչ մի խմբակցութեան երբեք չանդամագրուած Սամուէլ Գէորգեանը Արցախի ազգային-ազատագրական պայքարում զոհուած ազատամարտիկների 76 ընտանիքներին մշտապէս անշահախնդիր օգնութիւն է ցոյց տուել, ուրեմն եւ...: Մնացեալը...: Մնացեալը այն զանգն է, որ ինչպէս Ջոն Դոնն էր ասում, երբեք չի գուժում որեւէ մէկի համար յատուկ, գուժում է բոլորիս համար...: Խտացա՛ծ է մեր ժամանակը, ու խնդիրներ է առաջադրում, որ այլ պայմաններում գուցէ սերունդներ պիտի՛ լուծէին, բայց սա՛ է մեր կեանքի ժամանակը, սա՛ է մեր կեանքը, որ պիտի ճի՛շտ ապրենք բացճակատ, շիտակ կանգնելու պատմութեան դատի առաջ, ինքներս մեր դատի առաջ...

Եւ նահանջ տարի ամենանուին էլ չի նշանակում նահանջի տարի... (*«Մայրենիք»*, 1992, թիւ 3-4):

ՄԻՔԱՅԷԼ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ԿԱՐԷՆ ՎԱՂԻՆԱԿԻ ԴՈՒՐԻՆԵԱՆ

Ծնուել է 1970ին՝ Կապան քաղաքում: 1987ին աւարտել է միջնակարգը, սովորել նաեւ Կապանի գեղարուեստի դպրոցում: Խորհրդային բանակում ծառայելուց առաջ եւ յետոյ աշխատել է որպէս փրեզերագործ: Այնուհետեւ կամաւոր ընդգրկուել է Հայաստանի Հանրապետութեան ՆԳ-ի յատուկ գնդի Կապանի վաշտում եւ 1991ին քաղաքի արուարձանում զոհուել զրահամեքենայի մէջ ուղիղ նշանառութեան թշնամու կրակից...

Հողը առանց կռուի չեն զիջում ու չեն նուաճում եւ, ցաւօք, հայրենիքի զոհասեղանին հեղուած արիւնը ցեղի լաւագոյն զաւակներինն է: Եւ այս ժողովածուն, որ դրանցից մէկի՝ Կարէն Դուրինեանի յուշարձանն է, պապական տաք հողի շնչից խենթացած հերոսի «դատապարտուածութիւնը» հայրենիքին մատուցում է որպէս իմաստաւոր կեանքի վկայութիւն եւ անմահութեան երաշխիք («*Անաւարտ երգ*», Երեւան, 1992-երկու հատուած):

Ս. ԳԵՂԱՄԵԱՆ

ՀԵՐՈՍԻ ՄԱՀՈՎ

Երբ որ, ի վերջոյ, վախճանս հասնի,
Երբ որ մահս գայ, ինձ երկինք տանի,
Խնդրում եմ, Աստուած, հոգիս
առ այնպէս,
Որ իմ անունը չկորչի անհետ։

Թող որ չմեռնիմ հասարակ մահով,
Այլ ինչպէս հերոս՝ պատուով
եւ փառքով,
Եւ որ իմ կեանքին, իմ հայի սրտին
Թող պատահական գնդակ չդիպչի։

Երբ որ, ի վերջոյ, վախճանս հասնի,
Հոգիս թեւ առած դէպ՝ երկինք թռչի,
Խնդրում եմ, Աստուած,
ինձ մի անտեսիր,
Հերոսի մահով քո դատին կանչիր։

20 Սեպտեմբեր 1991

ԿԱՐԷՆ ԴՈՒՐԻԵԱՆ

ԾՆՈՒԱԾ ՕՐՈՒԱՆԻՑ

Ծնուած օրուանից զինուորն եմ ազգիս,
Սուրն ու վահանը իմ Հայաստանի,
Ծնուած օրուանից ծառան եմ ազգիս,
Սորուելն ու արքան իմ հայրենիքի։

Ծնուած օրուանից յետնորդն եմ Հայկի,
Ընկերը դէնքի, նետ ու աղեղի,
Ծնուած օրուանից կրակն եմ կռուի,
Վրէժի բոյն եմ, սարսափն եմ թուրքի։

2 Հոկտեմբեր 1991



Սեթամանցն

ՎԻԳԷՆ ՇԻՐԻՆԵԱՆ

Վիգէն Միսաքեան Շիրինեան ծնած է 1947ին, Արցախի Մարտակերտ շրջանի Ջըրդրան գիւղը։ Նախնական կրթութիւնը գիւղի միջնակարգ դպրոցին մէջ ստանալէ ետք՝ կը մեկնի Երեւան ու կ'աւարտէ պոլիտեխնիկական հիմնարկը։ Շրջան մը Երեւանի մէջ աշխատելէ ետք, կը վերադառնայ հայրենի գիւղ։ 1990 Մայիսին կ'ընտրուի Հայաստանի Գերագոյն Խորհուրդի անդամ։

Շիրինեան Արցախեան պահանջատիրութիւնը ղեկավարած է Մարտակերտի մէջ։ Ան մասնակցած է շրջանի մէջ ինքնապաշտպանական առաջին ջոկատներուն կազմակերպման։

Անդամ էր Հ.Յ.Դաշնակցութեան։

Նահատակուած է 17 Յունուար 1992ին, Ստեփանակերտի մէջ, անարդ հրթիռի մը հետեւանքով։

Նրա հատու եւ շիտակ խօսքից սարսափում էին ազատութեան, անկախութեան թշնամիները, բարձրաստիճան թալանչիները։

Վիգէն Շիրինեանը կուում, պայքարում էր որ ճակատում էլ լինէր։ Անզիջում կռուով սկսեց իր ելոյթները 1988ի Փետրուարին մարտակերտեան միտինգներում։ Նրա հատու եւ շիտակ խօսքից սարսափում էին ազատութեան, անկախութեան թշնամիները, բարձրաստիճան թալանչիները։ Իր պայքարը Արցախի ազատամարտիկը տեղափոխեց Հայաստանի խորհրդարան, որն, անշուշտ, ուզէր նրա ազնուութեան, շիտակութեան, անկրկնելի խառնուածքի, դարաբաղեան համ ու հոտի կարիքը։

—Ես այստեղ այլեւս անելիք չունեմ,—ասել էր Նոր տարուայ շեմին,— Արցախին կռուող մարտիկներ են պէտք։

Ասես ինչ-որ նախանշամութեամբ հայրենի Մարտակերտ մեկնեց, ուր նրան սպասում էին զինակիցները։ Յունուարի 19ին Արցախեան

խորհրդարանի վերջին նիստում Վիգէն Շիրինեանը տխուր էր ու մտահոգ: Ասես կանխազգալով ճակատագրի հարուածը, մի ներքին կոիւ էր սկսել թշնամու ռումբի հետ ու մտովի փորձում էր հեռու վանել այն: Մտքով յաղթեց ու երեւի կապուեց իր ընտանիքի, վեց դուստրերի հետ: Փողոցում, որտեղ կանգնած աւտոմեքենայի էր սպասում, բարձունքներից լսուող կրակահերթերից, արկերի պայթիւններից զգում էր, թէ ինչ է կատարւում Կրկժանում: Կլանուած հայ ազատամարտիկների յաջողութեամբ, հայրենասէրը չնկատեց ուղիղ դէպի իրեն սլացող հրթիռը:

Այդ գիշեր ընկաւ թշնամու Կարկիջախանը եւ վերածնուեց հայոց երեքհազարամեայ Կրկժանը: Վիգէն Շիրինեանը մտքով յաղթող ազատամարտիկների հետ էր (4 Յունուար 1992):

«ԱԶԱՏԱՄԱՐՏ»

Մեր զրոյցները Մելիք Շահնազարից մինչեւ Թեւան էին հասնում, ու մինչեւ մեր նոր նահատակները: «Մարդկային կեանքն էս ո՞նց էժանացաւ: Հայրենիքը թիզ առ թիզ էս ոնց դառնահամից կարող ես մեռնել»:

Նրան ուղղաթիռը ետ չթերեց: Նա իր հողի վրայ էր ու այնտեղից միաբանութեան էր ձգտում: Իղձդ ի կատար, հօրներորդ զաւակդ ունենալու երազով ապրող իմ անարատ ընկեր: Ափսոս, հազա՞ր ափսոս քո ընկերների ու քեզ՝ Վիգէն: Խաղաղութիւն ձեր հոգիներին: Եւ հաւատացէք՝ ձեր մահով ամրացրեցիք այն դիրքերը, որոնք սահման են կոչւում ու վրէժով լցրեցիք մեր հոգիները: Առաւօտեան ազատ ապրելու համար, այո՛, գիշերները մահեր են պէտք: Սա էր պայքարի ուղի եւ սուրբ նպատակը, որի համար զոհերն ընտրւում են անուն-անուն: Եւ նրանց մէջ դու՝ Վիգէն Շիրինեան:

Եւ ո՛ր արցախցու, եւ ո՛ր հայորդու թափառող հոգին աքսորական չէ: Եւ վերջապէս ո՛ւմ համար է աշխարհում շողում բնական մանը:

Ա. ՄՈՎՍԻՍԵԱՆ



ՔԱՐԻՆՏԱԿԻ ՔԱՋԸ

«Ես շատ եմ ուզում, որ մեր ժողովուրդը ճանաչի Վաղինակին: Նա արեամբ շարունակությունն էր Սերոբ Աղբիւրի, Գէորգ Չաուշի, Նիկոլ Դումանի»:

Բերդաձորի Անդրանիկի ժլատ գրառումների ու յուշերի մէջ երբեք էջանոց ուղերձատիպ շարադրանք կար՝ նուիրուած Քարինտակի գիւղի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար Վաղինակ Առուշանեանին։

«Վաղինակը ոգին էր Քարինտակի պաշտպանութեան: Երկաթեայ կամք ու յամառութիւն ունէր: Անկրկնելի էր, նոյնիսկ ամենածանր պահերին անսխալ որոշումներ ու վճիռներ էր կայացնում: Ես շատ եմ ուզում, որ մեր ժողովուրդը ճանաչի Վաղինակին: Նա արեամբ շարունակությունն էր Սերոբ Աղբիւրի, Գէորգ Չաուշի, Նիկոլ Դումանի: Նա վրիժառու էր ու հաւատաւոր դաշնակցական...»:

Օրեր յետոյ, Յունուարի 26ին կը բոլորի հայոց մի խումբ քաջերի նահատակութեան մէկ տարին։ Մէկ տարի է ինչ՝ նրանք հեռացել են մեզանից, բայց անմոռաց անունները ապրում են որպէս պատգամ, որպէս ուղենիշ։ Եւ նրանց շարքում իր հաստատուն տեղն ունի Քարինտակի քաջը՝ Վաղինակը։

«Յիշում եմ, Ազգային Համագումարի ժամանակ ճանաչեցինք իրար, շատ շուտ մտերմացանք: Որոշեցինք, որ Քարինտակը նոյնպէս կը մտնի Բերդաձորի ինքնապաշտպանական խորհրդի մէջ: Վերջին հանդիպումը Ստեփանակերտի հիւանդանոցից ռուսների գերած տղաների փախուստի կազմակերպման օրն էր: Գիւղում ռուսները ինձ ձերբակալեցին, Վաղինակը եկաւ ինձ հետ մինչև Շուշի եւ հանգստացաւ միայն այն ժամանակ, երբ ինձ ազատ արձակեցին: Երբ ուղղաթիռ էինք բարձրանում, մօտեցաւ ու ասաց՝ «*Սպասում եմ, կը գաս*»: Բայց չսպասեց...: Նա կեանքը նուիրաբերեց իր սիրելի Արցախին: Վաղինակի թանկ արեան դիմաց թշնամին հատուցում չունի...: Հիմա նրա զաւակներն են զինուոր դարձել...»,— *գրում է Անդրանիկը։*

Այսպէս աւարտւում են նրա յուշերը։ Դրանք յուշեր չեն սոսկ, ապրած օրեր են, զուսպ հրամանատարի ջերմ ու տաք խօսքեր մարտական ընկերների մասին, ա՛յն ընկերների, ովքեր կրակի դէմ են կանգնել իրար պահպանելու, հայրենին ազատ տեսնելու յոյսով (**«Երկիր»**, 22 *Յունուար*, 1993)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԱՏԻԿԵԱՆ

ՀԱՅՐԵՆԵԱՑ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԿԵԱՆՔԻՑ ՎԵՐ Է...

Հայրենիքի համար նահատակուելը յաւերժ կենդանի լինել է նշանակում:

Արտիւշա եւ Ելենա Միքայէլեանների տանը մեծ ուրախութիւն էր. ծնուել էր առաջնեկը, որին ի պատիւ Ա. Աշխարհամարտում զոհուած պապի՝ Գրիշա կնքեցին: Ի՞նչ իմանային, որ նոյն դաժան ճակատագիրն էր բաժին ընկնելու նաեւ նրան:

Աւարտեց Սզնէքի ութամեայ դպրոցը, Ստեփանակերտի գիւղ-տեխնիկումը: 80ին՝ պարտադիր զինծառայութիւն: Յետոյ՝ Կարմիր գիւղում բրիգադավար: Հեղինակութիւնը, որ սովորաբար հեշտ չի ձեռք բերւում, նուաճուեց: Գերազանց տիրապետում էր գիւղատնտեսական տեխնիկային: «Ոսկէ ձեռքեր» ունէր: Աւտովարորդ էր, տրակտորիստ, կոմբայնավար, խառատ, փականագործ, էլեկտրազօդող: Նոր տուն կառուցեց հայրենի գիւղում: Երեք սիրասուն զաւակի հայր դարձաւ: Տաք օճախ ունէր: Երբ սկսուեց Արցախեան շարժումը, հոգում խորը թաքնուած հայրենասիրական երակը բաբախեց ուժգին: Իսկ երբ ծաւալուեց ազգային-ազատագրական պայքարը, Գրիշան չէր կարող մի կողմ կանգնել: Նա իր ձեռքը վերցրեց Սզէնքում ստեղծուած 20 հոգանոց ջոկատի հրամանատարութիւնը: Քանի՞-քանի՞ անգամ իր ջոկատով օգնութեան է հասել Քարինտակ գիւղին եւ յաղթութեամբ յետ դառել:

1992 թ. Յունուարի 26: Հեռախօսազանգ Գրիշայի բնակարանում: Թշնամին սպառնում էր մտնել Քարինտակ գիւղը: Դեռ լոյսը մութից չէր ջոկուել: Գրիշան իր ջոկատով օգնութեան հասաւ: Մի քանի ժամից յետոյ... Նրա մահուան բօթը հասաւ գիւղ: Հայրը՝ Արտիւշան, իր մէջ կորով ու ուժ գտաւ խեղդելու անձնական վիշտը եւ տղայի շիրիմին նախատինքի խօսք ասելու նրանց, որ հայրենիքի համար դժուարին այս օրերին լքել են Արցախը, փրկել իրենց գլուխը: Մինչդեռ հայրենիքի համար նահատակուելը յաւերժ կենդանի լինել է նշանակում: Ռուսթաւելու իմաստուն մտքով աւարտեմ խօսքս.

Անփառունակ կեանքից սակայն
Փառքով մեռնելն է ցանկալի:

ԻԼԼԱ ՀԱՑՐԱՊԵՏԵԱՆ



ՀԵՐՈՍԱԲԱՐ...

Հօրեղբօր՝ Վաղարշակի հետ ազատամարտիկներին փախցրել են հիւանդանոցի 2րդ յարկի լուսամուտից, տարել Շանախչի գիւղ, 3 օր թաքցնելուց յետոյ տեղափոխել Երեւան:

Կարէն Լեւոնի Ասուշանեանը ծնուել է 1964 թ. Ծուշի շրջանի Քարինտակ գիւղում, եւ նոյն տարին ծնողների հետ տեղափոխուել է Երեւան: Երեւանում սովորել է թիւ 154 միջնակարգ դպրոցում, որից յետոյ տեղափոխուել է թիւ 20 պրոֆտեխ ուսումնարանը եւ աւարտել 1983 թ.: Ամուսնացել է 1983 թուին, ունեցել է 4 դուստր: Մինչեւ 1988 թ. աշխատել է Երեւանի տարբեր հիմնարկութիւններում, տարբեր մասնագիտութիւններով:

1988 թ. գարնանից հոգ է տարել Ազատութեան հրապարակում գտնուող հացադուլաւորների եւ գործադուլաւորների նկատմամբ՝ մասն հանելով իր ընտանիքի նիւթականից: Շատ կարճ ժամանակամիջոցում կապ է հաստատել երեւանաբնակ քարինտակեցիների եւ Քարինտակ գիւղում բնակուողների միջեւ:

Բազմաթիւ անգամ իր կեանքը վտանգելով գիւղ է տեղափոխել սենդամբեռք եւ զինամթերք: Մի քանի անգամ յանձնարարութիւն կատարելիս Ստեփանակերտի օդանաւակայանում եւ Ծուշիում՝ ընկել է թուրք բաշիբոզուկների ճանկը եւ իր ճարպկութեամբ ազատուել:

Մասնակցել է Բերդաձորի կռիւներին, այդ նոյն ժամանակ Բերդաձորում վիրաւորուած հայ ազատամարտիկներին, որոնք գտնուում էին Ստեփանակերտի հիւանդանոցում ոուս զինուորների հսկողութեան տակ, որոնց կազդուրուելուց յետոյ պէտք է յանձնէին թուրքերին, Կարոն, հօրեղբօր՝ Վաղարշակի հետ ազատամարտիկներին փախցրել են հիւանդանոցի 2րդ յարկի լուսամուտից, տարել Շանախչի գիւղ, 3 օր թաքցնելուց յետոյ տեղափոխել Երեւան:

Նորից Կարոն գիւղում է, տեսնելով գիւղի անբարոյ վիճակը Երեւանի տարբեր հիմնարկութիւններից գիւղին է փոխանցում գումար՝ վերանորոգելու գիւղի դպրոցը, մանկապարտէզը եւ ակումբը: Տեղափոխում է մէկ հատ «Ուրալ» մակնիշի աւտոմեքենայ եւ այլ շինարարական նիւթեր: Եւ ահա չարաբաստիկ 1992 թ. Կարոն Երեւանից մեկնած ընկերների հետ նորից գիւղում է, սկսում է անհաւասար կռիւը: Թուրքերը մեծ կազմաւորումներով ցունուարի 26ին յարձակւում են Քարինտակ գիւղի վրայ եւ այդ կռուի վախճանին փամփուշտի պակասի պատճառով, յաղթանակից անմիջապէս առաջ, հերոսաբար զոհւում է իր ընկերների եւ հօրեղբօր՝ Վաղարշակի հետ, որը գիւղի հրամանատարն էր (Քեռագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ԿՐԱԿՆ ԻՆՁ ՎՐԱՅ ԵՄ ՎԵՐՑՆՈՒՄ

—Եթէ մենք չկնանք մեր գիւղը պաշտպանելու, ոչ ոք չի ների մեզ,— Քարինտակ գիւղի երեւանաբնակների ժողովում յայտարարեց Կարէն Առուշանեանը եւ կանգնեց նրանց շարքերում, ովքեր արդէն պատրաստ էին մեկնելու։

Այդպէս սկսուեց քսանհինգամեայ Կարէնի՝ չորս դուստրերի հայր կարօ ազատամարտիկի կենսագրութեան նոր էջը։ 1989 թուականն էր։

1989ից այն խմբերի հետ էր, որոնք միջոցներ էին հայթայթում, օգնում գործադուլաւորներին, ապահովում նստացոյցի մասնակիցների օրապահիկը, անձնական խնայողութիւնները տրամադրում Արցախին։

Քանի հիմնարկութիւնների ու հաստատութիւնների դռներ է թակել, քանի մեծահարուստների է համոզել քչախօս, բայց ներազդող կարոն։

Նրա հոգսերի հոգսը, սակայն, հարազատ ծննդավայրն էր՝ Քարինտակը։ Գիշեր ու ցերեկ ճանապարհին էր, գիւղ էր հասցնում ռպմամթերք ու պարէն, բեռնատար մեքենայ ու գիւղատնտեսական գործիքներ։ Վտանգը չուտ զգացող, թշնամուն գերազանց ճանաչող այդ նուիրեալների շնորհիւ էր, որ Արցախ աշխարհի բնակավայրերից շատերը յանկարծակիի չեկան ու արժանի պատասխան տուեցին ոսոխին։

Եթէ սկզբում ամէն ինչ ուժերի գերագոյն լարումով էր իրականացուում, ապա «անձնագրային ռեժիմի» շրջանում, թւում էր, այլեւս հնարաւոր չէր տեղ հասցնել անհրաժեշտ օգնութիւնը։ Քանի անգամ կարոն, «վկայագրի» համարուելով, ձերբակալուեց Ստեփանակերտում ու Շուշիում...

Անվախ հայորդին իրականացնողներից մէկն էր այն անհաւատալի, խելայեղ խիզախութեամբ ձեռնարկուած գործողութեան, որի ժամանակ կազմակերպուեց Բերդաձորում վիրաւորուած եւ Ստեփանակերտի հիւանդանոց տեղափոխուած ազատամարտիկների փախուստը։

...1992 թ. Յունուարի 26ն էր, անհաւասար մարտ էր սպասւում։ Շատերի համար առաջին մարտն էր, կարոյի ու սուրբ նահատակ ընկերների համար՝ վերջինը։ Նահանջող չեղաւ։ Ազատամարտիկները հերոսաբար դիմադրում էին։ Ոսոխը չկարողացաւ ճեղքել պաշտպանութիւնը։ Դիրքերը անգիջում էին։ Միայն առաջին գիծն էր ծանր վիճակում, զինամթերք հասցնելու հնարաւորութիւն չկար։ Այդտեղ էլ, նահանջ հակացողութիւնը մոռացած, նահատակուեցին հրամանատարն ու նրա եղբօր որդին՝ կարոն, հայոց սրբացած անունների կողքին գրելով իրենցը (*«Երկիր»*, 21 *Յունուար* 1993)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՏԻԿԵԱՆ

ԵԹԷ ՀՈԳՈՒ ԼՈՅՍ ՈՒՆԵՍ

Մարտերի ժամանակ էլ նախանձելի համարձակ էր ու «գիտարար»՝ խոցում էր այն տեղից, որտեղից ելուզակները հարուածի չէին սպասում։

Նրանց կենսագրությունը գրուած էր հարիւր, գուցէ եւ աւելի չատ տարիներ առաջ։ Նրանք էին մեր ազատագրական պայքարի առասպել դարձած Արաբոների, Զաւուշների, Հրայրների, Սերոբների, Դումանների, Դրոների, Ռուբէնների թիկունքը պահողները։ Չէին ծնուել, բայց արդէն կոչում ունէին։ Ֆիդայի էին՝ ճակատագրով, ազատամարտիկ էին՝ արիւնով, յոյս էին ու յենարան՝ հոգով։

Մեր նոր հաւատի կարապետներին ազգի սերունդ են անուանում։ Հպարտանում ենք նրանցով, որի դողով սպասում. վերադառնում են ու կարծես մեր կողքին չեն, աչքերի մէջ Արցախ աշխարհն է, որտերի մէջ՝ Գանձասարը, «վիրաւորւում են» հոգատարութիւնից ու խօսքները մէկ արած, ամօթխած պատասխանում՝ «ի՞նչ ենք արել որ, գնացինք, եկանք»։ Այդպէս «թաքնուող» էր նաեւ Անուշաւանը։

Անուշ էին ասում, եւ բառի ուղիղ իմաստն էր միայն։ Թէ ուրախութեան առիթ էր, ծանրութեան մեծ բաժինն էր կրում ու աննկատ մնում։ Դառնութեան պահերին անբաժան էր, ցաւ կիսող, անափ բարի ու անսահման մանկասէր։

Գնում են նրանք ու խառնւում հորիզոնի մշուշին։ Գընում են, որ կռուընկեր դարձած յետ վերադառնան։ Իսկ մեր յիշողութեան մէջ մնում են տաք կարօտի ցաւով, երազային։

Կան մարդիկ, որոնց մահուան հետ ամբողջ կեանքում չես հաշտւում, չես հաւատում, որ նրանք չկան։

Այդպիսին էին նաեւ իմ մարտական ընկերները՝ Նորիկը, Անուշը, Վաղոն, Կարոն, Հենոն, Ալեոշը... (*Թերդաձորի Անդրանիկի յուշերից*)։

Երեք երեխաների հայր էր, երբ անմնացորդ նուիրուեց Ղարաբաղեան շարժմանը. տագնապեց, երբ դարաւոր թշնամին իր անմոռաց հայակուլ գործն սկսեց, շատերի պէս ինքն իրենից դժգոհ մընաց ու, երբ առիթը ներկայացաւ, արեան կանչով Արցախ հասաւ։

Բերդաձոր-Քարինտակ անառիկ բերդի առաջին չինարարներից էր Անուշը։ Մարտերի ժամանակ էլ նախանձելի համարձակ էր ու «գիւտարար»՝ խոցում էր այն տեղից, որտեղից ելուզակները հարուածի չէին սպասում։ Գիշերները հերթապահելիս անհպատակ չէր կրակում, իրացրել էր ոսոխի հոգեբանութիւնն ու գիտէր, թէ երբ ու որտեղից, քանի հոգով են գալու։ Անվրէպ խփում էր ոչ թէ առջեւից եկողին, այլ՝ վերջից, որպէսզի խուճապ առաջացնէր ու յետ շպրտէր հերթական գրոհը։

...1992 թ. Յունուարի 26ին յետ մղելով թշնամու յարձակումը Քարինտակի վրայ՝ ազատամարտիկները նոր էին սկսել ուժերի վերադասաւորումը եւ ճշգրտում էին հնարաւոր գրոհի ուղղութիւնը, երբ մարտի դաշտում յայտնուեցին չորս երեխայ։ Նրանց թշնամու երախից փրկելու պարտականութիւնը իր վրայ վերցրեց Անուշաւանը եւ, դիրքերից դուրս սողալով, վազքով հասաւ երեխաներին, բռնեց ձեռքերից, յուսադրեց։ Երբ զգաց, որ նրանց վախն անցել է, մէկին շալակած, միւսին գրկած՝ գրեթէ մօտեցել էր ազատամարտիկների պաշտպանական գծին, երբ սկսուեցին թշնամու կարկտակերպ կրակոցները։ Ազատամարտիկների «պահող» կրակահերթերը թէեւ խանգարում էին թշնամուն, բայց...։ Վիրաւոր Անուշը վերջին շնչով դիրքերը հասցրեց երեխաներին ու դոհ ժպիտ լցնելով դէմքին, արտաբերեց վերջին խօսքը՝ փրկուեցին...

Դժուար է ասել՝ երեխաների յիշողութիւնից երբեւէ կը ջնջուի՞ իրենց փրկարարին բարի դէմքն ու ժպիտը, բայց որ Արցախեան գոյամարտի տարեգրութեան մէջ այս ինքնամոռաց արարքը իր արժանի տեղն է ունենալու՝ վկայ է մեր յիշողութիւնը։ Օրեր յետոյ կը բոլորի Անուշաւանի 32 տարին։ Նրա՝ Արցախեան ցաւով լցուած աչքերը ուրախութեան այդ պահին էլ յագուրդ չէին ստանալու եւ բարեմաղթանքներին անպայմանօրէն կը պատասխանէր՝ «Դեռ ամենագլխաւորը չենք հասցրել անել»... («Երկիր», 30 Հոկտեմբեր 1992)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԱՏԻԿԵԱՆ

ՆՈՐԱՅՐ ԷԴՈՒԱՐԴԻ ՄԱՆԱՍԱՐԵԱՆ

Նորայր Էդուարդի Մանասարեանը ծնուել էր 1964 թուականին, Երեւանում: Անուշաւան Առուշանեանի մտերիմ ընկերն էր, միասին էին աշխատում, միասին էլ անցան իրենց մարտական ուղին՝ Մեղրի, երկու տարի Բերդաձոր, յետոյ Նորայրը մեկնեց Ծաղումեան, վերադարձաւ ու թաւալ Քարինտակ:

Հ.Յ.Դ. անդամ էր, իսկական մարտիկին վայել հպարտութեամբ: Յորդաբուխ հումոր ունէր: Քչերը կարող էին յիշել պահեր, երբ նա չէր ժպտում, նոյնիսկ մարտի պահին. կրակոտ էր, արագաշարժ, այդպէս էլ կտրուկ վանում էր ու պատժում թշնամուն: Շտեսաւ յաղթանակը: Գիւղը պաշտպանելիս ընկաւ մարտի ամենաթէժ պահին, իր վերջին թշնամուն՝ կոյր փամփուշտն ընդունեց կանգնած (31 Յունուար 1992):

«ԵՐԿԻՐ»

ՔԱՐԻՆՏԱԿ

ԳԵՐԽՆԴԻՐԸ ԿԱՏԱՐՈՒԱԾ Է, ԲԱՅՑ...

ԳՈՒՐԳԷՆ ԾԱՏՐԵԱՆ

Դառն է իրողությունը: Բայց երբ ոսոխը կամենում է խլել հող հայրենին, դու՝ Հայկ Նահապետի ու քաջն Վարդանի ժառանգ, միայն մի գերխնդիր ունես՝ ամէն գնով պաշտպանել սրբությունն սրբոց հայրենիքդ: Այդ արեցին Շուշի եօթ քաջերը...

Բովուրխան լերան գագաթը կարծես հսկում է գերեզմանոցի իշխող բարձունքում գտնուող եօթ քաջակորով ազատամարտիկների շիրիմները: Ժապաւէնի պէս հայեացքներիս դէմ պտտւում են նրանց կենսագրութիւնները: Մէկը միւսից այնքա՞ն տարբեր եւ... այնքա՞ն նման:

Ռոմա Աթանէսի Սիմոնեան, Արմէն Եուրիի Իշխանեան, Սեռմա Խաչատուրի Հայրիեան, Վարուժան Սերեռժայի Աբրահամեան, Գագիկ Ենոքի Իշխանեան, Գուրգէն Բորիսի Ծատրեան, Արտաւազդ Աշոտի Գասպարեան...

Շուշեցի այս եօթ երիտասարդները, աւա՜ղ, այլեւս չեն ըմպի Լալիկ աղբիւրի քաղցրահամ ջուրը, չեն շրջի Շաղասարի լանջերին, չեն մասնակցի աւերուած ծննդավայրի վերականգնմանը...: Նրանք դարձել են լուռ...

1992, Յունուարի 26: Առաւօտ վաղ Շուշի զօրանոցում լսւում է հեռախօսազանգը: Հրամանատարը տագնապ է յայտարարում: Հաշուած ռոպէների ընթացքում վաշտը մեկնում է Քարինտակ: Ռոման եւ Արմէնը, ինչպէս միշտ, կատակներ եւ սրախօսութիւններ էին անում:

...Կարճ ճանապարհ էին կտրել, երբ գետի հանդիպակաց ժայռի խոռոչներում նկատեցին թաքնուած մի քանի թուրք զինուորների: Տարմար դիրք գրաւելով՝ նրանք դիպուկ կրակոցներով ոչնչացնում են ելուզակներին եւ առաջին յաջողութիւնից ոգեւորուելով՝ առաջ շարժւում: Սակայն չգիտէին, որ իրենց սպասում է ծուղակը: Հասցնելով մարտի բռնուել՝ դարանակալ թուրքերի կրակահերթերից զոհւում են երեք խիզախ շուշեցիները՝ Արմէնը, Ռոման եւ Սեռմանը...

ՌՈՄԱ ՍԻՄՈՆԵԱՆ

ԱՐՄԷՆ ԻԳԻԱՆԵԱՆ



ՍԵՌՄԱ ՀԱՅՐԻԵԱՆ

Մի քանի ժամ անց այդ նոյն թուրքերն են ընկնում Շոշի միւս դասակի մարտիկների ծուղակը եւ ամբողջովին ոչնչացւում: Սպանուած ադրբեջանցիների ծոցագրպանում մեր տղաների անձնագրերն էին:

Շոշի խիզախ վաշտի պատմութեան մատեանում իրենց անունները ոսկեայ տառերով են գրել Վարուժան Աբրահամեանն ու Գագիկ Իշխանեանը: Անցեալ տարուայ Յունիսը, ցաւօք, ճակատագրական եղաւ Վարուժանի եւ Գագիկի համար: Երկուսն էլ իրենց մահկանացուն կնքեցին նոյն օրը, երբ հերթապահում էին տարբեր պահակակէտերում:

Վարուժանը աւարտել էր Ստեփանակերտի գիւղատնտեսական տեխնիկումը: Երբ զինուորագրուեց գիւղի վաշտին, մարտական ընկերները կէս-լուրջ կէս-կատակ ասում էին.

—Վարուժան, ախր, քեզ աւտոմատը չի սազում, քեզ խաղաղ աշխատանք է պէտք:

Մարտական ընկերները պատմում են, որ զոհուելուց մէկ օր առաջ երազում տեսել էր կնոջը՝ Մարիետային՝ սեւ շորերի մէջ:

...Գագիկը բնաւորութեամբ Վարուժանի հակապատկերն էր՝ աշխոյժ, կենսասէր, չարաճճի, բայց նաեւ սրտաբաց: Յաճախ ասում էր.

—Ես քաղաքականութիւնից բան չեմ հասկանում, բայց իմ կարճ խելքով մեր հարցը զէնքի ուժով է լուծուելու: Կը յաղթի լաւ կռուողը:

...Թերեւս ամենադժուարը Գուրգէնի մասին գրելն է: Նոյն թաղում էինք ապրում, մեր աչքի առաջ է մեծացել, հասակ առել:

Գուրգէնը մասնակցել է Քարինտակի հերոսամարտին, Մալիբէյլուի, Խոջալուի, Ղուշչուլարի յենակէտերի ոչնչացմանը, Շուշիի ազատագրմանը, Լաչինի միջանցքի բացմանը, Ասկերանի պաշտպանութեանը, Դահրազ եւ Սառնաղբիւր գիւղերի ազատագրմանը...

—Դասակի հրամանատար Գուրգէն Ծատրեանը անվախ եւ խիզախ ազատամարտիկ

էր: Նա բոլոր մարտերում իրեն դրսևորեց որպես իսկական գրոհային: Գուրգէնը մեր վաշտի ոգին էր,— պատմում է զոհուածի մարտական ընկեր Կարէն Ջալաւեանը: —Գուրգէնը կարծես վախի զգացում չունէր, մի մարտի ժամանակ գրողի ծոցը ուղարկեց մի քանի ասկեարների, այնուհետեւ նոնակներ նետեց թշնամու խրամատը, որ ընդամէնը 20-25 մետր էին հեռու...

ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Դեռ մի ամիս էլ չէր անցել Գուրգէնի նահատակուելու օրից, երբ Շոշում տարածուեց Արտաւազդ Գասպարեանի զոհուելու բոթը:

Կամաւոր ընդգրկուելով գիւղի վաշտում՝ Արտաւազդը դարձաւ ամենապարտաճանաչ ու կարգապահ զինուորներից մէկը: Սկզբում հերթապահում էր պահակակէտերում: Յետոյ արդէն առաջին գծում էր: Եւ մարտական ընկերները գիտէին՝ ինչ էլ լինի, Արտաւազդը մենակ չի թողնի: Նա անդաւաճան ու նուիրական մարտական ընկերոջ համբաւ էր ձեռք բերել վաշտում: Հրամանատարները ամենակարեւոր մարտական գործողութիւնների ժամանակ գրոհային խմբում անպայման ընդգրկում էին Արտաւազդին:



ԳԱԳԻԿ ԻՇԽԱՆԵԱՆ

Եւ զոհուեց ընկերոջ կեանքը փրկելիս: Ներքին Հոռաթաղ գիւղի մերձակայքում գտնուող Պուշկենեալ կոչուող բարձունքն էին պաշտպանում...

Դառն է իրողութիւնը: Բայց երբ ոտխը կամենում է խլել հող հայրենին, դու՝ Հայկ Նահապետի ու քաջն Վարդանի ժառանգ, միայն մի գերխնդիր ունես՝ ամէն գնով պաշտպանել սրբութիւն սրբոց հայրենիքդ: Այդ արեցին Շոշի եօթ քաջերը, որոնք պլեւս յաւերժի ճամբորդ են, ազգային-ազատագրական պայքարի անմարելի աստղաբոյլ (**«Երկիր»**, 14 Մայիս 1993):

ԱՐՏԱՒԱԶԴ ԳԱՍՊԱՐԵԱՆ

ԳԱՐԻԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ
ՌՈՒՍԼԱՆ ԱԲԱՐԵԱՆ

ԱՆԿՈՏՐՈՒՄ ՈՒ ՀԱՍՏԱՏԱԿԱՄ

Ռաֆիկը թրծուեց ճակատամարտում, ամրացաւ նրա հոգին մաճուան ու սարսափների ճիրաններում: Նրա բազուկները վստահութիւն էին ներշնչում, աչքերում վառւում էր թշնամու դէմ ատելութեան կրակը:

Քոռանի: Քո ամէն մի քարը ծանօթ էր Ռաֆիկ Արզումանեանին, քո ամէն մի կածանը, քո ամէն մի աղբիւրը: Նա զոհուեց հայրենի սուրբ հողի համար, նա՝ բոլորած իր կեանքի հասուն շրջանը, մտաւ պատերազմի մէջ: Այդ նա էր Քարաշէնի հերոսական խմբից, որ ըսկզբից եւեթ գրանցուել էր կամաւորականների շարքերում: Անկոտրում ու հաստատակամ այս տղամարդը ամէն ինչից վեր է դասում հայրենիքը, որի հողը ներկում էր իր զաւակների արիւնով:

* * *

Ռաֆիկը թրծուեց ճակատամարտում, ամրացաւ նրա հոգին մաճուան ու սարսափների ճիրաններում: Նրա բազուկները վստահութիւն էին ներշնչում, աչքերում վառւում էր թշնամու դէմ ատելութեան կրակը:

Հպարտ էր Քոռանին, Ռաֆոյի հարազատ գիւղը, փոքրիկ գիւղը, որը չի կարող հանգիստ լինել, երբ արեան հեղեղներում ալեկոծւում է Արցախ աշխարհը, երբ մարդիկ ցաք ու ցրիւ են գալիս սեփական տան պատերի տակ, երբ երեխաներ են որբանում: Եւ Ռաֆիկն էլ նետուեց կրակի մէջ՝ սրբելու հայոց մայրերի արցունքները: Իր փոքրիկ ջոկատով նա յայտնւում էր վտանգաշատ վայրերում, պատասխան տալիս թշնամուն: Նրա խումբն էր, որ 1991 թ. մասնակցեց Շահումեանի պաշտպանական կռիւներին: Այս մարտերում զոհւում է արիաբար մարտնչող ջոկատի հրամանատար Սամուէլ Վարդանեանը՝ թողնելով մի ամեհի

ցաւ ընկերների սրտում: Ջոկատի հրամանատար է նշանակում Կոլիան: Նրա հրամանատարութեամբ ջոկատը մասնակցում է Ջամիլլուի ազատագրմանը: Ջոհւում է նաեւ Կոլիան: Նրան փոխարինում է Բաֆոն: Երեք օր անց սկսւում են Կրկժանի մարտերը: Առաւօտեան հրաման է ստացւում՝ հրետակոծել թշնամու դիրքերը: Ամբողջ գիշեր աշխատում էր հրանօթը: Երեք օր տեւած թէժ կռիւներից յետոյ Կրկժանը նոյնպէս ազատագրւում է թուրքերից:

Այդ օրերին հերոսաբար պաշտպանւում էր Քարինտակը: Օգնութիւն էր պէտք, եւ Բաֆոն իր ջոկատով մեկնեց այնտեղ, միացաւ քարինտակցիներին:

Յունուար 26: Կարեւոր գործով հրամանատարը եկել էր Ստեփանակերտ ու կրկին շտապում էր Քարինտակ: Այդ օրը Բաֆիկենց օջախի համար բացուեց սգոյ երգ հիւսելով...: Սլանում է «Նիւան», ղեկի մօտ՝ Բաֆոն: Դա նրա կեանքի վերջին ճանապարհն էր, վերջին ճանապարհի վերջին ոլորանը, ուր թուրքերը դարան էին մտել: Թշնամու նետած նռնակից սպանւում են Բաֆոն եւ կողքին նստած ընկերը: Մահացաւ Բաֆոն, հերոսական խմբի հերոս հրամանատարը՝ հայեացքը յառած Շուշիին, որի ազատագրմանը նա փափաքում էր մասնակցել:

Հօր տեղը կը կանգնի վեցամեայ որդին՝ Էդգարը: Համբերութիւն է պէտք, ժամանակ, որոնք սպիացնում են վէրքը: Նա մահացաւ յաւերժանալու համար: Ձեր ընկերների վրէժը հանեցէք, արիասիրտ քաջեր՝ Սերոբ, Գագիկ, Հրայրիկ, Արմէն...: Կրակին՝ կրակ, արեանը՝ արիւն:

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ
Ուսանողուհի



ԿՐԿԺԱՆ

ԱՐԾՈՒԱՇԷՆԻ 12Ը...

Նրանց մասին դեռ լեգենդներ են հիւսուելու, որովհետեւ տակաւին ողջ, արդէն լեգենդ էին։

Մինչ իրենց մատաղ կեանքի վերջին մարտը, նրանք շահել էին փոքր ու մեծ ճակատամարտեր, իրենց ձեռքում էին պահել Տաուշի, Կրասնոսելսկի ռազմական տեսակէտից մեծ կարեւորութիւն ներկայացնող բարձունքները, թշնամուն յետ շպրտել Օրջոնիկիձէ եւ Վահան գիւղերի տարածքներից։ Եւ սակայն վճռական մարտն առջեւում էր։ Վանաձորի 016 մոտոհրաձգային դեսանտային գնդի տղաներից շատերի համար անցեալ Օգոստոսի 4ից 8ը փառքի ու անմահութեան ճանապարհի սկիզբն էր։ Նրանցից 12ը դարձան յաւերժի ճամբորդներ։ Իրենց հրամանատարին՝ մայոր Էդուարդ Աւետիսեանին, տղաները կէս խօսքից էին հասկանում։ Հափազանց կարճ ժամկէտում անհրաժեշտ էր կազմակերպել արծուաշէնցիների դուրսբերումը, փրկել 4500 կեանք։

Հեշտ է ասել. մինչեւ ատամները զինուած 800 ՕՄՕՆական, հրասայլեր եւ այլ հզօր տեխնիկաներ, իսկ նրանց դիմաց ընդամէնը 12 հայորդի զինուոր՝ իրենց մարտական տեխնիկայով, զինամթերքով։ 3 ժամ տեւած օրհասական մարտից առաջ, չորս օրերի ընթացքում, այնուամենայնիւ, նրանց յաջողուեց 4500 արծուաշէնցիների դուրսբերումը մարտադաշտի վերածուած եւ կղզիացուած գիւղից։

Այո, տղաների վերջին մարտը Օգոստոսի 8ին էր եւ տեւեց երեք ժամ։ Դիմահար եկող թշնամին հնձւում էր յունիսեան խոտի նման։ Շուտով թշնամին փոխեց իր յարձակման տակտիկան։ Տղաները չնկատեցին, թէ ինչպէս երկու տանկ դարանակալ գոռի նման խուժեցին թիկունքից եւ կասեցրին տղաների գրոհը. նրանք ընկան վերջին փամփուշտը դատարկած...

Այսօր այս 12 արծիւների շիրիմներն ամփոփում են Եռաբլրի գերեզմանոցում. շուրջ երկու ամիս յետոյ՝ Հոկտեմբերի 5ին միայն յաջողուեց կատարել դիակների փոխանակումը։ 12 այս արծիւներից միայն երկուսը՝ գնդի հրամանատարի տեղակալ, թիկունքի գծով մայոր Էդուարդ Աւետիսեանն էր 31 տարեկան եւ լէյտենանտ Վոլոդիա Դարբինեանը՝ 23 տարեկան, մնացած 10ի 20ը դեռ չէր բոլորել։

Անուն առ անուն յիշենք նրանց՝ Արծուաշէնի քաջերին, խոնարհուենք նրանց եղբայրական շիրիմի առաջ.

Անանիա Վարդանի Սմբատեան
Դաւիթ Արամայիսի Միքայէլեան
Մխիթար Գէորգի Չիլինգարեան
Տիգրան Գրիգորի Թովմասեան
Սուրէն Լուդվիգի Եղիազարեան

Արծուաշէնի պաշտպանութեան ծանր եւ անհաւասար կռիւներուն մէջ ինկած 12 հերոսներէն քանի մը հատը (աջէն առաջինը՝ Դաւիթը, Անանիան, Սուրէնը եւ միւսները)։

Յարութիւն Վուրանգիւլի Աբրահամեան
Կարէն Սերեոժայի Մնացականեան
Ժորիկ Ալբերտի Յակոբեան
Կամօ Ռոբերտի Սարիբեկեան
Արմէն Վլոդիայի Մակարեան

Նրանց մասին դեռ լեգենդներ են հիւսուելու, որովհետեւ տակաւին ողջ, արդէն լեգենդ էին, նրանց անուններով են կոչելու դպրոցներ ու փողոցներ, մարտական ջոկատներ (17-27 Յունիս 1993, թիւ 6)։

«ՁԻՆՈՒՈՐ»

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻՑ ՄԻՆՉԵՒ ԵՌԱԲԼՈՒՐ՝ ՄԻԱՍԻՆ...

...Եռաբլուրում արդէն կայ երկու եղբայրական գերեզման։ Մէկում իրար փարուած ննջում են 12 սուրբ նահատակներ, որ իրենց կեանքը նուիրաբերեցին՝ արեան գնով պաշտպանելով արծուաշէնցիներին ու մեր այդ բուռ հողակտորը, միւսում Շահէն Մեղրեանն է՝ իր խիզախ զինակիցներով...։ Տաղանդաւոր զօրահրամանատար Գ. Ժուկովն ունի այսպիսի խօսքեր. «Մեզ եռազում են մեռնել սեփական անա-

կողնում, միւսները նախընտրում են կռուի դաշտում մեռնել...»: Եռաբլուրում յաւերժի քնով քնածները նախընտրել են վերջինը, որոնց թւում եւ դեռ 22ը չբոլորած Կարէն Խաչատրեանն ու Դաւիթ Միքայէլեանը...

Մտերմիկ ընկերներ են եղել, միասին յաճախել նոյն մանկապարտէզ, դպրոցում (թիւ 169) նստել նոյն նստարանին, նոյն երազներով ապրել եւ մեկնել բանակ: Եւ ահա նորից միասին են, իրար կողք կողքի...

...Նոր Հայաստանը պատերազմական դրութեան մէջ է: Արիւնատենչ ոսոխը ո՛չ միայն Արցախն է ուզում ծունկի բերել, այլեւ ոտընձգութիւններ է անում սահմանամերձ շրջաններում: Առաւել լարուած է վիճակը Տաւուշում եւ Կրասնոսելսկում: Թշնամին «վճռել» է ճեղքել հայոց պաշտպանական գիծը, հասնել Սեւան ու զովանալ նրա ջրերում: Օգոստոսն է: Ոսոխի ռազմական տեխնիկայի եւ կենդանի ուժի նոր կուտակումներ են նկատւում Արծուաշէնի մերձակայքում: Թշնամու դէմն առնելու, արծուաշէնցիներին փրկելու համար մահն աչքի առաջ ունեցող, անձնուրաց տղաներ են հարկաւոր: Եւ ահա դեսանտային գնդի ընտրեալներից ընտրեալները նետւում են մարտի՝ մահուան օղակից դուրս բերելով 4500 արծուաշէնցիների...: Կռւում են մինչեւ վերջին փամփուշտը, եւ անհաւասար մարտում ընկնում 12 քաջազուններ: Նահատակների մէջ էր նաեւ գնդի բուժակը՝ Դաւիթը, որին մարտական ընկերները քնքշանքով «Մեր բժիշկը» անունով էին կոչում...

Քանի՜-քանի՜ վիրաւոր ազատամարտիկների է վերստին կեանք պարգեւել քաջազուն այս հայորդին, քանի՜-քանիսին է դուրս բերել կրակի գօտուց՝ վտանգելով սեփական կեանքը: Նա, որ երգի ու երաժշտութեան սիրահար էր (սովորել է «Միաձան» կոմբինատին կից թիւ 3 երաժշտական ստուդիայում), նա, որ հեռակայել էր Մոսկուայի ժողովրդական արուեստի համալսարանում (2 տարի) տիրապետելով կիթառահարութեան արուեստին...: Դաւիթն ունէր բոլոր հնարաւորութիւնները՝ անհոգ կեանք վարելու, բայց երաժիշտը նախ եւ առաջ Հայրենի-

Թշնամու դէմն առնելու, արծուաշէնցիներին փրկելու համար մահն աչքի առաջ ունեցող, անձնուրաց տղաներ են հարկաւոր: Եւ ահա դեսանտային գնդի ընտրեալներից ընտրեալները նետւում են մարտի՝ մահուան օղակից դուրս բերելով 4500 արծուաշէնցիների...: Կռւում են մինչեւ վերջին փամփուշտը, եւ անհաւասար մարտում ընկնում 12 քաջազուններ:

Դաւիթ Միքայէլեան

Ջի Ջինուոր էր. «Երաժշտութեամբ զբաղուելու ժամանակ դեռ կ'ունենանք: Այժմ զէնք բռնող բազուկ է հարկաւոր»: Եւ որոշեց ուսանել ՀՀ Ներքին գործերի նախարարութեան մշակոյթի տան բժշկական բաժնում՝ բուժակ դառնալու մտադրութեամբ: Ընդունուեց եւ աւարտեց փայլուն գնահատականներով. «Հիմա արդէն կարող եմ պիտանի լինել իմ ժողովրդին...»:

—Երբ Վանաձորից տղաներին տարան սահման, յաճախակի էին զանգահարում Տաւուշից, յետոյ՝ Վահան գիւղից,— պատմում է հերոսներից մէկի եղբայրը՝ Էդուարդը: —Զգալ էր պէտք Դաւիթի ցնծութիւնը, երբ խօսում էր Օրջոնիկիձէ, Մութուդարա գիւղերի մերձակայքում մեր տարած յաղթանակների, ունեցած յաջողութիւնների մասին: Վերջում կատակով աւելացնում էր. «Դուք մեր մասին մի մտածէք, մենք այստեղ թշնամուն ցոյց ենք տալիս, թէ որտե՞ղ են խեցգետինները ձմեռում...»: Վերջին անգամ զանգահարեց Օգոստոսի 4ին, որը եւ, ցաւօք, վերջինը եղաւ...: Իսկ ընկերներից մէկի ծնողներին գրած նամակում կարդում ենք. «Երբ Դաւիթն է մեզ հետ, ուրեմն կը յաղթենք...: Մեր բուժակը մեր պարծանքն է»:

Եռաբլուր: Հոծ բազմութիւն է հաւաքուել, Մայր հողին են յանձնում նահատակների աճիւնները: Խօսք է ասում Հանրապետութեան պաշտպանութեան նախարարի տեղակալ, գեներալ Մարտիրոսեանը. «Հերոսներն անմահ են: Այս 12 հրաշալի հայորդիները առաջինը կ'արժանանան հայ ժողովրդի ամենաբարձր պարգեւին...»:

«Մենք հպարտ ենք, որ ունեցել ենք այսպիսի տղաներ: Մեր ժողովուրդը խորապէս հիացած էր նրանց խիզախութեամբ,— ասում է նոյն նախարարութեան բաժնի վարիչ Անդրանիկ Արշակեանը:— Դիակների փոխանակմանը ինքս էլ էի մասնակցում եւ ուզում եմ բառացիօրէն կրկնել ադրբեջանցի գնդապետ Ռուստամովի խօսքերը. «Ահա ձեր ազգի պարծանքները եւ թող ձեր ժողովուրդը լաւ իմանայ այս տղաների մասին, որոնք կռուեցին արիաբար, մինչեւ վերջին փամփուշտը: Փառք ու պատիւ այս հրաշքներին...»:

Ցուզուած է նաեւ գնդի հրամանատար, գնդապետ Թազագիւլեանը. «Նրանք արեցին, ինչ որ հնարաւոր չէր...: Այս 12ը այն դիւցազներն էին, որ աստղեր էին իջեցնում երկնքից: Շուտով մեր գունդը կը կոչուի «Արծուաշէնում զոհուած 12 հերոսների անուան գունդ», իսկ դպրոցները, որտեղ սովորել են նրանք, կը վերանուանուեն տղաների անունով: Կը լինեն փողոցներ: Գրուելու է նրանց պատմութիւնը: Վանաձորում եւ Եռաբլուրում պէտք է կանգնեցուի հերոս մարտիկների յուշարձանը...» («Հայաստան», 4 Մայիս 1993):

ՅԱԿՈԲ ՍՐԱՊԵԱՆ

ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻ ՔՐՈՋ ՆԱՄԱԿԸ

Մենք մի գերագույն սրբություն ունենք՝ Հայրենիքը։ Եւ բոլորս զաւակն ենք նրա։

Խմբագրությունը նամակ ստացաւ.

«Գրում է ձեզ Արցախում զոհուած ազատամարտիկի քոյրը։ 1992 թուականի Փետրուար 26ին Մարաղայի ճակատամարտում զոհուեց եղբայրս՝ Գուրգէն Յակոբի Աւանգիսեանը՝ Ալազան Գուգոն։ Զոհուեց՝ շշնջալով վերջին խօսքերը.— «Տղերք, նամարդ չլինէք, հողը չտաք»։ Տուեցին հողը, ցրուեց ջոկատը, այն ջոկատը, որը երդուել էր մինչեւ արեան վերջին կաթիլը պայքարել եւ թոյլ չտալ թշնամուն մտնել շրջան։ Վերադարձէ՛ք ձեր դիրքերը, տղաներ։ Գուգոյի նման տղաների գերեզմանները գերի մի թողէք։

«Յարգելի խմբագրութիւն, Գուրգէնը Հ.Յ.Դ. անդամ էր, հայրենիքի անձնուէր պաշտպան։ Ձեր թերթում տեղ տուէք եղբօրս համար։ Մեզ հետ միասին լիշէք ու յարգէք նրա լիշատակը, այն լաւագոյն տղաներից մէկի, որը հեռացել է դեռ 26ը չբոլորած՝ թողնելով 5 ամսական աղջկան՝ Լենային։ Իմ ցանկութիւնն այնքան էլ մեծ չէ. տպագրէք լուսանկարը եւ մի քանի տողով լիշէք Ալազան Գուգոյին՝ ծնուած Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գիւղում»։

Ազատամարտիկի քրոջ ցանկութիւնը կուգադիպեց նրա ծննդավայրի ազատագրման հետ։ Ալազան Գուգոյի գերեզմանն ազատագրուած է արդէն։ Անտարակոյս, այդ մարտերին մասնակցել են նաեւ Լոկատի մարտիկները։

Որքին յարգանքով կատարում ենք Գուրգէնի քրոջ խնդրանքը։ Մեր ժողովրդի արժանաւոր զաւակների լիշատակը վառ պահելը բոլորիս պարտքն է։ «Երկիրը» կարողացածին չափ ներկայացնում է հայոց նորագոյն քաջպուններին անցած ուղին, նրանց սխրանքն ու նահատակութիւնը։ Անկախ կուսակցական պատկանելութիւնից։ Մենք մի գերագոյն սրբութիւն ունենք՝ Հայրենիքը։ Եւ բոլորս զաւակն ենք նրա։ Իսկ որպէսզի կարողանանք հայ նուիրեալների մասին առաւել հարուստ ու ամբողջական պատկերացում տալ, խնդրում ենք ազատամարտիկների մարտական ընկերներին, մերձաւորներին, հարազատներին. գրէք մեզ, պատմէք նրանց մասին։ «Երկիրը» իր էջերը սիրայօժար կը տրամադրի։

Եւ նամակ ուղարկելիս գրէք Ձեր անունը։ Յաւելք, Գուրգէնի քրոջը անունը չէր լիշատակել, ու հիմա ստիպուած երախտագիտութիւն ենք յայտնում ազատամարտիկի անանուն քրոջը։ Այն բանի համար, որ խիզախ ու հայրենանուէր եղբայր է ունեցել, որ եղբօր կորուստը չի ծրուել նրա հպարտ գլուխը, որ «Երկիր» է ուղարկել Ալազան Գուգոյի լուսանկարը, ինչը մեզ հնարաւորութիւն է տալիս յարգանքի տուրք մատուցել խիզախ հայորդու լիշատակին (*«Երկիր»*, 30 *Մարտ* 1993)։

Ե. Ս.

«ՀԱՆԳԻՐ ՄՈՎ ՍԱՐԻ ԳԱԳԱԹԻՆ»

Մենք՝ Աշոտ Եարինջեանի մարտական ընկերներս, հոգ կը տանենք, որ նրա ընտանիքը երբեք որբութիւն չզգայ ու աննպատակ չհամարի նրա թափած արիւնը:

Փետրուարի 23ին Մարտակերտի շրջակայ բարձունքները գրոհելու գնացինք: Ծառօք, զոհեր ու վիրաւորներ էլ ունեցանք: Վերջապէս յաջողուեց ետ գրաւել նաեւ ռազմավարական շատ մեծ կարեւորութիւն ունեցող Սարսանգը: Այդտեղ յաջողուեց շրջափակումից փրկել 36 հոգու, ինչպէս նաեւ արտասահմանցի լրագրողին, որին ազատեցինք՝ չորս կողմից թշնամու խաչաձեւ կրակի տակ ընկնելով: Այդ մի քանի օրուայ ընթացքում բազմաթիւ մարտերի մասնակցեցինք. յատկապէս աչքի ընկաւ տանկի նշանառու՝ Աշոտ Եարինջեանը: Չորս անգամ ընկանք ականապատուած ծուղակներ, սակայն, յաջողուեց ելք գտնել: Ի վերջոյ բոլոր դժուարութիւնները յաղթահարելով, ոտք դրեցինք Քելբաջարի հողում: Մարտակերտցի 33ամեայ Աշոտին թւում էր, որ մօտ է հայրենի աւանի ազատագրումը: Սակայն Արցախի խորհրդանիշ Մոով սարի գագաթին, մարտական առաջադրանքը կատարելիս թշնամու արկի բեկորը դիպաւ նրա քունքին: Ընկերները տեղացած առատ ձեան միջով մի կերպ վայր բերեցին նրան: Սակայն ուշ էր, Արցախի բանակի մարտիկը հանգաւ իր ընկերների ձեռքերին: Հանգաւ...: Դեռ մի կարգին չվայելած իր նորածնի բերկրանքը:

Մենք՝ Աշոտ Եարինջեանի մարտական ընկերներս, ո՛չ միայն կիսատ չենք թողնի նրա երազի՝ խաղաղ ու անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կայացումը, այլեւ հոգ կը տանենք, որ նրա ընտանիքը երբեք որբութիւն չզգայ ու աննպատակ չհամարի նրա թափած արիւնը («Զինուոր», 17-27 Յունիս 1993, թիւ 6):

Մարտական ընկերների անունից՝
Հրամանատար ՂԱԶԱՐԵԱՆ,
Մ. ԵԴԻԳԱՐԵԱՆ,
Ս. ՇԱՀԲԱԶԵԱՆ

ԱՐԱՐԱՏԻ ՈՒՂԻՆ

«Սրիկաները ինձ խփեցին, բայց ոչինչ, դուք կռուէք մինչեւ վերջ, յաղթանակը մերն է»:

Արարատի մայրը՝ Լարիսան, օրը ցերեկով, ոչ թէ երազում, այլ բաց աչքերով տեսաւ, թէ ինչպէս թշնամին մահաբեր գնդակով խոցեց իր զաւակին: Երանի տեսածը արթմնի երազ լինէր: Բայց մայրական զգայուն սիրտը կանխազգալու վիթխարի կարողութիւն ունի: Աւա՜ղ, երազը իրականութիւն էր:

1965 թ. Օգոստոսի 31ին՝ Զանգեզուրի աշխարհի գեղատեսիլ վայրերից մէկում՝ Ախալքալաքի Սուլդա գիւղում, Էլբակեան Վահագնի տանը ծնուեց անդրանիկ որդին, որին ի պատիւ բիբլիական լերան անուանեցին Արարատ: Տարիներ անց ընտանիքը փոխադրուեց Երեւան:

88 թ.: Հայրենիքի սէրը ծլարձակեց շատերի սրտում, նաեւ Արարատի հոգում փոթորկեց եւ ալեկոծեց նրան: Գիշեր ու ցերեկ քուն չունէր, տենչում էր անպայման գործով մասնակցել, զօրավիգ լինել Ազատ ու Անկախ Հայաստանի կերտմանը, կեանքով պաշտպան կանգնել նրա սահմաններին, կռուով ազատագրել այն տարածքներն ու բնակավայրերը, որ գրաւել էր մեր դարաւոր թշնամին: Արարատը իր կեանքի իմաստը, առհաւատչեան համարեց հայրենիքի սէրը, որի զոհասեղանին էլ անվարան դրեց իր ջահել կեանքը:

Արցախում դրութիւնը օրհասական էր: Արարատը անդամագրուեց «Մալաթիա» երկրապահ ջոկատին: Հաստատ գիտակցելով, որ ցանկացած պահի մահուան հրեշտակը կարող է յայտնուել կողքին, արհամարհեց մահը եւ գնաց Եղիշէի պատուիրանի հետքերով. «Իմացեալ մահը անմահութիւն է...»: Զերերաց անգամ սիրած աղջկայ արցունքախառն յորդորների ու թախանձանքի առջեւ: Նպատակը մէկ էր՝ որքան կարելի է շուտ ազատագրել մեր գերուած շէները, տարածքները: Քաջասիրտ ու անվախ մարտիկը մասնակցեց Հադրութի շրջանի Մոխրենիս, Տումի, Թաղլար, Մարտունու շրջանի Ղարադաղլու, Ասկերանի շրջանի Մալիբէյլի գիւղերի մարտերին: Յաջողութիւնները թեւաւորել եւ հաւատով էին լցրել նրա եւ ընկերների հոգիները: Ինչպիսի ոգեւորութեամբ եւ յոյսով էր խօսում Շուշիի ազատագրման եւ մեր վերջնական յաղթանակի մասին, բայց... հազա՜ր ափսոս...: Խոջալուի ազատագրման ժամանակ, 1992 թ. Փետրուարի 26ին, թշնամու դաւադիր գնդակը խոցեց նրան:

Ընկաւ Արարատը: 27ը չբոլորած երիտասարդի վերջին խօսքերն էին. «Սրիկաները ինձ խփեցին, բայց ոչինչ, դուք կռուէք մինչեւ վերջ, յաղթանակը մերն է»: Եւ եղաւ այդպէս, այսօր բազում փառաւոր յաղթանակներ են արձանագրուել մեր հերոսների արեան գնով: Դա է յաղթանակի ճանապարհը: Դա է նուիրեալների ուղին: Նրանցից շատերն այսօր հանգչում են Եռաբլուրում: Այնտեղ է նաեւ Արարատը...

Հերոսները չեն մեռնում, նրանք թիւրեղանում եւ անթեղւում են ազգի յիշողութեան մէջ:

Ախալքալաքի շրջանի Սուլդա գիւղի բնակիչները գիւղի կենտրոնում, բլուրի վրայ, դպրոցի առջեւ կանգնեցրել են Արարատ Էլբակեանի յուշարձանը: Բացումը տեղի կ'ունենայ 1993 թ. Հոկտեմբերի 2ին:

Փառք եւ պատիւ նրանց, ովքեր կ'ընտրեն Արարատի ուղին («Երկիր», 24 Սեպտեմբեր 1993):

ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐԵԱՆ

ԵՍ ՄԻ ԶԱՐԿՆ ԵՄ ՔՈ ԿՈՒՈՒԻ

Հայր եւ որդի՝ Սուր եւ հրացան՝
Թաքարի այր մի՝ Վայիկ
Կարապետեան՝ Ծնուած Մայր
Հայաստանում՝ Նահատակուած
Արցախի Հադրութ աւանում՝
Մարտի 24ին՝ Բազում մարտերից
յետոյ՝
Ցաւերժ փա՛ռք քեզ,
Ազատամարտիկ՝
Դու՝ հերոսացար՝
Մեզ որդիդ, սուրը, հրացանը՝
Կասկած չկայ, որ երբ ամրանան
բազուկները որդուդ, երբ հասակ
առնի եւ որդի ունենայ, օրերից մի
օր քո յիշատակին կը պարգեւի
այսպիսի մի լուսանկար՝
Հայր եւ որդի՝ Սուր եւ հրացան՝

3 Ապրիլ 1992 «ԵՐԿԻՐ»

ԳԻԼԻՍՏԱՆԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

Զոհուեցին հայդուկները՝ Գիւլիստանի արծիւները, իրենց հարազատ կապոյտ երկնքում։ Զոհուեցին առաջին յանդուգն հայդուկները։ Ճանապարհ բացելով նոր խիզախների համար։ Նրանցից յետոյ շատերը թռան Գիւլիստան՝ այն նոյն ճանապարհով ազատագրելու թշնամու ոտքերի տակ այրուող Շահումեանի հողը։

Այս երկու տողերն էին փորագրուած Աբովեան քաղաքի գերեզմանոցում ամփոփուած գիւլիստանցի ազատամարտիկների շիրմաքարերի գլխավերեւում խոյացած յուշակոթողին։ Այս երկու տողերը, որոնց յաջորդած էր գլխիվայր ու ջարդուած թեւերով ընկած արծիւը։ Յուշակոթողին փորագրուած արծիւը խորհրդանշում է գիւլիստանցի ազատամարտիկներին, որոնք զոհուեցին, ինչպէս արծիւն է զոհւում հարազատ կապոյտ երկնքում։

Շահումեանի ինքնապաշտպանութեան ջոկատը 1992 թուականի առաջին ամիսներին դժուարութեամբ էր դիմանում թշնամու յարձակումներին։ Գնալով վտանգը մեծանում էր։ Շահումեանը մեծ զօրամիաւորումներ չունէր, իսկ թուրքերի թիկունքում Խորհրդային բանակն էր՝ տանկերով ու զրահատեխնիկայով։ Այդ օրերին շրջանի ինքնապաշտպանութեան ջոկատին օգնութեան հասան գիւլիստանցի մի խումբ տղաներ, որոնք բնակւում էին Աբովեան քաղաքում։ Չնայած վաղուց էին բնակւում Աբովեանում, բայց նրանց ուշքն ու միտքը Շահումեանում էր՝ հարազատ ծննդավայրում՝ Գիւլիստա-

նում։ Նրանք չկարողացան անտարբեր մնալ հայրենի հողում թափուող արեան նկատմամբ, ու ղէնք վերցրին ազատամարտիկին վայել աննկուն կամքով, համալրեցին Շահումեանի ազատամարտիկների շարքերը։ Մարտերը Շահումեանում շարունակւում էին։

Սակայն մեծ ողբերգութիւն պատահեց։ 1992 թուականի Մարտի 3ին դարանակալ թշնամու հարուածից զոհուեցին մի խումբ ազատամարտիկներ, որոնց մէջ էին նաեւ գիւլիստանցի ազատամարտիկները, որոնք իրենց ոչ մի կաթիլ արիւնը չխնայեցին հայրենի Շահումեանի ազատագրմանը։ Պայքարում նրանք զոհուեցին ուղղաթիռում։

Գիւլիստանցի զոհուած ազատամարտիկներին հողին յանձնեցին Աբովեանի գերեզմանոցում. բերում եմ նրանց սուրբ անունները՝ Անատոլի Մակեան, Սարօ Մակեան, Օլեգ Մակեան, Արկադեա Ադրանեան, Ռոմա Կոսեան, Դալիդ Մնացականեան, Վլադիկ Աղամալեան։

1992 թ. Սեպտեմբերի 29ին նրանց հարեւանութեամբ եկան հանդչելու ազատագրական պատերազմում զոհուած համագիւղացիներ՝ Ժորա Սարգսեանը եւ 18ամեայ Ռուսլան Յովհաննիսեանը, որոնց արեան գնով կը նուաճուի Շահումեանի ազատութիւնը։

Ռուսլանն ու Ժորան առաջիններից էին, որոնք ոտք դրեցին Շահումեանի հայդուկալին չարժմանը։ Բայց ափսո՛ս, այն երկար չտեւեց։

1992 թուականի Սեպտեմբերի 29ին, ուղղաթիռը, որի մէջ էին գանւում այդ երկու հայդուկները, յատուկ օդանաւակայանից բարձրացաւ, հասաւ Գիւլիստան, բայց վայրէջք չկատարեց։ Ասպետական սեւ սատանաների արկերից այն մնասուեց, վառուեց ու ընկաւ անտառի մէջ։ Նրանք ութն էին, որոնց մէջ էին նաեւ Ռուսլանն ու Ժորան։ Զոհուեցին հայդուկները՝ Գիւլիստանի արծիւները, իրենց հարազատ կապոյտ երկնքում։ Զոհուեցին առաջին յանդուգն հայդուկները ճանապարհ բացելով նոր խիզախների համար։ Նրանցից յետոյ շատերը թռան Գիւլիստան՝ այդ նոյն ճանապարհով ազատագրելու թշնամու ոտքերի տակ այրուող Շահումեանի հողը։

Սիրելի Ռուսլան եւ Ժորա, շուտով կը լրանայ ձեր նահատակուելու տարելիցը, յոյսով եմ, որ ձեր ընկերները՝ լեգենդար Շահէն Մեղրեանի տղաները կ'ազատագրեն մեր հողն ու ջուրը, ու ձեր բռնագաղթուած ծնողները, քոյրերն ու եղբայրները նորից կը չէնացնեն ձեր պատմական օջախները։

Այս հերոս տղաների մասին խօսքս աւարտում եմ Գարեգին Նժդեհի իմաստուն խօսքերով.

«Հայրենիքը այս ազատամարտիկներին շնորհել է հպարտանքներից ամենաարդարը, ցաւերից ամենախորը, պաշտամունքներից ամենախորը եւ մահերից ամենաասուրբը» (Ձեռագիր)։

Գիւլիստան ԼԵՈՒԴՄԻԼԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՄԵՆՔ ՊԱՐՏՔ ՈՒՆԵՆՔ

Պուշկինեալի բազում յաղթանակների կերտողներից էր։ Այդպիսի մի յաղթանակից յետոյ էլ թշնամուց գրաւած լերան բարձունքին պարեց հայկական «Քոչարի»ն։

Գեղամ Խլղաթեանը ծնուել էր 1965 թ., Երեւանում։ Միջնակարգն աւարտելուց յետոյ աշխատանքի էր անցել կահոյքի ֆաբրիկայում։ Կրակոցի առաջին ձայնը լսեց Ջնաբերդը պաշտպանելիս։ Մասնակցեց Կրասնոսելսկի, Նոյեմբերեանի, Երասխի սահմանամերձ շրջանների պաշտպանութեանը։ «Միացեալ Հայաստան» ջոկատի կազմում մասնակցեց Մարտակերտի համար մղուող պայքարին։ Մանր վիրաւորուեց, սակայն շուտով, դեռ լրիւ չապաքինուած, վերադարձաւ մարտական դիրքեր։ 1993ի Յունուարին դարձաւ զենիթային դասակի հրամանատար։ Ընկերների հետ մասնակցեց Սարսանգի ջրամբարի ազատագրմանը։ Պուշկինեալի բազում յաղթանակների կերտողներից էր։ Այդպիսի մի յաղթանակից յետոյ էլ թշնամուց գրաւած լերան բարձունքին պարեց հայկական «Քոչարի»ն։ Սակայն, աւա՜ղ, իր ծննդեան տարեդարձից երեք օր անց, Մարտի 23ին զոհուեց հերոսը՝ զէնքը ձեռքին։ Թշնամու արկն ընկել էր նրա խրամատի մէջ։ Մենք՝ Գեղամ Խլղաթեանի մարտական ընկերներս, չենք կարող մոռանալ մեր խիզախ հրամանատարի, բարի ու ընկերասէր մարտիկի յիշատակը եւ հոգ կը տանենք նրա ընտանիքի, որը մնացած երեք անչափահաս զաւակների՝ Վահանի, Մերիի ու Սուսաննայի մասին («Զինուոր», 20-30 Օգոստոս 1993, թիւ 9)։

Գումարտակի հրամանատարի
թիկունքի գծով տեղակալ,
մայոր՝ Ս. ՂԱԶԱՐԵԱՆ

ԽԵՆԹ «ԴԱՍԱԼԻՔԸ»

Պարտքն էր առաջնորդում նրան, եւ այդ կանչին հաւատարիմ՝ զոհեց պարտականութիւնը։ Գնաց Արցախ, վերստին ջոկատ մտաւ, վերստին մարտի ելաւ։ Ու կոուեց։ Մինչեւ կեանքի վերջը։

Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերի ստեղծման առաջին դժուարութիւններն ու վրիպումները կարծես յաղթահարուած են։ Հայոց բանակը ձեւաւորւում է եւ թրծւում, մարտական մկրտութիւն ստանում, դառնում իրական, ծանրակշիռ ուժ։ Մենք թշնամի միջավայրում ենք ապրում։ Մենք դատ ունենք թշնամիների դէմ, աշխարհի հետ։ Եւ պիտի ուժեղ լինենք. ոգով, խելքով, տնտեսութեամբ, բազկով։ Պետութեան բազուկը բանակն է։ Իւրաքանչիւրս՝ նրա մի ջիղը, մազանօթը։ Հայոց բանակում ծառայելը Հայաստանի Հանրապետութեան իւրաքանչիւր քաղաքացու, իւրաքանչիւր հայի սրբազան պարտքն ու պարտականութիւնն է։

Բայց կան խենթ հոգիներ, անսանձ բնաւորութիւններ, որոնք ի բնէ չեն ենթարկւում իշխող ռիթմին, կեանքի նորմալ ընթացքին։

Սարգիս Սամուէլի Միրզոյեանը քսան տարեկան չկար։ Անհամբեր էր։ Խենթ էր։ 1990 թուականից «Արամ» ջոկատի մարտիկ էր։ Կոուել է Գետաշէնում, Ծաղումեանում, Ստեփանակերտում, Շուշիում, Կոնձորում, Տեղում, Խնձորեսկում, Ռակեպարում։ 1991 թուականին զօրակոչուեց բանակ։ Ծառայում էր Սովետաշէնում։ Բայց զինուորի խաղաղ կեանքը նրա համար չէր։ Սարգիսի անսանձ ոգին մարտի էր ձգտում։ Իսկ զօրամիաւորումը դեռ թիկունքի կեանքով էր ապրում։ Ու չդիմացաւ Սարգիսը։ Ինքնակամ լքեց զօրամասը։ Նման դէպքերում մի բնորոշում կայ. դարձա դասալիք. բայց նա դասալիք չէր. մարտիկ էր, ու կոիւը կանչում էր նրան։ Պարտքն էր առաջնորդում նրան, եւ այդ կանչին հաւատարիմ՝ զոհեց պարտականութիւնը։ Գնաց Արցախ, վերստին ջոկատ մտաւ, վերստին մարտի ելաւ։ Ու կոուեց։ Մինչեւ կեանքի վերջը։ Մինչեւ 93 թուականի Մարտի 30ը։ Երկու ամիս յետոյ, Մայիսի 30ին նոր էր դառնալու քսան տարեկան։ Շուշի քաղաքում դեռ ծանր նստած էր թուրքի հոտը։ Ու դեռ չէր մաքրագործուել հինգաւուրց քաղաքը հայոց ազատամարտիկների վառօդի խնկարկումից։ Դեռ չէր բացուել Լաչինի միջանցքը։ Այդ օրերը դեռ գալու էին։ Բոլոր ազատամարտիկներն երազում էին այդ մարտերին մասնակցել։ Սարգիսը նոյնպէս։ Բայց զոհուեց Մարտի 30ին՝ Ղալթալի գիւղի համար մղուած մարտի ժամանակ։

...Սարգիսի գերեզմանը նախնեաց օրրանում է՝ Կապանի Վանք գիւղում։ Այստեղից մօտ է Արցախը։ Այստեղ արձագանգում են Արցախի ձայները։ Այստեղ Սարգիսի խենթ հոգին հանգիստ է («Երկիր», 9 Ապրիլ 1993)։

Ե. Ս.

ՎԵՐԱԴԱՐՁ

Փախուստով թշնամուց ազատուելը նոյնքան անհնար է, ինչքան ինքն իրենից փախչելը: Թշնամուց ազատագրուել կարելի է միայն նրան յաղթելով, նրան փախուստի մատնելով, հայրենիքը պաշտպանելով:

Խ. իշխանութեան տարիներին Ադրբեջանը բնիկ հայկական հողերը հայաթափելու համար ամէն միջոց կիրառում էր. հալածանք, անարդարութիւն, խտրականութիւն: Ուզում ես կրթութի՞ւն ստանալ կամ մարդավարի՞ ապրել՝ գնա՛ Ադրբեջանից: Ու շատերն ստիպուած թողնում էին տուն ու տեղ, հայրենիքն ու մեկնում:

Հեռացաւ նաեւ Շահումեանի Կարաչինար գիւղի ծնունդ Լեւոն Անտոնեանը: Գնաց Ուկրաինա, Խերսոնի մարզ: Կրթութիւն ստացաւ: Աշխատում էր: Կեանքն ապահով էր: Ապրուստը՝ «նորմալ»:

Բայց պոռթկաց Ղարաբաղը, եւ Արցախեան հրաբուխի որոտը տարածուեց հեռու-հեռու, հասաւ Միջին Ասիա, Հեռաւոր Արեւելք, արձագանգուեց վտարանդի հայորդիների սրտերում: Ու շատերը լսեցին հայրենիքի կանչը: Վերադարձան:

89 թուականի Նոյեմբերին վերադարձաւ նաեւ Լեւոնը: Վերադարձաւ ու անդամագրուեց հայրենի գիւղի ազատամարտիկների ջոկատին: Կռիւ մտաւ: Ու մարտի դաշտում միայն զգաց, որ ցնդել, անէացել է թուրքի հոտը, որը հալածում էր անգամ անթուրք Ուկրաինայում: Զգաց, որ ինքը փախստական է եղել: Թշնամուց ազատուելու համար փախել է նրանից: Իսկ դա ելք չէ: Փախուստով թշնամուց ազատուելը նոյնքան անհնար է, ինչքան ինքն իրենից փախչելը: Թշնամուց ազատագրուել կարելի է միայն նրան յաղթելով, նրան փախուստի մատնելով, հայրենիքը պաշտպանելով:

91-92 թուականները դաժան տարիներ էին: 91ի Ապրիլին ադրբեջանցիները գրաւեցին Մարտունաշէն ու Գետաշէն գիւղերը, Յուլիսին՝ Էրքեջը, Բուզլուխը, Մանաշիդը: Հայ ազատամարտիկների պատասխան գործողութիւնների շնորհիւ 92ի Յունուարին ազատագրուեց Կըրկժանը, Փետրուարին՝ Խոջալուն, Մայիսին՝ Շուշին, բացուեց Լաչինի միջանցքը:

Բայց սեւ ամպեր էին կուտակւում Շահումեանի վրայ: Հայկական գիւղերն անընդմէջ յարձակումների եւ գնդակոծութեան էին ենթարկւում: Ռմբակոծում էին: Շահումեանի երկնքում չարագուշակ ֆշշում էին «Սու»ներն ու ուղղաթիռները: Ծանր կռիւ էր: Արցախի հայոց բանակը

դեռ չէր կազմաւորուել: Ուժերն անհաւասար էին: Կռուի ոգի ծանրութիւնը մի բուռ ազատամարտիկների ուսերին էր:

Անընդմէջ գնդակոծում ու ռմբակոծում էր նաեւ Լեռնի հայրենի գիւղը՝ Կարաչինարը: Բնակիչների մեծ մասը նահանջել էին Գիւլիստան: Գիւղում հիմնականում մնացել էին ինքնապաշտպանութեան ջոկատի անդամները: Նրանց մէջ՝ Լեռնը: Նահանջելու կամ փախչելու համար չէր վերադարձել: Վերադարձել էր կանգնելու եւ կռուելու:

Եւ կռուեց: Մինչեւ մահացու վիրաւորուելը: Գլխից ծանր վիրաւոր Լեռնին միայն երեք օր անց կարողացան հասցնել Երեւան: Բայց ուշ էր արդէն: 92 թուականի Ապրիլի 3ին ազատամարտիկը մահացաւ:

Արդէն մի տարի է անցել Լեռնի զոհուելու օրուանից: Շատ բան է փոխուել: Արցախի երիտասարդ բանակը դարձել է հզօր ու մարտունակ: Հայկական շէներն ու գիւղերն ազատագրում են: Հայ հայդուկները ազատագրում են Շահումեանի բնակավայրերը: Եւ հեռու չէ այն օրը, երբ կ'ազատագրուի նաեւ Լեռնի ծննդավայրը՝ Կարաչինարը: Բնակիչները գիւղ կը վերադառնան: Ու նրանց հետ՝ Լեռնի հոգին: Դա կը լինի վերջին ու վերջնական վերադարձ... («Երկիր», 11 Ապրիլ 1993):

Ե. Ս.

ԳԻՒԼԻՍՏԱՆ ԳԻՒՂ

ԴՈՒԴՈՒԿՉԻ ԳԻՒՂԻ ՋԱՒԱԿԸ

1947 թուի ծնունդ էր Նելսոնը, զինուորութեան տարիքն անցել էր արդէն: Բայց վտանգի մէջ գտնուող հայրենիքի ճշմարիտ զաւակի համար որեւէ սահման, պատճառաբանում ու արգելք չի կարող լինել՝ եթէ պարտք ունի տալու: Եւ Նելսոնը տուեց իր պարտքը: Տուեց նաեւ կեանքը: Փառք նրան:

Դուդուկչի գիւղը Հադրութում է. Արցախի սահմանի վրայ, Ֆիզուլու դիմաց, որի ամենակուլ երախն Արցախի բանակի հարուածներից այսօր քիչ-քիչ ատամնաթափ է լինում. տասնամեակներ շարունակ, դարանակալ վիշապի նման նայել է Ֆիզուլին Դուդուկչի գիւղին, Հադրութին, Արցախին՝ իր ընդերքում որոճալով այն պահը, երբ կը ստեղծուի Արցախ աշխարհը կլլելու հնարաւորութիւն: Ֆիզուլին շարունակ կրակ ու մահ է թափել Արցախ աշխարհի վրայ: Բնական է, որ Արցախը չէր կարող անվերջ հանդուրժել այդ: Եւ եկաւ հատուցման ժամը: Արցախի բանակը ձեռնարկեց Ֆիզուլու կրակակէտերը լռեցնելու գործողութիւն: Ցաւօք, նաեւ զոհեր եղան: Ապրիլի 2ին զոհուեց Դուդուկչիի ինքնապաշտպանութեան ուժերի ջոկատի հրամանատար, Հ. Յ. Դ. անդամ Նելսոն Գասպարեանը:

Նելսոնի հայրը՝ Աշոտ Գասպարեանը, օդաչու էր, Խորհրդային Միութեան հերոս: Մայրը ռուս էր, սակայն որդուն դաստիարակում էր հայեցի: 12 տարեկանում Նելսոնը որբ մնաց. մայրը մահացաւ: Տեղափոխուեցին Երեւան, աւարտեց դպրոցը, ֆիզկուլտուրայի ինստիտուտը, ուսուցիչ աշխատեց: Ամուսնացաւ, երկու զաւակ ունեցաւ՝ աղջիկ եւ տղայ: Այդպէս ապրում էր: Թւում է՝ յարմարուած, հանգիստ, խաղաղ: Սակայն հոգու խորքում փոթորկւում էր գերուած հայրենիքն ազատ տեսնելու ձգտումը: Եւ երբ սկսուեց Արցախի ազգային-ազատագրական ապստամբութիւնը, առաջին իսկ օրից որդեգրուեց հայրենիքի ազատութեան սուրբ գործին: Այդ օրերին շատերը զէնք վերցրեցին, թողեցին տուն ու տեղ, խաղաղ կեանք ու գործ, Հայաստանից, Ռուսաստանից, հեռաւոր Չիտայից ու Միջին Ասիայից վերադարձան հայրենիք՝ Արցախ՝ կռուելու: Նելսոնը նրանցից մէկն էր: 90ին արդէն Արցախում էր, զէնք ու զինամթերք էր հայթայթում, ջոկատներ կազմակերպում: 92ին ջոկատ կազմեց, զէնք տուեց նաեւ 18ամեայ որդու՝ Աշոտի ձեռքն ու առաջնորդեց դէպի Ցոր գիւղ՝ Հադրութի ամենախոցելի տեղամասերից մէկը:

Գարնանը սկսուեց թշնամու յարձակումը: Նելսոնի ջոկատը մարտնչում էր հերոսաբար: Սակայն ստիպուած էր նահանջել թշնամու գերակշիռ ուժերի առջեւ: Շրջապատումից մի կերպ դուրս գալով՝ դիրքերը վերջինը թողեցին Նելսոնն ու ամենահաւատարիմ մարտական ընկերներից մէկը՝ Կարէնը: Այդ օրուանից Ցոր գիւղի ազատագրումը դարձաւ Նելսոնի կեանքի հիմնական նպատակներից մէկը: Կրկին ջոկատ կազմեց, բազմաթիւ մարտերի մասնակցեց: Ապրիլի 2ին առաջադրանք ստացաւ լուսնընել Ֆիզուլու շրջանի Դաչար գիւղի ռազմական յենակէտը, որտեղից անընդհատ գնդակոծւում էին հայկական Դրախտիկ, Ազոխ, Դուդուկչի գիւղերը: Գործողութիւնը փայլուն էր կազմակերպուած: Առաջադրանքը կատարուեց: Սակայն երբ Նելսոնը, հակառակորդի բլինդաժ նոնակ նետելով, առաջ նետուեց, դարանակալ թշնամու գնդակը խոցեց նրան: Մահամերձ ընկաւ Նելսոնը՝ անկատար նպատակը թողնելով ապրողներիս: 1947 թուի ծնունդ էր Նելսոնը, զինուորութեան տարիքն անցել էր արդէն: Բայց վտանգի մէջ գտնուող հայրենիքի ճշմարիտ զաւակի համար որեւէ սահման, պատճառաբանում ու արգելք չի կարող լինել՝ եթէ պարտք ունի տալու: Եւ Նելսոնը տուեց իր պարտքը: Տուեց նաեւ կեանքը: Փառք նրան («Երկիր», 8 Ապրիլ 1993):

Ց. Ս.

ՖԻԶՈՒԼԻ

ՌՈՒԴԻԿ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Մեծ հօրմէն լսած տումեցի Թեւանի պատմութիւնները... Ռուդիկի մէջ ձեւաւորած էին այն կերպարը, որ օր մը անպայման պիտի վերածուէր անսահման նուիրումի։

Ռուդիկ Երուանդ Աբրահամեան։ Մնած է 1969ին, Հադրութի շրջանի Մեծ Թաղք գիւղը։ Աւարտած է ծննդավայրին միջնակարգ դպրոցը, որմէ ետք ընդունուած է Երեւանի ճարտարագիտական համալսարանը։ Մասնակցած է Խորհրդային զինուած ուժերուն, իբրեւ անկարգելաւոր։ Առաջին հայեացքով ներկայացուածը սովորական կենսագրութիւն մըն է՝ ոչինչ աչքի զարնող եւ ոչինչ պարտադրող։ Մեզմ, համեստ եւ բարեհամբոյր տղայ էր, գլուխը կախ՝ իր գործին։ Շատ քիչ կ'արտայայտուէր, ամէն ինչ կը պահէր սրտին մէջ։ Մէկ խօսքով՝ սովորական տղայ մըն էր։

Իր մէջ այդպէս դանդաղ ու աննկատ կը խմորուէր անմնացորդ նըւիրումը, յատկօրէն կ'ուրուագծէր ընելիքը եւ կ'իմաստաւորէր վերադարձը։ Եւ ան անցեալ տարուան Դեկտեմբեր ամսուն վերադարձաւ իր հայրենի գիւղը։

Մեծ Թաղքը փոռուած է Իշխանագետի հիւսիսային ափին։ Բոլորտիքը, իւրաքանչիւր քայլափոխի, հին պատմութեան լուռ վկաներն են՝ Հին Բերդ, Ս. Լուսաւորիչ սրբատեղի, Գտիլ վանք, Աբու Մուսէ Առանչահիկ իշխանի բերդը, որուն մատոյցներուն Թուրք Բուղան առաջին անգամ պարտութիւն կրեց։ Մանկութեան օրերը այս խորհրդաւոր աշխարհին մէջ անցուցած ըլլալով եւ մեծ հօրմէն լսելով տումեցի Թեւանի պատմութիւնները, որ 1918-1921 թուականներուն յաջողութեամբ կռուած էր ռուս եւ Թուրք բանակներուն դէմ, Ռուդիկի մէջ ձեւաւորած էին այն կերպարը, որ օր մը անպայման պիտի վերածուէր անսահման նուիրումի։

Գիւղին մէջ ստեղծեց խմբակ մը, ու անոր անդամներուն սորվեցուց ձեռնամարտի սկզբունքները, որուն հմտացած էր Խորհրդային բանակին մէջ։ Այս խմբակէն ստեղծեց նաեւ հետախուզական աշխատանքներ կատարող աւելի փոքր խումբ մը, որ պէտք էր տեղեկութիւններ հայթայթէր եւ թշնամիին թիկունքէն գործողութիւններ կատարէր։

Այս ժամանակամիջոցին էր, որ անդամագրուեցաւ Հ.Յ.Դաշնակցութեան շարքերուն։

Ֆիզուլի շրջանի հին հայկական հողեր գիւղը ազատագրելէ ետք, անհրաժեշտ էր նաեւ լուծնել Ղաջար գիւղին կրակակէտերը, ուրկէ Հադրութի եւ Մարտունիի սահմանամերձ բնակավայրերը կը ռմբակոծուէին։ 11 Ապրիլի գիշերը հետախոյզ խումբի աղաքը սկսան ականապատել Ղաջար-Ֆիզուլի ճանապարհը, որպէսզի թշնամին չկարողանար օգնութեան հասնիլ։ Եւ գիշերուան խաւարին մէջ ճարճատեց Թուրքին ինքնաձիգը։ Ռուդիկ խոցուեցաւ գլուխէն եւ ոտքէն։ գլխու վէրքը մահացու էր...

Ան նահատակուեցաւ իբրեւ նուիրեալ, իբրեւ մէկը անոնցմէ, որոնք իրենց կեանքով կը կռանեն մեր գոյութիւնն ու յաղթանակը (1992, թիւ 2)։

«ԿԱՑՔԵՐ»

ԱՐՄԷՆ ՅՈՒՆԱՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հերոսանալու առիթ չէր փնտռում։ Բայց պարտքի զօրաւոր զգացողութիւն ունէր։ Բարեխիղճ էր։ Հաւատարիմ իր երդմանը. երդուել էր պաշտպանել հայրենիքը, ուրեմն պիտի անէր այն, ինչ հրամայում էր հայրենիքը։

Մնուել է 74 թուականի Օգոստոսի 6ին, Կապան քաղաքում։ Սովորել է Կապանի թիւ 1 դպրոցում։ 92ի Դեկտեմբերին զօրակոչուել է Հայոց ազգային բանակ։ 93 թուականի Մարտի 23ին մեկնել է Լաչինի մարդասիրական միջանցք, ուր զոհուել է Ապրիլի 3ին՝ իր նման 19 ազատամարտիկների հետ։

Ահա եւս մի հակիրճ կենսագրութիւն մեր ընտրեալ հերոսներից մէկի, որոնք իրենց կեանքը դրեցին հայրենիքի զոհասեղանին, ցոյց տուեցին, որ առաջինը գիտակցուած հայրենասիրութիւնն է։

Նա կամաւոր չէր։ Բայց զօրակոչին արձագանգեց կամաւորի պատրաստակամութեամբ։ Մեզքս ինչ թաքցնեմ. զօրակոչից խուսափելու հնարաւորութիւն ունէր, բայց երբ այդ մասին խօսք բացուեց, գունատուեց, բիբերը լայնացան, զարմացած նայեց խօսողներին ու լուռ վեր կացաւ։

Անձամբ, առանց կանչի սպասելու, ներկայացաւ զինկոմիսարիատ։ Մօտ երեք ամիս ծառայում էր Էջմիածնում։ Հէնց սկզբից իրեն դրսեւորեց որպէս օրինակելի մարտիկ։ Երեւանի առաջին գունդ տեղափոխուելուց յետոյ իմացաւ, որ Լաչին են տանելու։

Ու ջոկատի հետ գնաց Լաչին։ Կարճ տեւեց ծառայութիւնը Լաչինում՝ Մարտի 23ից Ապրիլի 3ը։ Սակայն այդ կարճ ընթացքում բացայայտ զգացուեց Արմէնի բնաւորութիւնը. բարեխղճութիւնն ու պարտքի զգացումը յաճախ հերոսական արդիւնք են տալիս։ Արմէնը հաւատարիմ ընկեր էր, կրակի տակից հանել էր վիրաւոր ընկերներին, կեանքը վտանգի ենթարկել, անհրաժեշտ կանգնել թշնամու դէմ։

Ցաւով եմ մտածում, որ Արմէնը չկայ այլեւս։ Նա մէկն էր այն մարդկանցից, որոնք պիտի ապրէին խաղաղ ժամանակներում, կերտէին Ազատ, Անկախ Հայաստան։ Նա այն բնաւորութիւնն էր, որ օրինակ էր ծառայելու խաղաղ ժամանակներում, իր աշխատանքում հանդէս էր բերելու մարտիկի պատասխանատուութիւն։ Խաղաղ կեանքը անց էր կացնելու զինուորի նման՝ ձիգ, հաւաք, պինդ, ուժեղ։

Ցաւօք, հրաշալի երիտասարդի կեանքի թելը կտրուեց Ապրիլի 3ին։ 19 իր նման ազատամարտիկների հետ զոհուեց Արմէնը այդ օրը։ 19ից 8ը Արմէն անունն ունէին.... Միւս նահատակներին չեմ ճանաչում ու չեմ կարող նրանց մասին որեւէ բան ասել, սակայն վստահ եմ բոլորի մէջ Արմէնին յիշեցնող որեւէ գիծ եղել է։ Հայոց բանակի զինուորներ են եղել։ Իսկ սա արդէն ինչ-որ բան նշանակում է... (*«Երկիր»*, 5 *Օգոստոս* 1993)։

ԱՆՆԱ ՅՈՒՆԱՆԵԱՆ

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մեռել է 1959 թուականի փետրուարի 16ին. ԼՂՄԻ Հայրութիւն լրջանի էդիլու Մասեանցի դիպուած. 1980ին ուսանել է Երեւանի Պետական Համալսարանի պատմութեան ֆակուլտետը. 1990 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ. 1981-83 թուականներին աշխատել է Հայաստանի ազատագրութեան պետական թանգարանում. Ապա տեղափոխուել է ծննդավայր, աշխատել որպէս Հայրութիւն հայրենագիտական թանգարանի տնօրէն. Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Գերագոյն Խորհրդի պատգամաւոր է ընտրուել Հայրութիւն լրջանից. 1993 թուականի Յունուարի 9ին ընտրուել է ԼՂՀ Գէր նախագահ. Ամուսնացած է, ունի երկու զաւակ (17-23 Ապրիլ 1993, թիւ 16).

«ԱԶԱՏԱՄԱՐՏ»

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉԵԱՆ

Միշտ Քրիստոսի տարիքն էր՝ նրա խաչուելու ժամանակ,— երեսուներեք տարեկան,— պալքարեց, տառապեց ու զոհուեց այդ նոյն տարիքում եւ քսան դար անց թաղուեց նո՛յն օրը, ինչ Քրիստոսն էր թաղուել:

Աւա՜ղ, միայն մի շատ էական տարբերութեամբ՝ եթէ Քրիստոսը ամենազօր Հայր Աստուած ունէր եւ հաստատ գիտէր, որ խաչուելուց յետոյ ինքը պիտի յարութիւն առնի, ապա ինչի՞ վրայ կարող էր իր յոյսը դնել չարքաշ կեանքով ու տառապանքով ապրած հայ ծնողների նոյնքան տառապած ու զրկանքներ տեսած մահկանացու զաւակը...

Կեանքում, ինչքան յիշում եմ, ահռելի ծանօթ չեմ եղել նրա հետ, բայց ինձ այնպէս է թւում, թէ բերանացի՜ գիտեմ նրան ու նրա ամբողջ կեանքն այնպէ՛ս, ինչպէս իմ հարազատի ու զաւակի կեանքը,— մանաւանդ որ նա տարիքով էլ կարող էր իմ զաւակը լինել...

Ինձ թւում է, թէ ես բերանացի գիտեմ, թէ ի՛նչ է նա զգացել, մտածե՛լ, ինչո՛վ հիացել ու ինչի՛ց հիասթափուել, որովհետեւ նա ու նրա սերունդը խմորուել ու ձեւաւորուել է նաեւ հայ գրողների,— այդ թւում նաեւ մեր գրողներով,— Տէրեանի ու Չարենցի բանաստեղծութիւններով, Դեմիրճեանի, Բակունցի ու Ջօրեանի վէպերով, Շիրազի, Սեւակի ու իմ սերնդի բանաստեղծների ու արձակագիրների գրքերով, յօդուածներով ու ելոյթներով...

Եւ ո՛չ միայն գրքերով— 1964 թուականին, երբ Արթուրն ընդամէնը... հինգ տարեկան էր, մենք՝ Հայաստանի մտաւորականներս, գաղտնի, հերթական անգամ, Արցախի հարցն էինք բարձրացնում մեր նամակներով, ելոյթներով, համախօսականներով եւ տպագրուելու յոյս չունեցող բանաստեղծութիւններով — ընդ որում, աշնէ՛ս ու պնքա՛ն, որ եթէ չլինէր կրեմլեան «գորշ կարդինալ», պանթուրքականութեան սարսաւոր Սուլոյվը, Արցախի հարցը լուծուած կը լինէր դեռեւս... 1964 թուականին...

Այո՛, 1964 թուականին,— որից ընդամէնը մի տարի յետոյ պիտի սկսուէր Հայոց Զարթօնքի այն անշրջելի ընթացքը, որը յետոյ, 80ական թուականների վերջին պոռթկաց որպէս Արցախեան շարժում եւ որի հիմքի վրայ ստեղծուեց այսօրուայ դժուա՞ր կեանքով ապրող, բայց շատ հարցերում արդէն ինքնուրոյն ու ինքնիշխան Հայաստանը:

Մի շտ Ցիսուսի տարիքին էր Արթուր Մկրտչեանը՝ երեսուներեք տարեկան— նա պայքարեց, տառապեց ու զոհուեց նո՛յն տարիքում, եւ թաղուեց (քսան դար անց) նո՛յն օրը, ինչ Քրիստոսն էր թաղուել...: Թաղուեց, աւա՜ղ, մի շատ էական տարբերութեամբ,— եթէ Քրիստոսն ամենազօր Հայր Աստուած ունէր եւ հաստատ գիտէր, որ թաղուելուց յետոյ պիտի վերստին յարութիւն առնէր, ապա Արթուրը...

Եկէք, ուրեմն, արժանին մատուցելով Յարութեան յոյս չունեցող մահկանացու հերոսի եօթնապատի՜կ աւելի մեծ սխրանքին, զոհել իր միա՛կ, անցաւոր ու կարճ կեանքը լանուն հայրենիքի,— աշխատենք, ինչքան կարելի է խնայել մեր ժողովրդի, առանց այն էլ քի՜չ մնացած, ուստի օրէցօր աւելի ու աւելի թանկ արիւնը, սովորելով ո՛չ միայն Քրիստոսի պէս մահին մահով յաղթելու կամ «Մեռնելով յաղթելու» արուեստը, այլեւ՝ «Ապրելով յաղթելու» դժուարի՜ն կերպը, որն առաւե՛լ եւս այսօր, օդի պէս անհրաժեշտ է մեր քաջարի, բայց, աւա՜ղ, փոքրաթիւ ազգին...

Եւ, յարութիւն տալով զոհուած հերոսին մեր յիշողութեան մէջ, սուրբ Զատկի այս օրերին ողջագուրուենք իրար հետ ու ասենք իրար.

—Հերոսը Յարութի՜ւն առաւ մահից:

—Օրհնեա՜լ է Յարութիւնը հերոսի («Գրական Թերթ», 1992, թիւ 15):

ԳԷՈՐԳ ԷՄԻՆ

*
* *

Իւրաքանչիւր ժողովուրդ իր պատմութեան բախտորոշ պահերին գտնում է իր միայնակ հերոսին, որը կա՛մ յաղթում է չար վիշապին, կամ էլ յափշտակուելով երանից՝ մութ աշխարհ է տարուում, սակայն ժողովրդի սրտում ապրում է իբրեւ ոգեղէն մի յուշ՝ լոյսի ակունքին՝ ազգային անկախութեանը հասնելու ճանապարհին։

Արցախեան շարժման այդ միայնակ հերոսը դարձաւ ԼՂՀ Գերագոյն խորհրդի առաջին նախագահ հանգուցեալ Արթուր Մկրտչեանը, որից այս աշխարհում մնացած ոգեղէն յուշն էլ մարմնաւորուեց իր իսկ մտայղացմամբ ստեղծուած Արցախի Եռագոյնում։

Դրօշները եւ զինանշանները ժողովուրդների ամենավերացարկը-ւած խորհրդանիշներն են, եւ Ֆո գծագրած դրօշում էլ մեր Ե-ռագոյնն է, որի արեւելեան հատուածը, սակայն, բուն դրօշից ան-ջրպետուած գտնւում է ընդհանուր Եռագոյնի ձգտող եռանկեան մի սպիտակ հատուածում՝ խորհրդանշելով բուն Եռագոյնին՝ Մայր Հայաստանին միանալու արցախահայութեան ձգտումը (**«Պայքար»**, 26-31 *Յունուար* 1993, *թիւ* 6)։

Վ. ԴԵՒՐԻԿԵԱՆ

 Լ.Ղ.Հ. Գերագոյն Խորհրդի առաջին նախագահ
Մկրտչեան Արթուր Ալլանի
1959 – 1992



ԱՐԹՐՈՒՆԻ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՇԻՆԴԵԱՆ

Ծնուել է 1964 թ. Փետրուարի 25ին՝ Մարտունու շրջանի Աշան գիւղում: Զինուորական ծառայութեան մէջ է եղել 1982-84 թթ. Ջիրարիջան քաղաքում: Ապրում էր Աշխարհում: Շարժման սկզբին՝ ընտանիքով վերադարձել է գիւղ եւ մտել ինքնապաշտպանական ուժերի մէջ:

Աչքի էր ընկնում համեստութեամբ, համարձակութեամբ եւ յարգանք էր վայելում երիտասարդների մօտ:

Զոհուել է 1992 թ. Ապրիլի 13ին՝ մարտական դիրքում: Այդ օրը, մահուանից երկու ժամ յետոյ է ծնուել միակ արու զաւակը, որին տուել են Մերուժան անունը (Ձեռագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

•

ԱՐՄԷՆ ԺՈՐԻԿԻ ԱԻԱԳԵԱՆ

Ծնուել է 1967 թ. Հոկտեմբերի 31ին՝ Աշան գիւղում: Աւարտել է գիւղի միջնակարգ դպրոցի 8դ դասարանը եւ ուսումը շարունակել Մարտունու 125 գիւղպրոֆտեխուսումնարանի գինեգործութեան եւ աւտոնորոգման բաժիններում: Աւարտել է դերձակի դասընթացներ: Աշխատում էր գիւղում:

1985-87 թթ. ծառայել է Մոսկուայում եւ Լեհաստանում:

Գիւղում առաջիններից մէկն էր, որ մտաւ Ղարաբաղեան շարժման յորձանուտը, դարձել էր գիւղի ջոկատի հրամանատարը, այնուհետեւ դասակի եւ գիւղի վաշտի հրամանատարը:

Հանգիստ բնաւորութիւն ունէր: Ուշադիր էր ընկերների նկատմամբ, կարգապահ, համեստ: Ակտիւ մասնակցութիւն է ունեցել Ղարաղաղլու եւ Գեուլափլու գիւղի համար մղուած մարտերին եւ զոհուել է Գեուլափլուի դէմ մղուած մարտում՝ 1992 Մայիսի 15ին (Ձեռագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ



ԵՒՍ ՄԷԿ ՍՈՒՐԲ ԱՆՈՒՆ

Նա ազգային-ազատագրական շարժման անկուն մարտիկներից մէկն էր. մասնակցել էր Արծուաշէնի, Նոյեմբերեանի, Երասխաւանի, սահմանամերձ այլ շրջանների ինքնապաշտպանական մարտերին։

Յուլիսի 30ին Զարենցաւանը հրաժեշտ տուեց երեսունհինգամեայ ազատամարտիկ Արտաւազդ Այեքսան Աւետիսեանին։

Նա ազգային-ազատագրական շարժման անկուն մարտիկներից մէկն էր. մասնակցել էր Արծուաշէնի, Նոյեմբերեանի, Երասխաւանի, սահմանամերձ այլ շրջանների ինքնապաշտպանական մարտերին։ Իր մարտական կենսագրութիւնը Արտաւազդ Աւետիսեանը շարունակում էր Գետաշէնի ենթաշրջանում, Շահումեանում, իսկ այնուհետեւ՝ Մարտունու շրջանում։

1992 թ. Մայիսի 8ի լոյս 9ի գիշերը Արտաւազդը, համաձայն մարտական առաջադրանքի, ընկերոջ՝ Միշայի հետ, վնասազերծում է թշնամու կրակակէտերը, խորանում թշնամու թիկունքը եւ անհաւասար կռուի բռնւում նրանց հետ։ Ոչնչացնելով թշնամու մէկ զրահամեքենայ եւ կենդանի ուժ՝ ազատամարտիկները ծանր վիրաւորւում են։ Տանկի անընդհատ գնդակոծութեան պատճառով օգնութեան հասած խմբին չի յաջողւում նրանց դուրս բերել կրակգրծից։

Կենաց ու մահու կռուի ընթացքում երեք տեղից ծանր վիրաւոր, արիւնաքամ եւ ուշագնաց վիճակում Արտաւազդը եւ Միշան գերի են ընկնում։

Յուլիսի 28ին Ամիրանլարում կայացած փոխանակման ժամանակ վերադարձւում է Արտաւազդի դին։

Զարենցաւանցիների բազմահազարանոց սգոյ թափորը, Արտաւազդի մարտական ընկերները Յուլիսի 30ին Մայր հողին յանձնեցին երեք երեխաների հայր հերոս ազատամարտիկին (6 Օգոստոս 1992)։

«ԵՐԿԻՐ»

ԹԱԳՈՒՀԻ ՄԱՅՐ ՇՈՒՇԻ

Անմեղ ու սուրբ արեան թանկ դրօշով, Շուշի,
արդէն սրբուած է քո ճակատը սէգ,
եւ շողում է դէմքիդ հայոց ոգու ուժի
արդար փայլը՝ որպէս անպարտելի մի զէնք:

Դու կանչեցիր նրանց՝ զաւակներին քո քաջ՝
փշրելու քեզ բանտող շղթաները չարի...—
եւ թշնամին տեսաւ պողոքումն աճաշառաչ
հայոց խրոխտ ոգու եւ հանճարի:

Հերոս որդիներդ Բաճ-Գրիչ-Զէնք բռնած,
եւ սուրալով կանչիդ վրայ հրկէզ,
գիսաստղերի նման թշնամու մէջ խրուած
ողբերգական սիրով փարուեցին քեզ:

Հիմա եւ երկինքդ է աստղերով լի,
եւ քո հողն է՝ զոհուած Աստղերի մէջ,
եւ դու՝ Թագուհի-մայր երեւելի՝
մեր նորօրեայ զնգուն ասքերի մէջ:

Թագուհի-մայր, ցրուած ժառանգներիդ կանչի՛ր,
թող որ շողան նրանք փայլով քո շողշողուն,
թող որ ճառագայթի սրբութիւնը խաչի
տանջուած, բազմաչարչար քո Աւետեաց հողում:

Թագուհի-մայր Շուշի՝ վսեմ պատգամակիր,
Հայոց Դատի պատգամն առաջնորդող հսկայ,
քո մէջ այսօր դրուած խորհուրդն անգիր
մեր պատմութեան վրայ յաւերժ պիտի զնգայ:

12 Մայիս 1992 թ. *ՌԱՋՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ*

«ԱՌԱՆՑ ՇՈՒՇԻԻ ՉԵՄ ԳՆԱՅ...»

«Մի՞թէ Ղարաբաղով չսկսուեց Հայաստանի ազատագրումը։ Ղարաբաղով էլ պիտի կառուցենք մեր պետութիւնը։ Մեր ապագան այնտեղ է՝ Արցախ աշխարհում»։

Շուշիի ազատագրումից յետոյ Մայր հողն իր գիրկն էր ընդունում ամենանուիրեալ զաւակներին...։ Ինչպէս որ համեստ էր, այդպէս էլ համեստօրէն իր ծննդավայր Շահումեան գիւղում ամփոփուեց Արմաւիր (Ալեոչա) Մինասեանի աճիւնը։ Քառասունմէկերորդ գարունը Շուշիում բոլորեց...

Հայրը՝ Անդրանիկը, հազարաւոր հայերի հետ միասին Իրանի Սուլթանաբադի շրջանի Հուսէնաւան գիւղից էր ներգաղթել։ Մանր էին ժամանակները հայրենիքում՝ նոր էր աւարտուել Երկրորդ Համաշխարհայինը։ Սով էր ու համաճարակ։ Երկրում մոլեգնում էր բռնութիւնների ալիքը...։ Բայց վարպետ Անդրանիկը հասկացել էր, որ այս արեւի տակ ինքը միայն մէկ հացէ ունի՝ Մայր հայրենիք։ Եկաւ ու շատերի հետ ընդմիշտ հաստատուեց Արտաշատի շրջանի Շահումեան գիւղում։ Այստեղ էլ հիւսեց իր բոյնն ու բազմացրեց գերդաստանը։ Եկաւ 88ը...։ Ինքն իրեն սկզբում սկսեց որոնել միտինգներում ու ցոյցերում։ Գործից ուղիղ գնում էր քաղաք՝ մասնակցելու միտինգներին, իսկ յաջորդ առաւօտեան այնտեղից վերադառնում գործի։ Եւ շատ չուտով գտաւ իրեն՝ անդամագրուեց Արտաշատի ջոկատներից մէկին։ Նպատակը մէկն էր՝ հայրենի սահմանները...

Առաջին մարտական գործողութիւնը Երասխաւանի ճակատամարտն էր։ Ցաջորդել են Գորիսի ու Վայքի սահմանները...

Պատմում է կրտսեր եղբայրը՝ Վարդանը.

—Ապա՝ Գորիսից յետոյ հարցնում էի՝ ի՞նչ էք անում այնտեղ, ասում էր. «Հսկում ենք սահմանները»։ Միայն այսքանը։ Աքցանով խօսք չէիր քաշի բերանից։ Ընկերներն ասում էին, որ Ալեոչային ծանօթանալու համար պէտք է անպայման Գորիս գնալ։

Ցաճախ, երբ տեսնում էինք, որ մեր չորս բոլորը անարդարութիւն է՝ շատ առողջ եւ ուժեղ երիտասարդներ զբաղուած են միայն ալան-թալանով, երբեմն մեզ թոյլ էինք տալիս հարցնել նրան, թէ ինչո՞ւ միշտ ինքը պիտի առաջին գծում լինի։ Միշտ նոյն հաստատուն պատասխանն էր. «Ամէն մարդ իր գործն ունի։ Ես զինուոր եմ։ Զինուորի գործը հայրենիք պաշտպանելն է...։ Մի՞թէ Ղարաբաղով չսկսուեց Հայաստանի ազատագրումը։ Ղարաբաղով էլ պիտի կառուցենք մեր պետութիւնը։ Մեր ապագան այնտեղ է՝ Արցախ աշխարհում»։

Երբ վերջին անգամ դուրս եկաւ անից, Փետրուարի հինգն էր։ Մեկնեց Ղարաբաղ։ Միայն ափսոսում էր, որ որդին է կրտսերը, այլ ոչ դուստրը, որպէսզի նրան էլ հետը վերցնի։ Քանի ամիս էր, չէինք տեսել նրան, ու տեղեկութիւններ էլ յաճախ չէին գալիս։ Գնացած օրուանից Քարինտակից դուրս չէր եկել։ Մայիսի սկզբներին Ջոկատի հրամանատարը այստեղ էր։ Տղաների միջոցով խնդրեցինք մի քանի օրով Ալեոշային տուն ուղարկել։

Եւ Մայիսի 4-ին Ալեոշային մէկ ուրիշի հետ միասին ճանապարհ են դնում։ Ճամբի կէսը դեռ չհասած՝ կանգ է առնում յանկարծ ու կտրուկ շուռ գալիս. «Մինչեւ Շուշին չգրաւենք, եղբարվի ճամբայ չկայ։ Առանց Շուշիի չեմ գնայ...»։ Այդ ժամանակ նա դեռ չգիտէր, որ ընդամէնը չորս օր յետոյ՝ Մայիսի 9-ն, ուզ պիտի դնի Շուշի։ Շուշուայ մատոյցներում թշնամու գնդակից ընկած առաջին զոհերից էր Արմաւիրը՝ Ալեոշը...

Անվեհեր մարտիկն այդպէս էլ բախտ չունեցաւ Շուշուայ անառիկ բարձունքից նայել ու վայելել մեծ յաղթանակի բերկրանքը։ Բայց նա բախտ ունեցաւ անմահների փառքով պսակուելու այնպիսի անառիկ բերդի ազատագրման պատմութեան էջերում, որ կոչւում է Հայոց Շուշի...

Մեծ ցանկութիւն ունէի հանդիպելու Ալեոշի մարտական ընկերներին՝ մի փոքր աւելին նրա մասին իմանալու։ Բայց... ամենամեծ կենսագրութիւնը Շուշին է ազատագրուած, իսկ տղերքն էլ պայքարի ու յաղթանակի ճամբաներին են... («Երկիր», 21 *Մայիս* 1992)։

ՄԵՄՄԱ ՄՈՒՐԱԴԵԱՆ



ԵՌԱԳՈՅՆԸ ԾՈՒԾՈՒԱՅ ԲԵՐԴԻՆ

Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն...

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Եւ չտեսան, եւ չտեսան նրանց աչքերն արնոտ ու կոյր,
Որ դու, Արցախ, ոչ թէ մի բուն, այլ բոունցք ես պղնձակուռ...
Եւ չտեսան, եւ չտեսան, որ Դէր-Զօրից այն հեռաւոր,
Պատռած պատանքն իր աւազէ, ելաւ մանուկ մի թեւաւոր,
Ելաւ մանուկ մի հրաչեայ, չքնաղ՝ նման հրեշտակի,
Որ իր փոքրիկ բոունցքներով նախ երկնքի դուռը թակի,
Ապա մաքուր իր ձեռքերով առած նշխար արդարութեան,
Իջնի Արցախ՝ շրթունքներին երգը ոխի ու յարութեան.

—Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն...

Եւ չտեսան, եւ չտեսան, որ դարձած լոյս, դարձած ոգի,
Նորից Նժդեհն է արշաւում՝ նման մի նոր սուրբ Գէորգի,
Որ բոցերից Սումգայիթի ելնում աղջիկ մի սիրասուն,
Ելնում փխրուն ու բարալիկ, բայց եւ աճեղ, որպէս ցասում,
Որ ելնում են ամէն կողմից ֆիդայիներն այս ոգեղէն,
Դառնում անտես մի զօրագունդ, թշնամու դէմ դառնում գեհեն,
Եւ Եռագոյնն են ծածանում մեր հինաւուրց Շուշուայ բերդին,
Վրէժի շանթն աչքերի մէջ, վրէժի երգն իրենց շուրթին.

—Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն...

Ներէք, տղերք, ձեզ բոլորիդ ես չգիտեմ անուն-անուն,
Բայց շուրթերիս ամէն մէկիդ փառքի երգն է հասունանում,
Լոկ քեզ գիտեմ, Քաջ Արամ, սակայն գիտեմ իբրեւ լեգենդ,
Գիտեմ, որ դու խոնարհ ու հեզ, բայց կռուի մէջ կրակ ես խենթ,
Եւ քեզ գիտեմ, նոր Անդրանիկ, մաքրամաքուր, դու լոյսի սիւն,
Դու անմարմին, որպէս Ցիսուս, եւ էպոսի դու դիւցազուն,
Երդումի պէս ձեր շուրթերին հնչեց նորից երգն առնացի,
Որ երգն է սուրբ մեր քարեղէն ու ոգեղէն առեղծուածի.

—Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն...

Փա՛ռք քեզ, հայոց անմահ ոգի, փա՛ռք յառնումին քո հիասքանչ,
Դու լոյսի սերմ, ցայգածաղիկ, լերան աղբիւր ու հողի կանչ,
Ծիրանի ծառ դու ծաղկաւոր ու շէկ ժայռից բխած գինի,
Երկինք միտող տաճար ու վանք եւ խորութիւն անհուն վիհի,
Համբերութիւն որձաքարի եւ կայծակի դու շառաչիւն,
Դու նորածին հուրհեր մանուկ եւ հերոսի դեռ տաք աճիւն,
Եւ քանի դեռ սուր են խրում քո սրտի մէջ ու քո վէրքի,
Քո շուրթերին թող չլռի վրիժառու տողն այդ երգի.

—Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն...

10 *Մայիս* 1992

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ
(«Հին ու նոր ակարակներից»)



ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՐՏԻԿԸ

Այսօր, պայքարի նոր հանգրուան է մտել հայ ժողովուրդը: Ծարունակում ենք մնալ իրաւազուրկ եւ ճնշուած, պնդուամենայնիւ, հպարտօրէն կարող ենք համայն հայութեան եւ աշխարհին բարձրաձայն յայտնել, որ հայութիւնը ծնել է ու ծնում անցեալի մեր մարտիկների գաղափարական ժառանգորդները հանդիսացող հերոս հայորդիներ, որոնք ամենայն անկեղծութեամբ ու անշեղ ուղիով այսօրուան մեր կռիւը տանում են դէպի համաժողովրդային ու համազգային պայքարի բարձունքները:

Այո՛, Արցախի տառապող ու իրաւազուրկ հողի համար մեր պայքարով այսօր վճռած ենք կրկնել պատմութիւնը եւ տասնամեակներից ի վեր երկաթեայ տխրահռչակ դատի առջեւ արդէն իսկ բացում ենք լուսաւոր եւ անդառնալի մի ուղի:

Իսկ Արցախեան կռուի խրամատների մէջ վճռական ու հերոսական դիրքով կանգնած այս ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿԵՐՏՈՂՆԵՐԸ ժողովրդի ծոցից ծնուած մեր հայրերն են, մեր եղբայրները, մեր գաղափարական ընկերները կամ մեր

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ

Վիգէն Զաքարեան ծնած է Լիբանան՝ 1969 Մարտ 15ին։

Շրջանաւարտ՝ Համազգային «Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան» Ճեմարանէն, 1988 տարեշրջանին։

Հետեւած է «Հայկազեան Գոլէճի Առեւտրական ճիւղի կարգ մը դասընթացքներուն։

Հայու 5 տարեկան՝ անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի, նախ՝ իբրեւ տարագուրտ գայլիկ, ապա՝ սկաուտ, երէց։ Աւելի ուշ՝ մաս կը կազմէ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի հեծելարշաւի խումբին։

Կ'անդամակցի Հ.Յ.Դ. Լիբանանի Երիտասարդական Միութեան (ԼԵՄ), որուն շարքերէն ներս կը վարէ պատասխանատու բազմաթիւ պաշտօններ։ Իբրեւ մշակութասէր, կը միանայ նաեւ Համազգայինի պարախումբի միաւորին։

17 Ապրիլ 1992ին կը մեկնի Հայաստան, անցնելու համար Արցախ։ Կը մասնակցի Շուշիի ազատագրման կռիւներուն, ուր եւ կը նահատակուի՝ Լիսագորի բարձունքները գրաւելու պահուն։

Մարմինը կը փոխադրուի Եռաբլուրի նահատակաց պանթէոնը։

դասընկերներն ու մտերիմները: Նրանց մարտական խիզախումները, զենքերի շառաչն ու մարտի դաշտում թափած արիւնը օրէ օր աւելի է սթափեցնում հայ ժողովրդի զաւակներին, որոնց մօտ, բարձրանում է գիտակցութեան եւ պատասխանատուութեան անժամանցելի զգացումը:

Եւ այսպէս, մերօրեայ այս գաղափարական ասպետներից էր նաեւ Վիգէն Զաքարեանը:

Նա ծնուել ու ապրել էր հայրենիքից հեռու, օտար ափերում: Հանգիստ ու խաղաղ կեանք կարող էր ապրել Վիգէնը իր ծննդավայրում: Բայց եւ այնպէս, կամքից անկախ պատճառներով լինելով այլ երկրի քաղաքացի, նա ամենից առաջ ԱՆՇԱՀԱԽՆԴԻՐ ՀԱՅՆ ԷՐ: Դպրոցում թէ դաշնակցական իր ակումբում նա սովորել ու ծանօթացել էր հայ ֆիդայական շարժման հերոսապատումներին, ներշնչուած էր նրանից ու ամբողջապէս իւրացրել ֆիդայու շքեղ ու անվեհեր տիպարը: Վիգէնը «պատերազմի տղայ» էր, տեսել էր քաղաքացիական կռիւների ամբողջ սարսափներն ու դաժանութիւնները: Այս ժամանակաշրջանում է, որ նա իր ընկերների կողքին զենք վերցրեց, ոչ թէ իր մասնակցութիւնը բերելու անհեթեթ պատերազմին, այլ ամենայն նուիրումով պաշտպանելու հայկական վտանգուած թաղերը:

Եւ ծայր առաւ Արցախեան պայքարը:

Արցախի լեռներից հնչող մարտի ու պայքարի ձայները փոթորկում ու ալեկոծում էին Վիգէնի եւ իր ընկերների անբաւիր հոգիները: Չէր կարող այս անձնուրաց երիտասարդը անարձագանգ մնալ իր հայրենակիցների մարտակոչերին, որովհետեւ չմոռանանք, որ Վիգէնների նման տղաները «Արարատներ ունեն իրենց հոգիների խորքում», որովհետեւ Վիգէնների օրինակով Հ.Յ.Դաշնակցութեան զինուորագրուածները զենքի ու դրօշի վրայ ուխտել են հայրենի հողի պաշտպանութեան համար գնալ գերագոյն զոհողութիւնների:

Ան հասաւ իր երազին:

Ուխտ դրեց Արցախի նուիրական հողի վրայ եւ, ի՞նչ հրճուանք, լինելով «Բարի արանց» մարտական խմբերում, մասնակցութիւն բերեց Շուշիի ազատագրմանը: Բայց...

Բայց նախքան Շուշի քաղաք մտնելը, նա հաւանաբար մտքով երազում էր «Շուշիի ազատութիւն տեսնել ու մեռնել»:

Հպարտօրէն պէտք է ասենք, որ Վիգէնի նահատակութեամբ Արցախեան մեր պայքարը նոր մակարդակի նուաճման կենդանի ապացոյցն է տուել, որովհետեւ այս կռիւը արդէն փշրել ու անցել է հայ ժողովրդի զանազան հատուածների միջեւ առաջացած արհեստական սահմանագծումները, եւ մերօրեայ ազատագրական շարժումը դարձել էապէս ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ:

Այո՛, Արցախի դատը Մէկ ու Միացեալ հայութեան օրհասական խնդիրն է: Լինենք Ղարաբաղում, Հայաստանում թէ աշխարհի չորս ծագերում, մեր ազգային իդէալների իրականացման իսկ հեռանկարով, պարտաւոր ենք անմար պահել Վիգէնի ու իր նմանների Երազը, ու նոր նուաճումներով անդորրութիւն եւ բերկրանք բերենք կէս ճամբին ընկած նահատակ ազատամարտիկների շիրիմներին («ԿԱՅԾԵԵՐ», Թ. տարի, թիւ 2):

ՎԱՐԱԳ

ՆԱՀԱՏԱԿ ՎԻԳԷՆ ԶԱՔԱՐԵԱՆ ՅԱՆՁՆՈՒԵՑԱԻ ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԻՆ

Երեւանի Եռաբլուրի գերեզմանատան մէջ, Մայիս 12ին (Երեքշաբթի օր) ամփոփուեցաւ մարմինը Լիսագորի ճակատամարտին նահատակուած հաւատաւոր դաշնակցական Վիգէն Զաքարեանի: Ան հերոսաբար զոհուած էր 8 Մայիսին, Շուշիի հարաւ-արեւմտեան շրջանի Լիսագոր գիւղին մօտակայ բարձունքին գրաւման պահուն, երբ իր ընկերները սկսած էին յարձակումը Շուշիի վրայ:

Հայաստանի Հանրապետութեան Գերագոյն Խորհուրդի նախագահ Բաբգէն Արարքցեան, Ներքին գործոց նախարար Վանօ Սիրադեղեան, երեսփոխաններ, պաշտօնական այլ անձնաւորութիւններ, հազարաւոր երեւանցիներ, Հանրապետութեան տարբեր շրջաններէն ներկայացուցիչներ եւ կուսակցական ընկերներ եկած էին վերջին հրաժեշտը տալու նահատակ Վիգէնին: Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ:

Գերեզմանատան մէջ, հրաժեշտի խօսք արտասանեց Հ.Յ.Դ. Բիւրոյի գործիչ ընկեր Տիգրան Ծինպաշեան: Խօսք առին երեսփոխաններ եւ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեան, «Վէրքերով լի» երգով, ազատամարտիկին մարմինը լանձնուեցաւ հայրենի հողին: Աւանդութեան համաձայն, արձակուեցաւ համազարկ:

Վիգէն Զաքարեան արցախեան հրասայլի մը վրայ

* * *

Ու հիմա որ տարելիցը բոլորուած է արդէն, կրնանք արդա՛ր հպարտութեամբ ոգեկոչել նահատակի լուսապսակով նուիրականացած յիշատակը ճեմարանական Վիգէն Զաքարեանին՝ որ իր երիտասարդ կեանքը գիտակցօրէն նուիրաբերեց Հայութեան ազատագրական կռուին (8 Մայիս 1992)։ Ցարդա՛նք իր այդ տղամարդու կեցուածքին, որուն մէջ դեր ունեցած էին անկասկած ճեմարանի մթնոլորտն ու դաստիարակութիւնը, բայց որ, իր կարգին, չքեղօրէն բարձրացուց իր դպրոցի վարկը եւ կոչուած է գաղափարին ամբողջական ու անսակարկ նուիրումի օրինակ ծառայելու մեր գայլիք սերունդներուն։ Ափսո՛ս Վիգէնին, բայց փա՛ռք Վիգէնին ու Վիգէններուն։

Տնօրէնութեան որոշումով, Մաղկաձորի ճեմարանէն երկու դասարաններ կոչուած են՝ մէկը կարոյի, միւսը Վիգէնի անուան։

ՀՆԳԱՄԵԱՑ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԱՄԵԱՆՔԹՈՆ ԵՒ ՀԱՅԿ ԱՐՍԱՆԵԱՆ
ԵՒ ՆՇԱՆ ՓԱԼԱՆՃԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՆԵՐՈՒ

ԾՈՒԾԻ

Եւ բացուեցին դռները,
Որ մենք բախում էինք լալով,
Եւ Մարիամը մեզ իր գիրկն առաւ,
Սրբեց սուրբ պատանիների
Հագուստների վրայ նստած
Փաճր ու փոշին
Եւ արտասուքով լուաց գերի
Քաղաքի քարերը բոլոր
Ու բոլորի վրայ Հատկի ծուերի
Տօնական գոյներ սփռեց։
Ծուշի՜, դու ամենակորուսեալ քաղաք,
Որ կրկնեցիր Քրիստոսի Յարութիւնը,
Փա՛ռք քեզ։
Դու սիրտդ գաղտնի
Կենդանի պահած,
Արտասուքով ճանաչեցիր
Որդիներիդ։
Այսօր Յարութեան համբոյրն ես
Բաշխում հազարամեակներիդ,
Եւ երակներիցդ հեռանում է
Սիրտդ անգղի պէս կտցող փոշին։
Փա՛ռք քու Յարութեան,
Փա՛ռք որդիներիդ,
Որ կեանքի վերջի վայրկեանն իրենց
Ամուսնացան կապուտաչեայ սիրուհու
Հետ, որ է Երկիր Նայիրին։
Ես այսօր մտնում եմ գալարափողի մէջ
Ու գալարուող, ճնչող ձայների հետ,
Գնում դէպ անցեալը եւ ապագան։
Ծուշի՜, զոհուածներիդ յետմահու
Տալիս եմ արիւնս,
Որպէսզի քո Յարութեան տեսիլը
Երկարի մի քանի ակնթարթ եւս
Նրանց կոպերի տակ։
Յարութեանդ օրը
Ես բաշխում եմ արիւնս
Տիրոջ ընտրած բոլոր զոհերին,
Որպէսզի այն չծանրանայ իմ մէջ,
Եւ չմակարդուի որպէս չօրհնուած հեղուկ։

ՆՈՐԱՅՐ ՂԱՋԱՐԵԱՆ

ՍԱՀՄԱՆ ՔԱՋԱՑ ԶԷՆՆ ԻՐԵԱՆՑ

Սեւ ժապաւէնը ճակատին, փոքրամարմին Վրէժին խնդրում եմ պատմել Արմէնի մասին։ «Հինչ ասեմ, դաշնակցական էր, էլի»։ Այդքանը...

Արմէն Միքայէլի Մկրտչեան.— Ծնուել է Հաղբատի շրջանի Թաղուա գիւղում։ Ցատուկ նշանակութեան գրոհային ջոկատի հրամանատար է։ Վիրաւորուել է՝ Շուշիի բանտը գրոհելիս։ Նահատակուել է Մայիսի 17ին՝ հիւանդանոցում։

«Անուններս գրոհային է՝ պարապ թափառում ենք,— փնթփնթում էր ու հրամանատարներից իրենց ջոկատին վայել գործ պահանջում։ «Անվրէպ խփողը թող գայ...։ Գործադուրկ ենք, չէ, էսպէս չի լինի»։ Վերջապէս ստացուեց Շուշին ազատագրելու հրամանը։ Առաջիններից էր Արմէնի ջոկատը, որ սրընթաց գրոհով մտաւ Շուշի՝ պատուհասելով խուճապահար թշնամուն։

Պաշարել էին Շուշուայ բանտը եւ կրակահերթերով թոյլ չէին տալիս թշնամուն գլուխ բարձրացնել։ Լիցքաւորելով ինքնաձիգը՝ գրոհի ազդանշան տուեց, եւ առաջ անցան։ Ընկերներից երկուսը զարկուեցին. եւս մի ակնթարթ, ու հրեղէնը իր ճակատն էլ «համբուրեց»...

Ազատամարտիկների շիրիմների մօտ պատուոյ համագարկերը սովորաբար տրուում են ընդհատ կրակահերթերով, ինչ-որ հանդիսաւորութեամբ։ Արմէնի պատուին տրուած կրակահերթը անսովոր էր, ջղաձիգ, եւ ներկաներից շատերը փլուզուեցին։ Մարտական ընկերները կարծես իրենց ցաւումն էին ժայթքում զէնքերից։ Սեւ ժապաւէնը ճակատին, փոքրամարմին Վրէժին խնդրում եմ պատմել Արմէնի մասին։ «Հինչ ասեմ, դաշնակցական էր, էլի»։ Այդքանը...

Սիրելի կինը վաղը ծնուած երեխային կը պատմի, որ Արցախ աշխարհն ազատագրուեց իր հօր ու նրա ընկերների կեանքով, ուստի եւ՝ յաւերժելու է... («Երկիր», 18 Յունիս 1992)։

ՍԱՄՈՒԷԼ ՔՈՉԱՐԵԱՆ

ԻԳՈՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՀԱՍՐԱԹԵԱՆ

Որդին՝ ազատամարտիկ։ Ասել է, թէ նա գնում է կրակների մէջ, որտեղից կարող է եւ չվերադառնալ։ Եւ պահելու իրաւունք չունէր։ Դրանով նա կը խայտառակէր իրեն՝ արդէն հասուն որդու աչքում։ Ի՞նչ կարող էր անել, երբ ինքն էր որդու հոգում սերմանել դաժան ճակատագիր ունեցող իր ժողովրդի ոտնահարուած իրաւունքների պաշտպանութեան ազնիւ գաղափարը։

Վերջին փամփուշտը Իգորը պահեց իր համար, որովհետեւ արծիւները գերուելու սովոր չեն։ Ու զոհուեց յանուն ընկերների եւ Արցախի։ Նա 19 տարեկան էր...

Հայրենիքի համար մարտնչելու շնորհը նա ժառանգել էր։ Արեամբ։ Ծնողներից։ Նախնիներից։ Բջիջների մէջ անթեղուած յիշողութիւնից։ Անչափ ընթերցանութեամբ ամբարած գիտելիքներից։ Ժառանգել էր եւ պայծառ հոգու բնականոն մղումով դարձրել ինքնաստեղծման յենասիւն։

Անդրանիկի եւ Նժդեհի առասպելական պատմութիւններն էին նրա մանկութեան հեքիաթները։ Նժդեհական շնչով ապրող հերոսական Զանգեզուրի, կոնձորցի նախնիների յիշողութիւնն էր անցնում նրա երակների միջով։ Երկրորդ Աշխահամարտից յետոյ Կանադայում յայտնուած, բայց Արցախ վերադարձած Լեւոն պապի կարօտներն էին առաջնորդում նրան։ Ուսուցիչ ծնողների մտքի կամքն էր սնում նրան։

Դպրոցական պատանի էր, հայրենի Կարմիրաւան գիւղից տեղափոխուել էր Մարտակերտ, սովորում էր եւ աշխատում։ Ծայրէծայր գիտէր Հայոց պատմութիւնը։ Խորաթափանց էր, ընթերցասէր, եւ ապրստամբ ու անկոտրուն։

Իգորը սկսում է իր յեղափոխական գործունէութիւնը Ղարաբաղեան հիմնահարցի վերաբերեալ։ Սկզբում մասնակցում էր ցոյցերին ու միտինգներին, ապա ձեռնամուխ լինում նրանց կազմակերպմանը, դառնալով նրանց կազմակերպիչը դպրոցում։

Ծրջանային անվտանգութեան կոմիտէն զգուշացնում է Իգորին եւ հարցը տեղափոխում է մանկխորհրդի քննարկմանը։ Բայց դպրոցի աշակերտների պաշտպանութիւնը եւ գերազանց սովորելը հնարաւորութիւն

են տալիս Իգորին շարունակելու ուսումը եւ դպրոցն աւարտելու ոսկէ մեդալով:

Իգորի անունը արդէն յայտնի է դառնում շրջկենտրոնում եւ ամբողջ շրջանում: Հսկողութեան տակ է առնում եւ հետեւում են նրա ամէն մի քայլը:

Ծնողները, բարեկամները, ուսուցիչները խորհուրդ են տալիս Իգորին մեկնել Մոսկուա կամ Երեւան՝ ուսում առնելու: Բայց Արցախ աշխարհն արդէն ոտքի էր ելել: Արցախ աշխարհը ամենամեծ դպրոցն էր, ուր թրծւում էին մերօրեայ ազատամարտիկները: Եւ նրանց մէջ՝ Իգոր Հասրաթեանը: Պատանի էր, բայց ոգի ու կորով էր ներարկում շատ շատերին՝ ե՛ւ մեծերին, ե՛ւ հասակակիցներին: Ազատամարտի զաւակ էր նաեւ, եւ ի հարկէ, չէր կարող հեռանալ Արցախից:

Առաջին իսկ քննութիւնից գերազանց ստանալով, ընդունուեց Արցախի Պետական համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետի պատմութեան բաժինը:

Երկար ժամանակ ինստիտուտում ու տանը չգիտէին Իգորի ֆիդայի լինելու մասին: Այդ մասին նա առաջինը պատմեց պատմութեան ուսուցիչ հօրը: Հայրը լսում էր մինուճար որդուն ու բառեր չէր գտնում ասելու: Որդին՝ ազատամարտիկ: Ասել է, թէ նա գնում է կրակների մէջ, որտեղից կարող է եւ չվերադառնալ: Եւ պահելու իրաւունք չունէր: Դրանով նա կը խայտառակէր իրեն՝ արդէն հասուն որդու աչքում: Ի՞նչ կարող էր անել, երբ ինքն էր որդու հոգում սերմանել դաժան ճակատագիր ունեցող իր ժողովրդի ոտնահարուած իրաւունքների պաշտպանութեան ազնիւ գաղափարը: Ահա եւ իր որդին ազատամարտիկ է: Հայրը, յաղթահարելով հոգու խորքը, օրհնում է որդու ճանապարհը: Սակայն Իգորի համար առաւել սուրբ էր մօր օրինակը: Հայրենիքի եւ օջախի նկատմամբ ունեցած հաւատարմութեան առաջնութիւնը նա տալիս էր մօրը: Մայրն այս գիտէր եւ արցունքները թաքցնելով, համբուրում է որդու ճակատը, օրհնում նրա ճանապարհը, յաջողութիւններ մաղթում ու պատուիրում տուն վերադառնալ յաղթանակով:

Այդ օրուանից անցաւ երկու տարի: Պատանի ազատամարտիկի մասին շատերն իմացան Արցախում: Բարձրահասակ, մարդամօտ, խօսքաշատ, համարձակ ու անկոտրում: Այսպիսին էր Իգորը: Ինստիտուտում դասախօսները հաշուի էին նստում նրա հետ: Զարմացան, երբ իմացան, որ նա ֆիդայի է, քանի որ նրա գաղափարական համոզմունքները տանում էին դէպի ազատագրական պայքարի առաջին գիծը:

«Հանճարեղ պատանի»՝ այսպէս է ասել Իգորի մասին պատմութեան դասախօս Շահէն Աբրահամեանը, երբ կարդացել էր ընդունելութեան քննութեան նրա գրաւոր աշխատանքը:

Ուսումնասիրելով եւ խորանալով Ղարաբաղեան պրոբլեմի մէջ, Իգորը համոզուեց, որ նրա արմատները շատ խորն են եւ հետուից են գալիս, որի յաղթանակը ղարաբաղցու միասնութեան եւ համախմբման, նրա ուժի մէջ է:

Հէնց առաջին իսկ կուրսից, ուսման հետ զուգահեռ ուսումնասիրում եւ խորանում է Ցեղակրօնի ծրագրի եւ կանոնադրութեան մէջ: Իմա-

նալով նրա նպատակն ու խնդիրները, «Հայ Դատի իրագործումը», «Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստան»ի ստեղծումը, դառնում է Ցեղակրօն, նիզեհեագէտ:

Իգորը յատիշտակուած կարդում եւ ուսումնասիրում է Նժդեհի կեանքը ու գործունէութիւնը, նրա ուսմունքը: Իր խոր համոզմամբ, որ Նժդեհը եղել է ազգի հանճարն ու հայրենասէրը, ազգային հերոսն ու նուիրեալ քաղաքացին, յաճախ էր կրկնում նրա խօսքերը. «*Տուէք ինձ ներցեղային բարոյականով առաջնորդուող մի հատիկ սերունդ եւ ես ապահովեմ Ազգիս տեղը Արեւի տակ*»:

Իգորը, տալիս է իր երդումը.

«*Ես՝ դաւանելով հայ ցեղիս ցեղակցութեանն ու արդարադատութեանը, ցեղակրօնի իմ երդումն եմ տալիս՝ յանուն Հայ Դատի իրագործմանը, ազգիս եւ հայրենիքիս համար իմ անձն ու անձնականը դնել Վահագնամեծար զոհասեղանին։ Երդւում եմ եւ թող երդմանս պահապան ու դատաւոր լինեն ցեղիս բազուկն ու արեւը*»:

Մեծ յաջողութիւնների հասնելով նիզեհեան ցեղակրօնի ուսմունքի եւ գաղափարների մասսայականացմանը, առաջ է քաշւում եւ նշանակւում նրա դիւանակալը, յետոյ ցեղուորը՝ ցեղապետը, դառնալով նրա հիմնական գաղափարախօսը:

Իգորը չէր անտեսում ուսումը, գերազանց յաճախեց սեսեռն քննութիւնները, բայց նաեւ չէր մոռացել Կարմիրաւանը: Մի քանի օրով լինում էր գիւղում, հանդիպում երիտասարդների հետ, ուրախանում նրանց հայրենանուէր աշխատանքով:

Սկզբնական շրջանում, երբ գոյութիւն ունէր ԽՍՀՄը, Իգորը մասնակցում էր հայդուկային շարժմանը: Լինում է Ղարաչինարում, Մանաշիդում, Բուզլուխում, Մարտունաշէնում, Թալիշում, Կիչանում, Ղազանչիում, Վաղուհասում, Խունկաշէնում, Ճարտարում, Գիւղում, Խրամորթում, Բատագլխում, Փառախում, Յովսէփաւանում, Նախիջեւանիկում, Փրջամալում, Գեաթուկում, Վարազաբունում, Աղբուլաղում, Դահրազում:

Դեռ 17 տարեկան չկար, մասնակցում էր Խոջալուի մօտ շէնացող Յովսէփաւանի պաշտպանութեանը: Նորաստեղծ գիւղի բնակիչները ըսկզբից Իգորին տեսնում էին որպէս մի մանչուկի: Բայց, երբ անցնում է մի քանի ամիս, զարմանում են Իգորի ընդունակութիւններով եւ տաղանդով: Նրա ելոյթներն ու դասախօսութիւնները ազգի, Ղարաբաղեան հիմնահարցի վերաբերեալ հիացմունք պատճառեց բոլորին:

Ջելբաջարի եւ Նարեշտարի կողմից յաճախակի էին յարձակւում Խունկաշէնի եւ Վաղուհասի վրայ, գողանում անասունները, խոշոր վնասներ պատճառել, որի պատճառով վախենում էին հանրային անասունները բարձրացնել սար: Ցեղակրօնի տղաները իրենց վրայ վերցրին այդ վտանգաւոր պարտականութիւնը: Իգորը, Ասատուր Խաչատրեանը, Արթուր Յարութիւնեանը Խունկաշէնի հանրային անասունները բարձրացրին Եուրդեր կոչուող սարը եւ ամբողջ ամառ պահեցին:

Ղազանչին վտանգի տակ էր: Շրջապատուած ադրբեջանական գիւղերը անընդհատ յարձակւում, վնասներ են հասցնում, նոյնիսկ մարդկային զոհեր կային: Հարկաւոր էր ներքին կարգով, գաղտնի զէնք հասցնել

ինքնապաշտպաններին: Այդ դժուար պատասխանատուությունը իր վրայ է վերցնում Իգորը: Միայն հարկաւոր էր վստահելի, ուիսկով մարդ, զէնքը մեքենայով տեղափոխելու համար: Այդպիսի մարդ գտնուեց, կարմիրաւանցի աւտոբուսի վարորդ Ալբերտ Ափեանը: Երբ բեռը ցանկացաւ բարձրացնել մեքենան, ուղեւորները կասկածելով, սկսեցին աղմուկ բարձրացնել: Ալբերտն էլ սկսեց դժգոհութիւն յայտնել, թէ Խաչէնի կամուրջի վրայ զինուորական պահակակէտ կայ, խիստ ստուգում են: Զէնքի դէպքում կալանքի ենթարկւում, ուղեւորներին օրերով պահում պահակակէտում մինչեւ պարզելը: Ուղեւորները պահանջում են իջեցնել անծանօթ երիտասարդին: Իգորը սկսում է համոզել Ալբերտին, որ անպայման պիտի գնայ, այլ ելք չկայ: «Ալբերտ քեռի, մի՞թէ մոռացել ես, որ քո հօրեղբայր Մակին 20ական թուականներին Աղբրին ձորը մենակ, մահակով է պահել թուրքերի յարձակումներից»: Ալբերտը ուրախացաւ, սկսեց պարծենալ, որ Իգորը իմանալով իր հօրեղբօր հերոսութեան, հայրենասիրութեան մասին, իրազեկ պահեց նաեւ ուղեւորներին: Փոխելով թեման, փոխուեց նաեւ ուղեւորների տրամադրութիւնը: Ալբերտը թափ տալով ձեռքը, նստում է ղեկի մօտ, «գնացինք»: Ճանապարհին ամբիոնը վերցրեց Ալբերտը, սկսեց լրացնել Իգորին, հօրեղբայր Մակիի սխրագործութիւնների մասին: Դեռ միտքը չաւարտած՝ հասան Խաչէնի կամուրջը: Զինուորները կանգնեցրին մեքենան: Առաջինը Իգորը դուրս եկաւ, բարեւեց բոլորին, մէկական տուփ ծխախոտ տուեց զինուորներին, յետոյ հայկական կոնեակ հանեց:

Մոռանալով մեքենայի ստուգումը, զինուորները շնորհակալութիւն են յայտնում հիւրասիրութեան համար եւ ճանապարհում: Երբ հասան Կիչան, Իգորը իջաւ: Ղազանչի պիտի գնար: Նրան Կիչանից Ղազանչի ուղեկցեց Սեռմա Հայրապետեանը: Նրանք ուղիղ արահետով, երեկոյեան հասան գիւղ, ժամանակին տեղ հասցրին զէնքը:

Իգորի հայրենասիրութիւնն ու հերոսութիւնը փայլեց, երբ ծաւալուեցին պատերազմական գործողութիւնները: Նա դարձաւ իսկական ազատամարտիկ: Մասնակցել է Կարմիրաւանի, Սէյսուլանի, Մարտակերտի պաշտպանութեանը: Կրկժանի, Խոջալուի եւ մի շարք օպերացիաների: Բայց հիմնական գործողութիւնները ծաւալուեցին Ասկերանի շրջանում, մասնակցել է Խրամորթի, Բաղատալի, Քարագլխի, Նախիջեւանիկի, Քորուկի, Վարազատունի, Դահրազի պաշտպանութեանն ու ազատագրմանը:

Երբ Շուշին համարեա՛ թէ ազատագրուած էր, յայտնում են, որ Ասկերանի շրջանի սահմանների մօտ, Աղդամի կողմից տեխնիկայի մեծ կուտակումներ կան:

Ցեղակրօնի ջոկատը ուղարկում են Աղբուլաղի հատուածը: Երեկոյեան արդէն Աղբուլաղում են: Կազմակերպում են նշելու Շուշուայ ազատագրումը:

Դեռ լոյսը չբացուած՝ թշնամին սկսում է գնդակոծել: Մարուսիա Սարգսեանը, որին Իգորը տուել էր Շաքար տատիկ մականունը, որովհետեւ թէյի հետ միշտ շաքար էր տալիս, գրկում է Իգորին, յորդորում, որ ուշադիր լինի:

Լոութեան մէջ գրկախառնւում են տղաները, երդւում, որ մինչեւ արեան վերջին կաթիլը կը կռուեն, եւ գրաւում են դիրքերը: Աջ թեւում Ցակորն էր, ձախում՝ Իգորը:

Սկսւում է անհաւասար մարտը, տղաներին յաջողւում է յետ շպրտել թշնամուն: Թշնամին կրկնում է յարձակումը: Հայկական դիրքերի ուղղութեամբ շարժւում էր 33 ծանր տանկ, 60ից աւելի տեխնիկա: Սկսւում է ծանր մարտ: 17 հոգի 13 ժամ անհաւասար պայքար են մղում թշնամու մեծաքանակ տեխնիկայի եւ աճոեղի հետեւակի դէմ: Երկու անգամ յետ են շպրտում թշնամուն, դանդաղեցնում նրա առաջխաղացումը:

Նրանց կողմից՝ տանկեր ու զրահամեքենաներ, մեր կողմից՝ մի քուռ խիզախ նուիրեալներ: Իսկ թիկունքում Աղբուլաղն էր՝ ծերեր, կանայք, երեխաներ. թիկունքում ողջ Արցախն էր:

Հսկայական զոհեր տալով՝ թշնամին սողում էր առաջ, սպառւում էին մերոնց փամփուշտները, ջոկատը արիւնաքամ էր լինում: Շրջապատման վտանգն անխուսափելի էր:

—Նահանջե՛լ,— կարգադրեց հրամանատարը:

Սկսուեց կանոնաւոր նահանջը: Բայց Իգորը չնահանջեց:

—Ես կը պահեմ, դուք գնացէք,— երեւի առաջին անգամ հրամանի չենթարկուեց Իգորն ու դիրքաւորուելով սկսեց գնդակոծել թշնամուն, դանդաղեցնելով նրա առաջխաղացումը, որպէսզի ընկերները կարողանան անցնել հրետանու բարձունքի հակառակ կողմը:

Ջոկատը կռուելով ճեղքեց պաշարման օղակն ու կռուից դուրս եկաւ: Իգորը մնացել էր մեն-մենակ՝ թշնամուն երես առ երես: Իգորը վիրաւորւում է, բայց իրեն չի կորցնում, մինչեւ վերջին փամփուշտը կռուելով, մեծ զոհեր է պատճառում թշնամուն: Զգալով, որ շրջապատուել է, Իգորը բացագանչեց.

—Ցայտնէք հօրս ու մայրիկիս,որ ինձ թուրքը չի սպանել:

Եւ վերջին գնդակը ուղղեց իր վրայ: Կրակեց: Իր սրտի մէջ հաւատարիմ մնալով ցեղակրօն կուսակցութեան ծրագրին՝ երբեք գերի չընյանձնուել թշնամուն: Տասնինանամեայ մի երիտասարդ դարձաւ լեգենդ...

Նրան՝ որպէս հերոսի, հողին յանձնեցին Ստեփանակերտի եղբայրական յուշագերեզմանոցում: Եւ զինակիցների աչքերում վշտի հետ մէկտեղ անսանձ ցասում կար ու վրէժի կրակ. ազատամարտիկի աջ բազուկի վէրքն աւելի զարհուրելի էր, քան սրտի մէջ յաւէտ լռած իր գնդակը. պիղծ թշնամին հատել էր զէնքին գամուած նրա աջը...: Վրէժ, վրէժ եւ հատուցում: Այդ էին պատգամում նահատակի շուրթերը: Այդ էր արձագանգում հրաժեշտի համազարկը (Ջեռագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

* * *

Այսօր դժուար է ինձ համար նրա մասին գրելը կամ խօսելը, բայց եւ անհրաժեշտ՝ ինքս ինձ սփոփելու այն լուսաւոր գիտակցութեան համար, որն ինձ պատճառել է Իգորի հերոսական մահը։

Ես ինձ մեղաւոր եմ զգում նրա առաջ, որովհետեւ նրա մէջ ներարկուած այն մեծ հայրենասիրութեան ու մարդասիրութեան «մեղաւորներից» մէկն էլ, նրա ծնողների հետ, երեւի ես եմ, ես՝ նրա ուսուցիչներից մէկը, որին այսօր դժուան քախտ է վիճակուել գրելու անմահների շարք մտած իր սանի մասին— Իգորի մասին։

Վտիտ մանչուկ էր, բայց համարձակ, սիրում էր ընկերների պէս գերազանց գնահատական ստանալ։ Երբ, բան է, դաս չէիր հարցնում, թաւ յօնքերի տակից քեզ նայում էր խռովկան երեխայի պէս, ու մէկից, իբրեւ վրդովմունք, ուղղում ընկերոջ կամ ընկերուհու սխալը բարձրաձայն։

Օր օրի աչքերիս առաջ աճում էր նա, ու ես զարմանում էի, թէ որտեղի՞ց է այսքան էներգիան նրա մէջ, այդ վտիտ մարմնի, որը իր հասակակիցներից առաջ էր անցել մի քայլով։ Օրէցօր դժուարանում էի պատասխանել նրա հարցերին։

Կարդում էր շատ արագ ու անսխալ, սիրում էր ծպտալ, երբ ուսուցիչը զոհ էր լինում իր տուած պատասխաններից։

Ամէն անգամ, երբ գրաւոր աշխատանք էր գրում, ես նրան, ձեռագրի համար, յիշեցնում էի «գագաւի՛ ճանկերը», սակայն այդ «ճանկերում» համարեա՛ սխալ չէր լինում։ Սիրում էր միշտ էլ գրել ազատ թեմաներով շարադրութիւն, որոնց մէջ մարդն էր, հայ ազատամարտիկը, մեր դարը պատմութիւնը, Արցախեան շարժումն ու ժողովրդի միասնութիւնը։ Հայ ժողովրդի պատմութեան լաւագոյն գիտակ էր, որը երեւի նրան անցել էր հօրից։

«Մահ չիմացեալ՝ մահ է, մահն իմացեալ՝ անմահութիւն»։ Հինգերորդ դարում Եղիշէի կողմից «հրկնած» այս խօսքերը այժմէական դարձան Իգորի համար, քանի նա նոյնպէս գնաց գիտակցական մահուան, գնաց միանալու այն բազմահազար նահատակներին, որոնք, յանուն մեր ազգի, տուեցին իրենց ամենաթանկագինը՝ կեանքը։

Այլ ձեւով լինել չէր կարող եւ չեմ էլ պատկերացնում, որ աշակերտական նստարանից Արցախեան շարժման մէջ մխրճուած իմ սանը կը դաւանանի իր համոզմունքներին։ Նա «դաւանանեց» միայն իրեն ու իր ծնողներին՝ մատաղ կեանքը նուիրելով մեր սուրբ ու անողոք պայքարին։

Զգիտեմ ինչ էիր մտածում վերջին վայրկեաններին, բայց հաստատ համոզուած եմ, որ ոչ քո բզկտուած մարմնի, այլ՝ Արցախ աշխարհի, նրա ազատութեան ու յաղթանակի։

Ես հիմա ցաւով ու անցեալով եմ գրում նրա մասին, որի ներկան դեռ նոր էր կազմակերպւում։ Ցաւով ու դարդով եմ յիշում սեւակեան յօնքերով ու շրթներով այն պատանուն, որի մէջ նստած էր վաղուայ գիտնականն ու այսօրուայ հայ ազատամարտիկը։

Ներիր ինձ, Իգոր, որ այսօր այսքան քիչ եմ գրում քո մասին։

Եթէ Աստուած կամեցաւ, վաղը ես կը գրեմ քո կարճ, բայց բեղուն կեանքի հերոսապատումը (Ձեռագիր)։

ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Կարմիրաւանի միջնակարգ դպրոցի ուսուցիչ

***

Կարծես երէկ էր, ինստիտուտի ռադիոն յայտարարեց, որ մեդալակիր դիմորդ Իգոր Հասրաթեանը պատմութիւնից ստացել է «գերազանց» եւ առաջին իսկ քննութիւնից դարձել ուսանող: Ցնծութեան ալիք բարձրացաւ դրսում: Աչ եւ ձախից գրկում ու համբուրում էին յանդիմանիկունք ու բարձրիրան, գանգրաձեր այդ պատանուն, երեք քոյրերի միակ եղբօրը:

Կարծես երէկ էր... իսկ այսօր ուսանողներն ու դասախօսները փնտռում ու չեն գտնում իրենց սիրելի Իգորին՝ գերազանցիկ ուսանողին ու գերազանց ֆիդայուն, որը քաջաբար եւ մինչեւ վերջ մարտնչեց Աղբուլաղի մարտական դիրքերում եւ ցած չդրեց զէնքը: Իսկ երբ թուրք ելուզակները մեծաթիւ ռազմական տեխնիկայով արշաւեցին ընդամէնը 17 հոգուց բաղկացած հայկական ջոկատի վրայ եւ ծանր հրետանուց վիրաւորեցին Իգորի ոտքը, տղան զգաց, որ մահը մօտ է, անչափ մօտ, եւ չուզեցաւ գերի ընկնել թուրքերին:

Եւ Կրակեց... այս անգամ՝ իր վրայ:

Այդ էր պահանջում ցեղակրօնութեան օրէնքը, որին զինուորագրուել էր Իգոր Հասրաթեանը:

Իգորի յիշատակը երբեք չի խամրի, նա ամէն օր կը քայլի ուսանողութեան շարքերում: Նրա անունը չի ջնջուի պատմութեան ֆակուլտետի 2րդ կուրսի մատեանից, քանզի նա Արցախի քաջարի որդին էր, դասախօսների եւ ուսանողների սիրելին (Ձեռագիր):

ԼԵՆԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Պատմա-քանասիրական ֆակուլտետի աւագ դասախօս

ԵՂԵՐԵՐԳ

Իգոր Հասրաթեանի յիշատակին

Ոչ, դու չես սուգուի հրաժեշտի մէջում,
Քեզնով է ապրում ինչ-որ մէկն այս կեանքում,
Ջուլում է նա կապոյտներիդ մովին,
Խառնւում է քո սրբութեան խաղաղ ծովին։

Այդ ամէնը՝ յետոյ,—
Այդ ամէնը դեռ թւում է անգոյ,
Առաջնային է դաշտը ռազմի։
Մահաբեր զէնքերից ակօսւում է հողը,
Շառաչուն զէնքերից թրատւում է ծոգը։
Այրուած արտերի փչրուած անուրջները
Լողում են ինչպէս յաւերժահարսերը...

Քո ոթած արեան տաք չիթերը դեռ
Գիտի հորիզոնի վրայ չառաջունեն
Եւ փոխարէնը քո մատաղ կեանքի՝
Ազատութեան լուսալ գարունը բացուի...

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ
Ուսանողուհի

(Ձեռագիր)

* * *

Արցախահայ լեռնային երկրամասը, շատ անուանի մարդկանց հայրենիք է։

Այս հողից սերուել են բազմաթիւ գիտնականներ, գրողներ, արուեստագէտներ, հայրենիքի քաջ պաշտպաններ, ռազմագէտներ, եւայլն։

Եթէ ոխերիմ թշնամին իր արիւնոտ թաթը չդնէր Արցախեան սուրբ հողի վրայ, Իգոր Հասրաթեանը, անկասկած, անուանի գիտնական կը դառնար։ Բայց նա վերադասեց իր ծաղկուն կեանքն ու ուժերը նուիրաբերել ազգի ազատութեանը, անջնջելի հետք թողնելով հարազատ երկրամասի հերոսական պատմութեան մէջ։ Արցախի փրկութեանը անդաւաճան նուիրուած Իգորը ունէր պարզորոշ նպատակներ եւ հայեացքներ։ Նա հաստատ համոզուած էր այն բանում, որ պատմական անաբդրութիւնը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ վաղ թէ ուշ կը վերացուի ու դեմոկրատական հիմքի վրայ կը լուծուի նրա ճակատագրի վերաբերեալ հարցը։

Իգորը աչքի էր զարնում տեսական պատրաստականութեամբ ու կազմակերպական տաղանդով, հարուստ ընդունակութիւններով։ Նա պատկանում էր ճշմարտութեան ձգտող եւ արդարութիւն որոնող արցախցի այն տաղանդաւոր երիտասարդներին, որոնք կեանքի խմաստը տեսնում էին իրենց ժողովրդին ծառայելու մէջ։

Ազգի անկախութեան համար մեծ ու դժուարին պայքարում նա ցուցաբերեց անընկճելի կամք ու խիզախութիւն, նահատակուեց՝ մինչեւ վերջ հաւատարիմ մնալով ազգի ազատութեան գործին ու գաղափարին։

Իգորը անկոտրում կամքով ու անսպառ եռանդով ուսանող էր, հետաքրքրասէր ու հարցասէր, արագ կողմնորոշուող։ Վերջին ժամանակներս հասկանալի պատճառով երբեմն չէր յաճախում պարապմունքներին։ Բայց երբ եկաւ քննութեան, ինչպէս միշտ՝ հարցերին պատասխանում էր հանդամանօրէն ու քննադատաբար։ Ես խնդրեցի հակիրճ ձեւով ներկայացնել հարցերի պատասխանները, սակայն նա շարունակում էր պատասխանել հարցերին, լիշատակելով նոյնիսկ պատմական մանրուքները, երեւի կարծելով, որ բացակայութիւնները կարող էին ազդել գնահատականի վրայ։ Իսկ երբ դուրս եկաւ քննասենեակից, միջանցքում ծափահարութիւնների տարափ տեղաց՝ ես զարմացել էի։ Ի՞նչ է պատահել։ Ուսանողները հաղորդեցին, որ շնորհաւորում են Իգորի ճեռը։

Նոյնպէս, վերջերս խնդրեց ինձ կազմակերպել հանդիպում պատմութեան բաժնի առաջին կուրսեցիների հետ՝ ցեղակրօնի պատմութեան մասին նիւթեր հաղորդելու համար։

Պէտք էր տեսնել, թէ նա ինչպէս էր սիրով պատասխանում ուսանողների բոլոր հարցերին, ցուցաբերելով իրեն յատուկ հպարտ հայրենասիրութիւն։

Ես այն ժամանակ էլ կռահեցի, որ մեր բոլորի սիրելի Իգորը ազգի ազատութեան գաղափարին ու պայքարին զոհ պիտի դառնար։

Այո, նա մարտնչեց ու զոհուեց յանուն արդար գործի յաղթանակի... (Ձեռագիր)։

ՌՈՆԱ ԲԱԼԱՅԵԱՆ
Դոցենտ, պատմական գիտութիւնների թեկնածու

* * *

Իգոր Հասրաթեանին դասաւանդել եմ փիլիսոփայութիւն II կուրսում: Իմ յիշողութեան մէջ անջնջելի հետքեր են թողել նրա բնաւորութեան այնպիսի յատկանշական գծեր, ինչպիսիք են ըմբռնողականութիւնը, լաւատեսութիւնը, վճռականութիւնը եւ ամենաընդգծուածը՝ անողոք եւ անհաշտ վերաբերմունքը կեղծիքի նկատմամբ:

Իգորի 20 տարին դեռեւս չէր լրացել, մինդեռ արդէն տիրապետում էր կայուն աշխարհճանաչողության եւ զարմանալի հիմնաւորուած տրամաբանութեամբ խօսակցին, այդ թում նաեւ իրեն դասաւանդող դասախօսին համոզում էր իր հայեացքների ճշմարտացիութիւնը: Իգորի բնաւորութեան ու խառնուածքի ընդգծուած կողմերից մէկն էլ այն էր, որ նրա համոզմունքներն ու կոնկրետ գործունէութիւնը համապատասխանում էին միմեանց: Իգորը երդուեալ հայրենասէր ու հայասէր էր, նրա իմացեալ մահը բնական էր ու բխում էր նրա անձնաւորութեան էութիւնից: Եւ վերջապէս, Իգորը իր մէջ ամփոփում էր արցախցի երիտասարդի ընդգծուած կերպարի տիպական ողջ կերտուածքը: Եւ այդ կերտուածքը թղթի վրայ շարադրելու համար մարդը անպայման պէտք է շնորհալի գրողի ընդունակութիւն ունենայ (Ձեռագիր):

ՇԱՀԻՆ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Պատմա-բանասիրական ֆակուլտետի դեկան

ՏԵՍԻԼՔ

Անմոռանալի Իգոր Հասրաթեանի յիշատակին: Նուիրում եմ Իգորի փառապանծ, վշտակիր շրջահայեաց, աշխարհի չարն ու բարին հասկացող հօրը՝ Ալեքսանդրին...

Երկնքից աստղեր իջան այս գիշեր,
Իրար կարօտով, վառուելով իրար,
Շուրջը անմարում երազ ու յուշ էր,
Եւ նրանց խօսքն էր հնչում ջերման։

Զահիներ էին՝ կրակուած հոգով,
Ծոցում սրտով շահիներ էին,
Ժպիտները ջերմ, խօսքը հրայրքով,
Կարծես մթան մէջ լոյս շահեր էին։

Հրեշտակներին թեւեր ունէին,
Ասում էին հետ զրուցում արտանց,
Վահագնի նման հուրհեր ունէին,
Ամէն մէկը մի դից էր յաղթանդամ։

Նրանց չարքերից մէկն առանձնացաւ,
Ես ճանաչեցի, Իգորն էր արի,
Նրա ոգին էր ջերմ օր. սրտացաւ,
Տեսիլք էր դարձել, իմիկ աշխարհին։

Մօտեցայ նրան կարօտի հրով՝
Հօր գուրգուրանքով ջերմին գրկեցի,
Մեկ ոգաստում են բոլորը սիրով,
Մոսում են՝ ում ինքդ փրկեցիր։

—Ես նրանց հետ եմ,— ասաց
քնքշալից,—
Նրանց կանչերն եմ լսում ամէն օր,
Ամէն օր մարտից դառի եմ գալիս,
Եւ ընթերցում եմ նա գրքերը նոր։

Երգ կեանքը վերձիգ ճանապարհ
դարձաւ,
Եւ ամենայոյս գիրքն է այդ
ճամբանդ։
Նա ժպտաց, նորից երկինք
բարձրացաւ,
Ինչպէս մի աստղը մեր Արցախալ
տան։

(Ձեռագիր) *ՍՈՍԵՐԱՏ ԽԱՆԵԱՆ*



ԱԼԻՔ ԳՈՒՐԳԷՆԻ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Ծնուել է Մարտունու շրջանի Նորշէն գիւղում՝ 1958 թ. Յունիսի 9ին: Աւարտել է Աշանի միջնակարգ դպրոցը եւ 1976 թ. Երեւանի էլեկտրատեխնիկական ուսումնարանը:

Զինծառայութեան մէջ է եղել 1977–79 թթ.: Աւագ սերժանտ էր, տանկիստ: Ծառայել է Աբխազիայում:

Նորշէնում ինքնապաշտպանական ջոկատը առաջին զինեալներից (Դանիէլեան Ալիք, Ալեոշա, Ղուկասեան Վահան, Ծատրեան Էդուարդ) է կազմուել:

Կոլտնտեսութիւնում աշխատում էր որպէս վերանորոգող-արհեստանոցի վարիչ:

Զոհուել է 1992 թ. Մայիսի 16ին, Գեուլափլու գիւղի մօտ՝ մարտերի ժամանակ: Ունի 3 երեխաներ՝ Գուրգէն, Արամ եւ Դաւիթ (Մեքենագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

•

ԱՐԱՐԱՏ ՄԻՔԱՅԷԼԻ ՄԵԺԼՈՒՄԵԱՆ

Ծնուել է 1972 թ. Յուլիսի 8ին՝ Մարտունու շրջանի Միւրիշէն գիւղում:

Սովորում էր Ստեփանակերտի տեխնիկումում, ռատիոտեխնիկայի կապի բաժնում: Շարժումը սկսուելու սկզբից կամաւոր մեկնել է գիւղ եւ մտել ինքնապաշտպանական դասակի մէջ:

Զոհուել է 1992 թ. Յունիսի 20ին՝ Գեուլափլուի դէմ դրուի ժամանակ (Մեքենագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ԾՌԵՐԻ ԶԱՐՄԸ՝ 15ԱՄԵԱՅ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԸ

15 տարեկան տղեկ էր։ Բայց ծուռ էր։ Ու զէնք վերցրեց։ Ստիպող ու պարտադրող չկար։ Միակ պարտադրանքը մէջն հնչող ձայնն էր. Թլոլ Դաւթի ձայնը։

...Նրանք չեն անցնում թշնամու թրի տակով։ Ու երբ փորձում են զօռով տանել՝ ճկոյթները դէմ են տալիս որձաքարին, ու քարից բոց է ժայթքում։ Ու միանգամից եօթ գոմշի ուժ լցում է թշնամուն։ Իսկ իրենք մեծանում են օրէցօր՝ Սասունցի Դաւթի նման...

Ծռերի զարմից են նրանք ու ըմբոստ ոգին ծուռ-ծուռ տանում են ժամանակների միջով՝ մինչեւ բարեբեր անձրեւ, մինչեւ ծլարձակում։

Ահա մի ծուռ. Բենիամին Դարբինեան (Բենո), ծնուած Երեւան քաղաքում, 1973 թուականին։ Պիտի աւտոմեխանիկ դառնար...։ Բայց եկաւ 88 թուականը ու ամէն բան տեղն ընկաւ. ուզեցին թրի տակով անցկացնել, ու քարից բոց ելաւ։ Ծռերը միացան, համախմբուեցին, խումբ, ջոկատ ու բանակ կազմեցին։ Ու ճկոյթները դէմ տուին քարին։ Ու վիթխարի բոց ելաւ։

Նրանց մէջ էր նաեւ Բենոն։ 15 տարեկան տղեկ էր։ Բայց ծուռ էր։ Ու զէնք վերցրեց։ Ստիպող ու պարտադրող չկար։ Միակ պարտադրանքը մէջն հնչող ձայնն էր. Թլոլ Դաւթի ձայնը։

Անդամագրուեց ՀԱԲին։ Մարտնչեց Հայաստանի սահմաններում։ Ապա զինուորագրուեց «Գարեգին Նժդեհ» ջոկատին։ Ծուռ էր, զինուոր էր, պիտի կռուէր։ Նոյեմբերեան, Հադրութ, Հաթերք, Մարտակերտ (Լենինաւան), Իջեւան, Գորիս-

Լայնին, խնձորեակ, կոնիաքոր...։ Ընդամէնը այս ճանապարհն անցաւ երեք տարում։ Ընդամէնը...

Հեշտ է ասել. ընդամէնը. դա կեանքի ու մահուան ճանապարհ էր։ Ու պատանի էր անցնում այդ ճանապարհով։ Ամէն քայլ լի էր վտանգով, ամէն կեռման դարան էր։ Կարող էր, չէ՞, այլ ճանապարհ ընտրել։ Ինչպէս այլք։ Չէր կարող։ Ամէն մարդ իր ճանապարհն ունի։ Դա ծաբի, խենթերի, նուիրեալների ճանապարհն էր։ Բենոյի ճանապարհն էր։

Փորձուեց ու թրծուեց այդ ճանապարհին։ Տղեկ էր՝ ռազմիկ դարձաւ. կարգապահ, խիզախ, համարձակ ու հնարամիտ ռազմիկ, որի մասին դուցէ պիտի լեգենդներ հիւսուէին, որը լեգենդի արժանի գործեր էր անելու։

Բայց... ինչպէս լաւագոյններն են զէնք վերցնում, այնպէս էլ գնդակն է մարտի դաշտում գտնում լաւագոյններին։ Մեծաւ մասամբ այդպէս է լինում։ Որովհետեւ լաւագոյնները առաջինն են մարտի դաշտում։ Որովհետեւ ծուռ են ու չեն խնայում իրենց։

Ու այդպէս եղաւ. տագնապի ազդանշան հնչեց։ 92 թուականի Մայիսի 15ն էր։ Երասխաւանում. կռիւ էր։ Օգնութեան կարիք կար։ «Գարեգին Նժդեհը մեկնում էր ճակատ։ Բենոն, ի հարկէ, այնտեղ էր։ Անգամ չհասցրեց զգուշացնել հարազատներին։ Գնաց պաշտպանելու հայրենիքը։ Թլոլ Դաւթի զարմն էր. պիտի գնար։ Երկու օր կատաղի կռիւ էր։ Թշնամուն յետ շպրտեցին ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող բարձունքից։ Ու երբ յետ էին դառնում, հնչեց վերջին կրակոցը. սնայպէրն էր։ Ով գրոհի ժամանակ առաջինն է, յետդարձին սովորաբար վերջինն է։ Բենոն վերջապահ էր։ Ու գնդակը նրան գտաւ։ Մայիսի 18ն էր...

...եթէ ուեւ մէկը ուզում է ծաղիկ դնել պատանի նահատակի շիրմաքարին, թող գնայ Թոխմախի գերեզմանոց։ Մի քար կայ այնտեղ, փորագրուած է. «Բայց երանի, ով իւր ազգի ազատութեան կը զոհուի...»։ Բենոյի գերեզմանաքարն է։ Երանի նրան։ Կողքին մարտական ընկերներն են հանգչում՝ Արմէնն ու Գուգոն։ Երանի նրանց։ Երանի՛ նրանց, ովքեր ծուռ են ու ճկոյթից բոց է ժայթքում... («Երկիր», 28 Յուլիս 1993)։

Ց. Ս.

ԱՇՈՏ ՅԱԿՈԲԵԱՆ

1988 թ. Փետրուարից, Շարժման առաջին օրերից, Աշոտ Յակոբեանը միշտ եղել է առաջին շարքերում, մասնակցել է Կոռնիձորի, Երասխաւանի, Շահումեանի, Գորիսի եւ Կապանի ահեղ մարտերին:

Աշոտ Գուրգէնի Յակոբեանը ծնուել է 1959 թ. Յուլիսի 4ին, Երեւան քաղաքում՝ բանուորի ընտանիքում:

1966 թ. ընդունուել է Շէնգաւիթի շրջանի թիւ 31 միջնակարգ դպրոցը: 1974 թ. աւարտելով նշուած դպրոցի ութամեակը, ընդունուել է Երեւանի թեթեւ արդիւնաբերական տեխնիկումը, ուսումը թերի թողնելով՝ 1978 թ. Աշոտ Յակոբեանը մեկնում է պարտադիր զինուորական ծառայութեան՝ Խորհրդային բանակ: 1980 թ. վերադառնալով Խորհրդային բանակից, անցնում է աշխատանքի «Պոլիպլաստ» արտադրական միաւորումում, սիրում եւ յարգւում է ամբողջ կոլեկտիւի կողմից, համատեղ աշխատելուն «Հայգորգ» արտադրական միաւորումում, այստեղ էլ իրեն դրսեւորում է, որպէս բարեխիղճ եւ առաջաւոր աշխատողի, միշտ աչքի է ընկնում իր հայրենասիրական մտքերով:

Ամուսնանալով եւ ունենալով չորս զաւակ՝ նաեւ դառնում է իր ընտանիքին համար հոգատար եւ իդէալական հայր:

1988 թ. Փետրուարից, Շարժման առաջին օրերից, Աշոտ Յակոբեանը միշտ եղել է առաջին շարքերում, մասնակցել է Կոռնիձորի, Երասխաւանի, Շահումեանի, Գորիսի եւ Կապանի ահեղ մարտերին: Աշոտ Գուրգէնի Յակոբեանը հանդիսանում էր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան կուսակցութեան երդուեալ անդամ, նուիրեալ ազատամարտիկ, ռազմական գործի լաւագոյն գիտակ, որպէս հրթիռային տեխնիկայի մասնագէտ:

1992 թ. Յունիսի 2ին Կապան-Ճակատեն ճանապարհի երկայնքով ձգուով թշնամու ամրացուած յենակէտերի հետախուզութեան ժամանակ, նա մէկը միւսի յետեւից շարքից հանում է Կապանը ոմբակոծող թշնամու կրակակէտերը, բացառիկ քաջութիւն եւ հերոսութիւն ցուցաբերելով: Թշնամու վրայ արձակելով վերջին փամփուշտը, հերոսի մահով ընկաւ հայ ժողովրդի քաջարի զաւակ՝ 4 աղջիկների (Փերուզայի, Լիլիթի, Լիզայի եւ Սօսէի) հայր՝ Աշոտ Գուրգէնի Յակոբեանը (Ջեռագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ՓԱՌՔ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ ՄԵՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Մայր հայրենիքի սրբազան հողի համար մղուող մարտերում, կապան քաղաքի մոտակայքում զոհուեց Հայաստանի Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն կուսակցութեան երդուեալ անդամ, նուիրեալ ազատամարտիկ, ռազմական գործի լաւագոյն գիտակ Աշոտ Յակոբեանը։

Հայաստանի ազատութեան ու անկախութեան պայքարին նա գինուորագրուել էր Շարժման առաջին օրերից եւ իր երիտասարդ կեանքը զոհեց այդ նուիրական պայքարին։ Կռուել է Շահումեանում, Գորիսում ու Կապանում։ Միշտ եղել է առաջաւոր գծում եւ փառքով պսակել իր անունը՝ որպէս հրթիռային տեխնիկայի լաւագոյն մասնագէտ։

Այդ օրը նա մէկը միւսի յետեւից ոչնչացնում ու շարքից հանում էր Կապանը ռմբակոծող թշնամական որջերը, երբ ծանր վիրաւորուեց ու դերի վերցուեց։ Նրա հետ վարուեցին վայրագօրէն, ագերիաբար...

Նա գնաց յաւերժութիւն, ճիշտ Քրիստոսի տարիքում, թողնելով չորս զաւակներին ու հարազատներին, որոնք հպարտութեամբ պէտք է արտասանեն հայրենիքի համար նահատակուած Աշոտի անունը։

Աշոտ Յակոբեանի յիշատակը միշտ անմեռ կը մնայ նրա մարտական ու կուսակցական ընկերների սրտերում («Դաշնակցութիւն», թիւ 12 1992)։

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ԱՇՈՏ ՅԱԿՈԲԵԱՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Պարտէզում վարդ կայ ու կակաչ,
Սոխակն է իր սէրը երգում.
Մի մայրիկ՝ սեւ շորեր հագած,
Ցուշերի անհունն է հերկում—

Ա՜խ, ամէն, ամէն մահացող
Զրկում է չքնաղ աշխարհից,
Բայց երբ հերոսն է դառնում զոհ,
Աշխարհն է զրկում նրանից։

Պարտէզում վարդ կայ ու կակաչ,
Նստել եմ թախծոտ քարափին,
Մի մայրիկ՝ սեւ շորեր հագած,
Նայում է հեռացող ճամբին։—

Այն կեանքից ամէն հեռացող
Զրկում է արեւի շողից,
Բայց երբ հերոսն է մտնում հող,
Կեանքեր են ծնւում այդ հողից...

ԲՈՐԻՍ ՆԱՐԻՄԱՆԵԱՆ
18-6-93

ՈՂՋԱԿԻԶՈՒՄ

Ողջակիզման գնացած Արմէնի հերոսապատումը դեռ չի գրուել: Բայց դա ապագայ սերունդների գործը չէ միայն: Այսօր էլ պիտի հասնենք նրան, որ բոլորի սխրանքը, հատիկ առ հատիկ, ո՛չ միայն համազգային ողբերգութիւն յայտարարուի, այլեւ՝ համազգային հերոսութիւն:

Այս լուսանկարը երկու տարի առաջ կապանցիներին նայում էր ուրիշ հայեացքով: Նա համոզում էր իր համաքաղաքացիներին, որ ինքն ազնիւ ձգտումներով, իսկական հայրենասիրութեամբ, հարազատ ժողովրդին ծառայելու անզուսպ ցանկութեամբ փորձում է դառնալ ժողովրդական պատգամաւոր:

Շատերն էին հաւատում նրան: Ոմանք էլ երկմտում էին, սակայն դրանից ոչինչ չփոխուեց Արմէն Վարդանեանի հաւատքի անդաստանում...: Կարեւորն ընտրուելը կամ կոչում ունենալը չէ:

...Վերջերս կապանցիները, զինուորին վայել, հողին էին յանձնում այս քաջորդուն: Նա ընկերոջ՝ Աշոտի հետ ընկել էր մարտում՝ պաշտպանութեան ելած՝ յանուն հարազատ շրջանի: Նա գիտէր, անշուշտ, որ մարտադաշտից հեռանում են նաեւ ընկերների ուսերին, սակայն ոչ մի օր տանը չնստեց, չըկարողացաւ տանել այն տագնապը եւ մանուսն ուրուականը, որ տեսնում էր երեխաների դէմքին, երբ ռմբակոծում էին Կապանն ու նրա գիւղերը: Չէ՞ որ Արմէնն իր հայրենին միշտ կառուցուելիս էր տեսել, եւ սիրտը դուրս էր թռչում կրծքից, երբ փլուզուած տներ էր տեսնում:

Կռուում էր սահմանամերձ տարածքներում, փորձում որքան հնարաւոր է հեռու վանել թշնամուն, որպէսզի ամենամարդաշատ շրջկենտրոնը՝ Կապանը, դուրս լինի ռմբակոծութեան շառաւիղից: Քաղաքի մէջ ամէն մի պայթիւն պատռում էր նրա երեւակայութեան շրջանակները եւ ամէն ինչից վերանում էր, երբ զոհ էր տեսնում: Նա ամէն անգամ նայում էր Դաւիթ Բեկի ընդվզող յուշարձանին: Ինքը չի ների. իր երակներում հէնց դաւիթբեկեան արիւնն է եռում:

Ողջակիզման գնացած Արմէնի հերոսապատումը դեռ չի գրուել: Բայց դա ապագայ սերունդների գործը չէ միայն: Այսօր էլ պիտի հասնենք նրան, որ բոլորի սխրանքը, հատիկ առ հատիկ, ո՛չ միայն համազգային ողբերգութիւն յայտարարուի, այլեւ՝ համազգային հերոսութիւն:

Երբ հեռախօսը Կապանից գուժում էր Արմէնի զոհուելու բոթը, նրա հօր՝ բանաստեղծ Արտեմ Վարդանեանի ձայնի մէջ ողբի հետ այդ հերոսութեան ղողանջներն էին նաեւ: Արեւ ու գարուն, ծաղիկ ու ծիծառ, հող ու հայրենիք երգող բանաստեղծի անրջանքի փլուզումը չէր միայն Արմէնի մահը: Դա Սուրբ Մարիամի ծնկներին պառկած ու խոշտանգուած Քրիստոսի հոգին էր, որ յարութիւն պիտի առնի ու մնայ հարազատ ժողովրդի մտքում ու հոգում («Ազատամարտ», 14 Յուլիս 1992):

ՍՕՍ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՄԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Նուիրում եմ հանքագործ ֆիդայի Արմէն Արտեմի Վարդանեանին, որը 1992 թ. Յունիսի 1ին մարտական ընկերոջ՝ Աշոտ Յակոբեանի հետ զոհուեց «Օտած քարչի մօտ՝ Թուրքական կրակակէտը ոչնչացնելիս...

—Ահա եւ Հայոց ոգու հին դաշտում,
Մեր բախտ—երազի ծաղիկն արթնացաւ.
Դարերից վառած բոցով Եռագոյն
Ազգիս ճակատին սուրբ նշան դարձաւ:
Բայց դեռ բարուրից նոր-նոր դուրս եկած՝
«Գորշ գայլ»ն է յայտնուել կրկին սեւակնած—
Մորթել է ուզում գրկի մէջ իր մօր
Ծաղիկն եռագոյն ու... աղեղնաւոր:
Կոչնակն է զարկում, ճնշում է տագնապ,
—Հէ՞յ, պահապաններ սուրբ հող ու ջրի,
Ո՞ւմ համար է թանկ Հայրենիքը մեր՝
Թող գայլ գայլերի վոհմակը ցրի...
—Ո՞վ եմ ես՝ բանուո՞ր,
Եւ լոկ շնչող մա՞րդ...
Չկա՞յ ինձ համար ուրիշ ճանապարհ,
Հանքում ինձ հետ չէ՞ նժդեհը խօսում՝

Ծեղակրօն ոգին ինձ տալիս՝ սատար...
Ո՞վ եմ ես, երբ Մեծ Անդրանիկն ահա
Հողապաշտութեան դասեր է տալիս,
Կենաց պայքարի պատմութիւնից մեր՝
Նժդեհ, Անդրանիկ եւ Արամ ինձ հետ
Ուր էլ գնում եմ՝ այքիս են գալիս:

* * *

Արդ, Աւարայրի ոգու լոյսն ահա
Ինձ հանել է այն բարձունքը դժնի,
Որտեղից թուրքը խփում է անահ
Կապանին իմ զարդ, իմ Գեղանոյշին:
Բայց ես մենակ չեմ, Աշոտն է կողքիս՝
Արցախեան կուում իր փառքը շահած
Զորս աղջկայ հայր,
Երկուսով՝ մի սիրտ, մի ոգի շանթ ենք,
Մեր ձեռքին անդող Եռագոյնն է վառ...

* * *

Մայր, ներիր, որ ես չեմ դառնայ էլ տուն,
Ես իմ սուրբ պարտքն եմ կատարում այսօր,
Երբ կրկին գարուն բացուի բարձունքում,
Կ'երեւամ ծաղկի պատկերով բոսոր:
Դու կը գաս այստեղ ծաղիկ կը փնջես
Ու վառուող փունջը կը սեղմես կրծքիդ:
Ես կը շշնջամ. —Մայր, ի՞նչ հպարտ ես,
Քեզ խաղաղ օր է պարգեւել որդիդ:
Ապա կը տանես պատգամ իմ որդկանց
Ու կ'ասես նրանց դու ծաղկի լեզուով.
—Եթէ Հայրենին թանկ է ձեզ համար,
Սիրեցէք նրան գործով անձնազոհ...

ՄԱՐՏՈՒՆ ԱՍԱՄԵԱՆ

(Հատուած)

ԵՈՒՐԻ ՀՐԱՅՐԻ ԳԷՈՐԳԵԱՆ

Դու գիտես ինչ է պոետի սէրը,
Ես քեզ պոետի սիրով կը սիրեմ
Եւ այս աշխարհում իմ ողջ երկերը
Ես քեզնով, քեզնով լցուած կ'երգեմ։

Ես կը գուրգուրեմ քեզ իմ երկերով,
Իմ երգերի մէջ հոմն է օրօրում.
Ես միշտ այրւում եմ քո անմար հրով,
Իսկ մի՞թէ դու միշտ լուռ ես աշխարհում...

ԵՈՒՐԻ ԳԷՈՐԳԵԱՆ

Ծնուած 1961 թ. 8 Նոյեմբերին՝ Երեւան քաղաքում: Զոհուել է 1992 թ. Յունիսի 8ին՝ Նոյեմբերեանի շրջանի Կոքի գիւղում՝ Ղազախի ճանապարհը ազատագրելու ժամանակ:

Եուրան մասնակցել է մի շարք կռիւների՝ սահմանամերձ շրջանների դիրքերը պաշտպանելուն: Եղել է Երասխաւանում եւ մի շարք շրջաններում:

Եուրան սովորել է Երեւանի թիւ 155 դպրոցում՝ գերազանց գնահատականներով: Մանկուց սիրել է զբաղուել բանաստեղծութեամբ: Յաճախել է Երեւանի Ղուկաս Ղուկասեանի անուան պիոներների պալատի գրական խմբակում, ունի մի շարք տպագրուած բանաստեղծութիւններ, առաջին գրուածքը՝ «Երեւան», գրել է 4րդ դասարանում, որը արժանացել է մրցանակի: Կենտկոմի կողմից ուղարկել են «Սոցղեկ» համամիութենական ճամբար, որտեղից նորից վերադարձել է գերազանց: Ունի մի շարք գովասանագրեր: Դպրոցը աւարտելուց յետոյ սովորել եւ աւարտել է Երեւանի թիւ 19 ուսումնարանը՝ գերազանց կարմիր դիպլոմով, որից յետոյ ուղեգիր են տուել ուսումը շարունակելու Ռոստովի (Ռիշտում) երկաթագծի ինստիտուտում: Ծառայել է յատուկ նշանակման ջոկատում (Ապեցնատում) (Ձեռագիր):

ԱՆՏՈՐԱԳԻՐ

ԽԱՆԱԲԱԴԻ ԱՐԹԻՒԸ



Խիզախ էր՝ խենթութեան աստիճանի, անաչառ՝ որդու նման։ Սիրուած էր ու յարգուած՝ պաշտամունքի աստիճանի։ Գիւղի ոգին էր։

Լեգենդար տղաներ կան Արցախում։ Կը գայ ժամանակը, եւ նրանց մասին կը պատմեն ու կը գրեն այնպէս, ինչպէս Անդրանիկի, Աղբիւր Սերոբի, Գէորգ Չաւուշի մասին։

Նրանցից մէկն էր Արթուրը։

Ամէն գիւղ բերդ էր ու ամրոց։ Նրանց մէջ՝ Խանաբադը։ Նրա խիզախ զաւակները։ Արթուրը։

Արթուրը կազմակերպեց ինքնապաշտպանական առաջին ջոկատները, պահակակէտեր տեղադրեց Փառուխ գիւղի մատոյցներում։ Հաւատակից ու զինակից ընկերների հետ պաշտպանական կառոյցներ ստեղծեց հայրենի գիւղի Քարքանդած, Նռան ձոր, Կարտոշկէն տափ տեղամասերում։ Խանաբադը կուռ պաշտպանական համակարգ ունեցաւ։ Գիւղը դեռ շատ գլխացաւանք էր պատճառելու թշնամուն։ Գիւղի խիզախ զաւակները դեռ շատ էին ջարդելու թշնամուն։

Արթուրն ամէնուր էր. կազմակերպում էր ինքնապաշտպանութիւնը, կռւում, հոգում գիւղի հանապազօրեայ հոգսերը։ Խիզախ էր՝ խենթութեան աստիճանի, անաչառ՝ որդու նման։ Սիրուած էր ու յարգուած՝ պաշտամունքի աստիճանի։ Գիւղի ոգին էր։

91ի վերջերին գիւղն արդէն մօտ 100 ազատամարտիկ ունէր՝ աւտոմատներով զինուած, վարժուած, նահատակութեան պատրաստ մի վաշտ։ Կարգապահ, նուիրեալ, անպարտելի վաշտ։

Յունուարի 1ին ադրբէջանցիները առաջին յարձակումը ձեռնարկեցին։ Զարդուեցին, յետ սողացին Խանաբադի բարձունքներից եւ Խրամորթ գիւղից։ Ամսի վերջին կրկին յարձակուեցին։ Խրամորթն ընկաւ։ Ադրբէջանցիները խուժում էին Խանաբադ։ Բայց Նռան ձորի դիրքերում նրանց դէմ ելաւ Խանաբադի վաշտը՝ Սանասարի հրամանատարութեամբ։ Ընդամէնը մի նռնակակէտով կարողացան կանգնեցնել, փախուստի մատնել տանկերով ու զրահամեքենաներով գրոհող թշնամուն։

Մարտերի միջև ընկած դադարների ժամանակ Արթուրն ականապատում էր գիւղի մատոյցները։ Այդ ականները դեռ պիտի աշխատեն, իսկ մէկը պայթելու է Արթուրի գոհուելուց յետոյ...

Արթուրի անունն արդէն յայտնի էր ողջ Արցախին։ Նրա հետ սկսում են խորհրդակցել ականապատելիս, գործողութիւնների պլաններ մշակելու ժամանակ։ Կեանքը ստիպում է։ Արթուրն արդէն հմուտ, փորձուած մարտիկ ու հրամանատար էր։

Մարտի սկզբներին թշնամին Ակերանի մատոյցներում էր։ Փոքրաթիւ ջոկատի գլուխն անցած՝ Արթուրը մասնակցում է Ակերանի պաշտպանութեանը։ Թշնամին յետ է շպրտուում, նահանջում Աղդամ։ Մարտի վերջին Արթուրը գիշերով ականապատում է Աղդամ-Թրամուրթ ճանապարհը։ Առաւօտեան ականը պայթում է՝ օդ հանելով հրոսակներով լի աւտոբուսն ու զինամթերքով լի բեռնատարը։ Միւս ականն աշխատեց 10-12 օր անց՝ երկաթի թափօնի վերածելով թշնամու տանկը։ Իսկ մինչ այդ մէկ այլ ական գործեց Նռան ձորի ճանապարհին։ Թշնամու քարշակն առ այսօր ընկած է այնտեղ։

Ապրիլի 29ին Արթուրը, Արվիդը, Կաուչեն ու Անդրանիկը գիշերով թափանցում են թշնամու դիրքերը, վերացնում երեք ժամապահների, գրաւում գնդացիրը, որը գիշեր-ցերեկ կրակէ կարկուտ էր տեղում գիւղի գլխին։ Հեռանալիս Արթուրը հասցնում է նաեւ ական դնել, որը պայթեց յաջորդ օրը՝ եւս 4 հոգի...

Անհնար է թուարկել Արթուրի բոլոր մարտական գործողութիւնները, սխրանքները, թշնամուն հասցրած կորուստները։

Եկաւ Յունիսի 12ը։ Թշնամու տանկերը դուրս սողացին որջերից։ Լայնածաւալ կազմակերպուած յարձակումը սկսուեց։ Ունենալով տանկերի, զրահատեխնիկայի, հրետանու գերակշռութիւն, յենուելով վարձկան պրոֆեսիոնալների եւ ադրբեջանցի հրոսակների թուական առաւելութեան վրայ՝ թշնամին սկզբնական շրջանում զգալի յաջողութիւնների հասաւ։ Պէտք է խոստովանել, որ հայկական ինքնապաշտպանական ուժերը սկզբում պատրաստ չէին նման լայնածաւալ գործողութիւնների։ Պատերազմը մոռ էր նոր փուլ։ Թշնամին բանակ էր հանել։ Իսկ մերոնք դրան հակադրում էին հին տակտիկան։ Եւ ընկաւ Շահումեանը։ Թշնամին գրաւեց Մարտակերտի հիւսիսային մասը, ներխուժեց Ակերանի շրջանի Նախիջեւանիկ, Փրչամաղ, Աղբուլաղ, Արանզամին, Դահրազ գիւղերը։ Ընկաւ Ակերանի սահմանամերձ հրդ պահակակէտը, որը մեծ ջանքերի գնով յետ վերցրուեց...

Եւ նորից խանաբաղը...

«Գրադ» կայանքներից, հաուբիցներից, ականանետերից հրետակոծելով գիւղն ու պաշտպանական դիրքերը՝ թշնամին գրոհի անցաւ։ Նռան ձորի պահակակէտից տանելով թշնամու յարձակման ահազանգը՝ Արթուրը զորանոցից ջոկատով մեկնեց դիրքերը՝ նոյնիսկ չհասցնելով հագնել զրահագգեստը։ Մարտիկներին դիրքերում տեղաբաշխելով այնպէս, որ հնարաւորին չափ մեծ տարածութիւն վերահսկեն, կարգադրելով խնայել փամփուշտները, «հարուստներին» հրամայելով կիսել չունեցողների հետ, Արթուրը փոքրաթիւ ջոկատի գլուխ անցած՝ բարձրանում է կարաուլկէն տապ, որն առաւել գերակշիռ դիրք ունէր եւ որի անկումը ճակատագրական կը լինէր միւս դիրքերի ու գիւղի համար։

Թշնամու առաջին ջոկատները յայտնուեցին Նռան ձորի դիրքերի դի-

Արթուր Էդուարդի Հայրապետեան ծնուել է Արցախի Ասկերանի շրջանի Խանաբադ գիւղում, 1963 թ.։ Աւարտել է Ստեփանակերտի գիւղատնտեսական տեխնիկումը։ Ծառայել է դեսանտային զօրքում, կամաւոր յաճախել ենթասպայական դասընթացներին։ 1988ի Սեպտեմբերից ռազմագիտութիւն է դասաւանդել Խանաբադի միջնակարգ դպրոցում, ուսուցանել կառատէ։ Սկզբից ի վեր եղել է ինքնապաշտպանութեան կազմակերպիչը, մարտիկն ու ոգին։ Զոհուել է 1992 թ. Յունիսի 12ին։

«ԵՐԿԻՐ»

մաց, սակայն հանդիպելով հուժկու կրակին, տալով 2 զոհ, նահանջեցին, անցան բլրի միւս՝ Նռան ձորի դիրքերից չերեւացող լանջին եւ փորձեցին դաղտագողի բարձրանալ դէպի կարտուշկէն տափ։ Հակառակորդին թողնելով ընդհուպ մօտենալ՝ Արթուրը հրամայեց՝ կրա՛կ։ Առաջին երեք հոգին տապալուեցին։ Արթուրը ինքատը հանեց հակագրոհի։ Թշնամին նոր զոհեր տալով՝ խուճապահար փախաւ։ Եւս 7-8 հոգի սատակեցին Նռան ձորից Խրամորթ տանող ճանապարհին։ Անվրէպ կրակում էր «Մալականը»՝ հեռահար դիպուկ կրակոցներով զգետնելով հինգ ադրբէջանցի։ Առիւծաբար մարտնչում էր Բեղկունց Աշոտը։ Բոլորն անխարդ։

Թշնամու երկու տանկ շարժւում էր դէպի Կարտուշկէն տափ։ Նռան ձորից բերուած նռնակները վերցնելով՝ Արթուրն ու եւս երեք հոգի գաղտագողի մօտեցան տանկերին։ 50-60 մետր էր նրանց բաժանում երկաթէ հրէշներից։ Առաջին իսկ նռնակը հասաւ նպատակակէտին։ Սակայն ՏՏ72 տանկի զրահը մի նռնակով չես ծակի։ Ճանապարհի եզրից Վազգէնի արձակած նռնակը նոյնպէս դիպուկ էր։ Տանկը մի պահ լռեց, ապա կրկին կարգի գցեց շարժիչը, փորձեց շարժուել։ Բայց արդէն ուշ էր։ Արթուրի արձակած 2-3րդ նռնակները վերջնականապէս լռեցրին նրան։ Երկրորդ տանկը փախուստի դիմեց։ Այդ միջոցին յայտնուեց մի զրահամեքենայ եւ խփուած տանկի թիկունքում թաքնուելով՝ կրակի հեղեղ թափեց հայ մարտիկների գլխին։ Բարեբախտաբար ոչ ոք չտուժեց։ Արթուրը փորձեց խոցել տանկի յետեւում թաքնուած զրահամեքենան, սակայն նկատեց, որ անկենդան տանկի փողը դանդաղ ուղղւում է դէպի իրենց.

–Տղանե՛ր, հեռացէք, ես կը պահեմ...

Սրանք նրա վերջին խօսքերն էին։ Տղաները հասցրին թաքնուել։ Իսկ արկը պայթեց Արթուրից 2-3 մետր հեռաւորութեան վրայ...։ Ընկաւ Խանաբադի արծիւը։

...Երբ Արթուրին հանում էին մարտի դաշտից, ու երբ նա վերջին անգամ բացեց Արցախի երկնքի նման կապոյտ ու խորունկ աչքերը, լսուեց մի հզօր պայթիւն։ Արթուրի տեղադրած ականն էր, որը ցաք ու ցրիւ արեց Քարքանդած սողացող տանկին։

Անգամ մահից յետոյ Արթուրը շարունակում էր մարտը... («Երկիր», 4 Յունիս 1992)։

Է. ՍԱՐԳՍԵԱՆ - Խանաբադ
Ց. ՍՈՂՈՄՈՆԵԱՆ

ԸՆԿԱԻ ՄՈՒՐԱՋԸ ՍՐՏՈՒՄ

Արմէնն ասում էր,—
Հայրենիքի համար մարտում ընկնելը
անմահութիւն է։

Արմէն Նիկողոսեանը ծնուել է Մարտակերտի շրջանի Չայլու գիւղում 1972 թ.։ Նոր էր բացուել նրա կեանքի կանաչ գարունը, նոր էր լրացել 21ը։ Հայրը՝ Վանիկ Նիկողոսեանը, գիւղի եւ շրջանի անուանի այգեգործ էր, իր համեստ աշխատանքի պտուղներով լաւ խնամում էր իր 6 երեխան։

Արմէնի մայրը՝ Սեդան, տան տնտեսուհի էր, զբաղւում էր տան գործերով։

Աւագ որդին՝ Արմէնը, միջնակարգ դպրոցն աւարտելուց յետոյ, որոշել էր ուսումը շարունակել բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում, բայց թշնամին Արմէնի երազանքը թողեց անաւարտ։ Գիւղի հասարակութիւնը շատ էին յարգում համեստ ու քաջասիրտ տղային։

Չայլու գիւղը փտանգի տակ էր, Արմէնը ստիպուած եղաւ իր ընկերների հետ գրիչները փոխարինել հրացաններով։ 5 տարի շարունակ կեանքը նուիրել է հարազատ հայրենիքի ազատագրական պայքարին։ Մասնակցել է Շահումեանի՝ Բուզլուխ, Մանաշիդ, Էրքեջ, Հայ Բորիս, Ղարաչինար, Թալիշ գիւղերի եւ Քելբաջարի, Հաթերքի, Կիչանի ազատագրական ճակատամարտերին։ Խիզախը իր արիութեամբ մեծ հեղինակութիւն է ստեղծել ազատամարտիկների շրջանում։

Արմէնն ասում էր,— Հայրենիքի համար մարտում ընկնելը անմահութիւն է։

Յունիսի սկզբում թշնամին իր ուժերը կենտրոնացրել էր Մաղաւուզի շրջակայքում։

Յունիսի 13ի լուսաբացին, թշնամին անցաւ յարձակման. հայոց քաջերը թէկուզ թուով քիչ էին, բայց քաջի սիրտ ունէին, քաջաբար էին կռւում մեր հայոց աշխարհի քաջերը։ Նրանք ջարդեցին թշնամի հրոսակները, թշնամու անթիւ լէշերը մնացին լերան լանջում, թշնամին անցաւ փախուստի, մեր քաջերը գրաւեցին հիմնական լեռնակէտերը։

Թշնամին ակնկալպատել էր գիւղի շրջկայքը, հետախուզութեան ժամանակ Արմէնը Յունիսի 13ին ընկաւ մուրազը սրտում, ընկերները օգնութեան հասան Արմէնին, նրա սիրտը դեռ չէր դադարել։ Ասաց ընկերներին. «Զթողնէք մեր տան լոյսը մարի, իմ փոխարէն մեր տուն կը գնաք. իմ անունից քաղցր կեանք բաշխէք իմ ծնողներին, քոյրերին եւ իմ փոքր եղբօրը։ Ես ձեզ մատաղ եմ, անբաժան ընկերներ, թոյլ չտաք թշնամին ոտք դնի մեր Մայր հողը»։ Խմբովին ասացին Արմէնի ընկերները.— *Երդւում ենք քո առաջ, խոնարհւում Մայր հողի վրայ, մեր արիւնը չենք խնայի Մայր հողի ազատագրման համար։*

Արմէնը ընկաւ մուրազը սրտում (Ձեռագիր)։

ԳՐԻՇԱ ՂՈՒԼԵԱՆ

ՔՈ ՅՈՒՇԸ ԵՐԲԵՔ ՉԻ ԾԵՐԱՆԱՅ...

Այդ օրը՝ Յունիսի 13ին, ինչպէս մարտական ընկերներդ եմ վկայում, ամբողջովին դարձել էիր վրէժ ու ցասում։ Փոքրաթիւ ջոկատով պայքարեցիր մինչեւ վերջ, գերադասեցիր մեռնել, քան թէ հարազատ դարձած գիւղը տեսնել գերեվարուած։

*Ցուշը երբէ՛ք չի ծերանում։ Ցուշը դառնում է այրող կսկիծ ու բաց վէրք, ցաւ ու տառապանք, դառնում է պատից կախուած սեւերիզ լուսանկար ու անդարձ կորստի մշանջենական մորմոք։ Այն աւելի է իմաստաւորւում, երբ ստանում է մի նոր անուանում. «Ցուշ ազատամարտիկ»։ Այդպիսին է այսօր քո յուշը՝ Նորիկ Խաչատրեան։ Դու, որ Հայոց վերազարթօնքի առաջին օրից զինուորագրուեցիր արցախահայութեան արդար պայքարին, երբեք չերկնչեցիր թշնամու դէմ, չխեղճացար։ Քո ջոկատի տղաներով անհաւասար մարտեր մղեցիր Իջեւանի եւ Նոյեմբերեանի, Միսիանի եւ մեր Հանրապետութեան սահմանամերձ միւս շրջանների կրակէ գոտիներում։ Դու, որ ծնուել էիր Երեւանի արուարձաններից մէկում՝ Ցաղթանակ գիւղում, երբեք մտքովդ չէր անցնում, որ գալու է մի օր, երբ, հեռուում թողնելով քո հայրենի գիւղը, ընկեր-տղաների հետ կը մեկնես Արցախ՝ պաշտպանելու Շահումեանի շրջանի երբեմն գիւղը, գիւղ՝ որը դարձաւ քո արդար ու անզիջում պայքարի վերջին մարտավկան։ Այդ օրը՝ Յունիսի 13ին, ինչպէս մարտական ընկերները եմ վկայում, ամբողջովին դարձել էիր վրէժ ու ցասում։ Փոքրաթիւ ջոկատով պայքարեցիր մինչեւ վերջ, գերադասեցիր մեռնել, քան թէ հարազատ դարձած գիւղը տեսնել գերեվարուած։ Եւ փրկելով խաղաղ բնակչութեան կեանքը, կազմակերպելով նրա տեղափոխութիւնն աւելի ապահով վայր, դու խափանեցիր թշնամու տանկի առաջխաղացումը եւ զոհուեցիր վերջին շնչում նրա արձակած արկի բեկորից խոցուած։ Մահ տարածող այդ հակայ մեքենան անդամ խեղճացաւ, տեսնելով քո հերոսական ու ազատամարտիկին**

վայել մահը։ Մարտական ընկերներդ՝ Արկադի Խաչատրեանը, Հայկ Մանուկեանը, Սմբատ Այվազեանը, միւսները այսուհետ չարունակելու են պատմել բոլորին քո իմացեալ մահուան ամէն մի մանրամասն, քո ամէն մի խօսքը սրբութեամբ պատգամելով Գէորգ եւ Հայարփի զաւակներիդ։

Եւ ամէն տարի, Յունուարի 1ին, հաւաքուելով քո հայրական յարկի տակ, սփոփանքի եւ մխիթարանքի խօսքեր կը փնտռենք ասելու Գառնիկ եւ Գայեանէ ծնողներիդ, նորից կը յիշեն քեզ հետ անցկացրած անմոռաց օրերը եւ գլուխ կը խոնարհեն ընդամէնը 30 դարուն բոլորած քո յիշատակի առջեւ։ Եւ ամէն տարի, այդ օրը, Լեոնա եւ Վարդան եղբայրներդ կորստիդ ցաւին խառնելով անթաքոյց հպարտութիւնը, անմահութեան կենաց-բաժակ կը բարձրացնեն քո եւ Արցախեան հերոսամարտում զոհուած մեր բոլո՛ր ազատամարտիկների համար։ Եւ այդ օրը, քո ծննդեան օրը, նրանք կարօտով կը յիշեն նաեւ ընկերներիդ հումորով ասուած քո խօսքը. «Ես երջանիկ մարդ եմ։ Ամէն տարի ամբողջ աշխարհը նշում է իմ ծննդեան տօնը»։ Կը յիշեն ու... կը խեղճանան...

...Հիմա ամառ է եւ ամառնաբոյր 30 մեխակներ են շաղուած մասիսաբլուր լիրմիդ։ Նրանք իրենց այնքա՛ն խօսուն լռութեամբ բոլորին պատմում են քո իմաստուն կեանքի հեքիաթը, որ նման էր լեգենդի («Աւանգարդ»)։

ՍԱՐՕ ԳԷՕՐԳԱԿԵԱՆ

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

Շահումեանում քաջաբար զոհուած
ՆՈՐԻԿ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ յիշատակին

Ընկաւ մարտիկը՝ զուլալ աչքերում
Հայրենի երկրի երկինքը ծաւի,
Ճչո՞ւմ է սիրտս, զարկւում պատէպատ՝
Տենդի փոխարկուած մորմոքից ցաւի։

Ընկաւ մարտիկը ճերոսի մահով
Ու գնաց, ձուլուեց գալիքի լոյսին,
Դարձաւ յաղթութեան սաւառնող ոգի,
Աստղ նա դարձաւ ու կանթեղ լոյսի։

Երբ ողջ էր, ասաց. «Պիտի ծածանուի
Մեր յաղթանակի դրօշը շողուն,
Ու դարձեալ պիտի մատենին ծաղկի,
Նոնենին ծաղկի՝ արցախեան հողում»։

Ու լոյսը կրկին կը բացուի խաղաղ
Արցախի վրայ՝ բարեբեր ու շէն,
Ու ամէն անգամ բացուող լոյսի հետ
Ապրողներն իրեն սիրո՞վ կը յիշեն...

ԳՐԻՇԱ ՂՈՒԼԵԱՆ

ՄԷԿԸ՝ ԵՐԵՔ ՀԱՐԻՒՐԻ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

Ի վերջոյ, յաղթելու է նա, ով կռուի մէջ կեանք է դնում։ Հրանտ Թովմասեանի նման նուիրեալներն են վճռում այս պատերազմի ելքը։

Արցախի մարտադաշտերից եկած լուրերը իրբեմն անհաւատալի թուացող թուեր են հաղորդում։ Մէկ էլ տեսար՝ լսում ենք, որ եօթ հոգով եօթ տանկի ու հարիւրաւոր զինուորների դէմ են կռուել, յետ են շպրտել, մի քանի տանկ ու բազմաթիւ թշնամիներ ոչնչացրել։ Իրենք զոհ չեն տուել, ունեն մէկ կամ երկու թեթեւ վիրաւոր։ Կամ նմանատիպ առասպելախառն պատմութիւններ ենք լսում։ Թէեւ գիտենք, որ հայը կուռում է իր հայրենիքի համար ու աւելի լաւ զինուոր է հնուց անտի, բայց թերահաւատութեան ինչ-որ երանգ կարծես դարձեալ մնում է։ Կարծես մեր գիտակցութեան մէջ կան կաղապարուած ինչ-ինչ պատկերացումներ, որոնք դժկամութեամբ են տեղի տալիս, խոչընդոտում հաւատալ հայոց մարտական զօրութեանն ու ռազմական կարողութեանը։

Մինչեւ ժամանակն է ձերբազատուել այդ մտայնութիւնից։ Ապացոյց՝ Արցախեան յաղթական պատերազմը։ Թուական ու տեխնիկական գերազանցութիւնը լոկ ժամանակաւոր յաջողութիւն կարող են բերել։ Վերջնական յաղթանակը նրանն է, որ առաւել կազմակերպուած է ու խորաթափանց։ Ով արդար կռիւ է մղում։ Ում ոգին առաւել զօրաւոր է։ Թուի, ձիու եւ հրդեհի ժամանակները անցել են վաղուց։ Հիմա մտքի, կազմակերպուածութեան ու ոգու ժամանակն է։ Ի վերջոյ, յաղթելու է նա, ով կռուի մէջ կեանք է դնում։ Սա կարծես գիտակցել են նոյնիսկ թուրքերը։ Քելբաջարի անկման պատճառները մեկնաբանելիս թուրքական ազդեցիկ թերթերից մէկը գրել էր, որ սուտ է ադրբեջանական բանակի վատ զինուածութեան եւ ռուսական զօրքերի մասնակցութեան պատճառաբանութիւնը։ Բուն պատճառն այն է, որ ադրբեջանական բանակը կազմակերպուած չէ, ցաւոտ է մարտական ոգին, զինուորները չեն ուզում կռուել։ Հայերն այս հարցերում գերազանցում են ադրբեջանցիներին։ Ցաղթում են, որովհետեւ ոգով ամուր են։

Հրանտ Թովմասեանի նման նուիրեալներն են վճռում այս պատերազմի ելքը։

[illegible] ԵՍ ՄԻ ԶԱՐԿԵ ԵՄ ՋՈ ԿՈՒՈՒԻ...»

Հրանտն իր կեանքը Արցախեան ազատամարտին նուիրաբերած հերոսներից մէկն է։ Մնուել է Մարտունու շրջանի Արծուանիստ գիւղում։ Ապրեց արծուի նման ու զոհուեց որպէս արծիւ։

1989թց կռիւների մէջ էր։ 1992թ Յունիսին, երբ թշնամին նենգօրէն տիրեց Շահումեանին, Հրանտն իր ընկերների հետ պաշտպանում էր ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող Կիչան-Սրխաւենդ դիրքը։ Թշնամին անընդհատ գրոհում էր։ Ազատամարտիկներն ազատագրել էին գիւղերն ու պաշտպանում էին կեանքի գնով։ Յունիսի 15ին հզօր յարձակում եղաւ։ Թեռ մղուեց։ Այդ ճակատամարտում զոհուեց Հրանտը։ Քորս տեղից վիրաւոր էր, բայց չնահանջեց, չհեռացաւ մարտադաշտից։ Կռուեց մինչեւ արեան վերջին կաթիլը։ Եւ յաղթեց։ Թշնամին աւելի քան 300 զոհ տուեց այդ ճակատամարտում։ Եւ փախաւ։

Ցաղթանակը ձեռք է բերւում նուիրեալների արեան գնով։ Նըւիրեալներին ուժ է տալիս ոգին։ Ոգին սնում է արմատներից։ Արմատ կայ՝ փուչ ու տատասկից է սերում։ Արմատ կայ՝ կաղնի է անասան։ Հրանտի արմատը կաղնի էր. ընկաւ՝ ճզմեց 300 փուչ ու տատասկ։ Ցիշենք նրան։

Եւ յիշենք. անհաւատալի չեն Արցախեան ճակատից եկող առասպելական լուրերը։ Հրանտի նմանների սխրանքի մի մասն են դրանք։ Բայց ճշմարիտ («Երկիր», 15 Յունիս 1993)։

ՍՄԲԱՏ ԱՍԼԱՆԵԱՆ

Շահումեանի շրջան, Երեք Մանկունք վանքը։

«ԵՍ ՄԻ ԶԱՐԿԱ ԵՄ ՔՌ ԿՌՈՒԻ...»

ՈՐՊԷՍ ԱՐՀԱՒԻՐՔՆԵՐԻ ՇԱՆԹԱՐԳԵԼ

Ընկաւ, որ Արցախեան ազատաբաղձ ու արնածոր դրօշներն աւելի բարձր ծածանուեն։ Ընկաւ, որ աւելի ու աւելի յառնի մաքառումը, ընկաւ, որ հաստատուն յաղթանակն ու ազատութիւնը։ Ընկաւ, որ յար ու յաւերժ թեւածի Արցախեան սպառազէն ոգին։

Վլադիմիր Եղիշի Կարապետեան· յաւերժութիւնը դրոշմուած է Արցախի բարձրիկ լեռներին, թշնամական մահաշունչ ամրոցները գրոհող հրասայլերի վրայ, ազատամարտիկների անընաձ հոգիներում...։ Ընկաւ, որ Արցախեան ազատաբաղձ ու արնածոր դրօշներն աւելի բարձր ծածանուեն։ Ընկաւ, որ աւելի ու աւելի յառնի մաքառումը, ընկաւ, որ հաստատուն յաղթանակն ու ազատութիւնը։ Ընկաւ, որ յար ու յաւերժ թեւածի Արցախեան սպառազէն ոգին։ Աչքերում Սեւանի քընքշութիւնները, անբասիր ու վճիտ ցոլքերը, ընկաւ, որ խափանուեն խուճապը, յուսալքութիւնը, անի ու հզօրանայ դիմադրութիւնը, ողջակիզումը դառնայ հուժկու հակագրոհ, համոզուած, որ կենսահաստատ յաղթանակները ծնուում են սխրանքի ու նահատակութեան կրակներից։ Ընկաւ որպէս անմահութեան ընտրեալ՝ հայեացքը Արցախի արեւագոյն բարձունքներին, ժամանակներին, դարերին, սերունդներին նուիրաբերելով կարճատեւ, բայց փոթորկալից մի կեանք։ Ընկաւ, որ յաւիտենապէս զօղանջեն Գողթան երգերին վայել յաղթանակների երկնահաս աղաղակները։

Հայոց ազգային բանակի առաջին հրամանատարն էր, հայրենի հողը նրան միացրեց հայոց առաջինների անմահութեանը։

Վլադիմիր Եղիշի Կարապետեան...

«ԲԱԳԻՆ», էջ 158

Մնունդը Սեւանի ափին, 1955 թուական։ Միջնակարգ դպրոց, սահմանապահ զօրքերի պատրաստման բարձրագոյն ուսումնարան։

Այնուհետեւ՝ բարձրագոյն զինուորական ակադեմիա, եւ... եւ Հայաստանի Հանրապետութեան սահմանապահ զօրամասերի առաջին գնդի հրամանատար։

1992 թուականը եկաւ եւ մնաց. Արցախն սկսել էր քանդել կապկպած ձեռքերը։ Հողն հարազատի արիւն տեսաւ ու հառաչեց։ Արցախեան արնագոյն առաւօտների մէջ քայլում էր Սեւանի սարսուռն ջրերից յառնած ասպետը, որ Սեւանի մաքուր ցոլքերը խառնուեն Արցախեան կապոյտ-կանաչ սարերի երկնամերձ կատարներին։

Եւ... Յունիսի 17։ Գոյժ. «Մառայական պարտականութիւնների կատարման ժամանակ զոհուեց Հանրապետութեան զինուած ուժերի առաջին գնդի հրամանատար, գնդապետ Վլադիմիր Եղիշի Կարապետեանը»։

Սեւանը, Սեւանը պարուրած գլխահակ լեռները արտասւում էին. «Թող նրա արարքը հայրենասիրութեան, ազատագրաղձութեան ակունքներ բացի բոլորիս սրտում»։

Իսկ մարդկային կեանքը ընդամէնը արտայայտում են ծննդեան եւ մահուան թուականները միացնող մի աննշմար գծիկով...

Լաւ է ասուած, անհնար է ապրել հանգիստ եւ լինել երջանիկ, քանի դեռ երկրի վրայ ապրում է թէկուզ մէկ դժբախտ։ Կեանքի նպատակը ամբողջ մարդկութեան բախտաւորութիւնն ու երջանկութիւնն է։ Երկրի վրայ ապրում էր ոչ թէ մէկ դժբախտ, այլ մի ամբողջ ժողովուրդ, հարազատ ժողովուրդը, եւ Վլադիմիրը մահաբեր գնդակներ պարպեց կրծքին, որ համայն մարդկութեան բախտաւորութիւնից եւ երջանկութիւնից իր ժողովրդին էլ բաժին հանի։

Վաղ մանկութիւնից սիրտը լեցուն էր վրէժի ու ցասման անհանդուրժողութեամբ, անմարելի տագնապներով, հասկանում էր, որ սխրանքի, հաւատի, յստակօրէն գիտակցուած նպատակի նուիրեալներն են միայն դիմագրաւում ամէն վտանգ ու փորձութիւն, ժողովրդի ճանապարհը մաքրում խոչ ու խութերից՝ չխնայելով նոյնիսկ կեանքը։

Եւ Վլադիմիրը չխնայեց...

Իբրեւ արծիւ...

Չէ, չիչենք հանրայայտ երգի տողերը...։ Հայ երախտապարտ ժողովուրդն այսօր արդէն նոր երգ է հիւսում, երգլեգենդ՝ պատմութեան յիշողութեանը, նրա յաւերժական փայփայանքին յանձնելով նոր անուն՝ Վլադիմիր Եղիշի Կարապետեան... (Մեքենագիր)։

«Հայաստան» թերթի խմբագրի տեղակալ՝
ՆՈՐԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՈՐԵՐՈՐԴ ԱՐՄԷՆԸ ԿՈՐՑՐԻՆՔ...

«Մենք երկիրն ենք պաշտպանում, իսկ թուրքը նուաճողի, ագրեսորի դերում է։ Նրանց լիովին պարտությունը կասկած չի յարուցում»։

Արմէն Աւագեանը Խանծախի սիրուած ու յարգուած մանկավարժներ Էմմա Վերդեանի եւ Եղիշէ Աւագեանի միակ որդին էր։ Մեր ազատագրական պայքարին նա մասնակցել սկսել է պոլեանիշկո-սաֆոնովեան դժնդակ ռեժիմից էլ շատ առաջ, երբ պլստեղ-պլստեղ վրիժառուների փոքր խմբեր էին կազմըւում՝ մեր ազգային արժանապատուութիւնը ոտնահարող թուրք ելուզակների դէմ պայքարելու համար։ Ապա նա դարձաւ գիւղի ինքնապաշտպանութեան ջոկատի հրամանատարը։ Սկզբում ընդամէնը 8 հոգի էին եւ կուում էին 6 աւտոմատով, յետոյ երկուսն էլ ստացան։ Զէնք ձեռք բերելն այն ժամանակ տղաների համար մի իսկական ուրախութիւն էր։

«Մենք երկիրն ենք պաշտպանում, իսկ թուրքը նուաճողի, ագրեսորի դերում է։ Նրանց լիովին պարտութիւնը կասկած չի յարուցում»— *«Ազատամարտ»* թերթում տպագրուած հարցազրոյցում ասել է Երեւանի հիւանդանոցում ապաքինուող, մարտերում վիրաւորուած ազատամարտիկ Արմէն Աւագեանը։ Դա 1992 թ. Ապրիլին էր։ Իսկ այսօր հայրը դողացող ձեռքերով ինձ է մեկնում սուրբ մասունք դարձած թերթի այն համարը. «Երնէկ այն վիրաւոր ժամանակը լինէր, տղան նորից տուն դառնար ապաքինուած...»։

Արմէնը մասնակցել է Ասկերանի սահմանամերձ բոլոր գիւղերի համար մղուող մարտերին, Զամիլլու, Զանհասան, Խոջալուի ազատագրմանը։

Զանհասանի գրաւման ժամանակ անձնուրացաբար էին կուում Բալլուջայի վաշտի կազմում։ Երկրորդ օրը գիւղը, որտեղից աւերւում էր Ստեփանակերտը, արդէն վնասազերծուել էր։ Ապա մասնակցելով միւս կրակակէտերի ոչնչացմանը, առաջիններից մէկը մտաւ Լաչին։

...Արմէնենց ջոկատը հսկում էր Նախիջեւան-Գեղարուկ գիւղերի սահմանամերձ գօտին։ Ազերիների կողմից գրաւուել էր ցրդ պահակակէտը։ Արմէնն, ընկերների հետ, գիւղից անընդմեջ էր տանում տղաների համար։ Ոտքով էին գնում՝ թշնամուց չնկատուելու համար։ Ցորդացած գետն անցնելիս, արդէն ափին մօտ, ոտքերի տակ հողն անսպասելի փլուեց եւ... ընկերները գտան ու գիւղ հասցրին քաջ հրամանատարի դին։ Դա Յունիսի 28ին էր...

28ամեայ Արմէնը, որ աւարտել էր Երեւանի աւտոմանապարհային տեխնիկումը, երազանքներ շատ ունէր։ Նա նաեւ սպասում էր պատերազմի աւարտին, որ հարսանեկան շղարշով տուն բերի իր սիրածին...

Արմէնն, ընկերներոր քեզնից յետոյ ազատագրեցին Նախիջեւանիկը, Աղբուլաղը, Փրչամայը...։ «Արմէնը միշտ մեզ հետ է,— ասում են նրանք,— նրանից շատ բան ենք սովորել» («Արցախ», 16 Յունուար 1993)։

ԼԻԼԻԹ ԲԱՂՐԵԱՆ

ԱՐՋԸ ԱՋԵՐԻՆԵՐԷՆ ԳԵՐԵՎԱՐԱԾ
ՆԺՈՑԳԻՆ ՎՐԱՑ

ԱՐՋ ԷԴՕ

Բուն անունով էդուարդ (Էդօ), ծածկանունը՝ Արջ։ Տարիքը՝ Խ-բիսունի շուրջ։ Մանուէլին եւ ուրիշներու հետ եղած է «Արաքս» ջոկատի հիմնադիրներէն։ Մասնակցած է Գեղաչէնի եւ Մարտունաշէնի բոլոր կռիւներուն։

Գեղաչէնի պարպումին՝ ուրիշ երեք ազատամարտիկներու հետ եղած է գիւղին սահմաններէն դուրս եկող վերջին երիտասարդը։ Ապա, ազատամարտիկ իր ընկերներուն հետ՝ երկու-երեք անգամ յաջողած է ժիով վերադառնալ Գեղաչէն ու դուրս բերել հոն պահ դրուած կարեւոր քանակութեամբ զինամթերքը։

Արջ էդօ ապա անցած է Շահումեան ու միանալով Շահէն Մեղրեանին՝ մասնակցած է շրջանին մէջ տեղի ունեցած փարթիզանական բոլոր կռիւներուն։

Այն օրերուն ծառացած է երկու հարիւր հոգիներէ բաղկացած ռուսական «Օղակ» գործողութեան դէմ, որ նպատակ ունէր ձերբակալել ու շրջանէն հեռացնել ոչ-շահումեանցի երիտասարդները։

Արջը մասնակցած է նաեւ Խոջալուի, Մայիրէյլիի ու Ղարադաղլուի կռիւներուն։ Զոհուած է վերջինին պաշտպանական մարտերուն։

ԲԱՐԵԿԱՄԻ ՄԸ ՑԻՇՈՂՈՒԹԵՆԷՆ

ՍԽՐԱՆՔԻ ՎԵՀՈՒԹԻՆԸ

Նրա արիւնը դաջուած է թնդանօթին եւ ուժ է տալիս։ Համլետի սխրանքը վեհութիւն է հաղորդում յետնորդներին։

Որքան հեռանում է ժամանակը, այնքան կարեւորւում է հայրենիքի պաշտպանութեան համար ընկած ազատամարտիկների սխրանքը։ Մէկ տարի առաջ՝ Յունիսի 27ին, Իջեւանի շրջանի Սարիգիւղի սահմանային գօտու մարտում զոհուեց դիպուկ թնդանօթաձիգ, կատակասէր եւ կորովի, հաստատակամ ու հայրենի հողին անմնացորդ նուիրուած Համլետ Աթաբեկեանը։

Նշանաւոր մարտից մէկ շաբաթ առաջ Սարիգիւղի տղաները հաւաքուել եւ քննում էին առաջիկայ անելիքները։ Իրավիճակը լարուած էր, գրեթէ ամէն օր թշնամին ռմբակոծում էր սահմանային դիրքերը եւ գիւղը։ Մի քանիսը իրենց երեխաներին եւ կանանց գիւղից հանել էին։ Սպասւում էր թշնամու լայնածաւալ յարձակում։ Տղաներից ոմանք առաջարկում էին երեխաներին եւ կանանց գիւղից ապահով տեղ տանել։ Համլետը դէմ էր։ «Իմ երեք երեխան եւ կինս պէտք է մնան գիւղում, ոչ մի տեղ նրանց չեմ տանի։ Պիտի պստեղ լինեն, որ թշնամու դէմ կռուելիս միշտ յիշեմ, որ յետեւում ընտանիքս է եւ նահանջի ճանապարհ չկայ»,— վճռական ասաց նա։

Համլետը ընկերների համար անվեհերութեան օրինակ էր, թշնամու՝ սարսափը։ Թշնամին շատ էր փորձել լռեցնել «Համլետի թնդանօթը»։ Չէր ստացուել։

...Յունիսի 27ի մարտը ծանր էր։ Ուժգին հրետակոծութիւնից յետոյ թշնամին տանկերով եւ զրահամեքենաներով անցաւ յարձակման։ Սկսեց գործել «Համլետի թնդանօթը»։ Սուրիկը եւ Գուրգէնը յիշում են, թէ Համլետը ինչ արագութեամբ էր նշան վերցնում եւ իրենցից պահանջում արագ գործել։ «Յանկարծ նկատեցի,— շարունակում է Սուրիկը,— որ թշնամու տանկը բարձրանում է այն բարձունքը, որտեղ Արտաւազդի (Արտոյի) ջոկատի տղաներն էին։ Մի պահ շփոթուեցի եւ նայեցի Համլետին։ Նկատել էր։ Դէմքը լարուած էր, բայց՝ հանգիստ։ Թնդանօթը որոտաց։ Տանկը փնչաց ու կանգնեց։ Աշտարակից ծուխ ելաւ։ Ուրախութիւնից ես ու Գուրգէնը վեր ցատկեցինք, բայց Համլետը մեզ սաստեց. «Դրա ժամանակը չէ, արկը բերէք», եւ կրկին արագօրէն

ճշան վերցրեց: Բայց յանկարծ մի քանի քայլ հետու պայթեց թշնամու արկը: Էլ ոչինչ չեմ յիշում»...

Համլետը տեղում զոհուեց, Սուրիկը վիրաւորուեց: «Եթէ տանկը հասնէր բարձունքին, ապա դժուար է ասել, թէ ինչպէս կը լինէր ջոկատիս տղաների ճակատագիրը,— ասում է հրամանատար Արտոն եւ շարունակում: —Բարձունքը ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունի, եւ նրա անկումը կը վտանգէր ամբողջ շրջանը: Տանկը խփելուց յետոյ տղաները սրտապնդուեցին եւ անցան հակայարձակման...: Թշնամին նահանջեց»:

...Մէկ տարի է անցել Համլետ Աթաբեկեանի մահուանից: Բարձունքը, որտեղ ընկաւ նա, ուխտատեղի է դարձել: Այնտեղ հաստատուն կանգնած է «Համլետի թնդանօթը» եւ անվրէպ գործում է, երբ թշնամին ոտնձգութիւն է անում: Փոխուել է թնդանօթը սպասարկող անձնակազմը, բայց բոլորը ասում են՝ «Համլետի թնդանօթը»: Նրա արիւնը դաջուած է թնդանօթին եւ ուժ է տալիս: Համլետի սխրանքը վեհութիւն է հաղորդում յետնորդներին («Երկիր», 26 Յունիս 1993):

ՌԱՖԻԿ ՂԱԶԱՐԵԱՆ



ԱՐԻՍ ՅԱԿՈԲԻ ԲԱԲԱՅԵԱՆ (ՊԱՊ)

«Այս վճռական պահին, բոլորս՝ անել ու ջանել, պէտք է պաշտպանենք մեր հայրենիքը եւ ստեղծենք Անկախ եւ Միացեալ Հայաստան...»։

Ա. ԲԱԲԱՅԵԱՆ

«Արարատեան դաշտի արծիւն ընկաւ Արցախի լեռներում». Պապի (այդպէս էինք նրան անուանում) թաղման օրը այսպէս էր ազդարարում ագոյ պատարը։ Այո՛, Արարատեան վեհ լեռների արծիւ էր նա, մի փառաւոր արծիւ։ Նա ծնունդով Տաւուշի շրջանի Այգեձոր գիւղից էր, բայց հայրենանուէր արծիւը սաւառնում էր հայրենիքի թէժ կէտերում եւ օգնութեան հասնում երիտասարդներիս ու անփորձ պատանիներին։

3 տարեկանից նա կորցրել է հօրը՝ Ցակոբ Բաբայեանին, որը նոյնպէս զոհուել է հայրենիքի համար՝ Խորհրդային հայրենիքի, զոհուել է հերոսաբար, բայց, ցաւո՛ք, հայրենի հողում չի թաղուել։ 3 տարեկան երեխայի մէջ տպաւորուել է հօր հայրենասիրութիւնը եւ նա մեծացել է հայրենասէր, յարգալից իր ժողովրդի հանդէպ։ Նա մինչեւ վերջերս փնտռում էր իր հօր գերեզմանը եւ հանգստացաւ միայն, երբ համապատասխան փաստաթուղթ ստացաւ այդ փաստի կապակցութեամբ։ Դժուարին պատանեկութիւն է ունեցել Արիսը։ Ուսման տենչով նա եկել է քաղաք, ընդունուել գիւղատնտեսական ինստիտուտ՝ գիւղ վերադառնալու նպատակով։ Սակայն ճակատագիրը նրան տարաւ այլ ուղղութեամբ։ Չգտնելով փառքի եւ պաշտօնի (իսկ հնարաւորութիւնները շատ մեծ էին այն ժամանակ) նա աշխատեց բանուորների հետ, հասկացաւ այդ կեանքի դժուարութիւնները եւ... 1988թ. Փետրուարից նոր կեանք սկսուեց նրա համար։ Ազգային դաղափարները նրան տարան Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն, որտեղ նա հպարտութեամբ էր կրում «դաշնակցական» անունը։ Նա իր ժողովրդի նուիրեալ զինուորը դարձաւ՝ պատրաստ ցանկացած դժուարութիւնների ու անձնազոհութիւնների։ Նրան մենք Պապ էինք անուանում, իսկ Ֆիզիքապէս նա շատ ուժեղ էր, անխոնջ, եռանդուն եւ հոգեպէս շատ առոյգ։ Նա այնտեղ էր, որտեղ առկայ էին դժուարու-

Ազատամարտիկ Արիս Բաբայեանը զինակիցներու հետ, կեդրոնը՝ կանգնած

թիւնն ու վտանգը, որտեղ օգնութեան կարիք կար։ Նա մասնակցում էր թե՛ Հայաստանի սահմանամերձ կռիւներին, թե՛ Արցախի թէժ մարտերին։ Եղել է Արցախի համարեա բոլոր շրջաններում, մագլցել է նրա սարերն ու լեռները։ Շուշիի ազատագրումը նրա կեանքի ամենաերջանիկ օրերից մէկն էր։ Իւրաքանչիւր անգամ, երբ կռուի էինք գնում, հաչուի առնելով նրա տարիքը խնդրում էինք, որ նա չմասնակցի, բայց դա մեծ վիրաւորանք էր Պապի համար։ «Էս կռիւը, ձեր կռիւը չէ, դուք պէտք է սերունդ տաք մեր ազգին, բազմացնէք այն, ես իմ պարտքը կատարել եմ...» եւ գալիս էր մեզ հետ։ Նա չափազանց համեստ էր ու ծանրակշիռ, իր մասին շատ քիչ էր խօսում, չնայած կեանքի շատ մեծ փորձ ունէր եւ շատ բան էր տեսել կեանքում։ Նա միայն լուռ ժպտում էր «Բեխի» տակ եւ իրեն իւրայատուկ կատակասիրութեամբ մի դիպուկ բան ասում։

1992 Յունիսին թէժացան մարտերը Շահումեանում, օրհասական մարտեր էին մղւում Մարտակերտում։ Ճանապարհները եւ անտառները լցուած էին փախստականներով։ Կարծես 1915ի կրկնութիւնն էր...։ Նա չկարողացաւ այս ամէնին նայել անտարբերութեամբ եւ նորից նետուեց մարտի, բայց... այս անգամ, ցաւօք, անվերադարձ։ Յունիսի 21ը նրա կեանքի վերջին կանգառը եղաւ։ Նա իր սիրտը յաւերժ թողեց Արցախում։

Դժուար է գրել մարտական ընկերոջ մասին, այն էլ անցեալ ժամանակով։ Նա իր կեանքն ապրեց մամի նման անմնացորդ այլուելով՝ լոյս ու ջերմութիւն տալով իր շրջապատին, իսկական մարգու օրինակ ծառայելով իր ընտանիքի եւ ազգի համար։ Ես հաւատում եմ, որ նրա հոգին դեռ սաւառնում է Արցախի երկնքում եւ օգնում իր մարտական ընկերներին դժուար պահերին...

Զոհուելուց մի քանի ամիս անց թոռնիկ ծնուեց նրան՝ Արիս Յակոբի Բաբայեանը՝ երկրորդ Արիսը։ Յուսանք, որ թոռը կ'ապրի Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանում, որի համար կռուում էր Պապը՝ Արիս Յակոբի Բաբայեանը։ Յաւե՛րժ փառք նրա հոգուն (Զեռագիր)։

1992

ՍՈՒՐԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
(Ընկերոջ յուշատետրից)

ՀԱՅԵԱՑՔ

Երբ դու գնացիր, յաղթանակի լոյս դրոշմն էր փայլում քո դէմքին,
Դու գիտէիր քո հերոս նախնիների նման, որ հայ ազգը
Երբեք պարտութիւն չի ճանաչել, չի յանձնել երբեք
Հէնց էնպէս իր քերդը, իր հողն ու տաճարը այլազգի ոտքին։

Դու գիտէիր, որ քո երակներում հոսում է դարաւոր պատմութիւն
ունեցող հայ մարդու արիւնը
Եւ որ այդ արեան գնով է Հայոց պատմութիւնը դարձել դարաւոր,
Ու դո՛ւ էլ պատրաստ էիր այդ արիւնը տալու, որպէսզի
Ազնիւատուի Հայոց պատմութիւնը, այլ շարունակուի սերունդների համար։

Եւ այդ պահը չուշացաւ...
Երբ դու գնացիր, յաղթանակի լոյս դրոշմն էր փայլում քո դէմքին,
Դու գիտէիր, որ քո սրբազան պարտքն ես կատարում հայ ազգի առաջ,
Քո զաւակների, քո կնոջ առաջ։

Դու գիտէիր, որ հայը կոչւում է հա՛յ,
Որովհետեւ նա գիտէ ազատութիւն նուաճելու գինը,
Գիտէ արդար դատերու գինը,
Իսկ ազատութիւնը նուաճւում է լոկ անձնազոհութեան գնով,
Նուաճւում է այն թանկագին՝ երբեք ետ չվերադարձուող արեան գնով։

1992 թ. ՑԱՄՄԻԿ ԲԱԲԱՑԵԱՆ

ՅԻՇԵՆՔ ՆՐԱՆ

Պապի Յիշատակին

Ցանուն Մայր հողի ազատագրման,
Ցանուն հայ ազգի գոյապահպանման,
Նա նետուեց մարտի, բայց հաւատացէ՛ք,
Ոչ յանուն փառքի, կամ էլ մենարման։

Յիշենք յաւէտ՝ ԱՐԻՄ ԲԱԲԱՑԵԱՆ,
Լուռ ու ինքնամփոփ եւ միշտ մտախոհ,
Մայր հողի համար ազնիւ մարտնչող,
Հայ ազգի համար մի համեստ զինուոր։

Իմ հայ ժողովուրդ, այսպիսին էր նա,
Սակայն հեռացաւ... այլեւս չկայ...
Միշտ յիշենք նրան եւ լուռ խոնարհուենք,
Խոնարհուենք սիրով Արիսի վրայ...

3-19-1992, *Երեւան* ԳԱՑԵԱՆԷ ՓԱՑՏԵԱՆ

ՊԱՊԸ

Կեանք տեսած մարդ էր, հարուստ կենսափորձ ունէր ու կիսում էր երիտասարդ ընկերների հետ։ Կենսափորձը կիսում էր, վտանգը՝ ոչ։ Վտանգն իր վրայ էր վերցնում անմնացորդ։

Ռազմիկները հնուց անտի չգրուած օրէնք ունեն. ամենավտանգաւոր ռազմական գործողութիւններին գնում են ժառանգ ունեցողները։ Թւում է, թէ հակառակը պիտի լինէր, պիտի չամուսնացածներն ու անժառանգները առաջին հերթին վտանգէին իրենց այն պարզ պատճառով, որ իրենցից յետոյ որբ չթողնեն։ Սակայն ուրիշ է ռազմիկի հոգեբանութիւնը։ Անժառանգներին հնարաւորին չափ խնայում են, որ ժառանգ ունենան, կուիւը շարունակող ունենան։

Մարտական ընկերները Պապ էին ասում տարիքի պատճառով։ 54 տարեկան էր։ Բայց զինուորագրուեց Արցախեան ազատամարտին։ Մարտնչում էր երիտասարդական ուժգնով։ Կեանք տեսած մարդ էր, հարուստ կենսափորձ ունէր ու կիսում էր երիտասարդ ընկերների հետ։ Կենսափորձը կիսում էր, վտանգը՝ ոչ։ Վտանգն իր վրայ էր վերցնում անմնացորդ։

Շարքային մարդ էր, բանուոր էր։ Մնուել է Տաւուշի շրջանի Այգեձոր գիւղում։ Ճակատագիրը հանեց հայրենի գիւղից, եկաւ, բնակութիւն հաստատեց Արարատեան դաշտում։ Արծուի ըմբոստ բնաւորութիւն ունէր։ Ու զոհուեց արծուի նման։ Նրա յուզարկաւորութեան ոգոյ պաստառին հէնց այդ էր գրուած. «Արարատեան դաշտի արծիւն ընկաւ Արցախի լեռներում»։

Ապրում էր՝ ինչպէս շատերս։ Աշխատում էր, երեխայ էր մեծացնում։ Բայց եկաւ 88 թուականն ու կեանքի խաղաղ ընթացքի մէջ կայծ յայտնուեց։ Անդամագրուեց Դաշնակցութեանը, ամբողջութեամբ նուիրուեց պայքարին։ Կռուեց Հայաստանի սահմաններում, մարտնչեց Արցախում։ Շուշիի ազատագրման օրը նրա կեանքի ամենաերջանիկ օրն էր։ Աւելի երջանիկ՝ քան անդրանիկ զաւակի ծննդեան օրը։

92 թուականի Յունիսը ծանր ամիս էր։ Թէժ մարտեր էին Մարտակերտի շրջանում։ Պապն ինչպէս միշտ, մարտադաշտում էր, առաջին գծում։ Ինչպէս միշտ, վտանգն ամբողջութեամբ իր վրայ էր վերցրել։ Ցաւօք, խոցուեց թշնամու գնդակից։ Յունիսի 21ին Մարտակերտի մատոյցներում մահացու խոցուած ընկաւ Ճամբեայ ազատամարտիկը։ Ապրեց մոմի նման՝ անմնացորդ այրուելով, լոյս ու ջերմութիւն տալով ընտանիքին, հայրենիքին, մարտական ընկերներին։

Զոհուելուց մի քանի ամիս անց թոռնիկ ունեցաւ՝ մի նոր Արիս Յակոբի Բաբայեան։ Յուսանք, որ թոռը կ'ապրի պապի երազած Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանում։ Կ'ապրի անպայման՝ քանզի Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի արմատները ոռոգուում եւ զօրանում են Պապ մականունով ազատամարտիկի օրինակին հետեւող նորանոր նուիրեալների արեամբ («Երկիր», 7 Օգոստոս 1993)։

Ս. Ս.



Գր. (Նշան) Ցարութիւնեան

ԱՆՀԵՏ

...Նրանք գերի չեն յանձնւում։ Իսկ եթէ գերի են ընկնում, ուրեմն իմացէք՝ ուշաթափ են եղել ու ձգանը սեղմելու կամ

Ազատամարտիկները անհուն ցաւով են վերյիշում անհետ կորած ընկերներին։ Աւելի մեծ ցաւով, քան զոհուածներին։ Ասում են. աւելի լաւ է խփուած լինի, միայն թէ գերի ընկած չլինի։ Գուցէ դաժան ու անմարդկային է հնչում։ Սակայն մահ տեսած մարդու ճշմարտութիւն է, ազատամարտիկի չգրուած կոդեքսի հիմնադրութիւնից մէկը։ Նրանք գերի չեն յանձնւում։ Մարտի ելնող իւրաքանչիւր ոք գիտի. կարող է գալ մի այնպիսի պահ, երբ ստիպուած է լինելու ափի մէջ պայթեցնել նռնակը կամ աւտոմատի փողն ուղղել իր կրծքին։ Մարտի ելնել՝ նշանակում է պատրաստ լինել նաև սրան։ Հայ ազատամարտիկները այսպիսին են։ Նրանք գերի չեն յանձնւում։ Իսկ եթէ գերի են ընկնում, ուրեմն իմացէք՝ ուշաթափ են եղել ու ձգանը սեղմելու կամ օղակը քաշելու հնարաւորութիւն չեն ունեցել։ Եթէ անհետ կորել են, ուրեմն իմացէք՝ 90 առ 100 զոհուել են։ Անշուշտ դաժան է հնչում։ Բայց ազատամարտիկներն այսպէս են մտածում։ Ու երբ ազատագրում են որեւէ տարածք, ուր նախկինում կռուել են, բայց ստիպուած թողել, անտառներում ու կիրճերում անհետ կորած ընկերների հետքերը փնտռելիս երկու բան են երազում. գտնել նրանց՝ կենդանի կամ մեռած։ Փառք Աստծոյ, եթէ ողջ գտնեն։ Բայց փառք են տալիս, երբ գտնում են ընկերոջ դին չպղծուած...

92 թուականի Ցունիսին Էջմիածնի ջոկատը մարտնչում էր Հադրութի Ցոր գիւղի մերձակայքում։ Ջոկատի կազմում էին նաև Էջմիածնի Այգեկ գիւղի բնակիչ Գրիգոր (Նշան) Ցարութիւնեանը, Բաղրամեան աւանի ծնունդ Մուրադ Ցովհաննիսեանը եւ Հադրութցի Գիշան։ Ադրբեջանի անցողիկ յաղթանակների ժամանակն էր, ու թշնամու գերակշիռ ուժերի ճնշման տակ ջոկատը ստիպուած էր նահանջել։ Երեք ընկերներին հրամայուեց պաշտպանել ջոկատի նահանջը։ Մարտը կատաղի էր ու երկարատեւ։ Նշանը, Մուրադն ու Գիշան երեքով կարողացան մինչեւ ուշ երեկոյ կասեցնել թշնամու գրոհը։ Բայց երբ ջոկատը դուրս եկաւ շրջապատումից եւ մերձակայ բարձունքի վրայ դիրքաւոր-

ԿՈՐԱԾՆԵՐԸ

Մուրադ Յովհաննիսեան

օղակը քաշելու հնարաւորութիւն չեն ունեցել։ Եթէ անհետ կորել են, ուրեմն իմացէք՝ 99 առ 100 զոհուել են։

ւելով՝ պատրաստւում էր ապահովել ետնապահների նահանջը, ուղիղ խրամատի մէջ պայթեց թշնամու արկը...։ Խրամատը գրոհով լեռ նը-ւաճելը անհնար էր։ Զոկատը հեռացաւ՝ իր հետ կիրճերի խորքը տանելով մարող կասկածը. ի՞նչ եղաւ տղաները։ Զոհուեցի՞ն, թէ...

...Իսկ երբ աւելի քան մէկ տարի անց Յոր գիւղն ազատագրուեց, ու խաղաղութիւն իջաւ յոգնատանջ հողին, Էջմիածնի ջոկատի առաջին հոգսը եղաւ կորած ընկերների հետքերը որոնելը։ Ու դժուար է ասել, վի՞շտն էր շատ, թէ՞ ցաւագին հանգստութիւնը, երբ խրամատում յայտնաբերեցին զոհուած ընկերներին։ Մի տարի էր անցել...

Մուրադն ու Գիշան արժանացան հայրենի հողին։

Նշանը փորձուած ռազմիկ էր։ Կեանքի 30 տարիներից 4ը անց էր կացրել մարտերի մէջ։ Կռուել էր Էրքեջում, Բուզլուխում, Գիւլիստանում, Հադրութում։ Հ.Ց.Դ. անդամ էր։ Երկու երեխայ եւ երկու երազանք ունէր. ազատագրել Արցախն ու կեանքը նուիրել երեխաներին։ Բախտը չժպտաց նրան։ Ընկաւ զինուորի պարտականութիւնը կատարելիս։

Մուրադը իրաքցի հայրենադարձի զաւակ էր։ Դիմում էր տուել Հ.Ց.Դ. շարքերն անցնելու։ Չէր թաքցնում նպատակը. ուզում էր զէնքը ձեռքին Արցախում մարտնչելու հնարաւորութիւն ստանալ։ Հասաւ նը-պատակին։ Ափսո՜ս, ընդհատուեց մատաղ կեանքը։

Դժբախտաբար չկարողացանք տեղեկութիւններ իմանալ Գիշայի մասին։ Մի բան անկասկած է. արժանաւոր արցախցի էր, եւ ուրեմն՝ խիզախ մարտիկ ու հաւատարիմ զինուոր։

Աւելի քան մէկ տարի անհետ կորած էին նրանք։ Այժմ յայտնի են. երեք խիզախ հայորդի կեանքները նուիրաբերեցին հայրենիքին։ Երեք չքնաղ հոգի անցան անմահների շարքը («Երկիր», 15 Սեպտեմբեր 1993)։

Ց. Ս.

«ԾԱՂԻԿՆ ԱՅԴ ԱՐԵԱՄԲ Է ԾՆԻՈՒՄ...»

92 թուականի Յուլիսի 3ին մարտական կարեւոր առաջադրանք կատարելիս Միւրիչէն գիւղի մօտ ականի պայթիւնից զոհուեցին դաշնակցական առաջին գումարտակի մարտիկներ Վարդան Ստեփանեանը, Արմէն Երիցեանը (Երո), Արա Աւագեանը (Արայիկ)։

«ԵՐԿԻՐ»

ՎԱՐԴԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ (ԴՈՒՇՄԱՆ)

«Մէջ, քո մահն անգամ ինձ յետ չի պահի։ Քեզանից թանկ բան կայ՝ ազգ ու հայրենիք...»։
ԴՈՒՇՄԱՆ

...Աֆղանստանում ծառայելիս եղաւ, որ մի ամբողջ օր մնաց զոհուած ընկերոջ՝ Սերեոժայի դիակի մօտ։ Պաշտպանեց դիակը, թոյլ չտուեց գերել ու պղծել, թոյլ չտուեց բորենիներին կեր դառնայ։ Բնաւորութեան ու խառնուածքի արտայայտութիւն էր։ Ընկերներին նուիրուած ու հաւատարիմ էր օտար Աֆղանստանում։ Անսահման նուիրուածութիւն ցուցաբերեց յետոյ Արցախում։ Տղամարդին վայել ոգեմիկ էր ու ընկեր։

Մեծ է հայրենիքի զոհասեղանը։ Ու մերօրեայ նահատակները մէկիկ-մէկիկ անմահանում են այդ զոհասեղանին։ Արդէն մէկ տարի է՝ իր կեանքն հայրենիքին մատաղ արեց Վարդանը։ Արդէն մէկ տարի է՝ նրա խիզախ ու առաքինի մարմինը հանգչում է հայրենի հողում։ Հող, որի համար ոչինչ չխնայեց Վարդանը, կռուեց, նահատակուեց։

Կուում էր խիզախորեն, դասակի հրամանատար էր՝ միշտ առաջին գծում: Բազմաթիվ մարտերի է մասնակցել, մարտնչել է Կրկժանում, Խոջալուում, Բուզլուխում, Մանաշիդում, Ծուշիում, Զարիսլուում: Արցախում գրեթէ վայր չկայ, որ Վարդանը կռուած չլինի: Ձեռքերին ոչ տեղ չկար՝ անմատչելի լեռները մագլցելիս քերծուել էին խիզախ ռազմիկի ձեռքերը: Մարմինը սպիներով էր ծածկուած: Կուում էր բռնագաղթած նախնիների տխուր ու զոհուած ընկերների վրէժը սրտում: Ղազանչեցոց եկեղեցու մօտ, պապերի շիրիմների կողքին տուն էր վերցրել՝ յաղթանակից յետոյ Արցախում էր ապրելու: Աւա՜ղ, չտեսաւ յաղթանակը, զոհուեց:

—Մէր, քո մահն անգամ ինձ յետ չի պահի: Քեզանից թանկ բան կայ՝ ազգ ու հայրենիք...

Դաժան է ասել: Բայց այդպէս էր մտածում ու ապրում: Այդպէս էր մարտնչում:

Բանաստեղծութիւններ էր գրում: Այս հրապարակման վերնագիրը նրա մի տողն է. «*Մաղիկն այդ արեամբ է ծնուում...*»: Կարդանք մէկ էլ. «*Մաղիկն այդ արեամբ է ծնուում*». վերստին՝ «*Մաղիկն այդ արեամբ է ծընուում...*»:

Հայ ժողովուրդը դեռ յետոյ է գնահատելու իր հերոս զաւակների սրխրանքն ու ծառայութիւնը: Ցետոյ է պանթէոն ու յուշարձան կանգնեցնելու: Վարդանի անունն այնտեղ իր արժանի տեղն ունի:

ԱՐՄԷՆ ԵՐԻՑԵԱՆ (ԵՐՕ)

Էրզրումից գաղթած պապերի յիշատակը, Ղարաբաղում տանջուող ժողովուրդը վրէժի էր կոչում: Զէնք վերցրեց, վրէժխնդիր եղաւ: Մարտնչեց խիզախորէն, զոհուեց հերոսաբար:

Մինչ այդ այլ էր ամէն բան...

Ցերին աւարտեց պոլիտեխնիկ ինստիտուտը: Կիբեռնետիկ էր: Աշխատում էր: Ողջ ազատ ժամանակը Սեւանում էր անցկացնում: Խելագարի նըման սիրում էր ջուր, առագաստ, նաւակ: Այրիվանքի մօտ գիշերները թաւ բարիտոնն էր հնչում՝ երգում էր, նուագում ու կատակում: Անընդհատ կատակում էր: Մեղմ ու բարի խենթ էր: Ապրում էր խենթի պէս, մինչեւ...

Ցեի խռովայոյզ տարերքն ամբողջովին համակեց նրան: Տրուեց պայքարին ինչպէս ջրին էր տրուում՝ խենթօրէն, ժպտադէմ: Թափառական հոգին հանգրուան գտաւ՝ Արցախը, կռիւը: Անհետանում էր օրերով՝ մէկ Նոյեմ-

բերեանում էր, մէկ Եղեգնաձորում: Այնտեղ էր, ուր մարտիկի կարիք կար: Յետոյ գնաց Բերդաձոր: Իսկ յետոյ՝ Արցախ: Հիմնաւորապէս գնաց: Էրզրումից գաղթած պապերի յիշատակը, Ղարաբաղում տանջուող ժողովուրդը վրէժի էր կոչում: Զէնք վերցրեց, վրէժխնդիր եղաւ: Մարտնչեց խիզախօրէն, զոհուեց հերոսաբար:

Ռադիստ էր: Անխափան էր պահում կապը: Ընկերները գիտէին՝ եթէ Երոն իրենց հետ է, ուրեմն կապ միշտ կը լինի: Իսկ մարտի դաշտում կապը երբեմն փամփուշտից կարեւոր է:

Դաշնակցական էր բառիս բուն իմաստով: Յուլիսի 31 չարաբաստիկ օրը կարող էր չգնալ գործողութեան: Նրան այդպիսի առաջարկ արուել էր: Բայց Երոն չէր կարող չգնալ: Չէր կարող հրամանատարին ու ընկերներին մենակ թողնել: Չէր կարող կռուից հեռու մնալ: Ու գնաց: Վերջին անգամ: Գնաց Երոն՝ ժպտադէմ ու խենթ ազատամարտիկ Արմէն Երիցեանը:

ԱՐԱ ԱԻԱԳԵԱՆ (ԱՐԱՅԻԿ)

Ժամ առաջ ուզում էր տեսնել, թէ ինչպէս է Արցախը միանում Մայր հայրենիքին: Երջանիկ էր: Արտասուում էր: Զգայուն էր անչափ: Եւ նոյնչափ խիզախ: Ափսո՜ս, կարճ տեւեց նրա կեանքը: Ափսո՜ս, քիչ կարողացաւ ծառայել:

Ծանօթացանք ինքնաթիռում: Երեք օր շարունակ փորձում էր Արցախ գնալ: Վերջապէս մի օր կարողացաւ ինքնաթիռ խցկուել: Ինքն էլ ստոյգ չգիտէր, թէ ինչու է գնում: Ասում էր, թէ ուզում է Ծուշին տեսնել...

Ստեփանակերտի օդակայանում խառնաշփոթ էր. Աղդամից անընդհատ հրետակոծում էին: Առաջին անգամ էր նրա գլխավերեւում «գրադ» պայթում: Բայց բնաւ վախեցած չէր. աւելի՛ն. ժպիտ կար աչքերում, մի տեսակ երանութեան մէջ էր:

Հրաժեշտ էր տալու, բայց կառչեց ինձնից, խնդրեց տանել Ծուշի: Գրնացինք: Մանն եկաւ, մոմ վառեց, հետներս եկաւ զօրանոց ու... մնաց: Կոոպերատոր էր, յաջողակ գործի տէր: Բայց ծանօթացաւ խիզախ, փորձուած մարտիկներ Արամի, Արթուրի, Իգորի եւ միւսների հետ: Տեսաւ Ծուշին, տեսաւ կռիւն ու մնաց: Դուշման Վարդանից անբաժան էր: Համեստ էր, խոնարհ, կատարում էր ընկերների հրաւանչիւր խնդրանք, ամէն տեսակ ծառայութիւն էր մատուցում: Եւ դարձաւ ընկերների սիրելին:

Ցիշում եմ՝ մտնում էինք Լաչին: Մանկան պէս անհամբեր էր դարձել: Ժամ առաջ ուզում էր տեսնել, թէ ինչպէս է Արցախը միանում Մայր Հայրենիքին: Տեսաւ: Երջանիկ էր: Արտասւում էր: Զգալում էր անչափ: Եւ նոյնչափ խիզախ: Ափսո՞ս, կարճ տեւեց նրա կեանքը: Ափսո՞ս, քիչ կարողացաւ ծառայել: Զոհուեց Արայիկը՝ հրամանատարի ու մարտական ընկերոջ կողքին: Եւ իր համեստ տեղը կը գրաւի նրանց կողքին նաեւ յաւերժութեան մէջ:

Երեք ընկեր էին: Կռուեցին միասին, միմեանց հետ կիսեցին զինուորի դժուարութիւնները ու ուրախութիւնները: Զոհուեցին միասին: Միախառնուեցին Աւարայրի, Սարդարապատի ազատամարտիկների լուսապսակ բազմութեանը՝ որ արեամբ ծնուի ծաղիկն ազատութեան... («Երկիր», 6 Յուլիս 1993):

Ս. Ա.

ԵՒՍ 3 ՆԱՀԱՏԱԿ

Յուլիսի 9ին, տառապած հողը մայրական գիրկն առաւ իր համար արիւն ու քրտինք տուած, հայոց ազնուական ու ըմբոստ գէնքը կրող եւս երեք զաւակներին: Ցաւ, ցաւ, ցաւ: Քո ցաւի բեռը ծանր եղաւ տղերքի համար, ներիր ու տաք պահիր, պահպանիր նրանց խոցուած մարմինները, խռովուած Մայր հող: Այսօր չատերիս կողմից ըստ արժանւոյն չի գնահատւում զոհողութիւնների այս շարքը՝ որպէս գին, հայրենի հողի երկրի փրկութեան դիմաց: Այսօր ցաւալիօրէն նօսր են շարքերը լաւագոյն տղերքի եւ, հետեւաբար, դժուար նրանց համար: Այսօր մենք, աւա՜ղ, աւելի շատ կորուստներ ենք ունենում, քան կարող էինք եւ պէտք է, որ ունենայինք: Այլ ելք, սակայն, չկայ: Մաքառելով, մեռնելով յաղթելու, չուրջն օձ թիկունքին չնայելով, կրակի մէջ նետուելու ուղին միակն է, եւ իր արժեւորումն է ստացել մարտիրոսուած սերունդների դարաւոր մաքառումների դպրոցում: Այսօրուայ զոհաբերման գնացողների անձնազոհութեան արդիւնքն կը լինի գալիք պայծառ ապագան:

«ԱԶԱՏԱՄԱՐՏ»

ՆԵԼՍՈՆ ՎԱԶԳԷՆԻ ԱԹԱԲԵԿԵԱՆ

Ծնուել է 1953 թ. Յունուարի 22ին՝ Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանում։

1970 թուականին աւարտել է կուսապատ գիւղի միջնակարգ դպրոցը։

1970 թ. ընդունուել է Երեւանի հիդրոմելիորատիւ տեխնիկումը։ 1971 թ. զօրակոչուել է Խորհրդային բանակ։ 1973 թ. զօրացրուել եւ աւարտել է տեխնիկումը՝ 1977 թ.։ Նոյն թուականից ընդունուել է «Հայպետհողշինն» նախագծային ինստիտուտը որպէս տեխնիկ։

1980-1986 թ.թ. աշխատանքին զուգահեռ աւարտել է Մոսկուայի ինժեներ-հողաշինարարական ինստիտուտը։

Նա տիրապետում էր թէ՛ գեոդեզիական, թէ՛ հողաշինարարական աշխատանքներին։

Կարճ ժամանակում աճեց մինչեւ արշաւախմբի պետի պաշտօնը։ Շատ օգնեց նոր կադրերի պատրաստմանը։

1988 թ. երկրաշարժի օրերից սկսած մեկնեց Աղէտի գօտի։ Շատ դժուարին եւ կարեւոր աշխատանքներ կատարեց Աղէտի գօտու բոլոր շրջաններում։

1989 թ. Մայիս ամսից աշխատում էր Ղարաբաղում «Վարանդա» արշաւախմբի պետ։

Նելսոն Վազգէնի Աթաբեկեանը ակտիւ մասնակից էր ազատագրական պայքարում։

Զոհուեց 1992 թ. Յուլիսի 23ին՝ Մարտակերտի շրջանի Ն. Հոռաթաղ գիւղի պաշտպանութեան ժամանակ՝ որպէս հայրենասէր (Ձեռագիր)։

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

«ԳՆՈՒՄ ԵՄ ՂԱՐԱԲԱՂ։ ՊԻՏԻ ԿՌՈՒԵՄ»

...Նրանց սպասում է Արցախը, որի ազատ քաղաքացիներն ու մարտիկները լինելու պահանջով հայ մանուկն այսօր մեծանում է Սասունցի Դաւթի նման՝ օրէցօր։

Կինը չէր կարողանում խոսել։ Ցուցուած էր։ Աչքերում անընդհատ լճանում էր արտասուքը։ Ձայնը բեկւում էր։ Խմբագրութեան խնդրանքով եկել էր պատմելու զոհուած ամուսնու մասին։ Փորձում էր յաղթահարել յուզմունքը։ Բայց չէր կարողանում խոսել։ Ծա, որ պարտաւոր էի հանդիսատացնել նրան, հարցերով ուղղութիւն տալ զրոյցին, նոյնպէս կաչկանդուել էի։ Կարծես տարու էի խախտում։ Այս աշխարհում երեւի մի տեղ կայ միայն, մի ունկնդիր, ուր այս երիտասարդ կինը՝ Ստելլան, կը կարողանայ խոսել ազատ, անկաշկանդ, ուր նրան հարցեր կը տան անյարգուրգ սպասումով եւ բիլիներով կ'որսան իւրաքանչիւր խօսք, իւրաքանչիւր հնչերանգ։ Դա նրա տունն է։ Ունկնդիրները՝ զուակները՝ հընդամեայ Անդրէն ու երեքամեայ Արցախը։ Ինչպէ՞ս է պատմելու։ Վերյիշելու է հայրենի Վաղուհատ գիւղը, օրիորդական տարիները, ամուսնութիւնը, ուղեւորութիւնը հեռաւոր Զիտա, ուր ուսանում էր ամուսինը՝ Բորիկը։ Վերյիշելու է վերադարձը՝ 90 թուականի նոյեմբերը, երբ Բորիկն ասաց. «Վերջ, սովորելու ժամանակ չէ։ Գնում ենք Ղարաբաղ։ Պիտի կռուեմ։ Պատմելու է, ինչ է պատմելու։ Նկարագրելու է անընդհատ գնդակոծուող գիւղի կեանքը, անհաւասար մարտ մղող ազատամարտիկների հերոսական հիզերը։ Զուակների աչքերի խորքում նկատելու է զոհուած հօր պատկերը՝ դէմքը, աչքերը, ձայնը, ժպիտը։ Անմոռանալի, թանկ ու հերոսական պահերը դաջելու է զուակների յիշողութեան մէջ։ Պատմելու է նաեւ 1992թ. չարաբաստիկ Ցունիս-Ցուլիսի մասին, ֆոկատի հրամանատար ամուսնու եւ նրա ընկերների՝ Գրիշայի, Ժորայի, Կամոյի, Միքայէլեանի զոհուելու մասին (Միքայէլեանի անունը չի յիշելու. զեռուանցի էր, նրան բոլորը, նոյնիսկ ծերերը ապգանունով էին դիմում՝ Միքայէլեան), տեղահանութեան, փախուստի մասին է պատմելու։ Ու նաեւ հաստատման, ազատագրման, գիւղի եւ անկախ Արցախի վերակենդանացման, ապագայի մասին է պատմելու...

Երեխաները հիմա չուտ են մեծանում։ Բորիկի որդիները մեծ տղաներ են արդէն։ Որովհետեւ արցախցի են։ Որովհետեւ հասակ են առնում իրենց մօր՝ Ստելլայի պատմածների շնչով, ազատամարտիկ հօր՝ 36ամեայ նահատակ Բորիկի ոգու հովանաւորութեամբ։ Որովհետեւ նրանց սպասում է Արցախը, որի ազատ քաղաքացիներն ու մարտիկները լինելու պահանջով հայ մանուկն այսօր մեծանում է Սասունցի Դաւթի նման՝ օրէցօր («Երկիր», 7 Ապրիլ 1993)։

Ց. Ս.

ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՄԵՌԱՐ, ԴՈՒ ՇԱՏ ԱՊՐԵՑԱՐ

«Դուք չէք հասկանայ. որ ես չգնամ, դու չգնաս, նա չգնայ, ո՞վ պիտի պաշտպանի մեր հողը, մեր երկիրը»:

Անցեալ տարուայ Յուլիսի 21ին գոյժ եկաւ Արցախից. Հաթերքի մօտ թշնամու դաւադիր ականից մարտական ընկերների հետ միասին զոհուել էր մեր համագիւղացին՝ Թալինի շրջանի Նոր Արթիկ գիւղում ծնուած Ստեփան Արսէնեանը: Ցաւը մեծ էր, կսկիծը՝ անասելի, բայց այդ ցաւ ու կսկիծի հետ միասին նրա հարազատները, ընկերներն ու համագիւղացիները իրենց հոգում տանում էին եւ մի հպարտութիւն, որն զգում էին բոլորը, բայց որի մասին այդ պահին ոչ ոք չէր խօսում, երեւի միայն թեթեւ շշուկով:

Ուղեկցում էին իրենց հերոս զաւակին Եռաբլուր, որ էլի լինէր իր քաջ ընկերների՝ հայ ազատամարտիկների շարքում:

Այդ օրը եւ անա արդէն մի տարի երախտագիտութեան ու պատուի շատ արժանի խօսքեր են ասուել Ստեփան (ի հարկէ Ստեփան) Արսէնեանի հասցէին ու էլի կ'ասուեն, քանի դեռ կան նրան ճանաչողները, կան ընկերներն ու հարազատները, կանք մենք:

Ու գիտեմ, համոզուած եմ, կ'ասեն նաեւ շատ յետոյ, քանի դեռ կայ ազգը հայոց...: Ժամանակն է անմահացնում հերոսներին:

Այսօր ես էլ ուզում եմ գէթ փոքր-ինչ մարել իմ հոգու պարտքը, գրել իմ համագիւղացու, իմ աշակերտի մասին: Ոչ, Ստեփանին գիւղի դպրոցում դաս չեմ տուել: Երբ ծնուել է նա, 1948 թուականին, արդէն գիւղում չեմ եղել: Բայց, ի հարկէ, գիտցել եմ նրան, յաճախ այցելել նոյն ազգանունը կրող, իմ մօտիկ բարեկամ նրա հօրը՝ Վիլհելմին եւ արտանց ուրախացել աւագ որդու՝ Ստեփանի ծնունդով:

Եւ եղաւ այնպէս, որ տառաճանաչութիւնը մեր դպրոցի լաւագոյն դասավար Ազգուշ Յարութիւնեանին, Եսթեր Վարդանեանին, Վասպուր Խաչատրեանին եւ էլի ուրիշ լաւ ուսուցիչների աշակերտած Ստեփան 1964 թ. իմ աշակերտը, ճիշտը՝ ուսանողը, դարձաւ Երեւանի ինդուստրիալ-մանկավարժական տեխնիկումում: Լաւ ճանաչեցի՞, արդեօք, ընդրան: Չէի ասի: Ծփումները, թէպէտ մտերմիկ, բայց թոյլ էին:

Բայց մի՞թէ չգիտէի, չէի ճանաչում նրա ողջ գերդաստանը՝ հօրից սկսած եւ Խոսրով պապից, որ տուն չդարձաւ 41ի կռուից: Եւ ճանաչում էի նոյնիսկ պապի հօրը՝ Արսէնին, եւ աւելի աւագին՝ Արթենին, որի մասին հարիւր տարի առաջ հիւսուած լեգենդը մինչեւ օրս էլ չի մոռացուել: Վերջիններիս ճանաչում էի հէնց այդ լեգենդով:

Գալով կրկին մեր Ստեփանոսին՝ էլի պէտք է ասել, որ նա այդ խիզախ հոգիների արժանաւոր ժառանգորդն էր: Մասնագիտութիւն էր ձեռք բերել, ծառայել բանակում, աշխատանք ունէր, տուն-տեղ էր դրել, աշխատել էր ժամացոյցի գործարանում, վերելակների վարչութիւնում մեխանիկ-բրիգադավար էր: Ապրում էր բոլորի նման: Եւ կարող էր այդպէս շարունակել: Բայց պարզուեց, որ համեստ ու արտաքուստ հանգիստ մարդը այդպէս շարունակել չէր կարող, պարզուեց, որ հոգու խորքում էին նրա փրփուրները: Չանսաց ո՛չ մէկի ձայնին: Ո՛չ լրջմիտ ու բանիմաց կնոջ՝ Լիդայի, ո՛չ երեխաների՝ Աթաբեկի, Ռուզանի ու Արփինէի, ո՛չ հօր եւ ոչ մօր՝ Հայկանոյշի: Ծնողների խնդրանքին ուղղակի պատասխանեց. «Ինձ գնդակ չի կպչի, որտեղիս էլ կպչի, էլի ողջ կը մնամ»: Եւ ապա՝ «Դուք չէք հասկանայ. որ ես չգնամ, դու չգնաս, նա չգնայ, ո՞վ պիտի պաշտպանի մեր հողը, մեր երկիրը»:

Գաղտնապահ էր: Թէպէտ ազատամարտիկների շարքում էր Շարժման հէնց սկզբից, բայց այդ մասին ոչ ոք չգիտէր: Լէյտենանտ էր, ապա կապիտան, ազատագրական բանակի տասնապետ՝ ամէնքից սիրուած ու յարգուած: Կռուում էր երկրապահ ջոկատներում, Կոռնիձորում, Վարդենիսում, Երասխում եւ Տաւուշում, Նոյեմբերեանում, ամէնուրեք, ուր սահմանը պաշտպանելու անհրաժեշտութիւն կար: Չորս տարի անընդհատ: Ու վերջին մնաս բարեւը չասաց ոչ մէկին: Այդ մնաս բարեւը ասել է մի վերջին լուսանկարով, զոհուելուց ոչ շատ առաջ, որն այսպէս է մակագրել. «Ծնողներիս՝ Հայկոյին եւ Վիլհելմին. իրենց աւագ որդուց: Ստեփան, 1992 թ.»:

Գնաց, պաշտպանեց հայրենիքը ու ընկաւ քաջի մահով, որ միշտ կանգուն լինի հողը հայրենի:

Մայիսի 28: Անկախութեան օր:

Ցարգուած է համագիւղացիների խնդրանքը: Թալինի շրջխորհրդի գործկոմի որոշմամբ հերոսի ծննդավայրի՝ Նոր Արթիկի միջնակարգ դպրոցը անուանուել է Ստեփան Արսէնեանի անունով:

Երախտագէտ համագիւղացիների, նաեւ Երեւանում եւ այլուր ապրողների միջոցներով դպրոցի մուտքի մօտ կանգնեցուել է քաջ ազատամարտիկի պրոնզաձոյլ կիսանդրին: Այստեղ Հաթերքի հող է շաղ տրուել. եւ արդէն ծլարձակել են Արցախից բերուած մոշի թփերը (*«Դպրութիւն»*, 8-14 Յուլիս 1993):

ՍԱՄՈՒԷԼ ԱՐՍԷՆԵԱՆ
Վաստակաւոր ուսուցիչ



ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵԳՈՐԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Անկախ եւ Ազատ Հայաստանի ստեղծումը նրա համար եղել է սրբութիւն։

Յովհաննէս Եգորի Յովհաննիսեանը ծնուել է 1961 թուականին, Եղեգնաձորում։ 1978ին աւարտել է Եղեգնաձորի միջնակարգ դպրոցը։ Բուհական ուսումնառութիւնից յետոյ գործուղուել է Զարենցաւանի «Հայաւտոմ միաւորման աւտոբուսիչների գործարան, ՝ ուր աշխատում էր որպէս ինժեներ։

Յովհաննէս Յովհաննիսեանը 1988ից մտել էր քաղաքական պայքարի մէջ, ընտրուել Զարենցաւանի քաղաքային խորհրդի պատգամաւոր։

Ակտիւօրէն մասնակցել է ազգային-ազատագրական շարժմանը։ Անկախ ու Ազատ Հայաստանի ստեղծումը նրա համար եղել է սրբութիւն։

1990 թ. Մարտին Զարենցաւանում ստեղծուած ՁԱԴ միաւորմանը անդամագրուելուց յետոյ սկսեց աւելի ակտիւ մասնակցութիւն ցուցաբերել Շարժմանը. նոյն տարուայ Հոկտեմբեր-Նոյեմբերին մասնակցել է Հ.Մ.Ը.Մ. Զարենցաւանի մասնաճիւղի հիմնադրման աշխատանքներին։ 1991 թ. անդամագրուել է ԱԻՄին։

1992 թ. մտնելով ԱԻՄի աշխարհազօրային կազմաւորման համակարգ, մասնակցել է Լաչինի պաշտպանութեան եւ ազգականացուած բնակավայրերի ստեղծման գործողութիւններին։ Եղել է մի քանի արդէն բնակեցուած գիւղերի դաւառապետ։

Զոհուել է Յուլիսի 30ին՝ ադրբեջանական ելուզակների հետ անհաւասար մարտի ժամանակ (8 Օգոստոս 1992)։

«ԵՐԿԻՐ»

ԽՕՍԵՆՔ ՄԻ ՔԻՉ...

Ես գիտէի քեզ, գիտէի, որ առջեւից ես միշտ գնալու ու չես վախենալու։ Այդպէս էլ պատմում էին քո մասին. առջեւից ես գնացել, ձեռքով ես արել, կանչել ես՝ մի վախեցէք, յետ մի մնացէք...

Մէկ տարի առաջ Լաչինում զոհուեց Զարենցաւանի քաղխորհրդի պատգամաւոր Յովհաննէս Յովհաննիսեանը։

Ցիշողութիւնը քեզ տեսնելու ու քեզ հետ խօսելու միակ ձեւն է հիմա: Հաղորդակցուելու ուրիշ միջոց չկայ այլեւս: Վառենք մոմն ու ընտենք զրոյցի, իմ ընկեր:

Ամէնից առաջ այն սարսափելի շոգ ու փոշոտ օրն եմ յիշում: Կարծես արեւը չէր տաքացնում, կարծես տօթը փոշու հետ գետնից էր բարձրանում ու քսում մեր դէմքին: Դու գնում էիր (առա՞ղ, տանում էին) առջեւից, մենք՝ քո յետեւից: Շէկ հողից ու արեւից կկոցում էինք մեր աչքերը: Երբեմն հատուկենտ բառեր էինք ասում իրար, իբր՝ զրուցում էինք: Բայց բառերն էլ այնպէս տօթակէզ էին, որ զրոյցից էլ էր շոգ փչում...: Այդ փոշոտ ճանապարհը, այդ արեւը, այդ լեռները, այդքան շատ մարդիկ՝ լուռ ու գլխահակ, քո այդ երթը, ամէն ինչ, ամէն բան այնքան անիրական էր...: Դու ո՞վ էիր, որ այդքան մարդ էիր տանում քո յետեւից...

Բորբոքուն ու տաքարիւն էիր, բայց ոչ քեզ վերաբերող հարցերում: Երկու-երեք ամիս Լաչինում էիր, բայց մտերիմներից ու բարեկամներից շատերը չգիտէին:

Ցետոյ լուրը եկաւ՝ թէ խփուել ես: Որ ասեմ՝ չհաւատացի, սուտ կը լինի: Ես գիտէի քեզ, գիտէի, որ առջեւից ես միշտ գնալու ու չես վախենալու: Այդպէս էլ պատմում էին քո մասին. առջեւից ես գնացել, ձեռքով ես արել, կանչել ես՝ մի վախեցէք, յետ մի մնացէք...

Քեզ համար փորուած փոսից քիչ վերեւ ծիրանի այգիներ էին: Հասած ծիրանը թափուել էր չորցած գետնին, հողերի մէջ, եւ նրանք էլ այդպէս էին մեռնում...: Փոշիների մէջ, ոտքերի տակ...

Քո զոհուե՞լն էր ճիշտ, թէ՞ մեր ապրելը: Դժուար էր ասել: Ցամենայնդէպս, մեր այս ապրելը հաստատ անմիտ մի բան է, ժամավաճառութիւն, ինչ կ'ուզես՝ ասա...

Չգիտեմ, թէ երբ էլի կը յաջողուի այցի գալ քո հեռաւոր շիրիմին, բայց հաւատա՛, որ հիմա, իսկապէս, քո կարօտը աւելի ուժգին է սեղմում կոկորդս...: Այս գիշերային լռութի՞ւնն ու մոմի լո՞յսն են այդպէս խեղդում ինձ... թէ՞ քո կարօտը: Չգիտեմ...

Ծաղիկները... ասֆալտին թափուած... մեռնում էին... («Երկիր», 6 Օգոստոս 1993):

ԿՈՐԻՒՆ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ԳՈՒՑԷ ՍԱ ՎԵՐՋԻՆ ԵՐԳՍ ԼԻՆԻ...

Քանի՞ անգամ ենք ես ու կինս՝ Լէնորան, Արսէնին յորդորել, որ այլևս չգնայ։ Ասում էի՝ միևնույնպես ես, քեզ հետ որ մի բան պատահի, օջախիս ծուխը ո՞վ է վեր հանելու։ Ասում էր՝ Արցախն էլ է միևնույնը...

...Դրմբոն գիւղի մերձակայ դիրքերից մէկում մի խումբ ազատամարտիկներ, աչքները թշնամու դասաւորութիւնից չհեռացնելով, զրուցում էին։ Հրամանատար Դաւիթ ժամհարեանն էր, Սամուէլը, Արսէնը, Արթուրը (վերջինս յետոյ կը զոհուի Սարիբաբա բարձունքի համար մղուող մարտերից մէկում)։

Կէսօրն անց էր։ Թուրքերի դիրքերում աշխուժութիւն նկատուեց։

—Տղերք, հաց չուտե՞նք,— հարցրեց Արսէնն ու կէս-կատակ կէս-լուրջ շարունակեց,— մարտ եմ գուշակում, ինչ իմանաս, գուցէ սա իմ վերջին հացը լինի...

Մերթ ընդ մերթ աւտոմատին, գնդացրային կրակահերթեր էին լսւում։

—Շան տեղ մի դրէք, իրենց մարտական ոգին են բարձրացընում...։ Հաց կերէք։ Տղերք, սիրտս ՝ մրգ է ուզում։ Ո՞վ գիտի, գուցէ սա վերջին երգս լինի...

Եւ Արսէնի շուրթերից ծորաց նուրբ ու տխուր մեղեդին։

Զայնակցեցին ընկերները։ Նորից՝ կրակահերթ։ Մեր դիրքերի ուղղութեամբ։

—Թո՛ւրք, սատկես էլ, հա՛ց էլ ենք ուտելու, ՝մրգ էլ երգելու։

—Տղաներ, նոնակներ շատ ունեմ, մի-մի հատ վերցրէք։ Ձի իմացուի, տեսաք՝ պէտք եկաւ,— ասաց Արսէնը եւ նոնակներն իր ձեռքով բաժանեց ընկերներին։

Քիչ անց սկսուեց յարձակումը։ 18 հոգուց բաղկացած հայ ազատամարտիկների ջոկատի ուղղութեամբ թշնամին թուով գերակշիռ հետեւակ էր հանել։

—Սովոր էինք թշնամու չատութեանը...։ Թէժ մարտ ծաւալուեց։ Լաւ չարդ ստանալուց յետոյ չան նման յետ քաշուեցին։ Բարեբախտաբար, այդ մարտում կորուստ չտուեցինք,— յետոյ՝ թաղման օրը, չուրջը հաւաքուածներին կը պատմի Արսէնի հրամանատարը։ —Բայց թուրքերը յետոյ նորից յարձակման անցան։ Հրադադից, հրանօթներից, ականանետներից ու տանկերից անընդհատ կրակ էին տեղում մեր դիրքերի վրայ։ Նորից մարտի մէջ մտանք եւ նոյնիսկ հակայարձակման գնացինք։ Արսէնը, մարտի մոլուցքի մէջ, մեզնից բաւական առաջ էր անցել։ Թուրքը նոր ուժեր նետեց մեր դէմ։ Մարտը չարունակելն անիմաստ էր դառնում։ Ենթարկուելով հրամանին՝ խմբուեցինք մի տեղ ու... Արսէնը չկար։ Թիչ անց մեր նահանջող տանկիստները, որ նկատել էին ճանապարհին ընկած Արսէնին, բերեցին դին։ Մանկութեան ընկերոջն անշնչացած տեսնելով՝ Դաւիթը նստուեց առաջ, չհաստրինք եւ պահել։ Նրան յետեւից տղաներից մէկը։ Երեք թուրք սպանելուց յետոյ վերադարձան...։ Վերցնելով Համեայ մեր զոհին՝ խմբով նահանջեցինք։

Դէպքը, որի մասին պատմուեց, 1992 թուականի Սեպտեմբերի մէկին էր։ Մուրազին չհասած՝ նահատակուեց Արսէնը, եւ գերեզմանատան ճանապարհը բռնող, վիրաւոր սրտով մի օրիորդ էլ աւելացաւ Ստեփանակերտում։

—Դանի՛ անգամ ենք ես ու կինս՝ Լէնորան, Արսէնին յորդորել, որ այլեւս չգնայ։ Ասում էի՝ մինուճարս ես, քեզ հետ որ մի բան պատահի, օրախիս ծուխը ո՞վ է վեր հանելու։ Ասում էր՝ Արցախն էլ է մինուճար... Ցրդ միջնակարգն է աւարտել։ Գիւղտեխնիկում ընդունուեց, երրորդ կուրսում էր սովորում։ 16 տարեկան էր, երբ մի օր «Շեմայսերն» աւտոմատ ձեռքին եկաւ առաւ։ Էլ ի՞նչ ասէի...,— արցունքն աչքերին պատմում է հայրը՝ երկրորդ հրետանային դիվիզիոնի վարորդ Ռազմիկը։ —Նախկին ԽՍՀՄ բանակի մի զինուորից իր խնայած փողերով ռազմական երկու կարեւոր սարք էր գնել, ուղարկել Մարտակերտ, Հադրութ։ Մեր բակի տղաներից մէկի հետ միասին աւտոմեքենայով զինամթերք էին տեղափոխում տեղից տեղ։ Մեր սեփական մեքենան օրերով չէինք տեսնում։ Իր պապերի հողում է զոհուել Արսէնս, մինչ մահ-գերեզման կը տանի՛ւ, բայց չեմ ասի՝ ինչո՛ւ։ Կը միխիթարուեմ իմ կարինէ եւ Նունէ դուստրերով։ Հօրս գերդաստանից երկու կեանք էլ է դրուել Արցախի զոհասեղանին՝ Բորիս եւ Ռոբերտ եղբայրներիս երկու թոռները։ Պիտի դիմանանք, ուրիշ ճար չկայ։ Որովհետեւ, ինչպէս Արսէնս է ասել՝ Արցա՛խն էլ է մինուճար...

(«Արցախ», 26 Յունիս 1993)։

ԱՐԱՄԱՅԻՍ ԳԱՐԱԳԵԱՆ

«ԱՐԷՔ ԱՅՆՊԷՍ ՈՐ ՉՄՈՌԱՑՈՒԵՆ»

Սամուէլ Ջահանգիրեան

Համլետի ջոկատի մէջ են եղել նաեւ Սամուէլի հայրը, երկու եղբայրները եւ ութսունամեայ տատը։

Նա եկաւ Մատենադարան մի մեծ բեռնատար մեքենայով։ Ազատամարտիկի արտահագուստով էր, արեւահար։ Դժուարանում էր խօսել, չէր կարողանում կապակցել մտքերը։

—Միայն մի խնդրանք ունեմ՝ արէք այնպէս, որ չմոռացուի մարտում սպանուած սիրելի ընկերներիս՝ Սամուէլ Ջահանգիրեանի եւ Արա Վարդանեանի յիշատակը։

Տուգմունքից դողում էին մատները, աչքերը լի էին արտասուքով, բայց լացը զսպում էր՝ ընդմիշտ հեռացած ընկերների մասին պատմել կարողանալու համար։

—Չէ՞ք պատկերացնի, թէ ի՛նչ լաւ տղաներ էին՝ անվեհեր, ազնիւ, հայրենասէր, կեանքները կը տային ընկերների համար, չգիտէին ի՞նչ բան է վախը։ Սիրում էին իրենց ընտանիքները, հարազատներին, բայց դա չխանգարեց նրանց թողնելու ամէն բան եւ մեկնելու Արցախ, Մարտակերտ։ Կռուի ամենավտանգաւոր մասերում էին։ Ամէն րոպէ մահուան երախի դիմաց։ Պատրաստ էին զոհաբերելու իրենց կեանքը յանուն Արցախի ազատագրութեան եւ զոհաբերեցին։

Հարցնում եմ զրուցակցիս անունը. Սօս Մովսիսեան։ Մնուել է 1952 թ., Եղեգնաձորի շրջանի Հերհեր գիւղում։ Ապրում է Ջերմուկ քաղաքում։ Ղարաբաղեան դէպքերը նրան ստիպել են փոխել մասնագիտութիւնը եւ դառնալ գինագործ։ Յետոյ մտել է Զանգեզուրի հերոս Համլետ Գոչարեանի մարտական զօրամիաւորման մէջ եւ դարձել նրա ջոկատի աւագը։ Մասնակցել է Մարտակերտի ու Շահումեանի մարտերին։ Տեսել

Արա Վարդանեան

է ընկերների հերոսական գործերը, նրանց վիրաւորուելը, մահը: Նրա աչքերի առջեւ կատարուել է Շահումեանի ու Մարտակերտի հայութեան տեղահանութիւնը:

Խնդրում եմ պատմել զոհուած ընկերների մասին:

Սամուէլը եւ Արան տարեկիցներ էին, երկուսն էլ ծնուել էին 1969 թ.: Արան Գորիսի շրջանի Տեղ գիւղից էր: Սամուէլը ղարաբաղցի էր՝ Մարտակերտի շրջանի Ջանյաթաղ գիւղից: Սովորել են Ղափանի լեռնային տեխնիկումում, այնտեղ էլ մտերմացել են եւ միասին մեկնել Ղարաբաղ: Համլետի ջոկատի մէջ են եղել նաեւ Սամուէլի հայրը, երկու եղբայրները եւ ութսունամեայ տատը: Այո՛, այո՛ տատը, որը ջոկատի հացթուխն էր եւ խոհարարը: Համլետի զոհուելուց յետոյ ջոկատի հրամանատարութիւնը վստահւում է Սամուէլին: Սամուէլը եւ Արան զոհուել են 1992 թ. Յուլիսի 30ին՝ Ղարաչինար գիւղի ազատագրման ժամանակ: Սամուէլի ջոկատը կիսով չափ շրջապատում է, բայց անձնուէր ջանքերով հնարաւոր է լինում դուրս գալ: Արան առաջադրանք է ստանում յարձակուել թշնամու շտաբի վրայ, որին պաշտպանելու համար յանկարծ առաջ են շարժւում մի ծանր տանկ եւ ԲՄՊ-2 (հետեւակի մարտական մեքենայ): Նա վիրաւորւում է ու այդ մասին ռադիոյով յայտնում հրամանատարին: Սամուէլը նետւում է՝ փրկելու վիրաւոր ընկերոջը, բայց թշնամու կրակահերթը հասնում է նաեւ նրան: Գնդակները խոցում են Արայիկին...: Թշնամու տանկից խփում են նաեւ նրանց դուրս բերելու նետուած Մերուժանին: Ցաւօք սրտի, առայժմ հնարաւորութիւն չունենք գրելու այս խիզախ մարտիկի մասին՝ տեղեկութիւններ չունենալու պատճառով:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանայ Արցախի ազատագրութեան մարտերում զոհուած հերոսներին, նրանց անունները ընդմիշտ կը գրանցուեն ազատամարտիկների յիշատակն անմահացնող գրքերում, որոնք, համոզուած ենք, կը գրուեն ու կը տարածուեն, բայց մինչ այդ ճիշտ կը լինէր ստեղծել մի կենտրոն, որը բաժանմունքներ ունենայ Հայաստանի շրջաններում ու Արցախում, կենտրոնացնի այս բնոյթի փաստաթղթերը, հաւաքի լուսանկարները, մասնակիցների գրաւոր յուշերը, հերոսների անձնական իրերը, ռազմաւարային նիւթերը: Կարծեմ որոշ աշխատանք արւում է, բայց դա պետականօրէն չի կազմակերպուած: Այս գործը յոյժ կարեւոր է եւ անյետաձգելի. եթէ մի որոշ ժամանակ անցնի, ուշ կը լինի, շատ բան կը մոռացուի ու կը կորսուի: Հէնց հիմա պէտք է ստեղծել ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻ ԹԱՆԳԱՐԱՆը եւ այդ գործից անմասն չպէտք է մնան մեր միւս թանգարաններն ու Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի պատմութեան ինստիտուտը («Երկիր», 22 Օգոստոս 1992):

ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՆՐԱ ՍԻՐՏԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԷՐ...

1992 թուականի Օգոստոսի 2ի լոյս 3ի գիշերը՝ մարտական առաջադրանքը կատարելիս, Մարտակերտ շրջկենտրոնի մատոյցներում, բարձունքներից մէկի տեղագրնութեան ժամանակ դաւադրաբար զոհուեց ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարի տեղակալ՝ Յարութիւն Արարատի Վարդանեանը։ Մահուանից ընդամէնը 2 օր անց՝ Օգոստոսի 4ին, պէտք է լրանար 36ամեակը։ Ընկերների հետ պատրաստւում էին Ծննդեան տարեդարձը տօնել Մարտակերտ շրջկենտրոնում։ Պատկերացնո՞ւմ էք, արդէն իրականանալի էր թւում անչափ կարեւոր յաղթանակը, բայց...

Էս ի՞նչ արիր, Յարո՛ւթ...

Մի քանի օր առաջ աշխատասենեակիս դուռը բացեց Աշոտ եղբայրդ ու արցունքն աչքերին համբուրեց պատին՝ գլխավերեւումս փակցրուած լուսանկարդ։ Ինձ համար էլ ծանր էր հաշտուել քո կորստեան հետ, որովհետեւ Արցախ կատարած գործուղումից յետոյ, երկու ամիս շարունակ դու չէիր ջնջւում իմ յիշողութիւնից։ Որովհետեւ դու մեր ժամանակների հայի ամենալաւ ու իսկական տեսակն էիր։ Ու հիմա Աշոտ եղբայրդ հազիւ է զսպում արցունքները։ Տնաշէնի տղայ, 4 տարի «փախուստ»ի մէջ էիր, 4 տարի քո սիրտը Ղարաբաղում էր, ինչո՞ւ մի լուսանկար անգամ չուղարկեցիր տուն։ Ուղիղ երկու ամիս առաջ, երբ Ստեփանակերտում հրաժեշտ էինք տալիս միմեանց, վերջին պահին մեզ մեկնեցիր Կոտայքի շրջանի քո տան հեռախօսահամարը՝ հասնէք Երեւան, խնդրում եմ զանգէք հօրս։ Ասէք Յարութը ողջ եւ առողջ է, կռւում է ու կը մնայ մինչեւ մեր արդար պայքարի յաղթական աւարտը...։ Ու մի քանի էլ խնդրեցիր՝ լուսանկարներդ տանել տուն։ Առաջին խնդրանքդ կատարեցինք։ Արարատ հայրդ շատ ուրախացաւ, մա՛նաւանդ՝ երբ մեր թերթում տպագրուեց նաեւ լուսանկարդ ու կռուող զինուորի քո խօսքը։ Յովհաննէսի հետ պատրաստւում էինք ձեր տուն գընալ, ընտանիքիդ յանձնել քո լուսանկարները։ Պատրաստւում էինք, սակայն խմբագրութիւն եկաւ եղբայրդ...

Էս ի՞նչ արիր, Յարո՛ւթ...

Ու հիմա ես ու Յովհաննէսը կարկամած լսում ենք ձայնագրիչի ժապաւէնին պահ տուած ազնիւ հայի քո խօսքերը.— «Կեանքը մեզ ստիպեց, որպէսզի առժամանակ մոռանանք մեր երկրային մաս-

Ցարութիւն Վարդանեան՝ Հախէն երկրորդը

նագիտութիւնները, թողնենք մեր բոլոր գործերն ու զէնք վերցնենք։ Որովհետեւ եթէ հայ ենք, իրաւունք չունենք այսօր այլ կերպ վարուել, չաջակցել ազատութեան համար մղուող այս պայքարին...»։ Զո սիրտն ամբողջովին Ղարաբաղում էր, Ցարո՛ւթ, ու վերամբարձ խօսքեր չէ, որ ասում եմ, քանզի երկու օր շարունակ մենք տեսանք այդ մեծ սէրը։ Այլապէս, 88ի սկզբներից չէիր «լքի» հարազատ Կոտայքի շրջանն ու մեկնէիր Ղարաբաղ։ Աշխատում էիր Արովեանի չափիչ սարքերի գործարանում։ Իսկ ո՞վ չի յիշում աբովեանցիների կազմակերպած առաջին միտինգը Երեւանում։ Գոյապահպանութեան հարցերին նուիրուած այդ միտինգն էլ սկիզբ դրեց մեր ազգային ինքնագիտակցութեան վերազարթօնքին։ Զայնագրիչի ժապաւէնին կրկին քո ձայնն է. «88ի Փետրուարեան միտինգներից մէկի ժամանակ մտածեցի. առողջ, ամրակազմ երիտասարդ եմ, աւելի ազնիւ չի՞ լինի այստեղ ձեռք բարձրացնելու փոխարէն՝ Ղարաբաղ գնամ, զէնք վերցնեմ...։ Ու ինչպէս տեսնում էք, արդէն 4րդ տարին է՝ այստեղ եմ։ Կուզել եմ համարեա՛ բոլոր թէժ մարտերում, մասնակցել Շուշիի եւ Լաչինի ազատագրմանը...»։

Կոտայքի շրջանում բնակուող հարազատներդ ու ծանօթներդ այն օրը երեւի քեզ խենթ համարեցին, երբ մի քանի օրով տուն եկար եւ Ղարաբաղ տարար նաեւ կնոջդ՝ Շուշանիկին, աղջկադ եւ տղայիդ։ Բաւականին ժամանակ ընտանիքդ ապրեց Ղարաբաղում։ Այնտեղ նաեւ փոքրիկ հողակտոր էիր վերցրել։ Քեզ գերել էր Արցախ աշխարհը, ինքը էլ, աւա՜ղ, գերութեան մէջ գտնուող Արցախը։ Երդուել էիր ազա-

տագրել այդ հեքիաթային բնաշխարհն ու լիիրաւ տէր զգալ այդ հողին: Իսկ ինչպիսի՞ ոգեւորութեամբ էիր պատմում ծրագրերիդ մասին: Ուրախացար նաեւ, որ մեծ աղջկաս անունը Տաթեւիկ է: Դու էլ ունէիր Տաթեւիկ, բայց ամենամեծ պարծանքդ Ղարաբաղում երկու տարի առաջ ծնուած դուստրդ էր՝ Թագուհին: Ցիշո՞ւմ ես, թէ այդ առթիւ ինչ ասացիր՝ Թագուհուս ծնունդով մենք էլ ղարաբաղցի օծուեցինք...

Էս ի՞նչ արիր, Յարո՛ւթ:

Ու հիմա Շուշանիկ կինդ, երդ դասարանցի տղադ՝ Գոռը, 2րդ դասարանցի Տաթեւիկն ու փոքրիկ Թագուհին ձեռքից ձեռք են խլում քո վերջին լուսանկարները...

Շուշիի ազատագրումից յետոյ այդ հիասքանչ քաղաքում քեզ բնակարան էին յատկացրել: Ժամանակ չունեցար անգամ կարգի բերել, որովհետեւ այս ընթացքում մասնակցեցիր Մարտակերտի շրջանի աւելի քան 12 գիւղերի ազատագրման համար մղուած մարտերին: Ուզում էիր գերուած շրջկենտրոնն էլ ազատագրել եւ ընտանիքդ վերջնականապէս տեղափոխել Շուշի, սակայն Մարտակերտ մտնող բարձունքը քո վերջին ու եղերական հանգրուանը եղաւ: Ականապատուած էր այդ բարձունքի ճանապարհը, որտեղով դաւից անտեղեակ անցաւ մեքենան, որի մէջ գտնւում էիր նաեւ դու: Քո ցաւատանջ մարմինն ընկերներդ հասցրին Հայաստան: Անողոք ճակատագրի հեգնանքը չէ՞, արդեօք, քո թաղումը կատարուեց... ծննդեանդ տարեդարձի յաջորդ օրը...: Կիսատ մնաց ԳՈՐԾԴ: Քո թաղման օրը անհուն վշտի մէջ գտնուող հօրդ առաջ ամենամօտ ընկերներդ՝ Կարէնը, Մելսիկը եւ Սօսը երդուեցին իրականութիւն դարձնել բաղձանքդ՝ մեր միւս քաջորդիների հետ Ղարաբաղն ազատագրել գերութիւնից: Որպէսզի հանգիստ առնի նաեւ այսօր էլ Ղարաբաղում թեւածող հոգիդ: Ու հաւատա՛, հեռու չէ ԱՐԵՒԱԾԱԳԸ... («Աւանգարդ», 20 Օգոստոս 1992):

ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱԼԵԱՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՂԱԲԵԿԵԱՆ

Մասնակցել է Հադրութի շրջանում ծաւալուած բոլոր մարտական գործողութիւններին, Տողի, Սարիշէնի, Զորի եւ այլ բնակավայրերի ազատագրմանը։

Ծնուել է 1957 թ. ԼՂՀի Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գիւղում։ Դպրոցը աւարտել է 1975 թ.։ Ծառայել է նախկին Սովետական բանակում։ 1978 թ. Համիկեմի Հայաստանի կենտկոմի ուղեգրով ուղարկուել է ԽՍՀՄ։ 1979 թ. յատուկ ուղեգրով ուղարկուել է Ներքին Գործերի Նախարարութիւն՝ Ծառայութեան։ Ծառայութեանը զուգահեռ աւարտել է Իրկուտսկի երկաթգծային տրանսպորտի ինժեներների ինստիտուտը։ Ունեցել է ներքին գործերի լէյտենանտի կոչում։ Ղարաբաղեան շարժումը նոր էր սաղմնաւորւում եւ նա իր մանկութեան ընկերոջ՝ Արթուր Մկրտչեանի կանչով 1987 թ. վերջին գալիս է հայրենի եզերք, որտեղ մինչեւ իր կեանքի վերջը՝ 4 Օգոստոսի 1992 թ. գտնւում էր պայքարի առաջին գծում։ Մասնակցել է Հադրութի շրջանում ծաւալուած բոլոր մարտական գործողութիւններին, Տողի, Սարիշէնի, Զորի եւ այլ բնակավայրերի ազատագրմանը։ Դժուարին պայմաններում կատարում էր շրջանի շրջկոոպի նախագահի պարտականութիւնները։

Նա եղել է Հադրութի շրջանի դաշնակցական կուսակցութեան անդամ։

Զոհուել է 1992 թ. Օգոստոսին՝ Ստեփանակերտում. այդ օրը նա զինամթերք էր ուղարկել Հադրութ եւ յաջորդ օրն էլ պէտք է սննդամթերք ուղարկէր։ Նա միաժամանակ «Թեւան» հայրենակցական միութեան բացած փոքր ձեռնարկութեան տնօրէն կազմակերպիչն էր։

Այդ օրը մարդ էր ուղարկել Երեւան՝ գործողի մասնագիտութիւն սովորելու համար։ Բայց, աւա՜ղ, ամէն ինչ կիսատ մնաց **(Ձեռագիր)։**

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ԽՋՈՒԱԾ ԱՆԿՐԿՆԵԼԻՈՒԹԻՒՆ

Եապոնը երկու տարի շարունակ ծեծում էր Նայիրիի շրջանի զինկոմիսարիատի դռները։ Ուզում էր կռուել որպէս հայոց բանակի զինուոր։

Երբ քանաքեռաւանցի ազատամարտիկների հետ զրուցում էինք Եապոնի մասին, բոլորը միաբերան ասում էին. «Վաւ կուուող էր դառնալու, ափսո՛ս, զոհուեց»։ Զինուորի, մահ տեսած մարդու այս ժլատ գնահատականը կարծես ամէն ինչ ասում է։

Եապոն Խեչոյեանը քսան տարեկան դեռ չկար։ Պարզ է՝ կեանքը առջեւումն էր։ Ապրելու էր...։ Բայց, ինչպէս գրում է Քանաքեռաւանի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Աքսենեա Թորոսեանը, «ուզեց իր բազկի ուժով կռել հայրենի հողի արդար կռուի մի զարկը»։ Եւ գնաց մարտնչելու։ Ծնունդով Քանաքեռաւանից էր, բայց նախնիները արծուաշէնցի էին։ 88 թուից ի վեր Արծուաշէնի գլխին սեւ ամպեր էին կուտակւում։ Արծուաշէնի զաւակները պատրաստ էին ամէն գնով պաշտպանել հայրենի հողը։ Սակայն չորս կողմից թշնամիներով շրջապատուած ի՞նչ կարող էին անել։ Թշնամին հսկայական ուժեր էր կուտակել մատոյցներում։ Իսկ մերոնք ամպագոռգոռ խօսքերից այն կողմ չանցան։ Եւ Արծուաշէնը դատապարտուեց։ Մնաց մենակ՝ իր զաւակների եւ մի բուռ զինուորականների յոյսին։

Եապոնը նրանցից մէկն էր։ Նոր էր զօրակոչուել։ Ի տարբերութիւն շատ-շատերի, ովքեր ստորաբար խուսափում են հայոց բանակում ծառայել, Եապոնը երկու տարի շարունակ ծեծում էր Նայիրիի շրջանի զինկոմիսարիատի դռները։ Ուզում էր կռուել որպէս հայոց բանակի զինուոր։ Մինչ այդ էլ էր մասնակցել ինքնապաշտպանական մարտերի։ Բայց կանոնաւոր բանակի կազմում հայրենիքի համար մարտնչելն ուրիշ խորհուրդ ունի։

Եպոնն իր նպատակին հասաւ։ Մայիսից հայոց բանակի մարտիկ էր։ Ընդամէնը երեք ամիս էր նաւայել, երբ կամաւոր անդամագրուեց Արծուաշէն մեկնողների ջոկատին։ ... Սակայն Արծուաշէնի օրերն հաշուուած էին. չկար անհրաժեշտ պաշտպանութիւն։ Հարկաւոր էր փրկել բնակիչներին։ Անհրաժեշտ էր նահանջի ճանապարհ բանալ։ Եւ Եպոնը ընկերոջ՝ Արմէն Թումանեանի հետ գնաց հետախուզութեան։ Տեղանքին քաջ ծանօթ էր։ Գիտէր ամէն քար ու թուփ, կածան ու արահետ։ Քանի՛ անգամ էր եղել Արծուաշէնում, վայելել Արծուաշէնի երեկոների անկրկնելի խաղաղութիւնը. կորսուած անկրկնելի խաղաղ երեկոներ, որ գերի ընկան ու տխուր զօղանջով կանչում են հեռուներից...

Իսկ այդ օրը, երբ Եպոնն ու Արմէնը գնացին հետախուզութեան, լռութիւնն յաճախ էր խզւում կրակահերթերից։ Թշնամին պաշարել էր գիւղն ու գնդակոծում էր։ Կրակում էին կուրօրէն։ Այդ կոյր գնդակներից մէկն էլ խոցեց խիզախ հայորդուն։ Օգոստոսի 6ն էր։ 22 օր յետոյ լրանալու էր 20 տարին...

Նրան հողին յանձնեցին Արծուաշէնի անկման օրը՝ Օգոստոսի 9ին։ Հողին յանձնեցին ծննդավայր Քանաքեռաւանում, թէեւ նրա սիրտը այնտեղ՝ Արծուաշէնում էր։

...Քանաքեռաւանի դպրոցում Եպոնի անուան սրահ կայ։ Պատին նկարն է, նկարի առջեւ՝ ծաղիկներ։ Դպրոցի սաները յաճախ են հաւաքւում այդտեղ։ Հաւաքուածները մեծ մասամբ տղաներ են... («Երկիր», 8 Մայիս 1993)։

Յ. Ս.

Ռազմաճակատում տարած փայլուն յաղթանակի շնորհիւ արցախահայութիւնը ձեռք է բերել որակական նոր յատկանիշներ։ Առաջին հերթին՝ ազգային պետականութեան կայացման համար անհրաժեշտ պետական մտածողութիւն։ Երկրորդ՝ հայրենիքի պաշտպանութեան համար անձնազոհ հուիրուածութեան եւ հերոսականութեան վսեմ ոգի։ Ամէնուրեք հաստատւում է կարգ ու կանոն։ Մարդիկ վաղուայ օրուայ նկատմամբ հաւատով ու հաստատակամութեամբ վերադառնում են գերութիւնից ազատագրուած գիւղերը, վերաշինում կողոպտուած եւ աւերուած բնակավայրերը, կառուցում եւ բարեկարգում ճանապարհները, նոր ակօս բացում խամ դարձած անմշակ եղած հողերում։ Որոշակի աշխուժութիւն է նկատւում մշակոյթի եւ կրթական օճախներում։ Մի խօսքով՝ արցախահայութիւնը վայելում է ո՛չ միայն իր կրած յաղթանակի թերկրանքը, այլեւ՝ նրա պտուղները։

ՇԱՀԷՆ ՄԿՐՏՉԵԱՆ

ԳԱՐՍԵՒԱՆ ԲԱՂՐԵԱՆ

Ինքնապաշտպանութեան ազատամարտիկներից 10ը հերոսի մահով զոհուեցին՝ թոյլ չտալով անարգ թշնամուն մտնել հայրենի հողը: Այդ անմահների մէջ էր նաեւ Գարսեւանը:

ԲՐԱԲԻՈՆ ԾԱՂԻԿ

ԳԱՐՍԵՒԱՆ ԲԱԲԳԷՆԻ ԲԱՂՐԵԱՆ...

Երբ զօրացրուեց ու վերադարձաւ ծննդավայր՝ Մարտունու շրջանի Գիշի գիւղ, արդէն քսանամեայ էր եւ շատ էր ուզում նորից քաղաքացիական համազգեստ հագած նկարուել համադասարանցիների հետ:

Սակայն դա արդէն դարձել էր համարեա՛ անհնարին:

Լուսանկարիչներ չկային: Լուսանկարուելու հնարաւորութիւններ չունկային: Նրանց մի մասն ազատամարտիկներ էին դարձել ու կռուում էին, միւսները՝ զբաղուելու ժամանակ չունէին, երրորդները...

Եւ ստացուել է այն, որ մեր զոհուած ընկերներից շատերը բանակային տարիներին արուած լուսանկարներից բացի այլ լուսանկարներ չունեն:

Գարսեւանը գունաւոր այս նկարը բերել էր Ռուսաստանից, ուր ծառայել էր ու տուն դարձել տանկիստի որակաւորումով: Եկել էր ու ծննդավայրը գտել պատերազմի բոցերի մէջ: Հայրը՝ Բաբգէն, միայն մի ցանկութիւն ունէր. ամուսնացնել Գարսեւանին եւ իր աչքի առաջ, իր օժանդակութեամբ տեսնել անդրանիկ որդու վարքը, կեանքը:

Գարսեւանը դարձաւ ազատամարտիկ եւ Գիշիի գումարտակի կազմում սկսեց մարտնչել թուրքական հրոսակների դէմ:

...Իննսուներկու Օգոստոսի տասնհինգին հակառակորդը լայնամասշտաբ յարձակում սկսեց ռազմաճակատի ամբողջ երկարութեամբ: Մարտունուց մինչեւ Թաղավարդ, Թաղավարդից՝ Նռգի ու Աւդուռ սկսեցին հնչել տագնապի բոլոր զանգերը: Մի քանի հազար հետեւակ ու թուրքական տանկային ու զրահագնացային բրիգադներ Գէորգաւանի, Ալիբալիի, Ամարասի ձորակի եւ այլ ուղղութիւններով գրոհում էին դէպի խոշոր բնակավայրերը: Զօրավար Աւոյի շտաբում հնչեցուեցին բոլոր գուժկանները:

ՆՈՐԱՅՐ ԳԱԼՍՏԵԱՆ

Երկուսն էլ ընկան նույն ճակատամարտում եւ իրենց սուրբ անունները օծեցին 21ամեայ անմահութեան տարիքով:

ՈՐՈՆՈՂՆԵՐԸ

Հրամանատարը կոչով դիմեց բոլոր մարտունաքնակներին. թուրքական հեղեղը խուժում է Վարանդայի ձորակները, ի զէ՞ն, հայ երիտասարդներ:

Գիւղերում ջահել չմնաց: Բոլորը դուրս եկան թշնամուն ընդառաջ:

Ճակատամարտեցին երեք օր շարունակ:

Եւ յաղթեցին: Ու նաեւ զոհուեցին:

Օգոստոսի 15ի մեծ ճակատամարտում, որին մասնակցում էին թշնամական տանկեր ու ինքնագնացներ, հրետանի եւ օդուժ, ինքնապաշտպանութեան ազատամարտիկներից 10ը հերոսի մահով զոհուեցին՝ թոյլ չտալով անարգ թշնամուն մտնել հայրենի հողը:

Այդ անմահների մէջ էր նաեւ Գարսեւանը: Քսանմէկամեայ Գարսեւան Բաբգէնի Բաղրեանը: Գիշեցի նուիրեալը, որն իր համագիւղացիներ Մանուէլ Հայրապետեանի, Բրոնիսլաւ Ծաքարեանի, Վաղինակ Աւանէսեանի, Արմօ Առուստամեանի, Սենդիկ Գասպարեանի, Ռուբիկ Այդինեանի, Համլետ Յարութիւնեանի եւ այլոց պէս գիտակցական մահով է նահատակուել, կ'ապրի բոլորի սրտում:

ՆՈՐԱՅՐ ԶՈՀՐԱՊԻ ԳԱԼՍՏԵԱՆ...

Ծնուել է Մարտունի քաղաքում: Սովորել է ծննդավայրի դպրոցում եւ բանակային ծառայութիւնը համատեղել զինուորական ուսումնարանում ուսման հետ:

Լենինգրադեան զինուորական-ուսանողական տարիները շատ բան են տուել Նորայրին եւ շատ բան են խլել նրանից: Մա՛նաւանդ՝ սկսած ութսունութից, երբ արցախահայութիւնը փոթորկուել էր, ու տեսանելի էր

դառնում մօտալուտ պատերազմը: Կարօտում էր կուրսանտն իր հայրենի քաղաքին, որին աւերուելու առասպելն էր պարտադրուած: Մինուճարիկ որդու կարօտով կարօտում էր նա իր արդէն ծերացող ծնողներին, որոնք ապրում էին գետնատնակում, որը փորել էին թշնամական հրետանուց եւ օդուժից պատսպարուելու նպատակով: Եւ չափ չունէր, անպարագիծ էր այդ կարօտը առ հարազատներին ու համադասարանցիները, որոնք մարտնչում էին թուրք հրոսակների դէմ:

Ինքնուներկուսին աւարտեց ուսումնարանը փայլուն գնահատականներով եւ ղեկավարութեան շոյիչ աչքի առաջ առաջարկ ստացաւ գործուղուելու Կենտրոնական Ռուսաստանի զինուորական օկրուգներից մէկը՝ զինուորական աշխատանքային գործունէութիւն սկսելու:

Չկարողացաւ մերժել:

Սակայն մտքով նա ուրիշ տեղ էր: Իր մարտնչող եղբարքում: Մէկ ամիս յետոյ ամէն ինչ թողած, Նորայր Գալստեանը յայտնուեց Մարտունի քաղաքում: Դիրքային ծառայութիւն էր մտցուած: Ինքն էլ ներգրաւուեց: Անցնում էին պաշտպանական մարտերի գերլարուած ու միապաղաղ ամիսները:

Իսկ ինքնուներկուսի Օգոստոսին սկսուեց լայնածաւալ յարձակումը ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Ռազմակոչի ձայնը ի զէն տարաւ նաեւ Նորայրին: Իր ընկերների հետ նա յայտնուեց Ալիբալիի ուղղութեան պաշտպանների շարքերում: Հայ ազատամարտիկներն անօրինակ արիութեան եւ խիզախութեան օրինակներ էին ցոյց տալիս: Նորայրը՝ նոյնպէս: Նա դիմակայում էր հակառակորդի հետեւակայիններին, որոնք տանկերի եւ ԲՏՐների զրահների ետեւում թաքնուելով, փորձում էին ճեղքել ռազմաճակատը:

«Գրադ» համակարգերից մեր դիրքերի անխնայ ականահարումը մեր շարքերից խլեց նաեւ Նորայրին: Դա նրա վերջին մարտն ու զարկն էր: Ընկաւ խիզախ հայորդին մատաղ հասակում, երբ սեփական անձը զոհելուց առաջ կարող էր որպէս զինուորական կադր պէտք գալ իր համերկրացիներին ու համընդհանուր պաշտպանութեանը:

Երկուսն էլ ընկան նոյն ճակատամարտում եւ իրենց սուրբ անունները օծեցին 21ամեայ անմահութեան տարիքով («Հայաստանի Հանրապետութիւն», 22 Սեպտեմբեր 1993):

Է. ԵՍԱՅԵԱՆ
Ա. ԱՐԱՄԵԱՆ

ԿԱՐԿՏԱՀԱԼԱԾԸ

Լռեց Արշոյի հրանօթը։ Սակայն մի կարճ պահ միայն։ Ու կրկին որոտաց նրա յուղարկաւորութեան օրը, արկերի կարկուտ տեղաց թշնամու գլխին՝ ի յիշատակ հրետանաւոր Արշալոյս Պետրոսեանի։

Տարիներ շարունակ Արշալոյս Պետրոսեանի հրանօթի ձայնը հանգըստութիւն ու վստահութիւն էր պարգեւում տաւուշցի հողագործին։ Տարիներ շարունակ Արշալոյսը կռւում էր կարկուտի դէմ։

Իսկ 88ից յետոյ, երբ կարկտաբեր սեւ ամպի նման եկաւ թշնամին ու եկաւ հայոց ոգու նորածիլ պտուղը չարդուխուրդ անելու՝ Արշալոյսը հակակարկտային հրանօթի փողը գարձրեց դէպի թշնամին ու կրակեց՝ ինչպէս կարկուտի վրայ էր կրակում։

Եւ ամէն անգամ, երբ թշնամին գլուխ էր բարձրացնում, երբ որոտում էին մահաբեր կրակոցները, հնչում էր Արշալոյսի մարտական հրանօթի ահեղ ձայնն ու թշնամին ցաքուցրիւ փախչում էր՝ ինչպէս հալածուած կարկտաբեր ամպ։

Եւ ամէն անգամ Արշալոյսի հրանօթի ձայնը հանգստութիւն ու վստահութիւն էր պարգեւում տաւուշցի հային։

Կռւում էր թշնամու դէմ՝ ինչպէս կարկուտի դէմ էր կռւում, առանց բարձրագոչ խօսքերի, առանց փառք ու պատիւ ակնկալելու։ Գիտէր, որ կարկտաբեր ամպի դէմ պայքարելու միջոցը մէկն է՝ հրանօթը։ Գիտէր, որ թշնամու դէմ պայքարելու միջոցը մէկն է՝ զէնքը։

Ու կռուեց՝ մինչեւ զոհուելը, մինչեւ 92 թուականի Օգոստոսի 14ը։

Այդ օրը ինքը չէր հրանօթի մօտ։ Առաջադրանք էր ստացել արկ հասցնելու։ Աւա՜ղ, թշնամու արկը պայթեց հէնց ոտքերի տակ։ Չհասցրեց մի վերջին անգամ ցրել թշնամու կարկտաբեր ամպերը։ Ընկաւ 47ամեայ զինուորը՝ յանուն հայրենի խաղաղ երկնքի։ Լռեց Արշոյի հրանօթը։ Սակայն մի կարճ պահ միայն։ Ու կրկին որոտաց նրա յուղարկաւորութեան օրը, արկերի կարկուտ տեղաց թշնամու գլխին՝ ի յիշատակ հրետանաւոր Արշալոյս Պետրոսեանի։

Զոհուեց Արշալոյսը, բայց կայ, գործում է նրա հրանօթը։ Եւ ամէն անգամ, երբ թշնամու կողմում սեւ ամպեր են կուտակւում, որոտում է Արշոյի հրանօթն ու հալածում թշնամուն, ինչպէս կարկտաբեր ամպերն էին հալածում։ Եւ ամէն անգամ, երբ որոտում է Արշոյի հրանօթը, հանգըստութիւն ու վստահութիւն է իջնում Տաւուշի վրայ, տաւուշցի հայի վրայ («Երկիր», 12 Օգոստոս 1993)։

Ց. Ս.

ՍԵՐԺ ՌՈՒԲԷՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Մոսկուայում գտնուելու ժամանակ մտահոգուած էր հայրենի լեռնաշխարհի ճակատագրով: Թողնելով գիտական գործունէութիւնը, նուիրում է Արցախ աշխարհի ազատագրման գործին:

Սերժ Ռուբէնի Հայրապետեանը ծնուել է 1961 թ. ԼՂՀ Մարտունու շրջանի Ճարտար գիւղում. ուսուցչի ընտանիքում:

Ճարտարի միջնակարգն աւարտել է գերազանց գնահատականներով:

Մինչ բուհ ընդունուելը՝ աշխատել է գիւղի «Կոմունիզմ» կոլեկտիւ տնտեսութիւնում:

1979 թ. ընդունուել եւ 1984 թ. աւարտել է Երեւանի Պետական համալսարանի կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը: Աւարտելուց՝ աշխատանքի է անցել Արովեան «Սիրիուս» ԳԱՄում: Այնուհետեւ գործուղուել է Մոսկուա, ԳԱ հաշուողական կենտրոն՝ ստաժաւորման:

Մոսկուայում գտնուելու ժամանակ մտահոգուած էր հայրենի լեռնաշխարհի ճակատագրով: Թողնելով գիտական գործունէութիւնը, նուիրում է Արցախ աշխարհի ազատագրման գործին: Մայրաքաղաքում լայն աշխատանք է ծաւալել Ղարաբաղեան հարցը համապատասխան կազմակերպութիւններին հասցնելու գործում: Անհրաժեշտութիւն համարեց իր անմիջական մասնակցութիւնը ունենալու գիւղի ինքնապաշտպանութեանը:

Սկսուեց Սերժ Ռուբէնի Հայրապետեանի զինուորական կեանքը:

1991 թ. Նոյեմբերի կէսերին, գիւղի ինքնապաշտպանութեան գործը կազմակերպողներից մէկը հանդիսացաւ եւ դարձաւ 19 հոգուց բաղկացած կամաւորական ջոկատի հրամանատար:

1991 թ. Դեկտեմբերի 8ին եւ 9ին իր անմիջական մասնակցութիւնն է բերել Վերին Դիւանլար գիւղն ազերիներից ազատագրելու ու նրա պաշտպանութեանը:

Հայրենի գիւղից ներքեւ գտնուող Վերին Վէյսալի գիւղի առճակատման ժամանակ՝ Սերժն իր ջոկատով առաջիններից մէկն էր գիւղի ինքնապաշտպանութեան դիրքերում:

Այնուհետեւ Ճարտար գիւղի առջեւ ծառացել էր բռնատեղահանման վտանգը: Անհրաժեշտութիւն էր առաջացել ընդլայնել գիւղի ինքնապաշտպանութեան ջոկատների թիւը: Նա հանդիսացաւ այդ գործի նախաձեռնողն ու ակտիւ մասնակիցը: Ընտրուել է ինքնապաշտպանութեան ուժերի շտաբի անդամ: Նա դարձաւ նորաստեղծ դասակներից մէկի հրամանատար:

Իր կողմից ղեկավարուած դասակը ակտիւօրէն մասնակցել է իր ծննդավայրի պաշտպանութեանը, բազմիցս օգնութեան է հասել շրջանի սահմանային գիւղերի ինքնապաշտպանութեան խմբերին:

1992 թ. Փետրուարի 16ին շրջանի Ղարադաղլու գիւղի ազատագրման ժամանակ, Սերժն իր ջոկատով մասնակցել է Մարտունու պաշտպանական դիրքերի ամրապնդմանը:

1992 թ. Փետրուարի 22ին՝ Վերին Վէյսալի գիւղը թշնամուց ազատագրման գործում, Սերժն իր դասակով առաջին գծումն էր:

Մայիսին մասնակցել է Ալիբալիի մարտական դիրքերում թշնամու գրոհի յետ մղմանը:

Յունիսի սկզբին ինքնապաշտպանութեան ջոկատում հրետանային մարտկոց ստեղծուելուց նա հանդիսացաւ ղեկավարման դասակի հրամանատարը: Կարճ ժամանակաշրջանում տիրապետելով տուեալ բնագաւառի գործը, պատրաստեց հրանօթային հաշուարկներ:

1992 թ. Յունիսի 28ին՝ ազերի հրոսակների յարձակման ժամանակ, Սերժը գլխաւորել է գիւղի պահեստային ուժերին ու մասնակցել թշնամու մեծաքանակ հետեւակի ու զրահատեխնիկայի գրոհը ի չիք դարձնելուն:

1992 թ. Օգոստոսի 15ին թշնամին կատաղի ու անողոք ուժով, զրահատեխնիկայի ուղեկցութեամբ յարձակւում է Ճարտարի ինքնապաշտպանական դիրքերի աջ թեւի վրայ, ճեղքում այն, մտնում Վերին Վէյսալի գիւղը, դրանով վտանգ սպառնալով հայրենի գիւղին ու ամբողջ Մարտունու շրջանին:

Օրհասական այդ ժամին, գրոհի յետ մղման ժամանակ, Սերժը դարձեալ առաջին գծում էր: Ստանալով առաջին վէրքը ոտքից՝ չի լքում մարտադաշտը, մնում է շարքում ու վարում մարտը, սակայն արիւնարբու ազեր թշնամու գնդակը երկրորդ անգամ է խոցում նրա մարմինը, որը եւ ստիպում է ազատամարտիկին թողնել մարտադաշտը եւ տեղափոխուել շրջանային հիւանդանոց, որտեղ եւ հայ հայրենապահ քաջորդու կեանքի թելը կտրւում է, սրտում թողնելով Արցախ աշխարհի ազատագրութեան կարօտը:

Սերժը մեր շարքերում է, մեզ հետ է; նա ԱՆՄԱՀ է:

Ոչ իմացեալ մահը մահ է, իմացեալ մահը ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ. այսպիսին էր մեր ՍԵՐԺԸ (*Մեքենագիր*):

Ճարտարի Հ. 1 Մոտոհրաձգային գումարտակի հրամանատար՝
Կ. Ռ. ԹՈՎՄԱՍԵԱՆ

24 *Դեկտեմբեր*, 1992

ՄՈՒՍԱՅԻՍ

Կանգ առ, իմ մուսա - տենդիս վաչխառու,
Սէգ կարօտներից հոսող պիղծ առու,
Գիշերուայ մթնում լոյսեր մոգոնող,
Ցերեկուայ լոյսում մենութեան ձգտող,
Ցորդահոս բարքում դու չենու կեցուածք,
Քարացումներում՝ յեղյեղուկ վիժուածք,
Սին պարպումների քաոս, օնանիստ,
Սին մեռելների վարձու ողբասաց,
Անկամ քայլերի դու սրբագրիչ,
Անկամ յոյզերի դու անբկունք բիճ,
Մեռնողի սնարի տիրացու ախմախ,
Փչուած մոմերը վառող գարշ դու մարիս,
Իմ թափուր հոգու դու խուլ դղրդիւն,
Իմ թափօր մահի ժահախօսութիւն,
Արդ, ժամանակն է, հիմա կը սատկես,
Ո՞վ գիտէ, դուցէ հանճարեղ եմ ես...

(Ձեռագիր) *ՍԵՐԺ ՀԱՑՐԱՊԵՏԵԱՆ*

ԸՆԴՀԱՏՈՒԱԾ ՕՐԱԳԻՐ

Օգոստոսի 15ին Մարտար գիւղի պաշտպանութեան հերոսամարտում զոհուեց դասակի հրամանատար Սերժ Հայրապետեանը: Մարտարի քաջորդիների՝ Սենիկի, Բաղդասարի, Գագիկի, Ցովիկի, Կառլէնի արեամբ սրբացել էր այս հողը: Սերժի ժամն էլ եկաւ: Ինչպէս որ մարտիկներից մէկը՝ Նիքսոնը, ասաց Սերժի եղբօրը՝ Լեւոնին. «Բոլորս էլ ցուցակագրուած ենք»: Մարտիկների վկայութեամբ ամենադժուարին պահերին, ամենավտանգաւոր պոստերում առաջինը Սերժը պիտի լինէր: Այդ օրն էլ, լսելով գիւղի շրջակայքի պոստերից մէկի գրաւման մասին, զինակիցների՝ մահապարտների ջոկատով առաջ էր նետուել: Սերժի վերջին մարտն էր: Ծանր վիրաւորուեց, Մարտունիի հիւանդանոցում վիրահատուեց, բայց...

Մտաւորական էր: Սիրում էր դասական երաժշտութիւն, պաշտում էր Հաշեկի «Շուէյկ»ը: Բայրոնը անգիր գիտէր: Բակունց ու Թումանեան էր սիրում: Բանաստեղծութիւններ էր գրում:

Սերժը նրանցից էր, ովքեր իրօք, առաջ են գնում մինչեւ վերջ, մինչեւ այն սահմանագիծը, որից յետոյ անմահութիւնն է («Արցախ», 20 Հոկտեմբեր 1992):

ԱՎԱՐԴ ԲԱՐԽՈՒԴԵԱՆ

ՆՈՐԻԿ ՎԱԼԵՐԻԿԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ծնուել է Մարտունու շրջանի Նորշէն գիւղում՝ 1971 թ. Դեկտեմբերի 27ին: Աւարտել է Նորշէնի 8ամեայ դպրոցը եւ Մարտունու թիւ 126 պրոֆտեխուսումնարանը: Բանակում ծառայել է 1989-1990 թթ.:

Բանակից վերադարձել է 1990 թ. Հոկտեմբերին եւ մտել ինքնապաշտպանական ջոկատը: Տրակտորիստ էր, աւտովարորդ:

Զոհուել է 1992 թ. Օգոստոսի 15ին՝ հրետակոծութեան ժամանակ (Ձեռագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

•

ԱԼԵՆ ՄԱՐՏԻԿԻ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Ծնուել է 1970 թ. փետրուարի 2ին՝ Աշան գիւղում:

1989-91 թթ. զինծառայութեան մէջ է եղել Լենինգրադում եւ Գերմանիայում: Բազմիցս խրախուսուել է լաւ ծառայութեան համար: Սերժանտ էր:

Որպէս տրակտորիստ աշխատում էր կոլտնտեսութիւնում՝ կԱՖում:

Զոհուել է 1992 թ. Օգոստոսի 17ին՝ Մարտակերտի շրջանի կուսապատ գիւղում (Ձեռագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

«ԹՈՂ ՍԳԱՅ ՆԱ, ՈՎ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԻՆՈՒՈՐ ՉԻ ՏՈՒԵԼ»

...Մենք մեր արիւնը չենք խնայի յանուն ձեզ, յանուն Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստանի եւ յանուն ողջ հայութեան. մեր գնդացիրը չի՛ լռի՛, չէ՛...։ Երբէկ է՞ օրը, երբ կը կրուենք Սասնոյ անյաղթ լեռներում...»։

Առաքել պապը այնքան էր պատմել Սասնայ դիւցազների, երկրի հող ու ջրի, գաղթ ու կոտորածի մասին, որ պատանի Գէորգի հոգում բուն էր դրել վրէժի եւ ազատագրական պայքարի կրակը։ «Շատ մի տանջուի, ճորս Մեծնամ, լրս զրմր հոգեր թուրքից յետ գ'առնիմ։ Գ'երթանք մըր էրգիրն»,— այս անգամ արծրունքցի Առաքելին յուսադրողը թոռն էր։ Եւ երբ Գէորգն աւարտեց Ներքին Բազմաբերդի միջնակարգ դպրոցը, չտատանուեց, թէ ուր գնայ ուսումը շարունակելու։ Ընդունուեց Ստավրոպոլի գինուորական բարձրագոյն ինժենէրական ուսումնարանը, աւարտեց գերազանցութեամբ եւ որպէս լէյտենանտ ծառայութեան անցաւ խորհրդային բանակում։ Երբ Երեւանում կազմակերպւում էր Հայկական Դեսանտա-Գրոհային առաջին Գունդը (ՀԴԳԳ) Գէորգն ու իր կըտսեր եղբայր՝ կարէնը, աշնակցի, դաւթաշէնցի, կաթնաղբիւրցի բազմաթիւ տարօնորդների հետ համալրեցին նրա շարքերը։ Շուտով Գէորգն ստացաւ աւագ լէյտենանտի կոչում եւ նշանակուեց ՀԴԳԳի վաշտերից մէկի հրամանատար։

...Երբ անցնում էինք Սիւնեաց լեռնաշխարհով, ճանապարհի եզրին ծառերը մեղմ օրօրւում էին,—պատմում է կարէնը։ —Գէորգը երկար նայեց ծառերին.

—Կը մտնե՛մ, միայն թէ դու դարերում ազատ խշշաս,
Իմ հեռո՞ւ, հեռո՞ւ, հեռո՞ւ Նալիրեան դալար բարդի։

Հէնց առաջին օրուանից նա իր այս երդումին հաւատարիմ մնաց...

Կուուեց սասնորդի լանը Նիկոլ Դումանի հայրենի եզերքի համար՝ մտապատկերում ազատագրուած Շուշին ու Ղազանչեցոց սուրբ եկեղեցին։ Կուուեց Գէորգը իր վաշտի գլուխն անցած, որպէսզի ազեր թուրքը չհանէր Գանձասար եւ Ամարաս, որպէսզի դարեր շարունակի գոյատեւել Մխիթարչէնի 2500ամեայ կաղնին, որի շուաքում մի օր իրենց հանդիսան են անցկացրել Մեսրոպ Մաշտոցն ու Մովսէս Խորենացին...։ Մաքով յանախ էր տեղափոխւում Թալինի շրջանի Դաւթաշէն գիւղ՝ իր հայրական ծննդավայրը, փայփայելով մի սուրբ բաղձանք. ազատագրուած տեսնել Արցախ աշխարհը, ուխտի գնալ Պրլ Պուղու գերեզմանին եւ Շուշուայ մշակոյթի ապագայ պալատում լսել «Ղարաբաղի հորովել»ն ու պարել սասունցիների «Քոչարի»ն։

«Նանէ՛ ջան,— կարդում ենք Գէորգի վերջին նամակում,— գիտեմ՝ հիմա տանջւում ես, երկու որդիներդ էլ կուում են Արցախի ազատագրութեան եւ Հայաստանի սահմանների անձեռնմխելիութեան համար։ Չինուորը, Նանէ՛, մահից չի վախենում։ Մեզ սպանողին մենք պիտի սպանենք։ Զմտածէ՛ք։ Մենք ձեզ համար, մեր հողի եւ ժողովրդի համար ենք զինուոր դարձել։ Մինչեւ չյաղթենք թշնամուն, մինչեւ Ղարաբաղը չազատագրուի, տուն չենք վերադառնայ։ Քեռի Տելեմակին ասա, մինչեւ Ղարաբաղը չազատագրեմ, ամուսնացողը չեմ...։ Երդւում ենք ես էլ, Կարէնն էլ սուրբ Մարաթուկով եւ մեր գիւղում նոր-նոր հիմնադրած եկեղեցով, որ մենք մեր արիւնը չենք խնայի յանուն ձեզ, յանուն Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստանի եւ յանուն ողջ հայութեան. մեր գնդացիրը չի՛ լռի, չէ՛...։ Երանէկ էն օրը, երբ կը կուուենք Սասնոյ անպաղ լեռներում...»։

Վերջին նամակ, վերջին զրոյց եւ վերջին համբոյր։ Իր ջոկատի մարտիկներին գրոհի տանելիս, կեանքի 25րդ գարնանամուտին (ծնուել է 1967 թ. Հոկտեմբերի 16ին), Լաչինի մարդասիրական միջանցքը ադրբեջանցի վայրագներից պաշտպանելիս ռումբի պայթիւնից զոհուեց Գէորգ Սիրագնիկի Թովմասեանը, զոհուեց Օգոստոսի 22ին իր սասունցի մարտական ընկերների՝ աշնակցի Արամ Ավդալեանի եւ ագարակցի Սահակ Կիրակոսեանի հետ, ապացուցելով՝ «ընկերով մահը հարսանիք է»։

...Ցաղթանակած վերադարձաւ Գէորգը հայրենի Դաւթաշէն, բայց զոհուած։ Զոհուած, բայց անմահացած, այդ էին խորհրդանշում մխիթարական խօսքերը՝ ուղղուած մերօրեայ Ֆիդայու մօրը՝ Օֆիկ Ղազարեանին. «Փող ագայ նա, ով հայրենիքին զինուոր չի տուել»։ Քանզի մենք մեր ապրած կեանքի համար երէկուայ եւ այսօրուայ Հայ Ֆիդայուն, Հայ Զինուորին եւ Հայ Ազատամարտիկին ենք երախտապարտ (*«Երկիր»*, 16 *Հոկտեմբեր* 1992)։

Ս. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՍԼԱՒԻԿ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Մնուել է 1961 թ. Սումգայիթում: 1979 թ. աւարտել է Արովեանի թիւ 4 ռուսական դպրոցը: 1979 եւ 1986 թ.թ., եղել է լեռնագնացութեան Հայաստանի ախոյեան: Աշխատում էր «Սիրիուս» գործարանում: 1988ի գարնանը մեկնել է Արցախ:

Հ.Յ.Դ. անդամ էր:

Մասնակցել է Արցախի բոլոր ազատամարտերին: Հետախուզական ջոկատի հրամանատար էր:

Զոհուել է 23 Յունուար 1992ին:

Ասում էր, որ մեր ծնողները ժամանակին սխալուել են՝ թողնելով Արցախը եւ նրանց սխալը ուղղելու վճռականութեամբ, անաւարտ թողնելով ուսումը, մեկնեց Արցախ: Այնտեղ գտաւ պայքարի իր ընկերոջը՝ Սլաւիկին եւ նրա հետ միասին մասնակցեց Արցախի ազատամարտին: Լուռ ու մունջ էին. համեստ. Վլադիկը շատ էր սիրում «Պիթլզ» քառեակին: Տետրի մէջ գրառել էր մեր պատմութեան յիշարժան տարեթուները՝ սկսած Ուրարտուից: Ասում էր յոյսը մեզ վրայ պիտի դնենք եւ ժպտում էր: Սլաւիկն ի հաւատատումն նրա կարծիքի. *«Վաղ թէ ուշ Արցախը կը վերամիաւորուի Հայաստանին, պիտի կռուենք»*:

Հաւատում էին եւ այդ հաւատի առաջնորդութեամբ անվտանգ արահետներ էին բացում, որոնցով պիտի անցնէին ազատամարտիկները: 1991 Դեկտեմբերի 17ին մարտական առաջադրանքը կատարելիս Վլադիկն ու իր ընկեր Դաւիթը ընկան թշնամու կրակի տակ: Դաւիթը վիրաւորուեց: «Գլորուիր դէպի անտառ»,— գոչեց Վլադիկը եւ կրակը իր վրայ վերցնելով ապաւինվեց ընկերոջ նահանջը: Թշնամու կրակահերթը փշրեց ոտքը: Զգաթելով կապեց վէրքից վերեւ եւ երկու օրում մօտ 200 մետր սողալով քողարկուեց մացառուտում: Ամբողջովին թրջուել էր եւ սառել: Ափսոսում էր, որ չկարողացաւ մէկ օր առաջ զոհուած Ներսոյի թաղմանը մասնակցել: Երկուսուկէս օր յետոյ Սլաւիկը գտաւ ընկերոջը, փոխադրեցին հիւանդանոց: Ինքնաձիգը վեր պարզեց եւ ասաց ընկերներին. *«Պինդ կացէք, ամէն ինչ լաւ կը լինի...»*:

Դեկտեմբերի 22ին հիւանդանոցում կնքեց իր մահկանացուն: Արովեանում Սլաւիկը ընկերոջը ամփոփեց Մայր հողում, ծնկեց շիրիմի

մօտ, յուր երդուեց եւ վերադարձաւ Արցախ: Գնաց որպէս ուխտաւոր, որպէս սրբազան խենթ...

1992 թ. Յունուարի 23ին Ալաւիկը նահատակուեց Կրկժանի բարձունքներում մարտական գործողութիւնների ժամանակ: Իր վերջին խօսքերն էին. *«Եկէք այստեղ»...*

Լսե՞ց արդեօք հայութիւնը Արցախի այս ճիչը:

Ալաւիկը թաղեցին Վլադիկի կողքին, թող միասին լինեն յաղթողները, քանզի մարտից վերադառնում են մէկ օր վահանով, միւս օրը՝ վահանի վրայ, արդիւնքը նոյնն է. յաղթանակ... («Երկիր», 6 Փետրուար 1992):

ՍԱՄՈՒԷԼ ՓՈՁԱՐԵԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴՐ (ԾՈՒՐԻԿ) ԽԱՉԱՏՐԵԱՆ

Ծնուել է 1967 թ. Մանգանակերտում, 1984 թ. աւարտել է Աբովեանի թիւ 6 միջնակարգ դպրոցը, 1985 թ. ընդունուել է Պետերբուրգի ռազմական ակադեմիային կից ռազմաշինարարական բարձրագոյն ուսումնարանը, 1988թ Դեկտեմբերին, երբ 4րդ կուրսի ուսանող էր, թողեց ուսումը եւ մեկնեց Արցախ:

Հ.Յ.Դ. անդամ էր:

1991 թ. Յուլիսից ընդգրկուում է ինքնապաշտպանութեան ուժերի հետախուզական ջոկատի մէջ:

ԲԵԿՈՐԸ ԻՆՉՊԷՍ ՈՐ ԿԱՐ...

Դեռեւս կը կերտուի ԱՇՈՏ ՂՈՒԼԵԱՆԻ (ԲԵԿՈՐ) ամբողջական դիմանկարը եւ կը մեկնուի ապագայ սերունդներին՝ որպէս ազգասիրութիւն, քաղաքացիութիւն ուսանելու պայծառ օրինակ: Սակայն այսօր արդէն անհրաժեշտութիւն կայ խօսել նրա մասին, յիշել գործերն ու խօսքերը:

Իր տպաւորութիւններն է պատմում Աշոտի մարտական ընկերը՝ լրագրող Արմէն Դանիէլեանը:

«ԱԶԱՏԱՄԱՐՏ»

«Բոլոր մարտերի ժամանակ Բեկորն առաջինն էր նետւում հազմադաշտ ու վերջինը դուրս գալիս»,— ասում էին զինուորները: Եւ կուում էր՝ առանց տատանուելու, որ ինքը յաղթող է դուրս գալու: Ղարաբաղի ազգային-ազատագրական շարժման սկզբից մինչեւ Օգոստոսի 24ը Բեկորը միմիայն յաղթանակներ է տարել:

Օգոստոսի 26ին Աշոտին յանձնեցին հողին: Ինձ միշտ թուացել է, թէ գնդակը երբեք նրան չի տանելու: Պարզապէս իրաւունք չունի տանելու: Հիմա էլ, երբ գրում եմ այս տողերը, էլի չեմ հաւատում, որ Նա չկայ: Ջեմ ուզում հաւատալ...

Մի անգամ զրոյցի ընթացքում Աշոտն ինձ ասաց.— «Այդ հայրենասիրութիւն ասածդ բանը ոչ այլ ինչ է, եթէ ոչ քեզ վրայ դրուած պարտականութիւնների բարեխղճօրէն կատարում: Եթէ զինուորից սկսած մինչեւ նախարարը բոլորանուէր իրենց գործն անեն, ապա մեր բոլոր ձեռնարկումները կը պսակուեն յաղթանակով»: Աշոտը՝ ինքը կառավարում էր եւ գործում այս օրէնքով: Ու երբեք չէր նեղւում, չէր տրտնջում ծանրաբեռնուած լինելով բազում հոգ-

սերով։ Իսկ առաջին վաշտի ստեղծման շրջանում հոգսերը շատ էին, այնքան շատ, որ ժամանակ չէր մնում գոնէ շաբթուայ մէջ մէկ օրով տուն գնալ, երեխաներին տեսնել։ Վաշտի տղաների կէսը կըռուում էր մարտադաշտում, միւս կէսը հոգում էր վաշտի կազմաւորման հետ կապուած հոգսերը։ Զէնքը պակաս էր, զինամթերքը՝ քիչ։ Աշոտը իր տեղակալ Գենայի հետ վաղ առաւօտից մինչեւ ուշ գիշեր կազմակերպում էր զէնքի ու զինամթերքի մատակարարումը, դասակներ ու օղակներ ստեղծում։ Եւ այս ամէնը կատարում էր կռուելու հետ միաժամանակ։ Ամէն անգամ մարտադաշտ գնալուց առաջ Աշոտը հաւաքում էր տղաներին, բացատրում անելիքը։ Եւ երբ գնում էր մարտի, բոլորը հաւատում էին, որ Բեկորը յաղթանակով է գալու, Բեկորը բոլորի համար անպարտելի էր։ Ես չեմ յիշում մի դէպք, երբ որ նա որեւէ յանձնարարութիւն ստացած լինէր ու առանց մինչեւ վերջ կատարելու վերադառնար։

Երբ իրավիճակը խիստ լարուած էր լինում, եւ իրական վտանգ էր սպառնում որեւէ հայկական բնակավայրի, գլխաւոր հրամանատարը անմիջապէս հրամայում էր՝ զանգիր վաշտ՝ Աշոտին ասա, թող գայ։

Մասնակցած լինելով բազմաթիւ մարտերի ու կատարած լինելով ռազմական կարեւորութիւն ունեցող շատ յանձնարարութիւններ, Աշոտը երբեք չէր սիրում երկար-բարակ խօսել արածի մասին։ Կըռիւների ժամանակ հինգ անգամ վիրաւորուել էր տարբեր տեսակի արկերի ու նռնակների բեկորներից ու ամէն անգամ, երբ պառկեցրել են հիւանդանոցում բուժուելու, փախել է՝ բուժումը չվերջացրած։

Շուշիի գրաւումից անմիջապէս յետոյ բարձրացանք քաղաքը, որը դեռ ծխում էր, եւ չէին դադարել կրակոցները։ Աշոտը հինգերորդ անգամ էր վիրաւորուել՝ այս անգամ ձեռքից։ Բեկորը վնասել էր ձեռքի երակը, հազիւ էր ձեռքը շարժում։ Ասացի՝ գնա՝ հիւանդանոց, կարող է բարդանալ վիճակը։ Ժպտաց՝ թէ ոչինչ, դրանից ոչ ոք դեռ չի մեռել։ Միայն Մինչանցքի բացումից յետոյ Բեկորը գնաց Երեւան՝ հրաժեշտելուն։ Դեռեւս լրիւ չապաքինուած, նորից մտաւ կռուի մէջ։

Երբ գնացի առաջին վաշտում ծառայելու, Աշոտը խնդրեց, որ կազմակերպեմ տղաների անուելու հարցը։ Շուտով ճաշարանը սկսեց աշխատել։ Քաղաքում ալիւր ու հաց գրեթէ չկար, եւ կարիքաւորները յաճախակի էին գիմում, որ ալիւրով օգնեմ։ Աշոտին հարցրեցի՝ ինչ անեմ։ Ասաց՝ եթէ տեսնում ես կարիքաւոր է, օգնիր առանց տատանուելու։

Ջմեռային գիշեր էր։ Քաղաքը ուժեղ հրթիռակոծւում էր Շուշիից ու Քեռաւլարից միաժամանակ։ Աւտոմեքենայով բարձրանում էինք իր ընկերոջ տուն ինչ-որ կարեւոր, ռազմական հարցով։ Տուն չհասած՝ Աշոտը կանգնեցրեց մեքենան։ Գազի հոտ էր գալիս։ Փողոցի գազատար խողովակը վնասուել էր։ Մեկուսիչ ժապաւէն հանեց մեքենայից, փայտ խփեց խողովակի մէջ ու խողովակը ժապա-

ւէնով փաթաթեց։ Գազի արտահոսքը դադարեց։ Մեքենան շարունակեց ընթացքը։

Վաշտը կազմաւորուելուց յետոյ նորակոչիկներ ուղարկեցին՝ 20 հոգի։ Աշոտը նրանց հանդէպ իւրատեսակ հոգատարութիւն էր ցուցաբերում։ Մի անգամ ասաց՝ ոխակ չեմ անում նրանց կեանքն էլ վտանգել։ Մարտերի էր տանում միայն 5–6 հոգու, սովորեցնում էր, թրծում կռուի մէջ։ Հիմա այդ նորակոչիկները կանգնած են առաջին դիրքերում։ Նրանք բոլորն էլ իրենց համարում են Աշոտի տանները։ Արցախի ազատագրական պայքարում նահատակուեցին առաջին վաշտի շատ հրաշալի տղաներ։ Օրթա-Գիւնեփայա գիւղի ազատագրման ժամանակ զոհուեցին 6 քաջորդիներ։ Ընկել էին շրջափակման մէջ։ Նրանց թաղման օրը Աշոտին չափազանց յոգնաբեկ, տխուր ու վշտոտ տեսայ։ Երեկոյեան ընթրիքից յետոյ, երբ առանձին մնացինք, ասաց՝ չգիտեմ ինչ պատասխան տամ նրանց ծնողներին, ինչ ասեմ։ Ասաց ու լռեց։ Մի քանի օր շարունակ ցաւից հոգին կծկւում էր, չէր կարողանում ինքն իրեն տիրապետել։

Խոջալու գիւղի ազատագրումից մի քանի օր յետոյ 2 օրով տուն գնաց։ Երբ տնից եկաւ, պատմում էր, թէ երեխաների հետ ինչ զրոյցներ ու խաղեր են արել։ Պատմում էր, ու ինքը երեխայի նման ծիծաղում էր՝ միամիտ, անկեղծ ծիծաղով (Աշոտի ծիծա՛ղը, մինչեւ հիմա լսում եմ այն)։ Երեխաները նրա աստուածն էին եւ նրանց իւրաքանչիւր արտայայտութիւն Աշոտի համար խորհրդաւոր էր։

Ինձ միշտ զարմանք էր պատճառում քաղաքական հարցերին մօտենալու նրա խորաթափանցութիւնը։ Մի անգամ երեքով նստած զրուցում էինք Ղարաբաղի շուրջը տարուող քաղաքական խաղերից։ Ինքը գրեթէ լիսօսեց։ Զրոյցի վերջում, թէ՝ եթէ Ղարաբաղը կործանուի, ապա միայն քաղաքական խաղերի պատճառով է կործանուելու։ Քաղաքականութիւնը ամենասարսափելի գիշատիչն է։

«Բոլոր մարտերի ժամանակ Բեկորն առաջինն էր նետւում ռազմադաշտ ու վերջինը դուրս գալիս»,— ասում էին զինուորները։ Եւ կռւում էր՝ առանց տատանուելու, որ ինքը յաղթող է դուրս գալու։ Ղարաբաղի ազգային-ազատագրական շարժման սկզբից մինչեւ Օգոստոսի 24ը Բեկորը միմիայն յաղթանակներ է տարել։ Մի անգամ կատակով ասաց.— «Պարզւում է, որ բնածին ռազմական ընդունակութիւններ ունեմ, եւ նոր եմ միայն հասկանում դա։ Ես պէտք է ռազմական կրթութիւն ստանայի»։ Քարինտակ գիւղի պաշտպանութեան համար մղուող մարտերի ժամանակ, երբ պէտք է հերթական ջոկատը մեկնէր օգնութեան, հաւաքեց զինուորներին ու բացատրեց, թէ ինչ պէտք է անել։ Վերջում ասաց. «Ոչ մի քայլ յետ չնահանջել, թշնամին չպէտք է մտնի Քարինտակ»։ Գնաց ջոկատով մեկնեց։ Թշնամին Քարինտակում գտաւ իր գերեզմանը։ Գիւղը, որն անմիջապէս գտնւում է Շուշիի քթի տակ, անառիկ ամրոցի վերածուեց։ Թշնամին թնդանօթներով քարուքանդ արեց գիւղի տների մի մասը, անընդհատ գնդակոծում էր գիւղի պաշտ-

պանական դիրքերը, սակայն դրաւել չկարողացաւ։ Քարինասկի հետ մարտիկների հետ միասին առաջին վաշտի ազատները թուրքերին բարոյապէս սպանեցին գիւղի պաշտպանութեան համար մղուած մարտերում, ապացուցեցին, որ կարեւորը գիրքը չէ, ոչ էլ գէնքը, այլ՝ Ոգին։

Կարեւորը Ոգին է, եւ այդ Ոգին կայ, կը մնայ առաջին վաշտի քաջարի հրամանատարի եւ գինուորների՝ Գենաքի, Լեոնաքի, Լեւոնի՝ բոլորի մէջ։ Այդ Ոգին հնարաւոր չէ ոչ սպանել, ոչ էլ ոչնչացնել։ Այդ նոյն Ոգու շնորհիւ են ապատագրուել Խոջալուն, Լաչինը, Մալիբէյլին, Մարիչէնը։ Ես ունեմ ներքին համոզմունք՝ Աշոտի վաշտի ազատները հաւատարիմ են մնալու իրենց հրամանատարի պատգամներին՝ չնահանջել, հողը չյանձնել թշնամուն։ Հողը՝ որ թրծուել է Աշոտի եւ նրա նման ազատների արիւնով։

Աշոտը դաշնակցական էր։ Ղարաբաղեան շարժման սկզբից ընդունուեց Հ.Յ.Դ. շարքերը եւ իր ողջ էութեամբ՝ գործելակերպով, մտածելակերպով, հոգով եւ կարգապահութեամբ նա արտայայտում էր իսկական դաշնակցականի բնական կեցուածքը։ Երբեք ամպագոռգոռ բառեր չէր ասում հայրենասիրութեան մասին, այլ գործնականում ցոյց էր տալիս, թէ ինչպիսին պէտք է լինի հողի ու ազատութեան համար կռուող մարտիկը։ Նա զոհուեց որպէս դաշնակցական («Ազատամարտ», 1992, թիւ 39)։

ԱՐՄԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ



Ստեփանակերտ. Բեկորի գերեզմանը՝ իր անունը կրող հրապարակին կեդրոնը

ՀՕՐ ՆԱՄԱԿԸ

«Իմ համեստ, իմ անմման որդի, նոր ենք իմանում, որ առաջին Եռագոյն դրոշը դու ես հագցրել Շահումեան՝ 1989ի յուլիսեան թէժ օրերին, եւ այն հպարտօրէն ծածանուել է ու ոգեւորել մեր ժողովրդին դաժան պայքարում։

Ուզում եմ նախապատրաստել ձեզ· կարդացէք ու մի փչաքաղուէք։ Աչխատէք ընթերցել զուսպ՝ ինչպէս ընթերցում էք խորագրիս ներքոյ տպագրուող միւս հրապարակումները։ Գրեթէ նոյն պատմութիւնն է՝ զոհուած ազատամարտիկի պատմութիւնը։ Նոյն հայերէն բառերն են՝ բազմիցս ընթերցուած, բոլորիս ծանօթ, գուցէ փոքր-ինչ սովորական դարձած։ Անպահոյճ, զուսպ բառեր են։ Փոքրիկ մի տարբերութիւն միայն· զոհուած ազատամարտիկի հօր խօսքն է որդու մասին։ Իսկ սա, բա՜ռ խ, շա՜տ բան է ասում։ Այլ են բառերն արդէն ու այլ լիցք են կրում։ Ուստի նախազգուշացնում եմ՝ կարդացէք հօր նամակը զոհուած որդուն ու մի փչաքաղուէք·

«Իմ քաջ, իմ շիտակ որդի Արծուիկ։ Ուղիղ մէկ տարի է մեզ հետ չես։ Այդ մէկ տարուայ ընթացքում շատ բան է փոխուել, շատ ջուր է հոսել։ Կենաց-մահու կռիւն Արցախում շարունակւում է։ Մեր հերոս արցախցիները, մեր հայրենակիցները խստօրէն պատժում են ոսոխին, քո եւ միւս ընկած հերոսների վրէժն են լուծում։ Պիղծ թուրքերը լեղապատառ փախչում են՝ յանձնելով գիւղ ու քաղաք։ Չէ որ նրանք «հերոս» են անօգնական երեխաների, ծերերի եւ կանանց մօտ։

«Իմ կեանք, իմ թեւ ու թիկունք Արծուիկ, երդուել էի շիրիմիդ վրայ, որ իսկոյն եւեթ կը յայտնեմ քեզ քո սիրած ու չքնաղ լեռնաշխարհի՝ Շահումեանի ազատագրման լուրը։ Ներիր ինձ, որդիս, որ այսօր քո Շահումեանը ազատագրուած չէ։ Բայց պայմանը մնում է պայման, շուտով կը գայ այդ բաղձալի օրը։ Մեր քաջ վրիժառուները անցած մէկ տարուայ ընթացքում օր ու կեանք չեն տուել բիրտ թշնամուն, զարկել են նրան անխնայ ու անվրէպ։ Շահումեանցին զէնքը ցած չի դրել ու ցած չի դնի մինչեւ չազատագրուի իր սորբ օջախը։

«Այդ անաւոր կռուում, որդիս, մենք կորցրել ենք մեր լաւագոյն զաւակներին, որոնք այսօր հանգչում են քո կողքին՝ Եռաբլուրում։ Շահէն Մեղրեանն է, մեր քաջ հայդուկապետը, բուզլուխցի Սաքոն, որը քո շիրիմի առաջ խոստացաւ վրէժդ առնել (եւ առաւ), 16ամեայ Հայկ Մեղրը-

եանը, Պողոսը, Վահագնը, Արմենը, Արամայիսը, Ֆուրմանը, Սէյրանեան Շահէնը, Կամոն, Հայկ Վերդեանը, Սամուէլը...

«Իմ համեստ, իմ անմնան որդի, նոր ենք իմանում, որ առաջին Եռագոյն դրօշը դու ես հագցրել Շահումեան՝ 1989ի յուլիսեան թէժ օրերին, եւ այն հպարտօրէն ծածանուել է ու ոգեւորել մեր ժողովրդին դաժան պայքարում:

«Նոր ենք իմանում, որ բռնապետութեան դէմ Արցախեան շարժումից շատ առաջ առաջիններից մէկն ես սկսել պայքարել՝ դեռ Լվովի բարձրագոյն ռազմական ուսումնարանում սովորելու տարիներին: Առաջիններից մէկն էիր մարտահրաւէր նետել տիրող ռեժիմին, ենթած բարքերին, զառամախտով հիւանդ կուսակցութեանը:

«Ինչքան էիր հպարտանում ձեր առաջին գրոհա-դեսանտային գընդով, քո ապպայ ընկերներով, քո սասունցի Գէորգով, քո զինուորներով: Միշտ ասում էիր, թէ ձեր վաշտով Շահումեանը պէտք է ազատագրէք: Շատ ծանր է մեզ համար, ընկերներիդ հարազատների ու ծնողների համար, շատ թանկ էք ու սիրելի, քանզի ծաղիկ հասակում ձեր մատաղ կեանքը զոհեցիք յանուն հայրենիքի ազատութեան, բայց հաւատացած եղիր՝ առաւել ծանր է երբ հայրենիքն ու ծննդավայրն ենք կորցրել, մեր սուրբ հողն ու ջուրը: Ու այդ հողի ու ջրի ազատութեան համար դաժան կռիւը դեռ շարունակւում է: Հաւատացած եղիր՝ այդ կռիւն աւարտելու է յաղթանակով: Եւ Աստծոյ ամէն օր մեզ մօտեցնում է այդ երանելի պահին:

«Հանգիստ մնա՛, որդիս, մենք չենք ընկճուել, հպարտ ենք, որ քեզ նման որդի ունենք: Քո գործը շարունակում ենք բոլորս՝ հայրդ, մայրդ, կինդ, 80ամեայ պապդ ու Մանէ դուստրդ, որն արդէն իր քաղցր ձայնով քո սիրած «Հայրենիքի ջուրն» է երգում»:

Այլ խօսքեր չենք ասում. բառերն աւելորդ են: Պարզապէս ծանօթացնենք. հայրը Դերենիկ Պետրոսեանն է՝ «Մտաւոր ոգեղանջներ» թերթի խմբագրական կազմի աշխատակից: Որդին Արծուիկ Պետրոսեանն է՝ պաշտպանութեան նախարարութեան առաջին գրոհա-դեսանտային գնդի վաշտի հրամանատարի տեղակալ: Զոհուել է 92 թուականի Օգոստոսի 22ին, Լաչինի միջանցքում: Իմացէք նաեւ, որ ծնուել է Շահումեանում, Ղ տարեկանից տեղափոխուել Երեւան, սակայն անսահման սիրել է ծննդավայրը: Ուսանել է Լվովի բարձրագոյն ռազմական ուսումնարանում: Շարժումն սկսելուն պէս վերադարձել է Հայաստան, մասնակցել ազատագրական պայքարին, ծառայութեան անցել հայոց նորաստեղծ բանակում: Հայոց բանակի առաջին սպաներից մէկն էր: Երբ բացուեց Լաչինի միջանցքը, մեկնեց այն պաշտպանելու: Սպայ էր, դեսանտային, բայց հոգու խորքում երաժիշտ էր, երգեր էր յօրինում, նուագում ու երգում էր: Մարտական ընկերները նրան Մանարօ էին ասում: Դադարների ժամանակ մի կողմ էր դնում աւտոմատն ու ձեռքն առնում կիթառը...: Ու զոհուեց կիթառը ձեռքին, բլինդաժում, արկի պայթիւնից:

Վերջին երգը մնաց անաւարտ... («Երկիր», 21 *Օգոստոս* 1993)։

Ց. Մ.

ՇԱՏ ՀԵՂԱ՞Ի, ՏԷ՛Ր...

Իր մասին՝ ոչ մի խօսք։ Հպատմեց անգամ, որ օդանաւակայանում մեծ դժուարութիւններ է ունենում, քանի որ մագնիսական կամարների տակից անցնելիս, զանգը միշտ զրնգում է...։ Դէ եկ ու ամերիկացի ոստիկաններին բացատրիր, որ գրպաններում մետաղէ իր չկայ, որ մետաղը՝ ադրբեջանական արկի բեկորը, մարմնի մէջ է...

Վաղուց էի լսել Արցախի քաջամարտիկ Անդրանիկ Ցարութիւնեանի — «Բերդաձորի Անդոյի» մասին, բայց չէի տեսել։ Իմ պատկերացումների մէջ յաղթանդամ էր, կորովի, Հայկատիպ մի երիտասարդ։ Չէի տեսել ու տեսայ...։ Լոս Անջելեսում, այս տարուայ գարնանը։ Մի ընդունելութեան ժամանակ յայտնուել էինք նոյն սեղանի շուրջ, կողք կողքի։ Ո՛չ յաղթանդամ էր, ո՛չ կորովի, ո՛չ Հայկատիպ։ Վտիտ էր, գունատ։ Մանկականօրէն մաքուր աչքեր ունէր, որոնց մէջ, սակայն, դժուար չէր նկատել այնպիսի ուժ ու հաւատ, որ յատուկ է միայն ինքնազոհողութեան պատրաստ մարդկանց։

ԱՄՆ էր եկել Արցախի համար հանգանակութիւն կատարելու։ Իր մասին՝ ոչ մի խօսք։ Հպատմեց անգամ, որ օդանաւակայանում մեծ դժուարութիւններ է ունենում, քանի որ մագնիսական կամարների տակից անցնելիս, զանգը միշտ զրնգում է...։ Դէ եկ ու ամերիկացի ոստիկաններին բացատրիր, որ գրպաններում մետաղէ իր չկայ, որ մետաղը՝ ադրբեջանական արկի բեկորը, մարմնի մէջ է...

Ներկայ եղայ հանգանակութեան նպատակով կազմակերպուած երեկոներից մէկին։ Խօսքը խելացի էր, խոր, հայերէնն՝ անթերի։ Ներկաները հարցերի տարափ էին տեղում եւ ստանում սրամիտ, կարճ ու սպառիչ պատասխաններ։ Զգում էի, թէ բոլորն ինչպիսի համակրանքով ու սիրով են լցում նրա նկատմամբ։

Երեկոյի վերջում մօտեցանք։ Ասաց, որ առաւօտեան մեկնում է։ Գրկեցի ու զգացի, որ ձեռքերիս տակ համարեա՝ մարմին չկայ։

Եւ Անդրանիկը մէկընդմիշտ մտաւ սրտիս մէջ, մտաւ որպէս սէր, լոյս, հաւատ, որպէս ազնուութեան, մաքրութեան խորհրդանիշ։

ԱՄՆից վերադառնալուց մի քանի օր յետոյ նրա մասին մի բանաստեղծութիւն գրեցի.—

Ոչ լերան արծիւ ու ոչ դիւցազուն,
Ոչ կաղնեբազուկ, ոչ բոցամօրուս,
Վտիտ ես, բարակ, որպէս լոյսի սիւն,
Եւ գունատ, որպէս տառապեալ Յիսուս։

Քո մկրտութեան սուրբ ծէսն են արել
Կապոյտ լեռները անառ Արցախի,
Քո կնքահայրը վրէժն է ահեղ,
Եւ քո մեռոնը՝ լեղին մեր ցաւի։

Քեզ շատ են փորձել արճիճ ու կրակ,
Բայց նահանջել են ոգուդ ցոլանքից,
Լոյսի սուրբ սիւնը որքան էլ բարակ,
Բայց զօրաւոր է ական ու արկից։

Դու՝ Նոր Անդրանիկ, Նոր Աղբիւր Մերոբ,
Աչքերիդ խորքում չանթն է Նոյն տենդի,
Դու՝ դեռ անանուն, դեռ անյայտ հերոս,
Բայց չուտով պիտի փոխուես լեգենդի...

Գունատ ես, որպէս տառապեալ Ցիսուս,
Վտիտ ու բարակ, որպէս լոյսի սիւն,
Բայց դու՝ կորովի ու բոցամօրուս,
Դու՝ լերան արծիւ, դու՝ Նոր դիւցազուն...

ԱՄՆԻց վերադառնալուց յետոյ միայն մէկ անգամ հանդիպեցի նրան։ Զասացի իսկ, որ բանաստեղծութիւն եմ գրել իր մասին, համեստութիւնը խնայեցի։ Գտնում էի նաեւ, որ իրեն արժանի բանաստեղծութիւն չէ, ուրիշը, նորը պիտի գրէի։

Եւ ահա՝ գոյժը...

Հազար մահի միջով էր անցել, բայց կոյր պատահականութեան զոհը դարձաւ։ Շատ չեղա՞ւ, Տէ՛ր...

Ցաւում, խիստ է ցաւում սիրտս։

Անդրանիկի հետ զոհուել է նաեւ իմ վաղեմի ընկերոջ՝ գրականագէտ Սեւակ Արզումանեանի որդին՝ Արտակը։ Եւ ցաւս առաւել է սաստկանում։ Թէեւ Արտակին՝ Արցախից տրուած հեռուստահաղորդումների համարձակ հեղինակին, մօտիկից չէի ճանաչում, բայց միայն այն, որ Անդրանիկի ընկերն էր ու մտերիմը, ամէն ինչ ասում է նրա մասին։

Ու ես գլուխ եմ խոնարհում Անդրանիկի ու Արտակի ծնողների, հարազատների, բարեկամների, գինակիցների մեծ ու անփարատ վշտի առջեւ (**«Գրական թերթ»**, 1992, թիւ 25)։

ՎԱՀԱԳՆ ԴԱՒԻԹԵԱՆ

ԿԱՆՉ 2 ՆԱՀԱՏԱԿԱՑ

Այս հողագնդի պտույտները խոչ,
Ռիթմը քմահաճ
Դաջուած եմ դէմքիս՝ տտիպ կծծութեամբ...
Այս հպանցիկ քամիների սլացքը շեղ
Մեր ժպիտը չի մարելու, չի խամրելու արեան գոյնը...

Բացէք դռներն ու ընդունէք դուք ինձ
Ցաւուր պատշաճի...

Դարը ծնեց ինձ...
Եկել եմ կոկիճ դարերի կանչով,
Որ քայլեմ նորից մինչեւ Գողգոթա...

Բացէք դռներն ու ընդունէք դուք ինձ
Ցաւուր պատշաճի...
Որդու պէս Տիրոջ՝ խոցոտուած, արնոտ,
Իմ խաչն եմ բերում մինչեւ Գողգոթա...

Տիրոջ որդու պէս պարսաւանք տուէք,
Ոտաչին գամէք ինձ,
Բայց արդարութեան բերանով կ'ասեմ՝
Բացէք դռներն ու ընդունէք դուք ինձ
Ցաւուր պատշաճի...
Որդին եմ Տիրոջ՝ խոցոտուած, արնոտ...
Ի վերուստ տրուած գիրն իմ ճակատի,
Եւ մաքառումը աղճատուած ցեղիս,
Սուրբ-սրբոցն է իմ, ճախրանքը հոգուս,
Եւ ճահատակուած իմ ընկերների խրոխտ քայլերով
Պիտի դեռ դոփենք, պիտի ընդվզենք,
Այս յաղթանակի դրօշը պարզած,
Անցած ու գալիք դարերին ի կանչ...

Դրօշն Հայրենի...
պապերիս արեան գոյնն ու համն ունի...
Ընդվզումը մեր... նոյն ճստուածքն ունի—
գինու եւ արեան...

Պապերիս ձայնի դարաւոր կանչին
մեր շիրիմներից
Մեռածները ձայնով կը ձայնակցենք մենք
Եկող սերնդին ի ժառանգութիւն—
դրօշն Հայրենի,
ընդվզումն արդար.

Թրծուած մեր արեամբ, ճստուածքով մրուր, որ—
Պապերիս արեան գոյնն ու համն ունի...

Եւ բիւր ձայներով պիտի շեփորենք— հաւատը,
կամքը, պայքարը արդար,
Որ դարձեալ արեան գոյնն ու համն ունի
իմ Հայրենիի...

ԱՆԴՐԱՆԻԿ ՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

1989, Երեւան (Մեքենադիր)

ԲԵՐԴԱՁՈՐԻ ԱՆԴՐԱՆԻԿԸ

Որդուն՝ Վահագնին մատաղ էր խոստացել Ցայրենիքին։ Եվ Ցամեալ այդ արի քաջամանուկը զենքը ձեռքին մինչև վերջ մնաց դիրքերում՝ ճօր կողքին՝ նրա հետ մաքառելով Ցայրենի ճողի Ցամար։

Մէկ տարի առաջ, Օգոստոսի 28ին աւտոմեքենայ գրհուեց Բերդաձորի Անդրանիկը՝ Արցախի ազատագրական շարժման առաջին կազմակերպիչներից ու ղեկավարներից մէկը։

Անդրանիկ Ցարութիւնեանի ղեկավարութեամբ չորս դիւղ՝ Մեծ Շէնը, Փոքր Շէնը, Եղեսահողն ու Մաղկաձորը սահմանեցին Բերդաձորի ինքնապաշտպանութեան գօտին, որը չորս տարի շարունակ Արցախի հարաւային սահմանը փակող անառիկ բերդ դարձաւ, պահեց-պահպանեց հայ բնակչութիւնը, ստեղծեց տեսչական կարգերդ, կազմակերպեց գիւղերի ինքնօգնութիւնը եւ ինքնապաշտպանութիւնը, դպրոցական-ուսումնական գործը, վարուցանքը, փոքրիկ արտադրական ձեռնարկութիւնների օգնութեամբ լուծեց տեղի հայ բնակչութեան աշխատանքի ու ապրուստի հարցերը։

Ինչպէ՞ս ծնուեց Բերդաձորի ինքնապաշտպանութիւնը։

1988ի սկզբներին ծայր առած Արցախեան շարժումը բռնկուեց հայ շատ երիտասարդների սրտերում։ Նրանք գործի անցան. օգնութիւն էին հասցնում Արցախ։ Այդպէս ձեւաւորուեց ազատամարտիկների այն ջոկատը, որը Անդրանիկ Ցարութիւնեանի ղեկավարութեամբ որոշեց անցնել Բերդաձոր եւ տէր կանգնել հայրենիքի այդ բեկորին։ Տղաներից մի քանիսը եւ ինքը՝ Անդրանիկը, այդ ժամանակ գործող «Հայ Դատ» կազմակերպութիւնից էին։ (Հետագայում Անդրանիկը եւ ջոկատի անդամներից շատերը անդամագրուեցին Հայ Յեղափոխական Դաշնակցութեանը)։ Տասնեօթ հոգանոց ջոկատը Անդրանիկի ղեկավարութեամբ Գորիսի կողմից հասաւ Բերդաձոր։ Անդրանիկը հաստատուեց Մեծ Շէնում, ուր կազմակերպեց Բերդաձորի ինքնապաշտպանութեան խորհուրդը (ԲԻԽ)։ Բերդաձորի ինքնապաշտպանութեան խորհրդի մէջ մտնում էին Անդրանիկ Ցարութիւնեանը, Առնօ Մկրտչեանը, Սլաւա Գրիգորեանը, Թաթուլ Սաֆարեանը եւ Սէյրան Դաւթեանը։ Ընդհանուր

հրամանատար նշանակուեց Անդրանիկը։ Սկսուեց եռուն գործունէութիւն Բերդաձորը դիմելու եւ ինքնապաշտպանութեան ջոկատներ ստեղծելու ուղղութեամբ։ Գիւղերում պահակէտեր նշանակուեցին։ Ամէն ինչ նոր էր կազմակերպւում։

Մի քանի ամիս անց Բերդաձորը վերածնուեց։

Մարդիկ աշխատանք գտան, վերացաւ գիւղերը լքելու տրամադրութիւնը։ Գորիսից աստիճանաբար բաւականաչափ քանակութեամբ ձէնք տեղափոխուեց։ Ադրբէջանցիներն արդէն նախկին համարձակութիւնը չունէին։ Նրանք տեսնում էին, թէ ինչպէս Բերդաձորը օրաւուր հասակ է առնում, ամրապնդւում, զօրեղանում։ Բաքուից կարգադրութիւն ստացուեց տեղահանել բերդաձորցիներին, պարզապէս չրջանը մաքրել հայերից։ Հակառակորդը լաւ գիտէր, որ Բերդաձորը Գորիս-Լաչին-Շուշի-Ստեփանակերտ մայրուղու կապող օղակն է։ Սկսուեցին ՕՄՕՆականների յարձակումները՝ ռուս զօրքերի անմիջական հովանաւորութեամբ։

«Բերդաձոր» անտիպ էսսէում Անդրանիկ Ցարութիւնեանը նկարագրել է այն ծանրագոյն վիճակը, որ բաժին էր ընկել բերդաձորցիներին։

Բերդաձորն ունէր 800 բնակիչ եւ դիմադրաւում էր Լաչինի ու Շուշիի 82 հազար ադրբէջանցիներին։ Օր չէր լինում, որ նրանք յարձակումներ չգործէին, օր չէր լինում, որ ռուս զինուորները չներխուժէին Բերդաձոր։ «Մարդիկ գիշերները չեն քնում,— գրում էր Անդրանիկը,— իսկ ցերեկն սպասում են «ազատարար» զօրքին։ Կարծես աշխատանքային օր է սահմանուած. առաւօտեան ժամը 8ից մինչեւ 16ը՝ զօրք, իսկ երեկոյեան 16ից յետոյ՝ թուրքը»։

Եւ այսպէս երեք տարի։ Հերոսական մաքառումով Բերդաձորը պաշտպանուեց։

Անդրանիկը ձերբակալուեց եւ նետուեց Շուշիի բանտը։ Մոլեռանդ ամբոխը պահանջում էր դատաստան տեսնել։ Հրաշքով փրկուեց։ Նրան 5 միլիոն գլխագին նշանակեցին։

Նիհար, կամային, միջահասակից փոքր-ինչ բարձր, բարի աչքերով, դէմքի վճռական արտայայտութեամբ 30ամեայ այդ երիտասարդը երկու երեխաների հայր էր։ Որդուն՝ Վահագնին, մատաղ էր խոստացել հարենիքին։ Եւ 3ամեայ այդ արի քաջամանուկը դէնքը ձեռքին մինչեւ վերջ մնաց դիրքերում՝ հոր կողքին՝ նրա հետ մաքառելով հայրենի հողի համար։

Պատանեկան հասակից բանաստեղծութիւններ էր գրել, աւելի ուշ՝ անցել արձակի։ Շնորհալի գրող էր։ Գուցէ պիտի դառնար մեր լաւ արձակագիրներից մէկը։ Գուցէ պիտի ականաւոր հրամանատար դառնար, բայց...։ Նոր էր նշանակուել Գորիսի չրջանի ազատամարտիկների ընդհանուր հրամանատար, երբ վրայ հասաւ աղէտը՝ ընդմիշտ փակելով նրա կենսախնդ, պայծառ աչքերը («Երկիր», 28 Օգոստոս 1993)։

ԿԱՐԼԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ՄԻ ԶԱՆԳ՝ ՎԱՆՔԻ ՍԱՐԻՑ

Աշոտը «Շիլկա» կայանքի մեքենավար-մեխանիկն էր: Մականուն ունէր՝ Շիլկա Աշոտ: Մի երազանք ունէր. ազատ տեսնել Արցախ աշխարհը:

Ազատամարտիկների շիրիմները զանգեր են: Եռաբլուրը՝ եկեղեցի, ուր մուտք են գործում խորին երկիւղածութեամբ, մոմ վառում ու խունկ ծխում ի փառս եւ ի յիշատակ հայրենիքի համար զոհուած հերոսների:

Եռաբլրի զանգերի մէջ արծաթ լեզուակով փոքրիկ մի զանգ կայ. Աշոտի շիրիմն է:

Աշոտը՝ Վաղարշակ Խաչատրեանը, զոհուեց 24 տարեկան հասակում: Էջմիածնի ջոկատից էր, որը առաւել յայտնի է հրամանատարի՝ Մանուէլի անուամբ: Ջոկատը հիմնականում նախատեսուած էր հակաօդային պաշտպանութեան համար: Աշոտը «Շիլկա» կայանքի մեքենավար-մեխանիկն էր: Մականուն ունէր՝ Շիլկա Աշոտ: Մի երազանք ունէր. ազատ տեսնել Արցախ աշխարհը:

92 թուականի Օգոստոսին ջոկատը մարտնչում էր Հադրութի շրջանի Էդիլլու գիւղում: Աշոտը իր պարզ, մարդամօտ բնաւորութեան շնորհիւ արժանացել էր գիւղացիների յարգանքին: Արցախցիները ընդհանրապէս խորին յարգանքով են վերաբերւում հայաստանցի ազատամարտիկներին, ընդունում են հարազատ որդու նման: Պարզ է. այդպէս պէտք է լինէր. ազատամարտիկները Արցախի որդիներն են եւ ուրեմն՝ արցախցիների որդիները:

Օգոստոսի 31ին ջոկատը հրաման ստացաւ լռեցնել Վանքի սար կոչուող բարձունքի վրայ տեղակայուած թշնամական կրակակէտը: Կարծում էին՝ մերոնք ծանր զէնքեր չեն օգտագործի, կը խնայեն Վանքը: Խնայեցին: Շիլկան կարելի է օգտագործել նաեւ հետեւակի դէմ. հզօր զէնք է, գնդակը ծակում է ինքնաթիռի ու զրահամեքենայի զրահը, հարուածի ուժը կարող է տանկին գամել տեղում: Բայց չօգտագործեցին: Շիլկայի անձնակազմը միացաւ գրոհողներին: Թշնամին կրակէ կարկուտ էր տեղում. գնդակոծում ու հրետակոծում էր անխնայ:

Արկը պայթեց Աշոտից ընդամէնը մի քանի քայլ հեռու: Ընկաւ Շիլկա Աշոտը Վանքի սարի համար:

Աշոտի ընկերները ազատագրեցին Վանքի սարը: Ռազմավարական կարեւոր նշանակութիւն ունեցող բարձունքը անցաւ ազատամարտիկների ձեռքը: Յաղթանակի ուրախութեանը մի բան էր խաթարում միայն. Աշոտի զոհուելը:

Նրան հողին յանձնեցին Եռաբլուրում. Վանքի սարից մի զանգ բերեցին ու յանձնեցին Հայոց հողին՝ որ ղօղանջի յաւերժ («Երկիր», 31 Յուլիս 1993):

Յ. Ս.

ԾԱՆՕԹ ԱՆԾԱՆՕԹ

Ռոբերտ Գէորգեանը ծնողների միակ զաւակն էր։ Մշեցու թոռ էր ու երակներում հնչում էր Սասնայ ծուերի ըմբոստ արիւնը։ Ու աչքերում ծուարած կարօտ կար, որ դէպի Արցախ տարաւ նրան։

Ազատամարտիկ Ռոբերտ Գէորգեանի յիշատակին նուիրուած այս փոքրիկ պատմութեան մէջ բազմաթիւ մանրամասներ ձեզ ծանօթ են թուալու։ Թուալու է, թէ ինչ-որ տեղ, ինչ-որ ժամանակ կարդացել էք նրա կենսագրութիւնը, դիտէք նրա անցած մարտական ուղին, տեղեակ էք զոհուելու հանգամանքներին։ Ծանօթ է թուալու նոյնիսկ լուսանկարը։ Որովհետեւ բոլոր ազատամարտիկները, անկրկնելի անհատականութիւն լինելով հանդերձ, ունեն մէկ ընդհանուր, բոլորին բնորոշ ու բնորոշող գիծ՝ հրաժարումն առօրեայից ու աշխարհիկ կեանքից, նուիրումն ազատամարտին, ներընկալումն մահ իմացեալի։ Դա կենսակերպի, գործունէութեան ընդհանրութիւն է։ Ինչպէս ընդհանուր է ճգնաւորի կենսակերպը։ Ինչպէս ընդհանուր է նրանց նպատակը՝ սեւեռումն առ Աստուած։ Ճիշտ այդպէս ընդհանուր է նաեւ ազատամարտիկների կենսակերպն ու նպատակը։ Ռոբերտ Գէորգեանի կենսագրութեան մէջ ինչ որ ծանօթ թուալ՝ իմացէք, ազատամարտիկի հաւաքական կերպարի կենսագրութեանն ու բնաւորութեանը, նուիրումի ու նահատակութեանը բնորոշ գծերն են։

Ռոբերտ Գէորգեանը ծնողների միակ զաւակն էր։ Մշեցու թոռ էր ու երակներում հնչում էր Սասնայ ծուերի ըմբոստ արիւնը։ Ու աչքերում ծուարած կարօտ կար, որ դէպի Արցախ տարաւ նրան։

Հէնց սկզբից մասնակցել է Ղարաբաղեան շարժմանը։ Առաջիններից մէկը զէնք վերցրեց։ Դեռ 88ի Նոյեմբերին մեկնեց Զնաբերդ՝ պաշտպանելու Նախիջեւանի տարածքում մնացած հայոց վերջին օջախներից մէկը։ Երկրաշարժից յետոյ Գիւմրիում էր, փրկարար էր։

91ի սկզբից Ղարաբաղում էր։ «Արաբ» ջոկատի կազմում մարտընչել է Գետաշէնում, Մարտունաշէնում, Էրքէջում, Մանաչիգում, Բուզլուխում։ 92 թուականին մասնակցել է Ստեփանակերտի պաշտպանութեան աշխատանքներին, Խոջալուի, Մալիբէյլիի, Ղարագաղլուի, Ղուշչուլարի ազատագրմանը։

92ի Օգոստոսին մահ է «Մահապարտներ» գունդ, «Արծուիկ» ջոկատի կազմում մեկնել Մարտակերտ։ Զոհուել է Սեպտեմբեր 2ին՝ Վաղուհատ գիւղի համար մղուած մարտերում։ Թշնամին թանկ է վճարել նրա կեանքի դիմաց։ Խիզախ, համարձակ, հմուտ ու հնարամիտ մարտիկ էր։ Գնդացրորդ էր, վերջին մարտում բազմաթիւ թուրքերի է այն աշխարհ ուղարկում։ Ապա վերցնում է նռնականետն ու դիպուկ հարուածով ցրում թշնամու ջոկատը։ Հէնց այդ պահին էլ նրան է հասնում թշնամու նշանառուի գնդակը...

Ընդամէնը 25 տարեկան էր։ Երկու զաւակ ունէր։ Առաջնեկի՝ դստեր ծնունդի ժամանակ խոշոլուում էր։ Երկրորդը՝ որդին ծնուեց նրա մահից եօթ ամիս անց եւ կրում է հօր անունը՝ Ռոբերտ։ Զաւակների ծնունդը չտեսաւ, չվայելեց հայր լինելու բերկրանքը։ Զոհուեց յանուն հայրենիքի։

Մանո՞թ պատմութիւն է։ Գուցէ։ Ազատամարտիկները ընդհանուր գծեր շատ ունեն։ Այդպիսին է նրանց կենսագրութիւնը («Երկիր», 8 *Սեպտեմբեր* 1993)։

Ե. Ս.

ՀՕՐ՝ ԵՈՒՐԻԿ ԳԷՈՐԳԵԱՆԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Ռոբերտը իմ միանձամայն տղան էր, շատ համեստ, մտածուած, բարի տղայ էր, ո՛չ խմում էր, ո՛չ ծխում, ազատ ժամանակ պարապում էր սպորտով (կուլտուրիզմով եւ կառատէլով), օգնում էր հարեւաններին ինչով կարողանում էր, շատ էր սիրում իր ընտանիքը, Ղարաբաղից որ տուն էր վերադառնում հանգստանալու, ամբողջ օրը գրկում էր աղջկան, սիրում, փայփայում։ Նա չգիտէր, որ ծնուելու է երկրորդ երեխան՝ տղան, որը ծնուեց իր զոհուելուց 7 ամիս յետոյ եւ հիմա կրում է հօր անունը։ Միշտ է, շատ մեծ վիշտ է մեզ համար, որ մեր միանձամայն որդին զոհուել է, թողնելով երկու որբ երեխաներին, բայց որ զոհուել է հայրենիքի համար, մեզ համար ե՛ւ սփոփանք է, ե՛ւ մեծ պարծանք։

ԳԵՏԱՇԷՆՑԻՆԵՐԻ ՊԱՏՄԱԾԻՑ

1991 թ. գարնանը մեր գիւղը պաշտպանում էին նաեւ «Արաքս» ջոկատի տղաները, որոնցից մէկը Ռոբերտն էր, շատ քաջ, շատ աշխոյժ, շատ ուժեղ եւ շատ բարի տղայ էր։ Իսկական հայ եւ հայրենասէր տղայ։ Ռոբերտը ամբողջ օրը շարժման մէջ էր, ազատ ժամերին ընկերներին դիրքերում սնունդ ու զինամթերք էր հասցնում, գիւղացիներին զօռով դիրքի էր ուղարկում եւ գիւղում ինչքան անսարք էլեկտրօսարքաւորումներ կար՝ բոլորը վերանորոգում էր։ Գիւղացները նրան սիրում, յարգում էին, ինչպէս հարազատի։

ԸՆԿԵՐՆԵՐԻ՝ ՄԿՐՏԻՉ (ՄԿՕ) ԹԱԴԵՒՈՍԵԱՆԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Ես Ռոբերտի հետ մասնակցել եմ Ստեփանակերտի պաշտպանութեանը, Խոջալուի ազատագրմանը, Մալիբէյլի, Ղարադաղլու, Ղուշչուլար գիւղերի գրաւմանը եւ վերջին կռուին: Ռոբերտը շատ քաջ էր եւ անվախ, շատ ընկերական էր, ամէն կռուում աշխատում էր միշտ առջեւում լինել, ինչպէս Խոջալուում, ընկերներից շատ առաջ ընկած՝ կրակելով մի ծայրից միւսն էր գնում եւ երբ մեր ընկերներից մէկը՝ Արթուրը (Ճուտը) վիրաւորուեց, Ռոբերտը արհամարհելով թշնամուն, գնդակների տարափի տակից շպրտած դուրս բերեց ընկերոջ մարմինը:

ՋԻՒԱՆԻ (ՎԱՐԺԱՊԵՏԻ) ՊԱՏՄԱԾԻՑ

Ես Ռոբերտի հետ եղել եմ «Արաբօ» ջոկատում եւ մասնակցել եմ նրա հետ բոլոր կռիւներին, բացի Վաղուհասի համար մղուած պայքարում:

Ռոբերտը շատ ազնիւ, շատ քաջ, հայրենասէր տղայ էր, նա պատրաստ էր կեանքը զոհաբերելու յանուն ընկերոջը: Նա հաւ չէր մորթում, բայց թուրքերին սատկացնում էր յատուկ վրիժառութեամբ:

Ռոբերտը պատմում էր, որ ինքը մշեցու թոռ է եւ հայրական կողմի բարեկամներին ինչպիսի գազանաբար են սպանել թուրքերը:

Ռոբերտը 1992 թ. Օգոստոսին մտնում է «Մահապարտներ»ի գնդի «Արծիւ» ջոկատը եւ Օգոստոսի 29ին մեկնում է Ղարաբաղ՝ Վաղուհաս գիւղը ազատագրելու:

ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՍԱՄՈՒԷԼ (ՁԱՒՈՒՇ) ՍԵՐԵՈԺԱՅԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ՊԱՏՄԱԾԻՑ

Ռոբերտը շատ ազնիւ, քաջ, հայրենասէր տղայ էր, որը եւ ապացուցեց վերջին կռուի ժամանակ. մենք, Վաղուհաս գիւղին չհասած՝ մեզ յանդիման դուրս եկան մօտ 450 թուրք զինուոր, իսկ մենք 146 հոգի էինք, մեր եւ աղրբեջանական «Գորշ գայլեր» ջոկատի միջեւ մօտ 40-50 մետր հեռաւորութիւն էր, ես նկատեցի, որ թուրքերը մեզ շրջապատում են, մենք դիրքաւորուեցինք ու սկսեցինք կրակել, քիչ անց ես զգացի, որ իմ տեղս տեսել են, ասեցի.—Ռոբերտ, ինձ պահի, ես տեղս փոխեմ եւ ես անցնելու ժամանակ տեսայ 6-7 հոգի թուրք գլորուեցին Ռոբերտի կրակոցից. քիչ անց ես նկատեցի, թէ ինչպէս թուրքերի դիրքում պայթեց նռնականգի ականը եւ 10-15 հոգի գետին թափուեցին, նայեցի եւ տեսայ, որ կրակողը Ռոբերտն էր, գնդացիրը դրել էր կողքը, նռնականետով էր կրակում եւ մէկ րոպէ անց Արայիկը ձէն տուեց, թէ Ռոբերտը խփուեց, մենք իրար օգնելով դիակը տարանք աւելի ապահով տեղ եւ կռուից յետոյ բերեցինք Երեւան: Ռոբերտը իսկական հերոս էր եւ ընկաւ հերոսի մահով, շատ եմ ափսոսում, որ զոհւում են Ռոբերտի նման քաջ, համարձակ, ազնիւ, հայրենասէր տղաները:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռոբերտ Եուրիկի Գէորգեանը ծնուել է 1967 թ. Ապրիլի 18ին՝ Երեւանում, բանուորի ընտանիքում: 1974 թ. սկսել է թիւ 2 ութնամեայ գիշերօթիկ դպրոցը: Ութնամեակը աւարտելուց յետոյ տեղափոխւում է թիւ 16 դպրոցը, տասնամեակը աւարտել է 1984 թ.: 1985 թ. գարնանը կամաւոր մեկնում է Սովետական բանակ: 1987 թ. զօրացրուելուց յետոյ ընդունւում է Ռադիօ-կապի ուսումնարան: 1988 թ. մասնակցել է Ղարաբաղեան շարժմանը եւ 1988 թ. Նոյեմբերին մասնակցել է Նախիջեւանի շրջ. Ջնաբերդ հայկական գիւղի պաշտպանութեանը: Երկրաշարժից յետոյ մասնակցել է Գիւմրիի փրկարարական աշխատանքներին: 1991 թ. գարնանը «Արաբօ» ջոկատի հետ մասնակցել է Գետաշէնի, Մարտունաշէնի, Շահումեանի պաշտպանութեանը, Էրքեջ, Մանաշիդ, Բուզուխ գիւղերի ազատագրմանը, Մալիբէյլի, Ղարադաղլու, Ղուշչուլար գիւղերի գրաւմանը: Նոյն թուի Օգոստոսին մտնում է «Մահապարտներ»ի գնդի «Արծիւ» ջոկատը եւ Օգոստոսի 29ին մեկնում է Ղարաբաղ՝ Մարտակերտի շրջ. Վաղուհաս գիւղը ազատագրելու եւ Սեպտեմբերի 2ին զոհւում է հերոսի մահով:

Ռոբերտ Գէորգեանը ամուսնացել է 1991 թ. Ապրիլի 27ին, Կարմէն Պետրոսի Գէորգեանի հետ, ունեն երկու երեխայ, առաջինը՝ Գէորգեան Լիդա Ռոբերտի, ծնուած 16 Փետրուարի 1992թ. եւ երկրորդը՝ տղան, որ մահից յետոյ՝ 25 Ապրիլի 1993 թ. Գէորգեան Ռոբերտի Ռոբերտ, ունի հայր՝ Եուրիկ Ազատի Գէորգեան, մայր՝ Լիդա Աշոտի Գէորգեան եւ երկու քոյրեր՝ Նունէ եւ Վարսիկ Գէորգեաններ (**Ձեռագիր**)*:*

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ՄԵՌՆԵԼՈՒ ԱՊՐԵՑՆՈՂ ԿԱՄՔՈՎ



Ազգային ինքնորոշման համար պայքարը նրա համար սկսուել էր դեռեւս համալսարանական տարիներին, տարիներ, երբ իւրաքանչիւր ազատամիտ խօսքն անգամ անխնայ ճնշւում էր:

Օգոստոսի 29ի լոյս 30ի գիշերը, երբ իր ընկերների հետ հերթական անգամ գտնւում էր սահմանում՝ այս անգամ արդէն Կրասնոսելոսկի առաջաւոր դիրքերում, զոհուեց «Մեծն Տիգրան» աշխարհազօրային գնդի ռազմական խորհրդի անդամ Ժորա Արտեմի Սարգսեանը:

Ծնուել է 1948 թ. Օգոստոսի 1ին՝ Կոտայքի շրջանի Ջաւ գիւղում: Աւարտել է Երեւանի Պետհամալսարան ֆիզիկայի ֆակուլտետը: Ֆիզմաթ գիտութիւնների թեկնածու էր:

1976-1991 թուականներին աշխատել է Աբովեանի «Հատիչ» գործարանում, որպէս արտադրամասի պետ: 1991 թուականից «Մեծն Տիգրան» ասոցիացիայի փոխպրեզիդենտն էր, միաժամանակ Երեւանի մեխանիկական ձեռնարկութեան տնօրէնը:

Ազգային ինքնորոշման համար պայքարը նրա համար սկսուել էր դեռեւս համալսարանական տարիներին, տարիներ, երբ իւրաքանչիւր ազատամիտ խօսքն անգամ անխնայ ճնշւում էր:

1988ին նա առաջիններից էր, որ հասկացաւ զինուած պայքարի դերն ու նշանակութիւնը ազգային ազատագրութեան գործում: Իր փայլուն մտաւոր եւ ֆիզիկական ունակութիւններն ի սպաս դրեց այդ գործին եւ մինչեւ մահուան վերջին րոպէն էլ հաւատարիմ մնաց իր սկզբունքներին:

Մահ, որն ազգից խլեց եւս մի վառ անհատականութեան, մի մարդու, որն իր մահով ապացուցեց՝ ազգի գոյատեւման համար պէտք է կարողանալ ո՛չ միայն մեռնել թշնամուն, այլեւ մեռնելու կամք ունենալ (2 Սեպտեմբեր 1992):

«ԵՐԿԻՐ»

ՎԱՐՈՒԺԱՆ ՀԵՆՐԻԽԻ ԽԱՉԱՏՐԵԱՆ

Ծնուել է 1971 թուականի Փետրուարի 27ին՝ Մարտունու շրջանի Նորշէն գիւղում: Աւարտել է Աշանի միջնակարգ դպրոցը:

Բանակում ծառայել է 1989-91 թթ.՝ Նաբերեժնի-Չելնի, Չելեաբինսկ քաղաքներում: Սերժանտ էր:

Ազատագրական շարժմանը մասնակցում էր 1991 թուականից՝ բանակից վերադառնալու առաջին օրուանից:

Զոհուել է 1992 թ. Սեպտեմբերի 9ին՝ դիրքում՝ հրետակոծութեան ժամանակ:

Ամուրի էր (Մեքենագիր):

ԱՆՍՈՐԱԳԻՐ

•

ԿԱՄՕ ԱՐՇԱՒԻՐԻ ԵՍԱՅԵԱՆ



Ծնուել է 1959 թուականի Յունուարի 15ին՝ Մարտունու շրջանի Նորշէն գիւղում: Աւարտել է Աշանի միջնակարգ դպրոցը: Երկու տարի ծառայել է ԽՍՀՄ զինուած ուժերում՝ Գերմանիայում: Տանկիստ էր:

Կոլտնտեսութիւնում աշխատում էր որպէս աւտովարորդ, իսկ ջոկատում որպէս տանկի վարորդ-մեխանիկ:

Զոհուել է 1992 թ. Հոկտեմբերի 15ին՝ ազերիների կողմից Գեուլափլու գիւղի հրետակոծման ժամանակ:

Ունի երեք երեխաներ՝ Այմաստ, Նորեր եւ Միքայէլ (Մեքենագիր):

ԱՆՍՈՐԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ՊԱՇՏՊԱՆ, ԱՐԾԻ'Ի ԼԵՐԱՆ

«Տղերք, թուրքը աչք է գցել նաեւ Զանգեզուրին, Սեւանին, հայկական միւս բնակավայրերին։ Փակենք նրա ախորժակը, եթէ պէտք լինի՝ մեր արեան գնով»։

Սեռոպա, դու քո սխրանքների մասին համեստօրէն լռում ես, բայց տանկի հրամանատար Արտակ Ալեքսանեանի, զօրային միւս ընկերներիդ պատմածներից յետոյ քո հերոսական կերպարն արդէն հիւսուել է իմ աչքում։ Գիտեմ, որ երբեւէ չես երկնչել թշնամուց եւ անձնական խիզախութեանդ գումարելով տակտիկական վարպետութիւնդ ու նուրբ հնարքները, բազմիցս խուճապի մէջ ես գցել նրան։ Ձեր տանկի անձնակազմի հաշուին են գրանցուել սպանուած վեց տանեակ թուրք հետեւակայիններ, վեց միաւոր ռազմական տեխնիկա։ Ինչպէ՞ս էիր մոլեգնել Մարտակերտի շրջանի ազատագրման համար մղուող մարտերում։ Թշնամական դիրքերի վրայ արձակելով հերթական լիցքը, ոգեւորութեամբ բացագանչում էիր.

–Այս մէկը՝ որպէս Արտաշատի շրջանի պատուիրակ։

–Այս մէկն էլ՝ մեր հարեւան ազատամարտիկ Արմաւիր Մինասեանի արեան դիմաց։

–Ահա մէկն էլ՝ հօրս ու մօրս փոխարէն...

Արտակի ու Վաչականի հետ այնպէս համոզիչ էիր մանեւրում, որ ամէն անգամ չիք էր դառնում հեռահար զէնքով հերոսներիդ տանկը խոցելու թշնամու մոտդրութիւնը։ Եւ ռազմի ատուածների հետ դաշնակցած՝ սուրում էիք մարտադաշտում տարատեսակ տարածելով ագերի ելուզակների վրայ։ Իսկ մարտադաշտերո՞ւ։ Այստեղ արդէն դու կրկին հեզ ու կատակասէր Սեռոպան էիր, որը համոզիչութեան մէջ գցելով ընկերներին, բաժակների մէջ օղու փոխարէն ջուր էր լցնում եւ նշում իր ամուսնութեան տասներորդ տարին կամ կրտսեր որդու ծննդեան տարեդարձը։ Երկար բաժակաճառերի անորամագիր՝ սիրում էիր միայն բարձրացնել ընկերներիդ մարտական ոգին. «Տղերք, թուրքը աչք է գցել նաեւ Զանգեզուրին, Սեւանին, հայկական միւս բնակավայրերին։ Փակենք նրա ախորժակը, եթէ պէտք լինի՝ մեր արեան գնով»։

Արդեօք սի՞րտդ էր վկայում, թէ՞ մեր քաջ նախնեաց արեան կանչն էիր լսում, դու իմ ներշնչանք, Մասեաց սէգ արծիւ, արտաշատեան երգ՝ զնգուն, հայաշունչ... («Նաւասարդ», 12 Սեպտեմբեր 1992)։

(Արտաշատ)

ՌՈՒԲԻՆ ՍԱՐԳՍԵԱՆ

ԸՆԿԱՆ ՀԵՐՈՍԻ ՄԱՀՈՎ

Արդէն տանկի հմուտ նշանառու Ստեփանի դիպուկ կրակոցներից ոչնչացուել են թշնամու երկու զրահամեքենայ, մէկ տանկ, մէկ հրանօթ, շուրջ 130 զինուոր...

Ստեփան Երուանդի Բաղդասարեանը ծնուել է Արտաշատ քաղաքում: Աւարտելով թիւ 3 միջնակարգ դպրոցը՝ ծառայել է բանակում, աւարտել է Երեւանի ֆինանսատնտեսագիտական տեխնիկումը եւ աշխատանքի անցել Արտաշատի պետրանկում՝ որպէս տնտեսագէտ: Աշխատանքը համատեղելով ուսման հետ՝ աւարտել է Երեւանի գիւղատնտեսական ինստիտուտը եւ անցել աշխատանքի Գլխահայրքշին թիւ 2 ՇՄԾում որպէս տնտեսագէտ, ապա ֆինանսատնտեսական բաժնի վարիչ, որից յետոյ՝ «Հայկ» կոոպերատիւ բանակում որպէս կառավարիչի տեղակալ: Ամուսնացած է, ունի երեք երեխայ (Սուրէն, Սոնա, Գէորգ):

Մարտի թէժ պահը ետեւում է: Լռել են արկերը: Արդէն տանկի հմուտ նշանառու Ստեփանի դիպուկ կրակոցներից ոչնչացուել են թշնամու երկու զրահամեքենայ, մէկ տանկ, մէկ հրանօթ, շուրջ 130 զինուոր... եւ հերոս տղաները մի պահ փորձում են դադար առնել... ծխել... եւ վայելել յաղթանակի բերկրանքը: Ստեփանը իջնում է տանկից եւ... Տանկի մօտակայքում պայթում է թշնամու ականանետից արձակուած արկը...: Մահացու վիրաւորւում է Ստեփանը...: Ստեփանակերտի հիանդանոցում 18 ժամ տեւած վիրահատութիւնը, արեան ներարկումները չեն թեթեւացնում ազատամարտիկի վիճակը...: Եւ յաւերժ փակւում են ազնիւ քաջորդու աչքերը...

Կորուստը շատ է մեծ, կսկիծը անփարատելի: Սակայն հարազատները չեն ընկճւում, չեն կորում անապ վշտի առջեւ: Նրանք այդ ամէնի հետ լցուած են հպարտութեան վեհ զգացումով, որովհետեւ իրենց որդին, եղբայրը հայրենիքի զինուոր է...

Մարտական ընկերները՝ տանկի հրամանատար Արտակը, Եուրան, Գէորգը ափսոսում են, որ դեռեւս չունենք հերոսի կոչում շնորհելու օրէնք, եթէ լինէր, ապա Ստեփանը առաջինը կ'արժանանար դրան: Երբեք չէր խօսում մահուան մասին, որովհետեւ նա գնում էր մարտնչելու եւ յաղթելու:

Հոգու արիութիւնը պահպանած, 80ամեայ ծերունազարդ հայրը՝ 41-45 թ.թ. պատերազմի բովով անցած Երուանդ Բաղդասարեանը, իրավիճակը գնահատելով առանասրտօրէն, կսկիծը տանում է տղամարդուն վայել հպարտութեամբ, որովհետեւ գիտակցում է, որ իր կրտսեր որդին զոհուեց, որ ապրի ազգը, ապրի հայ ժողովուրդը:

«Եթէ հայ այգեպանը իր մշակած այգու բերքը պահպանելու համար դաշտային կացարան է պատրաստում, ապա ինչո՞ւ մենք չպէտք է նոյնը անենք Հայաստանի սահմանների ողջ երկայնքով...»,— ասում է ծերունազարդ հայրը, ասում է կեանք ապրած մարդու խոր փիլիսոփայութեամբ եւ մտքի պայծառութեամբ: Ահա թէ ում է նման Ստեփանը իր արիութեամբ եւ հայրենասիրութեամբ...

Փառք քեզ, սիրելի Ստեփան... (19 Սեպտեմբեր 1992):

«ՆՈՒ»

ԿԱՐՕՏ ԱՌ ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՄՈՒՐԱԴԵԱՆ

Մարդ էր, հայ մարդ, որը ժառանգել էր հատուցման պարտքը, ինչից ոչ մի գնով նրա նմանները չեն հրաժարվում:

Տիրոջ իրավունքով է, ասում են, որ ընտրյալներին բաժին է ընկնում զոհողությունը: Մարդը ծնվում է ապրելու համար. սա նույնպես դասական ճշմարտություն է: Ինչ խօսք, բայց ամէն սերունդ իր ժամանակին մէջ պէտք է ապրի, եւ հարկ է, որ ճիշտ ապրի: Եթէ քո ժամանակը քեզ զինուոր է դարձնում, ուրեմն զինուորի ժամանակ է, ու պիտի գնաս մահուանն ընդառաջ—անառարկելի էր Սամուէլի համոզմունքը:

92ի Սեպտեմբերի 11ի արեւամուտին մի եղնիկ կտրեց—անցաւ Վաղուհասի գնդակոծուող բարձունքը: Զքնաղ պատկերը աչքերի մէջ՝ Սամուէլը աւտոմատի փողն ուղղեց դիմացի դարանամուտ տարածութիւնը: Ուղղեց ափսոսանքով: Առաջին մարտը չէր, բայց...: Որտեղի՞ց լուաց կրակոցը...

«Որպէս երկնքում գնդակահարուող հրեշտակների արնափետուր երամ, որպէս խոնարհուող եկեղեցու գմբէթ, տապալւում է Աւետեաց երկրի տեսլականը...»:

Հողին, հարազատ հողին է տապալւում, որտեղից սկսւում, որտեղից էլ մարմին է առնում ու ապրում քաջաց հորիզոնում:

—Դու գրչի մարդ ես...

Ե՛ւ ճերմակ թղթի առաջ, ե՛ւ մարտադաշտում իրենը բացճակատ մենամարտ էր: Պահը չկորցրեց: Երկու տող, վերջին երկու տողը գրեց ծխախոտատուփին: Ապա զարկեց ու...զարկուեց:

Մարդ էր, հայ մարդ, որը ժառանգել էր հատուցման պարտքը, ինչից ոչ մի գնով նրա նմանները չեն հրաժարվում:

Իսկ Վաղուհասում երկինքը հիմա խաղաղ է: Նաեւ ի՛ր խաղաղութեամբ: Հէնց այնպէս զոհուել չէր. քայլեց դէպի իրեն տրուած բար-

ձունքը, որ մի օր այդ բարձունքից էլ յայտնուի իր ժողովրդին: Թէ յայտնուեց, պիտի ասի. «Ո՞ւր է ձեր բռունցքների անտառը: Ես ձեր կողքին էի: Օրագրիս էջերին օր օրի, տող առ տող երկրպագել ու սիրել եմ մեր միասնութիւնը: Այս վերջին մարտից առաջ էլ Գանձասարում աղօթել եմ բոլորիդ համար...»:

Առիթ-անառիթ կողք կողքի եմ դնում Սամուէլ Շահմուրադեանի հետ ունեցած—չունեցած զրոյցներս: Ցիշո՞ւմ էք նրա կտրուկ ու կրակոտ քայլուածքը: Այդպէս մի օր մօտեցաւ եւ ինձ պարզեց արտագրուած մի քանի տող: Կարդա՛, ասաց, Զաւարեանի խօսքերն են. «*Ուր էլ որ լինենք՝ կռուի դաշտի մէջ, թէ շղթայակապ կալանաւոր, բահը ձեռքներիդ մէջ, թէ թափառական առաքեալ, միշտ էլ ներշնչողը լինի թող տառապողի ազատագրութեան վեհ գաղափարը...։ Հոգ չէ, թէ մի օր վահանով կը դառնանք, միւս օրը՝ վահանի վրայ։ Արդիւնքը նոյնն է՝ յաղթութիւնը*»: Սա նրա ապրելու կերպն էր:

Մէկ տարի առաջ Սամուէլ Շահմուրադեանը իր արիւնով նոյնպէս միւոնեց անցնելիք ճանապարհի մեր մեծ ու փոքր յաղթանակների գաղափարը: Խոնարհում նրա շիրմին: Այսօր եւ միշտ («Երկիր», 14 Սեպտեմբեր 1993):

ԱՐՓԷՆ ՄՈՎՍԻՍԵԱՆ

ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀՄՈՒՐԱԴԵԱՆ. ԶԻՆՈՒՈՐՆ ՈՒ ՏԱՐԵԳԻՐԸ

Նա միշտ այնտեղ էր, ուր ազգի գոյութեան պայքարը խնդիրներ էր առաջադրում։ Նախ՝ ժամանակակից քաղաքաշինութեանը, բնապահպանութեանը նուիրուած բանավէճերում։ կարողանում էր լսել, ամբարել եւ ասել իրենը՝ բանիմաց, անյաւակնոտ, ճշմարիտ։ Շարժումն ի դէմս Սամուէլ Շահմուրադեանի գտաւ արդէն կազմակերպուած, խոհուն մտաւորականի, եւ մինչ հեղինակութիւնների սովոր ժողովուրդը նրանցից նոր խօսք, գործ էր ապասում, Սամուէլն արդէն պայքարի կիզակէտում էր՝ համադրելով գրական, հասարակական ու մարզասիրական գործունէութիւնը։ Շատ աւագ զարմանալի որակներ բացայայտեց, որոնք բնորոշ էին մտաւորականի նոր կերպարին, հէնց այն տիպին, որ յամառօրէն չէին ուզում նկատել շատ-շատերը։ Պայքարի

առաջին, վիպական ալիքից շշմած՝ կորցրել էինք իրականության զգայումը, քչերին էր պարզ կնճռոտ ապագան իր ողբերգական տարողությամբ։ Պարզ երկնքից ճայթեց Սումգայիթը եւ Սամուէլն առաջիններից էր, որ հասկացաւ՝ կոտրած է, եղեռն Ներքուստ սահմռկած, յաղթահարելով ամէն կարգի արգելքները՝ կարողացաւ մէկ առ մէկ հաւաքել արիւնոտ վկայութիւնները, իր անձնական ջանքերով հրատարակեց «Սումգայիթ» ժողովածուն, որի ազդեցութիւնն է՛լ աւելի մեծ կը լինէր, եթէ նրան միանար մեր քաղաքագէտների, պետական գործիչների ձայնը։ Աւա՜ղ, եւ այս, եւ հետագայ կոտրածները դժկամութեամբ էին գիտակցում, արդէն լուում էր պատերազմի ծանր հեւքը։ Սամուէլ Շահմուրադեանը սառն արձագանգող չէր կարող լինել, նա խտնուեց ողբերգութիւն ապրած մարդկանց ճակատագրին՝ ցոյց տալով, որ ամէն ինչ անհնար դարձնող պաշտօնեաներից բացի կան պարզապէս Մարդիկ, որոնք արտով աւելին կարող են անել, քան նրանք իրենց խուլ աթոռներով։

Թիշում եմ նրան ուղղաթիռով Գետաշէն թռչելիս։ Իր նախնիների հայրենիք Բանանց գիւղի վրայով անցնելիս օդաչուին խնդրեց մի պտոյտ կատարել, ցոյց տուեց եկեղեցու մօտ գտնուող պապենական տունը, ասաց. «Գետաշէնը այս ընդարձակ, հայաթափուած տարածքի վերջին կէտն է, նրա շնորհիւ է, որ այժմ հայը թէկուզ վերեւից կարող է նայել Բանանցին, միւս գիւղերին էլ ու յուսալ, որ երբեւէ յետ կը վերադառնայ։ Շատ բան փորձեց անել Գետաշէնի համար, բայց իրականութիւնն արդէն գերազանցել էր մարդասիրական գործունէութեան սահմանները։ Գետաշէնի անկմամբ, իրեն այնքան հոգեկից Թաթուլ Կրպէեանի եւ միւս ընկերների կորստով Սամուէլը ազատագրուեց քաղաքական պատրանքներից, բացայայտեց ՊԱՏԵՐԱԶՄԸ, որ էլի չէին ուզում եւ չեն ուզում նկատել։ Նա մահապարտ չէր։ Միայն իրեն արուած գործն անելու մարդ էր։ Գրասեղանին հասունանում էր Ղարաբաղեան շարժմանը նուիրուած վէպը, որը կարօտ էր յատկապէս Շահմուրադեանի նման մչակի անկողմնակալ, հաւասարակշռուած գրչին։ Տանը նրան նեցուկ էր ընտանեկան օջախը՝ մեր օրերի հազուադէպ հայկական նահապետական շնչով։ Ճանապարհը նպատակասլաց էր, անսայթաք, նա հակուած չէր հերոսանալու, արկածախնդրութեան։ Այնպէս որ, Սամուէլի վախճանի մէջ խորհուրդ կայ։ Երեւի էլ ուրիշ մէջոց չկար թմբիրը պայթեցնելու, կեանքը կենցաղ դարձրած հասարակութեանը յայտնելու, որ ՊԱՏԵՐԱԶՄ է։ Նման զոհաբերութիւն էր պէտք։ Ծանր, անհաւատալի... («Երկիր», 16 Սեպտեմբեր 1992)։

ՎԱՀՐԱՄ ԹԱԹԻԿԵԱՆ

ՍԱՄՈՒԷԼ

ՍԱՄՈՒԷԼ ԵԱՀՄՈՒՐԱԴԵԱՆԻ
անմահ յիշատակին

Ա՜խ, երանի քեզ չճանաչէի,
Ու մնայիր ինձ անծանօթ այնպէս.
Դու քո վառ սրտով չճանաչէիր...
Հրկիզէիր իմ սիրտը այսպէս։

Լինէիր այնպէ՛ս սովորական այր,
Մի քիչ էլ գլուխ ու «պատիւ» պահող,
Նրանց պէս, ովքեր՝ առած թուղթ ու ծայր,
Հեշտ նուաճում են պատիւ, փառք ու հող։

Այնժամ կ՚ապրէիր, իմ խիզախ Սամուէլ,
Եւ որդիներդ չէին լինի որբ,
Քո ջահել կինը չէր հագնի սեւեր,
Եւ կը զուգէիր շարքերը մեր բորբ։

Իսկ դու՝ հրկիզուած ցաւով հայեցի...
Եւ սումգայիթեան եղեռնի ցաւով,
Քեզ մեր մեծ կռուի քուրան նետեցիր,
Գալիք լաւ օրուան միշտ հաւատալով։

Եւ նուիրուեցիր Արցախ աշխարհին՝
Նուիրում եղաւ նուիրեալ Որդու...
Եւ դրանից էլ կռուի թէժ պահին
Դու յայտնուեցիր բոցեղէն մարտում։

Եւ քեկորը քեզ գտաւ հէնց այնտեղ,
Ուր բախտն էր թրծուում Արցախ աշխարհի...
Անհա թէ ինչու դու դարձար այստեղ՝
Քո տունը դարձար՝ արդէն վահանին։

Եկար ձուլուելու արքազան հոգիդ,
Որի ցաւն էր քեզ բարուրել, սնել...
Յաւերժութեանը ձուլելու հոգիդ,
Որպէս մեր ազգի նորօրեայ ՍԱՄՈՒԷԼ։

ԳՈՒՐԳԷՆ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ՖՈՒՐՄԱՆ ՇԱՀՈՒՄԵԱՆՑԻՆ

Պիտի գնամ, ես Արտակին պիտի փոխարինեմ. Արտակի զոհուելուց յետոյ համալսարանի միջանցքները ինձ խեղդում են...

Օգոստոսի 28ին լրանալու էր 20 տարին...: Եթէ չընտրէր ռազմիկի ուղին, եթէ կարողանար չլսել գերութեան մէջ տանջուող հայրենի Շահումեանի, մայրական օջախի, նախնեաց գերեզմանների հառաչանքը:

Բայց կանչը զօրաւոր էր: Հնչում էր վաղուց, դեռ պատանեկան տարիներից: Ղարաբաղեան շարժումը նոր էր սկսուել, առաջին ցոյցերից մէկն էր, երբ Շահումեան շրջկենտրոն լուր հասաւ, թէ Ջէյվա գիւղի թուրքերը շարժւում են Կարաչինարի վրայ: Կազմակերպուած ջոկատներ դեռ չկային, տղամարդիկ զինուեցին ինչպէս կարող էին. որսորդական հրացան, եղան... վերցրին ու շտապեցին օգնութեան: Ֆուրմանը դասընկերների հետ քար լցրեց բեռնատարի թափքն ու թռաւ Կարաչինար: Այն ժամանակ քարը հեռահար զէնք էր: Իսկ երբ շրջանի ղեկավարներին Գետաշէնից վերադառնալիս պատանդ վերցրին, մերկ ձեռքերով, անզէն ու առանց քարի հետեւեց մեծերին: Երբ հարցրին. ո՞ւր ես գալիս, ի՞նչ պիտի անես, պատասխանեց. ռեզերվ եմ գալիս, յանկարծ մէկը վիրաւորուի, հրացանը պարապ չմնայ...

Ցետոյ ընդունուեց Երեւանի համալսարանի տնտեսագիտական բեռնետիկայի ֆակուլտետը: Բայց ուշք ու միտքը դարձեալ Շահումեանում էր. Շահումեանը գնդակոծւում էր, Ֆուրմանենց տունը վնասուել էր, բուժաշխատող մայրն ու ֆիդայիներին սպասարկող վարորդ հայրը ձմրան ցրտաշունչ գիշերները անց էին կացնում կիսակառոյց շէնքերից մէկի նկուղում, իսկ 12ամեայ քրոջը ստիպուած տարել էին Վերին Շէն, մօրաքրոջ մօտ, որպէսզի կարողանար դպրոց գնալ: Հապճեպ յանձնեց առաջին կիսամեակի քննութիւններն ու թռաւ Շահումեան: Պաշտպանում էր Բուզլուխ գիւղի ամենավտանգաւոր դիրքերը: Նոյնիսկ մի անգամ քրոջը տարաւ այնտեղ. «Թող ազերիները տեսնեն, որ մեր աղջիկ երեխաները նոյնպէս պատրաստ են կռուելու»...

Ցետոյ... ընկաւ Շահումեանը: Ֆուրմանենց ընտանիքը ապաստանեց Յրդ գիւղում: Խնդրում, աղաչում էր ծնողներին՝ թոյլ տալ միանալ պարտիզաններին. «Գիտես, մամ, միեւնոյն է, գնալու եմ, բայց ուզում

եմ քո օրինութեամբ գնալ, չեմ ուզում, որ երկու-երեք օրից գրութիւն ստանաս, թէ՝ մամ ջան, ես գնացի Հայրենիք, որ դարանակալեմ մեր տան դիմացի սարի լանջին ու գնդակահարեմ մեր բակը մտնողին, յետոյ իջնեմ ու դարպասին գրեմ. «Այս տունը պատկանում է Ֆուրման Շահումեանցուն, օտարին սպասում է բակում փտուած լէշի ճակատագիրը»: Պիտի գնամ, մամ, գրապահարանիս մէջ, իմ նկարի աջ ու ձախ կողմերում Անդրանիկի ու Գէորգ Չաւուշի նկարներն են. չեմ կարող թողնել գերութեան մէջ: Պիտի գնամ, ես Արտակին պիտի փոխարինեմ Արտակի (դասընկերն էր, զոհուեց 92ի Մայիսի 2ին, Էրքեջի մօտ) զոհուելուց յետոյ համալսարանի միջանցքները ինձ խեղդում են: Պիտի գնամ, չեմ կարող տեսնել, թէ դու, իմ թագուհի մայր, ինչպէս ես ուրիշի հնամաշ շորերը հագնում»...

Ու գնաց: Ամառը մի ամիս աշխատեց, մի զգեստ առաւ քրոջը, ստացաւ մօր օրհնութիւնն ու միացաւ պարտիզաններին:

Զոհուեց 92ի Սեպտեմբերի 29ին, յատուկ առաջադրանքի ուղարկուած ուղղաթիռի վթարից նահատակուած ընկերների՝ Ժորայի, Մայիսի, Մաքսիմի հետ:

Զոհուեց Ֆուրման Շահումեանցին: Սակայն կռիւը շարունակւում է. այդ նոյն ջոկատում, շատերի կողքին այսօր կռւում են նաեւ Ֆուրմանի հայրն ու եղբայրը... («Երկիր», 27 Օգոստոսի 1993):

Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԲՈՒՉԼՈՒԽ

ԳՐԻԳՈՐ ՍԵՐԵՈԺԱՅԻ ԲԵԺԱՆԵԱՆ

Անվարան էր շարքային Բեժանեանի հրանօթի անձնակազմը, չնայած արդէն 3րդ օրն էր ինչ թշնամին սոսկալի հրետակոծում էր նրանց դիրքերը։ Անտարակոյս, դրա պատճառը թշնամու կրած կորուստներն էին...

Բնութագրւում է Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութեան թիւ 1 դեսանտա-գրոհային գնդի զինծառայող շարքային Գրիգոր Սերեոժայի Բեժանեանը։ զօրակոչուել է ծառայութեան 1992 թ. փետրուարից եւ պոհուել է 1992 թուականի Սեպտեմբերին, մարտական առաջադրանքը կատարելիս, դէպի ԼՂՀ տանող Լաչինի մարդասիրական միջանցքը պահպանելիս։

Շարքային Բեժանեանը իր ծառայութեան ընթացքում դրսեւորել է իրեն դրական կողմերով։ Որքան հնարաւոր է շուտափոյթ ձեւով համակերպուել է զինուորական կարգ ու կանոնին։ Մեծ ուշադրութեամբ ու եռանդով մասնակցել է մարտական պատրաստականութեան դասընթացներին, աչքի է ընկել իր համարձակութեամբ։ Մարտական առաջադրանքը կատարելու ժամանակ, արագ տիրապետել է հրետանաւորի մասնագիտութեանը, անմիջապէս դիրքերում։ Իր ցուցաբերած խիզախութեան համար նշանակուել է ինքնագնաց հրանօթի հրամանատար։ Սիրուած էր իր հաշուարկի զինուորների կողմից։ Իրեն յատուկ հնարամտութեան շնորհիւ կարողացաւ կարճ տարածութեան վրայ հրետանային կրակ տեղալ թշնամու յարձակուող հետեւակի վրայ, դրանով իսկ ցոյց տալով մեծ օգնութիւն թշնամու յարձակումից պաշտպանուող իր փոքրաթիւ ընկերներին։ Եւ ի զուր չէր, որ թշնամու հրետանային մի ամբողջ մարտկոց, ամբողջ օրը «փնտուեց» մեր խիզախ դեսանտայինների ընդամէնը հաշուարկը։ Անվարան էր շարքային Բեժանեանի հրանօթի անձնակազմը, չնայած արդէն 3րդ օրն էր ինչ թշնամին սոսկալի հրետակոծում էր նրանց դիրքերը։ Անտարակոյս, դրա պատճառը թշնամու կրած կորուստներն էին, որը նրանց պատճառել էին հայ դեսանտայինները, շարքային Բեժանեանի գլխաւորութեամբ։ Սակայն թշնամու արձա-

կած արդէն քանի հարիւրերորդ արկը հասաւ իր նպատակին եւ իր պայթիւնով անմահացրեց շարքային Բեժանեանին՝ իր անձնակազմի հրետանաւոր զինուորների հետ միասին։

Զօրամասի հրամանատարութիւնը եւ անձնակազմը խորը վշտով ցաւակցում է շարքային Բեժանեանի ծնողներին եւ հարազատներին անդառնալի կորուստի կապակցութեամբ եւ իր խորին շնորհակալութիւնն է յայտնում նրանց՝ հայրենիքին արժանի զինուոր ծնելու եւ դաստիարակելու համար (Մեքենագիր)։

Գումարտակի հրամանատար,
կապիտան՝ Ս. ԳԷՈՐԳԵԱՆ

ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գրիգոր Սերեոժայի Բեժանեանը ծնուել է 1972 թ. Ապրիլի 22ին՝ Երեւան քաղաքում, երկաթուղային-մեքենավարի ընտանիքում։

1978 թ. ընդունուել է Երեւանի թիւ 120 միջնակարգ դպրոցը։ Գերազանց կարգով 1986 թ. աւարտել է դպրոցի ութերորդ դասարանը եւ ընդունուել թիւ 26 խոնարարական ուսումնարանը։

Տասը տարի Գրիգորը պարապել է ըմբշամարտով։

Բազմիցս մասնակցել է հանրապետական պատանեկան մրցանակների եւ միշտ գրաւել թիւ I, II տեղերը։ Գրիգորը մի քանի անգամ մասնակցել է Միութենական եւ միջազգային մրցումների եւ վերադարձել միշտ յաղթանակով։

1992 թ. Ապրիլին՝ Գրիգորը զօրակոչուել է նորաստեղծ հայկական առաջին դեսանտա-գրոհային գնդում։

1992 թ. Սեպտեմբերի 29ին՝ Լաչինի մարդասիրական միջանցքում զոհուեց 20ամեայ Գրիգորը։ Գրիգորի յիշատակը վառ կը մնայ հարազատների եւ ընկերների սրտերում ***(Ձեռագիր)։***

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ՄԱՀԱՊԱՐՏԻ ՅԻՇԱՏԱԿԸ



Կարճ տեւեց նրա կռիւը։ Սեպտեմբերի 21-28ը։ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գիւղի մօտ ութ օր անհաւասար կռիւ տալով՝ իր ութ ընկերների հետ ընկաւ Գեղամը։

Դարձեալ ստիպուած ենք անդրադառնալ մահապարտների ողբերգական պատմութեանը։ Անչուշտ յիշում էք։ 92 թուականի դժուարին ժամանակներն էին։ Ադրբէջանցիները ռուսական բանակի անմիջական մասնակցութեամբ գրաւել էին Շահումեանը, գրոհում էին Մարտակերտի ուղղութեամբ։ Պատերազմը նոր փուլ էր մտել։ Նրանք մեր դէմ հանել էին լաւ զինուած ու վարժուած բանակ (թէեւ ոչ իրենց), իսկ մենք՝ թեթեւազէն կամաւորական ջոկատներ։ Բնականաբար, դժուար, շատ դժուար էր դիմակայիր ուժերով գրոհող թշնամուն կասեցնելը։ Տարածքային ծանր կորուստներ ունեցանք։ Բազմաթիւ զոհեր տուեցինք։ Բայց թշնամու առաջն առնել էր պէտք։ Ահա այդ ժամանակ հնչեց մահապարտների գունդ կազմելու կոչը։ Բազմաթիւ հայորդիներ արձագանգեցին այդ կոչին։ Ելան հայրենիքը պաշտպանելու։ Բայց կռիւը դարձեալ անհաւասար էր։ Բանակի դէմ դարձեալ բանակ չկար։ Եւ սա էր ողբերգութեան պատճառը։ Դարձեալ բազմաթիւ զոհեր տուեցինք։ Աւա՜ղ, չնչին էր արդիւնքը։ Մահապարտ էին ու կեանքերը չխնայեցին։ Բայց զինուորի անձնազոհութիւնը յաղթանակի վերածող չկար։

Այդ օրերին զոհուած մահապարտների մէջ էր նաեւ Գեղամ Զաքարեանը։

Կարճ տեւեց նրա կռիւը։ Սեպտեմբերի 21-28ը։ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գիւղի մօտ ութ օր անհաւասար կռիւ տալով՝ իր ութ ընկերների հետ ընկաւ Գեղամը։

Մահապարտ էր՝ կեանքը չխնայեց։

Հիմա նրանց չէնքի առջեւ աղբիւր-յուշարձան կայ։ Բարձրայարկ շէնքեր այսօր հաղուագէպ է ջուր հանում։ Շատերն են աղբիւրից ջուր վերցնում, շատերն են պապակ շուրթերը զովացնում մահապարտի յիշատակը յաւերժացնող աղբիւրի սառնորակ ջրով ու փառք տալիս նրան։

Անմար է հայրենիքի համար զոհուած բոլոր նահատակների յիշատակը։ Բայց նահատակներ կան, ովքեր աւելին են պահանջում, քան յիշատակի սոսկական յաւերժացումն է։ Մահապարտների յիշատակը պահանջում է անձնազոհութիւնը վերածել յաղթանակի։ Չպէտք է թոյլ տանք պայ այնպիսի պահ, որ անելանելիութիւնից դրդուած ճարահատ դիմենք անձնազոհութեան կոչի։ Անձնազոհութիւնը ոգու ձայն է, այն յաղթութեան վերածելը՝ փորձ ու իմաստութիւն։

Մահապարտների յիշատակը պահանջում է դաս քաղել եւ խրատ առնել։ Առաջին հերթին՝ մի քայլ կանխել թշնամուն։ Միշտ ու ամէնուր (**«Երկիր»**, 2 *Հոկտեմբեր* 1993)։

Ց. Ս.

ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ



Երկու չքնաղ տեսիլ էին,
դարձան յաւերժութիւն:

Դժուար է գրել Արցախեան ազատամարտի հերոսների մասին փոթորկուած ու չանթահար հոգով, չկան այդ ապրումների բառերը...

Տողերիս հեղինակի խօսքը ուսուցչուհու խօսք է Աշոտ Պետրոսեանի մասին։ Ընդամէնը 25 գարուն տեսած Աշոտի կեանքը համակ պարզութիւն էր, լաւին ու ճշմարիտին նուիրուած խենթութիւն։ Իր գիւղին ու ժողովրդին նուիրուած Աշոտը Խանաբադի առաջին երիտասարդներից էր, որ որդեգրուեց Ազատամարտին։ Տան ամիս չարունակ հերոսաբար դիմացաւ Շուշիի բանտի գաժան խոշտանգումներին՝ իր անբեր պահուածքով զարմացնելով անգամ թշնամուն։ Բանտից հազիւ փրկուած՝ Աշոտը, ատանձնելով Խանաբադի վաշտի հրամանատարութիւնը, կրակի առաջին գծում էր։

Ինքնամոռացութեան աստիճանի խենթ էր Աշոտը կռուի ամենաթէժ պահերին։ Ջարագոյժ Սեպտեմբերի 19ը վերջինը եղաւ ծաղկունք չապրած քաջորդու համար, իր ընկերոջը՝ Սամուէլին գրկած ինչպէս գերեզման։ Երկու չքնաղ տեսիլ էին, դարձան յաւերժութիւն։ Ձեր կողքին ամփոփուած հերոս տղաների՝ Արթուրի, Էդուարդի... բոլորի հետ միասին մրմնջացէք Մայր հողի անմահութեան յաւերժական խորհուրդը (**«Երկիր»**, 1 *Հոկտեմբեր* 1992)։

Լ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՍԱՇԱ ՀՄԱՅԵԱԿԻ ԹԱԴԵԻՈՍԵԱՆ

Երբ կինն ասում էր աշխատի, որ ընտանիք պահես, նա պատասխանում էր. «Մեր սարի պէս տղաները էնտեղ զոհւում են, ես այստեղ հանգիստ խղճով փո՞ղ աշխատեմ։ Մինչեւ իմ պարտքը չկատարեմ, չեմ աշխատի»։

Մնուել է 1950 թ. Փետրուարի 7ին՝ Երեւանում։ Ցաճախել է Սարի թաղի թիւ 70 միջնակարգ դպրոցը։ Եղել է չարաճճի, ուրախ եւ պայծառ ոգով պատանի։ Հիանալի ընդունակութիւնների տէր մարդ էր։ 1970-1972 թ.թ. ծառայել է ԽՍՀՄի բանակում, որպէս շարքային կրակող։ 1972 թ. Հոկտեմբերի 14ին ամուսնանում է։ Այժմ ունի մի տղայ (ծնւ. 1974 թ.) եւ մի դուստր (ծնւ. 1976թ.)։

1988ից մասնակցում է Շարժմանը։ Նոյնիսկ գիշերները տուն չէր գալիս։ Գիշերները անցկացնելով Օպերայում, օդանաւակայանում՝ լուրջ հիւանդանում է։ Մէջքը բռնւում է եւ չի կարողանում շարժուել։ Մօտաւորապէս չորս ամիս պառկում է անկողին։ Այսպէս ասած՝ կորւում է հրապարակների միտինգներից եւ ցոյցերից հիւանդութեան պատճառով։ Երբ առողջանում է, այլեւս չի գնում մշտապէս։ Արցախից եւ Հայաստանին վերաբերուող ոչ մի լուր բաց չէր թողնում։ 1990 թ. կամաւոր գրւում է ֆիդայի։ Սակայն չեն կանչում։ 1992 թ. Օգոստոսին կրկին կամաւոր գրւում է ֆիդայի։ Այդ երկու տարուայ ընթացքում նա չէր աշխատում։ Երբ կինն ասում էր աշխատի, որ ընտանիք պահես, նա պատասխանում էր. «Մեր սարի պէս տղաները էնտեղ զոհւում են, ես այստեղ հանգիստ խղճով փո՞ղ աշխատեմ։ Մինչեւ իմ պարտքը չկատարեմ, չեմ աշխատի»։ Սաշիկը միշտ ասում էր. «Այնպէս կը պարեմ, երբ Միացեալ Հայաստան ստեղծենք»։ 1992 թ. Յունուարից սկսած ստեղծում է մի փոքր ձեռնարկութիւն, որի անունը դնում է «Օջախ»։ Փաստաթղթերը լրիւ պատրաստ էին։ Մնում էր որոշ ժամանակ անց գործի անցնէր։ Սակայն չանցաւ։ Գնաց պարտքը կատարելու։ 1992 թ. Սեպտեմբերին իր գումարտակի՝ «Արծիւ-2»ի հետ տանում են ռազմանակատ՝ Մարտակերտ։ Գումարտակի հրամանատարն է Ռազմիկ Արամի Պապիկեանը։ Նախքան գնալը շատ ուրախ էր։ Որ

ասում էին ինչո՞ւ ես ուրախ, չէ՞ որ լաւ տեղ չես գնում, նա պատասխանում էր. «Վերջապէս պիտի թուրք սպանեմ, թո՛ւրք...»։ Ձգիտենք հասցրե՞ց սպանել, թէ՞ ոչ, բայց Մարտակերտի շրջանի Վաղուհաս գիւղի ազատագրման համար մղուող մարտում վիրաւորուում է 1992 թ. Սեպտեմբերի 28ին։ Ամբողջ ջոկատը ընկնում է թուրքերի ձեռքը։ Օգնութեան համար չտապող մի այլ ջոկատ, ցաւօք սրտի, ուշանում է։ Վիրաւոր ընկնելով գազան թուրքերի ձեռքը՝ տանջւում է։ Ողջ ոսկոր չկար մարմնի վրայ։ Դէմքը փակ էր։ Մատների մի քանիսը կտրած էր։ Երեւի չէին հասցրել լրիւ կըտրել։ Երեք օր մնացել էր Երեւանի անատոմիկը։ Ընտանիքը եւ բարեկամները իմացել են այդ գոյժը Հոկտեմբերի 3ին, իսկ յաջորդ օրը տեղի է ունեցել թաղումը։ Նրա դիակը իր տունը թոյլ են տուել 2 ժամից ոչ աւել։ Գնաց ողջ եւ առողջ, եկաւ...

Ցաւօք սրտի, թաղուած չէ Եռաբլուրում, այլ՝ անձնական՝ երրորդ գիւղի գերեզմանոցում։ Գոնէ թող մէկ անգամ տուն գար, պատմէր, խօսէր։ Չեկաւ։ Գնաց յաղթանդամ, առնական, եկաւ մասմաս եղած...

Շատ էին Սաշիկին ասում, որ Ղարաբաղը քո հայրենիքը չէ։ Ինչո՞ւ ես գնում...։ Նա պատասխանում էր. «Եթէ այսօր մենք Արցախը չպաշտպանենք, ապա վաղը այդ նոյնը կ'անեն մեզ մօտ։ Կռուենք, չթողնենք, որ մտնեն մեր հողը։ Եթէ կուենք, ստիպուած չենք լինի պաշտպանել մեր քոյրերին եւ մայրերին թուրքերից՝ մեր իսկ օջախի չեմին»։

Նա արհեստաւոր, ձեռքի հունարով մարդ էր։ Մեծի հետ մեծ էր, փոքրի հետ՝ փոքր։ Ցաւակապէս շատ էր սիրում մանուկներին։ Նա բարի խղճով, ձեռ բաց եւ ինչպէս ասում են քէֆչի-հասան մարդ էր, բայց մի քիչ շուտ էր բորբոքւում (Զեռագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

«ՍԻՐԵԼԻ ՈՒ ՊԱՇՏԵԼԻ ՄԵՐ ԵՂԲԱՅՐ»

Ոմանք գնում էին Հայաստանի հոգսերից ազատուելու համար, իսկ Հրայր Կիրակոսեանը գալիս էր Հայաստանի հոգսը թեթեւացնելու, իր ուսերին առնելու:

Երեք տարեկան որդին՝ Մեսրոպը, ամէն անգամ ուղղաթիռ տեսնելիս բացագանչում է. «Եկաւ, հայրիկը եկաւ»: Տատիկն է սովորեցրել, ու Մեսրոպը հաւատացել է, որ հայրը մի օր գալու է: Ասում է. «Իմ պապան գնացել է բանակ, էս ուղղաթիռով գալու է...»: Հաւատում է, սպասում է: Մի օր կ'իմանայ դաժան ճշմարտութիւնը: Կ'իմանայ, որ հայրը՝ Հրայր Կիրակոսեանը, 31 տարեկան հասակում զոհուեց Շահումեանի երկնքում: Զոհուեց իր ընկեր օդաչուներ Էդուարդ Խաչիկեանի, Գառնիկ Դանիէլեանի, Ստեփանակերտի օդակայանի պետ Մաքսիմ Բաղամեանի, պարտիզաններ Ժորա Սարգսեանի, Մայիս Առուստամեանի, Ֆուրման Գէորգեանի, Ռուսլան Յովհաննիսեանի հետ՝ 1992 թուականի Սեպտեմբերի 29ին: Կ'իմանայ, որ այն ժամանակ, երբ շատ-շատերը փախչում էին Հայաստանից, հայրը, որ Գերմանիայում ծառայելուց յետոյ նշանակում էր ստացել Տեումենում, ամէն ինչ անում էր Հայաստան գալու համար: Ոմանք գնում էին Հայաստանի հոգսերից ազատուելու համար, իսկ նա գալիս էր Հայաստանի հոգսը թեթեւացնելու, իր ուսերին առնելու: Վերջապէս կարողացաւ գալ: Բայց դեռ Տեումենում էր, երբ լսեց աւերիչ երկրաշարժի լուրը: Ու երդուեց չսափրուել՝ մինչեւ բոլոր աւերած տները վերականգնուեն:

Մեսրոպը հօր մասին կ'իմանայ հարազատների, ընկերների պատմածից, բուլղար լրագրուհի Յվետլանա Պասկալեւայի վաւերագրական կինոնկարից: Կ'իմանայ, որ եղբայրը՝ Հրայրը, ծնուել է հօր մահից յետոյ, Հոկտեմբերի 1ին եւ երբեք հայր չի տեսել ու ինքը պիտի հայրութիւն անի նրան, պիտի ժառանգի հօր բնաւորութիւնը, հայրենասիրութիւնը, մասնագիտութիւնը, ուժը, ժպիտը: Ու մի օր ուղղաթիռով պիտի պտտուի Շահումեանի երկնքում, պիտի իջնի ազատագրուած Շահումեանի հողին եւ վստահ, ուժեղ ժպիտը դէմքին՝ ծաղիկ պիտի դնի այնտեղ, ուր զոհուեց հայրը: Ժպտալու է, որովհետեւ Հրայրի որդի Մեսրոպը լինելու է հօր նման եւ գիտակցելու է, որ հայրենիքի համար զոհուած նահատակներին ուղեկցում է յաւերժական ժպիտը:

Մեսրոպը հոր մասին կ'իմանայ նաեւ այս հրապարակումից: Կ'իմանայ, որ հօրաքոյր Անոլշը խմբագրութեանն ուղղուած նամակն աւարտել էր «Ծունկի եմ իջնում սուրբ շիրիմիդ առջեւ, սիրելի ու պաշտելի իմ միակ եղբայր» ցաւատանջ եւ յուզիչ խօսքերով: Իսկ մենք մեզ իրաւունք վերապահեցինք փոքր-ինչ փոփոխել նրա խօսքերը, դարձնել վերնագիր ու Մեսրոպից նրա հօրեղբայրները լինելու իրաւունք խնդրել՝ գիտենալով, որ այդ պատուին կ'արժանանանք միայն Շահումեանը ազատագրելու դէպքում («Երկիր», 29 Սեպտեմբեր 1993):

Ե. Ս.

ԶՈՀՈՒԵՑԻՆ ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ԵՐԿՆՔՈՒՄ

Հպարտ Շահումեանը գերութեան մէջ է: Բայց Շահումեանի հողը վառւում է թշնամու ոտքերի տակ: Շահումեանցին երբեք չի հաշտուի հայրենիքի կորստի հետ: Մարտագաչտ է ողջ Շահումեանը: Հողը: Երկինքը:

Սեպտեմբերի 29ին Շահումեանի երկնքում աղէտի ենթարկուեց պարտիզանական ուղղաթիռը: Դեռանոը չկարողացաւ հասնել նպատակին: Թանձր մառախուղը ողբերգութեան պատճառ դարձաւ:

Զոհուեցին օդաչուներ Հրայր Կիրակոսեանը, Էդուարդ Խաչիկեանը, Գառնիկ Դանիէլեանը:

Բազմիցս ակօսել էին նրանք Արցախի երկինքը, զէնք, զինամթերք, անուն հասցրել պարտիզաններին:

Ցաւերժ փառք նրանց:

Զոհուեց Մաեփանակերտի օդակայանի պետ Մաքսիմ Բազամեանը:

Օդակայանի պետ էր, բայց գնում էր պարտիզանների հետ կռուելու որպէս ռադիստ: Կռիւն ամէնուր էր:

Ցաւերժ փառք նրան:

Հայրենի հողին ոտք չդրած՝ զոհուեցին շահումեանցի պարտիզաններ Ժորա Սարգսեանը, Մաքիս Առուստամեանը, Ֆորման Գէորգեանը, Ռուբեն Յովհաննիսեանը:

Թերի մնաց նրանց կռիւը: Անաւարտ մնաց սուրբ նպատակը:

Ցաւերժ փառք նրանց:

Եւ յաւերժ փառք նրանց, ովքեր կ'իրագործեն սուրբ նպատակը, կռիւը կը հասցնեն յաղթական վախճանի: Շահումեանը ազատագրուելու է, Շահումեանի հողը վառուելու է թշնամու ոտքերի տակ («Երկիր», 3 Հոկտեմբեր 1992):

Էդուարդ Խաչիկեան

Գառնիկ Դանիէլեան

ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՇՏԱԲ
Հ.Յ.Դ. ԼԵՌՆԱՊԱՐԻ ԿՈՄԻՏԷ
Հ.Յ.Դ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ԱՆԱՒԱՐՏ ԴԻՄԱՆԿԱՐ

Արցախն ըմբոստների հանգրուանն է։ Ու մագնիսի նման ձգում է ըմբոստ հոգիներին։ Բոլոր ազատամարտիկները բնաւորութեան մի ընդհանուր գիծ ունեն. ըմբոստ են ու ազատատենչ։

Ժամանակը մոռացութեան խորքից հանում է նորանոր նուիրեալների անունները։ Ահա եւս մէկը՝ Բենիամին Մկրտչեան։ Խմբագրութեան ստացած տեղեկութիւնները ժլատ են. 23 տարեկան էր, զոհուել է մէկ տարի առաջ, Օգոստոսի 15ին, Մարտունու շրջանի Մարտար գիւղում, արկի պայթիւնից, մարտական ընկերներ Կորիւնի եւ Գագիկի հետ։ Ծառայել է Խորհրդային բանակում, տիրապետել տանկիստ-մեխանիկի մասնագիտութեանը։ Վերադարձել է, զինուորագրուել Ազատամարտին։ Բայց այն ժամանակ Արցախը ո՛չ բանակ ունէր, ոչ էլ, առաւել եւս, տանկ։ Բենոն պայքարի մէջ մտել է որպէս զինատար, ՕՄՕՆականների եւ ռուս զինուորների թթի տակով, կեանքը վտանգի ենթարկելով զէնք ու զինամթերք հասցրել Արցախ։ Ապա զինուորի համազգեստ է հագել, մասնակցել Մարտունու, Մարտակերտի, Զլդրանի մարտերին։ Ցարգուած զինուոր է եղել։ Կեանքը վտանգի ենթարկելով՝ բազմիցս նեղ տեղից հասել է ընկերներին։ Զոհուել է մարտական առաջադրանքը կատարելիս։ Թաղուած է Եռաբլուրում։

Այսքանը։ Ուրիշ ոչինչ։

Եւս երկու կենսագրական տեղեկութիւն. ծնողների միակ արու զաւակն էր։ Չորս քոյր է ունեցել։ Զոհուելուց յետոյ քոյրերից մէկը՝ Անանան, կամեցել է մեկնել Արցախ՝ եղբօր վրէժը լուծելու։ Սակայն ի վերջոյ ստիպուած ծառայութեան է անցել թիկունքում։

Ահա այն ամէնը, ինչ մեզ յայտնի է Բենիամին Մկրտչեանի մասին։ Անշուշտ այս ամէնը անբաւարար են նրա դիմանկարը ուրուագծելու համար։ Անշուշտ մարտական ընկերները կարող են նրա խիզախութեան, ծառայութիւնների մասին վկայող բազմաթիւ օրինակներ բերել, դիմանկարը ամբողջացնող, բնաւորութիւնը, ուժը, կամքը, վճռականութիւնը, նուիրումը ցուցանող բազմաթիւ դրուագներ պատմել։

Սակայն նամակի ժլատ տեղեկությունների մեջ կայ մի նրբերանգ, որը որոշակիություն է հաղորդում ազատամարտիկի անաւարտ դիմանկարին:

Դա ըմբոստ բնաւորությունն է ու սէրը Արցախի նկատմամբ: Անսահման սէրը, որը Բենիամինի նմաններին տանում է Արցախ, կապում հող ու ջրին, մարդկանց, այդ չքնաղ ու ըմբոստ լեռնաշխարհի ճակատագրին: Արցախն ըմբոստների հանգրուանն է: Ու մագնիսի նման ձգում է ըմբոստ հոգիներին: Բոլոր ազատամարտիկները բնաւորութեան մի ընդհանուր գիծ ունեն. ըմբոստ են ու ազատատենչ: Հայրենասիրությունը նրանց համար ոչ թէ զգայական ոլորտ է, այլ՝ մարտադաշտ, ուր արեամբ են սնուցում պտուղն հայրենեաց, կեանքերը նուիրաբերում յանուն հայրենիքի:

Այդպիսին էր նաեւ Բենոն:

Ու եթէ Բենոյի մարտական կենսագրութեան ժլատ տեղեկություններ զուգակցենք ազատամարտիկին բնորոշ ընդհանուր պատկերին, կը տեսնենք, որ անաւարտ դիմանկարը բաւականին պարզ ու որոշակի գծեր է ձեռք բերում. մեր օրերի նուիրեալներին բնորոշ որոշակի գծեր՝ սէր ու նուիրում («Երկիր», 14 Օգոստոս 1993):

Ե. Ս.

ՄԱՐՏՈՒՆԻ

ԶԻՆՈՒՈՐԻ ԺՊԻՏԸ

Հայ Զինուորն այլ է՝ հոգեւոր երեւոյթ, առաքեալ, նուիրեալ, ազատամարտիկ։

*Մարտական ընկերները մի բառ էին ասում. զինուոր էր։ Իսկ երբ ուզում էի բնութագրող, հայ զինուորին առանձնայատուկ որեւէ բան իմանալ եւ այլեւայլ հարցումներ էի անում, յանկարծակի դէմ էի առնում պատնէշի. անյաղթահարելի մի պատնէշ, որ անհաւատալիօրէն իրական բարձրանում էր երկու հայ մարդու միջեւ։ Հաւանաբար տարբեր բաներից էինք խօսում. եւ ուզում էի իմանալ, թէ ի վերջոյ ինչ ասել է զինուոր, իսկ նրանք չէին կարողանում հասկանալ, թէ դիմացինն ինչպէս կարող է չհասկանալ այդ պարզ ճշմարտութիւնը։ Զինուոր։ Այդպէս ուրեմն. ասում էին զինուոր էր ու մէկ-երկու ժլատ տեղեկութիւն աւելացնում. Սարգիս Յովհաննէսի Բաղալեան, ծնուել է 1969 թ. Մարտի 18ին, Զարենցաւանում, սովորել է Ալմա Աթայի «Պակ» ռազմական դպրոցում, ուսումը կիսատ թողնելով գնացել է բանակ։ 92ից մասնակցել է ԼՂՀ ինքնապաշտպանական մարտերին։ Դեկտեմբերից «Հրայր Դժոխք» ջոկատի մարտիկ է։ Ունի մէկ երեխայ՝ Մհեր։ Մարտնէլ է նաեւ կարմիրի, Մարտունու, Նախիջեւանի սահմանամերձ շրջանների ինքնապաշտպանական մարտերին։ Փետրուարից Հ.Յ.Դ.ի անդամ է։ Զոհուել է 93 թուականի Մարտի 9ին, Մարտակերտի շրջանի Մանիքլու գիւղի բարձունքները պաշտպանելիս։ Վիրաւորուել է մի ձեռքից, բայց շարունակել է կռուել։ Եւ զոհուել է։ Այսքան։ Ուրիշ ոչինչ։

Իսկ ես, որ Սարգիսից մեծ եմ ուղիղ քսան տարով եւ զինուոր չեմ ու փոքր-ինչ վերացական պատկերացում ունեմ զինուորի, իսկ հայ զինուորի մասին ուղղակի առասպելական պատկերացում ունեմ, ահա նայում եմ առեղծուածային ժպիտ ունեցող հայ երիտասարդի դէմքին ու մտածում, որ եթէ ընկերների բնորոշումը ճիշտ է, Սարգիսը զինուորի տիպար է, սա զինուորի տիպիկ ժպիտ է, ուրեմն զինուոր՝ հայ զինուոր ասածդ նա է, ով գիտի խորին մի դաղտնիք, սեղեակ է վերին մի խորհրդի, որն անհասանելի է շարքային մահկանացուներիս՝ ոչ-զինուորներիս։ ... Գուցէ այն զգալիօրէն տարբերուում է խստահայեաց, լոկ ֆիզիկական ուժ արտայայտող զինուորի դասական կերպարից, որը մեզ ներարկել է գերմանացի, ամերիկացի, ռուս զինուորը։ Եւ ի հարկէ, համեմատութեան եզր անդամ չունի թուրք զինուորի դէմքի արտայայտութեան հետ։ Որովհետեւ Հայ Զինուորն այլ է՝ հոգեւոր երեւոյթ, առաքեալ նուիրեալ, ազատամարտիկ։ Նա Հայ Զինուոր է։ Ինչպէս հայը քրիստոնեայ չէ լոկ, այլ՝ Հայ Քրիստոնեայ, այնպէս էլ հայ զինուորը զինուոր չէ լոկ, այլ՝ Հայ Զինուոր։ Եւ այսպիսին է ժպիտը նրա («Երկիր», 9 Ապրիլ 1993)։

Ե. Ս.

ԱՐԹՈՒՐ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՂԱՐԻԲԵԱՆ

Մեռել է 1967 թ. Դեկտեմբերի 16ին, Ստեփանաւան քաղաքում։ Երեք տարեկանից ընտանիքով բնակուել են Երեւանում։ Սովորել է թիւ 142 դպրոցում։ Ուիթերորդ դասարանից միաժամանակ յաճախել է Ցակոբ Կոջոյեանի անուան գեղանկարչական դպրոցը։ Ուիթամեակն աւարտելուց յետոյ ընդունուել է Փանոս Թերլեմեզեանի անուան գեղարուեստական ուսումնարանի կերպարուեստի բաժինը։ Այնուհետեւ ուսումնառութիւնը շարունակել է Երեւանի գեղարուեստաթատերական ինստիտուտի կերպարուեստի բաժնում (քանդակ)։

Երկրորդ ուսումնական տարուց գործուն մասնակցութիւն է բերել ազգային-ազատագրական շարժմանը։ Եղել է Հայաստանի Ազգային Անկախութիւն Կուսակցութեան (Հ.Ա.Ա.Կ.) առաջին անդամներից։ Հ.Ց.Դաշնակցութեան Հայաստանում վերահաստատուելուց յետոյ Հ.Ա.Ա.Կ.ը ամբողջ կառոյցով մտել է Հ.Ց.Դ.ի մէջ։

Առաջին իսկ օրերից մասնակցել է բոլոր նշանաւոր ճակատամարտերին, որոնք մղուել են Արցախի ազատագրման համար։ Մարտնչել է Երասխաւանում, Գետաշէնում, Շահումեանում, Բերդաձորում, Լիսագորում, Շուշիում... Զոհուել է 1992ի Նոյեմբերի 6ին։

ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ



ՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

Ազատամարտիկ Արթուր Ղարիբեանի (Տուգուլի) յիշատակին

Իմ հոգու համար ես ունեմ ժամեր,
Իմ կեանքի համար ես ունեմ ժամեր,
Դու հեռանում ես կեանքից հեռահար,
Դու – կեանքի նման – կրակ հագած սէր։

Կրակ հագած լոյս, սեւ հագած մի սէր,
Փառապանծ երկիր – անկոտոր տանիք,
Ու յետոյ – կապոյտ ճարնջի թեւեր –
Բանաստեղծութիւն, յետոյ Հայրենիք։

Մենք՝ հոգի հագած թափառականներ,
Մենք – տրտմութիւններ – լուսէ մահարձան.
Մենք – մահուան աչքում – մենք դառնում
ենք սէր,
Իսկ մեր օրերը աղօտ յուշ դարձան,

Ու վերադարձան ժամերը նիհար,
Եւ Հայրենիքը դարձաւ տրտմութիւն։
Ես աղօթում եմ իմ հոգու համար,
Իսկ իմ կեանքը այս – նա դառնում է թոյն։

Եւ ես նայում եմ մահացող հեռուն.
Մենք մահանում ենք, յետոյ, դառնում սէր,
Մենք մահանում ենք,
Ուրուականներ ենք՝ հագած տրտմութիւն.
Մենք՝ ՀՈԳԻ ՀԱԳԱԾ ԹԱՓԱՌԱԿԱՆՆԵՐ։

ՍԻՓԱՆ ՇԻՐԱՔ

1993

ԱՐՄԷՆ ՌՈԲԵՐՏԻ ԱՅՎԱԶԵԱՆ

•

«ԵՐԿԻՐ» ԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆԸ

Ցարգելի խմբագրություն,

Ես «Երկիր» թերթի մշտական ընթերցողներից եմ եւ մեծ հետաքրքրությամբ կարդում եմ ձեր բոլոր համարները։ Շնորհակալություն եմ յայտնում, որ թերթը յաճախակի իր «Ես մի զարկն եմ քո կոուի» յօդուածաշարում անդրադառնում է մեր ժողովրդի լաւագոյն զաւակների յուշերին, որոնք Արցախեան շարժմամբ ծաւալուած ազգային-ազատագրական պայքարում իրենց երիտասարդ կեանքը զոհեցին յանուն հայրենիքի։

Վերջերս Ձեր պաշտօնաթերթի համարներից մէկում (16.06.1993 թ.) նշուած էր, որ Բէյրութի «Բագին» գրական ամսագիրը ծրագրել է նահատակ հերոսներին նուիրուած մի յատուկ համար հրատարակել, ուր տեղ պիտի գտնեն հերոսների կենսագրականները, լուսանկարները, յուշերն ու տպաւորապաշտ էջերը։ Ձեզ եմ ներկայացնում մի երիտասարդի կենսագրություն, որը նոյնպէս իր կեանքը նուիրեց հայրենիքի պաշտպանութեանը։

Ս. Ա.

•

Արմէն Ռոբերտի Այվազեանը ծնուել է 1967 թ. Օգոստոսի 3ին, Երեւանում՝ բանուորի ընտանիքում։ 1982 թ. աւարտել է Երեւանի հ. 46 միջնակարգ դպրոցի 8րդ դասարանը։ Այնուհետեւ ուսումը շարունակել է Երեւանի հ. 46 առեւտրա-խոհարարական միջնակարգ արհեստագործական ուսումնարանում, որն աւարտել է 1985 թ., ստանալով ապրանքագէտ, վաճառողի մասնագիտութիւն։

1985-1988 թթ. Արմէնը ծառայել է Նախկին Սովետական բանակում։ Ծառայութեան տարիներին էր, որ առաջին անգամ Արմէնն զգաց «հարեւան» ժողովրդի «սէրն ու յարգանքը» հայերի նկատմամբ։ Մի քանի ազերիներ ծեծել, վիրաւորել էին նրա հայ ընկերներից մէկին։ Արմէնն իմանալով այդ մասին, դիմել էր կրտսեր հրամանատարին։ Սակայն չստանալով բաւարար պատասխան, մեն-մենակ մի լաւ դաս էր տուել ընկերոջը նեղացնողներին, որի համար մէկ տարով երկարացուեց նրա ծառայութեան ժամկէտը։

Բանակից յետոյ Արմէնն անցաւ աշխատանքի: Բազմանդամ էր նրանց ընտանիքը (7 անձ) եւ նա, ի տարբերութիւն իր բազմաթիւ հասակակիցների, որոշեց իր աշխատանքով օգնել ծնողներին՝ հոգալու մեծ ընտանիքի հոգսերը:

1988 թուականը բեկումային էր մեր ժողովրդի պատմութեան մէջ: Արմէնը ուշադիր հետեւում էր այդ ամբողջ քաղաքական անցուդարձին: Արտաքինից թւում էր, թէ նա անտարբեր է այդ ամէնի նկատմամբ: Սակայն, երբ ոխերիմ թշնամին ցանկացաւ արիւնով հեղեղել մեր ժողովրդին, Արմէնը այլեւս չէր կարող հանգիստ նստել տանը: Հարիւրաւոր ազնիւ երիտասարդների նման անդամագրուեց հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործին: Դա 1990 թ. Սեպտեմբեր ամսին էր: Այդ օրուանից մինչեւ իր կարճ կեանքի վերջը նա քուն ու դադար չունէր:

Նայիրի շրջանի 40 սովխոզի մի խումբ հայրենասէրներ ստեղծել էին «Քասախ» կամաւորական ջոկատը, որի հետ էլ նա անցաւ իր մարտական փառաւոր ուղին: Ջոկատը կռուեց Նոյեմբերեանում, Իջեւանում, Կրասնոսելսկում, Գորիսում:

Հանրապետութեան սահմանամերձ շրջանների պաշտպանութեան եւ բնակչութեան անվտանգութիւնը ապահովելու համար, կառավարութեան որոշմամբ ստեղծուել էր ՀՀ յատուկ գունդ, որի մէջ մտաւ նաեւ «Քասախ» կամաւորական ջոկատը: 1991 թ. աշնանից մինչեւ 1992 թ. Յուլիս ամիսը Արմէնենց ջոկատը պաշտպանում էր Լեռնային Ղարաբաղի հիւսիսային սահմանները Շահումեանում: Այստեղ էլ հէնց դրսեւորուեցին Արմէն Այվազեանի բնաւորութեան գծերը՝ հայրենասիրութիւնը, ազնուութիւնը, ընկերասիրութիւնը, նուիրուածութիւնը ընկերներին եւ իր սուրբ գործին, որի շնորհիւ նա մեծ սէր ու յարգանք էր վայելում ընկերների եւ հրամանատարութեան մօտ: Եւ պատահական չէր, որ Արմէնը կարճ ժամանակում շարքային զինուորից դարձաւ դասակի հրամանատարի տեղակալ: Նա լաւ կազմակերպիչ էր, ճիշտ էր հասկանում զինուորի հոգեբանութիւնը եւ երբեք դժուարին պահերին ընկերներին մենակ չէր թողնում: Շահումեանցիների մօտ նա ամենասիրուած ու ճանաչուած տղաներից մէկն էր:

1992 թ. Օգոստոս-Հոկտեմբեր ամիսներին գնդին յանձնարարուած էր պաշտպանել Լաչինի միջանցքը, առանց որի Ղարաբաղը չէր կարող գոյատեւել: Հոկտեմբերի 3ին Արմէնենց դասակը ստացել էր մարտական յանձնարարութիւն թիդիք գիւղի մօտ շրջափակումից հանել իր մարտական ընկերներին, որոնք պաշտպանում էին ռազմական կարեւոր նշանակութիւն ունեցող բարձունքը: Իր վեց ընկերների հետ Արմէնը Լաչինից աւտոմեքենայով շտապեց շրջափակման մէջ ընկած մարտիկներին օգնելու: Սակայն ճանապարհին պատահեց անսպասելին: Դարանակալուած թշնամին, իր սովորութեան համաձայն, մեծ վոհմակով յանկարծակի դուրս պրծաւ դարանից եւ յարձակուեց աւտոմեքենայի վրայ: Արմէնն ու իր ընկերները ընկան անհաւասար մարտում:

Այսօր Արմէնի ընկերները շարունակում են նրա կիսատ թողած գործերը: Նրանք ծառայում են ՀՀ պաշտպանութեան նախարարութեան մոտօ-հրաձգային գնդում (Արամ Մարտիրոսեանը, Ռազմիկ

Խաչատրեանը, Բորիսը, Վարդանը, Արայիկը...), եւ եթէ խմբագրութիւնը կը ցանկանայ աւելի մանրամասն տեղեկութիւններ ունենալ Արմէնի մասին, կարող է հանդիպել նրանց հետ:

Ցարգելի խմբագրութիւն, յայտարարութեան մէջ նշուած է, գրել յուշեր ազատամարտիկների մասին: Դրանք ի հարկէ շատ են: Սակայն ես ուզում եմ գրել մի դէպքի մասին: Հերթական անգամ, երբ Արմէնը վերադարձել էր ռազմաճակատից, նրանց տանը նստած զրուցում էինք: Արմէնի հայրը՝ Ռոբերտ Այվազեանը, ասաց. «Արմէն ջան, քեզ հնարաւորութիւն են տուել հանգստանալու, հիմա էլ թող ուրիշները գնան հայրենիքը պաշտպանելու»: Արմէնը լուռ նայեց հօրը, յուզմունքից աչքերը չիմանալով ուր թաքցնել ասաց. «Ախր, դուք չէք եղել Շահումեանում, Ղարաբաղում եւ չէք տեսել ղարաբաղցի երեխաների ու ծերերի թախծոտ աչքերը, նրանք մեծ յոյսեր են կապել մեզ հետ»: Այսպիսին էր Արմէն Այվազեանը, այդպիսին էլ կը մնայ մեր յուշերում:

Ցարգելի խմբագրութիւն, կրկին անգամ շնորհակալութիւն եմ յայտնում Ձեզ, որ չէք մոռանում մեր հերոսներին եւ խոնարհաբար խնդրում եմ Օգոստոսի 3ին, Արմէնի ծննդեան օրը, երկտող նուիրէք նրա յիշատակին: Ես համոզուած եմ, որ դրանով մի փոքր կը թեթեւացնէք նրա ծնողների անսահման խոր վիշտը (*Մեքենագիր*):

ՍՊԱՐՏԱԿ ԱՍՈՅԵԱՆ

23-06-1993 *թ.*

Լաչինը՝ Գորիսէն դիտուած:

ՅԱՐԱՏԵԻ ՔԱՅԼ ԷՐ ՆՐԱ ԿԵԱՆՔԸ

Ընդամէնը 30 տարի ապրեց։ Բայց այդ 30ից 5ը այլ կեանք էր։ Յարատեւ կռիւ էր նրա ապրած վերջին 5 տարին։ Յարատեւ քայլ՝ դէպի առաջ, դէպի յաւերժութիւն։

«Էրեան ենք առաջ». սա Ցունանի սիրած խօսքն էր։ Խօսք չէր՝ նշանաբան էր։ 88ից ի վեր, երբ նուիրագրուեց հայրենիքի պաշտպանութեանը, սա էր նրա պատասխանը բոլոր հարցերին։ Միակ պատասխանն էր։ Ապրելակերպը։ Հաւատամքը։ Մարտակոչը։

Այսպէս էր ոգեւորում իր ջոկատի տղաներին։ Երբ ջոկատ էր ստեղծում։ Երբ Հայաստանի սահմաններն էր պաշտպանում։ Երբ մարտնչում էր Արցախում։

Նրա համար անընդունելի էր նահանջը, նահանջի հոգեբանութիւնը։ Ի հարկէ, որպէս զինուոր գիտէր նաեւ, որ երբեմն հարկ է լինում օրերով դիրքաւորուել, խրամատաւորուել։ Երբեմն հարկ է նաեւ յետ քաշուել։

Գատերազմն իր օրէնքներն ունի։ Բայց ոգին ոչ մի օրէնքի չի ենթարկւում։ Չի ենթարկւում նահանջի օրէնքին։ Օրէնքի ենթարկւում է բանականութիւնը։ Ոգին ստեղծում է բնաւորութիւն։ Հայ Մարդ։ Մարտիկ։

Բանականութիւնը բնաւորութեանը ներարկում է սթափ սառնասիրտ նուիրում։ Եւ ծնւում է զինուորը։ Նուիրեալը։ Ազատամարտիկը։ Կրակի կրտոր՝ բայց սառնասիրտ։ Նուիրեալ՝ բայց հաւասարակշիռ։ Զոհաբերուող՝ բայց կենսասէր։ Երբեմն նաեւ յետ քաշուող՝ բայց միշտ առաջ գնացող։ Որովհետեւ ոգին չի ենթարկւում նահանջի հոգեբանութեանը։ Չի հանդուրժում նահանջը։ Մարտնչում է, Զոհւում։ Բայց չի նահանջում։

Զոհուեց նաեւ Ցունանը՝ Ցունան Գառնիկի Ցունանեանը, Աստաշատի Մխչեան գիւղից։

Ընդամէնը 30 տարի ապրեց։ Բայց այդ 30ից 5ը այլ կեանք էր։ Յարատեւ կռիւ էր նրա ապրած վերջին 5 տարին։ Յարատեւ քայլ՝ դէպի առաջ, դէպի յաւերժութիւն։ Իր նշանաբան խօսքերն էին չուրթերին նաեւ Սեպտեմբերի 29ին, երբ զոհուեց Գեղչայի բարձր բլուրների վրայ։

Կատարեց իր յարատեւ քայլն ու ընկաւ՝ կեանքով ու մահուամբ դառնալով հայրենիքին, հայ մարդուն առաջնորդող քայլ՝ դէպի կռիւ, դէպի յաղթանակ։

Որովհետեւ չկայ այլ ուղի։ Մենք պիտի առաջ գնանք (9 Հոկտեմբեր 1992)։

«ԵՐԿԻՐ»

ԱՄԷՆ ՄԷԿԸ ՄԻ ՏԱՆ ՃՐԱԳ



ԳԱԼՈՒՍՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ԱՐՄՈՒՆ ՅԱԿՈԲԵԱՆ

Երիտասարդ էին, բազում երազանքների տէր...: Ամենամեծ երազանքը՝ Ազատ ու Անկախ հայրենիքը...

Արէնիի գերեզմանատունը բարձունքի վրայ է, ներքեւում գալարում է սգաւոր Արփան, որ այնքան սովոր է նրանց զնգուն ծիծաղին, իսկ հիմա աչքը չի կտրում նրանց շիրիմներին վառուող լոյսերից...: Սուրբ Աստուածածին եկեղեցու մօտ, բերդի նմանուող գերեզմանատան մուտքի անպաշտպան մասում հսկում են նրանք՝ նախնիների շիրիմները եւ ակնդէտ նայում դիմացի կապտամշուշ սարին. այնտեղ թուրքերն են:

Գալուստ Պաղտասարեան, Նորայր Յակոբեան, Գագիկ Միքայէլեան, Մեհրաբ Գրիգորեան, Նորայր Սարգսեան...: Հերոսներ, որ իրենց կեանքը նուիրաբերեցին հայրենի հողին: Երիտասարդ էին, բազում երազանքների տէր...: Ամենամեծ երազանքը՝ Ազատ ու Անկախ հայրենիքը...

Եղեգնաձորի շրջանի Արէնի գիւղում վաղուց կազմուել էր երկրապահ ջոկատ, որի առաջին շարքերում նրանք էին: Պաշտպանութիւնը յուսալի էր, թուրքը այդ կողմով առաջ գալ չէր կարող: Սակայն դրութիւնը լարուած էր Լաչինի միջանցքում: Զնուորներ էին պէտք:

1992 թ. Սեպտեմբերի 26ին Լաչին մեկնեց Եղեգնաձորի երկրապահ ջոկատը: Արէնիից 16 կամաւոր կար ջոկատում:

Մարտերն ընթանում էին Լաչին-Ղուբաթլու սահմանում: Տղաները անընդհատ լեռ էին մղում հրոսակների յարձակումները: Մարտական եւ բարոյական բարձր ոգին զինուորի համար անկարելին կարելի է դարձնում: Դժուար է զինուորի համար. նահանջ գոյութիւն չունի, երբ լեռնեւում հայրենի հող է:

ԳԱԳԻԿ
ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

ՄԵՀՐԱԲ
ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՆՈՐԱՅՐ
ՍԱՐԳՍԵԱՆ

...Սեպտեմբերի 30ի գիշերն էր...: Խաւար էր, լուսին չկար...: Թուրքերը անընդհատ գրոհում էին: Շատ էին անաստուածները...: Թշնամին անսպասելիօրէն շրջանցեց պաշտպանական բարձունքը, եւ տղաների մի մասը օղակուեց...: Անելանելի վիճակ էր, բայց դիրքերը պէտք էր պահել մինչեւ օգնական ջոկատի գալը...

«Ցետ չենք դառնալու»՝ լսուեց Գալուստի հաստատ ձայնը, եւ նա գնաց կրակոցների ուղղութեամբ: Ընկերները հետեւեցին նրան: Կատաղի ու անհաւասար մարտ սկսուեց: Փամփուշտները վերջանում էին: Արծրունը ծանր վիրաւորուեց: Նորայրը խփուեց՝ փամփուշտ հասցնելիս: Սուինամարտն անխուսափելի էր...

Օգնութեան հասած Աբովեանի երկրապահ ջոկատը յետ շպրտեց թշնամուն: Առաւօտեան չորս դիակ դուրս բերուեց գիշերուայ դժոխքից...: Գալուստի տանջահար դիակը գտան 10 օր յետոյ:

Նրանց մահուան բոթը ծանր ազդեց համագիւղացիների վրայ: Նրանցից երեքը՝ Գալուստը, Մեհրաբը եւ Նորայրը իրենց տան միակ նրագն էին...

Սուրբ Աստուածածին եկեղեցու մօտ, բարձունքի վրայ կողք կողքի նրանց հողաթմբերն են, որ ուխտատեղի է դարձել համագիւղացիների համար:

Փա՜ռք նրանց: Ցաւե՛ր փառք («Երկիր», 23 Յունիս 1993):

ԹԵՐԵԶԱ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՐՏՔՈՎ

Էդուարդ Ղարաբաղցեան

Համլետ Յակոբեան

Հերոս չէին ծնուել, բայց երբ եկաւ պահը, հերոսացան. պարտք էին հայրենիքին:

Լաչին: Մարադասիրական միջանցքի պաշտպանական դիրքեր...

Ուղիղ մէկ տարի առաջ էր՝ 1992 թուականի Սեպտեմբերի 30ի լոյս Հոկտեմբերի 1ի գիշերը: Անսպասելի յարձակումով թուրքերը գրաւեցին հայկական դիրքերը: Եղեգնաձորի երկրապահ ջոկատի մի խումբ մարտիկներ ընկան շրջապատման մէջ, ճը զոհուեցին: Հարկաւոր էր յետ շպրտել թշնամուն: Նուբարաշէնի գօրամասի դեսանտային գնդի զինուորները անցան հակայարձակման:

Նահանջելիս թուրքը զոհուածին թողնում է մարտադաշտում՝ աւելորդ ծանրութիւն համարելով: Դրա փոխարէն չի խորշում կրած պարտութեան ողջ կատաղութիւնը թափել զոհուած հայ զինուորի վրայ՝ խոշտանգելով նրա դին: Այդպիսին է թուրքի՝ բորենու էութիւնը: Իսկ զոհուած ընկերոջ դին ցանկացած գնով գտնելու, թշնամու պիղծ ճանկերից փրկելու համար հայ ազատամարտիկին յատուկ հրահանգ չի տրւում: Դա չգրուած օրէնք է, որ բխում է մարդկային խղճի, ընկերոջ, առաւել եւս զոհուածի նկատմամբ ունեցած պարտքի թելադրանքով: Դա էլ էութիւն է. հող հայրենին պաշտպանող հայ զօրականի՝ ապրելու հայկական կերպ:

Առջեւից գնում էին չորսով՝ Էդոն, Համլետը, Ռոբերտը, Արշակը: Արդէն թուրքերից մաքրուած դիրքերում նրանք փնտռում էին զոհուած հինգ ընկերներին: 20-21 տարեկան անվեհեր երիտասարդների մտքով չէր էլ անցնում, որ գնդակը կարող է կտրել իրենց կեանքի թելը: Վստահ էին իրենց ուժերին: Բայց ճակատագիրը այլ բան էր պատրաստել Էդուարդի եւ Համլետի համար:

Էդուարդ Կամսարի Ղարաբաղցեան. ծնուել է Երեւանում, 1971 թուականի Հոկտեմբերի 7ին: 89թ. զօրակոչուել է զինծառայութեան Վրաստանի Լագոդեխ քաղաքի դեսանտա-գրոհային զինմասում: Ծառա-

յութիւնն աւարտեց 92ին: Կարող էր սովորել, ինչպէս շատերը: Բայց Հայաստանի Հանրապետութիւնում ազգային բանակ էր ձեւաւորւում, սահմաններում էլ հանգիստ չէր, եւ նա կամաւոր ծառայութեան անցաւ Նուբարաշէնի զինմասում որպէս ենթասպայ...

Մօր՝ տիկին Էլմիրայի համար դժուար է պատմել զոհուած որդու մասին: Այսօր Երեւանի թիւ 137 դպրոցի ռազմագիտութեան կաբինետը կոչւում է Էդուարդի անունով: Շուտով, ծննդեան օրը դպրոցն էլ կ'անուանակոչուի նրա անունով: Նրա հետ միասին զոհուեց նաեւ 19 չբոլորած Համլետ Հայկազի Յակոբեանը:

Հերոս չէին ծնուել, բայց երբ եկաւ պահը, հերոսացան. պարտք էին հայրենիքին («Երկիր», 30 Սեպտեմբեր 1993):

ԹԵՐԵԶԱ ՀԱՍՐԱՊԵՏԵԱՆ

Լաչինի Մորիկ գիւղէն տեսարան մը

ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՊԱՇՏՊԱՆԸ



Գորիսում գրեթէ բոլորն էլ ճանաչում էին նրան: Գիտէին որպէս խիզախ մարտիկ եւ որպէս բանաստեղծ, որի ստեղծագործութիւնները գրեթէ ամէն առաւօտ հնչում էին Գորիսի ռադիոյով:

Հայաստանը Արցախին կապող միջանցքը խորհրդանշական անուն ունի՝ Մարդասիրական: Գուցէ այլ անուն կարելի էր գտնել, ենթադրենք, Ազատութեան ճանապարհ: Սակայն ինչպէս ոչինչ պատահական չէ այս աշխարհում, այնպէս էլ պատահական չէ այս անուան ընտրութիւնը, որ ցոյց է տալիս Հայոց ազատագրական պայքարի բուն ենթաշերտերից մէկը՝ մարդասիրութիւնը: Հայոց պայքարը սոսկ ազգային խնդիր չէ, ընդհակառակը, իր էութեան մէջ խորապէս համամարդկային է ու հետապնդում է հոգեւոր արժէքների հաստատման նպատակ:

Ըստ այդմ էլ, համայն մարդկութեան հոգեւոր զօրքի ասպետներ են բոլոր ազատամարտիկները, իսկ Լաչինի միջանցքի պաշտպանները մարդասիրութեան գնդի ռազմիկներ են: Ո՛չ միայն հայ ժողովուրդը, այլեւ ողջ մարդկութիւնը պարտք է նրանց: Ու ինչպէս միահամուռ դատապարտում է այս կամ այն երկրի ոտնձգութիւնը մէկ այլ երկրի ու ժողովրդի նկատմամբ, այնպէս էլ միահամուռ պիտի ծունկի իջնի նրանց առջեւ, ովքեր պաշտպանում են Մարդասիրական միջանցքը, ովքեր իրենց կեանքն են տուել այդ սուրբ կռւում:

Մխիթար Թումասեանի 18 տարին լրացաւ 86 թուականին: Այդ ժամանակ Խորհրդային միութեան զօրքերը դեռ Աֆղանստանում էին: Մխիթարն էլ, ստիպուած, ենթարկուելով զինապարտութեան օրէնքին, ճակատագրի բերումով յայտնուեց Աֆղանստանում: Գուցէ հէնց սա՝ խղճի հակառակ ակամայ զաւթիչ լինելու հանգամանքը բնածին հայ-

ռենասէր երիտասարդին ստիպեց ծառայութիւնն աւարտելուց յետոյ դարձեալ զէնք վերցնել, այս անգամ՝ կամաւոր անդամագրուել մէկ ուրիշ՝ վեհ ու ազնիւ կռուի:

Նախնիները Զաւախք աշխարհի Դադէշ գիւղից էին, ինքը բնակւում էր Կոտայքի Բալահովիտ գիւղում, սակայն 89 թուականից ի վեր Գորիսի երկրապահ ջոկատի անդամ էր ու անհամեմատ շատ էր լինում այնտեղ, քան տանը: Գորիսում գրեթէ բոլորն էլ ճանաչում էին նրան: Գիտէին որպէս խիզախ մարտիկ եւ որպէս բանաստեղծ, որի ստեղծագործութիւնները գրեթէ ամէն առաւօտ հնչում էին Գորիսի ռադիոյով: Կեանքի ու մահուան մասին էր գրում, գրում էր մարդասիրութեան ու պայքարի մասին: Իր կեանքն էր գրում: Զէնքով ու գրչով: Ինչպէս վայել է բանաստեղծ մարտիկին: Ինչպէս վայել է Մարդասիրական միջանցքի պաշտպանին:

Այդպէս կռուեց ու այդպէս զոհուեց՝ պաշտպանելով Մարդասիրական միջանցքը: Զոհուեց 92 թուականի Հոկտեմբերի 1ին, երբ ադրբեջանցիները հերթական անգամ փորձում էին գրաւել Մարդասիրական միջանցքը: Ինչպէս միշտ, այս անգամ էլ յետ շպրտուեցին: Ափսո՜ս, այս յաղթանակը Մխիթարի վերջին կռիւն էր: Ընկաւ Մարդասիրական միջանցքի պաշտպանը, որ մնայ Մարդասիրական միջանցքը («Երկիր», 1 Հոկտեմբեր 1993):

Ե. Ս.



ՏԵՍԱՐԱՆ ՄԸ ԼԱՉԻՆԷՆ

ՍԱՄՈՒԷԼ ԱԼԻԲԵԿԻ ՄՈՒՐԱԴԵԱՆ

Ի պատասխան Սումգայիթեան եղեռնի՝ մասնակցել է Մեղրաձորի հարեւան գիւղերում բնակուող թուրքերի արտաքսմանը:

Ծնուել է 1964 թ. Յուլիսի 29ին՝ Հրազդանի շրջանի Մեղրաձոր գիւղում: Մանկութիւնը անցել էր Մարմարիկի գեղատեսիլ հովտում: Աւարտել է գիւղի միջնակարգ դպրոցը: Դպրոցի լաւագոյն շրջանաւարտներից էր: Բնաւորութեամբ հանգիստ էր, հանդարտ, քչախօս: Ո՞վ կը մտածէր, որ այդ հանդարտութեան, հանգստութեան տակ թաքնուած է զինուորը, քաղաքացին, հայրենասէրը: 1988 թ. երբ սկսուեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, առաջիններից մէկն էր, որ գիտակցեց «Միայն զէնքով կայ հայոց փրկութիւն»: Ի պատասխան Սումգայիթեան եղեռնի՝ մասնակցել է Մեղրաձորի հարեւան գիւղերում բնակուող թուրքերի արտաքսմանը: Առաջին մարտական գործողութեանը մասնակցել է 1989 թ. Յունուարին՝ Երասխաւանում: Մեղրաձորցիները, չնայած որ Մեղրաձորը հնագոյն բնակավայր է, մեծամասնութեամբ այստեղ են հաստատուել առաջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, նրանք գաղթել են Կոգովիտ գաւառի Արծափ գիւղից: Գիւղում Սամուէլի ակտիւ մասնակցութեամբ կազմաւորւում է մարտական «Արծափ» ջոկատը: Երասխաւանի դէպքերից քիչ անց՝ «Արծափ»ի կազմում Սամուէլը մասնակցում է Ղափանի պաշտպանութեանը:

1990-1991 թ. «Արծափ» ջոկատը Նոյեմբերեան պաշտպանական գծում էր: Չի եղել «Արծափ»ի որեւէ գործողութիւն, որին Սամուէլը չմասնակցէր, նա այդ գործողութիւնների կազմակերպիչներից մէկն էր:

1992 թուականից սկսում է Սամուէլ Մուրադեանի արդէն հասուն մարտիկի ազատամարտը Արցախի սուրբ հողում: 1992 թ. Ապրիլի 1ից անձնական նախաձեռնութեամբ նա մասնակցում էր Մարտակերտի շրջանի Չափար, Նարեշտար, Աղդաբաղ, Չարեքտար գիւղերի պաշտպանական մարտերին:

Յունիսի 28ին «Կոմանդոս»ի հրամանատարութեամբ «Արաբօ», «Նիկոլ Դուման», «Արծափ» ջոկատները դիմակայում էին թուրքական յարձակմանը, անյայտ կորածների եւ զոհուածների թիւը հասաւ 90ի: Սամուէլ Մուրադեանը «Արծափ»ի կազմում էր, կռւում էր արծուի պէս: Մէկ շաբաթեայ հանգստից յետոյ՝ «Արծափ»ի ջոկատը նորից է մեկ-

նում Մարտակերտ: Թարթառի ափին, գետանցի ժամանակ, Սամուէլը վիրաւորւում է ձախ ոտքից: Նա վերադառնում է Մեղրաձոր: Գիւղամէջ դուրս գալուց յենակները չէր վերցնում, ցաւին դիմանում էր, միայն թէ «չմտածեն, թէ թուրքը կարողացել էր վիրաւորել իրեն»: 1992 թ. Հոկտեմբերի 6ին Հրազդանի գումարտակը կռւում էր Լաչինում, վիճակը ծանր էր: Օգնութիւն էր պէտք, փորձառուներ էին պէտք: Լաչին են մեկնում «Արծափ» ջոկատի 4 մարտիկ եւ Հրազդան քաղաքի «Խենթեր» ջոկատի 8 մարտիկ: Վէրքը դեռ չապաքինուած՝ Սամուէլը նորից առաջ է մղւում: Գումարտակը հակայարձակման է անցնում: 12 փորձառուները յարձակման վայրում էին, նրանք էին, որ առաջինն էին մօտենում ոսոխին, նրանց բազկի ուժն էին առաջինը տեսնում թշնամիները եւ խուճապահար փախչում: Սամուէլը՝ ընկերոջ Դաւիթի հետ, անհատական մարտի մէջ է մտնում թուրքերի հետ եւ նրանց խրամատները գրաւելիս ոչնչացնում 9 ասկեարների: Ցարձակումը սկսելուց 2 ժամ 30 րոպէ անց, գումարտակը 15 կմ թշնամուն ետ էր շպրտել, պատճառելով կենդանի ուժի եւ տեխնիկայի զգալի կորուստներ: Սակայն Սամուէլին վիճակուած չէր տեսնել այս մարտի յաղթական աւարտը, սա նրա վերջին մարտն էր, վերջին զարկն էր անարգ թշնամուն: Նուիրեալ զինուորը գնաց, գնաց միանալու «փոշիացած հերոսների դասակին»:

Երախտապարտ համագիւղացիք Մեղրաձորի միջնակարգ դպրոցը կոչեցին Սամուէլ Մուրադեանի անուան (Ջեռագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ



Ղափան



ԽԱՂԱՂ ԶԻՆՈՒՈՐԸ

Մարտական ընկերները ասում էին. «Գառնիկ, մի շաբաթ էլ մի արի, հեռուից ես գալիս, դժուար է, մենք կը պահենք սահմանը, պէտք լինի՝ ձէն կը տանք»։ Մինչեւ հասնեմ՝ թուրքերի վերջը կը տաք, էլ գալս ինչի՞ է»։

Թոլորն են ուզում խաղաղ ապրել։ Բայց երբ խաղաղ ապրելու նախապայմանը դառնում է կռիւը, ամենախաղաղասէրները կռուի են ելնում։

Գառնիկ Պողոսեանը խաղաղասէր, ծանրաբարոյ մարդ էր։ Լուռեցու կող ունէր ու հումոր։ Դժուար մանկութիւն էր ունեցել, որը էր մեծացել, քայլ առ քայլ յաղթահարել զրկանքներ, ոտքի կանգնել։ Դժուարութիւնները ոմանց ընկճում ու չեղում են, ոմանց կոփում ու ճշմարիտ ուղի առաջնորդում։ Կերտուածքի հարց է։ Կեանքը Գառնիկին կռեց, բարութիւն ու հաստատակամութիւն ներարկեց։

Իսկ երբ եկաւ զէնք վերցնելու ժամանակը՝ առաջիններից մէկը միացաւ հայրենիքի սահմանների պաշտպաններին։ Կռուի գնում էր՝ ինչպէս աշխատանքի. մի շաբաթ աշխատում։ Խաղաղ էր կռուում։ Իջեւանի Մարտիրոս բնակավայրի ծնունդ էր, բնակւում էր Գագարինեանում, մարտական ընկերները ասում էին. «Գառնիկ, մի շաբաթ էլ մի արի, հեռուից ես գալիս, դժուար է, մենք կը պահենք սահմանը, պէտք լինի՝ ձէն կը տանք։ Մինչեւ հասնեմ՝ էր՝ «Մինչեւ հասնեմ՝ թուրքերի վերջը կը տաք, էլ գալս ինչի՞ է»։

Շատ լաւ գիտէր ադրբեջանցիներն ու գիշերները որոտալից ձայնով ծաղրում էր նրանց։ Գազազած ադրբեջանցիները սովորաբար պատասխանում էին հայհոյանքներով, մեր նշանառուները ճշտում էին նրանց տեղն ու թրիկացնում։

Մշտական պահակակէտը Սարիգիւղի նշանաւոր բարձունքն էր։ Այստեղ էլ նրան հասաւ թշնամու գնդակը։ 92 թուականի Հոկտեմբերի 18ի արեւագալին Գառնիկ Պողոսեանը տուն՝ Գագարինեան չվերադարձաւ։ Խաղաղ զինուորը յաւէտ մնաց իր ծննդավայրում՝ Սարիգիւղում։

Նրան հողին յանձնեցին գիւղի հինաւուրց գերեզմանոցում, ուր հանգչում են ազատամարտիկներ Սամուէլ Ղազարեանը, Համլետ Աթաբեկեանը, Գնէլ Եգանեանը, իր դրան առջեւ արկի բեկորից զոհուած Լիպարիտ Ասատրեանը։

...Հիմա կարծես խաղաղ օրեր են։ Խաղաղ մարդը կարծես ապատարբուել է զէնք վերցնելու անհրաժեշտութիւնից։ Սարիգիւղի սահմանները պաշտպանում են հայոց կանոնաւոր բանակի մարտիկները։ Բայց եթէ կրկին անհրաժեշտութիւն ծագի, կրկին զէնք կը վերցնեն խաղաղ զինուորները եւ Գառնիկի նման խաղաղ ու հաստատակամ տէր կը կանգնեն հայրենիք հողին («Երկիր», 15 Հոկտեմբեր 1993)։

Ց. Ս.

ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

Արցախցին չլքեց հայրենի հողը, կարողացաւ կասեցնել թշնամուն եւ այսօր աներեր պահպանում է հայրենի սահմանները:

Մի ժամանակ Լաչինը Հայաստանի եւ Արցախի միջեւ խրուած սեպ էր: Իսկ այսօր, հայ ազատամարտիկների շնորհիւ, այն Արցախը հայրենիքին միացնող արիւնատար երակ է: Սա լաւ է գիտակցում նաեւ թշնամին, որն իր ուժերի զգալի մասը կուտակել է Լաչինի մատոյցներում ու անվերջ գրոհում է՝ ձգտելով կտրել արիւնատար երակը, փակել միջանցքը: ...: Սակայն սա թուրքի սովորական պոռոտախօսութիւն է: Շնչած ժամանակաւոր անյաջողութեանը, արցախցին չլքեց հայրենի հողը, կարողացաւ կասեցնել թշնամուն եւ այսօր աներեր պահպանում է հայրենի սահմանները: Ադրբեջանի մարտավարութիւնը փոխուեց դէպի Լաչին. Լաչինը նրանց գերխնդիրն է: Ու հսկայական կորուստներ տալով գրոհում են: Սակայն արցախցիներն ու նրանց միացած Հայաստանի կամաւորները նոյնպէս լաւ գիտեն Լաչինի նշանակութիւնը եւ մարտնչում են խիզախօրէն, նաեւ իրենց կեանքի գնով ապահովում Լաչինի արիւնատար երակի անխափան բաբախիւնը:

Այդ անձնուրաց հայորդիներից մէկն էր Արմէն Կոթոլեանը: Ծնուել է 1971 թուականին՝ Երեւանում, համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի ուսանող էր: Սակայն հայրենիքը զինուորի կարիք ունէր: Եւ Արմէնը 1988ից հաւատարմագրուեց հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործին, իսկ 1991ից անդամագրուեց «Արամս» ջոկատին, մարտնչեց Իշեւանում, Կապանում, Գորիսում, Շահումեանում, Մարտակերտում: Մասնակցեց Լաչինի ազատագրմանը:

1992ի Հոկտեմբերին դարձեալ Լաչինում էր: Բազմիցս մասնակցեց Ղուլազ լեռան ու Սոս գիւղի պաշտպանութեան մարտերին, ընկերների հետ եւ մղեց թշնամու յամառ գրոհները:

Սակայն Հոկտեմբերի 19ին թշնամու գնդակը խոցեց խիզախ հայորդուն: Երկու օրուայ յամառ մարտերից յետոյ զոհուեց իր ընկերների հետ: Նրանք զոհուեցին: Բայց դիրքերը չզիջեցին: Թշնամին այս անգամ էլ յետ շպրտուեց:

...Նրանք հանգչում են Եռաբլուրում: Արմէնի ու իր ընկերների հոգիները խաղաղ են. նրանց նոր հուիրեալներ են փոխարինելու: Արմէնի գործը շարունակելով եւ վրէժը լուծելով այսօր մարտնչում է եղբայրը՝ Մանուէլը: Անդամագրուել է նոյն զօրամասին եւ մարտնչում է կրկնակի խիզախութեամբ: «Մենք պէտք է փոխարինենք մեր զոհուած եղբայրներին ու ընկերներին,— ասում է նա,— ու կը գայ այն օրը, երբ հարկ եղած դէպքում զէնք վերցնելու անհրաժեշտութիւնը կը գիտակցենք բոլորս, կը գիտակցենք, որ բոլորս ենք ընկեր ու եղբայր: Ու ցանկացած զոհ իւրաքանչիւրիս եղբայրն ու ընկերն է: Եւ երբ սա գիտակցենք՝ կը լինի մեր յաղթանակի առաջին օրը» («Երկիր», 4 Փետրուար 1993):

Ֆ. ԿՈԹՈԼԵԱՆ

ԲՆՈՒԹԱԳԻՐ

Իր խնդրանքով նշանակուեց որպէս հաշուարկի համար այն հրետանաւորների մօտ, որոնք աճ ու սարսափ էին առաջացրել թշնամուն՝ հնարամտութեամբ ու խիզախութեամբ:

Բնութագրւում է Հայաստանի Հանրապետութեան Նախարարութեան թիւ 27527 զօրամասի նախկին զինծառայող շարքային՝ Ծահէն Վաղշամի Միրզոյեանը. զօրակոչուել է ծառայութեան 1992 թ. Յունիսին, եւ զոհուել է 1992 թ. Հոկտեմբերին՝ մարտական առաջադրանք կատարելիս դէպի ԼՂՀ Լաչինի մարդասիրական միջանցքի պահպանման ժամանակ:

Շարքային Ծահէն Վաղշամի Միրզոյեանը ծառայութեան ընթացքում դրսեւորել է իրեն որպէս կարգապահ եւ համարձակ զինուորի: Ծառայութեան առաջին իսկ օրերից ցուցաբերել է մեծ հետաքրքրութիւն դէպի իր ծառայութիւնը: Կարճ ժամանակահատուածում կարողացաւ տիրապետել զինուորական գործին, այն մինիմումին, որը հարկաւոր էր զինուորին մարտի դաշտում, քանզի հարկաւոր էր արագ փոխարինել իր զինակից ուագ ընկերներին, որոնք արդէն ութերորդ ամիսն էր ինչ մղում էին անհաւասար մարտեր Լաչինի մարդասիրական միջանցքի հարաւային մասում: Մարտի դաշտում իրեն դրսեւորեց որպէս խիզախ զինուորի: Իր խնդրանքով նշանակուեց որպէս հաշուարկի համար այն հրետանաւորների մօտ, որոնք աճ ու սարսափ էին առաջացրել թշնամուն՝ հնարամտութեամբ ու խիզախութեամբ: Շարքային Միրզոյեանից գոհ էին ե՛ւ հրամանատարները, ե՛ւ իր մարտական ընկերները: Ընկերասէր էր, սիրում էր իր հայրենիքին ու ծնողներին: Եւ հէնց այդ սէրն էր, որ անմնացորդ իր կեանքը զոհաբերեց յանուն իր հայրենիքի, յանուն իր հարազատների:

Ծանր պահեր էր մեր դեսանտայինների համար: Համարեա՛ թէ շարքից դուրս էին եկել ամբողջ հրամանատարական անձնակազմը: Թշնամու հրետանին հրետակոծում էր մեր դիրքերը ոչ թէ ժամերով, այլ՝ օրերով: Անխուսափելի էր նահանջը: Չհասան տեղ օգնութեան եկած թարմ ուժերը: Ապահովելով իր ընկերների կազմակերպուած նահանջը, շարքային Ծահէն Վաղշամի Միրզոյեանը ընկաւ տասնապատիկ գերազանցող թշնամու գնդակից քաջի անունով:

Զօրամասի հրամանատարութիւնը եւ անձնակազմը խորը վշտով ցաւակցում են շարքային Միրզոյեանի ծնողներին եւ հարազատներին անդառնալի կորուստի կապակցութեամբ եւ իր խորին շնորհակալութիւնն է յայտնում նրանց՝ հայրենիքին արժանի զինուոր ծնելու եւ դաստիարակելու համար (Մեքենագիր):

Գումարտակի հրամանատար,
կապիտան՝ Ս. ԳԷՈՐԳԵԱՆ

ԿԻՄ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ծնուել է 1968 թ. Մարտի 28ին՝ Աշան գիւղում:

1985-88 թթ. ծառայել է Լենինգրադում, Պետրոզավոդսկում: Սերժանտ էր:

1991 թ. աւարտել է Նայիրի ագրոքիմիայի Գ. Աղաջանեանի անուան գիւղատնտեսական տեխնիկումի աւտոպաասարկման-վերանորոգման բաժինը:

Ինքնապաշտպանական ջոկատում էր 1991 թ. որպէս ականապատող:

Զոհուել է 1992 թ. Նոյեմբերի 16ին, ծառայութիւնը կատարելու ժամանակ (Մեքենագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

•

ՎԱՀԱՆ ԿՈՄՈՒՆԱՐԻ ՂՈՒԿԱՍԵԱՆ

Ծնուել է Նորշէն գիւղում՝ 1950 թ. Օգոստոսի 28ին: Օրինակելիօրէն է ծառայել բանակում: Լէյտենանտ էր:

Աւարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտը, ինժեներ էր՝ ճանապարհաշինարար: Աշխատել է Իրկուտսկ Գորիս-Սանիսանակերտ քաղաքում:

քաղաքում, այնուհետեւ 1989-92 թթ. աշխատել է կոլտնտեսութիւնում, 1992 թ. Ցու�-ւարից կոլտնտեսութեան նախագահն էր: Ջոկատի առաջիններից էր: Ունի 2 երեխաներ՝ Արեւիկ եւ Արտակ (Մեքենագիր):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ՈՒԽՏԻՆ ՀԱԽԱՏԱՐԻՄ

—Մարտական մեր ջոկատի արծիւն էր,— Յովսէփի մասին այսպէս է արտայայտւում հրամանատար Սամուէլ Աւթանդիլեանը: —Միայն Զլդրանի մօտ մի մարտում նա լաւ պաշտպանուած դիրքից 22 թուրքի այն աշխարհն ուղարկեց:

Յովսէփ Հասրաթեանը մեր Շարժման պայքարի մէջ էր առաջին իսկ օրերից մինչեւ 1992 թ. Նոյեմբերի 19ը, երբ դադարեց բաբախելուց քաջազուն մարտիկի սիրտը: Ծնուել է Մարտակերտի շրջանի Կարմիրաւան գիւղում: Տեղի ութամեան աւարտելուց ընդունւում է Գորիսի գիւղատնտեսական տեխնիկումի անասնաբուժական բաժինը: Սակայն չի հասցնում աւարտել այն, զինուորագրւում է հայրենի Արցախեան ազատագրական պայքարին ու մատաղ կեանքն էլ նուիրում այդ վեհ նպատակին:

...Ուսումը կիսատ թողնելու համար յանդիմանեցին հարազատ-բարեկամ: Իսկ Յովսէփի պատասխանը կարճ էր, հատու՝ «Հայրենիքի սէրը վեր ամէնից»: Մինչ շրջանում պատերազմական գործողութիւնները սկսուելը, նրա հօրեղբօրորդի Իգորի հետ մասնակցում է կարեւոր շատ յանձնարարութիւնների կատարմանը: Ի դէպ, Իգորն ու Յովսէփը գրեթէ միեւնոյն ընտանիքում էին մեծացել, հասակ առել, այնքան մոտերմացել, որ միմեանց դիմում էին շատ կարճ՝ եղբայրս...

Իգոր եւ Յովսէփ եղբայրների նախաձեռնութեամբ էր, որ Կարաչինարի պաշտպաններին հասցուեց կարեւոր բեռը, որ հարեւան Սէյսուլանի ինքնապաշտպանների օգնութիւն ցոյց տրուեց զինամթերքով: Սէյսուլանը երեք կողմից շրջապատել էին ազերի ելուզակները եւ միակ ճանապարհը, որ կապում է շրջկենտրոնի հետ, հսկում էր Խորհրդային բանակի զօրաջոկատը: Յովսէփը արհամարհում էր ամէն վտանգ: Երբ Խորհրդային բանակի զօրաջոկատը հեռացաւ գիւղից, խաղաղ բնակչութեանը թողնելով թշնամու երախին, Յովսէփը դարձաւ օգնութեան հասած Լէոնիդ Ազգալդեանի եւ Վլադիմիր Բաբայեանի գլխաւորած ջոկատի ուղեկցողը: Մի գիշերուայ մէջ բնակավայրից անվտանգ դուրս բերուեց ամբողջ բնակչութիւնը:

Յովսէփը հայրենի Կարմիրաւանի պաշտպանութեան դիրքերում էր, երբ նրան հասաւ Իգորի մահուան լուրը: «Ուրեմն մեր ուխտին մնացիր հաւատարիմ,— մրմնջում էր նա եղբօր գերեզմանին,— ինքդիր, ես էլ չեմ դաւաճանի»:

Ստեփանակերտում երկար չմնաց: Վերադարձաւ ծննդավայր, ընկերների՝ Եաշա Գալստեանի, Օլեգ Ատեանի, Հայկ Կարապետեանի, Լեւոն Անտոնեանի եւ միւսների հետ կանգնեց պաշտպանական դիրքերում: Օլեգը յիշում է. —Ամէն օր Յովսէփը խրամատներում, դիրքերում ետ ու առաջ քայլերով կրկնում էր. «Էդ շներից եղբօրս վրէժը պիտի առնեմ»: Մի օր էլ Եաշայի հետ խորհրդակցում էր հարեւան Ղարադաղլու գիւղի մատոյցներում տեղակայուած կրակակէտի վերացման իր ծրագիրը:

Իրականացուեց այն: Յովսէփը մարտական ընկերներից փոքրիկ մի խմբի գլուխն անցնելով՝ Միրբաշիրի կողմից շրջանցում է Ղարադաղլուն եւ ընդհուպ մօտենում հրակնատին: Հետախուզութիւնը պարզեց, որ հրանօթի անձնակազմը թողնելով կրակակէտը, կերուխումի էր մտել մօտիկ մի տանը: Վրիժառուները հրանօթի փողը ուղղում են խնճոյքի նստած ազերիների վրայ: Մի ակնթարթ եւս, ուղիղ նշանառութեամբ որոտում է հրանօթը եւ դժոխքի գիրկը նետում կրակակէտի նախկին տէրերին: Ապա պայթեցնելով հրանօթն ու ամբողջ զինամթերքը, արծիւները անվնաս վերադառնում են իրենց դիրքերը:

Յունիսի 12ին էր: Աղդամի եւ Միրբաշիրի կողմից թուրքերը զրահատեխնիկայի ուղեկցութեամբ յարձակում են հայրենի Կարմիրաւանի վրայ: Բնակավայրում ազատամարտիկների փոքրիկ ջոկատն էր մնացել: Դիմադրելը անիմաստ էր, հրաման ստացուեց նահանջել: «Ռելս» կոչուող տեղամասում Յովսէփը կանգնեցրեց մեքենան ու թէ՝ ես իրաւունք չունեմ նահանջելու, դաւաճանելու մեր երդմանը: Հասկացան ընկերները եւ թափքից գետին թռան Եաշան, Վիտեան, Օլեգը... թուով եօթ աւտոմատաւոր, եօթ վրիժառուներ: Թուրքերը թալանում էին գիւղը, հրդեհում տները: Այդ միջոցին էլ եօթ կտրիճները գրոհի անցան: Թալանչիները խուճապի մատնուեցին, թողնելով տասնեակ սպանուածներ, ռազմական տեխնիկան, կաճ-կարասիով բարձուած կազմածները: Աւելի քան 70 ազերիներ իրենց մահկանացուն կնքեցին թալանի ճանապարհին:

Յուլիսի 3ն էր: Թուրքերը գրաւելով Մարաղան, Լենինաւանը, Քաջաւանը, Մարտակերտի օթեւանը, գրեթէ ծուղակի մէջ առան Կարմիրաւանը: Հակառակորդին նորից դէմ-յանդիման կանգնեց Եաշա Գալստեանի խումբը: Պէտք էր ճեղքել շրջապատման օղակը: Լռութեան մէջ գրկախառնում են տղաները ու համարձակօրէն անցնում գօտեմարտի: Անհաւասար մարտում քաջի մահով ընկնում են Եաշան, Էդուարդ Աւթանդիլեանը, Ռադիկ Մկրտումեանը, Եուրի Իզմայիլեանը: Վիրաւորների մէջ Յովսէփն էլ էր: Երբ նրան առաջարկեցին անցնել թիկունք՝ բուժման, անսպասելիօրէն հակաճառեց՝ ռազմիկին վայել չէ գանգատուել ցաւից:

—Մարտական մեր ջոկատի արծիւն էր,— Յովսէփի մասին այսպէս է արտայայտում հրամանատար Սամուէլ Աւթանդիլեանը:— Միայն Շիդրանի մօտ մի մարտում նա լաւ պաշտպանուած դիրքից 22 թուրքի այն աշխարհն ուղարկեց, բայց ինքն էլ վիրաւորուեց, այս անգամ՝ գլխից:

Նրան ստիպեցին թողնել մարտադաշտը, գնալ հոսպիտալ: Բայց մնում էր իր ասածին՝ չեմ կարող դրժել երդումս...

Յովսէփը մի յատկանիշ ունէր. ճանապարհ ու արահետ չէր ճանաչում, դէպի նպատակն ընթանում էր շեշտակի, համարձակօրէն: Զլդըրանի մատոյցներում հետախուզութեան ժամանակ հանդիպում են մի թունելախորշի: Ընկերները վտանգաւոր գօտուց ցանկանում են խոյս տալ: Ո՛չ,— ասում է Յովսէփը,— դուք միայն քիչ հեռու կանգնէք: Իսկ ինքը մտնում է ներս: Անցնում են ծանր, յոգնատանջ րոպէները: Բայց ահա նա՝ ժպիտը դէմքին ու ներս է հրաւիրում ընկերներին: Թունելախորշում ահագին զէնք ու զինամթերք էր ամբարուած...

Եկաւ նաեւ 92ի Նոյեմբերի 19ը: Այդ օրը մարտը տեւեց աւելի քան եօթ ժամ: Հայ ազատամարտիկների զինամթերքը սկսեց չհերիքել: Իսկ թշնամին առաջ էր շարժւում: Մէկ-մէկ էլ ետ քաշուեցին Ռազմիկ Գալըստեանը, Գրիշա եւ Միշա Առստամեանները, իսկ Յովսէփը...: Երեւի մտածում էր, որ հերոսանալու ժամն էր հասել: Նրա զէնքը ճարճատեց մինչեւ վերջին փամփուշտը: Ապա ոտքի ելաւ: Թշնամի զինուորները հասկացան, որ հատել է փամփուշտը: Ցանկացան կենդանի վերցնել: Մօտեցան: Երբ երեք-չորս քայլի վրայ էին, ամբողջ ձայնով կանչեց՝ «Իգո՞ր, եղբայրս, քեզ մօտ եմ շտապում...»: Այդ վայրկեանին էլ պայթեց գրպանում ունեցած վերջին նռնակը, հերոսացնելով իրեն, մահ պարգեւելով գերեվարել ցանկացողներին:

...Ասում են, խիզախութեան ամենաստոյգ գնահատողը ժողովուրդն է: Դա չի՞ վկայում արդեօք, Յովսէփի ծնողներին՝ Վոլոդեային եւ Էլմիրային յղուած երկտողը, որի տակ ստորագրել են ԼՂՀ ինքնապաշտպանութեան կոմիտէի նախագահն ու «Վլադիմիր»ի անուան ջոկատի հրամանատարը: Ահա թէ ինչ էր գրուած այդ փաստաթղթում. «*Ձեր որդին ու մեր մարտական ընկերը մարտնչել է Արցախի մայր հողի համար, ցուցաբերել է հերոսութիւն, արիութիւն ու տոկունութիւն: Նա մարտնչեց մինչեւ վերջին փամփուշտը եւ ընկաւ հերոսի մահով... Արիացէք...*»:

Պատիւ ու մեծարանք Յովսէփին, որ արժանի դարձաւ անվեհեր մարտիկի կոչման («*Արցախ*», 14 Յունուար 1993):

Է. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

«ԵՍ ՀՊԱՐՏ ԵՄ»...

Բազմաթիւ մարտերի է մասնակցել. Կրկժան, Խրամորթ, Մարտունի, Ակերան, Խոջալու, եւայլն։ Բոլորը չեն թուիր ...Թէեւ ընդամէնը 19 տարեկան էր, բայց թրծուած մարտիկ էր։ Նրան ջոկատ վստահեցին։

...Ի հարկէ, մայրական հոգին ծուատուել է վշտից, ի հարկէ, ամէն Աստծոյ օր ու ամէն պահ մայրը լիւելու է որդուն, ցաւն ու կսկիծը անբաժան են լինելու նրանից ցմահ։ Բայց անբաժան է լինելու նաեւ հպարտութիւնը։ Զուսպ, համեստ, արժանապատիւ հպարտութիւն, որ Հայրենիքին զինուորը տուած մօր ճշմարիտ վաստակն է ու ճշմարիտ հոգեվիճակը։

Լորիս Գրիգորեանը զոհուեց Արցախի համար։ Ու այսպէ՛ս ասաց նրա մայրը։ Լորիսի հետ, նոյն մարտում, զոհուեցին նաեւ նրա վեց ընկերները՝ Աշոտը, Գագիկը, Դաւիթը, Արթուրը, Էդուարդը, Յարութիւնը։ Համոզուած եղէք, այսպէ՛ս ասել են նաեւ նրանց մայրերը։ Վիշտն անթեղել են ու ասել. «Ես հպարտ եմ»...

Լորիսը մեծացել էր գրքերի մէջ։ Ստեփանակերտի համալսարանի 3րդ կուրսի ուսանող էր։ Կռուել սկսել է դեռ այն ժամանակ, երբ բանակ ու պաշտօնագիր ծառայութիւն չկար Արցախում։ Ազատամարտի առաջին խիզ օրերից կամաւոր զինուորագրուեց Հայրենիքի ազատութեան սուրբ գործին։ Բազմաթիւ մարտերի է մասնակցել։ Կրկժան, Խրամորթ, Մարտունի, Ակերան, Խոջալու, եւայլն։ Բոլորը չեն թուիր։ Շուրջ երեք տարի է անցել առաջին մարտից։ Սկզբում գնդացրորդ էր։ Տարիների հետ եկաւ փորձութիւնը։ Թէեւ ընդամէնը 19 տարեկան էր, բայց թրծուած մարտիկ էր։ Նրան ջոկատ վստահեցին։

Վերջին մարտը 92 թուականի Նոյեմբերի 4ին էր։ Առաջածոր-Զլդրան գծում կատաղի մարտեր էին։ Թուրք ելուզակները գիրքաւորուել էին «ճիլոտ» կոչուող տեղանքում։ Ռազմավարական կարեւոր նշանակութեան բարձունքի կրակակէտը պէտք է լռեցուէր։ Լորիսի ջոկատը առաջադրանք ստացաւ շրջանցել բարձունքն ու գրոհել թիկունքից։ Անտառ մտան։ Սակայն թշնամին ծուղակ էր պատրաստել։ Ջոկատը յայտնուեց շրջապատման մէջ։ Թուրքերը խաչաձեւ կրակի տակ առան մեր մարտիկներին։ Մի ճանապարհ կար առաջ՝ ճեղքել թշնամու օղակը, կատարել առաջադրանքը։ Տղաները պատուով կատարեցին հրամանը, ճեղքեցին օղակը, գրաւեցին բարձունքը, լռեցրին կրակակէտը, բայց եօթ հոգի զոհուեցին...

...Ստեփանակերտի համալսարանում յուշատախտակ կայ։ Զոհուած ուսանող ազատամարտիկների յուշատախտակն է։ 23 լուսանկար կայ այնտեղ։ Ի հարկէ, բոլորը չեն։ Եւ, ցաւօք, դեռ շատանալու են։ Նրանց մէջ է նաեւ Լորիսի լուսանկարը։ Մայրերի լուսանկարները չկան այնտեղ։ Չկան նաեւ մայրերի խօսքերը։ Սակայն այդ խօսքերը կարծես հնչում են անգամդար. «Ես հպարտ եմ»... («Երկիր», 24 Յուլիս 1993)։

Յ. Ս.

«ՄԵՆՔ ԱՍՏԾՈՅ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ ԵՆՔ»



Մենք արիւն չենք ուզում։ Բայց մեր պարտքը կատարելիս պատրաստ ենք արիւն տալ։ Պատրաստ ենք արիւնաքամ անել նրան, ով մեր արիւնն է ուզում թափել։

...Սիսիանի Սուրբ Յովհաննէս եկեղեցու բակում, մամռապատ գերեզմանաքարերի կողքին թարմ հողաթմբեր կան։ Ազատամարտիկներ են հանգչում այստեղ։ Սրբակեաց հայրերի, աստուածավախ ճգնաւորների կողքին, յաւերժական խաչի հովանու ներքոյ խաղաղութիւն են գտել մերօրեայ սրբերը։ Նրանք,ովքեր դաւանել են խաչ-պատերազմին, ովքեր խաչի պատկերի մէջ տեսել են նաեւ սուր...

Ամենաթարմը Արշակի շիրիմն է։

Արշակը զոհուեց Դեկտեմբերի 10ին, Շայֆլու գիւղում։ Քսանվեց տարեկան էր, 92ի ամրանը կամաւոր զինուորագրուեց հայրենիքի պաշտպանութեանը, մարտնչեց Լաչինի մարդասիրական միջանցքում, Մարտակերտում, հետախուզութեան էր գնում Նախիջեւան, «լեզու» բերում...

Արհամարհում էր մահը, հեգնում ու կատակում էր. «Մահը կեանքի շարունակութիւնն է»։ Բայց իրականում չէր կատակում։ Իրականում յայտնագործել էր կեանքի իմաստի ու մահուան առեղծուածի վիճը լցնող ճշմարտութիւնը, դարձել արդարութեան, Աստծոյ եւ հայրենիքի զինուոր։ Յայտնագործել էր այն ճանապարհը, որը բացում է միայն ուժեղ ու պայծառատես այրերի առջեւ, որ այսօր բազում կեանքեր է լուսաւորում եւ առաջնորդում դէպի մահ իմացեալ, դէպի անմահութիւն։

Ուժեղ էր ե՛ւ մարմնով, ե՛ւ հոգով։ Կառատէիստ էր։ Երազում էր Սիսիանում կառատէի խումբ ստեղծել. քարին պիտի ուժեղ լինի, հաւատամքի ու երդման պէս՝ ասում էր ընկերներին։ Աւետարանից էր մէջբերումներ անում. «Սուր բարձրացնողը սրից կ'ընկնի. եւ սուրն այդ Աստուած մեր ձեռքն է տուել։ Մենք Աստուծոյ զինուորներն ենք։ Մեր կոիւն արդար է։ Մենք արիւն չենք ուզում։ Բայց մեր պարտքը կատարելիս պատրաստ ենք արիւն տալ։ Պատրաստ ենք արիւնաքամ անել նրան, ով մեր արիւնն է ուզում թափել։ Մենք պիտի փրկենք մեր հայրենիքը։ Սա ե՛ւ Աստծոյ, ե՛ւ մարդկութեան օրէնքն է»...

...Այդպէս ապրեց ու նահատակուեց քաջարի հայորդի Արշակ Գրիգորեանը։ Ապրեց ու նահատակուեց որպէս Աստծոյ եւ հայրենիքի զինուոր՝ սրբօրէն կատարելով իր պարտքը ե՛ւ հայրենիքի, ե՛ւ մարդկութեան օրէնքի առջեւ (22 Դեկտեմբեր 1992)։

«ԵՐԿԻՐ»

ՄԱՆԱՇԻՒ ԱՆՏԱՌՆԵՐՈՒՆ ՄԷՋ, ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՀԵՏ, ՉԱԽԷՆ ԱՌԱՋԻՆԸ՝ ԿԱՐՕՏ։

ԿԱՐՕՏ

Պոշեան գիւղէն։ 28 տարեկան։ Անդամ էր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան։

Մասնակցած է Գետաշէնի ու Մարտունաշէնի պաշտպանական մարտերուն։ Նաեւ Ումուդլուի եւ Խոջալուի առաջին կռիւներուն։

Ապա, անցած է Շահումեան եւ միանալով Շահէն Մեղրեանի ջոկատին, անոր հետ մասնակցած է Շահումեանի գիւղերուն ինքնապաշտպանական բոլոր կռիւներուն։

Կարօտը հանդարտ նկարագրի տէր երիտասարդ էր, լռակեաց ու գաղտնապահ։ Նահանջի հետ չկրցաւ հաշտուիլ մինչեւ վերջ։

Անհետ կորսուեցաւ Շահումեանի կռիւներէն մէկուն ընթացքին։

ԲԱՐԵԿԱՄԻ ՄԸ ՅԻՇՈՂՈՒԹԵՆԷՆ

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ՖԻԴԱՅԻՆ

«Տիգրան Մեծ»ի անուան Մուսա լեռ աւանի ջոկատի տղաներն էլ մտան մարտի մէջ՝ Բուզլուխից կռուելով հասնում են Թոդան գիւղը։ Կռւում են անվախ, մա՛նաւանդ՝ Մելսիկը, որ վախի ու սարսափի զգացումն ինչ է՝ չգիտէր։

Թանգամեան Մելսիկ Վլադիմիրի (ռազմական ծածկանունը՝ Գիրոն) ծնուել է 1955 թ. Էջմիածնի շրջանի Մուսա լեռ աւանում, Գանձակից գաղթած հողագործի ընտանիքում։ Սովորել եւ աւարտել է ծննդավայրի «Ֆրանց Վերֆէլի անունը կրող միջնակարգ դպրոցը, այնուհետեւ՝ Էջմիածնի ուսումնարանը, ուր ձեռք է բերել քանդակագործի մասնագիտութիւն։ Խորհրդային բանակում ծառայելուց յետոյ ամուսնանում է։ Ունի երկու երեխայ։ Շնորհաշատ երիտասարդը աշխատում էր Երեւանում, որպէս քանդակագործ։ Երեւան-Ջերմուկ ճանապարհին մի քանի տեղ դրուած են նրա քանդակած ֆիդայիների կիսանդրիները։ Նորքում կառուցուող Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցու խոյակներն ու կամարակապ քանդակները եւ, յատկապէս, կնքաւազանը քանդակել-վերջացրել է ինքը։ Այս բոլորն անում է անշահախնդիր, բարեգործական նպատակներով։ Քարին սիրահարուած իւրայատուկ բնաւորութեամբ երիտասարդը սիրում էր նաեւ զէնքը...

Մելսիկը դրասէր է։ Թերթերում կարդում է կործանուող Արցախի մասին եւ օր օրի սիրտը խոցւում է։ Իսկ երբ իմանում է, որ մարդիկ կամաւորագրւում, գնում են իրենց արիւնակիցներին օգնելու, չի յապաղում նաեւ նա։ Արագօրէն ֆիդայագրուեց «Տիգրան Մեծի» պատուանունը կրող ջոկատին, երկրորդ անգամ դարձաւ զինուոր եւ մեկնեց Արցախ։ Դա 1988ի սկզբներին էր։ Այրւում էր Շահումեանի շրջանը եւ մահ-սպանդից մազապուրծ եղած հազարաւոր մարդիկ զառնում են գաղթական։ «Տիգրան Մեծի» անուան Մուսա լեռ աւանի ջոկատի տղաներն էլ մտան մարտի մէջ՝ Բուզլուխից կռուելով հասնում են Թոդան գիւղը։ Կռւում են անվախ, մա՛նաւանդ՝ Մելսիկը, որ վախի ու սարսափի զգացումն ինչ է՝

չգիտէր։ Գնում էր՝ զէնքը բարձի տակ։ Տարօրինակ մարդ էր...։ Նրանց բնակարանը Արցախում վերածուել էր իւրօրինակ զինապահեստի ու զինուորական շտաբի։ Մելսիկ-քանդակագործն ամէնուր էր։ Նա մասնակից եղաւ Երասխում, Ռակեպարում, Լաչինում, Շուշիի ազատագրման համար, վերջապէս, մենակ կամ մարտական ընկերներով լինում է Արցախի Հանրապետութեան տարածքի բոլոր թէժ կէտերում։ 1991 թուականի Մայիսի 24ին թուրքերը յարձակւում են Շահումեանի շրջանի ամայի գիւղերի վրայ եւ սկսում թալանը։ Ազատամարտիկները պատասխան գործողութիւնների են դիմում եւ հասնում մինչեւ թշնամու որջը։ Իսկ 1992 թ. Յունուար-Փետրուարին, յաղթական մարտաւարտից յետոյ, եռգարձի ճանապարհին, անզգուշաբար ընկնում են հազատարար կարմիր բանակի մասնակցութեամբ ադրբեջանցի թուրքերի կազմակերպած հրապալլային չուրջկալի մէջ։ Անտանելի եղանակ էր՝ ցուրտ, ցեխ ու անձրեւ, երկինքը գորշ ու ճնշող, ինչպէս ծանր բօթը։ Մի ամբողջ օր անշարժ-քարացած, սառած, գետնին մնում են գամուած։ Իսկ գիշերը որոշում են՝ ճեղքել երկաթէ օղակը։ Փորսող հասնում են ազատ գօտի, սպանում մի քանի թուրք ժամապահների եւ անցնում մերոնց կողմը։ Բայց, աւա՜ղ, այստեղ էլ զոհւում է նրանց ընկեր արիասիրտ դիւցազնը՝ Մերուժանը...։ «Տիգրան Մեծի» անուան գումարտակի քաջազուններին քանի՜-քանի՜ նման օղակներ են ճեղքել, միւսների հետ ազատագրել Շուշին, բացել Լաչինի միջանցքը։ Նրա վերջնամարտն եղաւ Լաչինի արիւնոտ ու գաժան մարտը։ —Տեսնէիր, թէ ինչպէս էր ուրախանում ու պարում,— ասում է մարտական ընկերը՝ Վարդան Ազիզեանը։ Բայց բոլոր գժուարութիւնները յաղթահարելու համար պարտական են իրենց վաշտի հմուտ հրամանատար Արմէն Արմենակեանին։ Ամէնուրեք, իւրաքանչիւր մարտում նրա հետ են եղել նրա մարտական ընկերները՝ Վանիկ Սաղաթէլեանը, Աշոտ Գասպարեանը, Մկրտիչ Աւետիսեանը, Վահան Մարգարեանը եւ ուրիշներ։ Նրանք իրար թեւ-թիկունք եղած, մի սիրտ մի բուունցք դարձած, կռուել են, միշտ յաղթել են, նահանջել, բայց լաւ պատիւ ու անուն վաստակել...

Սակայն արիասիրտ քանդակագործը՝ Թանգամեան Մելսիկը, 1992 թուականի Նոյեմբերի 24ին դիպուածի զոհ գնաց...։ Այո՛, գնաց նա, բայց Արցախում ու Հայաստանում որպէս յաւերժական յուշարձան մնաց շնորհաչատ քանդակագործը...

Թաղուած է Մուսա լերան յուշարձանի հարեւանութեամբ **(Մեքենագիր)։**

26 Յունիս 1993
Զուարթնոց

ԳԷՈՐԳ ՎՐԹԱՆԷՍԵԱՆ
Մանկավարժ

...ՈՒ ԴԱՐՁԱՒ ԿԱՆՉ ԱՊՐՈՂԱՑ

Իսկ Տօնական հօր վճիռն արդէն պարզ էր համագիւղացիներին։ Եւ նա գնաց որդուն փոխարինելու, գնաց միացաւ իր կռուող միւս երկու տղաներին՝ Հրանատին ու Բաղդասարին։

Նորից գարուն է։ Նորից կաքաւաձորի ձորում բողբոջել է Ծիրանին։ Շաբաթներ յետոյ քարափներին «կրակ ու բոց» կը դառնայ մասրենին։ Նորից խենթացել են «Եօթ աղբիւրի» ջրերը։ Նորից գիւղի ահեղն ու ջահելը գալիս կանգնում են ձորի պռնկին ու հիանում բնութեան գեղեցկութեամբ։ Ինչպէս միշտ, Մեսրոպն էլ կը գար։ Կը գար ու հոգում ծափ կը զարկէր խինդը։ Անանուն զգացումը սիրոյ ու գեղեցկութեան շուրթերին երգ ու տաղ կը դառնար։ Առանց այն էլ բարութեամբ լի սիրտը կ'ելեւէջէր խենթացած։ Մեսրոպը, հէնց ինքը՝ Մեսրոպ Տօնականի Մխիթարեանը, կաքաւաձորցի Ֆիդայիին՝ հողն հայրենիի զինուորը։ Շատ եմ հանդիպել նրան ու շատ էլ երկար զրուցել։ Ու ինչի մասին էլ որ խօսքը գնար, պիտի վերջում հայրենիքի ու տան, ազգի ու ժողովրդի խոհը դառնար։ Նա ընդամէնը 27 տարեկան էր։ Մնում էր 1964 թուականին։ 1982ին աւարտել էր կաքաւաձորի միջնակարգ դպրոցը, 1985ին՝ հայկական գիւղատնտեսական ինստիտուտը։ Ամուսնացած չէր։ Որդում ունէր ու իր երդման տէրն էր։ Ղարաբաղի ազատագրումից յետոյ միայն նոր պիտի ամուսնանար։

Ի զուր էին վաստակաւոր մանկավարժ ծնողների յորդորները։ Մեսրոպին Արցախն էր կանչում։ եւ նա գնաց։ Զէնքը ձեռքին հրաշք աշխարհում զինուոր էր նա։ Եւ քանի՛–քանի՛ գրաւուած գիւղերի ազատագրմանը մասնակցեց։ Լաչինի միջանցքում էր կռւում նրանց ջոկատը։

Վերջին անգամ 1992ի Դեկտեմբերի 3ին որոշուեց գրաւել Ղուշչիի բարձունքը եւ լուեցնել այդտեղի կրակակէտերը։ Որոշուեց ու որոշմանը հետեւեց գրոհը։ Թւում էր բարձունքն արդէն գրաւուած է, երբ հայկական ջոկատը ընկաւ շրջապատման մէջ։ Մինչեւ արեան վերջին կաթիլը կռուեցին տղաները։ Կռուեցին ու ընկան։ Բարձունքը մնաց թշնամու ձեռքին։ Ու բարձունքին մնացին նաեւ Մեսրոպի ու իր 21 զինուոր ընկերների զարկուած սրտերը։

Լուրը եկաւ, հասաւ Կաքաւաձոր։ Գիւղը ցաւից կծկուեց։ Գիւղի խօսքը մէկն էր։ «Հազար ափսոս»։ Իսկ Տօնական հօր վճիռն արդէն պարզ էր համադիւղացիներին։ Եւ նա դնաց որդուն փոխարինելու, գնաց միացաւ իր կուռող միւս երկու տղաներին՝ Հրահատին ու Բաղդասարին։ Գնաց միացաւ ու մինչեւ վերջ կռուեց, մինչեւ որ չորս ամիս յետոյ դրաւուեց Ղուլպի բարձունքը ու հնարաւոր եղաւ տեսնել, հանդիպել Մեսրոպ որդուն ու ասուն բերել նրան։ Հալալ է քեզ, Տօնակա՛ն, հալալ քո Հրահատ ու Բաղդասար տղաներին։ Դու քո զոհուած որդու մահը տարար հայ մարդուն յատուկ արժանապատուութեամբ, ինչու չէ, նաեւ հպարտութեամբ։ Քանզի դու լաւ գիտէիր, որ նա ընկաւ խմացեալ մահով, քանզի դու լաւ գիտէիր, թէ ինչ որդի, ինչ որդիներ ես մեծացրել ու դաստիարակել։ Հայրենիքի երդուեալ զինուորների հայրն ես դու, Տօնակա՛ն։ Հէնց դու ինքդ էլ ես երդուեալ զինուոր։

Դու քո վիշտը աղամարդու պէս տարար։ Քորա ամիս շարունակ քո վշտի, ինչու չէ, իր վշտի հետ էր Կաքաւաձորը։ Անցած Ուրբաթ օրը գիւղը իր վերջին հրաժեշտը տուեց Մեսրոպին։ Ու դու նրա թարմ շիրմաթմբին երդուեցիր, որ կը փոխարինես նրան այնքան ժամանակ, մինչեւ որ Արցախն ամբողջութեամբ ազատագրուի։ Այդպէս երդուեցին եւ քո Հրահատ ու Բաղդասար որդիները։

Ասել է, կայ ու ապրում է Մեսրոպը։ Կայ ու ապրում է, որպէս կանչ ապրողաց։ Իսկ դա Հայրենիքի, Հայրենասիրութեան, սեփական տան ու օջախի նկատմամբ ունեցած սիրոյ ու նուիրուածութեան կանչն է։ Կանչն ապրողաց («Գալին», 15 *Ապրիլ* 1993, *թիւ* 8)։

Հ. ԽԱՉԱՏՐԵԱՆ

ՄԵՍՐՈՊ ՏՕՆԱԿԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Մեսրոպ Մխիթարեանը ծնուել է 1964 թուականի Սեպտեմբերի 17ին՝ Թալինի շրջանի Կաքաւաձոր գիւղում, մանկավարժի ընտանիքում։ 1982ին գերազանց գնահատականներով աւարտել է տեղի միջնակարգ դպրոցը։ 1983 թ. յաջողութեամբ յաճնելով ընդունելութեան քննութիւնները եւ յաղթող ճանաչուելով մրցոյթում, Մեսրոպն ընդունուել է Հայկական գիւղատնտեսական ինստիտուտի հեռակայ ուսուցման «Պտղաբանջարաբուծութիւն եւ խաղողագործութիւն» մասնագիտութեան I կուրս եւ նոյն թուին էլ զօրակոչուել է բանակ։ 1985 թ. զօրացրուել է բանակից եւ շարունակել է ուսումը նոյն ինստիտուտում։ 1990 թ. ընդրան շնորհուել է «Գիտնական ագրոնոմ»ի բարձր եւ պատուաւոր որակաւորում։

Ուսումնառութեան ամբողջ տարիներին Մեսրոպը իրեն դրսեւորել է որպէս կարգապահ, աշխատասէր եւ օրինակելի ուսանողի: Եւ պատահական չէր նրա նկատմամբ իր համակուրսեցիների եւ պրոֆեսորա-դասախօսական անձնակազմի համակրանքը: Նրա բարի դէմքից միշտ անպակաս էր ժպիտը, որը յորդում էր նրա ազնիւ հոգու խորքից: Այրուում էր իր հայրենի գիւղին մասնագիտական օգնութիւն տալու եւ ընկերներին ու մարդկանց օգտակար լինելու հոգսից, որն անշուշտ ժառանգել էր սաստնցի ծնողներից: Եւ նա կարող էր իր մասնագիտական ունակութեամբ սատար կանգնել իրեն ծնած ու սնած հողին ու ջրին: Սակայն վտանգուած հայրենիքի պաշտպանութիւնը նա վեր էր դասում ամէն ինչից:

Ու զոհուեց, որ հայրենի շէները լիաթոք ու ազատ շունչ քաշեն: Գիտնական ագրոնոմ՝ Մեսրոպ Տօնականի Մխիթարեանի բարի անունն ու յիշատակը միշտ սիրով կը յիշուի դասախօսների ու ուսանողների կողմից (Զեռագիր):

Ագրոֆակի դեկանի տեղակալ
դոցենտ՝ Թ. Հ. ՑԱԿՈԲԵԱՆ

*
* *

1991 թ. կամաւոր մեկնում է Արցախ, միանում Միւնիքի աշխարհազօրին՝ մասնակցելով Լաչինի միջանցքի պաշտպանութեանը: Վերջին անգամ՝ 1992ի Դեկտեմբերի 3ին՝ զոհուեց Ղուշչ սարի վրայ՝ պետական յանձնարարութիւն կատարելիս:

Այստեղ էին տեղակայուած «գրաղ» կայանքները, որոնք հրետակոծում էին հայկական բնակավայրերը: Տարիներ շարունակ Ղուշչ սարի մթին ծերպերից ու թաքստոցներից կրակ էր տեղում Վանքի, Հաթերքի, Կարմիր Շուկայի եւ Արցախի միւս բնակավայրերի վրայ: Ղուշչը կրակի տակ էր պահում ո՛չ միայն Արցախը, այլեւ՝ մեր սահմանամերձ Գորիս, Կապան քաղաքները, Լաչինի մարդասիրական միջանցքը...

Անցեալ տարուայ Դեկտեմբերի 3ին, հայ քաջամարտիկները գրոհեցին Ղուշչի վրայ, բայց, աւա՜ղ... դարանակալ թշնամին ուժեղ զինուած եւ հազարապատիկ աւելի մեծաքանակ կրակէ օղակի մէջ վերցրեց նրանց: Նրանք անմնատուր չեղան, մարտնչեցին մինչեւ վերջին շունչը: Դեկտեմբերեան ցրտաշունչ առաւօտը արիւնոտուեց խոցուած քաջերի հառաչանքներով: Իսկ յետոյ քանիմէկ հայ ազատամարտիկների ճակատագիրը անյայտ մնաց մինչեւ Քելբաջարի գրաւումը: Հինգ ամիս շարունակ նրանք մնացին ձեան տակ, յե-

տոյ՝ արեւի, լուսնի, քամու եւ անձրեւի...։ Թուրք ազերիները յոչոտել էին նրանց։ Բոլորն էլ խոչտանգուած։ Ապրիլի 5ին Ներքին գործոց նախարարութեան եւ Սիւնիքի աշխարհազօրի մարտիկները, որոնց հետ էին նաեւ Մեսրոպի հայրն ու եղբայրները, Ղուլաղ սարի մերձակայքում գտան Մեսրոպի եւ միւս 20 քաջերի դիակները (Զեռագիր)։

ԱՆՏՈՐԱԳԻՐ

*
* *

Այո, ես եմ արքան, արքան մայր բնութեան,
Կանչէ՛ք ու ես կը գամ, ցամաքներ ու ովկիան։

Այո՛, ես եմ արքան, արքան իմ մայր հողի
Ու քեզ կեանքս կը տամ, ով հող իմ հայրենի։

Այո՛, ես եմ արքան, արքան քարի, ժայռի,
Կանչէ՛ք ու ես կը գամ, քարեր հրաշալի։

Այո՛, ես եմ արքան, արքան ծաղիկների,
Կանչէ՛ք ու ես կը գամ, ծաղկունք իմ սիրելի։

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐԵԱՆ

1992 Յունիս

ՀԱՅՈՐԴԻՆ

Դաժան էր մարտը, դժուարին՝ մեր մարտիկների համար: Սակայն կանչողը հայրենի հողն էր, իսկ նա՝ արամուսցի Վլադիկ Առաքելեանը, առջեւում գտնուողներից էր, արտում՝ եռացող վրէժի կրակ:

1992 թ.: Դեկտեմբերի 3ին, Լաչինի միջանցքի մարտերից մէկում, Ղոչազ լերան բարձունքում ընկան հայորդիներ: Նրանց մէջ՝ Կոտայքի շրջանի Արամուս գիւղից 40ամեայ Վլադիկ Պողոսի Առաքելեանը:

...Մթնշաղը իջնում էր, տերեւների տակ թանձրանում էր խաւարը, իսկ բարձունքը Ղոչազ լերանն այնքան մօտ էր, այնքան կանչող. «Ե՛կ, հայորդի կտրիճ, ե՛կ ինձ ազատիր օտարի լկանքից»:

...Մանասարին խոնուած մորեխի նման վժժում էին թշնամու գընդակները: Թուխ աչք ու յօնքով հայորդի մի սպայ սեղմուել էր հեռադիտակին ու ակնդէտ հետեւում էր մարտին: Զմրան մթնշաղը ցուրտ էր, բայց լարումից խոնաւ էր լայն թիկունքին թաքչած շապիկը: Տղաները կրակում էին շունչները պահած, սողէսող առաջ գնում, տառապանքով նուաճում բարձունքի իրաքանչիւր թիզը: «Թէկուզ կեանքի գնով պէտք է նուաճել լեռը, պէտք է տիրանալ թուրքական դիրքերին, ապահովել Լաչինի միջանցքի անվտանգութիւնը՝ Արցախի արիւնատար երակը»...: Իսկ թշնամին կուում էր պարտուողի յուսահատութեամբ: Նրանց դիրքերը նպաստաւոր էին: Դաժան էր մարտը, դժուարին՝ մեր մարտիկների համար: Սակայն կանչողը հայրենի հողն էր, իսկ նա՝ արամուսցի Վլադիկ Առաքելեանը, առջեւում գտնուողներից էր, արտում՝ եռացող վրէժի կրակ:

Բարձունքը արդէն կէս էր, հարկաւոր էր մի վերջին գրոհ: Ոտքի կանգնեց, խոր ներս քաշեց սառը օդը. «Գաջե՛ր, առա՛ջ. գրոհով վերցրենք բարձունքը»: Կոիւը թէժացաւ, թէժացաւ եւ լեռը, ու ձիւնը արցունք դարձաւ...: Թուրքական կրակը աւելի շեշտակի դարձաւ: Տղաները դիրքեր բռնեցին քարերի յետեւում: «Իսկ դու, կտրիճ, ինչո՞ւ ես հրապարտ ճակատդ քամու շոյանքին տուել, գուցէ Գոհար կնոջդ մատներն զգացիր քրտնած ճակատիդ: Կռացի՛ր, թիրախ մի՛ դարձիր». հողն էր նուիրական:

«Թուրքի գնդակից ես վախեցող չեմ, ինձ չի խոցի»:

...Չէ՛, չդողաց ձեռքն անօրէնի. Մայր հողն այնքան տաք էր, որ ծնկներիդ տակ հալուեց դեկտեմբերեան նորագալ ձիւնը: Դու չընկար: Բացեցիր պատասխան կրակահերթը, բայց կրկին շամփրուեցիր: Դու՝ շանթահար կաղնի...

«Կաղնին մեռնում է բարձունքներում». յիշեցիր ուսուցչիդ խօսքերը...: Իսկ արիւնդ ներկում էր ձիւնը ու կաթիլ դառնում հողի շուրթին: Փակ կոպերիդ տակ Գոհարի ժպիտը կենդանացաւ, զաւակներիդ կանչող ձայնը ունկերիդ հասաւ մի պահ, դու փարուած Մայր հողին՝ վերջին ճիգով հրաժեշտի խօսքեր շշնջացիր ու իմացեալ մահուամբ յաւէտ գնացիր անմահութեան:

...Գնալուց առաջ ասում էիր, թէ յետ կը գամ, անհոգ կացէք, թէ գնում եմ, որ յաւերժ գոյատեւենք, որ Արցախում մեր քոյրերը էլ չարտասուեն, որ մանուկները արեւ տեսնեն, որ գազազած քոչուոր ցեղը չի հանդարտւում, ասում էիր, որ Հայ Դատը դարձեալ զոհեր է պահանջում, ասում էիր...

...Իսկ քո Արզուքան մայրը շտկում էր վերմակը զաւակներիդ ու մրմնջում. «Սուրբ Տիրամայր, դու պահապան զաւակիս»:

Բայց դու գնացիր լրացնելու նուիրեալների շարքը, քո երակներում հոսող արիական արիւնը շաղախուեց իր ազատագրմանը սպասող հող հայրենիին («Երկիր», 20 Օգոստոս 1993):

ՍԱՄՈՒԷԼ ՋՈՀՐԱԲԵԱՆ



Վարազկոմ եկեղեցին Լաչինի մէջ, 9-ՈՐԴ դար:

«ՆԺԴԵՀՆԵՐՆ ԱՐԴԷՆ ԱՂՔԻՍ ԱՌԱՋ ԵՆ»....

Մակտեսի տեղամասի պաշտպանությունն ստանձնց նաև 32 ամեայ Արշակ Արգարեանը՝ ողջ էությամբ նժդեհական ոգուն հաւատարիմ մի երիտասարդ՝ երդուեալ ամուրի՝ քանի դեռ հայրենիքը իր նմանների կարիքը ունի...

Հայաստանի սահմանամերձ շրջաններից շատերն այսօր ռազմաճակատի գիծ են։ Ադրբեջանցի հրոսակները աւազակային յարձակումներ են գործում, երբեմն, անպատիժ մնալով, լկտիանում, իսկ աւելի յաճախ, վախկոտին բնորոշ նենգությամբ, խոյս տալով հայկական ինքնապաշտպանական ուժերի հետ երես առ երես հանդիպելուց, հեռուներից գնդակոծում ու հրետակոծում են մեր գիւղերն ու քաղաքները, աւերում մեր ոստանները, սպանում ծեր ու երեխայ։

Հայաստանը, ի հարկէ, չի կարող հանդուրժել նման վիճակ։ Հայոց Նորաստեղծ բանակային ու կամաւոր կազմաւորումներն յաճախ ստիպուած են լինում ոչ միայն յետ մղել թշնամու յարձակումները, պաշտպանել Հանրապետութեան սահմանները, այլեւ խորանալ թշնամու թիկունք, լուծնել կրակակէտերը։

Այս տարուայ Ապրիլին իրադրութիւնը կտրուկ սրուեց կապանում։ Թշնամին լկտիացել էր։ Արժանի հակահարուած էր պէտք։ Հարուածող բռունցք էր պէտք։ Զօրակոչուածներն ու կամաւորական ուժերը արդէն Մայիսից ստանձնեցին հայրենիքի սահմանների պաշտպանութեան սուրբ գործը։

Մակտեսի տեղամասի պաշտպանութիւնն ստանձնեց նաեւ 32ամեայ Արշակ Արգարեանը՝ ողջ էությամբ նժդեհական ոգուն հաւատարիմ մի երիտասարդ՝ երդուեալ ամուրի՝ քանի դեռ հայրենիքը իր նմանների կարիքը ունի...

Զուսպ, համեստ, բարեխիղճ ու պարտաճանաչ զինուորական էր։ Անթերի կատարում էր բոլոր հրամաններն ու առաջադրանքները. զինուոր էր՝ բառի բուն իմաստով, բազմիցս արժանացել է խրախոյանների։

...Թշնամին գնալով սանձարձակ էր դառնում, հրդեհներից, տանկերից ու հրետանուց գնդակոծւում էր կապանը, սահմանամերձ միւս բնակավայրերը. հատուցում էր պէտք։ Անհրաժեշտ էր լուծնել թշնամու կրակակէտերը։

Հատուցման գործողութիւնը որոշուեց սկսել Դեկտեմբերի 10ին, առաւօտ կանուխ։

Ուռած Քարի տեղամասում. Կապան–Չակատեն ճանապարհի բացման եւ թշնամու կրակակէտերի լուծման առաջադրանքը յանձնարարուած էր Արշակ Արգարեանի ջոկատին։ Արշակն առաջինը ներխուժեց թշնամու խրամատ եւ ակնթարթօրէն չորս նռնակ նետելով վճռեց ընդամէնը 20 բոպէ տեւած մարտի բախտը։ Ընդամէնը 12 հոգուց բաղկացած ջոկատն առանց զոհ տալու յաղթեց գերակշիռ թշնամուն։

Գոբեղութեան մասին զեկուցելով հրամանատարին՝ Արշակը նոր առաջադրանք խնդրեց։ Հրամանատարն առաջարկեց հանգստանալ։ Արշակը պնդեց խնդրանքը։

...Ժամը 12ին ջոկատն արդէն մէկ այլ կրակակէտի մօտ էր։ Մարտը դարձեալ կարճ տեւեց։ Հայ զինուորների հուժկու հարուածների տակ թշնամին բաղմաթիւ զոհեր տալով ճողոպրեց։ Ջոկատը, ինչպէս միշտ, փայլուն կատարեց առաջադրանքը։ Սակայն վերադարձին, արդէն մեր դիրքերում, ընկաւ թշնամու ինքնաթիռների ռմբակոծութեան տակ...։ Զոհուեց Արշակը, զոհուեց նաեւ քաջարի մէկ այլ մարտիկ՝ Գառնիկ Մանուկեանը։

Ընդհատուեց կեանքը խիզախ հայորդիների, որոնց հրաժեշտի խօսք ասելիս հրամանատարը հպարտութեամբ շեշտեց. «Ես գիտէի, թէ Կապանում նոր պիտի Նժդեհներ ծնուեն, բայց Նժդեհներն արդէն այքիս առաջ են, երկուսն ընկան, շատերը դեռ կան, ու կը լինեն միշտ»... («Երկիր», 25 Դեկտեմբեր 1992)։

Արշակ Արգարեանի մարտական ընկերներ՝
ԱՇՈՏ ԴԱՒԹԵԱՆ, ԱՐԱՅԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ,
ՄՈՒՐԱԴ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ ՄԻՐԶՈՅԵԱՆ

ԴՈՒ ԿՈՒՈՒԵՑԻՐ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Դաշտային հիւանդանոցում ստեղծել էիր առաջին բուժօգնութեան խումբ եւ ուսուցանում էիր անփորձներին: Արիասրտի քո անունը տարածւում էր Արցախով մէկ: Իսկ Էջմիածնի բուժմիաւորման աշխատողները, որոնց շարքերում աշխատում էիր դու, հպարտանում էին քեզանով:

Բարեւ, Ռուզաննա:

Սա մեր առաջին զրոյցն է, որի ընթացքում դու մնալու ես լուռ, չես արձագանգելու ոչ մի բառով: Դու, որ այնքան կենսասէր էիր, խօսքը անպատասխան չթողնող, անմիջական ու բռնկուող: Ես մենախօսելու եմ, դու՝ ունկնդրելու: Ինչ արած, Աստուած այդպէս կամեցաւ: Դու՝ մեր աբէլեան գառնուկը նոր:

Վերջերս եղայ ձեր տանը: Գնացել էի մխիթարանքի խօսքեր ասելու քո ծնողներին: Խաղաղօրէն վառում էր վառարանը, եւ նրանք լռելեայն զրուցում էին քո հոգու եւ վառարանի ցոլցլացող բոցերի հետ: Եղածի հետ անհաշտ (ո՞վ կը հաշտուի, ախր, այդքան ծաղկահասա՞կ, այդքան լուսափթի՞թ...), սպասում են: Նրանց թւում է արեւոտ մի օր տուն կը դառնաս ազատամարտիկի քո հագուստներով եւ խանդավառ քո բնաւորութեամբ կը պատմես Արցախում տարած ձեր յաղթանակների եւ պատերազմի աւարտի մասին:

Կողքի սենեակում նկարդ է՝ ամբողջ հասակով, 24ամեայ փթթուն քո տարիքի մէջ: Աղջկական ի՞նչ թրթիռներ, ի՞նչ հմայքներ են ալեկոծւում: Նկարիդ շուրջբոլորը ալպոմներդ են, բանաստեղծութիւններիդ ձեռագրերը, եւ մշտապէս բուրում են ծաղիկները: Գիշեր-ցերեկ վառւում են մոմերը, եւ մոմալոյսի մէջ ցոլցլում է կեանքով աղեցուն, լուսապայծառ քո դէմքը: Գալիս-գնում են ընկերներդ, բարեկամներդ ու ծանօթներդ, անծանօթները՝ ափսոսանքի, հիացմունքի բառերը շրթներին:

Մի ներքին տագնապով մայրդ դիմել է քեզ.

—Պատերազմ է, մահ ու կրակի մէջ աղջիկը ի՞նչ կարող է անել, գուցէ, Ռուզաննա, էլ չգնաս, չէ՞ որ դու մեր միակ աղջիկն ես:

—Մայրիկ, հասարիր, որ ռազմադաշտում արեան մէջ թաթախուած քո զաւակներն են: Բա մէկը չօգնի՞ նրանց: Բոլոր ազատամարտիկներն էլ մեր եղբայրներն են: Եթէ ամէնքն էլ այդպէս մտածեն, էլ ո՞վ պիտի պատերազմ գնայ: Բոլոր պատերազմներին էլ կանայք մասնակցել են, նրանց էլ է մայր ծնել:

Ու քնքոյշ մայրիկդ լռութիւնը համաձայնել է քեզ հետ:

Ձեր փողոցի ծայրից վերջին անգամ ետ ես նայել երկա՞ր-երկա՞ր: Սիրտդ կռահել է, որ վերջին անգամ ես նայում մայրիկիդ, ձեր փողոցի մարդկանց ու ծառերին: Ցետոյ հանդիպել ես ուսուցչիդ՝ Լազր Հայրապետեանին:

—Ուսուցիչ,— ասել ես,— նորից գնում եմ Արցախ, ինձ բարեմաղթանքի խօսքեր ասա: Դու ինձ շատ ես սիրել, այդ սէրը կը պահպանի ինձ:

Գրկախառնուել էք, իսկ ուսուցիչը թաքուն արտասուել է:

Արցախի ճանապարհը քեզ համար դարձել էր իմաստաւորուած գոյութեան, ապրելու ճանապարհ: Երկու տարի շարունակ դու Հադրութում էիր, Ասկերանում, Լաչինում, Ստեփանակերտում, պատերազմի անմենաթէժ կէտերում: Որպէս գթութեան քոյր առաջին բուժօգնութիւնն էիր ցոյց տալիս վիրաւորներին, քո անվախութեամբ ոգեւորում երիտասարդ զինուորներին: Դաշտային հիւանդանոցում ստեղծել էիր առաջին բուժօգնութեան խումբ եւ ուսուցանում էիր անփորձներին: Քո անունը տարածուում էր Արցախով մէջ: Իսկ Էջմիածնի բուժմիաւորման աշխատողները, որոնց շարքերում աշխատում էիր դու, հպարտանում էին քեզանով:

Այդ օրը՝ Դեկտեմբերի 12ին, մարտեր էին տեղի ունենում Հադրութի շրջանի Էդիլու գիւղի շրջակայքում: Տղաները կռուում էին անհաւասար ուժերի դէմ, բայց ներքին մի հաւատ նրանց ուժ էր տալիս՝ պաշտպանելու գիւղը եւ անպայման յաղթելու: Թշնամու բանակը կորցրնում է տասնեակ զինուորներ եւ մեծ քանակի տեխնիկա: Մարտադաշտում մնում են ծանր վիրաւորուած 7 հայ ազատամարտիկներ:

—Հէնց հիմա պէտք է մեկնել եւ նրանց տեղափոխել դաշտային հիւանդանոց,— պահանջում ես դու: Սակայն բուժօգնութեան մեքենայի վարորդը առարկում է, որ դեռ վտանգաւոր է, աւելի լաւ է սպասենք մութն ընկնի:

—Տղաներն արնաքամ կը լինեն, մեր գնալը կը դառնայ անօգուտ, հէնց հիմա՛,—պահանջում ես դու խստօրէն: Եւ մեկնում էք...

Երբ փրկուած էին բոլոր վիրաւորները եւ վերադառնում էիք, դարանակալ թշնամու մահաբեր արկը պայթեց ուղիղ մեքենայի վրայ...

Բանաստեղծութիւններիդ տետրը իմ ձեռքում է: Թերթում եմ, եւ ամէն մի էջից ծալ-ծալ բացւում են հոգուդ առկայծումները, թրթռում է յոյզը, բառը այրւում է, եւ թւում է, քո ջահել սրտի տրոփիւնն է լսում տողերիդ միջից: Դրանք յուզաթաթախ հայրենասիրական ու սիրային

բանաստեղծութիւններ են, մօրը, հայրենի բնաշխարհին նուիրուած հրաշալի պատկերներ:

Էջմիածին քաղաքի Ռ. Պատկանեանի անուան միջնակարգ դպրոցի ուսուցիչները (որտեղ դու սովորել ես), ձեր փողոցի բնակիչները, քո մարտական ընկերները միջնորդագիր են ներկայացրել քաղաքային խորհրդին՝ ձեր փողոցը քո անունով անուանակոչելու: Առաջարկն ընդունուել է: Իսկ մտաւորականները զբաղուում են բանաստեղծութիւններդ ճակատագրով:

Ազատամարտիկները պատմում էին, որ արիամարտելով կրակն ու մահը, դու նետուել ես կռուի դաշտ՝ թշնամու առեւանգումից փրկելու քո մարտական ընկերուհու՝ երեւանցի կապաւոր Հերմինէի դիակը: Եւ գընդակների տարափի տակ դուրս ես բերել Հերմինէին, փոշու եւ քրտինքի մէջ կորած:

Քո վերջին բանաստեղծութիւնը, որ գրել ես 1992 թ. վերջերին, Էդիլլու գիւղում, նուիրուած էր Հերմինէի յիշատակին:

Հերմինէ

Նայում եմ ես ճամբաներին,
Անցած ճամբիդ այնպէս դաժան,
Գուցէ ետ գաս, ախ ո՞վ արեց
Մեր սրտերը բաժան-բաժան:

Գուցէ ետ գաս մի հրաշքով,
Իմ Հերմինէ, լոյս իմ անշէջ...
Դու կը վառուես բարձունքներում
Աստղերի պէս անվերջ, անվերջ:

Այս տողերը կարծես գրել ես նաեւ քեզ համար՝ դու կը վառուես բարձունքներում լոյսի նման անշէջ: Այնպէս է, արքազան ուխտի համար ընկածները մահ չունեն, Ռուզաննա, մահ չունեն (Մեքենագիր):

Էջմիածին

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԷՐՏԷՐԵԱՆ

* * *

ԶՈՀՈՒԱԾՆԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հանրապետութեան սահմանների պաշտպանութեան համար հերոսաբար զոհուեցին Էջմիածնի Ռ. Պատկանեանի անուան միջնակարգ դպրոցի ընդլանաւարանի Ռուզաննա Նազիանը եւ Զաւէն Մշեցեանը:

Զոհուածների յիշատակին նուիրուած յուշ-ցերեկոյթի կազմակերպուեց դպրոցում: Ներկայ էին ազատամարտիկները, հիւրեր:

Հանդիսութիւնների դահլիճի բեմահարթակում դրուած էին խորհրդանշական յիրմաքարեր՝ վառուող մոմերով եւ թարմ ծաղիկներով, զոհուածների

մեծադիր նկարները։ Սուրբ Գայանէ վանքի քահանայ Յարութիւն Դարբինեանի տէրունական աղօթքից յետոյ, դպրոցի հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ Վ. Ենոքեանը ներկաներին պատմեց երկու ազատամարտիկների կեանքի անցած ուղու մասին։ Քաջարի հայուհուն նուիրուած իրենց բանաստեղծութիւնները կարդացին Մ. Ղարիբեանը, Գ. Աղաջանեանը, Ա. Տէրտէրեանը, Ռ. Եսայեանի բանաստեղծութիւնները կենդանի լրագրի ձեւով կարդում էին դպրոցի մանկական միաւորման աշակերտները։ Ջերմ ու սրտառուչ խօսքեր ասացին քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ Գ. Զոհրաբեանը, լրիզինկոմ Ա. Բաղալեանը, քաղժողկրթբաժնի աշխատակից Ժ. Գեորգեանը եւ ուրիշներ։

Դպրոցի մանկավարժական խորհրդի որոշմամբ ցրդ «Բ» դասարանը անուանակոչուել է Զաւէն Մշեցեանի անունով, դպրոցի երիտասարդական միութիւնը՝ Ռուզաննա Եսայեանի անունով։

Երգով հանդէս եկաւ դպրոցի մանկական երգչախումբը։

Ցուշ-ցերեկոյթի յաջող կազմակերպման եւ անցկացման համար զգալի ջանքեր էր ներդրել դպրոցի պատմութեան ուսուցիչ Լ. Հայրապետեանը («Վաղարշապատ», 14 Մայիս 1993)։

Հ. ՍԻՄՈՆԵԱՆ

ՅԻՇԱՏԱԿԻ ԽԱՉՔԱՐ

Արցախում զոհուած
Ռուզաննա Եսայեանի յիշատակին

Քո մասին ինչպէ՞ս հիմա երգ գրեմ,
Բառերն անզօր են, մտքերը՝ տկար,
Անցած գարնանը կապոյտ երկնքում
Քո կայտառ շունչը, քո հոգին դեռ կար։

Դու ամբողջովին ցաւման ոտնձ էիր,
Վախից ճաքում էր թշնամու լեղին,
Արեան շիթն էիր ալն թոսորագոյն,
Որ փառք էր բերում Վարդանանց ցեղին։

Քնքշանքի, սիրոյ եւ հերոսացման,
Հոգի էր քո մէջ մշտավառ ապրում,
Զէնքն էր խափանում թշնամու ձեռքի,
Քեզ հանդիպելիս մահն էր ապրսափում։

Ո՞վ էր քեզ տուել այդքան հպարտ սիրտ,
Այդքան առատ սէր՝ ո՞վ էր քեզ տուել,
Դու մատաղացու գառի պէս անմեղ,
Զոհուեցիր ինչպէս առիւծը զօրեղ...

Արցախի կապոյտ, կապոյտ երկնքում,
Ցաւերժ կը ճախրի քո խիզախ հոգին,
Կը դառնայ կորով, քաջութիւն ու սէր,
Վրէժի պատգամ հպկազնան զօրքին։

Ու չի խաղաղուի քո սիրտը երբեք,
Հայոց լեռներից չի իջնի դեռ նա,
Մինչեւ արբազան մեր արտ ու այգուց
Վերջին վայրենին ընդմիշտ չդնայ։

1993թ. 8 Մայիս (Մեքենագիր)

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԷՐՏԷՐԵԱՆ

ՅԱՒԵՐԺ ՓԱՌՔ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Ի՞նչն է հայի ոգում շատ՝ անհատոյց վրէժը։ Եւ եթէ չլինէր ազգային յիշողութեան պարտադրած վրէժի ցասումը, հազիւ թէ լինէր այն խուճապն ու սարսափը, որ այսօր կայ հայկական Արցախի հողը պղծող թշնամու սրտում։

«Ժողովուրդ, տեսէք, ուզբեկ ենք գերի բռնել», տղերքը ծիծաղ-աղմուկով Ցովիկին ներկայացրին ու դարձրին այդ պահից մեր միլիավարի անդամը, մեր ընկերը։ Մասնակցել էր բազմաթիւ մարտերի, եղել էր մի քանի կազմակերպութիւնների անդամ։ Դաշնակցութիւնը եղաւ նրա վերջին հանգրուանը, Խրամորթի պաշտպանութիւնը՝ վերջին կռիւը։ Վաղ հասակում զրկուել էր ծնողներից, եւ հիմա, յետադարձ հայեացքով վերարժեւորելով մեր կարճ ծանօթութեան շրջանը, զգում ենք, որ նոր միլիավարում, հաւատակիցների ու հասակակիցների ընկերակցութեան մթնոլորտում, կարծես թէ նորից ընտանիք էր գտել։ Սեփական գործի եւ դրանում իր գերի գիտակցութիւնն էիր զգում առօրեայ աշխատանքի մէջ։ Ոմանց յիշողութիւններում Ցովիկը կը մնայ Լեռնոյում վիրաւորուած ընկերոջ մատաղի արարողութեանը թեւատարած պարողի տեսքով։ Բոլորի ուրախութիւնն էր, քէֆի ոգին, միաժամանակ մարդիկ իրար զգուշացնում էին նրքանկատ լինել, չվիրաւորելու համար Ցովիկին։ Այդ օրը հոգեբանական լիցքաթափման ու ինքնամոռացման օր էր, որովհետեւ դարձեալ Արցախից տագնապի զօղանջներ էին հնչում, հնչում ու կանչում էին զինուորներին։ Ցովիկը զինուոր էր, նա արդէն աչքի էր ընկել Լեռնոյ գիւղի գրաւման եւ Թուրքի առաջին լուրջ պարտութեան գործողութեանը։ Աչքի ընկել եւ զարմացրել էր ընկերներին յատկապէս մարտի ժամանակ ցուցաբերած դաժանութեամբ։ Ով գիտէ, այդ պահերին մտքում Սումգայի՞թն էր եղել, թէ՞ մէկ այլ ոճրագործ։ Ի՞նչն է հայի ոգում շատ՝ անհատոյց վրէժը։ Եւ եթէ չլինէր ազգային յիշողութեան պարտադրած վրէժի ցասումը, հազիւ թէ լինէր այն խուճապն ու սարսափը, որ այսօր կայ հայկական Արցախի հողը պղծող թշնամու սրտում։ Ցաղթանակը ձեռք է բերւում դաժան պայքարում եւ քայլ առ քայլ։ Մեզ համար սովորական դարձաւ ամէնօրեայ պատերազմական թուաբանութիւնը գրաւուած ու ոչնչացուած թշնամական թնակէտերի ու բնակավայրի, յանդգնութեամբ պաշտպանուած այս կամ այն հայկական տարածքի մասին։ Այնինչ ամէն կրակոցի, ամէն յաղթանակի յետեւում կենդանի, շնչող, մտածող ու զգացող մարդիկ են՝ ապատամարտիկներ, հայրենիքի զինուորներ։ Տասնամեակների հեռուից դժուար է ասել, թէ ինչպէս կը դիտուի, կը գնահատուի Արցախեան պատերազմի կարճ դրուագը կազմող Խրամորթի պաշտպանութեան փաստը, բայց մեր սերունդների յիշողութիւնը անպայման անկիւն պիտի գտնի այդ հոդակտորի համար նահատակուած Ցովիկ Քալաշեանի անուան ու յիշատակի համար։

Յաւերժ փառք զինուորին, պատիւ այն տանը, որ նման նուիրեալ հերոսներ է ծնում։ (Փետրուար, 1992 թիւ 7)։

«ԱԶԱՏԱՄԱՐՏ»

ԾՆՆԴԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Ընդամէնը քսան գարուն ապրած պատանի՝ կեանքով լեցուն, կենսախինդ, եռանդուն, նահատակուեցիր, որպէսզի մէկ անգամ եւս հաստատես հայոց ոգու արիութիւնն ու տոկունութիւնը, հայոց հոգու յաւերժութիւնը։

Սիրելի Արտակ, այսօր քո ծննդեան քառասնմէկերորդ տարեդարձն է։ Անսովոր տարեդարձ է. ներկայ են բոլորը՝ ծնողներդ, հարազատներդ, ընկերներդ, ծանօթ-բարեկամներդ, բայց, աւա՛ղ, դո՛ւ, դո՛ւ...

Դեկտեմբերեան մի ցուրտ օր էր։ Զանգահարեցիր Զարիւղից։ Ինչպէս միշտ՝ ուրախ, հումորով, կենսալի քո ծիծաղով։ Խօսում էիր ու... ոչինչ չասացիր։ Չէիր կամենում որեւէ մէկին մտածմունքի մէջ դցել։ Զասացիր, որ երեկոյեան մեկնելու ես կարեւոր մարտական առաջադրանք կատարելու։ Պէտք է տեսախցիկով նկարահանէիր կռուի ողջ ընթացքը՝ հետագայում մարդկութեանը ողջ ճշմարտութիւնը մատուցելու համար։ Դա կը լինէր եւս մի պատմական փաստաթուղթ, հայ ժողովրդի հերոսական պայքարի եւս մի դրուագ։ Առաջին անգամը չէր, որ դու կատարելու էիր քո պարտքը հայրենիքի հանդէպ։ Բայց դարձեալ վերջինը։ Այո, հայրենիքի սէրը ամէն ինչից վեր դասեցիր եւ «մահ խմացեալ անմահութիւն է» խօսքը դարձեալ քո կեանքի նշանաբանը։ Դու անչափ սիրում էիր կեանքը, սիրում հարազատներդ, ընկերներդ։ Բոլորին զարմացնում էր քո անասելան ընկերասիրութիւնը։

Այդպիսին էր նաեւ քո կեանքի վերջին օրը։ Մարտական ընկերներդ պատմում են, որ կռւում էիր անհանգիստ, դիպուկ կրակում եւ միաժամանակ նկարահանում կռիւը։ Հոյակապ բարձունքի համար մղուած մարտի օրը նոյնպէս ազատամարտիկների հետ էիր։ Դարձեալ կռւում եւ նկարահանում էիր։ Ականատեսների վկայութեամբ, դու ուրիշ վիրաւորուել ես, սակայն չես նահանջել եւ շարունակել ես խիզախութեամբ մարտնչել։ Բայց այս անգամ թշնամու դաժան գնդակը քեզ գտաւ, երբ մարտի դաշտից դուրս ելիր վիրաւոր ընկերոջդ։

Դաժան էր հակատագիրը քո հանդէպ։ Ընդամէնը քսան գարուն ապրած պատանի՝ կեանքով լեցուն, կենսախինդ, եռանդուն, նահատակուեցիր, որպէսզի մէկ անգամ եւս հաստատես հայոց ոգու արիութիւնն ու տոկունութիւնը, հայոց հոգու յաւերժութիւնը։

Սիրելի Արտակ, այսօր լրանում է քո քառասնմէկերորդ տարեդարձը։ Անսովոր տարեդարձ է. ներկայ են բոլորը՝ ծնողներդ, հարազատներդ, ընկերներդ, ծանօթ-բարեկամներդ, բայց, աւա՛ղ, դո՛ւ, դո՛ւ...

Ողջ հայ ժողովուրդը խոնարհւում է հայրենիքի սիրով տոգորուած, հայրենիքի հողի համար նահատակուած քաջորդիների ջիւիմների առջեւ։ Ցաւերի փառք նրանց...

...Փառք եւ քեզ, Արտակ, քեզ չնորհաւորելու փոխարէն այսօր խոնարհւում ենք քո առջեւ... (**«Երկիր»**, 26 *Սեպտեմբեր* 1993)։

ԳԱՅԵԱՆԷ ԱՒԵՏԻՍԵԱՆ

ՄԵՆԱՄԱՐՏ

«Մենք երեքս գնում ենք, մայրիկ, կարող է մէկիս կամ երկուսիս կամ էլ երեքիս բերեն՝ չլացես...»:

...«Կորբա»ն խուզող թռիչքով պտտւում էր գիւղի վրայ, գալարւում, թոյն թափում, մահ տարածում, գնդակոծում. ծեր, կին, երեխայ ու այր թիրախ էին, տուն, դարոց ու մանկապարտէզ թիրախ էին, մարդիկ պատսպարուել էին գետնայարկերում, նկուղներում, ով որտեղ կարողացել էր: Գիւղի վրայ իշխում էր «Կորբա»ն: Իսկ Սլաւիկը կանգնել էր բլրի գագաթին եւ նռնականետը թափահարելով բղաւում էր. արի, շան որդի, կանգնել էր բլրի գագաթին ու Աստուած էր կանչում. տես ինձ, արի... թուրք օդաչուն տեսաւ նրան, կտրուկ թեքուեց ու խոյացաւ: Սլաւիկը նռնականետն ուսին կանգնած էր, ու երբ նշանացոլցի հատիկը ու ուղղաթիռը յայտնուեցին մի գծի վրայ՝ սեղմեց ձգանը: Թուրքի կրակաձերթն անցաւ Սլաւիկի կողքով, իսկ նրա նռնակից խոցուած «Կորբա»ն սեւ ծուխ արձակելով գնաց-բախուեց Արցախի ժայռերին:

Դա 92 Ապրիլին էր, Քաջաւան գիւղում: Մինչեւ այդ Սլաւիկը իր ջոկատով բազմաթիւ մարտերի էր մասնակցել, մարտնչել էր Ղազանչիլում, Չափարում, Մարաղայում, Թալիշում, Սրխաւենդում, Զատիլքում, Շահումեանի շրջանի Բուզլուխ, Մանաշիդ գիւղերում: Մինչ այդ, 88ին, գիւղում ընդլատակեայ խմբակ ստեղծեց, զինւում էին, ինչպէս կարող էին: Մենամարտի էին պատրաստւում: Իսկ թշնամին մենամարտող չէր, դաւադիր կռուող էր, ռուսի ձեռքով էր ուզում լուծել իր հարցերը: Եղբօր միջոցաւ կապ ստեղծեց Երեւանի հետ՝ զէնք ու զինամթերք ձեռք բերեցին: Իսկ երբ կռիւն սկսեց, ջոկատին միացաւ նաեւ երրորդ եղբայրը՝ Ռոբերտը: Սլաւիկը ջոկատում ընդգրկում էր միայն վստահելի տղաներին, առանձին-առանձին զրուցում էր նրանց հետ, յանձնարարութիւններ տալիս՝ հաշուի առնելով նրանց հնարաւորութիւնները. առաջադրանքը պէտք է կատարել նուազագոյն կորուստներով: Գիւղացիները յաճախ դժգոհում էին մօրը՝ Արուսեակին. կանչում է մեր տղաներին, տանում, փորձանքի մէջ կը գցի: «Ձեր տղաներին իմ Սլաւիկն է տանում, գիտէք. իսկ իմին ո՞վ է տանում, ե՞ս ում բողոքեմ, գընում են, ուրեմն մի բան կանչում է», պատասխանում էր մայրն ու սպասում. օրն ի՞նչ լուր կը բերի, որդիները կը վերադառնա՞ն, թէ ընտիպուած կը լինի կատարել Սլաւիկի պատգամը.— «Մենք երեքս գնում

ենք, մայրիկ, կարող է մէկին կամ երկուսին կամ էլ երեքին բերեն՝ չլացես...»:

...Թուրքը մի օր մտաւ հայրենի Մաղաւուզ: Տանկը ընկել էր երեխաների յետեւից, չէր կրակում, թրթուրների տակ ճզմելու վայրագ հաճոյքը վայելելով հետապնդում էր... Արդէն հասնում էր երեխաներին, երբ յայտնուեց գիւղացիների նահանջն ապահովող Սլաւիկն ու մենամարտի բռնուեց տանկի հետ: Նրա նռնականետն այս անգամ էլ անվրէպ էր: Երեխաներին թրթուրների տակ ճզմել ցանկացողը դարձաւ ածխացած կմախք:

...Թուրքի գնդակը նրան չկպաւ: Մարտի դաշտում չկարողացան յաղթել նրան: Մենամարտի չելան նրա դէմ: Հեռուից, ապահով թաքստոցներից անվերջ հրետակոծում էին Ստեփանակերտը՝ ապանում կին ու երեխայ: Եւ երեխաների համար նախատեսուած բեկորներից մէկը խոցեց Սլաւիկի սիրտը: Նա ընկաւ, բայց մի երեխայ փրկուեց, որ շարունակի մենամարտը... (18 Նոյեմբեր 1992):

«ԵՐԿԻՐ»

Ստեփանակերտէն տեսարան մը:

ՏԱՍԻ ԼԵԳԵՆԴԸ

Արթուրը չի տեսել մեծ տատի այս պարը, բայց երակներում պապի՝ Անդրանիկի, նրա եղբայրներ Սուրէնի, Գեղէոնի, Լեւոնի, Ներսէսի արիւնն էր բաբախում, տոհմիկ հայրենասէրների արիւնը։

Տասից միայն մէկի լուսանկարն է մեր ձեռքի տակ եւ այդ մէկի կենսագրութիւնը։ Ու քանի որ նոյն ճակատագիրն ունեցան, այդ մէկով էլ ճանաչենք բոլորին։

Արթուր Դանիէլեան։ Նրա բաժինը Զոփար եւ Զագլիկ գիւղերի պաշտպանութիւնն էր։ Զէր հրամայուած։ Արցախում չեն հրամայում թուրքից պաշտպանել իրենց երեխաներին, ծնողներին, հայրական տունը, հայրենիքը։ Արթուրի մանկութեան հայրենիքը Թարթառի ձորն էր՝ 13 հայկական գիւղերով. արեւելքից՝ Մարդասպանի սարը, ուր թաւուտ անտառի մէջից միանգամից բարձրանում էր կարմրաչէկ արեւի գունդը, հարաւից՝ Հկեղանի սարը, որից դէնը Գանձասարի վանքն էր ու Խաչէնի ձորը, արեւմուտքից՝ դարձեալ անտառածածկ սարեր, որոնք բաժանում են հայկական գիւղերը Թելբաջարի շրջանից, իսկ հիւսիսից՝ Մռաւի լեռնաշղթան, որը փակելով երկնակամարը, այն կողմն է թողնում Արցախեան եւս մէկ աշխարհ՝ Գիւլիստան, էրքէջ, Բուզլուխ, Գետաշէն եւ ուրիշ տասնեակ հայկական գիւղերով։

Այս էր Արթուրի մանկութեան հայրենիքը։ Բայց բանակ զօրակոչուեց, որ պաշտպանի Խորհրդային անծայրածիր երկրի սահմանները։ Երբ վերադարձաւ, տեսաւ, որ լայնարձակ հայրենիքը նեղացել, սեղմուել ու դարձել էր մի փոքրիկ Արցախ, որը աւերում եւ արեան մէջ խեղդում էր հէնց Խորհրդային բանակը, որի շարքերում ինքը երդում էր տուել։

Երախտամոռ երկիր։

Մոռացել է, որ երբ ինքը վտանգի մէջ էր, արցախցին պաշտպան կանգնեց իրեն։

Նախքան տասի պատմութիւնը, դառնանք Արթուրի արմատներին՝ այն հինգ նահատակներին, որոնց արիւնը բաբախում էր Արթուրի ե-

բակներում։ Կայ տոհմիկ հայրենասէրի արիւնը։ Այդ մասին վկայում են Հայոց պատմութիւնը, Արթուրի տոհմը եւ իմ՝ տողերիս հեղինակի մանկութեան ամենաողբերգական յուշը։

1946, Մայիս։ Ցաղթանակից յետոյ առաջին խաղաղ գարունը։ Տասը հազար մարդ էր հաւաքուել Մուսա սարի դէմ-դիմաց, անտառապատ փոքրիկ կոճղոտ գիւղում։ Եկել էին Ղարաբաղի բոլոր շրջաններից։ Եկել էին իրենց վիշտը խառնելու Արցախեան մի մեծ ողբերգութեան։ Հեղեղ էր եղել, հեղեղից յետոյ մեղմ անձրեւ էր մաղում, եւ անձրեւի տակ փոթորկոտ պար էր պարում 70ամեայ Աթասունց Մինան՝ Արթուրի մեծ տատը։ Մեծ հայրենականում զոհուել էին չորս որդիները։ Անդրանիկը՝ Արթուրի պապը, գիւղի ամենաաշխոյժ ու կատակասէր մարդը, Սուրէնը՝ գիւղի դարբինը, Գեղէոնը՝ գիւղի դպրոցի տնօրէնը, եւ կրտսեր որդին՝ Ներսէսը։ Վերադարձել էր միայն Լեւոնը։ Եւ ահա նա ութ տարուայ ծովային զինուորը, դագաղում է՝ տօնական հանդերձանքով, ծովային գլխարկի վրայ արծաթափայլ տառեր՝ «Բալթիկան նաւատորմ»։

Աթասունց Մինան երբեք այդպէս չէր պարել։ Նրա պարն ուրիշ էր. սահուն էր ու սիգաճեմ, կարապի լող էր՝ թեթեւ ու համաչափ։ Եւ ահա եօթանասուն տարեկանում հեթանոս պար էր պարում, կրակի պար։

Հեղեղուել էր Թարթառը, արմատախիլ էր անում ափերի անտառները ու այգիները, ջրածածկ անում ամբողջ հովիտը։ Մնացել էին ցանքսերի վերջին կտորները, որոնց հետ երկարատեւ սովից յետոյ միակ յոյսերն էին կապել կոճղոտ, Հաթերք, Դրմբոն, Զաղլիկ գիւղերը։ Գետի առջեւ նոր պատնէշ դոյացաւ, ակիզբ տալով մի մոլեգնած նոր ճիւղաւորութեան դէպի վերջին ցանքսերը։ Լեւոնը նեռւում է յորձանուտ, կացնով կտրատում մեմեանց ագուցուած ծառերը, լողում առաջ, ետեւից՝ փլուզուած պատնէշը։ Գետով սահող ծառակոյտերը ծածկում են նրան։ Լեւոնը չահեց իր վերջին մարտը... ցանքսերը փրկուած են։

Մարմանդ անձրեւի տակ պարում էր Աթասունց Մինան։ Հին, դանդաղ ու սիգաճեմ պարը չէր։ Զկային ճակատի կրկնաչար սուրմաները, դրանք թափուել ու խառնուել էին ծաղկաթափի ճերմակ ու դեղին թերթիկներին։ Մուէն-ծուէն էին մեռաքսեայ երեք փէշերը...

Հինաւուրց Թարթառի ափի փոքրիկ գիւղում՝ կոճղոտում, երկնասոյզ Մուսա սարի հայեացքի տակ այսպէս պարեց Աթասունց Մինան իր վերջին պարը։

Արթուրը չի տեսել մեծ տատի այս պարը, բայց երակներում պապի՝ Անդրանիկի, նրա եղբայրներ Սուրէնի, Գեղէոնի, Լեւոնի, Ներսէսի արիւնն էր բաբախում, տոհմիկ հայրենասէրների արիւնը։ Նրանք Մեծ կոչուած երկիրը պաշտպանեցին Խորհրդային բանակի շարքերում, իսկ Արթուրը կամաւոր զինուորագրուեց՝ հէնց այդ բանակից Արցախը պաշտպանելու համար։

Բանակը ներխուժել էր Հաթերք գիւղը իր աչքի առջեւ։ Յետոյ՝ լիսուն զրահամեքենայով «մի թեթեւ» ցուցադրական երթ կատարեցին

ենդավայր կոմղոտ գիւղում։ Թարթառի ձորի թոյլ կէտերն էին Ջափար գիւղը, որի վրայ յարձակւում էին Աղգաբանից, Ջարեքտարից եւ Իմերեթ-Գերաւանդից Ջագլիկ գիւղը, որի հարեւան Ումուդլուն վերածուել էր ադրբէջանական բանակի զօրակայանի։ Արթուրը կամաւոր միացաւ ազատամարտիկների ջոկատներին, որոնք ազատագրեցին Ումուդլու եւ Իմերեթ-Գերաւանդ գիւղերը։ Նրանց պարտքը մնում էր Ջափար գիւղի պաշտպանութիւնը, բայց Խաչէնի ձորում մեծ ուժեր էին պէտք։ Եւ ահա Արթուրը իր ընկերներով չտապեց կիլան։

Ինչի՞ համար պէտք է կռուեն կիլանում։ Կեանքի եւ մահուան հարց էր։ Կիլան գիւղը գտնւում է ճամբաների խաչմերուկում, որը փակել էին ադրբէջանական Սրխաւենդ, Օրթափայա եւ Բաշ-Գիւնեփայա գիւղերը՝ Մարտակերտն ու Շահումեանը անջատելով Ղարաբաղի միւս շրջաններից։ Ղազանչի գիւղում մեծ ողբերգութիւն եղաւ, որը լրատուութեան միջոցները չկարողացան հակակշռել Խոջալուին։ Մարտավարութեան լաւ օրինակ էր Սրխաւենդի ազատագրումը։ Դա ադրբէջանական ռազմական ուժերի միջնաբերդն էր՝ իր հարուածային ջոկատներով եւ զինապահեստներով։ Ազատամարտիկների հարուածներից տապալուեց Սրխաւենդը, ազատագրուեց Օրթափայան, բայց Բաշ-Գիւնեփայան դիմադրում էր։ Արթուր Դանիէլեանը եւ նրա ինն ընկերները առաջին դծում էին։ Ցաղթանակով աւարտուեց այդ մարտը։ Բաշ-Գիւնեփայան նոյնպէս ազատագրուեց, ճանապարհը դէպի Մարտակերտ ու Շահումեան բացուեց, Արցախը հերթական անգամ փրկուեց մասնատումից։ Բայց նրանք չտեսան այդ յաղթանակը։ Նրանց մահը դեռ եւս առեղծուած է։ Ինչո՞ւ ընկերները օգնութեան չհասան, եւ նրանք միայնակ մնացին թշնամու օղակի մէջ։ Թշնամու գնդակի՞ց են զոհուել, թէ՞ կրակել են մինչեւ նախավերջին փամփուշտը, իսկ վերջինը պահել իրենց համար, որ գերի չընկնեն։ Այդ կարծիքն էլ կայ։ Վերջին պահին նրանք կրակել են մէջ մէջքի օղակուած, իրար թիկունք տուած։ Ու այդպէս էլ զոհուել են.

ԱՐԹՈՒՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ	ԱՆԴՐԱՆԻԿ ՑՈՎՍԷՓԵԱՆ
ԿԱՐԷՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ	ՎԼԱԴԻԿ ՀԱՑՐԱՊԵՏԵԱՆ
ԱԻԵՏ ԱՑՎԱՉԵԱՆ	ԳԵՆԱ ՊԵՏՐՈՍԵԱՆ
ՑԱԿՈԲ ԱՒԱՆՆԷՍԵԱՆ	ԿԱՐԷՆ ՍԵՒԵԱՆ
ԱՇՈՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ	ԳԱՐԻԿ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Գրեցինք Արթուրի ու նրա մեծերի մասին, բայց տասից ամէն մէկը նման հայրենասէրների չառուլիլ էր, եւ իւրաքանչիւրն իր արեան գնով փառաւորեց իր տոհմը («Երեկոյեան Երեւան», 17 Նոյեմբեր 1992)

ՄԱՒՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ-ՆԱՀԱՏԱԿԸ

...Տակաւին տասնեօթ տարեկանից իր շատ ընկերների պէս կամաւորագրուեց եւ քաղաքի գումարտակներից մէկում սրբօրէն կատարում էր իր զինուորական պարտքը։



Մխիթար Մաւրի Գրիգորեան...։ Երբ սկսուեցին Արցախեան իրադարձութիւնները, Մխիթարը 8րդ դասարանցի էր ու խելացի աչակերտ, ում ես ճանաչում էի «Ամարաս» թերթի թղարկիչ հօր հետ չփումներից։ Ցաճախ նա գալիս էր խմբագրութիւն՝ հօր մօտ։ Ոչ միայն օգնում էր նրան, այլեւ սովորում։ Իր սիրած գործը լուսանկարչութիւնն էր։ Մարտունիում շատերն էին հրապուրուած այդ գործով։ «Գրադէ» ակադեմիաներն ու պատերազմական թոհուբոհը լռեցրին նրանցից շատերին, Սուրիկը թողեց-գնաց Ռուսաստան, Շահէնը՝ գնաց, բայց Մխիթարը հաստատակամ՝ դարձաւ իսկական լուսանկարիչ եւ հայրենի եղերքին զինուոր։ Ամէն անգամ դիրքեր էր գնում լուսանկարչական խցիկով, լուսանկարչական խմբակի ղեկավար Եուրիկ Աւանէսեանի պէս։ Երբ կռուի վայրերում անդորր էր, զինուոր Մխիթարը տղաներին էր նկարում, խմբանկարներ անում. իսկ մարտերի ժամանակ տառապանքի գնով՝ յաղթացնում էր հազուադէպ կադրեր նկարել։

...Տակաւին տասնեօթ տարեկանից իր շատ ընկերների պէս կամաւորագրուեց եւ քաղաքի գումարտակներից մէկում սրբօրէն կատարում էր իր զինուորական պարտքը։

Այնպէս արագ անցնող տարիների հետ առնականացաւ Մխիթարը, դարձաւ իսկական ազատամարտիկ ու մարտադաշտում անում էր աւելին, քան իրենից տարեցները։

Ինսուներկուսի գարնանն ու ամրանը եւ ամբողջ աշնանը, թուրքական հրամանատարութիւնը հիմնական ուշադրութիւնը դարձնում էր Աղդամ-Մարտակերտ-Նովոյեզոյ գծի կրակակէտերից յարձակողական գործողութիւններ կազմակերպելուն։

Այդ ճակատում անսասան կանգնած ազատամարտիկները քանիցս եւ չպրտեցին թուրք-ազերիական մեծատարած գրոհները։ Եւ այդ դժուն մարտերում մենք էլ կորուստներ ունեցանք, անդառնալի կորուստներ։

Ընկածների թւում էր գնդացրորդ Մխիթար Մաւրի Գրիգորեանը։ Այս լուսանկարն էլ ինքն է արել իր համար։ Ու նաեւ մեզ համար։ Ընթերցո՛ղ հայրենակից, եթէ չգիտես, ուրեմն իմացի՛ր, որ Արցախում զոհուած ազատամարտիկներից մէկն էլ քնիկ հաղորեցի, մարտունաբնակ Մխիթար Գրիգորեանն էր, որ նահատակուեց իննսուներկուսին, «Մոլեր-90» մարտական դիրքում...։ Ցիշենք նրան... («Հայրենիքի ձայն», 26 *Սեպտեմբեր* 1993)։

ԷՌՆԵՍՏ ԵՍԱՅԵԱՆ

26 ՏԱՐԻ ԵՒ... ՅԱՒԵՐԺՈՒԹԻՒՆ

Մարտական ընկերների հետ Տող գիւղը գրաւելուց յետոյ՝ մօրը յայտնեց. «Զո հայրենի գիւղը ազատեցինք, մնում է հայրիկի նախնիների հայրենիքը՝ Էրզրումը եւս վերցնենք»:

Մականունը Դեւ էր: Հետախոյզ էր: Մարտական ամենահաւանական ամենաբարդ գործողութիւնների կազմակերպիչ: Մարտընկերների ու հրամանատարների սիրելին: Հիմա Դաւիթ Սարապեանի մասին անցեալ ժամանակով խօսելը մի տեսակ սխալ, անհեթեթ է թւում: Բայց այդպէս է, ու արդէն մէկ տարի է, ինչ նա չկայ: Եւ եթէ դաւադիր չլինէր գնդակը, ապա նրան չէր կպչելու: Սա նրա հետ կռուողների, նրա ընկերների համոզմունքն էր...

Մենք սիրում ենք ասել, թէ հայրենիքի պաշտպանութեան առաջին գծում սերուցքն է, ու չգիտենք, թէ յատկապէս ովքեր են կազմում այդ սերուցքը: Հպարտանալով շեշտում ենք, թէ կենդանի լեգենդներ են, որ նրանց քաջագործութիւնների մասին կցկտուր տեղեկութիւններ ունենք: Նրանց կորստեան կսկիծը երբեմն մեզ սթափեցնում է, եւ նրանց կերպարը վերակերտելու փորձեր ենք անում: Մինչդեռ նրանց անձնուրաց քաջագործութիւնների, հերոսամարտերի տարեգրութիւնը չկազմելով՝ յաւերժական մեղքի տակ ենք մնալու թէ՛ կռուող տղաների, թէ՛ գալիք սերունդների առաջ: Դաւիթ Սարապեանը այն հերոսներից էր, որ սկզբից եւեթ առաջին գիծ է մեկնել, թէեւ կարող էր մնալ Երեւանում: Երեւանցի էր, ծնողների միակ զաւակը: Հայրը՝ ճանաչուած ճարտարապետ Էդուարդ Սարապեանն է, մայրը՝ Էմմա Սարապեանը, ծնունդով արցախցի, հայ առաջին կին կիբեռնետիկներից: Դեռ մանկութիւնից Դաւիթը տատի ու մօր պատմածներից գիտէր նրա տոհմի՝ Մելիք-Եղիանովների ու ծննդավայրի՝ Տողի հետ կապուած զանազան պատմութիւններ:

Իր պայքարը թշնամու դէմ սկսել է աւելի վաղ՝ Խորհրդային բանակում ծառայելիս, որի համար թանկ վճարեց՝ յայտնուելով կալանավայրում...: Երբ տուն վերադարձաւ, Ծարժման առաջին ամիսներն էին: Անմիջապէս որոշեց մեկնել Արցախ: Պատրաստ էր ուզած աշխատանքն անել, թէպէտ սովորել էր Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի կիբեռնետիկայի բաժնում:

Սկզբում կուում էր Լէոնիդ Ազգալդեանի ջոկատում: Ի դէպ, լեգենդար հրամանատարն իրենց ընտանիքի մտերիմներից էր եւ իր ձեւաւորման գործում մեծ դեր էր ունեցել: Իսկ իր վաղ գրուածքներից մէկում Դաւիթը Լէոնիդին այսպէս է ներկայացնում. «Մի անգամ նա ինձ բրոնացրեց լաց լինելիս: Դրանից յետոյ շատ լուրջ խօսակցութիւն ունեցաւ: Լէոնիդն ասաց, որ ես տղամարդ եմ, իսկ տղամարդը լաց չպիտի լինի: Բայց եթէ դրա անհրաժեշտութիւնը մեծ է, ապա պէտք է շտապ մի ազատ շքամուտք գտնել եւ այնտեղ թաքնուելով՝ արագ լաց լինել, մոռթը մաքրել ու դուրս գալ մարդկանց մէջ այնպէս, կարծես թէ ոչինչ չի եղել: Այդ օրուանից դժուար պահերին ես միշտ մտաբերում եմ Լէոնիդի խորհուրդը եւ ազատ շքամուտք փնտռում, բայց քանի որ միշտ չէ, որ ինձ յաջողւում էր նման տեղ գտնել, ապա ես սովորեցի մտքումս լաց լինել: Այդպէս աւելի յարմար է...»:

Ճակատագրի տնօրինութեամբ Լէոնիդը նրանից մի քանի ամիս յետոյ պիտի գտնուէր: Նրանց ռազմական ուղիները աւելի շատ էին բաժանուել, Դաւիթը կուում էր Շահումեանում, Հադրութում: Նրա անօրինական սխրանքներից մէկն էլ տոհմական տան ետ գրաւումն էր թշնամուց: Գործողութիւնների ծրագիրը մշակել ու իրականացրել էր մենակ: Տատը եւ մայրը պատմել էին, որ մի ադրբեջանցի իրենց տոհմական՝ Մելիք-Եղիանովների գերեզմանատան քարերով տուն է կառուցել Տողում: Գիտէր նաեւ, որ պապենական երկյարկանի շքեղ տունը ՕՄՕ-Նականների շտաբի էր վերածուել: Դաւիթը մենակ վնասազերծում է այս երկու կէտերը՝ տասնեակ ՕՄՕՆականների թողնելով փլատակների տակ: Մարտական ընկերների հետ Տող գիւղը գրաւելուց յետոյ՝ մօրը յայտնեց. «Քո հայրենի գիւղը ազատեցինք, մնում է հայրիկի նախնիների հայրենիքը՝ Էրզրումը ես վերցնենք»:

Պուլկարացի հեռուստալրագրող Ցվետլանա Պասկալեւան առաջին անգամ Դաւիթի հետ է մեկնել Արցախ: Եւ չի բացառւում, որ Արցախեան պայքարի կինոտարեգիր դառնալու նրա որոշման մէջ այս ծանօթութիւնը իր դերն է ունեցել: Նրանք երբեք Դաւիթի մասին անցեալ ժամանակով չեն խօսում: Հիւրասենեակում գտնուող սեղանի մօտ սովորաբար այնպէս են նստում, որ դէմ դիմաց լինեն Դաւիթի... լուսանկարի հետ:

Մայրը պատմում է նրա դպրոցական, ուսանողական եւ զինծառայութեան տարիների, Ցվետլանան՝ Արցախի ազատագրական թէժ մարտերին նրա մասնակցութեան մասին: Նաեւ այն մասին, որ չէր սիրում եւ արգելում էր իրեն նկարահանել: Միայն մէկ անգամ է յաջողուել, Էրքեջ գիւղի գրաւումից յետոյ, երբ Ջիւանի ջոկատի 23 անդամները դուրս էին եկել մահացու շրջափակումից: Այդ կադրերը պահպանուել են Պասկալեւայի «*Ցոյսերի բարձրակէտ*» ֆիլմում, որը Ժընեւի այս տարուայ միջազգային կինոփառատօնում յատուկ մրցանակի է արժանացել: «Դաւիթը սիրում էր մարտերից ազատ ժամանակ պատմել իր գրած ու չգրած պատմուածքները,— յիշում է Ցվետլանան,— երբեմն մենք երեւակայութեան յուշերին տրուելով՝ նկարահանում էինք նրա «300 *վայրկեան*» կինոսցենարը, որի Օդեսայի կինոստուդիայում հաստատած

պպմանագիրն ինքը պատոելով՝ եկել էր Արցախ: Եկել էր, որովհետև առաջին հերթին զինուոր էր, հայրենիքի պաշտպան»:

Այդպես է՝ եթե պատերազմ չլիներ, եթե հայրենիքը անկտանգ ու ազատ լիներ, ապա նրա մասին էլի էր խօսուելու: Նրան ճանաչող մարդիկ գիտեն, որ իսկապէս ներքին ու արտաքին ներդաշնակութեամբ, արտիստիկ խառնուածքով անհատականութիւն էր Դաւիթ Սարապեանը: Մերձաւորների խորհրդով էր, որ սկսեց գրել: Հիմա մնացել են իր 26 տարուայ ապրած կեանքից պահպանուած գրաւոր պատառիկները՝ մարդկային բարդ ներաշխարհի շերտերը հասկանալու գրական փորձերը, որոնք Դաւիթ Սարապեանին կրկին հանդիպելու, նրան լսելու հնարաւորութիւն են տալիս (**«Երկիր»** 17 Նոյեմբեր 1993):

ՌՈՒԶԱՆ ՉԱՔԱՐԵԱՆ

ՀԱԴՐՈՒԹ

ԱՅՍՊԻՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՆ

Աչոտ Էռնեստի Համբարձումեան...

Այս նահատակի մասին ինձ յուշեցին նամակով։ Իր բարեկամներից մէկը։

Սոնափանակերտում է ծնուել նա։ Երբ դեռ փոքր էր՝ ծնողները բաժանուեցին։

Շուտով մայրը գտաւ Համենայնդեպս տարբերակը եւ երեխային բերեց իր ծնողների մօտ՝ նրանց խնամքին ու դաստիարակութեանը թողնելու։ Մեծանում էր Աչոտը տատիկի ու պապիկի ներկայութիւնն ունենալով ու երեւի մտածում էր, որ հէնց նրանք են իր ծնողները։ Տասներեք տարեկան էլ չկար, երբ նրա մանկական, բայց արդէն շատ բան հասկացող հոգու վրայ իջնում է ճակատագրի երկայրի հարուածը։ Մի տարուայ ընթացքում մահանում է նախ տատը, ապա նաեւ պապը, եւ Աչոտը մնում է բոլորովին որբ։

Բարեկամները տղային բերում են Ասկերան, որտեղ նա գիշերօթիկ դպրոցում ստանում է ութամեայ կրթութիւն, ապա ինքնուրոյն աշխատանքային կենսագրութեան այբուբենը սերտելուց յետոյ զօրակոչւում է բանակ։

Քսան տարեկան Աչոտ Համբարձումեանը բանակից վերադառնում է այն հաստատ համոզմունքով, որ ինքը պէտք է ընտանիք կազմի եւ համերաշխ օջախ ունենայ, երկանիկ զաւակներ։ Ամուսնացաւ։ Ունեցաւ երկու անուշիկ դուստրեր։ Բնակութեան նոր հասցէ ընտրեց՝ Մարտունի քաղաքը, որտեղ ընտանեօք հանդերձ յարմնուեց 89ին։

Ամէն ինչ կարծես կարգին էր, չնայած Արցախն առնուած էր խուլ շրջափակման մէջ։ Շատ ու շատ բաների կարիքն ունէին, սակայն կար ամենագլխաւորը՝ երիտասարդ ամուսինները բախտաւոր էին իրենց սիրով ու համերաշխութեամբ։

Արցախցիներն այս ասացուածքն էլ ունեն, թէ կարիքը միշտ նեռնան տեղն է ծեռում։ Համբարձումեանների ընտանիքում տեղի ունեցաւ մեծ դժբախտութիւն։ Ցանկարծակի մահացաւ աւագ դստրիկը։ Վիշտն անմոռոք էր հօր համար։ Իսկ մօր սրտում յաւերժական սպի դարձաւ այն։

92ին Արցախեան բանակի նահատակները շատացան թշնամու մեղքով...։ Ցամենայնդէպս, կռուելը կռուելով սովորող արցախցին զոհւում էր նաեւ ոչ մարտադաշտում։ Զօրանոցներից մէկում նռնակի պայթիւնի հետեւանքով զոհուեցին չորս ապատամարտիկներ։ Մէկն էլ՝ Աչոտ Էռնեստի Համբարձումեանը։

Այսպիսի պատմութիւն։

Կ'անցնեն տարիներ, ու աւարտուած պատերազմի յուշի արձագանգներից մէկն էլ կը լինի այս պատմութիւնը, որ քանի կը սերտի Աչոտի միակ դստրիկը՝ Մանուշը։ Նա կ'ապրի պատերազմն անիծելով ու կը չէնացնի այն երկիրը, որի ազատագրման համար չորս տարի շարունակ մարտնչել է իր հայրը («Հայք», 1993, թիւ 32)։

Արցախ — ԷՌՆԵՍՏ ԵՍԱՅԵԱՆ

ԱՐՄԷՆ ՌԱԶՄԻԿԻ ՄԻՍԱԿԵԱՆ

Նա եզակիներից էր, անկրկնելի: Մի զարմանալի սովորութիւն ունէր, ոմբակոծութեան ժամանակ իր մարմնով ծածկում էր կողքինները:

Արմէն Միսակեանն իմ զինուորն էր, ամենասիրելի զինուորը: Հզօր էր, բայց փխրուն սիրտ ունէր, որ խոցւում էր ամէն չար ու վատ բանի հանդիպելիս: Էութիւնը լի էր պոեզիայով, երաժշտութեամբ. բանաստեղծութիւններ էր գրում, երգեր յօրինում, նուագում երաժշտական մի քանի գործիքներ: Անշուշտ, շատ բան գալիս էր ծնողներից: Հայրը՝ Ռազմիկ Միսակեանը, պոլիտեխնիկական ինստիտուտի դասախօս, մայրը՝ Լիլիկ Սարգսեանը, «Հայպետնախագիծ» ինստիտուտի գլխաւոր մասնագէտ, իր առաջին ուսուցիչներն ու կեանքի ընկատմամբ հայեացք ներմանողները եղան: Ահեղ երկրաշարժի օրերին հաւատարիմ շան՝ Քեջի հետ նա Լենինականի փլատակներից բազմաթիւ կեանքեր փրկեց:

Աւարտեց Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի կիբեռնետիկայի բաժինը: Լուսաւոր երազանքներ ունէր, ու մէկը՝ եօթ զաւակ ունենալն էր: Իրենց՝ մի եղբայր, մի քոյր լինելը թերութիւն, սխալ էր համարում: Ծարժման օրերին ինքն ու քոյրը ընտանիքներով մեկնեցին Սիսիանի սահմանամերձ գիւղերից մէկը, հող էին մշակում, անասուն պահում: Ցաճախ ասում էր՝ մեր սահմանները թափուր չպէտք է լինեն, կա՛նք պիտի լինի այնտեղ, այդպէս միայն ուժեղ կը լինենք: Տեսնել էր պէտք, թէ ինարչական հակումներ ունեցող, նրբին ժանեակներ հիւսող Աննան ինչպէ՞ս էր կով կթում՝ ճարպիկ ու սովոր, ասես ամբողջ կեանքը քաղաքում չէր ապրել:

Գարեգին Նժդեհի անունով դասերով էր ապրում Արմէնը, հայրենիքն իր արիւնն էր, հարազատ, անբաժանելի:

Երկու տարի անընդմէջ միասին էինք: Նա իմ կարգապահ ու անտրտունջ զինուորն էր: Հաւատարիմ շունը՝ Քեջը, անբաժան էր նրանից: Հետախոյզ էր Արմէնը, միշտ դժուարին իրավիճակներում ամէն անգամ թշնամու թիկունքից վերադառնում էր արժէքաւոր տեղեկութիւններով: Հրաշալի տիրապետելով ցանկացած զէնքի, հետախուզութեան գնալիս գերադասում էր հետը միայն սառը զէնք վերցնել: Այս ամբողջ ընթացքում սահմանային տաք կէտերում էր՝ Տաւուշում, Վայքում, Կոռնիձորում...: Լաչինում էր, որ ողբերգական լուրը նրան տուն բերեց. դժբախտ

պատահարից մահացել էին քրոջ երկու երեխաները: Հարուածը ծանր էր, դաժան: Արմէնը շատ էր կապուած փոքրիկների հետ, բայց մահուան քառասուն օրը չլրացած, նա կրկին կոտի դիրքերում էր, թէեւ ես նրան թոյլ չէի տուել: Միշտ միասին էին՝ ինքն ու քրոջ ամուսինը՝ Տիգրանը: Ուզում էին այնքան միայն տուն մնալ, որ Արմէնի քոյրը հընգարաւորութիւն ունենար լրիանալու, վշտակորոյս ընտանիքին դա այնքան էր անհրաժեշտ: Նոր զաւակն անշուշտ պիտի ամոքէր մօր վիշտը:

Դիրքերը հասնելու երկրորդ օրն էլ հէնց կատարուեց ողբերգութիւնը: Այդ օրը Արմէնը մի քանի անգամ անցաւ թշնամու դիրքերը, ինչպէս միշտ բերելով կարեւոր նշանակութիւն ունեցող տեղեկութիւններ: Վերադարձին, մեր դիրքերի յետեւում, մեր գրաւած տարածքում յայտնաբերում է չորս ական: Իր խառնուածքին բնորոշ անհանգստութեամբ սկսում է վնասազերծել դրանք: Երեքը բարեյաջող վնասազերծում է, չորրորդը հակատանկային ական է լինում, այսպէս կոչուած, «Սեուրպրիզ», երբ վերեւինը վնասազերծելիս տակինը պայթում է: ...: Եօթ ժամ շարունակ տղաները հաւաքում էին քաջարի ընկերոջ մասունքները: Արմէն Միսակեանի երեսունը նոր էր լրացել եւ, աւա՜ղ, այս գարունը վերջինը եղաւ: Կորուստներում կարծրացած, կորուստների սովոր ջոկատի տղաները այս մի կորստեան հետ այդպէս էլ չեն հաշտուում: Նա եզակիներից էր, անկրկնելի: Մի զարմանալի սովորութիւն ունէր, ռմբակոծութեան ժամանակ իր մարմնով ծածկում էր կողքիններին:

Հայրը պոռմ է նուիրել որդուն, որ վշտի պոռթկում է եւ, սակայն, ամէն տողից յորդում է գիտակցումն այն բանի, որ իր որդին հայրենիքի քաջ զինուորն էր, քաջ պաշտպան:

Ափսո՜ս, Արմէն, որ երազանքդ՝ տունդ բերդ Սիսիանի սահմանագլխում եօթ զաւակներիդ՝ եօթ քաջ զինուոր, անկատար մնաց: Երկու տարեկան դուստրդ հասակ կ'առնի ու իմանալով կեանքիդ գեղեցիկ պատմութիւնը, հպարտութիւն կը զգայ: Իսկ ես համեստ ու համառօտ իմ այս գրուածքով ուզում եմ դիմել մեր մայրերին ու նրանց որդիներին. հազար ու մի պատրուակով, ծանօթ ու բարեկամ մէջտեղ բերելով, մի խուսափէք զինուորական պարտականութիւնից: Զինծառայութիւնը ամէն հայ պատանու սրբազան պարտքն է հայրենիքի ու մօր առաջ: Հայրենիքի համար դժուարին պահին չկայ ապահով տեղ, եւ ամէն ինչ՝ սէր, հարստութիւն եւ վայելում ունայն է: Միայն հայրենիքին նուիրումն է գեղեցկութիւն եւ իմաստ տալիս այդ բոլորին («Առագաստ», 1993, թիւ 11):

Գումարտակի հրամանատար՝
ԿՈՐԻՒՆ ՂՈՒՄԱՇԵԱՆ

ԱՐԱՄ... ՇԱՆԹԻ ԲԵԿՈՐ

Արամը մէկն էր նրանցից, ովքեր առաջինը ձեռք զարկեցին զէնք հայթայթելու եւ ժողովրդին զինելու գործին, որպէսզի նորից այս հողի վրայ չկրկնուէր ցեղասպանութեան եղեռնը:

Այս անվերջ թուացող պատերազմից յետոյ, երբ մեր խոցոտուած աշխարհի վրայ ի վերջոյ խաղաղութիւն կ'իջնի, ապրողներն, անշուշտ, կը յիշեն, կը յիշատակեն մեզանից շատերին, կը գրեն նահատակ այն քաջերի մասին, որոնք իրենց կեանքը բաշխեցին յանուն բաղձալի այդ օրուայ: Յետոյ նրանք առասպել կը դառնան ու Արցախեան հետագայ սերունդների շուրթերին կը մնան որպէս անմահութիւն:

Անվերապահօրէն այդ մարտիկներից է Արամ Աւանեսեանը, մարդ, որն անմնացորդ նուիրուեց Արցախեան ազատագրական պայքարին:

Վաղը գուցէ աւելի լաւ կը գրեն նրա մասին՝ երբեէ տեսած չլինելով նրան: Իսկ ես իմ պարտքն եմ համարում ներկայացնել նրան որպէս ժամանակակցի, ընկերոջ, մարտիկի ու հայրենասէրի:

Կարվին գիւղում էր ապրում: Թշնամու մի որջի սեպաձեւ տարածքով Մարտունի քաղաքից զատուած Կարվին թաղամաս-քաղաքում, որն անասելի ճիգով դիմադրում էր ադրբեջանցի զինեալների յարձակումներին, աւերիչ գործողութիւններին: Արամը մէկն էր նրանցից, ովքեր առաջինը ձեռք զարկեցին զէնք հայթայթելու եւ ժողովրդին զինելու գործին, որպէսզի նորից այս հողի վրայ չկրկնուէր ցեղասպանութեան եղեռնը:

Երբ զէնքեր կային արդէն՝ ինքնացիրներ, գնդացիր ու նռնակաձետ, տղաները խումբ կազմեցին ու սկսեցին ոչ միայն հսկել թշնամու համար անմատոյց դարձած իրենց շուրջբոլորը, այլեւ օգնութեան փութալ ուրիշներին, նրանց, ովքեր դժուարին դրութեան մէջ էին յայտնուում: Ամբողջ Արցախի տարածքում:

Արամը մի շաբաթ Ճաճումեանում, մի ամիս Մարտակերտի շրջանում էր, նորից Ճաճումեանում, նորից Ծուշուայ կողմերում, Ղարադաղլուի մօտ, Ամիրանլարի վոհմակների գնդակների տակ...: Ամէնուրեք: Այդ ամենահաստութիւնը նա ապահովում էր իր անձնական ինքնաշարժով, ան անխափան ծառայում էր նրան, խմբի տղաներին: Չնայած Կարվին քաղաքային թաղամասը փոքր է, զարմանալիօրէն արագ կարողացան կազմակերպուել, եւ այդ մարտական կազմակերպութեան մէջ ընդգրկուեցին շատ ջահելներ, գրեթէ բոլորը:

Ինքնամմէկին այդ համախումբ, հուժկու կազմակերպութիւնն արդէն ազատագրել էր Խոնաշէն գետի տակում թշնամական երկու բնակավայր-կրակակէտերը, որոնք իրենց հսկողութեան տակ էին պահում Ստեփանակերտ-Նենգի-Մարտունի մայրուղու քսան կմ տարածքը եւ օրական հազարաւոր ռուբլիների վնաս էին հասցնում արցախցիներին՝ խանգարելով ներքին երթեւեկութիւնը Մարտունու շրջանում:

«Արաբօ» խմբի ղեկավարութեամբ կարվինցիները, նրանց շարքում եւ Արամը, մասնակցեցին այդ գործողութիւններին, իսկ այնուհետեւ Արամն ու իր տղաները իրենց արիութիւնը ցուցադրեցին Վերին Վէյսալուի գրաւման, ինչպէս եւ Քարաճուկի մարտերում:

Արամին առանձնապէս չէր գրաւում հրամանատարական պարտականութիւնը. նա գիտէր, որ ինքը ծնուել է ինքնուրոյնաբար կատարելու իւրաքանչիւր գործ, մարտական առաջադրանք: Հրամայել ինքն իրեն ու կատարել ինքն իր հրամանը: Անթերի ու ստոյգ: Ու նաեւ կտրուկ: Եւ միաժամանակ օգնել բոլորին:

1992ի վերջին աւերուեց այն գեղեցիկ կառոյցը, որը կոչւում էր ազատամարտիկների Մարտունու խումբ: Այդ խումբը երեւի թէ Արամի, Եուրիկի, Ռաֆայէլի, Դմիտրիի եւ ուրիշների հերոսական մահից յետոյ ինքնընտրանքեան պիտի մարէր եւ, իրօք, մարեց, որովհետեւ մնացածները չկարողացան շարունակել խմբի միատեղ ապրելու, միատեղ կռուելու աւանդութիւնները:

...Այդ գիշեր Ծովերի բարձունքում դիրքապահները սպիտակաշէնցիներն էին, երբ կէսգիշերով յայտնուեցին Արամը, Եուրիկը եւ ուրիշներ, որոնք եկել էին անցնելու ակնապատուած դաշտերով ու խորանալու թշնամու դիրքերի մէջ: Կարծես թէ առաջադրանքն իրագործուել էր, արդէն անցել էր մի քանի ժամ, ու պարզ լսւում էին մեր խրամատներին մօտեցող տղաների ուրախ ձայները, երբ յանկարծ պայթեց ականը:

Կէսգիշերային խաւարը թոյլ չէր տալիս նկատել պայթած ականի տեղն ու տղաների դիրքը, բայց այն, որ նրանք օգնութիւն էին խնդրում դիրքապահներից, լսելի էր: Ստեղծուել էր դժուարին մի իրավիճակ, երբ պէտք էր կտրուկ մի վճիռ ընդունել: Արամն օգնութիւն էր խնդրում...: Առաջին անգամ Արամն օգնութիւն էր խնդրում ուրիշներից, իւրայիններից: Կամոն, Սէյրանը, Կարէնն ու միւսները անմիջապէս նետուեցին առաջ: Պէտք է մտնէին ականապատուած տեղանք: Այնտեղ, մթան մէջ, երբ ամէն մէկը քաջ գիտէր, որ գնում է մահուանն ընդառաջ: Բայց ոչ

մի վտանգ, թէկուզ մահուան վտանգը չէր կարող կաշկանդել տղաներին...

Ականապատուած դաշտի գրեթէ կենտրոնում վերադարձող տղաները թանձրախիտ խաւարի մէջ դիպել էին ականին, ու պայթիւնից բեկորահարուել էին երեքը:

Արամը ծանր վիճակում էր: Տղաներն արեցին անհնարինն անգամ, բայց անկարելի եղաւ փրկել: Ասես դաւադիր մահն ինքն էր նիւթել այս ամէնը, որ կործանի իր չար զօրութիւնն արհամարհող խիզախ մարտիկին:

Արամը մահացաւ հիւանդանոցի ճանապարհին, ընկերների ձեռքերի վրայ: Մի քանի ժամ յետոյ վախճանուեց եւ Եուրիկը: Այդպէս աւարտուեց Արցախեան հերոսամարտերի քաջարի մասնակիցներից մէկի՝ Կարսին արուարձանի ծնունդ Արամ Աւանէսեանի սխրալի կեանքի ուղին: Նա ընդհանուր յաղթանակի համար արեց աւելին, քան կարող է անել մէկը, որքան էլ քաջ լինի ու կորովի:

Մի ամիս չանցած՝ թշնամուց խլուեցին Ամիրանլարն ու Մուխանլուն, Կուրոպատկինոն ու միւս բնակավայրերն ու բարձունքները: Այդ յաղթանակներով Արամի մարտական ընկերներն առան նրա մահուան վրէժն ու ընդհանուր ջանքերով մօտեցրին Արցախեան ազատամարտի յաղթական աւարտի օրը... (*«Հայրենիքի ձայն»*, 5-11 Օգոստոս 1993):

ԷՌՆԵՍՏ ԵՍԱՅԵԱՆ

ՄԻ ԱՓ ՀՈՂ ԷԼ ՍՐԲԱԳՈՐԾՈՒԵՑ

Ընկաւ սիրուած հրամանատարը ու իր արիւնով հարենիքի մի ափ հող էլ արբագործուեց

Մահը խլեց քաջարի ազատամարտիկ Լէոնիդ Ազգալդեանին, որը վերջին չորս տարիներին ղեկավարում էր Արցախի ինքնապաշտպանական ջոկատներից մէկը:

Լ. Ազգալդեանը, աւարտելով Ե.Պ.Հ.ի ռատիոֆիզիկայի ֆակուլտետը, աշխատել է Հայաստանի պետական հաշուիչ կենտրոնում, «Վազերային տեխնիկա», «Էլեկտրոն» ԳԱՄերում եւ Երեւանի տարբեր հաշուիչ կենտրոններում: Նա այդ բնագաւառի հանրապետութեան բարձրակարգ մասնագէտներից մէկն էր եւ խաղաղ պայմաններում կարող էր դեռ աւելին անել, եթէ հայրենիքի համար այս ծանր օրերին ինքնակամ ի զէն չկոչուէր:

Լ. Ազգալդեանը իր մարդկային լաւագոյն յատկանիշները դրսեւորեց նաեւ կռուի դաշտում: Ընկաւ սիրուած հրամանատարը ու իր արիւնով հայրենիքի մի ափ հող էլ արբագործուեց՝ զինակից ընկերներին պատգամելով մնալ աներեր, նուիրուած՝ ազատ հայրենիք կերտելու նուիրական գործին:

Պատմութիւնն ապացուցում է, որ նա, ով մեռնում է յանուն ազատութեան եւ արդարութեան, երբեք չի մոռացւում («Երկիր», 24 Յունիս 1992):

«ԼԱՋԵՐԱՑԻՆ ՏԵԽՆԻԿԱ»
ԳԻՏԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՒՈՐՄԱՆ ԿՈԼԵԿՏԻՒ

ԼԷՈՆԻԴ ԱԶԳԱԼԴԵԱՆԻ ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ես դնում եմ, քոյր իմ, մարմի,
Ու մարան այս՝ թէժ է լինելու,
Ասոխը բիրտ է, ամարդի
Մեր հողն է խուժել՝ տիրելու:

Ու թէ կռուում մի կոյր գնդակ,
Քոյր իմ սիրուս խոցի,
Զվշտանաս, լաց չլինես,
Չի սպասում մահս լացի:

Որպէս պատգամ սերունդներին,
Ու որպէս սուրբ իմաստութիւն
Ցիշիր խօսքը մեր մեծերի.
—Մահ իմացեալ անմահութիւն...

(Ձեռագիր)

ՍԱՄՈՒԷԼ ԽԱՉԻԿԵԱՆ

ՀՐԱԺԵՇՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

«Նիկոլը ոչ մի կուսակցութեան չէր պատկանում, դաշնակցական չէր։ Բայց եթէ հասկանաս Նիկոլին՝ կը հասկանաս Դաշնակցութեանը»...

«Մի օր ես չեմ լինի։ Ասենք թէ ես չեմ եղել. դուք իմ գնալ-գալու մասին ի՞նչ գիտէք, ինչի՞ց գիտէք։ Իմ անունից։ Ցօրինէք անուններ ու պատկերացրէք, որ դրանք եկել-գնացել են, թնակեցրէք այս հողագունդը բոլոր նրանցով, ովքեր չեն ծնուել ու տեսէք, թէ որքան հաճելի կը լինի աշխարհը։ Հաճելի կը լինի, որովհետեւ չծնուածներին էլ դուք ձեզ նման կամ ձեր ուզածի նման կը ստեղծէք, կը ստեղծէք մարդիկ։ Իսկ ես ինձ նման էի ու եկայ-գնացի...»։

Նիկոլ Գալատեան անյայտ բանաստեղծի վերջին ստեղծագործութեան՝ «Հրաժեշտի պատմութիւն»ի մի հատուածը...։ Գրեց ու գընաց։ Գիտէր ուր է գնում։

Առաջին անգամ Արցախ գնաց 92ի Յունուարին։ Կռուեց Զափարի մօտ։ «Մանր կռիւ էր,— ասում են Նիկոլի մարտական ընկերները,— բայց միայն մի վիրաւոր տուեցինք»։ Գիւլիբերդ գիւղի համար կռուելիս («Նիկոլ Դուման» ջոկատի կազմում) վիրաւորուեց ոտքից։ Երկար չպառկեց Մարտակերտի հիւանդանոցում։ Դեռ չապաքինուած, Դաշնակցութեան յատուկ ջոկատի կազմում մարտնչեց Հաթերքի եւ Մեհմանալի համար, որոնք այսօր ազատագրուած են։ Անհանգիստ հոգի էր։ Ասում էր, որ Երեւանում անելիք չունի։ Երազկոտ էր ու միահիւսուեց իր երազներին։ Գիտէր, որ իր ժամանակի ճշմարտութեան կրողն է։

Ասում են, երբ առաջին անգամ տեսաւ Արցախը, ասաց. «Արժէ այս հողի համար ապրել ու մեռնել»։

«Իւրաքանչիւր հայի մաշ պիտի մի քանի անգամ ճշմարիտ լինի իր կեանքից»,— դարձեալ նրա խօսքերն են։ Նաեւ ինքն է

ասել. «Ոչինչ այնքան չի որոշում պատերազմի ելքը, որքան ազատութեան նուիրուածութիւնը»։

Գնարերգու էր ու մարտիկ։ Զգացողութիւնն ու վերապրումը բանաստեղծի էր, կեանքն ու ապրելակերպը՝ մարտիկի։ Պաշտամունք ունէր Գեղեցիկի ու Արդարի հանդէպ։ Անգամ առօրեայ կեանքում փնտռում, գտնում էր գեղեցիկն ու պայքարում արդարութեան համար։ Գեղեցիկի ու Արդարի պաշտամունքը նրան կըռուի հանեց։ Զինուորագրուեց ազատամարտիկների լուսապակ փաղանգին։ Գրիչը, որ տրուած էր, գրիչը, որ պիտի տրուէր դեռ, փոխարինեց զէնքով։ Որովհետեւ Գեղեցիկը ծնւում է ո՛չ միայն գրչով, այլեւ, առաջին հերթին՝ զէնքով։ Որովհետեւ Արդարը ինքնին գեղեցիկ է ի սկզբանէ։ Գեղեցկութեան երկրպագուն միաժամանակ արդարութեան նուիրեալ է։ Ուրեմն՝ մարտիկ։

Շատ չկռուեց նա։ Բայց իւրաքանչիւր մարտի նուիրւում էր բանաստեղծական ներշնչանքով։ Զէր կռւում ոչնչացնելու համար, չէր կռւում մարդ սպանելու համար։ կռւում էր փրկելու համար։ կռւում էր մարդասպաններին ոճիր գործելու հնարաւորութիւնից զրկելու համար։

Նա չդոհուեց Արցախում։ Վիրաւորուեց։ Բայց նչտարն այլեւս անզօր էր։ Վախճանուեց հիւանդանոցում, վիրահատական սեղանի վրայ։ Գեղեցկութեան եւ արդարութեան զոհասեղանն էր, Նիկոլը՝ կամաւոր զոհաբերութիւն։ Ակամայ համեմատութիւն է ծագում Նիկոլի ընկերներից մէկի ասածի հետ. «Նիկոլը ոչ մի կուսակցութեան չէր պատկանում, դաշնակցական չէր։ Բայց եթէ հասկանաս Նիկոլին՝ կը հասկանաս Դաշնակցութեանը...

Ու որպէս վերջաբան՝ եւս մի առղ «Հրաժեշտ»-ից.

«Ոչինչ չեմ կորցնում։ Երեւի ամենաթանկ բանը, որ կորցնում եմ, ցաւն է...»։

Ափսո՛ս, որ էլ չի ցաւելու... («Երկիր», 22 Յուլիս 1993)։

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԵՒ
ՄԱՐՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐ

ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՆՇԱՆՆԵՐԻ ԱՍՊԵՏԸ



«Այս արեւի տակ ծնուել եմ երեք հպարտութեան նշաններով. հպարտ եմ, որ հայ եմ, հպարտ եմ, որ դաշնակցական եմ, հպարտ եմ, որ ունեմ անկեղծ ու գաղափարակից ընկերներ»:

Հերոսների համար չէ մայրուղին: Նրանք նախընտրում են փշոտ ու դժուարանց արահետները: Դա մաքառումներով ու տառապանքներով միահիւսուած՝ հերոսապատում կերտողների ճանապարհն է: Նրանց համար մահ չկայ: Մահը մեզ՝ հասարակ մահկանացուներիս համար է, որոնց Աստուած հերոսների կեանքն իմաստաւորելու, նրանց որդեգրած լուսաւոր գաղափարներով առաջնորդուելու, նաեւ կենդանութեան օրօք նրանց փառահեղ ներկայութիւնը, նրանց շունչն ու ոգին զգալու խորհուրդն է տուել:

1965 թ., Դիծեռնակաբերդ...: Մի խումբ ընկերներով երդւում են՝ «...Բոլոր ուժերով, իսկ եթէ հարկ լինի՝ նաեւ կեանքի գնով ծառայել Հայաստանի ու հայութեան ազատագրութեան դատին»: Նրանց մէջ էր եւ Գորիսի շրջանի Քարաշէն գիւղից մի 18ամեայ պատանի՝ Սօսը...

Լերմենտ Արամայիսի Սարգսեան (Սօս)... Ծնուել է 1947 թ.: 1988ից հայ ազգային-ազատագրական պայքարի գլխաւոր կազմակերպիչներից էր: Բազմաթիւ սխրագործութիւնների շնորհիւ կենդանի լեգենդ էր դարձել:

Արցախեան գոյամարտի սկիզբ...: Հայ Դատի լուծման համար, թուում է ոչինչ հնարաւորութիւններ էին ստեղծուած: Կազմաւորւում են առաջին կամաւորական ջոկատները: Ստեղծւում է Հայ ազգային բանակը: ՀԱԲի ուսերին է ընկնում ցաքուցրիւ գործող ինքնապաշտպանական ջոկատների համախմբումն ու բոլոր ուժերն ու հնարաւորութիւնները հայրենիքի փրկութեանն ի սպաս դնելու դժուարին պարտականութիւնը: Ազգի ապագայի ու փրկութեան առաջնահերթ ծրագրեր էին մշակւում:

Կ'անցնեն տարիներ...: Ժամանակն ամէն ինչ իր տեղը կը դնի: Մոռացութեան խորքից ի յայտ կը գան ապրողներիս աչքից վրիպած

պատմական դէպքեր ու դէմքեր: Գուցէ հեռու չէ այն օրը, երբ մեր ազգի պատմութեան ճշմարտախօս կենսագիրները, անհերքելի փաստարկներ վկայակոչելով, կը նշեն, թէ Արցախեան ազատամարտի ընթացքում ով առաջինը գործով ջնջեց օտար դաւադիրների կողմից գծուած հայոց սահմանները, ով ազատամարտիկի կերպարանքով առաջինը Հայաստանի կենարար շունչն ու ոգին հաղորդեց Արցախին. «Մէկ հայութիւն, մէկ հայրենիք» ուխտին հաւատարիմ եւ հայի Աստծուն ապաւէն՝ ո՞վ արտի թելադրանքով ու արեան կանչով առաջինը եղաւ այնտեղ, ուր իր ներկայութեան պահանջը կար:

Արցախն առաջինը նաեւ Սօսի շնորհիւ, Սօսի ջոկատով զգաց, որ ինքն անպարտ է: Համայն հայութեան ոգին էր թեւածում Արցախում: Այսօ՛ր միայն հասկանում են, որ Արցախի ապագան է Հայաստանի ու հայ ոգու փրկութիւնը որոշողը:

...Սումգայիթեան նախճիրից յետոյ է՛լ աւելի գազազած թշնամին Ադրբեջանի հայաբնակ վայրերում հրէշաւոր սպանդներ էր իրականացնում: Վճռական խօսք էր պէտք ասել: Եւ Սօսը գործով ասաց այդ խօսքը: Ասաց Գանձակում, Շահումեանում, Մարտակերտում, նոյնիսկ... Աղդամում: Ամէն հայի չի վիճակուած թշնամու որջում մինչեւ ատամները զինուած մէկ աւտոբուս լիքը ՕՄՕՆականներից վրէժխնդիր լինելու բախտը. նրանք վերադառնում էին հայերի սպանդի խրախճանքից:

Արցախեան արհաւիրքի օրեր: Ուր թշնամու վտանգ կայ՝ Սօսն այնտեղ է:

Շահումեան...: Ներքին հակասութիւնների վտանգն էր առկայ: Հրրճրելու էր թուրքը...: Որպէս ազգի խաղաղութեան աւետաբեր զինուոր՝ Սօսն էր այնտեղ: Ամէն ինչ հարթուեց, յաղթեց Միութիւնը եւ Սէրը:

Սօսի եւ իր ջոկատի սխրագործութիւնների մասին են վկայում Շարժմանը երբեք չդադարեցուած այն ազգային գոծիչները, որոնց կոչումը հայ ժողովրդի Ծառան լինելն է, պաշտօնը՝ Հայ Դատի Մարտիկ:

Շահումեան, Արցախ, Զանգեզուր...: Սա է ոչ լրիւ յիշատակումն այն շրջանների, ուր իր գործերով բարի յիշատակ է թողել անմոռաց մարտիկը՝ ՀԱԲի հազարապետ, Հ.Յ.Դ. անդամ Սօս Սարգսեանը:

Հայոց ազատամարտը ծուէն-ծուէն արեց Սօսի մարմինը, առողջութիւնը, բայց Ոգին՝ երբեք: Սարերի արծիւը հոգին աւանդեց ծանր հիւանդութիւնից, իսկ Ոգին գնաց-միաձուլուելու Ասկոլկաների ոգիներին:

...Աստուած հզօր բազուկ էր տուել Սօսին ու բարութեան անափ ծով: Մոնչացող գազանի դէմ բարութեան լոյսեր էին ճառագում: Եւ Բարին յաղթում էր:

«Այս արեւի տակ ծնուել եմ երեք հպարտութեան նշաններով,— ասում էր Սօսը,— հպարտ եմ, որ հայ եմ, հպարտ եմ, որ դաշնակցական եմ, հպարտ եմ, որ ունեմ անկեղծ ու գաղափարակից ընկերներ»:

Քո ապրած կեանքը քեզ հետ կիսած ընկերներն ասում են, Դաշնակցութեան դրօշի տակ քո այդ նշած երեք հպարտութիւնները արթօրէն կը փոխանցուեն սերնդէ սերունդ («Երկիր», 8 Յուլիս 1993):

ՎԱՉԷ ՄԿՐՏՉԵԱՆ

...ՆԱ ԿԸ ԼԻՆԷՐ 22 ՏԱՐԵԿԱՆ

Շատ բնակավայրերում ենք կռուել՝ Մալիբէյլու, Ղուշչիլար, Կրկժան, Խոջալու, Շուշի, Աղբուլաղ, Նախիջեւանիկ, այնուհետեւ Մարտակերտի շրջան...։ Մի խօսքով՝ որտեղ ուղարկել են։

Պատերազմը սկսուելու առաջին օրերից միասին էինք կռւում՝ ես որպէս դասակի հրամանատար, երեք որդիներս՝ Կոլիան, Դաւիթը ու Գուրգէնը, մեզ հետ նաեւ եղբօրս որդի Գագիկը՝ որպէս աւտոմատաւորներ։ Շարունակ առաջին գծում էինք։ Իններորդ վաշտում մեզ մատով էին ցոյց տալիս։ Դասակի տղաների հետ այնպէս էին ձուլուել, այնպէս էին հասկանում իրար եւ դժուար պահերին օգնում մէկը միւսին, որ թւում էր մէկ ընտանիքի անդամներ են։ Ինձ համար բոլորն էլ հարազատ որդիներ էին։ Դժուար պահերին իմ աչքին էին նայում, իմ տրամադրութիւնն էին շոշափում եւ որոշում իրենց անելիքը։ Հասկանում էին, թէ որքան վատ կը լինէր ինձ համար, եթէ մէկն ու մէկը յանկարծ վախկոտութիւն ցուցաբերէր. տապալուէր առաջադրանքը։

Շատ բնակավայրերում ենք կռուել՝ Մալիբէյլու, Ղուշչիլար, Կրկժան, Խոջալու, Շուշի, Աղբուլաղ, Նախիջեւանիկ, այնուհետեւ Մարտակերտի շրջան...։ Մի խօսքով՝ որտեղ ուղարկել են։ Ամէնից շատ նրան եմ յիշում՝ իմ Կոլիային, որը հիմա կը լինէր 22 տարեկան...

Ամէն անգամ, երբ նոր բնակավայր պէտք է ազատագրէինք, բախուէինք թշնամու հետ, ինձ զգուշացնում էր՝ հայրիկ, չանհանգստանաս. ես գիտեմ իմ անելիքը։

Ղուշչիլարում, երբ յարձակման անցանք, փախուստի դիմելուց առաջ, ազերիները մի քանի հոգու քողարկուած վիճակում թողել էին դիրքերում՝ մեր թիկունքից հարուածելու համար։ Մեր տղաների հնգեակը, որոնց թւում եւ իմ որդին, այնպէս են յանկարծակիի բերում, որ ազերիները ուրիշ ելք չեն գտնում, զէնքերը շպրտում ու պատանդ են յանձնում։ Նախիջեւանիկում մեր հարուածները այնքան էին անսպասելի, որ նրանք, խուճապի մատնուելով, դիրքերը թողնում ու ճողոպրում են։ Այդպիսի շատ դէպքեր կարելի է թուարկել։

Կոլիան լուսեաց տղայ էր, ինքնամփոփ, ամէն ինչի մասին չէ, որ ասում էր ընկերներին։ Բայց ինձ անհագստացնում էր նրա

ճարպկութիւնն ու համարձակութիւնը։ Որպէս հայր ու հրամանատար, ես հպարտանում էի նրա այդ յատկանիշներով ու միաժամանակ տագնապ ապրում, իմանալով, որ համարձակութիւնը միշտ չէ յաջողութեամբ պսակւում։ Այդպէս եղաւ Ջլղրանում։ Ցաւոնի է, թէ այդ դիւղը քանի անգամ է ձեռքից ձեռք անցել։ Այդ օրը բռնկուած մարտում ուժերը բաւականին անհաւասար էին։ Ջնայած դրան, տղաները որոշում են հակահարուած տալ երես առած ոսոխին։ Մարտը թէժանում եւ դաժան բնոյթ է ստանում։ Մեր տղաները հարկադրուած կռւում են մինչեւ վերջին դնդակը։ Զոհերը անխուսափելի էին...

Կը խնդրէի, որ «Արցախ» թերթն իր վերաբերմունքով փոքրինչ մեղմացնէր որդուս պապիկ-տատիկների՝ Գուրգէն եւ Արմէնուհի Ցակոբեանների, Սուրէն եւ Աննա Առուշանեանների վիշտը, արտագրելով իմ այս խօսքը («Արցախ», 19 *Ցունիս* 1993)։

Զոհուած ազատամարտիկի հայր,
դասակի նախկին հրամանատար՝
ԷԴՈՒԱՐԴ ՑԱԿՈԲԵԱՆ



Տեսարան մը՝ Շուշիէն։

ԶՕՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ



Հմուտ ու բազմափորձ հրամանատարը գունդն արդէն տանում է յաղթանակի ճամբաներով, ազատագրում հայրենի երկրամասը, Մարտակերտ քաղաքը։

Նորայր Դանիէլեանը կարճ, ընդամէնը 28 տարուայ կեանք է ապրել, որի վերջին 5 տարին բուռն, փոթորկալից մի յորձանուտ է յիշեցնում։ Մոսկուանակերտի մանկավարժական ինստիտուտի երրորդ կուրսի ուսանող էր, երբ Խորհրդային բանակ զօրակոչուեց։ Արցախեան հիմնահարցին առաջին անգամ առընչուել է 1987 թ. Նոյեմբերին, երբ բանակից 10 օրով հայրենի գիւղ արձակուրդ էր եկել եւ մասնակցել էր Արցախն Ադրբեջանի կազմից դուրս բերելու պահանջագրի տակ ստորագրութիւնների հաւաքման պատասխանատու գործին։ Սումգայիթեան ողբերգութեան լուրը հեռաւոր-արեւելեան Ամուրի շրջան է հասնում։ Բանակի հրամանատարութիւնն այլեւս չի վստահում հայ զինուորներին։ Մայիսին զօրացրւում է։

1988 թ. դեկտեմբերեան Աղէտի օրերին նա իր ընկերների հետ Լենինականում մասնակցում է փրկարար աշխատանքին։

Արցախեան շարժումը նոր թափ է հաւաքում։ Նորայրն իր ջոկատով ստանձնում է Բերդաձորի գօտու երկու գիւղերի՝ Եղեսահոգի եւ Հին Շէնի պաշտպանութիւնը, մասնակցում մի շարք մարտերի։ Մանր վիճակ էր ստեղծուել նաեւ Մարտունու շրջանի Միւրիշէն եւ Աւդուր գիւղերում։ Քաջ մարտիկը իր ջոկատով մեկնում է Միւրիշէն, մասնակցում գիւղի պաշտպանութեան մարտերին։ Օրէցօր ծանրանում է Մարտակերտի շրջանի հարթավայրային գիւղերի վիճակը։ Նորայրը ժամկէտից շուտ յանձնում է Յրդ կուրսի քննութիւնները եւ իր ջոկատով տեղափոխւում Զանգեզուրի դաշտավայր, ուր տէր ու տնօրինութիւն էին անում ադրբեջանցիները։ Ամբ հոգով ձեռնարկում են երեք ու կէս հազար հեկտար տարածքի պաշտպանութիւնը։ ...։ 1991ի փետրուարին ԽՍՀՄ ներքին զօրքերի յատուկ նշանակութեան վաշտը, ադրբեջանցի ՕՄՕՆականներով համալրուած, շրջապատում է աւանը։ Կէս ժամ տեւած մարտից յետոյ աւանը գրաււում է։ Հրամանատարը՝ Նորայր Դանիէլեանը, վիրաւորուում է ու գերի ընկնում։ Նրա տեղակալին՝ Աշոտ Ղուլեանին (Բեկոր) մի քանի հոգու հետ յաջողւում է ճեղքել օղակն ու փրր-

կը։ Նորայրը կրկին յայտնում է Շուշուայ բանտում։ ... Դատարանը ոչինչ չհաստատելով, այնուամենայնիւ, հայրենասէրին դատապարտում է 12 տարուայ ազատազրկման։ Սակայն 1992ի Ապրիլին Նորայրին տեղափոխում են Աղդամ, փոխանակում ադրբեջանցի գերի ՕՄՕՆականների հետ։

Նորայր Դանիէլեանը քաջալու

ՄՈԽՐԱԹԱՂԻ ԲԱՐՁՈՒՆՔԻ ԱՐԾԻԼԸ

Դեռ չէր բոլորել իր քսաներեքամեակը, սակայն արդէն իսկ հասցրել էր մասնակցել աւելի քան քսաներեք հայկական բնակավայրերի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերի:

Դեռ չէր բոլորել իր քսաներեքամեակը, սակայն արդէն իսկ հասցրել էր մասնակցել աւելի քան քսաներեք հայկական բնակավայրերի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերի: Այդ մարտերում էլ իր բացառիկ խիզախութեան, դէպի թշնամու դիրքերը անկասելի ու անվեհեր իր խոյանքի, զինակիցների նկատմամբ ասպետական հոգատարութեան համար էր դարձել թշնամու ահն ու սարսափը, մարտական ընկերների պաշտելի *Մանչը*:

Մանուկ Սարգսի Սահակեանը ծնուել է 1969 թ., Հոկտեմբերին, Զուարթնոց գիւղում: Ընտանիքի չորս զաւակներից կրտսերագոյնը, նրբագեղ եւ ուշիմ պատանին աւարտել է հայրենի շէնի միջնակարգը, ուսումնարանում տիրապետել հաստոցների լեզուն եւ աշխատաւորի քրտինքով վաստակում էր իր արդար հացը, երբ վրայ հասաւ 1988ի յեղափոխիչ շրջադարձը:

Երիտասարդութեան շեմը նոր ոտք դրած Մանուկը, որ մինչ այդ մի հրապուրանք ունէր՝ սպորտը, միախառնուեց համաժողովրդական պայքարին: Աստիճանաբար նա կոփուեց որպէս մարտիկ, մա՛նաւանդ՝ որ ազերի ելուզակները շուտով բացայայտելու էին իրենց արիւնոտ դէմքը՝ Սումգայիթից մինչեւ Գանձակ, այնուհետեւ սպառնալիք դառնալով Հայաստանի սահմանամերձ շրջանների խաղաղութեանն ու անվտանգութեանը:

1989 թուականին նա Վարդենիսի շրջանում էր արդէն եւ մասնակցում էր Քելբաջարի ուղղութեամբ ձեռնարկուող ռազմա-հետախուզական գործողութիւններին: Այնուհետեւ նա Նոյեմբերեանի եւ Գորիսի շրջանների, յատկապէս Կոռնիձորի կռիւների մարտիկը դարձաւ, ըստ որում՝ հէնց այդ ժամանակ էլ, առաջին իսկ օրից, ազատագրական մեր պայքարի մեծ հրամանատար Լէոնիդ Ազգալդեանի կողքին էր եւ նրա ղեկավարութեամբ էլ մարտնչում էր թշնամու դէմ, վտանգուած մեր եզերքների ապահովութեան ի խնդիր: Դժուար է մի առ մի թուարկել այն բոլոր վայրերը, որոնց ինքնապաշտպանական կռիւների կիզակէտում էր յայտնուել Մանուկը. Վարդենիսի շրջան՝ Կրզլբենդ, Փամբակ,

Դարա, Ենիքենդ, Կեուենեշլի, Սոդք, Վերին Շորժա, եւայլն: ՇաՀումեանի շրջան՝ Բուզլուխ, Մանաշիդ, Էրքեջ, Ղարաչինար, եւայլն: Մարտակերտի շրջան՝ Թալիշ, Մարաղա, Լենինաւան, Չայլու, Մատաղիս, Տօնաշէն, Մեծշէն, Կիչան, Օրթա եւ Բաշ Գիւնեփաեա, Կարմիրաւան, Սրխաւենդ, Նարեշտար, Չարեքտար, Աղդապան, Ջայդուվուշան...

Պատանեկութիւնից նոր-նոր երիտասարդութեան սեմը ոտք նետող ազատամարտիկ Մանուկ Սահակեանը «Ազատագրական բանակ»ի ոչ թէ պարզ զինուոր էր, այլ՝ գործուն մասնակիցը բանակի ծննդեան ու կայացման երախտաշատ գործի, երկրորդ սերնդի հրամանատար, որ մինչեւ վերջին շունչը հաւատարիմ մնաց իր երդմանը՝ ծառայել հայրենիքին, պաշտպանել եւ վերահաւաքել հայրենի հողը, ծառայել ժողովրդին, պաշտպանել եւ համախմբուել բոլոր արիւնակիցներին (1993 թիւ 3 – *յապաւումներով*):

«ՋԻՆՈՒՈՐ»

ՄԱՆԱՇԻԴ

ԱՐԿԱԴԻ ՍԵՄԵՐՋԵԱՆ

Ցիսուն անց մարդ եմ եւ անվարան կարող եմ ասել՝ իմ ողջ կեանքում աւելի հմայիչ, ազնուաբարոյ, խիզախ մարդու չեմ հանդիպել։ Իսկական դիւցազուն էր, անկրկնելի։

1992 Մայիսն էր։ Կրկին մեր հերթապահ ջոկատը գնաց Երասխաւան՝ հերթապահութեան համար զէնք ու զինամթերք ստանալու։ Շտաբում էլ հէնց առաջին անգամ լսեցի խորհրդաւոր կապիտանի մասին, որ երկու շաբաթից աւելի, այդ գօտու դիրքերում անցնելով տեղից տեղ, հերթապահող ջոկատների տղաներին սովորեցնում էր պաշտպանական կառոյցներ ստեղծել, տիրապետել ականանետի գործողութեան նրբութիւններին։ Պատմում էին, որ նրա արձակած արկերը սարսափ էին առաջացնում այն կողմում՝ թշնամու շտաբում ու դիրքերում։ Երեւում էր, որ կապիտանը այդ գործին մեծ իմացութիւն ու հմտութիւն ունէր։

Մեր ջոկատում գրեթէ բոլորն էլ պատերազմական փորձ չունեցող, հողագործ մարդիկ էին։ Անում էին ինչ կարող էին, ինչ պահանջուէր։

Բաւական մութ էր, երբ մեր գլխավերեւում անսպասելի յայտնուեց անծանօթ մէկը։ Նա սկսեց նախատել, որ զգօն չենք ու ոչ մէկս չենք նկատել ո՛չ իր սար բարձրանալը, ոչ էլ մեզ մօտենալը։ Յետո՞յ ինչ, որ թիկունք է։ Պաշտպանական դիրքերում գիշերը զինուորը ո՛չ միայն պէտք է լսել, այլեւ տեսնել կարողանայ, որովհետեւ թշնամին յանկարծ կարող է յայտնուել թիկունքում։ Դժուար չէր արդէն կռահել, որ մեր անընպասելի հիւրը այն կապիտանն էր, որի մասին պատմում էին շտաբում։ Քիչ անց, ինչպէս ներկայացաւ ինքը՝ Արկադի Սեմերջեանը, մեզ համար արդէն ծանօթ ու հարազատ մարդ էր։

Երասխաւանի վրայ թշնամու հերթական գրոհի նախօրէին մեր ընկերներից Աշոտ Ազատեանին մի փոքրիկ համակ տուեց, թէ բան է, իր հետ դժբախտութիւն պատահի՝ համակը հասցնենք իր ընտանիքին։ Յաղթութեամբ պսակուեց այդ օրը մարտը Երասխում։ Արկադիի արձակած արկերը ահ ու սարսափ էին առաջացնում թշնամու շտաբում ու դիրքերում։ Օրեր անց կրկին բարձրանում էինք դէպի դիրքերը, անհամբեր էինք՝ տեսնելու սիրելի կապիտանին։ Ցիսուն անց մարդ եմ եւ

անվարան կարող եմ ասել՝ իմ ողջ կեանքում աւելի հմայիչ, ազնուաբարոյ խիզախ մարդու չեմ հանդիպել: Իսկական դիւցազուն էր, անկրկնելի: Որոշ ժամանակ անց նա մեկնեց Գորիս՝ նրան յուզում էր պնտեղի դիրքերի վիճակը:

Ամիսներ անցան: Դեկտեմբերեան մի իրիկուն հեռուստացոյց են նայում, լուրեր էին հաղորդում ռազմական գործողութիւնների վայրերից: Եւ յանկարծ կարճ ու ժլատ մի նախադասութիւն, որ ցնցեց ինձ՝ Լաչինի մարտերում զոհուեց մայոր Արկադի Սեմերջեանը: Ա՛խ, որքան կարճ է քաջերի կեանքը: Նա մէկն էր նրանցից, ում կեանքը հազար կեանքի արժէք ունէր: Հոգիս փշուր-փշուր եղաւ:

Ծնուել է Երեւանում, 1957 թ.: Սովորել է Բելինսկու անուան դպրոցում, 1981 թ. աւարտել Ուկրաինայի Կոմունարսկ քաղաքի լեռնամետալուրգիական ինստիտուտը՝ շինարար-ինժեների մասնագիտութեամբ: Աշխատանքի վերջին վայրը ոռոտինատեխնիկական իրերի գործարանն էր: 1988 թ. Օրբելու փողոցի վրայ գտնուող ֆիզիոթերապեւտիկ ինստիտուտում հանդիպում է իր կեանքի ընկերուհուն՝ բժշկուհի Նելլիին: 1990ին ծնուել է դուստրը:

Տնեցիները արցունքը կուլ տալով պատմում են, որ երեխայի պէս յափշտակուած էր սահմանների պաշտպանութեան գործով, երբ թախանձում էին չգնալ կամ գոնէ մի քիչ երկար մնալ տանը, ժպտալով մերժում էր. «Ինձ թուրքի գնդակ չի դիպչի»: Երբ երկար էր բացակայում, դստրիկը թոթով լեզուով խնդրում էր տատին՝ ինձ գրկիր Արիկի նման: Հիմա էլ է թախանձում՝ Արիկի նման...

Ես լրագրող չեմ, գրելու փորձ չունեմ, բայց քաջարի Արկադի Սեմերջեանի անմոռանալի կերպարը ստիպեց ինձ գրիչ բռնել: Ուզեցի, որ դուք էլ հաղորդակցուէք իսկական հայորդու նրա էութեանը: Ահա եւ Արկադիի նամակը՝ ուղղուած ընտանիքին, գրուած Երասխի մարտից առաջ.

«Նելլի սիրելիս, թանկագինս, ներիր։

«Ներիր ամէն ինչի համար եւ չարը մի յիշիր...։ Ներիր, որ քեզ դժբախտ գարձրի։ Երեւի մեզ չի վիճակուած միասին ծերանալ։ Դու իրաւունք ունես իմ արարքը դատապարտելու։ Լենոչկան ինձ կը հասկանայ, երբ մեծանայ։ Թող Աստուած պահպանի քեզ ու նրան։ Թող ձերոնք ինձ չարութեամբ չյիշեն։ Համբուրում եմ պինդ։ Աստուած ձեզ փրկի ու պահպանի։ Կրկին համբուրում եմ։ Վաղը կռիւ է լինելու։ Նամակս քեզ կը յանձնի իմ ղեկուորը։

17 Մայիսի 1992 թ. *ՔՈ ԱՐԻԿ»*

Ամէն տողում սիրոյ ու մեղաւորութեան զգացումն է թրթռում՝ ընտանիքից առաւել հայրենիքին էր սիրում... («Առագաստ», 1993, թիւ 7):

Արարատի շրջան,
գիւղ՝ Լուսաւոր

ԵՂԻՇԷ ՋԱԼԱԼԱԹԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՆՈՒԻՐԵԱԼ ԶԱՒԱԿԸ

Աւելի քան հինգ տարի զէնքը ձեռքին հաստատակամօրէն պաշտպանում էր Ասկերան-Աղդամ սահմանամերձ գօտին:

Այլեւս մեզ հետ չէ մի ռազմաշունչ ոգի, մի խոհուն, զուսպ ու հայրենասէր մարտիկ: Այդպիսին էր նա, այդպէս են պատմում նրա մասին: Դժուար է հաւատալ դաժան իրականութեանը, չե՞ս ուզում հաւատալ...

Ծնուել էր 1955ին, Ասկերանի շրջանի Խանաբադ գիւղում (պատմական Զրուէր): Երկու երեխայի հայր էր: Ունէր մայր, երեք եղբայր-ազատամարտիկներ: Մասնակցել է Փառուխի, Քարագլուխի պաշտպանութեանը, Խրամորթի եւ հարազատ գիւղի մօտ տեղի ունեցած ռազմական գործողութիւններին:

Ազատամարտիկ Սուրէն Բաղալեանը զոհուեց Յուլիսի 21ին՝ Աղդամում, կրակաձերթերի վերացման գործողութիւններից յետոյ: Քողարկուած ականի անակնկալ զոհ, անհաւատալի է, որ բազմաթիւ մարտերում ու ամենատարբեր փորձութիւններում կոփուած մարտիկը կարող էր նման ցաւալի պատահականութեան զոհ դառնալ: Մարտիկ, որն աւելի քան հինգ տարի զէնքը ձեռքին հաստատակամօրէն պաշտպանում էր Ասկերան-Աղդամ սահմանամերձ գօտին:

Նայում եմ քո խաղաղ հայեացքին, լսում քո լռութիւնը, իմ եղբայր, ու չե՞մ ուզում յուսախաբուել: Ուզում եմ հաւատալ քո կիսատ թողած արդար գործի յաղթանակին: Եւ կեանքի այս խառնակ ճանապարհներում մխիթարութեան ծայրեր որոնելով՝ ակամայից յիշում եմ մեծ մտածող Պեգիի խօսքերը. *«Երջանիկ է նա, ով ընկել է մարտում՝ յանուն հայրենի հողի, երբ արդար գործի համար նա դիմել է զէնքի»* («Երկիր», 9 Հոկտեմբեր 1993):

ՆԵԼԼԻ ՍԱՀԱԿԵԱՆ

ՀՐԱՆՏ ՄՆԱՑԵԱՆ

Այսպէս փոխուած ճա ինձ ասաց. «Ես երկրում քիչ ապրեցի, եւ եթէ շատ ապրէի, շատ չարիքներ չէին լինի աշխարհում»...
ՏԱՆԹԷ

...Տարածութեան այն հարազատ պատառիկից, որտեղ աշխարհ էիր եկել, սեղմելով ձեռքը ընկերներիդ՝ առաջ անցար: Ածելիից սուրծայր յուշը, եւ վաղը, որի լեռեւում ընկած է մի հայ՝ հիմա կտրատում է սրտերը մեր, ու ցնցում ենք հին-հին յուշերից: Լսո՞ւմ էիր արդեօք, թէ ոնց է անշմարելի վերջը թանձրանում աստիճաններով: Ոչ: Գնալով Մեծ Մարտի՝ դու ինչ-որ մէկի պատուհանից դաշնամուրի հնչիւններ է իր լսում, որ լիշեցնում էին քեզ մանկութեան մասին, այն ամէնի, ինչ երազել ես, սակայն չես հասել:

Այն գիշեր, երբ գետնահողմը ալում էր քո իսկ հնձած ցորենի արտը ու երբ հողը պայթունից ցաքուցրիւ եղաւ, ասացիր՝ ահա եկաւ օրը՝ հասա իմ ժամը:

Պատերազմի զաւակ չէիր, դրա համար էլ Հացի գիւղի բնակիչները քեզ աւելի շատ լիշում են հունձ անելիս, տուն շինելիս, հօտերը արօտ քշելիս եւ խաչքարերի հետ զրուցելիս: Երբ մարտեր չէին լինում, փոշեթաթախ, շոգից թմրած՝ պառկում էիր խոտերին, ձեռքերդ ծալում գլխիդ տակ, աչքերդ լառում աստղերին ու ունկնդրում տիեզերքի ձայնը: Ի՞նչ ժառանգութիւն էր քեզ հասել քո հեռաւոր, հպարտ նախնիներից: Նեղում, տրտմութիւն ու անդորր: Ու անթեղուած կրակ: Փոքրիկ կրակ, որ բորբոքուեց, դարձաւ բոցեղէն հուր, ու տագնապած սրտիդ զարկերը խլացրին անդորրը: Գնացիր՝ նախնեաց թողած սրբութիւններից քերելու օտարի ժանգը, ընձիւղուելու քո արմատներին:

Ասում էիր. «Կեանքը կորցնելը մեծ բան չէ, եւ անհրաժեշտ պահին դրա համար յատուկ քաջութիւն էլ պէտք չէ» («Երկիր», 20 Հոկտեմբեր 1992):

ՆԱՐԻՆԷ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԱՐՄԷՆ ՊԱՐԳԵԻԻ ԺԱՄՀԱՐԵԱՆ

Հերոս հայորդին անձնուիրաբար մարտնչելով, հայրենիքի համար չխնայեց իր կեանքը, յաւերժացնելով մեր պապերի պատգամը:

Զինադադարի անցած առաջին տասնօրեակում եւ այժմ ռազմական գործողութիւններ են կիրառում ազերիների կողմից եւ հայկական ինքնապաշտպանական ջոկատները ստիպուած են լինում հակահարուած տալ թշնամուն:

Ռազմական գործողութիւնների կիզակէտը Մարտակերտի շրջանն է: Ադրբեջանական զինուած կազմաւորումները հերթական անգամ փորձում են գրաւել Զլդրան գիւղը: Ինքնապաշտպանութեան հայկական ուժերին յաջողւում է ետ մղել յարձակումը, սակայն... յաջողութիւնները ուղեկցւում են ցաւալի կորուստներով: Զոհւում է մեր հայրենակից Արմէն Պարգեւի Ժամհարեանը:

Հերոս հայորդին անձնուիրաբար մարտնչելով, հայրենիքի համար չխնայեց իր կեանքը, յաւերժացնելով մեր պապերի պատգամը: Դա լինելութեան պատգամն է, դա հայ ժողովրդի տոհմիկ արեան կանչն է, որ մարտի է կոչում յանուն ազգի յարատեւման, յանուն հայրենիքի սրբազան հողի...

Արմէն Ժամհարեանը ծնուել է 1964 թ. Մայիսի 21ին, աւարտել է Արտաշատի թիւ 5 միջնակարգ դպրոցը: Բանակից զօրացրուելուց յետոյ, 1986ին ընդգրկուել է աշխատանքի ներքին գործերի մարմիններում: 1988 թուից ակտիւօրէն իր ընկերների հետ միասին մասնակցել է Հայաստանի սահմանամերձ շրջանների ինքնապաշտպանական մարտերին, «Արծիւ» գումարտակի 4րդ դասակում: 1992 թ. Սեպտեմբերի 9ին Արցախի Մարտակերտի շրջանի Զլդրան գիւղի պաշտպանութեան ժամանակ թշնամու գնդակից ընկաւ հայորդին...: Ընկաւ, որ ապրի սերունդը, որ ապրի ազգը...

Ցաւերժ փառք քեզ, հայրենիքի անվեհեր զինուոր... (19 Սեպտեմբեր 1992):

«ՆՈԹ»

ԲԱՐՁՈՒՆՔԻ ՎՐԱՅ

Խիզախ մարտիկը զոհուեց այնպէս, ինչպէս ապրել էր՝ բարձունքի վրայ։

Արամ Մարտիրոսեանը զոհուեց Լաչինի միջանցքը պաշտպանելիս՝ 92 թուականի Սեպտեմբերի 28ին, Թիդիք գիւղի մօտ։ Պաշտպանում էին ռազմավարական կարեւոր բարձունքը։ Թշնամին անընդհատ հրետակոծում էր։ Արամը ջոկատի տղաներին ստիպեց իջնել ներքեւ, ապահով թաքստոց։ Ինքը մնաց բարձունքի վրայ՝ հսկելու եւ գրոհի դէպքում նշան տալու։ Նոր էին դիրքեր փորելու, խրամատները դեռ սաղ էին։ Իրար յետեւից պայթում էին արկերն ու ականները։ Զարգուշակ ֆշշում էին բեկորները։ Նրանցից մէկն էլ խոցեց Արամին։ Խիզախ մարտիկը զոհուեց այնպէս, ինչպէս ապրել էր՝ բարձունքի վրայ։

Աւելի քան չորս տարուայ մարտական կենսագրութիւն ունէր։ Քաղաքի չէր, բայց անդամագրուել էր Քաղաքի ազատամարտիկների ջոկատին։ Բազմաթիւ մարտերի էր մասնակցել, պաշտպանել էր Հայաստանի սահմանները, մարտնչել էր Արցախում։ Քաջ, մարդամօտ ու ընկերասէր մարտիկի համբաւ ունէր։ Միշտ կրակի առաջին գծում էր, հարկ եղած դէպքում անվարան վտանգում էր կեանքը, պաշտպանում ընկերներին։ Մահացու վիրաւոր՝ շարունակում էր ոգեւորել ու խրախուսել ջոկատի անդամներին, կոչ անում զէնքը վայր չդնել։

Քաղաքի ջոկատը անցեալ տարուայ ամրան վերջին Լաչինի միջանցքում էր։ Այնտեղ էր նաեւ Արամի ուսադ եղբայրը՝ Էդիկը։ Արամը վախճանուեց նրա ու զինակից ընկերների ձեռքերի վրայ։ Եւ իր մահով աւելի ամրապնդեց մինչեւ յաղթանակ մարտնչելու նրանց երդումը։

Երբ խմբագրութիւն եկաւ Արամի մասին պատմող նամակը, որչափ աւելի մանրամասն ծանօթանալ նրա մարտական կենսագրութեանը, փնտռեցինք եղբօրը՝ Էդիկին ու ջոկատի միւս անդամներին։ Պարզուեց՝ դարձեալ Լաչինի միջանցքում են։ Որոշեցինք սպասել։ Սակայն մօտ երկու ամիս չկարողացանք գտնել նրանց։ Անընդհատ մարտադաշտում էին։ Իսկ երբ Քելբաջարի ազատագրումից յետոյ սկսուեց թշնամու կենդանի ուժի եւ տեխնիկայի կուտակումները Լաչինի միջանցքի հարաւային մասերում, պարզ դարձաւ, որ Արամի մարտական ընկերները չեն վերադառնայ այնքան ժամանակ, քանի դեռ վտանգը չի վերացել։ Բոլորիս լաւ յայտնի է, որ Ադրբեջանի կողմից Հայաստանին ու Արցախին սպառնացող վտանգը կը վերանայ միայն մի դէպքում. երբ Ճանաչուի Արցախի անկախութիւնը եւ հաստատուի խաղաղութիւն։ Այդ սուրբ նպատակի համար զոհուեց Արամը։ Այդ սուրբ նպատակին են ծառայում նրա մարտական ընկերները, բոլոր նրանք, ովքեր թշնամուն դէմ-յանդիման կանգնած են բարձունքի վրայ՝ ինչպէս Արամը («Երկիր», 23 Մայիս 1993)։

Ե. Ս.



ՈՉ ԹԷ ԽՕՍՔՈՎ, ԱՅԼ՝ ԶԷՆՔՈՎ

Նրա կուսակցությունը հայ ժողովուրդն էր։ Առաջնորդում էր հանրայայտ երգի տողերով՝ «Համոզված ենք, որ միայն զէնքով կայ Հայոց փրկութիւն»։

Հայրենիքի համար զոհուածների թիւն աւելացաւ եւս մէկով։ Զոհուեց Տաւուշի շրջանում տեղի ունեցած բոլոր կռիւներին մասնակցած Սամուէլը։ Զոհուեց՝ չբոլորած 33 տարին։ Յունուարի 9ին նրա 33ամեակն էր բոլորելու...

Աւարտել էր Բերդի թիւ 1 միջնակարգ դպրոցը։ Զինուորական ծառայութիւնից յետոյ մի քանի տարի բանուոր է աշխատել Բիւրեղաւանում։ Բայց հայրենի Տաւուշը կանչում էր։ 1986 թ. վերադարձաւ տուն։ Սկզբում փականագործ էր Տաւուշի շրջկոոպի աւտոտնտեսութիւնում, յետոյ՝ Բերդի ռելէի գործարանում։

Եկաւ 1988 թիւը։ Ինչպէս բոլորս, նա եւս մտաւ Ղարաբաղեան շարժման մէջ։ Սակայն հէնց սկզբից գիտակցեց, որ Ղարաբաղի անկախութիւնը պէտք է պաշտպանել ոչ թէ խօսքով, այլ՝ զէնքով։

1989 թ. Տաւուշի շրջանի սահմաններում լուսեցին թշնամու առաջին կրակոցները։ Մի խումբ քաջեր՝ Անդրանիկ Զուլիակեանի գլխաւորութեամբ, ստեղծեցին մարտունակ ջոկատ, որը յաջողութեամբ պահում էր ողջ սահմանը։ Սամուէլը մասնակցեց այն բոլոր մարտերին, որ տեղի ունեցան Պառաւաքարում, Ներքին Կարմիրաղբիւրում, Մովսէսում, Չինարիում, Այգեձորում։ Կուում էր համոզուած, որ արդարութիւնը վերջապէս կը յաղթի։ Նրա կուսակցությունը հայ ժողովուրդն էր։ Առաջնորդում էր հանրայայտ երգի տողերով՝ *«...Համոզուած ենք, որ միայն զէնքով կայ հայոց փրկութիւն»։*

Ցաւ էր ուրախացել, որ Հայաստանում վերջապէս ստեղծւում է ազգային բանակ, եւ Տաւուշում երեւացել են առաջին նորակոչիկները։

Սամուէլի կեանքի թելը կտրուեց Դեկտեմբերի 30ին, Ներքին Կարմիրաղբիւր գիւղի մօտ մղուած մարտի ժամանակ։ Սամուէլը զոհուեց, բայց նա կենդանի է, քանի որ իմացեալ մահն անմահութիւն է... (6 Յունուար 1993)։

«ԵՐԿԻՐ»

[redacted]



[redacted]

ՀԱՒԱՏԱՆՔ...

...Հաւատանք, որ հայրենիքի փրկութեան համար զոհաբերուած ազատամարտիկների հոգիները հաւաքւում, մի աներեւոյթ ու զօրաւոր բանակ են դառնում, ուժ ու ոգի հաղորդում իրենց ապրող ընկերներին։

...Հաւատանք, որ հայրենիքի փրկութեան համար զոհաբերուած ազատամարտիկների հոգիները հաւաքւում, մի աներեւոյթ ու զօրաւոր բանակ են դառնում, ուժ ու ոգի հաղորդում իրենց ապրող ընկերներին։

...Հաւատանք, որ նրանց անաւարտ գործը կը շարունակեն ուրիշ հայորդիներ։

Շատերի նման Զաւէն Խորէնի Օրդեանը եւս իր կեանքը զոհաբերեց հայրենիքի փրկութեանը։ Ծնուել է 1956ին, Տաւուշի շրջանի Այգեձոր գիւղում։ Ծառայել է Սովետական բանակում, իսկ 1990ից Դիլիջանի «Վահրամ Պահլաւունի» երկրապահ ջոկատում։ «Ստարշինան», այսպէս էին անուանում նրան ջոկատում, մասնակցել է Նոյեմբերեանի Ոսկեպար, Ծաւարշաւան, Իջեւանի Կիրանց, Բերքաբեր, Կրասնոսելսկի, Վահան, Ջիլ եւ Արտանիշ գիւղերի պաշտպանութեանը։

Նոր տարուայ նախօրեակին որոշեց գնալ հայրենի գիւղ՝ Այգեձոր՝ մօր հետ դիմաւորելու Նոր տարին։ Հարեւան Զինարի գիւղը օգնութեան կարիք ունէր։ Զաւէնը, ի հարկէ, չէր կարող նստել տանը։ Երկու օր իր համագիւղացիների հետ մասնակցեց գիւղի պաշտպանութեանը։ Եւ 1993 թ. Յունուարի 2ին զոհուեց։

Զոհաբերուեց կեանքի համար, լոյսի համար։

Զոհաբերուեց, որ ապրողներս հաւատանք... («Երկիր», 16 Յունուար 1993)։

ԴԻԼԻՋԱՆԻ «ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՒՈՒՆԻ» ԵՐԿՐԱՊԱՀ ՋՈԿԱՏԻ ՄԱՐՏԻԿՆԵՐ

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ռուբէնը իր փոքրիկ մարմնով, բայց բարձր հոգով եւ կամքով չվախեցաւ ոչ մի տեսակի դժուարութիւնից եւ իր կեանքը չխնայեց պաշտպանելու իր ընկերներին եւ հայրենիքին:

Բալայեան Ռուբէն Ստեփանի. ծնուել է 1973 թ. Օգոստոսի 13ին: Սովորել է Երեւանի Ղ. Աղայեանի անուան թիւ 63րդ դպրոցում՝ 1987 թ. 1988 թ. աւարտում է Երեւանի 7րդ տեխնիկական ուսումնարանը. միաժամանակ սովորում է Լենինեան շրջանի թիւ 27րդ երեկոյեան դպրոցը՝ 1991 թ: Նոյն թուականի աշնան զօրահաւաքի է կանչւում, Արաքսիրի շրջանի զինուորական կոմիսարիատից պարտադիր զինուորական ծառայութեան. անցնում է բժշկական քննութեան: 1992 թ. Փետրուարի 11ին ուղարկում են Վրաստան՝ Մանգլիսի զինուորական պատրաստութեան չորս ամիսով: Վերադառնում է Երեւան. անմիջապէս տեղափոխում են Աշտարակի զինուորական վաշտում շարունակելու ծառայութիւնը: Աշտարակի վաշտից յաճախակի տեղափոխուել են Լաչինի շրջան՝ մարտական գործողութիւնների մասնակցելու: Ռուբէնը իր փոքրիկ մարմնով, բայց բարձր հոգով եւ կամքով չվախեցաւ ոչ մի տեսակի դժուարութիւնից եւ իր կեանքը չխնայեց պաշտպանելու իր ընկերներին եւ հայրենիքին: Զոհուեց 1993 Յունուարի 14ին, հերթական անգամ մարտական գործողութիւնների ժամանակ, Լաչինի շրջանում: Ռուբէնը չհասցրեց լրանալ իր 20 տարին, բայց հասցրեց իր փոքր եւ համեստ լուման ներդնել այսօրուայ եւ ապագայ հայութեան համար (Ձեռագիր):

ԲԱԼԱՅԵԱՆ Ս. Թ.

ԵՐԵՔ ՔԱՅԼ

Վաշտի մի մասը մեկնելու էր Լաչին՝ մարդասիրական միջանցքը պաշտպանելու։ Ընտրությունը կամաւոր էր։ Երբ հրամանատարը հրահանգեց՝ Լաչին մեկնել ցանկացողներ՝ երեք քայլ առաջ, գրեթէ ողջ վաշտը առաջ եկաւ։

92 թուականի Դեկտեմբերի 28ին յատուկ գնդի Աշտարակի վաշտում մարտական ապգնապ յայտարարուեց։ Վաշտի մի մասը մեկնելու էր Լաչին՝ մարդասիրական միջանցքը պաշտպանելու։ Ընտրությունը կամաւոր էր։ Երբ հրամանատարը հրահանգեց՝ Լաչին մեկնել ցանկացողներ՝ երեք քայլ առաջ, գրեթէ ողջ վաշտը առաջ եկաւ։ Նրանց մէջ էր նաեւ Ա գնդի գասակի Ա ջոկի հրամանատար Լեւոն Օհանեանը։

Ընդամենը երեք քայլ, բայց··· այդ քայլերը հէնց այնպէս չեն արուում։ Դրանք քայլեր են, որ խօսում են բնաւորութեան, կերտուածքի, կամքի, հայրենիքի հանդէպ վերաբերմունքի ու զինուորի պատասխանատուութեան մասին։ Ու նաեւ նախապատմութիւն ունեն, ընթացք···

Լեւոնը առաջին քայլն արեց թերեւս այն օրը, երբ թողեց ուսումն ու գնաց բանակ։ Պոլիտեխնիկ ինստիտուտի 4րդ կուրսի ուսանող էր։ Գերազանց աւարտել էր դպրոցը, լաւ մասնագէտ էր լինելու։ Սակայն հայրենիքը զինուորի կարիք ունէր։ Ու Լեւոնն ընտրեց զինուորի մասնագիտութիւնը։

Երկրորդ քայլին արդէն ծանօթ էք· երկրորդը երեք քայլ առաջն էր։

Իսկ երրորդը Յունուարի 14ին էր։ Մառախլապատ ձմեռային այն օրը, երբ թշնամին գաղտագողի փորձում էր սողոսկել Լաչինի միջանցքը, կտրել Արցախը Մայր հայրենիքին կապող արիւնաւոր երակը։ Կատաղի մարտ էր բորբոքուել։ Թշնամին յարձակւում էր, մերոնք՝ անհերթ պաշտպանւում։ Լեւոնը վիրաւորուեց ոտքից։ Նրան տեղափոխեցին բլինդաժ, առաջին օգնութիւն ցոյց տուեցին։ Սակայն Լեւոնը

չէր կարող մարտին անմասն մնալ։ Ցաւն յաղթահարելով՝ սկսում է լիցքաւորել ինքնաձիգի պահունակներն ու գնդացրի ժապաւէնները։

Հերթական անգամ, երբ մարտիկներից մէկը՝ Ռուբէնը, եկաւ լիցքաւորուած պահունակներն ու ժապաւէնները տանելու, ընկաւ թշնամու նշանառուի գնդակից։ Լեւոնը տեսաւ ընկերոջ ընկնելը։ Վիրաւոր ոտքը քարշ տալով՝ ելաւ բլինդաժից, սողէսող հասաւ վիրաւորին, չալակեց ու... ընդամէնը երեք քայլ էր մնացել մինչ ապաստարան, երբ նշանառուի գնդակը հասաւ նաեւ նրան...

Ցաւօք, ընկերոջը փրկելու խիզախ քայլը, մարտական բնաւորութեան ազնիւ ու վեհ հոգու այդ անմնուէր պոռթկումը վերջինն էր Լեւոնի կեանքում...

...Երեւանի Յովհաննէս Յովհաննիսեանի անուան թիւ 52 դպրոցի նախասրահում «Լուսոյ խորան» վերտառութեամբ վահանակ կայ։ Դպրոցի շրջանաւարտ Լեւոն Օհանեանի լուսանկարն է այնտեղ։ Ներքեւում՝ թարմ ծաղիկներ, որ ամէն օր բերում են աշակերտներն ու ուսուցիչները։ Երեխաները լաւ գիտեն Լեւոնի պատմութիւնը, գիտեն, որ նա զոհուեց յանուն հայրենիքի, ընկերոջ կեանքը փրկելիս, երբ անում էր իր կեանքի անմենաթախտորոշ, ամենավճռական քայլը...

Գիտեն նաեւ, որ օրերից մի օր իրենց տուին էլ ծառանալու է քայլի ընտրութեան անհրաժեշտութիւնը։ Ու քայլելու են Լեւոնի հետքերով... («Երկիր», 10 Օգոստոս 1993)։

Յ. Ս.



Ընդհանուր տեսարան, Լաչինի շրջան

ԱՆԱՒԱՐՏ ԵՐԳ

Ամուսնացած չէր ու ժառանգ չթողեց։ Զէնքն էր նրա զաւակը, առագաստը՝ հայոց լեռները։

...Զրուցելիս անպասելիօրէն կը լռէր, ժպիտը կը մթագնէր մի պահ ու ոչ իր ձայնով, զրոյցի նիւթից չեղուելով, յանկարծ կ'ասէր.

–Գիտէ՞ք ինչն է ցաւալի,– ու պատասխանի չսպասելով՝ կը շարունակէր,– ցաւալին այն է, որ բոլորս ուզում ենք ապրել...

Ի հարկէ, ինքն էլ էր ուզում ապրել։ Այն էլ ինչքա՜ն։ Բայց նրանք ովքեր շատ-շատ են ուզում ապրել, ովքեր շատ են սիրում կեանքը, ըստիպուած են կռուել։ Ու քանի որ կռուի ժամանակ զոհերն անխուսափելի են, յաճախ զոհւում են հէնց նրանք, ովքեր շատ են սիրում կեանքն ու շատ են ուզում ապրել։

27 տարեկան էր Սերգէյ Զաւադեանը։ Մնուել էր անիծեալ Սումգայիթ քաղաքում. օտար, թշնամի քաղաք, հայի ձեռքով կառուցուած քաղաք, որի որկորում գուցէ հիմնադրման օրուանից խուլ քլթքլթում էր նախճիրի կարօտը, որը, բարեբախտաբար, Սերգէյին չգտաւ Սումգայիթում։ 1970ին նրանց ընտանիքը տեղափոխուել էր Հայաստան, Աբովեան։ Սակայն այդ պիղծ քաղաքը նաեւ ծննդավայր էր Սերգէյի համար, մանկութեան յուշերի քաղաք...։ Սումգայիթեան ողբերգութիւնը Սերգէյի մանկութեանն հասցուած վէրք էր նաեւ, նախճիր էր նրա յուշերի նկատմամբ եւ վրէժ ու հատուցում էր պահանջում։

Ու Սերգէյը զէնք վերցրեց։ 1989ի աշնանից վրիժառուների շարքերում էր։ Իսկ երբ հայրենիքում վերահաստատուեց Դաշնակցութիւնը, անդամագրուեց յարատեւ կռուի կուսակցութեանն ու այդուհետ մարտնչեց որպէս դաշնակցական։

Մարտնչեց խիզախօրէն, որովհետեւ շատ էր սիրում կեանքը, շատ էր ուզում ապրել։ Մարտնչեց երգը շուրթերին։

Սիրում էր երգել։ Երեւի բոլորից շատ «Մեր հայրենիք» ու «Զայն մը ինձնց»ը։ Երգում էր ե՛ւ յարձակուելիս, ե՛ւ պաշտպանուելիս։ Երգում էր ամենադժուար պահերին անգամ։ Նրա ձայնը հնչել է Շուշիում, Զաբիսլուում, Լիսագորում, Կիլանում, Դրմբոնում, Սրխաւենդում...

Երգը շուրթերի մարտնչում էր նաեւ Յունուարի 14ին՝ Մարտակերտում։ Այդ օրն առաջին անգամ նրա երգը կիսատ մնաց։ Թշնամու արկի բեկորից խոցուած ընկաւ Սերգէյն ու լռեց յաւերժ։ Ամուսնացած չէր ու ժառանգ չթողեց։ Զէնքն էր նրա զաւակը, առագաստը՝ հայոց լեռները։ Այս ու այսքանն էր նրա ունեցուածքը։ Եւ այդ կտակեց ընկերներին։ Ու մի երգ անաւարտ։– «Իր որդիքը արդ կանչում է՝ հանել իւր վրէժ, քէն ու ոխ»... (20 *Յունուար*, 1993)։

Յ. Ս.

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ



«Մեր ուժն է մեր անձնազոհութիւնը, հայրենասիրութիւնը եւ Արցախը ազատագրուած տեսնելու իղձը»:

Արա Գէորգի Ցարութիւնեան. ծնուել է 1972ին, Բաղրամեանի շրջանի Արաքս աւանում: Զոհուել է 1993ի Յունուարի 15ին, Ղազանչիի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Այս չար ու ժլատ թուերի միջեւ վիթխարի կենսագրութիւն կայ, որ ապրած տարիների քանակով չի գրւում, այլ՝ կենսաձեւով: Բայց հարիւր տարի ապրած մարդ կայ՝ ընդամէնը մի քանի օրուայ կենսագրութեամբ: Բնաւ կենսագրութիւն չունեցող մարդ էլ կայ, իսկ Արան ամբողջ 21 տարուայ կենսագրութիւն թողեց, որովհետեւ կեանքը նուիրեց հայրենիքի պաշտպանութեանը. կռուեց, զոհուեց, անմահացաւ:

1991 թ. Յունուարից Հ. Յ. Դ.ի անդամ էր, առաջին վաշտի զինուոր: Մասնակցեց Լաչինի միջանցքի համար մղուող մարտերին: Կամաւոր, անփորձ զինուոր էր: Կռուեց ու զգաց, որ պատերազմը, նուիրումից զատ գիտելիք է պահանջում: Վերադարձաւ Հայաստան, ծառայութեան անցաւ հանրապետութեան ռազմական ուժերում: Անթերի տիրապետեց տանկիստի մասնագիտութեանը եւ իր դիմումի համաձայն կամաւոր մեկնեց մարտական գործողութիւնների շրջան, մասնակցեց Լաչինի պաշտպանութեանը: Ապա կրկին անդամագրուեց իրենց շրջանի կամաւորական ջոկատին եւ մեկնեց Արցախ: Իր տանկով մասնակցեց Մարտակերտի շրջանի պաշտպանութեանը: Մարտընչեց հերոսաբար: Զոհուեց եւ կերտեց կենսագրութիւն՝ անմար հետք թողնելով ընկերների սրտում: Ահա մի հատուած Արայի հօրը՝ Գէորգ Ցարութիւնեանին ուղղուած մարտական ընկերների եւ հրամանատարութեան նամակից. «...Այս փոքրիկ հայկական հողի վրայ գնում է մահու եւ կեանքի անհաւասար կռիւ: Մեր ուժն է մեր անձնազոհողութիւնը, հայրենասիրութիւնը եւ Արցախը ազատագրուած տեսնելու իղձը:

«Այդ օրը թէժ մարտ էր: Հասել էր այն վճռական պահը, երբ թուով գերակշռող թշնամին, մեր տղաների անյողդողդ կամքի առջեւ ընկճուած, կորուստներ տալով նահանջում էր: Յաջողութիւնից ոգեւորուած հայ քաջորդիները հարուած հարուածի յետեւից էին հասցնում թշնամուն: Այդ օրը մերոնք արդէն խփել էին թշնամու 5 կործանիչ:

«Արան իր տանկով ապահովում էր առաջին գծի հետեւակի կողային դիրքերը՝ Մարտակերտի շրջանի Ղազանչի գիւղի բարձունքներում: Սակայն թշնամու արկը գտաւ խիզախ հայորդուն:

«Դուք պէտք է հպարտանաք, որ ունէք Արա զաւակ: Նա չի զոհուել, կըռւում է մեր շարքերում՝ ուժ տալով իր զինակիցներին, տալով հայրենասիրութեան նոր լիցք ու եռանդ:

«Խոնարհում ենք մեր գլուխը Ձեր առաջ» (9 Փետրուար 1993):

«ԵՐԿԻՐ»

ՀԱՅՐԵՆԻՔԸ ԴՈՒ ԳԵՐԱԴԱՍԵՑԻՐ ԱՄԷՆ ԻՆՉԻՑ

Այդպիսիք ի վերուստ ընտրել են մահ կամ ազատութիւն խորհուրդը, այն, որ մահը բոլորովին էլ մեռնելը չէ...

Նորայր Մարութեանի մահուան լուրն անսպասելի էր ու դաժան։ Թչերին էր յայտնի, որ նաեւ ազատամարտիկ է։ Իր մասին ընդհանրապէս սակաւախօս էր։ Դրա փոխարէն անընդհատ գործում էր, գործի մարդ էր։ Մէկ կարող էր պատկերացնել, որ նրա հմուտ լրահաղորդումներն ու խորիմաստ յօդուածները գրուած են ճակատամարտերի ընդմիջումներին։ Նրա աշխատանքային գործուղումները փաստօրէն եղել են միաժամանակ ուղեւորութիւններ դէպի մարտադաշտը։ Շատ տեղերում է կռուել Նորայրը, մասնակցել է նաեւ հարազատ շրջանից նահանջի բոլոր պաշտպանական մարտերին։ Նա խորութեամբ է վերապրել հայրենի հողը թշնամուն թողնելու ողբերգութիւնը, հոգեվիճակ, որը կարող էր յուսահատութեան մատնել շատերին, սակայն ոչ Նորայրի նման մարդուն։ Նա կարողանում էր արտակարգ տոկունութեամբ յաղթահարել կեանքի ձախորդութիւնները եւ միշտ մնալ ոգու ինքնահաւասար տիրոյթում։ Աւելորդ են այն տարակուսանքներն ու տրտունջները, թէ ինչու Նորայրը, չենթարկուելով աշխատանքային վարգապահութեանը», վտանգեց իր կեանքը...։ Այդպիսիք ի վերուստ ընտրել են մահ կամ ազատութիւն խորհուրդը, այն, որ մահը բոլորովին էլ մեռնելը չէ...։ Ազատամարտիկի ընտրութիւնը թելադրուած

1993 թ. Յունուարի 17ին Մարտակերտի ռազմաճակատում ստացած վէրքերից մահացաւ «Ազատամարտ»ի թղթակից Նորայր Եուրիի Մարութեանը։ Նորայր Մարութեանը ծնուել է 1966 թ. Փետրուարի 1ին, ԼՂՀ Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գիւղում։ Գերազանցութեամբ աւարտելով տեղի միջնակարգ դպրոցը, այնուհետեւ զօրակոչուել է բանակ։ Զօրացրումից յետոյ ընդունուել է Երեւանի Պետական համալսարանի բանասիրական կրթաճիւղի լրագրութեան բաժին եւ 1992 թուականին գերազանց գնահատականներով աւարտել այն։ Նոյն թուականին Նորայր Մարութեանը լրագրութեան բաժնի ասպիրանտ էր։ 1992 թուականի Սեպտեմբերից Նորայր Մարութեանը Հ.Յ.Դաշնակցութեան «Ազատամարտ» շաբաթաթերթի արցախեան թղթակիցն էր։

է կամքի ներաւակայ վճիռներով է տարբերութիւն վարձանի՝ պետերի կամքին հլու-հնազանդ ենթարկուելու հոգեբանութեան։ Ազատամարտիկ-լրագրողի մարտին մասնակցութիւնը թելադրուած էր անհրաժեշտութեամբ։ Ցամենայնդէպս, այսպէս է մեկնաբանում փաստը զօրամասի հրամանատարը։ Իսկ դա եղել է այսպէս. Յունուարի 17ին Մարտակերտի գնդի հրամանատար Նորիկ Դանիէլեանը պատուիրել է Նորայրին սպասել Առաջաւոր գիւղում՝ մինչեւ իրենց մարտից վերադառնալը։ Սակայն մարտի վայրից մի կերպ բուժկէտ հասած զինուորներից իմանալով, որ թշնամու մեծաքանակ զօրքին դժուարութեամբ են դիմագրաւում հայ մարտիկները, նա վերցնելով վիրաւոր զինուորի գէնքը նետւում է մարտադաշտ։ Թշնամին յետ է նահանջում մեր զինուորների հակայարձակումից, սակայն Նորայրը ծանր վիրաւորւում է, եւ բժիշկների ջանքերն ի զուր չէին փրկելու նրա կեանքը։ Նորայր Մարութեանի մարմինը հողին յանձնուեց Մասիսում։ Մայրական հրաժեշտի խօսքի վերջին բառերը. «Նորիկ ջան, հայրենիքը դու գերադասեցիր ամէն ինչից» («Երկիր», 29 Յունուար 1993)։

ԱՇՈՏ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՆԱ ՄՇԱԿ ԷՐ ՆԱԵԻ ՄԱՐՏԻ ԴԱՇՏՈՒՄ

Երդում եմ պատուիս եւ հայրենիքիս վրայ... նաեւ կեանքիս գնով... Դաշնակցական լինելու իրաւունքը պէտք է վաստակել։ Ես ինձ դեռ արժանի չեմ համարում...

Քարակերտ աւանի ընակիչները թէեւ եկել են տարբեր վայրերից, բայց քարերի դէմ մղած յամառ կռիւը շատ շատերին քարից ամուր է դարձրել։ Իսկ հողը, որ ստեղծել են իրենց ձեռքով, քարերից ազատագրելով, մշակի համեստութիւն եւ յամառութիւն է ներարկել քարակերտցիներին։ Ու ծնունդով ախալքալաքցի Գառնիկ Գէորգեանը, թերեւս, քարակերտ էր նաքսան քարակերտցի դառնալը՝ ծնունդով։ Նրա նմաններն են ստեղծում հայրենիք, պետութիւն, ժողովուրդ եւ հող։ Նրանք են աղը երկրի։ Ե՛ւ խաղաղութեան ժամանակ, Ե՛ւ պատերազմի։

Երբ 88ին Գառնիկը վերադարձաւ բանակից, Հայաստանն արդէն ալեկոծուում էր։ Արցախեան արդար գաղը թմբիրից հանել ու զօրակոչել էր շատ շատերին։ Ու թէեւ հոգով-մտքով սահմաններում ու Արցախում էր, բայց մնաց իր առանձին սիրոյ հողի հետ։ Մինչեւ 92 թուականի Նոյեմբերի 12ը։ Այդ օրը զգաց, որ հող հայրենին կանչում է իրեն այլ մի ձայնով՝ ռազմի ձայնով։ Անդամագրուեց կամաւորական ջոկատին, գնաց Արցախ՝ արեան պարտքը տալու։

Նոյեմբերի 12ից մինչ զոհուելը՝ 93ի Յունուարի 21ը, մարտնչեց Կիլանի Սրխաւենդ ճակատում։

Մարտնչեց՝ ինչպէս կռուում էր քարերի դէմ։ Գիտէր, որ թշնամին քար է ու պիտի գլորել անպէտք, որպէսզի հողն ազատագրուի, չնչի լիաթոք ու անաղարտ պտուղ տայ։ Սառնասիրտ ու յամառ էր մշակի նման։ Մշակ էր նաեւ մարտի դաշտում։

Ահա մի հատուած գումարտակի շտաբի պետի բնութագրական խօսքից. «Գառնիկը օժտուած էր մարտիկի լաւագոյն յատկութիւններով։ Սառնասիրտ էր։ Երբեք խուճապի չէր մատնուում։ Կարողանում էր կազմակերպել, իր յետեւից տանել մարտական ընկերներին։ Ոգեւորում էր կռուով, վարքով, խօսքով։ Անվախ էր խենթութեան աստիճանի։ Միշտ առաջին գծում էր։

«Երբ հարցրեցի՝ դաշնակցա՞կան եւ, կարճ լռութիւնից յետոյ, կարծես ինքն իրեն տրուած հարցի պատասխանելով, ասաց- «Երդւում եմ պատուիս եւ հայրենիքիս վրայ... նաեւ կեանքիս գնով... Դաշնակցական լինելու իրաւունքը պէտք է վաստակել։ Ես ինձ դեռ արժանի չեմ համարում...»։

...Իսկ մարտական ընկերների համոզմամբ՝ Գառնիկը դաշնակցական էր էութեամբ՝ նրա կեանքը նուիրում էր հայրենիքին, պինդ էր՝ որձաքարի նման եւ մշակի պէս համեստ ու նուիրուած (5 Ապրիլ, 1993)։

«ԵՐԿԻՐ»

ԹՇՆԱՄՈՒՆ ԻՍԿ ԶԱՐՄԱՑՐԱԾ ՀԵՐՈՍԸ

Մանուէլը վիրաւորուեց թեւից եւ ոտքից։ Արնաքամ էր լինում, բայց շարունակում էր կռուել։

1993 թ. Փետրուարի 6ի լոյս 6ի գիշերը Քեանքլիկի բարձունքում (Նոյեմբերեանի եւ Ղազախի սահմանամերձ հատուածում) շրջապատման մէջ հերոսաբար զոհուեց Մանուէլ Քէշիշեանը։ Հետախուզական ջոկատը շրջապատումից դուրս բերելու համար Մանուէլը իր վրայ վերցրեց հակառակորդի կրակը՝ փրկելով չորս ընկերների կեանքը։ Հակառակորդը խուճապի էր մատնուել՝ չհասկանալով, թէ այդ ինչ մարտիկ է, որ կարողանում է ճարպկօրէն դիրքերը փոխելով գետնին սեղմել իրենց՝ ի չիք դարձնելով թուական գերակշռութիւնը։ Թշնամին ըզգաց, որ միւս հայորդիներին յաջողուել է դուրս պրծնել, եւ էլ աւելի կատաղած սեղմեց կրակէ օղակը։ Մանուէլը վիրաւորուեց թեւից եւ ոտքից։ Արնաքամ էր լինում, բայց շարունակում էր կռուել։ Վերջացաւ պահունակը։ Մէկ ձեռքով դժուար էր փոխել։ Սողալով իրեն գցեց թուրքերի խրամատը եւ մի կերպ զսպելով վէրքերի ցաւը՝ փոխեց պահունակն ու շարունակեց կրակել։ Ադրբեջանցի սպան, ապշած հայորդու խիզախութիւնից եւ զգալով, որ նա ծանր վիրաւոր է, առաջարկեց յանձնուել։ Պատասխանը եղաւ քրքիջն ու մահամերձ հերոսի վերջին կրակահերթը...

Դիակի փոխանակման ժամանակ թուրք սպան պատմեց այս ամէնը։ Հիացած մարտիկի խիզախութիւնից՝ նա արգելել էր իր ասկեարներին «հանել իգիթի ոսկէ ատամները»։ Նա զինուորական պատիւ էր բռնել հերոսի դին տեղափոխելիս։

29րդ գարունն էր բոլորելու Մանուէլ Քէշիշեանը։ Նոյեմբերեանի շրջանի Պտղաւան գիւղի բնակիչ, Սիրիայի Հալէպ քաղաքից ներգաղթած Ցարութիւն Քէշիշեանի 6 զաւակներից մէկն էր։ 1991 թ. Օգոստոսից Հ.Յ.Դաշնակցութեանն էր անդամագրուել եւ երկար ժամանակ տեղի կոմիտէի լաւագոյն անդամներից էր։

Նուիրեց իր 29րդ գարունը հայրենիքին՝ պատգամելով շարունակել կիսատ մնացած գործը։ Պատգամեց շարունակել ընկերներին ու եղբօրը, որն այսօր նոյն զօրամասում լրացնում է հերոսի տեղը (17 Փետրուար 1993)։

«ԵՐԿԻՐ»

ՋԻՆՈՒՈՐԸ՝ «ԱՐՑԱԽ» ԱՆՈՒՆՈՎ

Թէեւ ծեր եմ, բայց եթէ առողջութիւնս ներէր, ես կը վերցնէի իմ որդու զէնքը եւ կը շարունակէի նրա կռիւը, որը բոլոր հայերիս կռիւն է։

Թարթառի ձորը։ Ի՞նչ կայ այստեղ, որի համար այնքան արիւն է թափւում, որի համար նահատակւում են Արցախի որդիները։ Թարթառի ձորը Ղարաբաղի սիրտն է, այստեղ է գտնւում միակ հզօր էլեկտրակայանը, որն աշխատելով Թարթառ գետի ջրերի բնական հոսքով, էլեկտրական հոսանքով բաւարարում է ամբողջ Արցախին, նրան ազատելով արտաքին աշխարհի ողորմածութիւնից։ Այստեղ է գտնւում Սարսանգի ջրամբարը, որը կեանք է տալիս շրջակայ գիւղերի դաշտերին ու այգիներին, սնում Արցախի ամենահարուստ հացի շտեմարանը՝ արդէն մէկ տարի ազերիների ձեռքում գտնւող Մարտակերտի ստորին գօտու դաշտերին, ու նաեւ ոռոգման ու խմելու ջուր մատակարարում Ադրբեջանի մի քանի շրջանների։ Պատահական չէ, որ Թարթառի ձորը դարձել է անդրովկիանոսեան արդէն ոչ անյայտ Պոլ Գոբլի ծրագրի գլխաւոր կէտերից մէկը, ծրագիր, որը անկասկած, ստեղծուել է Թուրքիայում, եւ որը Ղարաբաղը սպանելու «ամենախաղաղ» ծրագիրն է։ Ահա թէ ինչու Արցախի որդիները ինքնակամ նետւում են այս արիւնամած վիհի մէջ։

1993 թուականի Փետրուարի 26։

Այստեղ, Սարսանգի էլեկտրակայանի մատոյցներում զոհուեց ջոկի հրամանատար Հրաչիկը։ Մարտը դաժան էր եղել, ով գրաւէր էլեկտրակայանը, ուրեմն յաղթել է։ Ադրբեջանցիները գիտէին, որ շրջափակումը դեռեւս բոլորը չէ։ Ղարաբաղը կարող են սպանել՝ նրա էներգիայի միակ աղբիւրը գրաւելով։ Հրաչիկը նոյնպէս գիտէր այն, բայց մարտը անհաւասար էր։

Համլետ Սարգսեանի եւ Սերժիկ Ղալայեանի ջոկատները կռւում էին ջրամբարի եւ էլեկտրակայանի տարածքներում։ Լսելով Հրաչիկի զոհուելու մասին, որոշեցին փրկել նրա դիակը, թոյլ չտալ առեւանգելու, չէ որ ադրբեջանցիները նրա գլուխը գնահատել էին հինգ միլիոն ռուբլի։ Այդ գործը ստանձնեց Համլետը։ Ընկերները թոյլ չէին տալիս, քանի որ նոյն գինն էր սահմանուած նաեւ Համլետի գլխի համար։ Համլետի վճիռը վերջնական էր։ Զինով ու սառոյցով պատուած անմատչելի ձորերում գնդակների տարափ էր տեղում։ Թիկունքից թշնամու դիրքերի

վրայ կրակում էին Սերժիկի ջոկատի մարտիկները: Սակայն Համլետը նոյնպէս զոհուեց դեռ ընկերոջ դիակին չհասած: Դա 1993 թուականի Փետրուարի 28ն էր: Դրամ ձեռք բերելու տենչով էին բռնուած ազերիները: Տիրացիր ձորում գտնուող երկու դիակների գլուխներին, եւ տասը միլիոն ռուբլին գրպանումդ է: Այս անգամ արդէն կոիւը մղում էր ոչ թէ էլեկտրակայանի, այլ՝ դիակների համար: Մարտը շահեց Ղալայեանի ջոկատը: Փրկուեցին ընկերների դիակները, որոնք հետագայում ամփոփուեցին Երեւանի Եռաբլուրի գերեզմանոցում:

Այսօր ազատագրուած են Սարսանգի ջրամբարը, էլեկտրակայանը, դրանց մօտակայ Մատաղիս, Մաղավուզ գիւղերը, գրեթէ ողջ Մարտակերտի շրջանը, որոնց համար պայքարեցին, բայց իրենց յաղթանակի բերկրանքը չվայելեցին մեր սուրբ նահատակները:

Համլետ Սարգսեանին իր քաջագործութիւնների համար անուանել էին Արցախ: Նա այդ անունով էր յայտնի նախ «Արամս» ջոկատում, յետոյ՝ ամբողջ Արցախում:

Ինչպէս տարան որդու մահը ծեր ու հիւանդ ծնողները՝ Զոյա եւ Մարտիրոս Սարգսեանները: Իմ զրուցակիցն է հայրը, որը դեռ բոլորովին երիտասարդ մանկակցել է Մեծ հայրենականին, հրաշքով փրկուել մահից, ծանր վիրաւորուել եւ ամբողջ կեանքը ապրում է որպէս հաշմանդամ:

—Իմ որդին զոհուեց, թողնելով երիտասարդ կնոջը, երկու երեխաներին: Մենք բոլորս մահկանացու ենք: Մեր միակ մխիթարանքն այն է, որ մեր որդին զոհուեց հայրենիքի՝ հարազատ Արցախի ազատագրութեան համար: Ջինուորի համար հայրենիքը մնում է հայրենիք, անկախ նրանից՝ այն սոցիալիստակա՞ն է, թէ՞ կապիտալիստական: Ես իմ արիւնը տուել եմ խորհրդային երկրի համար, այն ժամանակ դա էր մեր հայրենիքը եւ պարտաւոր էինք պաշտպանել: Հիմա մեր հայրենիքը անկախ Հայաստանն է եւ մարտնչող Արցախը, որոնց համար զոհուեց իմ որդին: Թէեւ ծեր եմ, բայց եթէ առողջութիւնս ներէր, ես կը վերցնէի իմ որդու զէնքը եւ կը շարունակէի նրա կռիւը, որը բոլոր հայերիս կռիւն է:

Թարթառի աւազանում են Համլետ-Արցախի հօր եւ մօր պապենական գիւղերը՝ Կոճողոտը եւ Զլդրանը: Թէեւ ծնուել է Երեւանում, նա կապուած է եղել այս գիւղերի հետ եւ մանկութիւնից հարազատ են դարձել այս վայրերը: Ահա թէ ինչու Համլետը Շարժման սկզբից Երեւանում թողեց ծնողներին, երիտասարդ կնոջը, երեխաներին եւ նետուեց Արցախի ազատագրութեան արբազան պատերազմի մէջ: Այն ժամանակ ղարաբաղցիները դեռեւս մարդ սպանել չգիտէին, բայց պէտք է սովորէին: Պէտքէ կա՛մ սպանէին, կա՛մ սպանուէին: Ցիշում ենք, Անդրկովկասի մուսլիմանների շէյխը դիմեց իր ժողովրդին, ասելով՝ այդպիսի դաժանութիւններ մի արէք, թէ չէ, եթէ հայերը նոյնը սովորեն ձեզանից, այն ժամանակ դժուար կը լինի:

Նորից լսենք Համլետ-Արցախի հօրը՝ Մարտիրոս Սարգսեանին՝

—Ղարաբաղցին մարդ սպանող չէ: Դեռ մանկութիւնից երեխաներին սովորեցնում էինք, որ քարով մարդուն չեն խփի, քարի մէջ արիւն կայ: Այդպէս էլ իմ որդին մեծացել էր որպէս քարի ղարաբաղցի: Իսկ երբ

լսեցինք Սումգայիթի, Կիրովաբաղի գազանութիւնների մասին, Համլետը միանգամից փոխուեց ու գնաց պաշտպան կանգնելու մեր հայրենակիցներին: Ադրբեջանցիները մեզ ստիպեցին, որ սովորենք մարդասպանութիւնը: Ղարաբաղցին բնութիւնից բարի է, բայց երբ նրա ձեռքերը արիւնոտուեն, այլեւս դժուար է դիմադրելը, մանաւանդ երբ զոհասեղանին է դրուած Արցախի եւ արցախցու լինել-չլինելու հարցը: Մենք մեր որդուն դաստիարակելիս հայրենասիրական ճառեր չենք ասել, երբ Արցախը նեղութեան մէջ էր, մենք՝ Համլետի ծեր ու հիւանդ ծնողներս, արցունք էինք թափում, պարզուեց, որ իմ որդին պատրաստ էր ոչ թէ արցունք, այլ իր արիւնը թափելու:

Եւ այսպէս, ղարաբաղցի բարեսիրտ երիտասարդի ձեռքերը արիւնոտուեցին: Նրան ստիպեցին, նրանից հէնց իրենք՝ ադրբեջանցիները պահանջեցին՝ սովորել մարդ սպանելը, թէ չէ կը սպանուի: Կը սպանուեն ղարաբաղցիները, կը սպանուի ազգը: Անձամբ տեսաւ Գետաշէնում ու մարտունաշէնում կատարուած բարբարոսութիւնները, տեսաւ ու վրէժով լցուեց: Եղաւ Էրքեջում ու Մանաշիդում տեսաւ ու սովորեց: Կռուեց Գորիսում: Իր պապենական գիւղ Չլդրանում, Կիչանում ու Դրմբոնում դէմ ելաւ զաւթիչներին, մասնակից եղաւ ծանր մարտերի, ի վերջոյ Կիչանում ու Սրխաւենդում փակեցին թշնամու ճանապարհը դէպի Գանձասար ու Ստեփանակերտ: Շուշին ազատագրող հերոսներից էր: Մեծ ընպատակներից էր Թարթառի ձորի ազատագրումը, որտեղ էլ զոհուեց ինքը: Բայց զոհուածների գործը շարունակուեց: Ազատագրուած է գրեթէ ողջ Մարտակերտի շրջանը, եւ ազատամարտիկների երթը շարունակւում է: Նրանց հետեւում են անմահների հոգիները Եռաբլուրից:

Համլետ-Արցախ Սարգսեանի հայրը՝ Մարտիրոս Սարգսեանը, ասելիք ունի նաեւ Եռաբլուրի մասին:

—Միւս գերեզմանոցների մասին ասելիք չունեմ, բայց այստեղ՝ Եռաբլուրում, պէտք է հաւասարութիւն լինի: Ում հարազատները հարուստ ու կարող մարդիկ են, շքեղ ու հոյակերտ շիրմաքարեր են կանգնեցրել: Ով թողել է միայն ծեր ծնողներին ու որբ երեխաներին, գերազմանն անշուք է: Կը ցանկանայի, որ մեր կառավարութիւնը մի միասնական ձեւ մշակէր, բոլորի վրայ տեղադրէր միանման ու հաւասար շիրմաքարեր: Չէ որ նրանք, անկախ քաջագործութիւնների ու կարողութիւնների չափից, նուիրուել են հաւասարապէս ու ամէն ինչ տուել հայրենիքի համար: Այդպէս էլ պէտք է վարուի հայրենիքը ու խտրութիւն չդնի նրանց միջեւ»:

Եռաբլուրի ձեւաւորման համար պէտք է մրցանակաբաշխութիւն յայտարարուի, որին մասնակցեն թէ՛ հայրենիքի, թէ՛ Սփիւռքի ճարտարապետներն ու քանդակագործները: Չէ որ այստեղ են ամփոփուած նոր Աւարայրի ու նոր Սարդարապատի հերոսների աճիւնները (Մեքենագիր):

ՄԱՐՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ազատամարտիկ Կարէն Օննիկի Խաչատրեանը ծնուել է 1971 թուականի Նոյեմբերի 26ին, քաղաք Երեւանում: Սովորել եւ 1989 թուականին աւարտել է թիւ 169 միջնակարգ դպրոցը: Անմիջապէս անցել է աշխատանքի Լուսին ԱՄՆ տարածքի «Վան-1» կոոպերատիւում: Նոյն թուականի Դեկտեմբերից անցել է ծառայութեան ԽՍՀՄ սեւծովեան նաւատորմում, մեծ դեսանտային «Նիկոլայ Ֆիլչենկով» նաւի վրայ: Զօրացրուել է 1992 թուականի Յունիսի 1ին:

Տուն վերադառնալուց անմիջապէս յետոյ նորից անցել է աշխատանքի նոյն կոոպերատիւում: 1993 թուականի Յունուարից անցել է ծառայութեան հայկական կամաւորական Ա. գնդում, թիւ 36/935 զօրամասում, Յրդ վաշտ, 2րդ դասակ: Փետրուարի 23ին մեկնել է ճակատ, ԼՂՀ Մարտակերտի շրջան: Զոհուել է Սարսանգի ջրամբարի մօտ մղուած մարտերում, 1993 թուականի Մարտի 1ին: Թաղուած է Եռաբլուրում (Ձեռագիր):

Հայրը՝
ՕՆՆԻԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ

* * *

Այո, դեռ կը կանգնեցուի ազգային բանակի առաջին հերոսների յուշարձանը, իսկ մինչ այդ դեռ քանի՞սն են երդուելու նահատակների չիրիմների առջեւ՝ ինչպէս Կարէնը, որ իր նուիրեալ ընկերոջ զոհուելուց ամիսներ անց կամաւոր զինուորագրուեց Ղարաբախի գընդում, եւաւ ոսոխի դէմ եւ իր վերջին հանգրուանը գտաւ Դաւիթ Միքայէլեանի կողքին...։ Եւ Եռաբլուրում նրա աճիւնին հակուած ընկերները խոստովանեցին. «Եթէ Կարէնը չլինէր, մենք նոյնպէս հիմա չէինք լինի...»։ Ու պատմեցին, թէ սպանուած եղբայրների ինչ կոյտ էր գոյացել նրա պաշտպանած դիրքերի առջեւ...

Այո, յանուն հայրենեաց հողի, յանուն մեր ազատութեան մեզանից հեռանում են ազգի ընտրեալ զաւակները։ Արժանի լինենք նրանց արեանն ու սուրբ չիրիմներին, նրանց, որ գալիս են Աւարայրից, Սարդարապատից, մեր պատմութեան հեռուներից... (*«Հայաստան»*, *4 Մայիս* 1993)։

ՅԱԿՈԲ ՍՐԱՊԵԱՆ

ՄԵՆՔ ՏԱՍՆԱՊԱՏԻԿԸ ԿԸ ՎՃԱՐԵՆՔ



Մասնակցեց Զլդրանի, Պողոսագոմերի, Ղազաբաճողի, Կոնոդոտի, Գրմբոնի, Մեհմանայի եւ Սարսանգի ջրամբարի ազատագրման մարտերին: Այդ կռիւներին ան կորցրեց իր մարտական ընկերներ Արթուրին, Սամուէլին, Արայիկին, Օլեգին, Կամոյին, Ալբերտին...: Պողոսագոմերցի եօթերորդ նահատակն ինքը եղաւ: Քաջաբար զոհուեց Մարտի 5ին՝ Դամիրլուի բարձունքը գրաւելիս:

Պողոսագոմերցի այս երիտասարդը մի մատ երեխայ էր, երբ հայրենի հանդերում գառներ էր արածեցնում: Նրան ամէն մի թուփ ու քար հարազատ էր ու անփոխարինելի: Յետոյ շատերի նման դպրոց է աւարտել, բայց շատերի նման չի լքել իր հայրենի եզերքը, իր գիւղը: Տաք տեղ գլուխ պահողներից չէր:

Գիւղում Եուրիկը ե՛ւ որմնադիր էր, ե՛ւ հիւսն, ե՛ւ ատաղձագործ, ե՛ւ մեխանիզատոր...: Նա գիւղ պահող էր, քար ծաղկեցնող:

1988 թուականը բազմահմուտ տղային մի արհեստ էլ սովորեցրեց՝ զէնքով հողը դարաւոր թշնամուց պաշտպանելու արհեստը:

...Թշնամին ամէն միջոցի դիմում էր մաս-մաս ոչնչացնելու արցախահայութեանը եւ միանգամից իւրովի վերջ տալու Ղարաբաղի հարցին: Չկայ արցախցի, չկայ Արցախ: Իսկ հետքերը նրանք ջնջել գիտեն: Այդ նպատակով նրանք փորձում էին Կիչանի մօտ փակել Մարտակերտ տանող մայրուղին եւ շրջկենտրոնը կտրել մայրաքաղաքից: Ամբողջ երեք տարի Եուրիկն իր ընկերների հետ պաշտպանում էր այդ գիծը, բայց... նահանջի դառնութիւնն էլ ճաշակեց:

...Առաջին մարտը Սրխաւենդում էր, յետոյ կռիւներ եղան Գեռատանդում, Նարեշտարում, Ղազանչիում...: Մարտերի ընթացքում նաեւ գիւղատնտեսական աշխատանքներ էր կատարում: Զէնքը ձեռքին նստեց կոմբայնի ղեկին ու ոմբակոծութեան եւ հրետակոծութեան տակ, մօտ 80 տոն նա հացահատիկ փրկեց թշնամուց: Նրա սխրագործութիւններից մէկն էլ դա էր: Հացով էլ են յաղթում թշնամուն՝ սիրում էր ասել նա:

Թուրքը Առաջաձորի մատոյցներն էր հասել: Թշնամին ազատամարտիկների դէմ էր նետել աւելի քան 300 բաշիբոզուկների: Հինգ ժամից աւելի Եուրիկը իր տասներկու արծիւ ընկերների հետ անհաւասար մարտ էր մղում: Աւա՜ղ, 6 հայորդի զոհուեց այդտեղ (թուրքերի սպանուածները տաս անգամ գերազանցում էին):

—Հնարաւոր է, որ մեր զոհերը շատ լինէին, եթէ մեզ չօգնէին մեր քարանձաւները: Մեր նպաստաւոր դիրքերից մենք անխնայ կոտորում էինք թշնամուն եւ ստիպեցինք, որ նա խուճապահար նահանջի,— այդ մարտից յետոյ պատմել է Եուրիկը: Այդ ժպտերես ու համեստ երիտասարդի հետ զրուցելուց յետոյ աւելի էր ամրանում հաւատդ յաղթանակի նկատմամբ: Նահանջի ճանապարհներ տեսած ազատամարտիկի ունքամէջը չէր բացւում: Բայց Նոր տարուայ սկզբներին տրամադրութիւնը այլ էր: Հարցնում էի՝ ի՞նչ կայ: Ասում էր՝ շուտով կը լսէք: Յետոյ հասկացայ, որ հայ ինքնապաշտպանութեան ուժերի սպառազինիչ հակայարձակման ծրագրերն էին նրան տրախացրել: Նա գիտէր մեր փետրուարեան հակայարձակման մասին: Մասնակցեց Զլդրանի, Պօղոսագոմերի, Ղազարաւողի, Կոճողոտի, Դրմբոնի, Մեհմանայի եւ Սարսանգի ջրամբարի ազատագրման մարտերին: Այդ կռիւներին ան կորցրեց իր մարտական ընկերներ Արթուրին, Սամուէլին, Արայիկին, Օլեգին, Կամոյին, Այբերտին...: Պօղոսագոմերցի եօթերորդ նահատակն ինքը եղաւ: Քաջաբար զոհուեց Մարտի ճիշ՝ Դամիրլուի բարձունքը գրաւելիս:

Մի քանի օր յետոյ հանդիպեցի Եուրիկի մարտական ընկերներին:

—Մէկ զոհի դիմաց մենք տասնապատիկ կը վճարենք մեր պարտքը,— ասացին նրանք,— մինչեւ մեր հողում թշնամի չմնայ («Արցախ», 9 Յունիս 1993):

Ս. ՂՈՒԿԱՍԵԱՆ

ԹԱԹՈՒԼԻ ՀԵՏ

Յարութիւն Բաղդասարեան

Սամուէլ Կարապետեան

Հայոց հողը մասունքի պէս երկիրղածօրէն ու հպարտ իր գիրկն առաւ հերոս զաւակների աճիւնները, կրկին ու վերստին մայրացաւ

Թալինի շրջան, Արեգ գիւղ: Ոչինչ չասող տեղանուն, փոքրիկ, անշան բնակավայր... մինչեւ 1991 թ. Ապրիլի 31ը, երբ Հայաստան աշխարհը հպարտ ու ողբերգական ծառս եղաւ՝ առնելով նահատակութեան լուրը Թաթուլ Կրպէեանի ու նրա մարտական ընկերների՝ Սիմոն Աչիգէօզեանի, Արթուր Կարապետեանի, Հրաչ Դանիէլեանի, Վալերի Նազարէթեանի...

Նրանց յուղարկաւորութեան օրը համաժողովրդական սուգ էր եւ համընդհանուր ոգեկոչում: Հայոց հողը մասունքի պէս երկիրղածօրէն ու հպարտ իր գիրկն առաւ հերոս զաւակների աճիւնները, կրկին ու վերստին մայրացաւ: Մայրացաւ նաեւ Արեգը. փոքրիկ, անշան գիւղակ չէր այլեւս, ծննդավայրն էր Թաթուլի, վերջին հանգրուանը անձնուրաց նուիրեալի, որի շիրիմը սրբատեղի էր շատ-շատերի եւ ի հարկէ՝ գիւղի երիտասարդների համար, որոնք այլեւս ոչ թէ սոսկ արեգցի էին, այլ նաեւ Թաթուլի զինակիցներ: Ու թէեւ ի սկզբանէ շատերն էին որդեգրուել հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործին, սակայն Թաթուլի մահը նոր լիցք հաղորդեց նրանց: Թաթուլի ոգին առաջնորդում է նրանց: Սոսկ բառեր չեն սրանք, այլ կեանքով ապացուցուած ճշմարտութիւն, որի վկայութիւնն է արեգցիների ջոկատը: Նաեւ վերջերս նահատակուած երկու խիզախներ՝ Արթուրը եւ Սամուէլը:

Արթուրը (Յարութիւն Բաղդասարեան) 64 թ. ծնունդ էր, երեք երեխայի հայր: Արցախում չէր եղել ու չէր կռուել երբեք: Բայց օրերից մի օր, երբ ջրաղացից տուն էր վերադառնում, տեսաւ Արցախ մեկնող համագիւղացիներին: Ու այդպէս՝ այրաթաթախ միացաւ ջոկատին: Արցախ հասնելուն պէս մասնակցեց Մանիքլու գիւղի բարձունքների ա-

զատագրման մարտերին: Գործողությունը հրաշալի էր կազմակերպված, տղաները մարտնչում էին առիւծի նման, եւ ջոկատն անկորուստ նուաճեց ռազմավարական կարեւոր նշանակութեան բարձունքը: Բայց երբ մարտն աւարտուել էր արդէն, պայթեց ականը, որի բեկորից մահացու վիրաւորուեց Արթուրը: Մարտի ճն էր:

Նրա կողքին գլխահակ կանգնել էին մարտական ընկերները, համագիւղացիները, Սամուէլը: Արթուրն ու Սամուէլը հասակակիցներ էին: Բայց փոքր ինչ տարբեր էր նրանց անցած ուղին: 66 թ. ծնունդ Սամուէլը դաշնակցական էր, Արցախեան շարժման առաջին իսկ օրից կռիւների մէջ էր: Մարտնչել էր Գետաշէնում, Բերդաձորում, Շուշիում, Մարտակերտում: Փորձուած ու քաջ զինուոր էր: Այդ օրը, երբ վիրաւոր ընկերոջն արդէն հանել էին մարտադաշտից, անբացատրելի մի մղումով վերստին բարձրացաւ գրաւուած բլրի գագաթն ու երկար զննում էր շրջակայքը: Ի՞նչը նրան մղեց այդ քայլին՝ անյայտ է: Գուցէ ուզում էր թիրերի խորքում դաջել պատկերը ընկերոջ զոհուելու վայրի եւ այն փոխանցել նրա Իրինա, Արտիոմ, Արմէն զաւակներին: Գուցէ զննում էր թշնամու որջը՝ գտնելու համար այն վախկոտ հրոսակին, որն իր հետքերը քողարկել էր ականապատ դաշտի մացառների տակ:

Վերադարձի ճանապարհին կրկին պայթեց դարանակալ ականը...: Այս անգամ մահացու վիրաւորուեց Սամուէլը:

Նրանց հողին յանձնեցին հայրենի գիւղում, Թաթուլի կողքին: Եւ կրկին խոնարհուեց հայոց խաչը ազատամարտիկների լուսապակ ճակատների վրայ: Եւ Արթուրի ու Սամուէլի հոգիները գնացին միախառնուելու Թաթուլի հոգուն, գնացին միասին թեւածելու Արեգ գիւղի վրայ, Հայաստան աշխարհի վրայ... («Երկիր», 18 Մարտ 1993):

Ց. Ս.



ԳԵՏԱՇԷՆ

«ՉԱՐԻ ՍԵՐՄԸ ԲՈՅՆ ՉԻ ԴՆԻ»

1993 թուականի Մարտի 20ին վեց հայ քաջեր իրենց արիւնը միախառնեցին Դաւիթ Բեկի, Մխիթար սպարապետի, դարեր շարունակ հող հայրենիին կենդանութիւն պարգեւած բազում յայտնի ու անյայտ նուիրեալների արեանը։

Հիմա աղբբեջանցիները ասկուել են։ Մենուած չան նման պոչերը քաշել են ոտքերի արանքն ու յալահարաչ կաղկանձելով օգնութեան են կանչում մեծ եղբօր՝ դորչ գայլի դէմքը գառան գեղմով կոծկող Թուրքիային, հակաիրանեան ջղաձիգ շարժումներով սրա դուդուկի տակ պարող Ամերիկային, սրա գրպանին նայելուց գլուխը կորցրած Ռուսաստանին։ Կաղկանձում են՝ յուսալով քաղաքական դաւերն ու խարդաւանանքները օգտագործելով՝ այս երեքի նախաձեռնութիւնը դարձնել բուժիչ վիրակապ, ամրել Թելքաշարում, Արցախի եւ Հայաստանի միւս սահմանամերձ շրջաններում ծեծուելուց ստացած արնածոր վէրքերն ու, յարմար մի պահի, ուժ առնելով, գազազած ու վայրահալ կրկին յարձակուել Արցախի ու Հայաստանի վրայ։

Հիմա սակուել են։ Տեսել են հայոց բազկի զօրութիւնն ու ասկուել։ Իսկ ընդամէնը մի քանի ամիս առաջ դէլ ու գազան էին կտրել։ Կուլ տալ էին ուզում Արցախը, յարձակւում էին Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի վրայ։ Ախորժակները անկուշտ էր։ Բայց քթներից եկաւ։ Արցախի քանակի հուժկու հարուածների տակ վնասազերծուեց Թշնամու դաւադիր որջերից մէկը՝ Թելքաշարը։ Հայաստանի սահմանների պաշտպանները ամէնուր յետ մղեցին Թշնամու գրոհները, քշեցին որջերը։

Այդպիսի մի գրոհ Մարտի 20ին ձեռնարկուեց Շուռնուխի վրայ։ Սակայն գիւղի սահմանները յուսալի պաշտպանուած էին։ Թշնամին արժանի հակահարուած ստացաւ։ Ցաղիանակը ձեռք բերուեց դաժան մարտում, վեց անձնուէր խիզախների կեանքի գնով։ Այդ մարտի ժամանակ զոհուեցին Միշա Գրիգորեանը (Հալիձոր, 1954 թ. ծնունդ), Մուրադ Ասրեանը (Գորիս, 1960 թ.), Արամ Աղաբեկեանը (Գորիս, 1958 թ.), Սամուէլ Յովհաննիսեանը (Շինուհայր, 1968 թ.), Վազգէն Գեորգեանը (Գորիս, 1970 թ.), Ստեփան Սարգսեանը (Շինուհայր, 1971 թ.)։

Միշա Գրիգորեան



Մուրադ Ասրեան

Արամ Աղաբեկեան

ԿԱՆՍ ՄԻ ՋԱՐԿՆ ԵՄ ՔՌ ԿՈՒՈՒՔ...»

Զինուորի համար մահը ողբերգութիւն չէ։ Ողբերգութիւն է հարազատների եւ մեզ՝ ապրողներիս համար, որ դեռ չենք ճաշակել մահուան խորհուրդը։ Զինուորի համար ողբերգութիւնը պարտութիւնն է ու գերի ընկնելը։ Վեց նահատակներից երկուսը՝ Միշան ու Սամուէլը, գերի ընկան։ Ի հարկէ, եթէ ողջ լինէին, ո՛չ միայն գերի չէին ընկնի, այլեւ անկասելի հարուած կը հասցնէին թշնամուն։ Սակայն նրանք զոհուել էին արդէն ու նահանջող թշնամին գերեվարեց նրանց անշունչ մարմինները, տարաւ իր հետ։ Ճանաչում էին նրանց, սարսափում, քէն ունէին ու հայ խիզախների կենդանութեան օրօք անիրագործելի, քստմնելի ոճն ուզում էին դիակներից հանել...։ Միայն 36 օր անց նրանց խոչտանգուած մարմինները հայրենի հողին արժանացան՝ վրէժի ու հաւուցման եւս մի պարագ դնելով ապրողներիս ուսերին։

Հայրենիքի համար զոհուած բոլոր նահատակները սուրբ են, հաւասար, Աստծոյ եւ պատմութեան առջեւ՝ երանելի։ Ու ոեւէ մէկի անունը չեչտելը բնաւ չի նշանակում միւսներից պատել։ Բայց եթէ մահուան առջեւ բոլորս հաւասար ենք, ապա կեանքի առջեւ ամէն ոք գնահատւում է ապրածի ու գործի չափով։ Ուստի՝ անհնար ու անարդար կը լինի առանձնայատուկ չեչել Միշա Գրիգորեանի անունը։

Նա ազգային-ազատագրական պայքարին զինուորագրուած առաջին նըվիրեալներից էր, խիզախ մարտիկ ու անխոնջ կազմակերպիչ։ Դասակի հրամանատարն էր, անմնացորդ սիրում էր հայրենիքն ու իր սիրով վարակում զինակիցներին։ Անվերապահօրէն հաւատում էր Հայոց հողի անաղարտ զօրութեանն ու լաւախ էր կրկնում. «Ջարի սերմը բոյն չի դնի մեր հողումմ։ Այդ հողի ծառան ու մշակն էր, գիտէր, որ հողի անաղարտ բնագրքն արթուն է մնում նուիրեալների արեան գնով։ Եւ իր արեամբ ոռոգեց ու զօրացրեց հողը սրբազան։

1993 թուականի Մարտի 20ին վեց հայ քաջեր իրենց արիւնը միախառնեցին Դաւիթ Բեկի, Մխիթար ազարապետի, դարեր շարունակ հող հայրենիին կենդանութիւն պարգեւած քաջում յայտնի ու անյայտ նուիրեալների արեանը։ Միախառնեցին, ոռոգեցին, կենարար չուն հաղորդեցին։ Շուն, որի զօրութիւնն ունակ է վանելու հայոց հող ներխուժելու փորձ անող ցանկացած սերմ։ Նոյնիսկ եթէ այդ փորձը ուղեկցւում է կաղկանձին ձայնակցող եռակ վայնասունով։ Անգամ եթէ այդ եռակը համարւում է աշխարհի ամենագոռ չեփորահարների հաւաքածու։ («Երկիր», 26 Մայիս 1993)։

Ե. Ս.

Սամուէլ Յովհաննիսեան



Վազգէն Պետրոսեան

Ստեփան Մարգսեան

ԶԻՆՈՒՈՐ ԷՐ...

Արտաւազդի համար ապրելը ազատութեան ճանապարհը հարթելու կոչ էր։ Հէնց իր մեծ հայրենակցի նման զինուորագրուեց այն կուսակցութեանը, որի զինուորը պարտուելու ու երկնչելու իրաւունք չունի։

Մի քանի օր շարունակ Գիւմրիում գարնան ու ամրան սահմանագծերը իրար խառնուած անձրեւ էր տեղում։ Մարդիկ անթաքոյց տագնապով էին նայում անվերջօրէն ամպամած երկնքին։ Ու տագնապն իրականութիւն դարձաւ։ Ցաւեր ու տառապանքներ տարած Գիւմրին նոր ցաւից արտասուեց՝ ընդամէնը 36 գարնան մէջ իր ապրած օրերն ամբարած Արտաւազդ Ալիխանեանի շիրիմին։

Արտաւազդի համար ապրելը ազատութեան ճանապարհը հարթելու կոչ էր։ Իր արցախցի եղբայրների ազատութեան կոչ։ Նա գիտէր, որ Արցախում է վճռւում Հայաստանի ճակատագիրը, որ Արցախը հայոց մեծ հայրենիքի մի արիւնատար անօթն է։ Արտոյի համար Արցախը հոգու հայրենիք էր, որի սահմանները չափւում էին զգացմունքի ընդգրկումներով։ Այդ հոգու հայրենիքի զինուորն էր նա, որ հայրենի քաղաքում կիսակառոյց թողած իր տունը՝ կուում էր իր արիւնակցի տան խաղաղութեան ու անաղարտութեան համար։

Արցախեան շարժումը շատ բան փոխեց Արտաւազդի էութեան մէջ, նրան հրապարակ նետեց, ուր հասկացաւ՝ միայն Միացեալ Հայաստանի գաղափարով ապրողները չէ, որ «միացում» են կանչում։ Միացումը նրա համար կարգախօս չէր, այլ՝ արեան կանչ, որի ճշմարիտ հագրուանը Հ.Յ.Դ. կուսակցութիւնը դարձաւ։ Դասագրքերում չէր կարդացել կուսակցութեան մասին, ֆիլմերում չէր տեսել։ Լսել էր միայն իր հայրենակից հայդուկ Վաղոյի մասին, գիւմրեցիներին յայտնի Պաղուալի Վաղոյի մասին, որին վստահում էին Կարսի կոմիտէի ընկերները, որի միջոցով զէնք էր առաքւում Սասունի ազատագրման համար։ Հէնց իր մեծ հայրենակցի նման զինուորագրուեց այն կուսակցութեանը, որի զինուորը պարտուելու ու երկնչելու իրաւունք չունի։ Իր Լուսինէին ու Ցակոբին պահ տալով ծնողներին ու Աստծուն՝ նա Արցախ մեկնեց՝ դառնալով «Նիզակ» ջոկատի հրամանատարը։

Սրխաւենդ գիւղը նրա վերջին հանգրուանն էր, փորձութեան վերջին կայանը, որտեղից պիտի սկիզբ առնէր անմահութիւնը։ Կռուեց հրամանատարի ու զինուորի յամառութեամբ, մտքում անգոսնեց բոլոր նրանց, ում քաղաքական խաղերի հետեւանքով կովկասեան թուրքերը ներխուժեցին Շահումեանի շրջան՝ արձանագրելով մի նոր եղեռն մեր եղեռնաշատ պատմութեան մէջ։ Ուխտ էր արել Արցախից հեռանալ միայն այն պահին, երբ հեռացած կը լինէր վերջին թուրքը հայոց հնաւանդ հողից։

Գիւմրիում, իր մանկութեան թաղում, ուր բառացիօրէն բաց երկնքի տակ է յայտնուել այն դպրոցը, ուր ինքն է սովորել, ուր իր երեխաներն են սովորում, Լեւոն Ծանթի անունը կրող ցուցանակի կողքին յետայսու կը լինի մի ուրիշը, որի վրայ գրուած է. «*Այստեղ է սովորել Արցախեան ազատամարտի զինուոր ու նահատակ Արտաւազդ Ալիխանեանը*» («Երկիր», 30 Յունիս 1992)։

Լ. ՄՈՒԹԱՖԵԱՆ

ՂԱՐԱԲԱՂԻ ՎԱԳՐԸ



Հրամանատարությունը զուր էր փորձում նրան բուժման ուղարկել: Վէրքերի ցաւն ու երկաթի ծանրությունը ոչինչ էին հայրենիքն ազատագրելու տենչանքի առջեւ: Վրիժառու հոգին հանգիստ չէր տալիս նրան:

Հայոց մեծ ազատամարտը շարունակւում է: Յանուն հայութեան Արցախում մարտնչում են հայորդիներ՝ Հայաստանից, այլեւայլ վայրերից: Արցախեան գոյամարտը ողջ հայութեան կռիւն է: Բազց այդուհանդերձ, առաջին հերթին արցախցու կռիւն է: Ողջ Արցախն է այսօր զինուորագրուել: Եւ կռիւ է մղում յանուն հայութեան, յանուն Արցախի՝ իր հողին տէր կանգնելու հզօր գիտակցութեամբ: Կռիւ է մղում՝ ազատութեան զոհասեղանին դնելով իր լաւագոյն որդիների կեանքը:

Հայոց Վաղուանքում, Տիգրանաւան կամրջից ոչ-հեռու, թշնամու պաշտպանութեան սիրտը մխրճուած Արցախեան զօրքերի շարքում մարտնչում էր 21ամեայ աւագ լէյտենանտ Վահրամ Բաբայեանը՝ «Ղարաբաղի վագրը»: Կրակի տակ էր առել պիղծ արիւնը սնուցող երակը՝ Քելբաջար-Խանլար ճանապարհն ու զարկում էր անվրէպ: Իսկ միրուոր աջից հոսում էր արիւնն ու պուտ-պուտ խառնւում հողին: Դադիվանքի գոց դռներն էր բանալու, Ղարաբաղի անմեղ նահատակների ցաւն էր ամոքելու: Ու չէր զգում արիւնաքամ վէրքի գոյութիւնը: Կռւում էր, արնաքամ լինում: Ու երբ հասցրեցին Դրմբոնի դաշտային հիւանդանոց, երակներում այլեւս արիւն չէր մնացել, ողջը տուել էր հողին:

Արցախեան բոլոր հերոսամարտերին մասնակցել էր, իր արեան կաթիլները խառնել Ասկերանի, Մարտակերտի, Ծուշուայ հողին: Հանգաւ Դադիվանքի ճանապարհին:

Լեգենդ դարձած Բեկորով էր առնականացել, բազում կռիւներ էր մղել, անթիւ վէրքեր ունէր: Բեկորների առատութիւնից մարմինը երկաթակուռ էր դարձել: Հրամանատարությունը զուր էր փորձում նրան բուժման ուղարկել: Վէրքերի ցաւն ու երկաթի ծանրությունը ոչինչ էին հայրենիքն ազատագրելու տենչանքի առջեւ: Վրիժառու հոգին հանգիստ չէր տալիս նրան: Վահրամը միշտ կռուի դաշտում էր՝ առաջին գծում:

89 թուականից մինչեւ 93ի Մարտի 31ը մարտնչում էր զէնքը ձեռքին: Ծնունդով արցախցի էր, բնակութեամբ՝ մասիացի: Երեւանի ժողտնտինստիտուտի ուսանող էր: Բազց զինուոր էր նախ եւ առաջ. հոգով, մտքով, հաւատամքով: Այնտեղ էր, ուր պահանջում էր հայրենիքը:

Հայորդու հաւատամքը...: Իմացեալ մահուան հաւատամքը...: Ընտրեալի մահ... Ո՞ւմ է տրուած խորհուրդը մեկնելու շնորհը...

—Անփոխարինելի հրամանատար, խիզախ մարտիկ, հնարամիտ ռազմիկ՝ ինչպէս բոլոր արցախցի կռուողները,— ահա նրա մարտիկների խօսքը:

—Ազատախոհ նուիրեալ, ազնուութեան, հաստատմամբ, ազգային միասնութեան գաղափարների մարմնացում, ցեղի մտածողութիւն,— ահա նրա գաղափարական ընկերների խօսքը:

—Նժդեհական ոգով այս հայդուկը հայոց ազգի պարծանքն է,— ահա Աւոյի խօսքը նրա մասին:

Հայորդու հաւատամք... Ո՞ւմ է տրուած նրա խորհուրդը վայելելու պարգեւը... («Երկիր», 3 Յունիս 1993):

Ա. ԵՆԳԻԲԱՐԵԱՆ

ՎԱՀՐԱՄ ԼԵՆՍԵՐԻ ԲԱԲԱՅԵԱՆ

Իր անձնազոհութեան, եռուն բնաւորութեան, կամային շեշտուած յատկութիւնների պատճառով, վաշտի եւ Բեկոր Աշոտի սիրուած զինուորներից էր։ 1992 թուականին, Շուշիի ազատագրման օրերին հէնց այդ գումարտակն էլ առաջինը մտաւ Շուշի։

Մնուել է 1972 թուականի Մայիսի 5ին՝ ԼՂՀ Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գիւղում, մանկավարժի ընտանիքում։ 1975 թուականին ծնողները վերաբնակութիւն են հաստատել ՀՀ Մասիսի շրջանի Մասիս աւանում։ Յաճախել է տեղի թիւ 1 մանկապարտէզը։ Եղել է ուշիմ, խելացի տան։ Դաստիարակչուհին վկայում է, որ Վահրամը միշտ աչքի էր ընկնում ռազմա-հայրենասիրական խաղերի ժամանակ։ 1979 թուականին ընդունուել է Մասիս աւանի թիւ 2 միջնակարգ դպրոցը, 1989 թուականին աւարտել այն արծաթեայ մեդալով եւ նոյն թուականին ընդունուել է Երեւանի ժողովրդատնտեսական «Շուկայագիտութիւն» ֆակուլտետը։ 1988 թուականին Արցախեան աշխարհացունց շարժման առաջին օրերից նուիրեալ էր արդէն եւ զէնքը ցած չդրեց առ 1993 թուականի Մարտի 31ը, երբ Արցախեան մահապարտների գունդը լուծուում էր Քելբաջարի ռազմական որջի կրակակէտերը։

1991 թուականին կամաւոր ծառայութեան էր անցել ԼՂՀ ազգային բանակի շարքերում, Մոսիսանակերտի թիւ 1 դեսանտա-գրոհային գումարտակում՝ Աշոտ Բեկորի հրամանատարութեամբ։ Իր անձնազոհութեան, եռուն բնաւորութեան, կամային շեշտուած յատկութիւնների պատճառով, վաշտի եւ Բեկոր Աշոտի սիրուած զինուորներից էր։ 1992 թուականին, Շուշիի ազատագրման օրերին հէնց այդ գումարտակն էլ առաջինը մտաւ Շուշի։ Նոյն թուականի ողբերգական ամրանը Մարտակերտի ցաւալի

անկման պահին կուսում էր անմնացորդ նուիրումով եւ Մարտակերտի միւս կանգուն մնացած գիւղերի աննահանջ պաշտպաններից էր։ 1993 թուականին Հադրութի ինքնապաշտպանութեան ուժերի գլխաւոր շտաբի հրամանատարութեան խնդրանքով ստանձնել էր Մեծ Թաղլարի ինքնապաշտպանութեան վաշտի թիւ 1 դասակի հրամանատարութիւնը։ 1993 թ. Քելբաջարի ռազմական որջը վնասազերծող 200 արցախցի մահապարտների գնդում էր՝ զօրավար Աւոյի հրամանատարութեամբ։ Այդ փայլուն ռազմական օպերացիան եղաւ նրա վերջին մարտը, որտեղ քաջորդին այլի ընկաւ բազմաթիւ սխրանքներով։ Այդ մասին են վկայում զօրավար Աւոյի խօսքերը Վահրամի մասին. «Ինժենեական հոգով այս հայդուկը ապագայ հայոց ռազմավարն է»։ Մարտի 31ին իր ընկերների հետ յանկարծակի գաբանակալ թշնամու շրջապատման մէջ յայտնուած աւագ լեյտենանտ Վահրամ Բաբայեանը մարտնչեց մինչեւ վերջ, մինչեւ յաղթանակ, դրսեւորելով իրեն որպէս իսկական ռազմիկ եւ ընկաւ հերոսաբար (Մեքենագիր)։

ԱՆՍՈՐԱԳԻՐ

ՅԻՇԱՏԱԿ

Մի ջրաբերդցի հայուհուց, որի հայրենի գիւղի ազատագրմանը մասնակցել են Վահրամը, Քեռին եւ Բեկոր Աչոտի մնացեալ զինուորները...

Թուրքն է գազազած՝ քանդում տուն ու թերդ,
Աւեր է հայոց հողը՝ Ջրաբերդ,
Ելէ՛ք, Բեկորի առիւծներ արի,
Թող թուրքաց դաժան ասողը խաւարի։

Երգիր կոուակոչ, երգիր Աղասի,
Թող երգդ՝ խրոխտ, ձեր կամքը ասի,
Զարկ թուրքի, Քեռի՛, մահ տուր ասխի,
Որ լինի յագուրդ մեր վիշտ ու ոքի։

Ելէ՛ք, Բեկորի առիւծներ արի,
Թող ձեր գնդակը թշնամուն գամի,
Ելէ՛ք, որ հայոց յոյսը չմարի,
Որ չքրքջայ ոչ մի հարամի։

Ձեզ են յետ կանչում լեռներն հեռաւոր,
Իմ Ջրաբերդի սարերն վիրաւոր,
Ելէ՛ք, Բեկորի առիւծներ արի,
Երթանք ուխտավայր Ցակոր-Կամարի...

ՀԱՅՈՒՀԻ

1993

ԻՐԱԿԱՆ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ՍԿԻԶԲԸ

Վարդան Վահանեան



Սարգիս Ցարուքիանեան

Արամ Մնացեան

Արցախի ինքնապաշտպանական ուժերի հուժկու հակայարձակումը լիակատար խուճապի է մատնել հակառակորդին։ Իրար յետեւից ազատագրւում են մեր հայրենի շէնքերն ու աւանները։ Հայ մարտիկների անկասելի ջանքով չէզոքացւում ու ցրւում է թրքահոտ գարշանքը։ Ցաղթանակը, սակայն, թանկ գնով է ձեռք բերւում՝ արիւնով, հայ քաջորդիների կեանքով, նրանց յաւերժող լուսեամբ։ Նրանք գնում են գիտակցուած մահուան՝ անկախ իրենց տարիքից, հայրենիքի փրկութեան համար նահատակուելու պատրաստակամութիւնը վեր դասելով անձնական ձգտումներից։

Ազատութեան հրապարակը երէկ կրկին բազմամարդ էր։ Այստեղ էին հաւաքուել հազարաւոր մարդիկ՝ վերջին հրաժեշտը տալու Շահումեանում եւ Մարտակերտի մատոյցներում զոհուած ազատամարտիկներ Վարդան Վահանեանին, Սարգիս Ցարուքիանեանին, Արամ Մնացականին։

Վարդանը ուսանող էր Ստեփանակերտի մանկավարժական բաժնում, բայց առաջին հերթին զինուոր էր հայրենիքի փրկութեան, մասնակիցը Մարտակերտի շրջանի ռազմական բոլոր գործողութիւնների։ 22ամեայ այս քաջորդին իւրովի էր ընկալել պատմութեան դասը՝ առնականօրէն ճշմարիտ...

Սարգիսը Թուզլուխից էր, մինչեւ Շահումեանի անկումը գիւղի ինքնապաշտպանական ջոկատի անդամ։ Իր պայծառ գլուխը Մայր հողին դրեց Տօնաշէնի ազատագրման ժամանակ՝ երախտապարտ հայրենակիցներին թողնելով իր էդգար եւ Դիանա զաւակներին։

28 ամեայ Արամը նռնականետ-նշանառու էր, մարտական գործողութիւնների սկզբից ինքնապաշտպանութեան անմնացորդ մասնակից։ Իր շարունակութիւնը թողեց ո՛չ միայն ժողովրդի վիշտութեան, այլեւ՝ իր երկու ազնիւական զաւակների մէջ։

Նրանց մի բան էր միաւորում. հայրենիքի փրկութեան հաստատակամութիւնը, դրա համար արիւնը չխնայելու կարողութիւնը։ Այն յենւում էր հազարաւոր մարդկանց լարուած լուսեան վրայ, իսկ ազատամարտիկների աճիւնները ամփոփող դագաղները ծածկուած էին Եռագոյնով։ Այդպիսին էր նրանց վերջին ուղին այս աշխարհում եւ սկիզբը իրական լինելութեան (2 Ապրիլ 1993)։

«ԵՐԿԻՐ»

ՀԱՄՈԶՈՒԱԾ ԷՐ, ՄԻԱՅՆ ԶԷՆՔՈՎ...

Ամէն ինչից առաջ հայրենապաշտութիւն՝ ահա նրա բոլոր դասերի դասը։

Ողջ գիտակցական կեանքը նուիրեց հայ պատանիներին եւ աղջիկներին ռազմական գիտելիքներ տալուն։ Սովորեցրեց սիրել հայրենիքը, ինչպէս իւրաքանչիւրն՝ իր անձը։ Համարձակութեան եւ քաջութեան դասեր տուեց։ Անձնական օրինակով ամրապնդեց այդ դասերը։ Ամէն ինչից առաջ հայրենապաշտութիւն՝ ահա նրա բոլոր դասերի դասը։ Վուրգ Ոսկանեան։ Սիսիանում մենից փոքր ճանաչում էին նրան։ Նրա կեանքը լեգենդ էր։ Ճանաչում էին զինուորական համազգեստով։ Միշտ փութկոտ քայլերով, վճռական դիմագծերով, խրոխտ ու ազնիւ ուսուցչին։ 80ից Շարժման ակտիւ մասնակիցներից էր։ Միտինգների հրապարակներից մարդիկ հեռանում էին իրենց հետ տանելով Վուրգի համարձակ ու համոզիչ մտքերը, նրա կոչը՝ ամէն գնով ազատել Արցախը, կերտել Ազատ, Անկախ, Միացեալ Հայրենիքը։

Վաշտի հրամանատարը սիրուած մարդ էր, լաւագոյն ընկեր իր զինուորների համար։ Այն զինուորների, որոնցից շատերն աշակերտել էին նրան։ Խաղաղ ժամանակների արշաւները, բնութեան դրկում խփուած վրանների առջեւ բոցկլտացող խարոյկի շուրջ կիթառի նուագակցութեամբ երգող պատանիները, որոնք անգիր գիտէին հայրենի լեռնաշխարհի ամէն թուփ ու քար, իրենց ուսուցչի կոչին եւ անձնական օրինակին հետեւելով զէնք վերցրին։ Հայի փրկութիւնը, մեր ազգի փրկութիւնը զէնքի մէջ է։ Զանգեզուրի լեռներում թէ Արցախ աշխարհում իր կիսատ դասն էր շարունակում Վուրգը։

Ջոկատի տղաները արդէն հինգ տարում իսկական զինուոր էին դարձել։ Լաւ գիտէին ինչպէս զէնքի, այնպէս էլ պատերազմի դաշ-

տում արնաքամ ընկերոջ դինը։ «Մեռնելն աւելի պատուաբեր էր, քան վիրաւոր ընկերոջը դաւաճանելը»։ այս միտքը ջոկատի տղաների ուղեցոյցն էր։ Նրա հետ մարտի գնալն անգամ հաճելի էր։ Միշտ հոգով թեթեւ, բարի, միշտ կատակասէր Վուրգը իր ջոկատին ուր էլ առաջնորդէր, պատրաստակամօրէն հետեւում էին նրան։ Լաւ իմանալով տեղանքը՝ գիտէր կազմակերպել գործը։ Մամ մտքով կ'անցնէր, որ յաղթանակն իր բազուկներով, իր ջոկատի տղաներով կերտող հրամանատարը այս տարուայ Մարտի 31ին գրեթէ ազատագրուած Բելբաջարում վերջին մարտն է տալու, վերջին հրահանգները։ Վերջինը։ Գարնանային, պայծառ, արեւոտ Սիսիանի երկինքը մթնգամից սեւակնեց, երբ բոթը տեղ հասաւ։ «11 զոհ Սիսիանից, ասում են Վուրգն էլ է»։ Ոչ ոք չէր ուզում հաւատալ։ Ինչպէ՞ս թէ։ Ախր, բոլորն էլ... Վուրգը, Լաւրենտը, Գէորգը, Վալերիկը, Զոհրաբը, Վոլոդեան, Վարդանը, Ալբերտը, Հրայրը, Մերսիկը, Վահանը երիտասարդ էին ու լաւ կռուող։ Ախր, սրանցից շատերը դեռ չէին հասցրել ճաշակել կեանքի քաղցրութիւնը։ Ախր, շատերը երեխաներ որբ թողեցին, երազներ կիսատ մնացին... («Երկիր», 14 Ապրիլ 1993)։

Սիսիան *ԱՄԱԼԵԱ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ*



Սիսիան - Սուրբ Յովհաննէս եկեղեցի. Վուրգի թաղման թափօրը։

ԸՆԿԵՐՈՋՍ

ՎՈՒՐԳԻ ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Երազում վանքս փլուեց,
Խաչքարիս աչքը դողաց,
Նստել եմ մենակ քարին,
Քամու հետ լաց եմ լինում։

Արցունքիս ծովը եկաւ,
Սարերիս սեւ աչքերով,
Նստել եմ ձորում մի խոր,
Շողքիս հետ լաց եմ լինում։

Ջորերիս խոնաւ ափից,
Ելնում եմ սարերն ի վեր,
Կակաչի մի աչք դառած,
Զարթնել ու լաց եմ լինում։

Շուարած ու ծուարած
Նայում եմ՝ եկող չունեմ,
Թուխս նստած սուգիս վրայ,
Ցաւիս հետ լաց եմ լինում։

Գիտէի գնալը քո,
Չգիտեմ վերջը գալուդ,
Անցկուխ այս աշխարհի,
Լացի մէջ լաց եմ լինում։

Հաւաքած մի բուռ կարօտ,
Հաւաքած վերջին մի խօսք,
Քո կանչից թաքուն զարթնել,
Մահիս հետ լաց եմ լինում։

(Մեքենագիր) ՍԱՀՄԵԴ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՄԱՐՏԱԿԱՆ

«...Տղամարդու իմ պատիւը չեմ թողնի ոտնահարել. արդարութիւնը միշտ պիտի արիասիրտ պաշտպաններ ունենայ»

ՀՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Հրայրն ու Արան ընդամէնը քսանհինգ տարի ապրեցին։ Բայց այդ կարճ կեանքի ընթացքում հասան նրան, ինչին հասնելու համար շատ շատերս ամենաքիչը դեռ մի քանի կեանք պիտի ապրենք։ Գուցէ երբեք չհասնենք։ Որովհետեւ զոհաբերումը լոկ ընտրեալների տեսանողութեանը բացուող հորիզոն է, իսկ յաւերժութիւնը՝ քչերի ժամանակի միաւորը։ Սովորական տղաներ էին։ Բայց նրանց առջեւ բացուեց անմահութեան տեսադաշտը այն օրուանից, երբ կեանքը դարձաւ նուիրաբերում, երբ ապրեցին հրաժարումի յայտնութեան գերագոյն իմաստութիւնն ու առօրեան, առտնին, ճղճիմ կեանքից ձերբազատուելով՝ դառն իրենց, դառն կեանքից թանկ բանը՝ կռիւն յանուն հայրենիքի։

Հրայրը կինոմեխանիկ էր հայրենի Հայթաղ գիւղում։ Ուշ գիշերով գնում էր տուն, համբուրում քնած զաւակների ճակատները, յաջորդ օրը կրկին գնում գործին։ Բայց սովորականը նա չէր՝ ժամանակն էր։ Նրա սրտում այլ ոգի կար, որն իր ժամին ու արթնացումին էր սպասում։ Ոգին անթեղուած էր ու երբեմն ցոլցլում էր ամպերի տակից ծիկրակող աստղի նման։ Առաջին անգամ այն տեսանելի դարձաւ 88ին, երբ Հայաստանը հեղեղուեց Սումգայիթից ու Ադրբեջանի այլ վայրերից մազապուրծ փախստականներով։ Հրայրը մէկն էր նրանցից, ովքեր կազմակերպեցին փախստականների տեղաւորումը, ինչ-որ կերպ ջանացին մեղմել տուն ու տեղից զրկուած, մահուան սարսափներից ընդարմացած հայրենակիցների վիշտը։ Յետոյ եղաւ Դեկտեմբերի եօթը։ Բայց արհաւիրքը՝ ընդերքի ծնունդ լինի, թէ մարդկային ձեռքի գործ, աշխարհակործան է լոկ թոյլ հոգիների համար։ Ուժեղների կամքը նման դէպքերում աւելի է թրծւում ու կոփւում։ Թրծւում ու կոփւում, մաքրագործւում է նաեւ ժողովուրդը՝ իր ուժեղ, հոգեւոր զաւակների շնորհիւ։ Հայութեան լաւագոյն զաւակներն այդ օրերին Աղէտի վայրում էին. փրկում էին, մխիթարում, ամոքում։ Այդտեղ էր նաեւ Հրայրը։ Չէր

ԸՆԿԵՐՆԵՐ

ԱՐԱ ՅԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆ

«Ես ուրիշի գանձին աչք չունեմ,
բայց ինձ պատկանող
մի մազն անգամ
թույլ չեմ տայ թալանելու»

կարող չլիներ։ Ինչպէս այդուհետ պիտի լինէր ամէնուր, ուր պաշտպանի եւ օգնողի՝ ոգեղէն անձի կարիք զգացուէր։ Ցեղոյ երկու անօթեւան ընտանիք ազատուեց իր տանը, համեստ վաստակն ու հացը կիսեց նրանց հետ։

Բայց հայ ժողովուրդին աւելի մեծ փորձութիւն էր սպասում։ Ոգու նուիրեալներն առաւել դժնի փորձութիւններով էին անցնելու։ Վտանգուած հայրենիքը՝ Հայաստանը, կանչում էր իր զաւակներին։ Եւ նրան նրանք ովքեր զաւակ էին ու ոգու յանորդ։ Նրան, միաւորուեցին, գտան միմիանց։ Եղակի ու անկարելի էին, բայց նոյնն էին հոգով ու կերտուածքով։ Աշխարհում ամէն մարդ օրերից մի օր գտնում է իր ընկերոջը, գտնում է այն ժամանակ, երբ յայտնաբերում է իր գործը։ Կեանքը շատ-շատերին պարտադրեց կռիւը որպէս գործ։ Եւ շատ շատերը կռուի մէջ գտան իրար։ Շատերի մէջ՝ Հրայրն ու Արան։

Արան Ակնալճից էր։ Մառալիկ էր Աֆղանստանում։ Ուսանող էր։ Բայց ամէն բանից թանկ էր գնահատում ազամարդկային արժանապատուութիւնն ու արդարութիւնը։ Ես ուրիշի գանձին աչք չունեմ, բայց ինձ պատկանող մի մազն անգամ թույլ չեմ տայ թալանել։ Ցղամարդու իմ պատիւը չեմ թողնի ոտնահարել, արդարութիւնը միշտ պիտի արիասիրտ պաշտպաններ ունենայ։ Այս էր նրա հաւատամքը։ Ամենամեծ պատիւը հայրենիքն է։ Ամենամեծ արդարութիւնը՝ ժողովրդի ոտնահարուած իրաւունքը պաշտպանելը։ Եւ Արան զէնք վերցրեց։ Նա էլ, Հրայրն էլ մասնակցել են Հայաստանի սահմանների պաշտպանութեանը, կռուել են Արցախում, Շահումեանում։

Հաղրութը թշնամու աչքի փուշ էր։ Հաղրութի դիմաց ադրբեջանական Ֆիզուլին է։ Հաղրութի եւ Ֆիզուլու վրայ իշխում են երկու բարձունք՝ Ղաչաբ եւ Մենգենաթան։ Այս բարձրունքներից թշնամին զօր ու գիշեր կրակ էր տեղում հայկական բնակավայրերին

րի վրայ։ Անհրաժեշտ էր լուծել թշնամու կրակակէտերը։ Ապրիլի 4ին մեր ջոկատները յարձակման անցան։ Մենգենաթան լեռան գագաթին հայոց հնամեայ կաթուղիկէն էր։ Հասկանալի է, պէտք էր այնպէս կազմակերպել գրոհը, որ վանքը չվնասուէր։ Գրոհի ելած մարտիկները դա լաւ գիտէին։ Այդպէս էլ եղաւ։ Մի քանի ժամ անց լեռն ու վանքը ազատագրուած էին։ Թշնամու դերազանց ուժերին փախուստի մատնած մի բուռ հայ քաջորդիներ մոմ վառեցին վանքի կամարների տակ։ Եւ վանքը մաքրագործուեց։ Տողաձորի նիրհող գիւղերը կարծես արթնացել էին դարաւոր թմբիրից, կապոյտ ժապաւէնի պէս ձգուող Իշխանագետն էր ժպտում, ճգնաւորի սարն ի վեր խոյացող Դիզափայտն էր պատիւ տալիս հայ քաջերին։

Իսկ ներքեւում Ֆիզուլին էր. մռայլ, չարաբաստիկ, սեւակնած ու սարսափահար։ Մենգենաթանը Ֆիզուլու բանալին է։ Լեռը չեռ վերցնելու համար թշնամին մարտի նետեց իր «լաւագոյն» զօրքերը՝ պրեզիտենդական գվարդիան։ Սրանք, ի հարկէ, չէին մտածում վանքը չվնասելու մասին։ Ռմբակոծում, հրետանակոծում, գնդակոծում էին անխնայ։ Ուժերը դարձեալ անհաւասար էին. հարիւր հրոսակի դէմ մէկ ազատամարտիկ էր կանգնած։ Տղաները լսել անգամ չէին ուզում նահանջի մասին։ Բայց լեռը պահելն այլեւս անհնար էր։ Ստիպուած էին նահանջել։ Հէնց այդ պահին էլ ընկաւ Հրայրը։ Վէրքը մահացու էր։ Հորոն չալակեց զոհուած ընկերոջը, իսկ Արան վերցրեց նրա զէնքն ու ծառա եղաւ. պաշտպանեց ընկերների նահանջը։ «Ախ, ձեր մէրը...։ Տղերք, ես էլ խփուեցի»,— յանկարծ գոռաց Արան ու մահացաւ վիրաւոր, վերջին ճիգով իջաւ սարից...

Այդ անհաւասար կռուում զոհուեցին անբաժան մարտական ընկերները՝ Հրայր Բաբգէնի Կարապետեանը («Եռուրս») եւ Արա Էդուարդի Ցարութիւնեանը («Արայիկ»)։ Զոհուեցին այնպէս, ինչպէս կռուել էին՝ միասին։

Եւ միասին արժանացան հրամանատարի՝ Վրոյրի մաղթանքին.— «Ձեր կամքով ընտրած ճանապարհը պտակեցիք փառքով։ Փառք ձեր անմահութեանը, վինակից ընկերներ» («Երկիր», 12 Մայիս 1993)։

Ց. Ս.

ՍԱՄՈՒԷԼ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Ամէն մարտի ժամանակ, երբ սկսում էր ճարճատել Սամուէլի գնդացիրը, թշնամու կորուստները բազմապատկւում էին:

Հազիւ քսանմէկ տարեկան էր Սամուէլը, բայց հրաշալի գնդացրորդ էր: Քանի՞-քանի՞ անգամ նա վրէժ է լուծել մեր աւերուած ու կողոպտուած գիւղերի համար, մեր անթիւ անմեղ զոհերի համար: Ամէն մարտի ժամանակ, երբ սկսում էր ճարճատել Սամուէլի գնդացիրը, թշնամու կորուստները բազմապատկւում էին:

Սամուէլ Բաղդասարեանը նաեւ խիզախ էր: Քանի՞-քանի՞ անգամ մութ գիշերին, անանցանելի անտառներով, սարերով ու ձորերով երկար կիլոմետրեր է անցել նա ընկերների հետ՝ մարտական առաջադրանքը կատարելու համար: Եւ ինչպէս էլ գնային, միշտ շարքի առջեւում յայտնւում էր Սամուէլը: Ընկերները յաճախ էին նկատել այդ բանը ու քանի անգամ էլ շարքերը կամ դիրքերը փոխել էին, նորից անկատ՝ Սամուէլը յայտնուել էր բոլորի առջեւ:

...Ալաիկ Ոսկանեանը, որ խմբի ամենաերիտասարդներից է, հազիւ տասնութ տարեկան, մի անգամ զարմացած հարցրեց.

—Էդ ինչի՞ միշտ դու առաջ ես ընկնում:

—Տղերք, կարող է յանկարծ ական լինի դրուած, ի՞նչ իմանաս,— պատասխանել էր Սամուէլը:

Դաժան ճակատագրով հէնց այդպէս էլ եղաւ. նա զոհուեց ականի պայթիւնից, մարտական առաջադրանքը կատարելու ժամանակ... («Մրուռաի զօրանոցներ», 19 Յուլիս 1993):

Կ. ՂԱՀՐԱՄԵԱՆ

Ճ Ո Ւ Տ Ո Ն

Բոլորը նրան Ճուտո էին ասում, փաստաթղթերով՝ Ֆելիքս Խաչատրեան, 17 տարեկան։ Կենսագրութի՞ւնը. պատերազմի ճանապարհով անցնող պատանու կենսագրութիւն է՝ 13 տարեկանից սահմանը պահող կամաւորների յետեւից էր վազում։

Առաւօտը Բերդը թաղումով դիմաւորուեց։ Պատերազմի հերթական զոհն էր։ Բոլորը նրան Ճուտո էին ասում, փաստաթղթերով՝ Ֆելիքս Խաչատրեան, 17 տարեկան։ Կենսագրութի՞ւնը. պատերազմի ճանապարհով անցնող պատանու կենսագրութիւն է՝ 13 տարեկանից սահմանը պահող կամաւորների յետեւից էր վազում։ Արգելում էին, տուն էին ուղարկում, իրենք գնում դիրքերը, տեսնում՝ նա իրենցից չուտ այնտեղ է։ Հնար չկար յետ պահելու։ Տիրապետեց եղած զէնքի բոլոր տեսակներին ու կռիւների ընթացքում որտեղ ծանր էր՝ այնտեղ էր։ Ներքին կարմիր-աղբիւր գիւղի կարեւոր բարձունքը թշնամուց յետ վերցնելիս էլ առաջին շարքում էր...։ Թշնամին նրա թիկունքը չտեսաւ։ Դարանակալ ռումբի պայթումից զոհուեց։ Անմահացաւ, խառնուեց հայրենիքի համար նահատակուած հերոսներին (**«Երկիր»**, 3 *Փետրուար* 1993)։

ԱՐԹՈՒՐ ԴՈԽՈՒԼԵԱՆ

ՅՈՒՇԵՐ ՈՒ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ՆՈՒԻՐՈՒԱԾ՝
ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՇԱՀԷՆ ՄԵՂՐԵԱՆԻՆ

Երեւանի *«Երկիր»* օրաթերթին մէջ *«Բագին»*ի տուած ծանուցումին ընդառաջելով, Բենիկ Ղուլեան, *«Գիւլիստանի արծիւը»* խորագրին տակ, միջին ծաւալով 70 էջնոց յուշագրութիւն մը դրաւ մեր տրամադրութեան տակ, *«Յուշեր եւ մտորումներ, նուիրուած՝ անմոռանալի Շահէն Մեղրեանին»*: Ցաւօք, տեղի անձկութեան պատճառով, ներկայ համարին մէջ միայն երկու հատուած պիտի կարենանք տալ անկէ, ամբողջութիւնը վերապահելով մեր յառաջիկայ թիւերուն:

ԳԻՒԼԻՍՏԱՆԻ ԱՐԾԻՒԸ

Ապրելու կէտն էլ
պատուով մեռնելն է։
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Շահէնի համար ազգային շահը վեր էր ամէն այլ շահից, այն իրայատուկ պաշտամունքի հասած զգացում էր։ Նա հայրենի հողի ազատագրութեան սրբազան պայքարի դրօշը պարզեց այն հաստատ համոզմամբ, որ ազատութիւնը ձեռք է բերւում պայքարով։

Մեր ազգային-ազատագրական պայքարը կեանքի կոչեց ազգի շատ նուիրեալ ու ազնիւ զաւակների, որոնք ոչ թէ սին խօսքերով, այլ հայրենանուէր գործերով ու սեփական արիւնով գրեցին մեր նորօրեայ պատմութեան հերոսական ու փառապանծ էջերը։

Հայ հայրենիքի, հայ օջախի, հայ ապրելու, արարելու եւ յարատեւելու դաւանանքին հաւատարիմ այդ հայորդիների շարքերում իր ուրոյն ու բացառիկ տեղն ունի ազգային-ազատագրական պայքարի աննկուն առաջնորդ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդամ, ԼՂՀ Շահումեանի շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, հայդուկապետ Շահէն Զինաւորի Մեղրեանը, որին իրաւամբ Գիւլիստանի արծիւ էին անուանում:

Ասում են, մարդուն լաւ ճանաչելու համար անհրաժեշտ է անպայման լինել նրա ծննդավայրում, ուր անցել է նրա մանկութիւնը, ձեւաւորուել որպէս անհատ, կազմաւորուել աշխարհահայեացքը, համոզմունքները, նախասիրութիւնները, ուր ապրել ու գործել է նա: Եւ դա միանգամայն ճիշտ է եւ բնականոն: Քանզի ծննդավայրը ո՛չ միայն մարդու կեանքի բնօրրանն է, այլեւ՝ նրա հոգեկան կերտուածքի ձեւաւորման աներկբայ ստնտուն ու սրբազան աւազանը:

Օրերի հոլովոյթը մօտեցնում էր հատուցման ժամը: Շահէնը վըստահ էր իր ժողովրդի ազատագրական պայքարի յաղթական աւարտին: Հաւատում էր, քանզի լինելով կամային ղեկավար, ունենալով կայուն համոզմունք ու ինքնավստահութիւն, նա կարողանում էր ապագայ յաղթանակի հաւատով տոգորել եւ իր ազատամարտիկ-համախոհներին, իրեն յատուկ ունակութեամբ ոգեւորել նրանց, տանել իր յետեւից: Նրա պարզ, ընկերական ու անմիջական բնաւորութեան համար մարտիկները սիրում ու հաւատում էին նրան եւ պատրաստ էին նրա հետ յաղթահարել ցանկացած խոչընդոտ ու դժուարութիւն:

Շահէնը մարդկանց գրաւելու, համոզելու եւ իր յետեւից տանելու զարմանալի ունակութեամբ էր օժտուած, միաժամանակ միշտ հանդէս բերելով բնաւորութեան նոր, անյայտ, բայց եւ մարդկանց գերող գծեր: Շահէնը կեանքում միշտ էլ սիրել է ընկերական լայն շրջապատ, շփումը տարբեր մակարդակների ու կրթութեան տէր մարդկանց հետ, ցուցաբերելով ինքնատիպ վարուելակերպ ու իւրայատուկ մօտեցում: Նա ուր էլ աշխատում էր՝ հանդէս էր գալիս որպէս նախաձեռնող, գործունեայ, իրատես, ու ամենագլխաւորը՝ ազգային շահերին նուիրուած անձնաւորութիւն: Շահէնի համար ազգային շահը վեր էր ամէն մի այլ շահից, այն իւրայատուկ պաշտամունքի հասած զգացում էր: Նա հայրենի հողի ազատագրութեան սրբազան պայքարի դրօշը պարզեց այն հաստատ համոզմամբ, որ ազատութիւնը ձեռք է բերւում պայքարով, որ սուրբ ազատութեան ճանապարհին կարող է եւ զոհուել, բայց հաւատում է, որ՝

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՝ մեռնի,
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի:

Ու զոհուեց: Զոհուեց, ինչպէս արծիւը: Զոհուեց հայրենի երկնքում, մի վերջին անգամ իր արծուային հայեացքով ընդգրկելով հայրենի բընաշխարհի չքնաղագեղ համայնապատկերը, գնաց խառնուելու Մայր հողին, գնաց անմահութեան:

Ասում են հերոսի մահը նման է արեւի մայրամուտին: Մայր է մտնում, բայց վերստին յառնում է իր ժողովրդի հերոսական պատմութեան էջերում՝ անմահութեան լուսապսակ, որպէս իր ժողովրդի ոգու եւ հաւատքի խորհրդանիշ, որպէս սուրբ նահատակ, որպէս մեր յարատեւութեան առհաւատչեան (Ջեռագիր):

20-30 V 1993

ԲԵՆԻԿ ՂՈՒԼԵԱՆ

ՈԳԵԿՈՉՈՒՄ

Շահէն Մեղրեանի եւ միւսների յիշատակին

Կը մեղմանան ցաւերը, կը սպիանան վէրքերը,
Կը կանայնեն կացնահար ծառերը մի օր,
Կը մոռացուին որբութեան ու ողբութեան երգերը,
Կը ղօղանջեն վանքերի զանգերը բոլոր։

Կը ննջան հովերը, եւ կը դառնան հաւքերը,
Ու կը խայտան ջրերը լանջերից դարձի,
Ամէն տեսակ մահերից վեր կը յառնեն կեանքերը,
Լոկ ձեր կեանքը, ձեր կեանքը կը մնայ անծին։

Դեղին փոշի կը թափուի երկոյեան երկնքից,
Առաւօտեան կը լուայ անձրեւը քաւող,
Եւ մայրական արցունքը միճ կը դառնայ մորմոքի,
Եւ հայրական հառաչքը կը դառնայ հոգմ։

Կեանքում միայն կը լիչուի ձեր ծննդեան լոյս օրը
Ու ձեզ համար չի հնչի եւ ոչ մի մահերգ,
Կը ծերանան բոլորը, կը վերանան բոլորը,
Դուք աշխարհում կը մնաք յաւիտեան ջահել։

ՀՐԱՉԵԱՑ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

1993 - *Երեւան*

ԱՐԻՒՆ ԵՒ ՄՈԽԻՐ

Ափսո՛ս, հազար ափսո՛ս, որ կեանքով լեցուն, առողջ մտածողութեամբ զարիւն այդ հայ մարդուն Հայաստանում քչերն են ճանաչում։ Խաղաղ օրերին, անշուշտ, նրա մասին յուշեր կը գրեն, գրողական մաքուր մենութեան մէջ կը փորձեն կերտել իսկական կերպարը, բայց...։ Նա այս երկրին, այս Հանրապետութեանը, այս ազգին օդի պէս պէտք էր ողջ եւ առողջ։ Մարդիկ պիտի տեսնէին, թէ ինչպէս է նա սիրում իր զաւակներին, մարդիկ պիտի տեսնէին նրա հոգատարութիւնը ընկերների, զինակիցների նկատմամբ, լսէին նրա համով-հոտով պատմութիւնները նոյնիսկ ամենադաժան մարտերի մասին։ Մարդիկ պիտի զգային նրա իսկական, ամբողջական հայրենասիրութիւնը, որ թէ՛ գործնական էր եւ թէ բանաստեղծական։ Միաժամանակ։

Ես հիմա չեմ կարող պատմել այնպէս հրաշալի, ինչպէս ինքը պատմեց երից մանկանց եկեղեցու մասին, որ անակնկալ յայտնուել էր հայդուկների Նահանջի ճիւնոտ, անտառոտ, կիրճ ու ձորոտ ճանապարհին։ Բայց ես նրա նկարագրածով պարզորոշ տեսնում եմ մարդահասակ ձեան շերտով շրջապատուած այդ եկեղեցին, որի չորս բոլորը, գաւիթը, մաքուր եւ չոր էր սակայն, ինչպէս մաքուր եւ չոր է լինում գետինը գարնանը, ձնահալոցքից յետոյ։ Եկեղեցու պատե՛րն էին ջերմութիւն արձակում, թէ՞ Աստուած էր մի կտոր գարուն իջեցրել երկիր՝ օգնելու տառապածներին։ Իսկ մասրենիներից կախ-կախ ծանրացել էին ձեան բարուրից դուրս պրծած կարմիր ողկոյզները։

Եւ ուրիշ ոչինչ։ Պատմեց ու արտասուեց։

Այդ պատկերը կարո՞ղ էր հանգիստ տալ նրան։ Այդ պատկերը կարո՞ղ էր թոյլ տալ, որ ամփոփուի վիրաւորանքի պատեանի մէջ ու հեռանայ...

Շատերն ասում են կուսակցութիւնը, ընկերները չինայեցին Նրան, պէտք է պահէին այստեղ, այստեղ էլ շատ գործ կար։ Եւ, իրօք, կար։ Եւ, իրօք, մեծ էր նրա անելիքը նաեւ այստեղ։ Բայց ցաւի, մեծ ցաւի գիտակցումով հանդերձ համոզուած եմ, որ կուսակցութիւնը, ընկերները, ընդհակառակը, խնայեցին Նրան՝ թոյլ տալով անձամբ ղեկավարել հայդուկների գործողութիւնները այնտեղ՝ Շահումեանում։

Ափսո՛ս, հազար ափսո՛ս մեր ընկերոջը, բայց եւ մի մխիթարանք ունենք. նրա արիւնը եւ մոխիրը խառնուեցին իր հարազատ հողին։ Եւ եթէ կան մարդիկ, որ հին ու նենգ ղուկներից թունաւորուած դեռ կասկածներ են պահում իրենց հոգիներում, խնդրեմ, թող փորձեն վերլուծել նրա արիւնը եւ նրա մոխիրը։ Ահա նրա արիւնը։ Ահա նրա մոխիրը (**«Երկիր»**, 20 *Ապրիլ* 1993 – *հատուած*)։

Ռ. ՑՈՎՍԷՓԵԱՆ

ԳԻՒԼԻՍՏԱՆԻ ԱՐԾԻՒԸ

Ծահէն Մեղրեանին եւ
իր զինակիցներին

Երեքշաբթի, Ապրիլի 20։ Արծիւներ,
Որ թռիչքի, ճախրանքի մէջ զարկուեցին.
Այդպէս միայն անմահներն են սուրում վեր,
Երբ թամբում են յաւերժութեան իրենց ձին։

Բայց յաւերժը հայդուկների համար նոր
Ունի միայն մէ՛կ ուղղութիւն, մէ՛կ ճամբայ,
Եւ դա հայոց հողի ճամբան է խիստ խոր,
Որ տանում է...երկինքները բարձրագահ։

Եւ արծիւներն մնում են հող հայրենի,
Որ վաղը երբ նոր արեւնե՛ր բարձրանան,
Որ վաղը երբ արշալոյսը արիւնի՝
Իրե՛նց արիւնն անի երկրին ցիր ու ցան...

Ցեղոյ դրա դողդոջ, խոխոջ վտակով
Հայրենիքի սառած ճիւղերն բողբոջեն.
Ողջակիզման իրենց անխոնջ կրակով
Ցուրտ սրտերի մեհեանները զօրանչեն...

.....

Հայդուկները հրահանգում են՝ ի զէ՛ն.
Կո՛չ, համազա՛րկ, երդո՛ւմ, յուզո՛ւմ, պատիւնե՛ր...
Այդօր իրօք ծնւում են բիւր Շահէններ.
Երեքշաբթի Ապրիլի 20։ Արծիւներ։

13 *Մայիսի* 1993 – *Թեհրան* ՎԱՐԱՆԴ

ՀԱՅԸ, ՄԱՐՏԻԿԸ, ԸՆԿԵՐԸ

1990 թ. անդամագրուեց Հ.Յ.Դաշնակցութեանը՝ դառնալով «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութեան անդամ

Այս իրավիճակը, երբ մարտի դաշտում համարեա՝ ամէն օր փոփոխուում են ռազմական սահմանագծերը, պարտութիւններից յետոյ հասնում ենք պատմական նուաճումների, բնական է պատերազմական ճգնաժամային օրեր ապրող ժողովրդի համար։ Բայց դա չպէտք է թոյլ տայ մոռանալ մեր «արի արանց» բանակի մարտիկներին, որոնք պատմական մեր ամէն նուաճման հաւաքաբար իսկական կերտողներն են։ Նրանց դոյութիւնը մեր ազգի գոյատեւման եւ մեր վաղուայ յաջողութիւնների ամենագեղեցիկ ու յուսադրիչ երաշխիքն է։

Այսօր Հայոց պատմութիւնը կերտող այս բանակի անպուգական մի զինուոր էլ է դոհուել Շահումեանում։

Գրիգոր Գրիգորեանը ազգի մարտիկի իր կարճատեւ, բայց միաժամանակ փոթորկոտ ու նուիրական կեանքի հերոսապատման ընթացքում մարտադաշտում է եղել հէնց սկզբից, երբ հազուադիւտ էին այն տղաները, ովքեր հրաշալիօրէն ազատուելով բոլշեւիկեան ու նէոբոլշեւիկեան գաղափարախօսութեան կաղապարուածութիւնից՝ խիզախօրէն ու անվրդով գնում էին Արցախ, հարտերը վառուած, յոյսը աչքերում՝ իրենց նուիրական ներդրումը բերելու մեր ազատագրական պայքարին։

Գրիգորը սովորում էր Երեւանի ճարտարապետաշինարարական ինստիտուտի աւարտական կուրսում։ Նախքան ուսումը՝ ծառայել է Աֆղանստանում, որտեղ վիրաւորուելուց յետոյ զօրացրուել է։

Առաջին օրերից մասնակցել է ռազմական բազմաթիւ գործողութիւնների՝ Կապանի, Սիսիանի, Շահումեանի ինքնապաշտպանութեանը, Շուշիի, Բերդաձորի, Լաչինի ազատագրմանը։ 1990 թ. անդամագրուեց Հ.Յ.Դաշնակցութեանը՝ դառնալով «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութեան անդամ։ Վերջին շրջանում մարտնչում էր

Շահումեանի շրջանի հայդուկային խմբերի կազմում եւ զոհուեց զէնքը ձեռքին, հայդուկապետ Շահէն Մեղրեանի կողքին, Ապրիլ 17ին։

Գրիգորի մէջ խտացուել էին դաշնակցական հայդուկի այն արժանիքները, որոնց շուրջ նոյնիսկ ոխերիմ թշնամու կողմից առասպելներ են հիւսուել դարասկզբին եւ որոնք մինչեւ այսօր մնում են մաքրամաքուր ու լուսաւոր ուղենիշը ազգանուէր ամէն գործի։ Նա համեստ ու կարգապահ զինուոր էր՝ հեռու ամէն ցուցամոլութիւնից։ Նա գաղափարական հայն էր, որ այնքան լաւ ըմբռնել էր մեր ազգային-ազատագրական պայքարի անժամանցելիութիւնը եւ այս գոյամարտի համար ամէն զոհողութեան գնալու հրամայականը։ Եւ վերջապէս, նա այն աքանչելի մարտիկն էր, որ զինուորի իր ունակութիւնները շքեղօրէն երեւան հանեց Հասանաբադից Շուշի, Մարտակերտից Շահումեան...

Նրա վաղաժամ մահը բոլորս էլ դիմագրաւում ենք խոր կսկիծով, մեր հոգիներում ունենալով ամենաթանկագին մի ընկեր կորցրնելու տառապանքը։ Բայց եւ այնպէս, հպարտ ենք, որ մեր շարքերում ունեցել ենք մի անմնուէր ընկեր, որ այսօր արդարօրէն արժանացել է հերոսների փառաց պսակին։ Գրիգորի յիշատակը անշէջ պահելու ենք մեր սրտերում, եւ նրա անմնացոհութեան ոգին աւելի եւս լուսաւորելու է մեր ազատագրական պայքարի այն փարոսը, որին հետեւում ենք։

Վարձդ կատար, սիրելի Գրիգոր։ Մենք շարունակելու ենք նոյն ուղով («Երկիր», 22 Ապրիլ 1993)։

Հ.Յ.Դ. «Նիկոլ Աղբալեան»
Ուսանողական Միութիւն

ՀԱՅԴՈՒԿ ԲԺԻՇԿԸ

«Մեծ մարդ է դառնալու», ասում էին ճանաչողները։ Դարձաւ։ Որպէս նահատակ։ Դարձաւ մէկը նրանցից, ովքեր իրենց կեանքը տուեցին հայրենիքի ազատութեան սուրբ գործին եւ անմահացան։

Շահէն Մեղրեանի ջոկատի զոհուած ազատամարտիկների մէջ եղել է նաեւ բժիշկ Արտակ Խաչատրեանը։

Լաւ բժիշկ լինելու համար գիտելիքը քիչ է. սիրտ ու հոգի է պէտք՝ խորունկ սիրտ ու անհուն հոգի։ Բնութիւնը չռայլ էր եղել Արտակի հանդէպ։ Տաղանդաւոր երիտասարդ էր, վիթխարի գիտելիքներ ունէր, անսահման բարի էր ու ասել չէր կարողանում ցաւը՝ ուրիշի ցաւը։ Ինքը դիմացկուն էր, ժուժկալ ու սակաւապէտ, աշխատասէր ու նուիրուած։ «Մեծ մարդ է դառնալու», ասում էին ճանաչողները։

Դարձաւ։ Որպէս նահատակ։ Դարձաւ մէկը նրանցից, ովքեր իրենց կեանքը տուեցին հայրենիքի ազատութեան սուրբ գործին եւ անմահացան։

Մարտիկ չէր։ Բժիշկ էր։ Զենքինը դէնք չէր՝ նշտար ու վիրակապ էր։ Մահուան ու ցաւի դէմ էր կռուում։ Ամոքում էր թշնամու հասցրած վէրքերը։ Բժիշկ էր ու դնաց մարտնչելու որպէս բժիշկ։

Գնաց Շահումեան, Վերիշէն։ Գանի՛-քանիսին է փրկել, ամոքել, յուսադրել։ Հաւատում էր հայ ժողովրդի յաղթանակին ու կարողանում էր հաւատ ներշնչել։ Բուժում էր նաեւ կասկած ու թերահաւատութիւն։ Այնքան էր հաւատում հայութեան յաղթանակին, որ անգամ այն ժամանակ, երբ թշնամին ներխուժեց Վերիշէն, չկարողացաւ հրդեհել հիւանդանոցի շէնքը. միեւնոյն է՝ ազատագրելու ենք, ափսոս է։ Իր ձեռքերով դաստնարան փորեց, թաքցրեց շարժական էլեկտրակայանն ու դեղորայքը։ Վատահ էր, որ մինչեւ յետդարձը դեղորայքի օգտագործման ժամկէտը չի լրանայ։

92 թուականի Յունիսն էր։ Ռուսն ու թուրքը միասին էին գրոհում։ Ուժերն անհաւասար էին։ Քաջարի շահումեանցին ստիպուած տեղի էր տալիս։ Նահանջում էին։ Իվակուացուեց նաեւ Վերիշէնի հիւանդանոցը։ Արտակը վերջիններից մէկը եւաւ գիւղից։ Ճանապարհին եօթ երեխայի կեանք փրկեց, հասցրեց մերոնց։ Փրկեց

նաեւ զոհուած ազատամարտիկի զէնքը· բերեց, Ստեփանակերտում յանձնեց։

Ընկաւ Շահումեանը։ Արտակը եկաւ Հայաստան։ Ընդունուեց ասպիրանտուրա՝ Միքայէլեանի ինստիտուտի միկրովիրաբուժութեան բաժին։ Ամուսնացաւ։

Սակայն միտքն ու հոգին Շահումեանում էր։ Վիրաւոր հողը կանչում էր նրան։ Բժիշկ էր ու չէր կարող մնալ ցաւին անտարբեր։ Երբ սկսուեց հայդուկային կռիւը, Արտակը կրկին գնաց Շահումեան։ Դարձաւ հայդուկ բժիշկ։ Հիմնովին մնալու հնարաւորութիւն չունէր, բայց գնում էր առաջին իսկ հնարաւորութեան, առաջին իսկ կանչի դէպքում։

Ոչ միայն Շահումեան էր գնում։ Այլեւ այնտեղ, ուր դժբախտութիւն է պատահել, ուր առաջին օգնութեան կարիք կայ։ Գնում էր այնտեղ, ուր քչերն են համարձակւում գնալ։

Ընդամէնը մի ամսուայ ամուսնացած էր։ Բայց Յունուարի 25ին մեկնեց Հիւսիսային Կովկաս՝ ֆիւնահիւսի տակ մնացած հայ վարորդներին բժշկական օգնութիւն ցոյց տալու...

Երբեք չէր ստում։ Բայց մի անգամ սուտ ասաց։ Ապրիլի 3ն էր, զանգահարել էր ծնողներին՝ թէ կնոջը՝ Արմինային, որը նոյնպէս վիրաբոյժ էր, ուղարկում են Ստեփանակերտ, ստիպուած ինքն էլ է գնում։ Իրականում Արմինային չէին ուղարկում՝ ինքն էր որոշել գնալ Գիւլիստան։ Կինը պայման էր դրել· եթէ դու գնում ես՝ ես էլ եմ գալու։ Միասին գնացին։ Արտակը կարողացաւ Արմինային համոզել, յետ ուղարկել։ Ինքը մնաց։ Պիտի մնար։ Սիրահարուել էր Շահումեանի հող ու ջրին, մարդկանց։

Նրան հոգին յանձնեցին Եռաբլուրում, ազատամարտիկների պանթէոնում։ Այստեղ էլ հայդուկ բժիշկն անբաժան է քաջարի մարտիկներից, գարձեալ շահումեանցիների հետ է... («Երկիր», 30 Ապրիլ 1993)։

Ց. Ս.

ԸՆԿԱԻ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԿԱՐՕՏԸ ՍՐՏՈՒՄ

Ապրելու կէսն էլ պատուով մեռնելն է։
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Կենսագրութիւնները մարդիկ կեանքով են կերտում։ Հնախրիտ գիտաարտադրական միաւորման քլորի արտադրամասի հերթափոխի պետ Կարինէ Գէորգեանը նոր-նոր էր 32ը բոլորել, երբ ծայր առաւ ազգային-ազատագրական շարժումը։

–Գիւղական դպրոցում յաղթ կանգնում էր թուրքերի առաջ, երբ քախւում էինք վերջիններիս հետ,– յիշում են Վարդենիսի շրջանի Խաչաբուր (Զախրլու) գիւղի դպրոցի 1971 թուականի շրջանաւարտները, որոնք Կարինէի համադասարանցիներն են եղել։ Ցեղոյ արդէն յիշում են, որ 1990 թ. Դեկտեմբերից Արցախում էր։

Կենսագրութիւնները մարդիկ կեանքով են կերտում։ Ինչպէս ապրում են, այնպէս էլ մեռնում են։ Կարինէն իր վերջաբանով ամէն ինչ ասաց։ Պայքարն էր նրա տարերքը։ Նշանակումը «գրաղ» բուժքոյր է եղել, չի կարողացել տեղը նստել, իջել է, խառնուել հետեւակին։ Ձեռքը դատարկ չի մնացել՝ կամ վիրակապ է բռնել, կամ էլ ինքնաձիգ։ Թէ՛ բուժքոյր էր, թէ՛ հետախոյզ, թէ՛ հրաձիգ։ Մարտական կենսագրութիւնը սկսել է Ասկերանի հոսպիտալից, ուր առաջին բուժօգնութեան խմբում էր ընդգրկուած։ Արցախն անցել է ծայրից ծայր, մտել է ազատագրուած Շուշի, Քարավաճառով մինչեւ Գանձակ (Գեանջա) տանող Օմարի շրջադարձերը հասել։ Կռուել է Մորուքի, Աւոյի (Մոնթէ Մելքոնեան) հրամանատարութեամբ։

Անցեալ տարի էր, որ Վաղուհասի մօտ վիրաւորուեց, սակայն չզգուշացաւ, հառաջին գծից չհեռացուեց։ Միշտ նեռուեց այնտեղ, ուր աւելի շատ զոհեր ու վիրաւորներ էին ապաւում։

Ցունիսի 13ի չարագուշակ առաւօտն էր։ Ականանետի առաջին կրակոցից թեթեւ վիրաւորուեց։ Ու մինչ թշնամին երկրորդ արկը կ'արձակէր, առանց վերջին ուշադրութիւն դարձնելու, շտապեց միւսների ոգնութեան։ Բարձունքին արկերի հեղեղ թափուեց։ Բեկորը դիպաւ գլխին, ուշաթափեց, կորցրեց գիտակցութիւնը...։ Արցախի ազատագրութեան ուխտեալ նահատակների շարքը համալրուեց։

Հայոց դուստրը, հայ աղջիկը...

Ապրողներս Կարինէի յիշատակի առաջ պարտք ունենք։ Նախապէս վերջ, ու ապա թափուած արեան դիմաց Արցախի պայծառ խաղաղութեամբ հատուցելով («Երկիր», 16 Ցունիս 1993)։

Ա. ՋԱՔԱՐԵԱՆ

ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԱՆՆԱՀԱՆՋ ԼՈՅՍԸ...

Նրա ապրած երեսունհինգ տարիները ձուլուեցին, սեղմուեցին, շլացուցիչ մէկ ակնթարթի մէջ, արեան տաք մի մղումի մէջ։

Մարդկային կեանքը ածխացող խարոյկի է նման, բոցկլտում է, այրում, մոխրանում։ Բայց լուշը մարդու մասին ապրում է, անցեալի մասին եղած լուշը աննահանջ է։ Կեանքը հէնց այդտեղ էլ աւարտեց Կարինէն, արկերով հերկուած դաշտում, դէպի Շահումեան տանող ճանապարհի եզրին։ Նրա ապրած երեսունհինգ տարիները ձուլուեցին, սեղմուեցին, շլացուցիչ մէկ ակնթարթի մէջ, արեան տաք մի մղումի մէջ։ Վերջին րոպէներին էլ չլքեց նրան անվեհերութիւնը, խելացողութիւնը։ Գրքերով պատմութիւն են սովորում, բայց գրքերով յաղթանակ սովորելը նշանակում է ետ նայել։ Պէտք է առաջ նայել եւ աւելի հեռուն տեսնել։ Տեսնում էր։ Գիտէր, որ միակ ելքը ուժն է։ Ցանը սպասում էին ծնողները, քոյրերը, եղբայրները։ Վտանգի զգացողութիւնը մի տեսակ քամահրուել էր, երեւի ուղղակի ժամանակ չը-կար մտածելու այդ մասին, քանզի գիշերները եւ ցերեկները միայն ծխով էին լի։ Եւ աստղերի տակ փռուած մարտակերտեան այրուած գիւղերը, ածխացած հողը, որին գարնանը թոյլ չտուեցին ծաղկել, իսկ աշնանը թոյլ չեն տալ սերմեր ընդունել, ուրիշ մտորումների համար տեղ չէր թողնում։ Գուցէ դրանից էր, որ այդքան թախծոտ էր թւում այդ հողի վրայ տարածուած լռակեաց ու աստղալից երկինքը, որն իր մէջ ամբարել է անհաշիւ հրդեհների ծխերը, հաշմուած հողի ծանր հառաչանքները։ Ցաղթանակի ճանապարհը որքան էլ դաժան լինի, միշտ ճիշտ ճանապարհ է...։ Այսպէս էր մտածում Կարինէն։ Մինչեւ մարդու ծնուելը որոշակի ծրագիր էր ներդրուում նրա մէջ։ Յետոյ, երբ հասասում են հանգամանքները, ծրագիրը սկսում է գործել։ Եւ Կարինէ Գէորգեանը ջանասիրաբար քայլում էր դէպի այդ նպատակը։ Բայց փայտը ջարդելիս տաշեղներ են թռչում։ Նրանցից մէկը քեզ է կպչում, եւ դու ընկնում ես։

Այստեղ՝ իր սիրելի Արցախում, որպէս առկայծող մի կէտ միշտ կը մնայ նրա մոլեգնօրէն թրթռացող սիրտը («Ազատամարտ», 17 Յունիս 1993)։

ՍՎԵՏԼԱՆԱ ԱԹԵԱՆ

* * *

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻՏԵՐ

Կարինէ Վլադիմիրի Գէորգեանը ծնուել է 1956 թ. Դեկտեմբերի 7ին, Վարդենիսի շրջանի Խաչաղբիւր գիւղում, ուսուցչի ընտանիքում։

1972 թ. աւարտել է տեղի միջնակարգ դպրոցը, այնուհետեւ աւարտել է Ցեռնանի պոլիտեխնիկական ինստիտուտը, որից յետոյ աշխատել է «Ճարիրխոյ» գիւտարտադրական միաւորումում՝ որպէս հերթափոխի պետ։

1988 թ. Կարինէն իր ողջ եռանդը ներդրեց ազգային ազատագրական պայքարին։ 1991 թ. ընտրուեց Ապահովարանի շրջանային խորհրդի պատգամաւոր, յետոյ՝ «Արցախ» հայրենակցական միութեան անդամ։ 1992 թ. Փետրուարին մեկնեց առաջ՝ Արցախ՝ գործող բանակ։ Նպատակն էր տեսնել Արցախը լիովին ազատագրուած, բայց Մարտակերտի շրջանի Մաղաւուզ գիւղի մօտ զոհուեց թշնամու գնդակից։ Դա 1993 թ. Յունիսի 13ն էր (Զեռագիր)։

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

ԿԱՐԻՆԷ ԳԷՈՐԳԵԱՆ

Նա երազում էր հայ կանանց գումարտակ ստեղծել եւ կռուել ամենաթէժ կէտերում։ Նա տեսել էր Մելսիդային, Աիդային, Սիրանոյշին, Աղաւնուն, Զարային եւ միւսներին, որոնք կռուում էին տղամարդկանց հաւասար, եւ տղամարդիկ նրանց տեսնելով աւելի էին ոգեւորւում։

Արցախում հանդիպեցի 33ամեայ քիմիկոս կարինէ Գէորգեանին։ Նա ինժեներ էր «Նաիրիտ» գործարանում։ Կարինէն ծնուել եւ մեծացել է Վարդենիսում։ Տեսել է, թէ ինչպէս են տեղի ադրբեջանցիները փորձում ճնշել հայերին։ Անվախ աղջիկը վիրաւորանքը երբեք չի ներել, 1988ին միացել է բնապահպանական շարժմանը, որպէս բուժքոյր մեկնել Արցախ։ Ես կարինէին հանդիպեցի Մարտակերտի մօտակայքի դիրքերում։ Նա եղել էր Բոստոնում եւ շատ էր ափսոսում, որ Ամերիկայի հայերը հայրենիքից շատ են կորրուած։ «Հայաստանի պաշտպանութիւնը սկսւում է Արցախից եւ իւրաքանչիւր հայ պարտաւոր է Արցախը պաշտպանել»։

Նա մասնակցել է բազմաթիւ ծանր մարտերի եւ իր աչքերով տեսել թշնամու վայրագութիւնը։

Կարինէն ներկայ էր Մարտակերտի անկմանը։ Տեսել է սպանուած զինուորներին, բայց ամենասարսափելին սեփական հողից հեռացող մարդկանց դէմքերն էին։ Նա ուզում էր, որ Սփիւռքը լիլի իր հայրենիքը եւ ամէն տեղ հայ մնայ։ Նա երազում էր հայ կանանց գումարտակ ստեղծել եւ կռուել ամենաթէժ կէտերում։ Նա տեսել էր Մելսիդային, Աիդային, Սիրանոյշին, Աղաւնուն, Զարային եւ միւսներին, որոնք կռուում էին տղամարդկանց հաւասար, եւ տղամարդիկ նրանց տեսնելով աւելի էին ոգեւորւում։ Կարինէն ամուսնացած չէր։ Նա որոշ տղամարդկանցից աւելի քաջ էր։ Պատմում են, թէ ինչպէս նա առանց վախենալու մօտեցաւ Մարտակերտում խփուած հայկական օդանաւին եւ օգնեց դուրս բերել այրուած դիակները։ Տղամարդկանցից շատերը չէին մօտենում ոչ միայն այն պատճառով, որ օդանաւը մօտ էր թշնամու դիրքերին. բոլորը չէ, որ կարող են նայել մահուան սարսափազդու դէմքին։ Յունիսի 13ին Մաղաւուզում վիրաւոր զինուորին փրկելիս Կարինէն զոհուեց ադրբեջանցու գնդակից («Հայք», 15-9-1993)։

Ա.Մ.Ն. *ԱՆՈՒՇ ՏԷՐ-ԹԱԼԵԱՆ*

ՖԱՐԻԴ ԱԲԳԱՐԵԱՆ «ԶՈԿԱՏԻ ՍԼԱՔ»Ը

Արկի պայթիւնից վնասուած ուսոսկրն ու ծունկը ցաւում էին, բայց երբ Մասիսի հիւանդանոցում առաջարկեցին գոնէ տասն օր պառկել, հրաժարուեց. «Դրա ժամանա՞կն է»։

52 տարեկան էր։ Ամենատարեցը ջոկատում, բայց կռւում միշտ առաջինն էր։ Մնում էր Մասիսի շրջանի Այնթապ գիւղում, մեծացել անհայր։ Աւարտելով Ծեղնաձորի միջնակարգ դպրոցը, վերադարձել էր ծննդավայրը։ Աշխատում էր նոր Խարբերդի մանուածքային ֆաբրիկայում։ Այստեղ էլ վարպետացաւ, շարունակ կատարելագործում էր իր մեքենան եւ հակայական օգուտ բերում արտադրութեանը։ Ընտանիք կազմեց, ի կատար ածեց վաղեմի իղձը՝ տան պատերը բարձրացրեց, բայց չաւարտեց։ Երասխաւանը խանգարեց։ Այստեղ էլ հանդիպեց իրենից թաքուն նոյն մղումով եկած 16ամեայ Արմէն որդուն։ Ցեռայ նրան իր հետ Ղարաքաղ էր տանելու, կռուել սովորեցնելու։ Իր «Անդրանիկ զօրավար» ջոկատի հետ եղաւ Ղարաքաղի թէժ կէտերում, վերջում հիմնաւորուեց Լաչինի միջանցքում։ Մեր մէջ ամենատարեցն էր, բայց երեխայի պէս ճնշւում էր իր ոչ–հայկական անուան համար. անմիջապէս բացատրում էր, որ ինքը մեղք չունի, Աղայեանի «Հազարան ալքուլ»ի հերոսի անունն են դրել։ Մայրենիի պէս տիրապետում էր հակառակորդի լեզուին եւ որոշ հետաքրքրութեամբ հետաքրքրուում էր հետախուզական կուրս էր անցել, գիտէիքը կիրառում էր այստեղ, հարկաւոր լուրեր կորզում հակառակորդից, զուր չէին նրան «Ջոկատի սլաք» կոչում։ Մանկուց հմուտ որսորդ էր եղել, անվրէպ էր նրա գնդակը, կռւում էր միշտ անձնուրաց ու ջահելներին օրինակ տալիս։ Նա հակապատկերն էր նրանց, ովքեր արկածախնդրութիւն էին որոնում. խորն ու իսկական հայրենասէր էր։ Արկի պայթիւնից վնասուած ուսոսկրն ու ծունկը ցաւում էին, բայց երբ Մասիսի հիւանդանոցում առաջարկեցին գոնէ տասն օր պառկել, հրաժարուեց. «Դրա ժամանա՞կն է»։ Այդպէս էլ ժամանակ չգտաւ ու հեռացաւ խաղաղ օրերի նախօրէին...

Մեզ զարմացնում էր նրա տոկունութիւնը, ամենածանր պարագաներում չէր տրտնջում, կռուի պահին անողոք էր, իսկ դադարի պահին գերուած պատանուն նայելիս՝ աչքերը կը լցուէին...։ Ոմանք նրան չէին հասկանում, նրա չափ պիտի ապրէին, տառապէին ու սիրէին, որ հասկանային...։ Հիմա դժուար է հաւատալ, որ չկայ մեր աւագ զինակիցը, բայց հեռանալով մեզ աւանդեց իր մեծ թարութիւնը, անօրինակ քաջութիւնը եւ խոր հայրենասիրութիւնը («Ազգ», 21 Սեպտեմբեր 1993)։

Մարտական ընկերների կողմից՝
ՍԱՄՈՒԷԼ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ՇԻՐԱԿ ՄՈՒՐԱԴԵԱՆ

«ԹՇՆԱՄԻՆ ԻՆՁ ԽՈՅԵԼ ՉԻ ԿԱՐՈՂ»

Գրականությունն ու պատմությունը նրա համար ո՛չ միայն սիրելի առարկաներ էին, այլև՝ արեան բաղադրություն, սէրը՝ երկիր ու հող, պաշտամունքը՝ նժդեհ, թախտը՝ անորոշ, առօրեան՝ ազատություն կամ մահ...

Նրա մասին պէտք է գրէի որպէս ապրող մարդու, հիմա ցաւով յիշատակի խօսք եմ գրում։ Աչքիս առաջ է իմ աշակերտը, քաջարթիռ մարտիկն ու հրամանատարը։ Նրա նման մարդկանց կենսագրութեամբ գորշ առօրէականից, գրպանի ու ստամոքսի պաշտամունքից զատում է հերոսականը, դառնում վարքագիծ, տարեգրութիւն, ազգի հաւաքական յիշողութիւն։

—Արթուրը թշնամու թիկունքում է։ Արթուրը ճակատամերձ գոտին ականապատում է։ Արթուրը հրանօթի մօտ է։ Արթուրը...

Արթուրը ամէնուր էր, աներեւոյթ էր, անորսալի, անվրէպ, ջերմ ու հարազատ։

Գարնանային այդ օրն էլ Տաւուշի Զորաթան գիւղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Արթուր Ուղումեանը սաների հետ էր՝ կոկիկ, վիգ, պահանջկոտ։ Վաղ առաւօտեան սահմանամերձ գօտու դիրքերի վրայ թշնամու սկսած գնդակոծութիւնը կէսօրուայ կողմ վերածուեց հրետակոծութեան ու հրթիռակոծութեան։ Նշանառութեան տակ էին շրջանի բնակավայրերը։ Հարկ եղաւ հաւաքել ջոկատի տղաներին ու չտապել սահման։ Թիչ անց բոլորը դիրքերում էին, Արթուրը՝ հրանօթի մօտ։ Փորձով գիտէր, որ իր հրանօթը թշնամուն շատ է նեղում, չեղում նրա ուշադրութիւնը։ Քանի՛ կեանք էր փրկուել այդպէս, քանի՛ տուն էր կանգուն մնացել։ Այս անգամ եւս թշնամու հրդեհները եւ տանկերը արկերի ու հրթիռների տարափը բնակավայրերից շրջեցին Արթուրի հրանօթի կողմ։

Թիզախ հրետանաւորը հասցնում էր վայրկենական դաղարներին արկերն արձակել մէկ այս, մէկ այն նշանակէտին։

Ու տեղի ունեցաւ անհեթեթ, դժան դիպուածը։ վրիպեց վերջին արկը, հարկ եղաւ կրկին արձակել՝ կորցնելով մի քանի թանկարժէք վայրկեան։ Այդ պահին հէնց կողքին պայթեց արկը...

—Թշնամին ինձ խոցել չի կարող,— համոզումն էր...

Գրականութիւնն ու պատմութիւնը նրա համար ո՛չ միայն սիրելի առարկաներ էին, այլև՝ արեան բաղադրութիւն, սէրը՝ երկիր

ու հող, պաշտամունքը՝ Նժդեհ, բախտը՝ անորոշ, առօրեան՝ ազատութիւն կամ մահ...

–Գնում եմ Աղէտի գօտի,– ասել էր ինստիտուտում, յարգել էին գերազանցիկ ուսանողին, ծնողներն ուսերն էին թօթուել՝ թող գնայ, կեանք տեսնի։

Գնացել էր, բայց՝ Արցախ. մի քանի ընկերներով զինամթերք էին գնել ու տարել լեռնային կածաններով, դիւերով՝ խուսափելով անցանկալի հանդիպումներից։ Տարել էին երկրորդ անգամ, երրորդ անգամ, չորրորդ անգամ բռնուել էին, արգելափակուել Շուշիի բանտում։ Չէին փրկուի, եթէ «Ամերիկայի ձայնի» թղթակիցը պատահականօրէն չյայտնուէր այնտեղ ու չհաղորդէր գերուած հայորդիների մասին։

Ինստիտուտն աւարտեց, չանաց մայրաքաղաքում ապրելու, ուսումը շարունակելու յորդորներին, վերադարձաւ հայրենի գիւղ, ըսկըսեց աշխատել սիրած մասնագիտութեամբ, ստանձնեց ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարութիւնը։ Այստեղ էին ընկերները՝ նիւթապաշտութիւնը, կուլտ ու անելան ապրելու խաբկանքը յաղթահարած Սուրէնը, Վարուժանը, Մամիկոնը, Օհանը, Ջուժչուդը։ Առաւօտեան դպրոցում էր, մնացած ժամանակ՝ ահմանում. գիւղը պէտք է ապրի, գիւղը ապրել է, գիւղը թշնամուն զսպել է 18–20 թուերին, միշտ։

Գիւղը կայ, ապրում է, երեխաներն են ծնւում, դպրոցը գործում է, չինականը աշխատում է, գիւղը նաեւ ուզում է՝ կորցրել է իր զօրավիգ որդուն։

Ցամեայ նահատակ երիտասարդը, հօր խօսքով ասած «Հայրանունը՝ Հայրենիք», ընտանիք չթողեց, թողեց անկատար իղձեր ու հերոսական անուն։

Իսկ խորհրդարանի լրիտոհ այրերը երեւի դեռ երկար չափուձեւ կ'անեն. արժէ՞ անկախ պետութիւնն ունենայ իր պետական պարգեւները՝ գոնէ յետմահու արժանաւորելու նահատակների սուրբ անունը... («Երկիր»)։

ԱՐՏԱԿ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ
Տաւուշի վարժարանի անօրէն

Հրամանատար էր ու զինուոր։ Ուսուցիչ էր՝ ուրեմն պիտի առաջին գծում լինէր։ Այդպէս էր։ Այդպիսին էր։ Միշտ առաջինն էր։ «Իմ կեանքը ինձ չի պատկանում»՝ ասում էր մարտական ընկերներին։

Ապրիլը նրա ծննդեան ամիսն էր։ Ապրիլին զոհուեց։ Զորաթան գիւղը մի պահ քարացաւ, Արթուրը չկայ...։ Ո՞վ է պաշտպանելու գիւղը։ Բայց կարճ տեւեց ընդարմացումը. չկար այլեւս Արթուրը, Վիշտը մեծ էր, բայց կային նրա սաները. գիւղը պաշտպան ունէր։

Ուսուցիչ էր. Հայրենիքի որդիներ էր դաստիարակել Նժդեհի օրինակով։ Իր օրինակով («Երկիր», 30 Յուլիս 1993)։

ՎԱՀԷ ՍԱՐԳՍԻ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Երբ մայրը զրուցում էր նրա հետ հայրենիքի, հայրենասիրության մասին, նա ասում էր. «Հայրենիքը նա է, որին պիտի տաս առանց պահանջելու»:

Վահէ Սարգսի Բաղդասարեանը ծնուել է 1972 թ. Յունիսի 7ին՝ Հայաստանի Հանրապետութեան Թալինի շրջանի Կաքաւաձոր գիւղում, ուսուցչի ընտանիքում:

Վեց տարեկան հասակում ընդունուել է Կաքաւաձորի միջնակարգ դպրոցի I դասարանը. մինչեւ եօթերորդ դասարանը սովորել է տեղում, ապա միջնակարգ կրթութիւնը շարունակել է Թալինի թիւ II միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի գծով խորացուած դասարանում եւ աւարտել է 1988 թ.: Նոյն տարում ընդունուել է Երեւանի պետական բժշկական ինստիտուտի բուժֆակուլտետը:

Երկրաշարժի աղէտալի օրերին 16ամեայ Վահէն ամբողջ 12 օր Սպիտակում էր, օգնում էր ինչով կարողանում էր:

1989 թ. ամրանը, արձակուրդների ժամանակ, ինքնակամ մեկնեց Սպիտակ՝ մասնակցելու շինարարական աշխատանքներին (առանց վարձատրութեան): Նոյն թուականի Հոկտեմբերին, 17ամեայ Վահէն Մեղրիում էր, պաշտպանում էր շրջանի մերձակայ գիւղերը՝ Նեռվադի ադրբեջանական գիւղի յարձակումներից: Նրանց ֆիդայական ջոկատը առաջիններից մէկն էր Հանրապետութիւնում: 1990 թ. ամրանը նորից Սպիտակում էր եւ մասնակցում էր շինարարական աշխատանքներին: 1991թ. Հոկտեմբեր-Դեկտեմբեր ամիսներին արդէն Ղարաբաղում էր, մասնակցել է Հասանաբադի իրադարձութիւններին, վերցրել են Լեսնոյ գիւղը, մասնակցել է Ստեփանակերտի Կրկժանի համար մղուող մարտերին:

1992 թ. Ապրիլի 22ից նորից Արցախում էր, մասնակցել է Շուշիի ազատագրմանը, Լիսագորի եւ Լաչինի միջանցքի համար մղուող մարտերին: Այնուհետեւ եկել է, պատրաստուել եւ յանձնել IV կուրսի II կիսամեակի քննութիւնները եւ փոխադրուել V կուրս: 1992 թ. Հոկտեմբերի 16ին թռել է Շահումեան: Շահէն Մեղրեացի ջոկատի հետ միասին մասնակցել է պարտիզանական շարժումներին, մնացել է այնտեղ մինչեւ 1993 թ. Փետրուարի 27ը: Այդ ընթացքում վիրաւորուել է գլխից, մնացել է այնտեղ, առողջացել եւ շարունակել է պայքարը: Փետրուարի

27ին վերադարձել է միայն այն ժամանակ, երբ իր աւագ եղբայրը՝ Հայկը գնացել է Շահումեան եւ փոխարինել իրեն (մեծ եղբայրը նոյնպէս ամբողջ ընթացքում կռուել է Արցախում): Վերադառնալուց՝ Մարտի 25ին նորից Մեղրեանի հետ թռել է Շահումեան, եղբօր մօտ, որպէսզի տեսնէր եղբայրը անծանօթ միջավայրում ինչպէս է դրսեւորում իրեն: Նոյն ամսի 27ին նորից գալիս է Երեւան: Ապրիլի 3ին Վահէն նորից Շահումեանում էր: Նա Շահումեանում մասնակցել է Զրաբերդ, Հաթերք, Ումուդլու, Գիւլիստան, Թալիշ, Տօնաշէն, Դաստակերտ, Վերին Շէն, Խարխապատ բնակավայրերի, Սարսանգի ջրամբարի համար մղուող մարտերին: Յունիսի 13ին, (տեղը արդէն չգիտեմ) մարտի ժամանակ մեն-մենակ ջոկատից առաջ ընկնելով մօտ 50 մետր, յարձակւում է թշնամու դիրքերի վրայ: Որպէսզի նրան մենակ չթողնէ, ընկերը՝ Կամոն, վազում է Վահէի յետեւից՝ չի կարողանում կանգնեցնել: Ին բլինդաժը պայթեցնում է, անցնում է առաջ, Կամոն վիրաւորւում է, ընկերներին բղաւում է, որ Վահէն մենակ գնաց, ջոկատը թող պաշտպանէ նրա թիկունքը. բայց 4 մ. հեռաւորութիւնից գնդացրով կտրում են 21ամեայ Վահէի կեանքի թելը: Երբ մայրը զրուցում էր նրա հետ հայրենիքի ու հայրենասիրութեան մասին, նա ասում էր. «Հայրենիքը նա է, որին պիտի տաս առանց պահանջելու»: Կամ երբ մայրը խնդրում էր, որ խղճայ իրեն, այդքան չգնայ, Վահէն ասում էր. «Մայրի՛կ, եթէ իմ 20 տարեկան ջահել կեանքը չեմ ափսոսում, նուիրաբերում եմ հայրենի հողին, էլ քեզ ինչպէս ափսոսեմ...»:

Վահէն եթէ 100 ծրագիր ու նպատակ ունենար ապագայի վերաբերեալ, բոլորը Հայաստանի, Հայ Դատի, պահանջատիրութեան շուրջն էր, անձնական կեանքի հետ կապուած ոչ մի ծրագիր չունէր: Նա ապրում էր անանձնական կեանքով:

Վահէն մի առիթով ասել է. «Ինձ համար երկու սրբութիւն գոյութիւն ունի՝ Մասիսը եւ իմ մայրը» (*Զեռագիր*):

ԱՆՍՏՈՐԱԳԻՐ

Բժիշկ էր դառնալու։ Բայց ընտրեց մարտիկի ուղին։ Մարդու այդպիսի տեսակ կայ. խելօք, համեստ, առօրեայ կեանքում աննկատ, բայց նաեւ վճռական ու խիզախ, նուիրումի, հրաժարումի ու զոհողութեան ընդունակ։ Նրանք են կռւում ազգի ճակատագիրը։ Նրանք են կերտում ժողովրդի դիմագիծը։ Վահէն այդպիսին էր։

Երկու տարուց աւելի մարտերի մէջ էր։ Կռւում էր Ղարաբաղում։ Երբ սկսուեց չահումեանցիների պարտիզանական պատերազմը, անդամագրուեց Շահէն Մեղրեանի ջոկատին։ Բազմաթիւ մարտերի մասնակցեց, բազմաթիւ վէրքեր բուժեց։ Զինուոր էր ու բժիշկ։ 93 թուականի Յունիսի 13ին զոհուեց Մադաղիսի համար մղուած մարտում։ Զոհուեց իր արիւնը խառնելով հայրենիքի համար զոհուած նուիրեալների արեանը («Երկիր», 1 Յուլիս 1993)։

Ց. Ս.

ՆՐԱՆՔ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԷԻՆ



Միհրան Մաղաքեան

Պալիկ Մամբրէեան

Դաշնակցութեանն ուղղուած ցանկացած մեղադրանք ուղղուած է իրաւաչիր դաշնակցականի: Նաեւ նրանց, ովքեր զոհուել են հայրենիքի համար: Նրանք են տուել պատասխանը: Ամօթ է, չի կարելի այդքան մոլագար ու կոյր լինել: Ատելութիւնը վատ խորհրդատու է:

Կան կուսակցութիւններ, որոնք իրենց անդամներից պահանջում են կեանքը նուիրել հայրենիքին, մարտիկ են դաստիարակում եւ մարտական բնաւորութիւնների երամ են: Այս աշխարհում ամէն մարդ պիտի գտնի իր երամը: Շատ շատերի համար այդ հաւաքականութիւնը Դաշնակցութիւնն է:

Չտարբերակենք: Բայց եւ չուրանանք: Դաշնակցութեանը ապազգային գործունէութեան մէջ մեղադրելը ուրացութիւն է եւ ոտնձգութիւն ազգային ոգու ակունքների նկատմամբ: Բոլորին է վերաբերում սա: Նոյնիսկ Հանրապետութեան նախագահին: Որովհետեւ Դաշնակցութեանն ուղղուած ցանկացած մեղադրանք ուղղուած է իրաւաչիր դաշնակցականի: Նաեւ նրանց, ովքեր զոհուել են հայրենիքի համար: Նրանք են տուել պատասխանը: Ամօթ է, չի կարելի այդքան մոլագար ու կոյր լինել: Ատելութիւնը վատ խորհրդատու է:

Չտարբերակենք: Բայց ստիպուած ենք նշել ու յիշեցնել: Բազմաթիւ դաշնակցականներ այսօր մարտադաշտում են: Բազմաթիւ դաշնակցականներ իրենց կեանքն են տուել լանուն հայրենիքի: Մի՛ պղծէք նրանց յիշատակը:

Վերջերս եւս երկու դաշնակցական զոհուեցին հայրենիքի համար: Արմաւիրի շրջանի Մրգաշատ գիւղի բնակիչներ Միհրան Մաղաքեանը եւ Պալիկ Մամբրէեանը: Երկուսն էլ նախկինում յարել են «Միացում» կազմակերպութեանը: Ապա անդամագրուել Դաշնակցութեանը: Միհրանը յայտնի էր նաեւ Գնել եւ Միշա անուններով: Շարժման սկզբից եռանդուն մասնակցել է զէնք ու զինամթերք հայթայթելու աշխատանքներին, կապերի լայն ցանց է ստեղծել զօրամասերում: Հակայ, առասպելական ուժի տէր է եղել: Կարողացել է ուսին դրած տանել 150-200 կիլոգրամ կշռող արկեր, ականներ: Ինքնուրոյն սովորել է սակրաւորութիւն: Անթերի տիրապետել է ականապատման արուեստին: Նրա յետեւից գալիս էին, խնդրում ականապատել կամ ականազերծել այս կամ

այն վայրը: Ականապատել է Իջեւանի, Տաւուշի շրջանների սահմանամերձ մատոյցները: Մի նպատակ է հետապնդել. անխոցելի դարձնել Հայաստանի սահմանները, ապա անցնել Արցախ: Մարտնչել է Մարտունու շրջանում, եղել նուիրեալ Մոնթէ Մելքոնեանի զինակիցը: Այնուհետեւ միացել է հայդուկներին, կռուել Շահումեանում: Զոհուել է Թալիշի մերձակայքում, 93 թուականի Յունիսի 7ին: Մրգաշատի դրպրոցը նրա անունով է կոչուելու:

Պաւլիկ Մամբրէեանը 26 տարեկան էր, Միհրանից 7 տարով փոքր: Բայց 90ից ի վեր մարտերի մէջ էր: Կռուել է Մանաշիդում, Զոդում, Բերդաձորում, Վարդենիսում: Շահումեանում եղած ժամանակ ամուսնացել է: Կինը Վերիշէն գիւղից է: Վերջերս անդրանիկ եւ, ափսո՜ս, միակ զաւակն ունեցաւ: Երեխայի քառասունքի կապակցութեամբ վերջին անգամ գիւղ եկաւ: Այստեղ նրան առաջարկուեց ստանձնել գումարտակի հետախոյզների հրամանատարութիւնը: Ամսի 16ին գրոհի գնացին Տօնաշէնի վրայ: Զարդեալով, կոտորելով մտան գիւղ, պահեցին այնքան, մինչեւ հասան օգնական ուժերը: 15 հոգի էին, 14ը զոհուեցին: Երեքը Հայաստանից էին: Մէկը ինքն էր՝ դաշնակցական Պաւլիկ Մամբրէեանը:

Զտարբերակենք: Բայց եւ չուրանանք: Յիշատակի եւ խոնարհումի են արժանի հայրենիքի բոլոր նուիրեալները: Յարգանքի ու գնահատումի են արժանի հայրենիքի զինուոր դաստիարակող բոլոր կազմակերպութիւններն ու կուսակցութիւնները՝ անկախ գաղափարական այս կամ այն գծից: Նրանց մէջ արժանի եւ անուրանալի տեղ ունի Դաշնակցութիւնը: Մի ուրացէք: Ով ուրանում է, ձգտում է այս ժողովրդին դարձնել ոգեզուրկ, ստամոքսահիւթով մտածող ու ապրող ամբոխ: Դաշնակցութիւնը հայոց ոգու պահապան քուրմն է: Ահա այսպէս՝ Միհրանի ու Պաւլիկի օրինակով է պահպանում Ոգին: Դաշնակցութեանը հարուածողները այդ ոգու արմատներին են հարուածում («Երկիր», 26 Յունիս 1993):

Ե. Ս.

Մեր ազատամարտիկների խիզախութեան եւ անձնազոհողութեան շնորհիւ ազատագրուեցին անցեալ ամրանը թշնամու կողմից գերուած տարածքները: Ազատագրուեց Մարտակերտը: Ազատագրում են, ասա՜ղ, բանկագին զոհերի գնով:

Արցախի ազատագրութեան զոհասեղանին իրենց կեանքը դրեցին Թաթուլն ու Վարդանը, Լէոնիդն ու Վլադիմիրը, Մոնթէն ու Շահէնը, Բեկորն ու Եուրան, շատերը...: Նրանց բոլորի նպատակը մէկն էր՝ մարտնչել յանուն հայրենի հողի, եթէ հարկ լինի, մարտիրոսուել, դառնալ կերպար ու իրենց յետեւից տանել շատերին:

Այսօր մեր շատ ժամանակակիցներ լեգենդ են դառնում այդ ճանապարհին: Հրաշաթիններ չեն նրանք եւ ոչ էլ դիւցազուններ: Սովորական տղերք են, սակայն երեւի ընտրուած Աստուծոյ կողմից:

Նրանցից մէկն էլ 25ամեայ (Յունիսի 1ին էր լրացրել) Պաւլիկ Մամբրէեանն էր՝ մեր Պաւլոն: Յունիսի 16ին նա էլ դարձաւ յաւերժի ճամբորդ... («Ուրբաթ», 16 Յուլիս 1993 - *հատուած*):

Զ. ԼՌՔՈՅԵԱՆ - Ազատամարտիկ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆՍ ՈՒՂՂՈՒԱԾ ԳՆԷԼԻ ԵՂԲՕՐ ՆԱՄԱԿԻՆ ՎԵՐՋԻՆ ԷՋԸ

Տասիկ ջան հատոր. Քայց մենք քիթակոտ ենք, որ հրատարակեն հատուցումների կյանքի ու գործի լուսաբանումը այժմ ամենամեծը է ոչ այնքան մեզ, որքան սարսափելի սերունդների, այն հայազգության դրքերին, որոնց հայրերը իրենց զլուխները ցրեցին հայր հայրը բշնամու դեմ մեռնելու համար: Որե ժամանակին չգրեին հերոսները, հերոսներ, քյուրանալը, մենք չենք իմանա մեր պատմությունը: Մենք՝ ձեզի հարազատները իրեղ-որ շատով հայերեն սիրտանք ենք զգում Ձեր սանսարի հայրենասիրական ոգեշունչությունից. հրաբիրատարար կցանք մեզ, որ ձեզի և հրատ ամեն շարքերի սեռանը չի կորչի պատմությունը համար և ձեզի 3 գրպանները դրեն, որ ձեզ չի ել զիրանկյան, որ ինչ որքանչ է, մեռնելու, կարող է կարդալ Ձեր սանսարիրը և հպարտանալ իր հարով: Թող սարսափած հանգրվանան դեռ Ձեր ցեղասպանված գործին: Մեզի այդ ցեղով է հնարավոր սերունդ սերունդ փոխանցել մեր ծարտիրի պատմությունը:

Քարին ընդ ձեզ

ձեզի եղբայր Հարութ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՂԲՕՐՍ ՄԱՍԻՆ

Միշտ ասում էր, որ հայդուկային կուսակցությունը վախկոտ ընկերը աւելի մեծ վտանգ է ներկայացնում, քան անվախ թշնամին

Ես եղբօրս հետ Շահումեանում եմ եղել Ապրիլի 12-ից մինչեւ Յունիսի 7-ը, երբ նա զոհուեց։ Գնէլն այնտեղ ղեկավարում էր հայդուկային դասակը, որի կազմում գտնուում էի նաեւ ես։ Մեր հիմնական գործը թշնամու թիկունքում դիվերսիոն գործողութիւններ կատարելն էր։ Թուրքերի ռազմական յենակէտերի ոչնչացում, ճանապարհների ականապատում կամ ականազերծում։ Վերջինը Գնէլն էր անձամբ անում, քանի որ մեզանից ոչ ոք սակրաւոր չէր։

Եղբայրս տարիներ շարունակ ստամոքսի խոց ունէր, որը երբեմն պայթում էր եւ նրան դամում անկողնում։ Շահումեանում գտնուելու ժամանակ նրա խոցը հերթական անգամ պայթեց։ Դա պատահեց այն ժամանակ, երբ մենք թողնում էինք Գիւլիստանը։ Թուրքերից գրաւուած մեքենաները, որոնք բեռնաւորուած էին զէնքով եւ զինամթերքով, անհրաժեշտ էր անյապաղ դուրս հանել Գիւլիստանից։ Դրա համար պահանջւում էր ականազերծել ճանապարհը։ Իսկ այդ գործը միայն Գնէլը կարող էր անել։ Դեռեւս Գիւլիստանում եղբօրս մօտ ստամոքսի սուր ցաւեր էին յայտնուել։ Սակայն այլ ելք չկար։ Եւ նա, ստամոքսի սուր նոպայից տանջուելով, տեղացող ձեան տակ, դանակի օգնութեամբ (ական փնտռող գործիքը, որը ճակատագրական դեր խաղաց եղբօրս զոհուելու հանգամանքներում, նորից չէր աշխատում) ականազերծեց մօտ 3 կմ ճանապարհ, որը հնարաւորութիւն տուեց մեզ խուսափել թուրքերի մեծաթիւ ուժերի հետ բախուելուց։ Հէնց ականազերծելու ժամանակ էլ պայթել էր նրա խոցը։ Մեզ հետ բժիշկ կար, որը կարողացաւ Գնէլին երկու օր խնամել։ Հայդուկային շարժման հրամանատարութիւնը որոշեց Գնէլին Երեւան տեղափոխել՝ բուժուելու համար։ Սակայն ճանապարհի կէսից նա յետ վերադարձաւ եւ ասաց. «Ախր, տղերք ջան, ես ինչպէս կարող եմ ձեզ մենակ թողնել։ Այդպիսին էր եղբայրս։ Ե՛ւ իրեն չէր խնայում, եւ մեզ էլ վարժեցնում ռազմական գործին։ Մարտական յանձնարարութիւններ տալիս երբեք խորութիւն չէր դնում իմ եւ միւսների միջեւ։ Բոլորիս նկատմամբ էլ հաւասարապէս խիստ էր եւ պահանջկոտ։ Մարտական առաջադրանք կատարելիս նա մեր հրամանատարն էր, իսկ ազատ ժամերին, երբ հանգստանում էինք, մեզ նման շարքային էր։ առնչուելիս կատակում էր, միշտ բարձր պահում տղաների տրամադրութիւնը։ Երբ որեւէ մէկի մօտ փոքր-ինչ վախկոտութեան նշոյլներ էր յայտնաբերում, առաջին իսկ ուղղութիւնով տուն էր ուղարկում։ Միշտ ասում էր, որ հայդուկային կուսակցությունը վախկոտ ընկերը աւելի մեծ վտանգ է ներկայացնում, քան անվախ թշնամին (Զեռագիր)։

Գնէլի փոքր եղբայրը՝ **ԿԱՐԷՆ**

ԵԿԱՒ, ՈՐ ՉԿՐԿՆՈՒԻ...

Աւոյի շուրջ հիւսուած լեգենդը եւ ժողովրդական սիրոյ լուսապսակը ամբողջացան Զելքաշարի գործողութիւններից յետոյ, եւ իւրաքանչիւր զինուորի համար մարտական պարգեւներին համազօր դարձաւ նրա կողքին կանգնելը։

Արցախեան շարժմամբ ծաւալուած ազգային-ազատագրական պայքարն ասես պարտադրեց, որ հայրենիքի տարագիր զաւակները գան ու հերոսանան այս հողում։ Նման հոգեւոր-բարոյական պարտադրանքով առաջիններից մէկը եղաւ Մոնթէ Մելքոնեանը եւ դարձաւ Արցախի սիրելի Աւոն։

Սերնդէ սերունդ փոխանցուող վրէժը անաքեկիչի զէնք էր դարձել նրա ձեռքերում, եւ գալով Հայաստան՝ քիչ համարեց իր սոսկական ներկայութիւնը հայրենիքում, մեկնելով Արցախ՝ զինուորագրուեց ազգային ինքնապաշտպանութեանը։

Նրա մարտական կենսագրութեան Արցախեան շրջանը սկսուեց Շահումեանով, ինքնապաշտպանական մարտերով։ Այստեղ մէկէն առանձնացաւ ո՛չ միայն սփիւռքահայի իր խօսուածքով, այլեւ՝ զարմանալի նուիրումով, մարտական վարպետութեամբ ու համարձակութեամբ։

Արցախի շրջաններից արտաքուստ հանգիստ թուացող Մարտունին ծաւալուող պատերազմի սկզբում գտնւում էր ծանրագոյն վիճակում։ Նախորդ տասնամեակների ընթացքում Ադրբեջանի ղեկավարութիւնը հեռահար մի հաշուարկով այստեղ թէ՛ ժողովրդագրական հաշուենկշիռն էր փորձում ի վնաս հայերի փոխել եւ թէ շրջանի ռազմավարական կարեւորագոյն բոլոր կէտերը վերահսկել նոր բնակավայրերի արհեստական հիմնադրմամբ, ինչի պատճառով շրջանը յայտնուեց ամենանեղուստ վիճակում՝ կտրուեցին Ստեփանակերտ տանող, ինչպէս նաեւ շրջանի ներսում բնակավայրերն իրար կապող ճանապարհները։ Այդ ծանր օրերին Մարտունիի հրամանատարը դարձաւ Աւոն։ Շահումեանից նա իր հետ բերեց զէնքն ու իր մասին աստիճանաբար հիւսուող լեգենդը. դրա հերոսական-վիպական դրուագներն էին դառնալու թշնամական տարբեր կրակակէտերի ոչնչացման փայլուն գործողութիւնները, որոնք սկսուեցին դաժանագոյն շրջափակման 91ի ձմրանը եւ շարունակուեցին 92ի ամրան ու աշնան այն ծանրագոյն օրերին, երբ հակառակորդը շարունակ առաջ՝ դէպի Ստեփանակերտ էր շարժում Մարտակերտի ճակա-

տի ուղղությամբ: Այն ժամանակ Մարտունին դարձել էր թշնամու իրաքանչիւր քայլը կանգնեցնելու եւ յետ շպրտելու խորհրդանիշը: Եւ պարտութիւններից ծնուած հոգեբանական ջարդուածութիւնը 92ի աշնանը Արցախում ցրուեց նաեւ Մարտունիի շրջանում Աւոյի տարած փայլուն յաղթանակների շնորհիւ: Ժողովուրդը մէկէն գտաւ հաւատը, հասկացաւ, որ իր յաղթանակները չեն տրորուել ու մնացել Շահումեանի ու Մարտակերտի գաղթի ճանապարհներին, որ դրանք էլի գալու են: Ու եկան: Աւոյի շուրջ հիւսուած լեգենդը եւ ժողովրդական սիրոյ լուսապսակը ամբողջացան Ջելբաջարի գործողութիւններից յետոյ, եւ իրաքանչիւր զինուորի համար մարտական պարգեւներին համազօր դարձաւ նրա կողքին կոտելը:

Բոլորը նրան համարում էին անխոցելի, բայց թշնամու դարանակալ հարուածը եկաւ յիշեցնելու, թէ հերոսներն էլ մահկանացու են, որ անհրաժեշտ է նրանց կամքն ու հաւատը, բայց մնացեալը մարդկանց նման մարմինը եւս փուխր է արկի բեկորի հարուածին դիմանալու համար, եւ Աւոն ընկաւ:

Սակայն կայ եւ ապրում է հաւատը, որ անտրոհելի կը մնայ նրա ստեղծած բանակն ու անճեղքելի՝ գծած պաշտպանական դիրքերի շղթան: Զարմանալի մի օրինաչափութեամբ պահպանուած բոլոր լուսանկարներում նա կանգնած է ճանապարհին, եւ այդ ճանապարհի վերջը կա՛մ չի երեւում, կամ էլ գնում կորում է լեռնային գոգաւորութիւններում: Ասես կիսատ մնացած մի ուղի է, որ պէտք է աւարտուէր ԼՂՀի վերականգնուած սահմաններում, բայց դա տեղի չունեցաւ, որովհետեւ ինքը այն առաջնորդներից էր, ովքեր աչքերը փակում են՝ չհասնելով շրջանցել այն վերջին լեռնալանջը, որից յետոյ բացւում է տեսարանը Աւետեաց երկրի:

Կարող էր ամենաբարեկեցիկ կեանքով ապրել աշխարհի ցանկացած անկիւնում, բայց պապերի կորցրած երկրի կարօտը նրան բերեց այս լեռնաշխարհը՝ այստեղ լուծելու իրեն աւանդուած վրէժն ու չթողնելու, որ այս ժողովրդի հետ էլ կատարուի այն, ինչը ժամանակին եղաւ իր պապերի հետ («Երկիր», 19 Յունիս 1993):

ՎԱՐԴԱՆ ԴԵՒՐԻԿԵԱՆ

ԿԱ՛Յ, ԱՊՐՈ՛ՒՄ Է ՄՈՆԹԷ ՄԵԼՔՈՆԵԱՆԸ

Այլեւս չկայ Մոնթէ Մելքոնեանը։ Նա, որ լեգենդ էր, առասպել, դիւցազներգութիւն, չկայ այլեւս։ Բայց արդեօք մեռնո՞ւմ են լեգենդները, արդեօք սպանւո՞ւմ են առասպելները, գնդակից ընկնո՞ւմ են դիւցազներգութիւնները...

Մոնթէ Մելքոնեանը կա՛յ։ Չի՛ կարող չլինել այն ոգին, որ հայի ոգին էր, իսկ նա հայի ոգին էր մարմնացեալ։ Եւ աշխարհում չկա՛յ մի ուժ, որ կարողանայ ընկճել այդ ոգին։ Մոնթէ Մելքոնեանը իր կեանքով ապացուցեց դա ու իր մահով հաստատեց։

«Վասն հայրենեաց մեռար՝ դու չա՛տ ապրեցար»։

Ի՛նչ ճակատագիր՝ ծնուել հեռաւոր Ամերիկայում եւ իր մահկանացուն կնքել Արցախի սուրբ հողում, զէնքը ձեռքին։ Հայի ճանապարհ, հայդուկի ճակատագիր, ազատամարտիկի բախտ...

«Վասն հայրենեաց մեռար՝ դու չա՛տ ապրեցար»։

Մենք սգում ենք զինուորի ու հրամանատարի մահը եւ գօտեպնդւում։

Յոնարհւում ենք նրա աճիւնի առջեւ եւ միաժամանակ հրպարտօրէն գլուխներս վեր բարձրացնում՝ այնպիսի՛ն ենք մենք...

Եւ մենք Մոնթէ Մելքոնեանին հրաժեշտ չենք տալիս։ Մեր կողքին է նա, մեր մէջ, այնտեղ՝ Արցախի ազատ երկնքի տակ, Ղարաբաղի արեւի ներքոյ։ Մեզ դաս է տալիս։ Հայրենասիրութեան դաս... (17 *Յունիս* 1993)։

«ԵՐԵԿՈՅԵԱՆ ԵՐԵՒԱՆ»

ՄՈՆԹԷ ՄԵԼՔՈՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սիրելի Մոնթէ, այդ ո՞ւր ես գնում,
Մի՞թէ իրաւէն մոլորուել ես դու,
Այդ ո՞ւր ես տանում
Ծաղկափնջերի ու պսակների բանակն այդ ատուար,
Եւ դարձիր, եւ տար ծաղկունքն այդ պէս-պէս,
Ծաղկաբոյլերով գրոհիր գերուած մեր դաշտ ու լեռներ,
Որտեղ վշտաճար ձիւն-ձմեռ է դեռ,
Ուր կարօտակէզ սպասում են քեզ,
Քո ազատարար, խրոխտ գոչիւնին...—
Ողջո՞յն, արթնացէ՛ք, գարուն եմ բերել...

Դու, որ չես քնել օրեր շարունակ,
Թէկուզ որքան էլ յոգնած ես եղել,
Հսկել ես արթուն քո հող հայրենին,
Այս դժուար ժամին՝
Եռագոյն ծածկոցն արել քեզ վերմակ՝
Քնել ես անհոգ.
Վեր կաց, սիրելիս,
Գերուած շէները
Սպասում են քո ձայնին,
Տար այդ Եռագոյն թիկնոցը քեզ հետ
Եւ որպէս դրօշ
Մեր սուրբ լեռների վրայ ծածանիր,
Վեր կաց, սիրելիս, կատակ մի՛ արա,
Զարկուելու օր չէ, զարկուելու ժամ չէ,
Օր է զարկելու, ժամ է զարկելու,
Վեր կաց, քաջորդի Մոնթէ զօրավար,
Գնանք մեր գերուած հողը փրկելու

(Մեքենագիր) ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏՉԵԱՆ
20 Յունիս 1993

ՆՐԱՆՑԻՑ ՈՄԱՆՑ ԷԼ ՉԵՆՔ ՏԵՍՆԵԼՈՒ

Այսօրուայ շարունակուող պայքարի ընթացքին մի քիչ թեթեւակի ենք գործածում «հերոսական», «համեստ», «պայծառ» եւ նմանօրինակ այլ բառեր: Սակայն Մերուժան Մոսիեանին յարմարում են այս բոլոր ածականները:

Արցախում եւ Հայաստանում եռամսեայ իմ կեցութեան վերջաւորութեանը անդրադառնալով՝ գիտակցում եմ, թէ որքան անուցիչ է եղել այս ժամանակամիջոցը ո՛չ միայն ներկայ քաղաքական, զինուորական եւ ընկերային իրավիճակին ծանօթանալու, այլեւ՝ բազմաթիւ թանկագին մարդկանց հետ շփուելու առումով: Մարդիկ, որոնք իրենց ձիրքը, նուիրումը ի սպաս են դրել Արցախեան շարժման: Այս շփումը աւելի շօշափելի եւ ներթափանցող եղաւ, որովհետեւ կենդանի առասպելների հետ խօսելու ժամանակ գիտակցում էի այն տխուր եւ անխուսափելի իրողութիւնը, թէ նրանցից ոմանց երբեք նորից չպիտի տեսնէի...

Այս տրտում, բայց եւ ներշնչող պարագաներից մէկն էր Մերուժան Մոսիեան Դաշնակցական ղեկավարն ու Մարտունու գումարտակներից մէկի հրամանատարը, որ զոհուեց 27 տարեկան հասակում: Այսօրուայ շարունակուող պայքարի ընթացքին մի քիչ թեթեւակի ենք գործածում «հերոսական», «համեստ», «պայծառ» եւ նմանօրինակ այլ բառեր: Սակայն Մերուժան Մոսիեանին յարմարում են այս բոլոր ածականները, որովհետեւ մարմնաւորում էր մեր ժողովրդի ազնուագոյն յատկութիւնները:

Մերուժանը անմիջապէս մխրճուեց Արցախեան շարժման մէջ: Տեսաւ առաջին օրերի ընդլայնակեայ պայքարի դժուարութիւնները, դէմ ելաւ թուրքական եւ Խորհրդային միացեալ ուժին ու ճնշմանը այն ժամանակ, երբ հայ հոգեբարոյական վիճակը տակաւին հաստատ չէր այն հաւատով, թէ կարելի է ազգային-ազատագրական պայքարը յաջողութեամբ պսակել: Երկու փոքր խմբերով Մերուժանը սկսեց զէնք հայ-

թայթել եւ զինել Մարտունու շրջանը, քանզի գիտէր՝ թուրքի սաստկացող հալածանքին ու ջարդերին կարելի է դիմակայել միայն այդպէս:

Երբ գաղտնի պայքարը վերածուեց բացայայտ զինուած պայքարի, եւ սաստկացան հայադրբեջանական բախումները, Մերուժը նրանցից մէկն էր, որ կառուցեցին հիմքերը այսօրուայ բանակի: Իսկ մինչ այդ հարկաւոր էր անհաբեկչութեամբ, տարբեր տիպի յարձակումներով տեղահան անել ադրբեջանական բնակչութեանը եւ ճնշել այն իշխանութիւններին, որոնք նեցուկ են դարաբաղաբնակ թուրքերին:

1992 թ. Արցախի ազատագրական պայքարը պաշտօնական բնոյթ ստացաւ, ու շատ բնական էր, որ Մարտունիում կազմուող գումարտակներից մէկը պիտի ղեկավարէր Մերուժը: Մերուժի շուրջ արդէն հաւաքուած էին տասնեակ երիտասարդներ, որոնցից էլ կազմուեց շրջանի լաւագոյն զօրամասերից մէկը, որ յաջողութեամբ մասնակցեց բազմաթիւ մարտական գործողութիւնների՝ Քելբաջարի, Մարտակերտի ռազմավարական նշանակութեան բարձունքների վերագրաւումը, Աղդամի շուրջ գործողութիւնները՝ ներառեալ Ցունիսին Ասկերանի ազատագրումը եւ այս ամրանը Ֆիզուլիի ռազմավարական կէտերի չէզոքացումը:

Մերուժան Մոսիեանը զոհուեց Օգոստոսի 23ին, ժամը 14:45ին, ընկերների՝ Մեր Ջուլհաճեանի, Արտակ Մնացականեանի եւ Լեւոն Համբարձումեանի հետ սահմանապահ դիրքերից վերադառնալիս: Այնպէս եղաւ, որ Մերուժի մահուանից մէկ շաբաթ առաջ ընկերներից մէկը պարզ, աներկբայօրէն վկայեց, թէ ինչպիսի մարդ էր նա: Մերուժի տեղակալներից մէկը՝ Վալերի Վանեանը, որ երկար տարիներ ծառայել է Խորհրդային Բանակում եւ այժմ Արցախի մարտիկներից է, հայրական իրաւունքով, հպարտօրէն էր խօսում իր կէս տարիքն ունեցող Մերուժի մասին: Նրան բնութագրելով որպէս ղեկավարի, ընկերոջ ու գործակցի՝ ասաց. «Իբրեւ ընկեր շատ հաւատարիմ, հոգով տղայ է, ազգի ամենաչնչին մասնիկի համար կեանքը կը տայ եւ ոչ մի բան չի խնայի»:

Մերուժանը մեծ հաճոյքով ու գոհունակութեամբ էր խօսում յաջողութիւնների մասին, որոնց մէջ ինքն էր գլխաւոր դերակատարը, բայց երբեք չէր մատնանշում իրեն՝ ուշադրութիւնը բեւեռելով միւսների վրայ: Իր արածների մասին շատ կարճ ու հարեւանցի էր արտայայտւում:

Սիրում էր մարտավարութեան մասին խօսել: Հոգեբանական տրամադրուածութիւնը Մերուժանի դիտանկիւնով ամենակարեւորն էր: Ընդ-

դունում էր ռազմական տեխնիկայի կարեւորությունը եւ անմիջապէս աւելացնում, որ անցած տարի Մարտունու ուժերը գրեթէ ոչնչացրել էին թուրքերի հրասայլերի յարաբերական առաւելությունը, այն 10-1 յարաբերությունից հասցնելով մինչեւ այսօրուայ մօտաւոր հաւասարությունը: Ցատուկ ընդգծում էր, որ այսօր Մարտունիում գործող տեխնիկայի կորիզը բաղկացած է թշնամու ռազմատեխնիկայից:

Մերուժան Մոսիեանը նեղ զինուորական մտածողութեան տէր չէր, այլ լայն աշխարհահայեացքով մարդ, լիովին նուիրուած պետութիւն կերտելու ու «մէկ ազգ, մէկ պայքար» գաղափարները առաջ տանելու գործին: Այն միտքն էր արտայայտում, որ մեր ազգը պէտք է գործածի իր տրամադրութեան տակ գտնուող բոլոր միջոցները՝ մեր նպատակներն իրականացնելու համար:

Մերուժան Մոսիեանը Արցախում վերջին երկու տարում նահատակուած 18րդ դաշնակցական հրամանատարն էր: Անշուշտ, պէտք է գիտակցենք, թէ այս իրականությունը միայն տաղանդաւոր անհատի կորուստ չի նշանակում: Անհնար է Մերուժան Մոսիեան մարդը բաժնել Մերուժան Մոսիեան դաշնակցականից: Նա կարողացաւ հրամանատարական ծանր պարտականութեան հետ մէկտեղ զուգակցել նաեւ Դաշնակցութեան Կենտրոնական Կոմիտէի անդամ լինելու պարտականությունը: Սկզբունքային, հաստատակամ, անվարան նուիրում՝ ահա այս յատկանիշներն էին, որ ամբողջացնում էին նրա բարոյական կերպարը (**«Երկիր»**, 17 Սեպտեմբեր 1993):

ԱՆԴՐԱՆԻԿ ԳԱՄՊԱՐԵԱՆ
Մարտունի-Փարիզ

Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի տեսիլքը, որ յարութիւն առած է Մերուժանի եւ անոր նման կէս ճամբան մնացածներու տեսքով, այսօր արդէն հաստատ կերպարանք դարձած է անտարբեր աշխարհի ու ծուատուած ճոգիով Արցախի համար Եւ ոչ մէկ անգամ, նոյնիսկ պատեհ առիթով, ան բարձրաձայն պատմեց իր ըրածի մասին ...։ Դառնանք ու փառաբանենք Մերուժանին առջեւ յաւերժի ճամբան բռնած ու Մերուժանէն յետոյ այդ ճանապարհով գացած բոլոր-բոլորին։ Իսկ ապրողներուս համար որպէս սփոփանք՝ անոնց բերած գալիք յաղթանակը կ'ըլլայ, քանի որ մեր դարաւոր պատերազմի իրական պայքարի դասը Արցախի մէջ բացուած է եւ Արցախի խաչբարերու կողքին արեւաճող ու խաչքարերու պէս սրբացած յուշարձանի առջեւ գալիք օրերու հայը ծունկի պիտի գայ։ Մինչ այսօր շիրիմի վրայ 28 բոլորած երիտասարդի ապրած բոլոր գարունները ծաղիկները դրուեցան ու անոր չապրած գարունները եկան ու անմահացան այս շիրմաթմբով։

28 *Օգոստոս* 1993 «*ՀԱՅԼՈՒՐ*»

ՄԵՐ ՈՒԺԸ

Մերուժան Մոսիսեանի
անմոռաց յիշատակին

Քայլում էր նա սէգ ու հպարտ,
Քայլում էր նա խիզախ, անպարտ,
Ամբողջապէս ուղեղ դարձած՝
Մի մարմնացած ուղեղամարդ՝
Խորունկ ու բարդ,
Քայլող ուղեղ՝ ուղեղակոյտ՝
Խորաթափանց...

Այդ ուղեղից աչքեր բուսած
Եւ աչքերից սուր հայեացքներ,
Այդ ուղեղից ձեռքեր ծլած
Եւ ձեռքերով զէնքեր բռնած,
Նաեւ քայլող, գամուող ոտքեր,
Որ քայլում էր ճիշտ ու շիտակ։
Այդ ուղեղը սիրտ էր նաեւ,
Սիրտ էր մաքուր,
Որ ամէնուր տրոփում էր
Բարդ մի տակտով.
Որ կրում էր ցաւը վէրքի՝
Հոգի, շրի ու երկնքի...

Ցանկարծ կանգնեց,
Կանգնեց անդարձ
Ու հայեացքը նետեց ճարաւ,
Ուր եւ կար ելք, ուր եւ կար դաւ...
Ուր դարձաւ ելք, ցնցիչ քայլերգ,
դարձաւ արշաւ.
Եւ պատմաշունչ պարբերութեամբ՝
Գաղափարի ծանօթ յաղթերգ...

Նա ուժն էր մեր.
Նա Մերուժն էր
Մերուժանն էր...

Օգոստոս 1993
Ստոխմանակերտ-Թեհրան

Կ. ԲԱՍԵՆՑԻ

ՄՀԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մհերի կեանքը նոյնպէս ենթարկուեց այս անողորմ օրէնքին, երբ գաղափարի ու զէնքի իր ընկերների հետ նահատակուեց Մարտունու ճակատային դիրքերում՝ թողնելով անկատար տեսիլներ։

Երբ նայում ես այն արտասովոր կեանքին, որի մէջ ապրում ես արդէն մի քանի տարի, երբ յիշում ես, որ դեռ երէկուայ անման ընկերներդ այսօր ֆիզիքապէս հեռացել են քեզնից, երբ մտածում ես, որ այսօրուայ ընկերդ էլ կամ դու ինքդ էլ վաղը կարող ես առյաւէտ մեկնել այս աշխարհից, ողջ հոգիդ համակւում է ունայնութեան մի խոր զգացումով, արգահատանք ես զգում այս իրականութեան նկատմամբ եւ անիծում ես այն ճակատագիրը, որ այսօր քեզ դրել է այս կեանքում։

Բայց ո՛չ...

Երկար չեն տեւում այսպիսի մտածումները։ Շուտով սթափւում ես։ Սթափւում ես, որովհետեւ յիշում ես, որ մենք այսօր ապրում ենք պատմական մի ժամանակաշրջան, ուր ժամն ու ամէն րոպէն մեզ դնում է համազգային պատասխանատուութեան առջեւ՝ մեր հայրենի հողի ու գալիք սերունդների ճակատագրի նկատմամբ։ Երբ այս օրհասական օրերին խիզախօրէն բարձրացրել ենք ազգային-ազատագրական պայքարի պանծալի դրօշը, միաժամանակ պիտի գիտակցենք, որ այս դրօշը միայն այն հերոսաբար կրողների արեամբ կարող ենք մշտականօրէն բարձր պահել եւ խրոխտաբար քայլել դէպի յաղթանակների ուղին։ Ուրիշ ելք չկայ։ Այս է ազատագրական պայքարի դաժան օրէնքը, որ բոլորիս տանջում է, բայց նաեւ հպարտացնում, երբ յիշում ենք, որ ունեցել ենք Վարգանի, Գագիկի, Արթուրի, Համլետի, Գրիգորի եւ այսօր էլ Մհերի նման հերոս ընկերներ...։ Մհերի համար էլ այսօր բոլորս երգում ենք.

Ցատերն ընկան էդ ճամբի կէսին՝
Սրտերը վառուած, յոյսը աչերին։

Ինչպէս բոլոր մեր նահատակ ընկերները, Մհերն էլ ունէր իր պատմութիւնը, որն իսկապէս իւրայատուկ էր։ Նա եկել էր Լիբանանից եւ մաս էր կազմում ընտրեալների այն փաղանգի, որոնց

համար «Դէպի երկիրը» երբեք չէր եղել լողունգային մի արտայայտութիւն, այլ դարձել էր սրբազան մի կոչ, որի միջոցով լսում էր ամենառաջին հերթին Արցախեան կռուի որոտներն ու հայրենի վտանգուած հողի ատառապագին վիշտը։ Մհերի նման մրրկոտ հոգիները չէին կարող չանսալ այս ձայներին։ Նուիրեալ այս դաշնակցականը պատնէշի առաջին գիրքերում էր Լիբանանի քաղաքացիական կռիւների ժամանակ՝ անմեղիրաբար գործելով տեղի հայկական գաղութի ապահովութեան ի խնդիր։ Նա յիարժէքօրէն կատարել էր այնտեղի դաշնակցականի իր յանձնառութիւնները։ Պատանեկան միութիւնների շարքերից սկսած մինչեւ երիտասարդական եւ ուսանողական միութիւններ։ Բայց ինչքան էլ հարազատ լինէր Լիբանանի միջավայրը, այնուամենայնիւ նրա սրտում արմատացած ազգային վեհանձնութեան ու անյողդողդ կամքի յատկանիշները նրան մղում էին դէպի Հայաստան, դէպի Արցախ։

Այդպէս էլ եղաւ։

Պակուելուց անմիջապէս յետոյ էր՝ իր կեանքի ընկերուհու հետ ամենայն համոզումով եկան ու հաստատուեցին Հայաստանում։ Իսկապէս պէտք է ապրել նմանների հետ՝ լաւապէս գիտակցելու համար, թէ ինչ է նշանակում թողնել ծննդավայրն ու բնակութիւն հաստատել հայրենի հողում։ Նրանց արածը հոսանքն ի վեր թիավարում էր՝ հայրենի դժնդակ պայմանների, բայց նաեւ Սփիւռքի կաղապարուած եւ քաղքենիական մտայնութիւնների դէմ։

Երկար չմնաց նա մեզ հետ։ Մենք ուրիշ ու ժամանակ չունեցանք մօտիկից ճանաչելու Լիբանանից եկած մեր այս նոր ընկերոջը։ Նա լուռ էր ու համեստ։ Չէր սիրում իր մտքերը արտայայտել բոլորի առջեւ, եւ դժուար էր նրան իսկապէս ճանաչելը։ Մեր ընկերների մեծ մասը միայն հեռուից ծանօթացաւ խորհրդաւոր ժպիտով Մհերին, որ, անտարբեր Հայաստանի պայմանների յարուցած դժուարութիւններին, խանդավառութեամբ արմատներ էր գցում հայրենի հողում։

Մհերը դեղեցիկ ծրագրերով մեկնեց իր կեանքի իմաստը դարձած Արցախ։ Բայց անողոք ճակատագիրը խորութիւններ չի դնում իր դաժան անօրինումների միջեւ։ Մհերի կեանքը նոյնպէս ենթարկուեց այս անողորմ օրէնքին, երբ դաղափարի ու զէնքի իր ընկերների հետ նահատակուեց Մարտունու ճակատային դիրքերում՝ թողնելով անկատար տենչեր։

Նրա մահուան բօթը խոր վշտով է համակել սիրելի տիկնոջը, ընտանիքին, դաղափարակից ընկերներին ու առհասարակ դաշնակցական ընտանիքին։ Եւ ինչո՞ւ չկարտանալ նրա հերոսական նահատակութեամբ։ Խորապէս համոզուած ենք, որ Մհերի ու նրա ընկերների նահատակութիւնը աւելի է ամրապնդում Արցախ-Հայաստան եւ Արցախ-համայն հայութեան պորտակապը, որ փորձել է կտրել պատմութիւնը։ Վերջին հաշուով անուրանալի է, որ մէկ ազգ ենք ու մէկ հայրենիք, եւ բոլորս էլ մանակից այսօրուայ մեր ազատագրական կռուին։

Մհերը եղաւ նաեւ այս գաղափարի նահատակը։ Ձենք կասկածում, որ նրա ու նրա ընկերների անմեռ յիշատակը Արցախից Հայաստան ու բովանդակ աշխարհ պիտի ոգեշնչի նոր Մհերների, որոնք դուրս պիտի գան իրենց արհեստական բանաբկութիւնից՝ գալու եւ համալրելու բաց թողած թանկագին տեղերը։

Հ.Յ.Դ. «Նիկոլ Աղբալեան» ուսանողական միութեան անունից մենք ցաւակցում ենք Մհերի հարազատներին ու բոլոր գաղափարակից ընկերներին, եւ խորը կսկիծով, բայց գօտեպնդուած չարքերով միաբերան ասում ենք՝ «վարձդ կատար, սիրելի ընկե՛ր» (**«Երկիր»**, 28 *Օգոստոս* 1993)։

Հ. Յ. Դ. «Նիկոլ Աղբալեան»
ուսանողական միութիւն

ԱԽՊԷՐՍ ՈՒ ԵՍ

Անօրէն թուրքն է տիրել Մայր հողին,
Ինչ արտով պիտի մտնենք անկողին.
Մամ ջան, չտխրես, շատ չմտածես,
Կռիւ ենք գնում, ախպէրս ու ես

Մոայլ գիշեր է, նստած ենք փոսում,
Այստեղ հայ քաջի արիւնն է հոսում,
Եկել ենք կռիւ, կռուում ենք այսպէս,
Խփում ենք թուրքին, ախպէրս ու ես

Երբ լուսաբացին թուրքն է ներս սողում,
Մեր գիլ հարուածից աշխարհն է թնդում.
Ինչքան պէտք լինի՝ կը կռուենք այսպէս,
Հայ ազգի համար, ախպէրս ու ես

Էլ յետ դարձ չկայ, կռիւ է ասատիկ,
Օրհնանքդ տուր մեզ ու մի լայ, մայրիկ,
Թէ մի օր կտրիդ զոյգ արծիւ տեսնես՝
Էդ մեր հոգիքն են, ախպէրս ու ես

Մամ ջան, կը բացուեն դռները մեր գոց,
Ոսկի կը հագնի սեւ օրը հայոց
Ու տուն կը դառնանք յաղթութեամբ էապէս,
Ծափով, ծիծաղով, ախպէրս ու ես

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔԸ՝ ՈՒՍՈՒՑՉԻՆ

Մասնակցել է Լաչինի գիւղերի, Քելբաջարի, Մարտակերտի ազատագրման մարտերին: Դեռ քսան տարին չբոլորած՝ արդէն գումարտակի հրամանատար էր:

Հէջ մարդկութեան մէկ ոսոր գոս՝
Հայրենիք մը ունիմ թշուառ,
Զոգնած անոր՝ մեռնի՛լ անչան,
Ո՛հ, ա՛յս է սոսկ ցաւ իմ համար։

Իր նման վաղամեռիկ բանաստեղծի այս տողերն էր սիրում յատկապէս արտասանել տասնմինգամեայ Մաուէնը: Եւ ո՞վ կարող էր մտածել, որ այդ չարաճճի, խենթ մանչուկի հոգում դա խոր արմատներ է գցելու...

Ծատ զգայուն եւ անմիջական բնաւորութիւն ունէր, ու նրա պատանեկան սիրտը շատ ծանր տարաւ 1988 թ. երկրաշարժը, Սումգայիթը, յաջորդած բազմաթիւ արհաւիրքները: Լաւ գիտէր իր ժողովրդի պատմութիւնը եւ հպարտ էր, որ հայ է: Լաւատես էր եւ այդ ծանր օրերին մի շարադրութեան մէջ գրում է. «Այո՛, այս վէրքերը հայ ժողովուրդը չի մոռանայ, բայց նա նորից ոտքի կը կանգնի եւ կ'ապրի լաւիտեան»:

Ծնուել է 1973 թ. Օգոստոսի 31ին՝ Երեւանում, բայց արմատները տանում էին նրան Արցախ: Սովորել եւ աւարտել է Աբովեանի շրջանի Բիւրեղաւանի թիւ 1 միջնակարգ դպրոցը: Սովորում էր Երեւանի ճարտարագիտական համալսարանի 3րդ կուրսում, վերջին մէկ տարին «համատեղում էր» ուսանողական կեանքը ազատամարտիկի կեանքի հետ: Հայրենիքի կանչով զէնքը ձեռքին 1992 թ. Մայիսից Արցախում էր: Մասնակցել է Լաչինի գիւղերի, Քելբաջարի, Մարտակերտի ազատագրման մարտերին: Դեռ քսան տարին չբոլորած՝ արդէն գումարտակի հրամանատար էր: Ծանր վիրաւորուել եւ իր մարտական ընկերների՝ Էրիկի եւ Արթուրի ձեռքերի վրայ զոհուել է Հադրութի գիւղերի պաշտպանութեան համար, իր ծննդեան օրից ընդամէնը մէկ շաբաթ առաջ, Օգոստոսի 24ին, երբ պիտի լրանար ընդամէնը քսան տարին...

Իր շարադրութիւնը Մաուէնն աւարտում է.— «Նորից կը գայ գարուն, նորից հայ ժողովրդի համար կը բացուի պայծառ առաւօտ, եւ նա կը շարունակի իր խաղաղ կեանքը»: Այո, այդպէս էլ պիտի լինի, եւ դու էլ կ'ապրես մեզ հետ, իմ խենթ Մաուէն, քո նմանների «յիշատակն ալ չի թառամի» մեր՝ քո ուսուցիչների, ծնողների, դասընկերների, մարտական ընկերների սրտերում: Դուք մեր սրտի վէրքն էք, իսկ սրտի վէրքը անբուժելի է... («Երկիր», 1 Սեպտեմբեր 1993):

ՍԻԼՎԱ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՓՈՔՐԻԿ ՏԱՆԿԻՍՏԸ

Մեզ համար յաղթանակը թշնամուն պարտութեան մատնել չի նշանակում միայն։ Յաղթանակը նաեւ նրան չնմանուելն է, իր տեսակին հաւատարիմ մնալը։

Հայկական դիրքերը տանող արահետով քայլում էին երեք հոգի։ Երկուսը՝ անգէն, ժեռքները ծոերակներին, մէկը՝ զինուած, նրանցից մի քանի քայլ յետ։ Երկուսը ադրբէջանցի գերիներ էին։ Մէկը նրանց գերի վերցրած հայ մարտիկ էր՝ Լեւոն Խաչատրեանը։ Ադրբէջանցիների դէմքին սարսափ կար։ Մօտալուտ հաշուեյարդարը անխուսափելի էր թւում։ Լեւոնը գերիներին յանձնեց հրամանատարին, զեկուցեց, ապա դարձաւ խմբուող ընկերներին՝ խնդրելով բռնութիւն չգործադրել գերիների նկատմամբ։

20-ամեայ հայ մարտիկի կենսագրութեան այս դրուագը մէջբերելու նպատակը գթասրտութեան գովքը չէ բնաւ։ Սա ուրիշ պատերազմ է։ Այս պատերազմում գերի չեն յանձնւում ու գերիներին չեն խնայում։ Սա տեսակների պայքար է։ Մեզ համար յաղթանակը թշնամուն պարտութեան մատնել չի նշանակում միայն։ Յաղթանակը նաեւ նրան չնմանուելն է, իր տեսակին հաւատարիմ մնալը։ Զինուորն ու բանակը նաեւ այսպէս են թրծւում։

Լեւոն Խաչատրեանը հայոց բանակի զինուոր էր։ Պաշտպանում էր Հայաստանի սահմանները։ Տանկի հրամանատար էր։ Տարիքով ու մարմնով փոքր էր, պատանու խենթ խիզախութիւն ունէր ու... քաղցրարիւն էր։ Ընկերները նրան «Փոքրիկ տանկիստ» էին ասում։ Հնարաւորութիւնը բաց չէր թողնում, երբեմն՝ տուն ու սիրած աղջկան զանգելու։ «Զնաբերդ ենք հասնելու»,— ասում էր տնեցիներին (նախնիները Զնաբերդից էին)։ Իսկ սիրած աղջկան... Մարտական ընկերները հարսանեկան նուէր էին պատրաստել. մատանի, մանեակ։ Ժառայութիւնն աւարտէր՝ ամուսնանալու էր։ Յաղթանակը բերէր՝ ամուսնանալու էր...

Օգոստոսի 28-ին թշնամին վիրաւոր գազանի անզօր կատաղութեամբ յարձակման ելաւ։ Գրոհում էին Շուշանուխի պաշտպանական

դիրքերը։ Վեց տանկ օձագալար, կրակ ու բոց ժայթքելով, սողում էին դէպի Հայաստանի սահմանը։ Նրանց դէմ ելան մեր տանկերը։ Լեւոնի տանկը սրընթաց մխրճուեց թշնամու զօրաշղթայի մէջ։ Երկու դիպուկ հրետանազարկ՝ եւ երկու տանկ, սեւ ծուխ արձակելով, անշարժացան։ Գնդացրի կրակահերթը հնձեց ճողոպրող անձնակազմերին։ Միւս տանկերը շրջուեցին, փախան։ Օդում յայտնուեցին թշնամու ուղղաթիռները, խուզող թռիչքով անցան պաշտպանական շղթայի վրայով։ Երկուսին կարողացան խփել։ Բայց ուղղաթիռներից մէկի արձակած հրթիռը խոցեց Լեւոնի տանկը։ Անձնակազմը դուրս նետուեց տանկից։ Բայց տանկի կողքին պայթեց մէկ այլ հրթիռ։ Անձնակազմից երկուսը վիրաւորուեցին։ Իսկ մահացու խոցուած Լեւոնն ընկաւ աշտարակի վրայ։ Կարմիր արեան հրացոլքը ծածկեց տունը, Զնաբերդը, հարսանիքը, սիրած աղջկան...։ Զոհուեց փոքրիկ տանկիստը...

Նրան հողին յանձնեցին հերոսին վայել պատուով։ Վշտաբեկ էին հարազատները, խոժոռ էին մարտական ընկերները։ Մխիթարիչ մի բան կար միայն. թշնամին այս անգամ էլ չանցաւ։ Հայոց բանակի փոքրիկ տանկիստը կեանքի գնով մի քայլ էլ մօտեցրեց յաղթանակը։ Եւ խաղաղութիւնը։ Եւ այլոց հարսանիքները... («Երկիր», 7 Սեպտեմբեր 1993)։

Ց. Ս.

ՄԱԿԱՏԱԳՐԻ ԿԱՆՉԸ

Ցամաք էր, համբերատար ու բարեհամբույր։ Երկնային անմեղություն կար նրա աչքերում ու հրեշտակային բարություն, իսկ երբ խորհրդաւոր ժպտում էր, մաքրություն էր իջնում աշխարհի վրայ...

Սպարտակ Աշոտի Աղաջանեան. ծնուել է 1967 թուականի Հոկտեմբերի 7ին, Շահումեանի շրջանի Վերին Շէն գիւղում։ Աւարտել է Երեւանի թիւ 177 միջնակարգ դպրոցը։ 1988ին ընդունուել է Երեւանի ճարտարապետաշինարարական ինստիտուտ։

1992-93 թթ. ծառայել է կապանի ինքնապաշտպանութեան ջոկատում, մասնակցել Սրաչէնի, Ներքին Հանդի, Շիկահողի մարտերին։ Զոհուել է 1993 թ. Օգոստոսի 26ին, Սրաչէն գիւղում։

Ցամաք էր, համբերատար ու բարեհամբույր։ Երկնային անմեղութիւն կար նրա աչքերում ու հրեշտակային բարութիւն, իսկ երբ խորհրդաւոր ժպտում էր, մաքրութիւն էր իջնում աշխարհի վրայ...

...Բայց մի օր վրդովուեցին հրաշք աչքերը, ու բարի շուրթերը խստորէն սեղմուեցին։ 1988 թուի Փետրուարն էր։

Մի կարճ ակնթարթ միայն խաղաղ էր թւում նրա կեանքը, բայց ցընցող լուրը տակնուվրայ արեց առանց այդ էլ վիրաւոր սիրտը՝ Շահումեանն ընկաւ։

Այլեւս իրաւունք չունէր յապաղելու հայրենիքի որդին, ու ոչ մի աղերսանք ու արցունք այլեւս չէր կարող բռնանալ նրա վրայ։

Որդին ընդամէնը հինգ ամսական էր, երբ նա կամաւոր գրուեց ու չտապեց իր պարտքը կատարել կապանի մարտերում։ Երբ 6 ամսուայ ծառայութիւնից վերադարձաւ, երջանկութիւն բերեց իր հետ։ Երջանիկ էր, որ աղջիկ է մնացել ու նորից պիտի տեսնի որդուն։

Երբեք այդքան ուրախ չէինք տեսել նրան։ Տօնեց որդու ամեակը, մի կարճ ակնթարթ էլ գուրգուրեց նրան, ու...նորից հնչեց ճակատագրի կանչը...

93ի Մայիսին Սպարտակը դարձեալ այնտեղ էր։ Մածուկ գնաց տնից, որ ոչ ոքի ցաւ չպատճառի։ Մի վերջին համբոյր տուեց որդուն ու կարծես թէ փախաւ, որ արցունք չթափի ալքերից։ Հրաժեշտի խօսք չասաց ոչ ոքի, ասես զգում էր մօտակաս ազէտը։

Ու գլորուեցին բազմաթիւ քաղաքութիւններով օժտուած նրա վերջին ամիսները։

Մի օր էլ զանգահարեց տուն ու խոստովանեց, որ այլեւս է որդու կարօտից, որ չտապում է ժամ առաջ տուն հասնել ու որդուն գրկել...

...Բայց որդին գրկեց հօրը ու ծաղիկներ դրեց չիրիմին... (*«Երկիր»*, *4 Սեպտեմբեր 1993*)։

ՍՈՒՍԱՆՆԱ ԱՂԱՋԱՆԵԱՆ

«ՈՐ ԹԾՆԱՄԻՆ ԼԱՅԻԴ ՁԱՅՆԸ ՉԼՍԻ»...

Գարիկ եւ Լեւոն Խաչատրեանները։

Դահրաւցի Գարիկ Խաչատրեանը այն քչերից էր, որոնք անդամագրուեցին ֆիդայական շարժմանը ու մտնելով փոքրաթիւ կամաւորական ջոկատ, երդուեցին կռուել մինչեւ վերջին կաթիլը։ Իր հայրենակից Բենիկ Յակոբեանի հետ նա էլ մարտահրաւէր նետեց ազերիներին։ Սկզբնական շրջանում Գարիկ մարտնչում էր ՕՄՕՆականների դէմ, որոնք նախկին Խորհրդային բանակի վարձու զինուորների հովանաւորութեամբ «բոյեւիկ» հայերից զէնք գրաւելու պատրուակով աճարեկում, հպաթափ էին անում մեր ծայրամասային գիւղերը, դատաստան տեսնում նրանց հետ, պատանդ վերցնում անմեղ մարդկանց։ Մարտական ընկերների հետ նա մեկնում էր կռուի ամենաթէժ կէտերը, այնտեղ, ուր խաղաղ բնակչութեան կեանքին վտանգ էր սպառնում։

Բնաւորութեամբ լինելով խենթ, անվախ, արիասիրտ, ամենաահեղ մարտերի ժամանակ էլ Գարիկը սովորութեան համաձայն միշտ քայլում էր առջեւից։ Ու միշտ էլ անվրէպ էր նրա կրակոցը։ Հիանալի նշանառու էր, եւ ընկերները բազմաթիւ լեգենդներ, յիշողութիւններ էին պատմում նրա սխրագործութիւնների մասին։ Խիզախ մարտիկը կարճ ժամանակամիջոցում հասցրել էր տիրապետել զէնքի համարեա՛ բոլոր տեսակներին։ Նա հիանալի գնդացրորդ էր, դիպուկ կրակում էր ականաձեւից ու նռնականետից, լիովին իրացրել էր ծանր հրետանու օգտագործման բարդ տեխնիկան։ Եթէ հրամանատարութիւնից որեւէ յանձնարարութիւն էր ստանում Գարիկը, բոլորը համոզուած էին լինում, որ խիզախ ռազմիկն անպայման հարուստ աւարով կը վերադառնայ։ Իսկ քիչ չի պատահել, երբ նա վաշտի տղաների հետ հետախուզութեան է մեկնել եւ, համարձակօրէն թափանցելով թշնամու ռազմական կարեւոր նշանակութիւն ունեցող օբյեկտը, ոչնչացրել է այն, գերեվա-

ռելով մի քանի թուրք զինուորի, տեղ հասցրել զգալի քանակութեամբ զէնք ու զինամթերք:

Իր խիզախ ընկերոջ՝ վաշտի հրամանատար Բենիկ Յակոբեանի հետ նա մասնակցել է թշնամու կողմից օկուպացուած Հադրութի շրջանի վերին գօտու գիւղերի ռազմական գործողութիւններին, Ծաղում- եանի, Մարտակերտի շրջանների մի շարք բնակավայրերի պաշտպա- նութեան համար մղուած անհաւասար մարտերին, հայ միւս քաջորդիների հետ Շուշին ազատագրել ազերիներից, նրանց ստիպել խուճապահար հեռա- նալ Լաչինի միջանցքից: Ամէն անգամ Գարիկը պատուով էր կատա- րում մարտական առաջադրանքը, յաղթանակով դուրս գալիս փորձու- թիւններից: Ու երբ ծնողները՝ Ալեոշա եւ Ռիմա Խաչատրեանները, ի- րենց որդուն յանդիմանում էին, որ անչափ համարձակ լինել պէտք չէ, նա ժպտում էր.

—Անհոգ եղէք, թուրքի գնդակն ինձ չի դիպչի...

Եւ, իրօք, դաժան, անհաւասար մարտերում թշնամու գնդակը միշտ շրջանցում էր անվախ ու խիզախ զինուորներին: Մօր աղօթքն էր գու- ցէ պատճառը...

Կարօտն առնելու համար հազուադէպ էր տեսութեան գալիս:

—Շեմ հասցնում,— ասում էր,— ինձնից մի նեղացէք, պատերազմ է:

—Գոնէ մի օր մեզ հետ գիշերէիր,— յորդորում էր մայրը: —Աչքս ջուր կտրեց ճամբադ պահելուց...

—Մա, բոլորն էլ ինձ պէս մօր ճրագ են, նրանց էլ տանը սպասում են: Համ էլ հազար անգամ ասել եմ՝ ինձ համար մի անհանգստացէք: Դրա փոխարէն լաւ է նշանդրէքի պատրաստութիւն տեսնէք, մա՛նա- ւանդ բոլորովին քիչ ժամանակ է մնացել...

Վերջին անգամ մօր թխած անուշ թոնրահացը պանրի հետ զին- ւորական ուսապարկում տեղաւորեց ու հրաժեշտ տուեց հարազատնե- րին: Ի՜նչ իմանար, որ վերջին հրաժեշտ պիտի լինէր այդ...

—Զեզ մատաղ, մղէիդ կաց...,— հօր վերջին պատուիրանն էր:

Յաջորդ օրը Զեաթուկի լեռների բարձունքից Գարիկը Ասկերանի գումարտակի թիւ 3 վաշտի հրամանատար Բենիկ Յակոբեանի տղաներ- ի հետ հսկում էր Նախիջեւանիկ, Փրչամալ, Արանզամին, Աղբուլաղ գիւղերը: Իրիկնադէմին թուրքերը փորձեցին ճեղքել հայերի պաշտպա- նական գիծը եւ լայնամասշտաբ յարձակման անցնել: Մեր ռազմիկնե- րին յաջողուեց լիովին կասեցնել նրանց առաջխաղացումը եւ ետ շպրտ- տել: Ականանետի արկերից մէկը պայթեց հէնց այն խրամատում, ուր մարտն աւարտելուց յետոյ փոքր-ինչ շունչ առնելու մտադրութեամբ, Բենիկն ու Գարիկը նոր էին յայտնուել...: Մահացու վիրաւորուած երկու խիզախ հայորդիների դիակները միայն յաջորդ օրը յայտնաբերեցին:

Վշտից սգում էր ամբողջ գիւղը: Նրանց թարմ շիրիմների առաջ վաշտի տղաները երդուեցին վրէժխնդիր լինել մարտական ընկերների համար: Հակառակ ծնողների յորդորներին, այդ օրը վաշտին անդամա- գրուեց Գարիկի եղբայրը՝ Լեւոնը: Նա ջոկատի ռազմիկների աւտո- մատների մէջ իսկոյն ճանաչեց եղբօր զէնքը ու այն ձեռքին առաւ:

«Հալալ է քեզ — ասացին տղաները,— որ կարողացել ես ճանաչել եղբորդ զէնքը: Մենք քեզ վստահում ենք»:

—Լիովա ջան, գոնէ դու մեզ խնայիր,— թախանձանքով որդուն խնդրում էր մայրը:

—Չեմ կարող, մայրիկ: Մինչեւ Գարիկի վրէժը չառնեմ, չեմ հանգըստանայ: Խոստումս եթէ դրժեմ, Աստուած ինձ չի ների...

Եւ Լեւոնը, երդմանն հաւատարիմ, գնաց եղբօր ճանապարհով: Իր համեստ, չափազանց ազնիւ ու շիտակ, նրբանկատ բնաւորութեամբ նա կարճ ժամանակամիջոցում նուաճել էր մարտական ընկերների սիրտը, արժանացել զինուորական հրամանատարութեան յարգանքին: Երբեք գլուխ գովել, մեծամտել չէր սիրում, եղբօր մահից յետոյ դարձել էր աւելի քչախօս ու թախծոտ: Նրան շարունակ մի միտք էր անհանգստացնում՝ պատուով կատարել հայ ազատամարտիկի իր պարտքը:

Ու մի օր էլ վաշտի հրամանատար Էդուարդ Խաչատրեանը առաջադրանք ստացաւ կասեցնել թշնամու գրոհը Լաչինի շրջանում: Սարիբաբա կոչուող բնակավայրում մեր հետախոյզները հակառակորդի մեծ կուտակումներ էին յայտնաբերել: Գիշերուայ կէսին տղաները ճամբայ ընկան եւ լուսադէմին մտան թէժ մարտի մէջ: Քաջաթուխպը ամբողջովին խառնել էր նրանց պլանները: Եւ մերոնք անսպասելիօրէն յայտնուել էին ծուղակում: Երեք տասնեակ մեր քաջորդիների դէմ շուրջ 600 զինուոր ու ապայ էր հանել թշնամին, որը զէնքի բոլոր տեսակներով անվերջ գնդակոծում էր հայ ռազմիկների դիրքերը: Քաջաբար էին կռուում բոլորը: Ահեղ մարտում վաշտի տղաներից 13 հոգի ծանր վիրաւորուեցին: Գործի դնելով գնդացիրը, Արայիկ Ներսիսեանը կասեցրեց թշնամու առաջխաղացումը, որպէսզի մերոնք ժամանակ շահեն եւ վիրաւորներին հանեն ռազմադաշտից: Իւրաքանչիւրին իսկոյն ցոյց տրուեց առաջին բուժօգնութիւնը, բայց... ճակատագիրն այս անգամ էլ դաժան գտնուեց Խաչատրեանների ընտանիքի նկատմամբ: Լեւոնի վէրքը մահացու էր: Ու հասցրին նրան կենդանի տուն հասցնել: Զոհուելուց առաջ ընդամէնը մի քանի խօսք կարողացաւ շշնջալ. «Տղերք, խնդրում եմ, մայրիկիս լաւ մտիկ արէք, շատ է խոցուած: Վախենում եմ չդիմանայ...»: Միայն այսքանը:

...Այսօր Դահրաւի գերեզմանատանը կողք կողքի ամփոփուած են երկու ջահել եղբայրներ՝ հերոս-ազատամարտիկներ Գարիկ եւ Լեւոն Խաչատրեանների շիրիմները՝ պարուրուած թարմ ծաղիկներով: Որդեկորոյս մայրը, սգաւոր քոյրերը՝ Լարիսան ու Լաուրան, այնտեղ են բերել նաեւ իրենց հիսած ապն ծաղկազամբիւղները, որ շուքով մի օր պիտի տանէին իրենց եղբայրների նշանդրէքին: Աւա՜ղ, դաժան ու անողոք էր ճակատագիրը: Աչք լուսանքի խօսքեր առնելու փոխարէն, ծնողքը էր ճակատագիրը: Աչք լուսանքի խօսքեր են լսում միայն: Նոյներն այսօր սփոփանքի ու մխիթարանքի խօսքեր են լսում միայն: Իսկ նրանց կրտսեր որդին՝ Արմէնը, լացող մէր արցունքոտ աչքերը նկատելով, խնդրում է նրան.

—Աղաչում են, մամ, բարձրաձայն լաց մի լինի: Որ թշնամին լացիդ ձայնը չլսի, որ թշնամին չուրախանայ... («Արցախ», 1993, թիւ 1-2)

ԴԱՒԻԹ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՆԱ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԶԻՆՈՒՈՐ ԷՐ

Մահին չէր հաւատում, աւելի ճիշտ՝ թշնամու գնդակից զոհուելուն չէր հաւատում, հայրենի հողը սեփականած ասկեարից խփուելուն չէր հաւատում:

Օգոստոսի 30ի մայրամուտը ծանր իջաւ Սիսիանի վրայ: Շշուկները տարածուեցին, շշուկները աղմկեցին ու հառաչի պէս ընկան քաղաքի ականջը՝ Աղուանն է, Աղուան Մինասեանը:

Հիմա ինձ համար դժուար է նրա մասին գրելը, որովհետեւ դժուար է հաւատալ, որ նա այլեւս չկայ, որ նա իր բարի, պարզ ու վարակիչ մանկական ժպիտով այլեւս չի բարեւում իմ ու իր ծննդավայր Լծենի, իմ ու իր Սիսիան քաղաքի փողոցներում հանդիպելիս: Նրա մասին ինչ էլ գրեմ ու մտածեմ, նրան ինչպէս էլ յիշեմ, շատ է ռոմանտիկ լինելու: Զէնքը ձեռքին անգամ խենթ ռոմանտիկ էր, ու զէնքն ասես գրիչ լինէր եւ իրաւունքի ոգեղէն տողերն էր գրում հայրենիքի ամէն թիզ հողը պաշտպանելիս:

Ըմբոստ կրակներ կային հոգում, այրում էր ինքնահաստատման տենչից՝ կռուի դաշտում լինէր, թէ բանաստեղծական տող գրելիս: Կեանքը չընթերցուած բանաստեղծութիւն էր նրա համար, կռիւն էլ, արկի ու ականի պայթիւնն էլ: Մահին չէր հաւատում, աւելի ճիշտ՝ թշնամու գնդակից զոհուելուն չէր հաւատում, հայրենի հողը սեփականած ասկեարից խփուելուն չէր հաւատում:

Այնքան կեանք կար նրա մէջ: Կիսատ ապրեց, կիսատ սիրեց, կիսատ տողեր գրեց ծոցատետրում, կիսատ թողեց ամբողջական հայրենիքի իր պատկերացումը: Ամբողջական էր միայն բոլորանուէր սէրը հայրենիքի հանդէպ. «Մօրս հայեացքն իմ դէմ՝ ես գնում եմ հեռու, հայրենիքի պարտքը արեամբ տալու», գրել էր նա կռիւ գնալուց առաջ:

Հայրենի հողը արեան կարօտ ունէր, ու թանկ էր արիւնը, ու նրա թանկ արիւնով հողն աւելի թանկացաւ:

Ինչքան սիրուն ու հոգեթով տողեր չհասցրեց գրել, որովհետեւ կեանքը մատաղել էր հայրենիքի զոհասեղանին:

Տխուր են գոյները այս գաբնան,
Եւ սիրտս ինչ-որ բան է գուժում...

Իսկ նրա 23 գարունը վերջերս լրացավ:

Չէ, նա բանաստեղծ զինուոր էր, ու զէնքը նրա մարտական օրերի գրիչն էր՝ հայրենիքի սահմանները ճշտող գրիչը:

Տուեց կեանքը հայրենիքին ու պատուիրեց՝

Մի սպասիր էլ ինձ, հայրենական իմ տուն,
Եթէ գալու չեղայ, էլ չեմ գալու...

Նա՝ անաւարտ բանաստեղծութեան գրուած մի տող:

Նրան այսպէս գիտէին բոլորը: Նա՝ բոլորին սիրող ու բոլորից սիրուած զինուոր տղան:

Իսկ մենք մեր քաղաքի փողոցներում, զինուոր ընկերները՝ կռուի դաշտում կը շարունակենք փնտռել նրա հարազատ ու ժպտուն դէմքը՝ բանաստեղծութեան ու պատերազմի նրա խորին խորհուրդը հասկանալու համար... (**«Երկիր»**, 21 Սեպտեմբեր 1993):

Ա. ԱՄԻՐԵԱՆ



ՍԻՍԻԱՆ

ՆԱ ՄԵԾ ԷՐ

Հիւանդանոցում վիրաւոր ընկերոջից իմանալով, որ սահմաններում անհանգիստ է, վիրակապը գլխին իսկոյն նստում է աւտոմեքենան եւ իրեն նետում մարտադաշտ:

Գոյժը տարածուեց ակնթարթօրէն. Սանոն, լեռների արծիւ Սանոն զարկուել է...«Ինչպէ՞ս, ինչպէ՞ս: Ո՛չ, դա հաւատալու բան չէ...: Ի՞նչ մահ հերոսին, մի՞թէ մահը նրա համար է»:

1993 թ. 9 Սեպտեմբերի. այդ օրուանից է սկսում Գորիսի շրջանի Խնձորեսկ գիւղի բնակիչ, սիրուած հրամանատար Սանասար Բեգլարեանի յաւերժական, յաւիտենական կեանքը: Սանոյի ոգին թեւածելու է մեր հայրենիքի իւրաքանչիւր քար ու թփի, ժայռ ու ծերպի, մեր ամէնքի գլխավերեւում: Հէնց նրա շնորհիւ, առաջիններից մէկը Հայաստանում, Խնձորեսկի տղաները դարձան մէկ միս ու արիւն, մէկ հոգի եւ մէկ մարմին: Դարձան Սիւնեաց աշխարհի արեւելեան սահմանները թշնամու ասպատակութիւններից պաշտպանող անառիկ բերդ: Ոչինչ, որ թշնամին շարունակ մահ ու աւեր է սփռել այստեղ: Ոչինչ, որ հրթիռակոծութիւնների տակ խնձորեսկցին բազում անքուն գիշերներ է լուսացրել: Գիւղի հերոս տղաները հայոց շէնը հաստատուն պահելու համար են զէնք վերցրել, նաեւ նահատակուել: Եւ դա արուել է այսօրուայ համար: Նաեւ հայի միասնութեան իսկական խորհրդանիշ Սանոյի շնորհիւ է խնձորեսկցին ամուր կառչել իր հողին: Եւ այսօր Խնձորեսկը կայ նաեւ Սանոյի շնորհիւ՝ բոլորին միացնող օղակն էր նա:

Վերջին դէպքերի ժամանակ հրազէնից ճակատի վէրք էր ստացել: Հիւանդանոցում վիրաւոր ընկերոջից իմանալով, որ սահմաններում անհանգիստ է, վիրակապը գլխին իսկոյն նստում է աւտոմեքենան եւ իրեն նետում մարտադաշտ:

Միշտ այնտեղ էր, ուր իր օգնութեան կարիքը կար: Թուրքերը մեծ գլխագին էին խոստացել նրա համար, սակայն նրան միշտ յաջողւում էր դուրս պրծնել թշնամու ծուղակներից, շուրջկալներից եւ յարձակումներից եւ նոր ուժով նոր հարուածներ հասցնել թշնամուն, հասկացնել, որ նրա տեղը հայի հողում չէ:

Մի քանի օր առաջ, Գորիսը մատաղ էր տօնում: Ոգեկոչւում էր մեր հերոս նահատակների յիշատակը, մարդիկ յիշում էին նրանց սխրանքները եւ ոգեպնդւում...

Գորիսը հպարտ էր, որ կողքին ունի կենդանի հերոսներ...: Եւ նրանց մէջ՝ կենդանի լեգենդ դարձած Սանոն...: Ողջ ու լացը մեզ համար

չէ: Պէտք է ողբալ, քանզի Սանոն չի մեռել: Նրա ոգին գնալու է միաձուլուելու մեր միւս հերոսների ոգիներին եւ մեզ ապրեցնելով լոյսի ճանապարհ է ցոյց տալու:

Հերոսական էր ինչպէս ապրած կեանքը, այնպէս էլ մահը: Վերջին վայրկեանին թշնամուն գերի չյանձնուելու համար Սանոն վճիռ կայացրեց. իր իսկ ձեռքով քաշեց ձգանը եւ... անմահացաւ: Սանոն կերտեց իր կեանքի դիւցազնապատումը: Մեզ մնում է երբեք, երբե՛ք չմոռանալ Սանոյին, նաեւ մեր միւս հերոսներին, քանզի եթէ ցանկանում ենք գոյատեւել որպէս բարոյապէս ուժեղ ժողովուրդ, Նժդեհի խօսքերով ասած, պէտք է կարողանանք ջերմ պաշտամունքով վերաբերուել մեր մեծ մեռելներին:

Սանոն մեծ է... («Երկիր», 23 Սեպտեմբեր 1993):

ՎԱՉԻ ՄԿՐՏՉԵԱՆ



Խնձորեսկ եւ Ներքին Խնձորեսկ գիւղերու
ինքնապաշտպանութեան ուժերու կազմը

«ՅԱՏՈՒԿ ԷՐ...»

«Գալիս եմ ճերմակ,
վերադառնում եմ լրիւ սեւացած»
ԳՐ. ՆԱՐԵԿԱՑԻ

Անհաւասիկ իրական պատերազմը՝ իր մակընթացութիւններով եւ տեղատուութիւններով, իր ամրագրուած ու նաեւ պարտադրուած օրէնքներով, իր ինչուներով, «ճի՞շտ էր, սխա՞լ էր» կցկտուր հարցադրումներով: Ու երբեմն՝ անհեթեթ վախճանով...

Պատերազմը իւրայատուկ փորձութիւն է նաեւ ապրողներիս համար ու նաեւ՝ չապրողների յիշատակի իրաւունքը ժառանգելու համար: Պարզապէս մարդիկ, ժողովուրդները մի կարճ ժամանակ ապրում են պատերազմի պարտադրած օրէնքներով եւ մի երկար ժամանակ ամոքիչ դասեր փորձում քաղել դրանից: Իսկ ոմանք, օգտուելով խառնակ վիճակից, յագուրդ են տալիս ստոր բնազդներին ու ճշմարիտ, արդար կրուի մէջ մտցնում զարհուրելի՝ հիւանդութեան, խորշանքի պահեր:

Հայկենց բնակարանում պատերազմը փոխել, խառնել է իրերի կանոնիկ դասաւորութիւնը, ընտանեկան տրամադրութիւնները: Հայկենց բնակարանում (ինչպէս, երեւի, բոլոր ազատամարտիկների բնակարաններում) կայ ռազմադաշտի անկիւնը՝ Եռագոյն արժանապատուութեամբ՝ դրօշով, ուժի առհաւատչեան՝ զէնքը, եւ ոգեղէնութեան խորհրդանիշը՝ Անդրանիկ, Նժդեհ, Դրօ...

Հայկենց բնակարանում մի բան էլ կար՝ յիշատակի բնակտորը՝ իր մարմնաւորմամբ:

Երբ մտայ նրանց տուն, ինձ թուաց՝ կենդանի Հայկն էր, Տաւուշից հէնց նոր վերադարձած, մեզ դիմաւորող, զէնքը ուսին գցած, խաղաղ ու մեղմ...

Սեպտեմբերի 28ին Հայկ Ռուսլանի Ներսէսեանը 23 տարեկան կը լինէր:

Սովորեց, աւարտեց մայրաքաղաքի թիւ 143 միջնակարգ դպրոցը, շինարար էր ուզում դառնալ, չստացուեց, ընդունուեց թիւ 4 պրոֆտեխուսումնարանը, ուր եւ ստացաւ աւտոմեխանիկի մասնագիտութիւն: Աշխատեց «Սելենա» գործարանում՝ որպէս բանուոր: Զօրակոչուեց նախկին Խորհրդային բանակ, բայց մէկ տարի անց՝ 1990ին, կիսատ թողեց ծառայութիւնը...: Մեծ դժուարութեամբ հասաւ Երեւան: Միտինգներից ու միացումների անաւիշ կոչերից ալեկոծուող մայրաքաղաքում էր, երբ ընկերոջ՝ Սէյրանի հետ որոշեց անդամագրուել զէնքին՝ հայրենիքի իսկական պայքարին: Ցայտնուեց Լէոնիդ Ազգալդեանի ջո-

կատում եւ իր մարտական մկրտութիւնն ստացաւ Վարդենիսում: Այնուհետեւ իրրեւ զինուոր մասնակցեց դժուարին մարտերի՝ Արցախում, Նոյեմբերեանում, Տաւուշում...

Պատերազմը կոփեց նրան, հասունացրեց: Հեշտ կեանքը խորթ դարձաւ այլեւս: «Երբ գալիս էր տուն,— պատմում է մայրը,— զէնքն անմիջապէս հանում էր ուսից, փոխում հագուստները, ասում էր՝ «Էս կռուի շոր է, կռուի շորերով քաղաքում մաճ չեն գայ»:

Հայկը բոլորի հարազատն էր, ընկերներն ասում էին. «Իր կեանքը չէր ափսոսում, յատուկ էր...»: Պատահաբար ներկայ լինելով երկաթուղային կայարանի դէպքերին, երբ հրդեհ էր շէնքում բռնկուել, կրակների միջից հանել էր իր հարեւանուհուն՝ Սեդա մայրիկին:

Ոգեւորող էր այն աստիճան, որ դու էլ կարող էիր յետեւից գնալ: Ամէն տեղ լոյսի փոքրիկ իր անկիւնն էր թողնում:

...Տաւուշից մի քանի օրով տուն էր եկել: Պիտի զինամթերք հայթայթէր, ընկերոջ խոստացած մատաղին մասնակցէր...: Գնացել էր նրանց տուն՝ տանը չէր եղել, դուրս էր եկել ու...

Առանց համարանիշի մի աւտոմեքենայից աւտոմատից դիմահար կրակ են բացում փողոցում կանգնածների վրայ, մահացու վիրաւորում են երկուսը: Մէկը Հայկն էր: Սեպտեմբերի 22ն էր...: Նա պիտի ռազմադաշտ վերադառնար, պիտի կռուէր, բայց զոհ գնաց անհեթեթ դիպուածին, իր հայրենակցի գնդակին... (Ասում եմ «հայրենակից» ու փշաքաղւում. նա՝ փողոցում կրակողը, Հայկին ի՞նչ հայրենակից, նա ի՞նչ կապ ունի հայ ժողովրդի, ազատամարտիկների, Հայկի հետ: Նա հայ չէ, մեր հայրենակիցը չէ: Նա թուրք է, թուրքից վատ):

—Այդ առաւօտ,— պատմում է մայրը,— ծանր երազ էր տեսել. իբր Վարդենիսում է եղել, սպիտակ ձիու վրայ նստած, սպիտակ մեխակներով: Յետոյ ձին սեւացել է, յետոյ՝ մեխակները: Տխուր երաժշտութիւն է միացրել, լսել ու լիշել կոտորածը: Յետոյ դուրս է եկել տնից ու չի վերադարձել:

Ռազմադաշտից, պատերազմի արհաւիրքներից տուն է վերադարձել, երկու անգամ փրկուել թուրքի՝ իր կրծքին ուղղած գնդակներից ու մատաղուել ընդամէնը երկու խաղաղ օր ունեցած ժամերի անտրամաբանութեանը՝ մահուան: Երեւի զինուորի բնազդով ընդառաջ է գնացել կրակոցներին, կուրծքը դէմ տուել՝ ինչպէս բազմիցս թշնամու գնդակներին...

Պիտի կռուէր, պիտի զոհուէր հայրենիքի համար: Բայց... ընկաւ մարդասպանի ձեռքով: Ապրողներս պարտք ունենք նահատակների առջեւ: Հայկի առջեւ պարտք ունենք բոլորս, պետութիւնը, օրէնքը, քարոյականութիւնը: Մարդասպանը պիտի պատժուի: Պիտի օրէնքն ու կարգուկանոնն հաստատուի: Զէնքը պիտի ազատամարտիկի ձեռքին լինի եւ ոչ թէ մարդասպանի: Որպէսզի թշնամու վրայ կրակի, ոչ թէ ազատամարտիկի:

Հայկին սպանել ենք մենք: Անօրինակութիւնն ու ամենաթողութիւնն են սպանել նրան: Մարդասպանը անտէրութիւնն է: Նա պէտք է պատժուի («Երկիր», 28 Սեպտեմբեր 1993):

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ

ԱՊՐԵԼՈՒ ԿԵՐՊԸ՝ ՍԽՐԱՆՔ

Հարցրել են՝ «Տիկին, դուք չորս երեխայ ունէք, համաձա՞յն էք, որ ձեր ամուսինը գնայ կռուելու»։ —Համաձայն եմ,— ասել է Սիրանոյշը։ Այլ բան չի ասել. ընդամէնը ասել է. «Համաձայն եմ»։ Եւ Մնացականը գնացել է Արցախ։

Թւում է, միաժամանակ ե՛ւ գիտենք, ե՛ւ չգիտենք, թէ ինչ է Սխրանքը։ Գիտենք եւ չգիտենք, թէ ինչն է այսօր հայ երիտասարդին ստիպում թողնել տուն ու տեղ, ընտանիք եւ երեխայ եւ զէնք վերցնել։ Գիտենք, որ նրանց առաջնորդում են ոգին, հայրենիքի սէրը, նախնեաց կանչը, վեհ գաղափարները, եւայլն։ Բայց չգիտենք, թէ երբ ու ինչ շաղախ է մարմին ու կերպ հաղորդում վերացական զգացողութիւններին, վեր աւում գործի եւ խաղաղ երիտասարդին դարձնում մարտիկ։ Երեւի միայն նրանք կարող են սպառիչ պատասխան տալ օրան, ովքեր արդէն ընտրութիւն են կատարել, զէնք վերցրել։ Բայց հաւանաբար նրանք էլ չեն կարող բընութագրել Սխրանք կոչուած երեւոյթը։ Որովհետեւ բոլորը, ում հետ կարողացել եմ զրուցել, իրենց արարքում սխրանք չեն տեսնում. «Պէտք է՝ կռւում ենք»՝ ասում են սովորաբար։ Այնինչ, ըստ իս, հէնց դա է Սխրաքը։ Պարտադիր չէ, որ ինչ-որ գերբնական հերոսութիւն գործես։ Կամաւոր զէնք վերցնելն ինքնին Սխրանք է արդէն։

Ահա մօտ 40ամեայ մի այր՝ Մնացական Գրիգորի Շահբազեան, ծնուած Երեւանի Քանաքեռ թաղամասում, 1954 թ., բնակուել է Առինջում։ Սովորական հայ մարդ, արտակարգ որեւէ բանով աչքի չի ընկել։ Բայց մի օր յանկարծ ելել ու ցանկացել է կամաւոր գրուել։ Մերժել են. յոգնաւ է ունեցել եւ չորս երեխայ։ Մնացականը հաւաքավայր է գնացել կնոջ՝ Սիրանոյշի հետ։ Հարցրել են՝ «Տիկին, դուք չորս երեխայ ունէք, համաձա՞յն էք, որ ձեր ամուսինը գնայ կռուելու»։ —Համաձայն եմ,— ասել է Սիրանոյշը։ Այլ բան չի ասել. ընդամէնը ասել է. «Համաձայն եմ»։ Եւ Մնացականը գնացել է Արցախ։ Այստեղ էլ որեւէ գերբնական արարք չի գործել։ Կռուել է։ Մարտնչել է Շուշիում, Միւրիշէնում, Ճարտարում,

Զլդրանում, Սրխաւենդում, Լաչինում։ կատակել է՝ ինչպէս կատակում են մահուան երեսին խնդացողները։ Ուշադիր, հոգատար եւ խիստ է եղել երիտասարդ մարտական ընկերների նկատմամբ՝ ինչպէս հոգատար ու խիստ են բոլոր աւագ զինուորները։ Հ.Ց.Դ.ի անդամ է եղել, հաւատացել է Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի գաղափարին՝ ինչպէս հաւատում ենք շատ շատերս։ Եւ մարտընչել է...։ Զոհուել է Լաչինի մարդասիրական միջանցքը պաշտպանելիս, գերադոյն բեկորից։

Այսքանը։ Ուրիշ ոչինչ։ Զինուորի սովորական կենսագրութիւն։ Ինչպէս տեսանք՝ ոչ մի սխրանք։ Բայց Սխրանքը կայ։ Սխրանքը ապրելու այդ կերպն է։ Կեանքը նուիրաբերելու պատրաստակամութիւնը։ Գնահատականի եւ ուսանելու իրաւունքը մեզ՝ ապրողներիս է տրուած։ Գնահատենք եւ ուսանենք։ Գնահատենք նաեւ Մնացականի տիկնոջ՝ Սիրանոյշի վերջին խօսքերը՝ ասուած ամուսնու չիրմի վրայ. «Ջեմ զղջում, որ համաձայնեցի»։ Սա էլ Սրխանք է։ Սա է յաղթանակի ճանապարհը («Երկիր», 2 Ապրիլ 1993)։

Ց. Ս.

Լաչինի անցքը Բերդաձորէն դիտուած

Յովակիմ Խաչատրեան

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Բախտ է ունեցել մասնակցելու թշնամու տարածքում գտնուող կրակակէտերի ոչնչացմանը։ Համարում էր, որ այդ ժամանակները իր կեանքի ամենաերջանիկ օրերն էին։

Յովակիմն ու Յարութիւնը միմեանց չեն ճանաչել։ Բայց անբաժան ու հաւատարիմ ընկերներ են եղել։

Յովակիմ Խաչատրեանը ծնուել է 1963 թ., Երեւանում, 81 թուականին աւարտել է միջնակարգ դպրոցը, ծառայել Խորհրդային բանակում, զօրացրուել, ամուսնացել, աշխատել։ Երկու երեխայ է ունեցել։ Կենսախինդ ու կամային բնաւորութիւն է եղել։ Տղամարդկային սիրով սիրել է հայրենիքը։ Բնականաբար, երբ սկսուել է Արցախեան ազատամարտը, հոգու թելադրանքով զէնք է վերցրել, գարձել գինուոր, մեկնել Արցախ։ Մարտական ընկերները՝ կարոն, Արմէնը, Տանեան պատմում են, որ բնաբին մարտիկ էր։ Սպայ էր, հակատանկային գասակի հաչուարկի հրամանատար եւ միշտ առաջին գծում էր։ առաջինն էր գրոհի ելնում, վերջինը՝ նահանջում։ Բազմաթիւ մարտերի է մասնակցել։ Ճաչակել է ե՛ւ պարտութեան գառնութիւնը, ե՛ւ յաղթանակի քերկրանքը։ Հարկադիր նահանջի ժամանակ չէն ու բարեկարգ բնակավայրեր է թողել, ազատագրելիս տեսել է աւերակներ, ու առաւել կարծրացել է հոգին, ամրապնդուել թշնամուն ծունկի բերելու վճռականութիւնը։ Երկաթեայ կամք է ունեցել, թրծուել-գարձել է պողպատ։ Մարտական կենսագրութեան ընթացքում չատ բան է տեսել։ Բախտ է ունեցել մասնակցելու թշնամու տարածքում գտնուող կրակակէտերի ոչնչացմանը։ Համարում էր, որ այդ ժամանակները իր կեանքի ամենաերջանիկ օրերն էին։

Ճիգուլու Խարաբխա գիւղի կրակակէտերը լուծելու ժամանակ նրա ջոկատը սեպաձեւ մխրճուում է թշնամու գասաւորութեան մէջ, դիրքաւորուում նրանց խրամատներում՝ ընկերների առաջխաղացումը ապահովելու նպատակով։ Եւ յայտնուում խաչաձեւ կրակի տակ։ Մթում էին երեք կողմից։ Գնդակոծում բոլոր գինատեսակներով։ Առանձնապէս վտանգաւոր էին «Ռաստրան» կոչուող ծովային թնդանօթները։ Սրա արկերից մէկը ընկնում է ուղիղ խրամատի մէջ, Յովակիմի կողքին...։ Հզօր արկեր են՝ նաւեր են խորտակում...

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ցովակիմի նման նա էլ առաջինն էր գրոհի ժամանակ։ Ցովակիմի նման մասնակցել է Ֆիզուլու կրակակետերը լռեցնելու գործողություններին ...։ Նահանջի սովոր չէր ու առաջ էր մղում՝ իր յետեւից տանելով ընկերներին։

Ցարութիւն Բաբաջանեան

Ցարութիւն Բաբաջանեանը Արցախ առաջին անգամ գնաց վերջերս՝ ամրանը։ Արովեանի ծնունդ էր, Ցովակիմից փոքր էր ութ տարով։ Էլեկտրոնային սարքաւորումների տեխնիկումն աւարտելուց յետոյ զօրակոչուեց հայկական բանակ, ծառայում էր կիրովականում։ Այնքան յաղթանդամ էր, որ սկզբում մնացել էր առանց համազգեստի։ Մասնակցել է Տաւուշի եւ Իջեւանի շրջանների պաշտպանութեան մարտերին։

Նոյնպէս երգում էր մարտնչել Արցախում։ Ծառայութիւնն աւարտելուն պէս կամաւոր մեկնում է Արցախ։ Հայոց բանակի յաղթական օրերն էին։ Ցարութիւնը նահանջ ու պարտութիւն չի տեսել, միայն յաղթական մարտերի է մասնակցել։ Երգում էր սպաց գտնալ ու մարտական մկրտութիւն էր անցնում։ Թէեւ հրամանատարը՝ Սերգէյ Միքայէլեանը (Գամախուրդիա), գտնում էր, որ նրա մարտական փորձը լիուլի բաւական է, եւ փորձում էր յետ ուղարկել նրան։ «Մի տարի եկել ենք, մի տարի էլ կը վերադառնանք յաղթանակից յետոյ, պատասխանում էր Ցարութիւնը։

Ցովակիմի նման նա էլ առաջինն էր գրոհի ժամանակ։ Ցովակիմի նման մասնակցել է Ֆիզուլու կրակակէտերը լռեցնելու գործողութիւններին։ Գրոհներից մէկի ժամանակ դարձեալ առաջինն է նետւում դէպի թշնամին ու հանդիպում կրակի անանցանելի պատնէշի։ Նահանջի սովոր չէր ու առաջ էր մղում՝ իր յետեւից տանելով ընկերներին։ Մարմնով ճեղքում-անցնում է կրակի միջով, բայց մահացու խոցւում։ Հզօր մարմին ունէր եւ վիթխարի ուժ։ Մի տարի չարունակ մաքառեց մահուան դէմ...։ Հանգաւ...

Ցովակիմն ու Ցարութիւնը տարբեր բնաւորութիւններ էին։ Ցովակիմը Դաշնակցական էր՝ գաղափարի մարտիկ։ Ցարութիւնը որեւէ կուսակցութեան անդամ չէր, երբեք չէր հետաքրքրւում քաղաքական խմբակցութիւններով։ Տարբեր մարտական ուղի էին անցել, միակ ընդհանուրը,

թերեւս, զոհուելու վայրն էր։ Միմեանց երբեք չեն տեսել ու չեն ճանաչել։ Բայց հաւատարիմ ու անբաժան ընկերներ են եղել։

Մահը չի միաւորել նրանց։ Միաւորել է կեանքը՝ անցած ուղին։

Ձակատագիրը այս աշխարհում չի հանդիպեցրել նրանց։ Եթէ հանդիպէին, անշուշտ հաւատարիմ ընկերներ էին դառնալու՝ անկախ տարիքի տարբերութիւնից, անկախ համոզմունքներից։ Ձակատագիրը նրանց հանդիպումը նախատեսել էր այնտեղ՝ անմահների աշխարհում, ուր նոյնպէս բարին կռուում է չարի դէմ, ուր հակառակ նախապիզբները թշնամանում են, իսկ հոգեհարազատները՝ մտերմանում, դառնում յաւերժական բարեկամ ու հաւատարիմ ընկեր։

Հիմա միասին են Ցովակիմն ու Ցարութիւնը։ Նրանց հետ է հայրենիքի համար զոհուած հերոսների ողջ փաղանգը։ Նրանց հետ է ապրողներիս յիշողութիւնն ու խոնարհումը։ Այնտեղ, ուր հանդիպում են նուիրեալներն ու սրբակեացները, շարունակում է Ն՛ւ կեանքը, Ն՛ւ կռիւը («Երկիր», 6 Հոկտեմբեր 1993)։

Ց. Ս.

ԴՈՒՔ...

Մեր ազատամարտիկներին

Դուք՝ մեր հաւատքի,
Կամքի ապառաժ,
Գնդակի դուք շաչ,
Վրէժի շառաչ։

Սպառնալիքի
Դէմ հատու սուսեր,
Մեր առնելիքի
Դուք ժառանգ ու տէր։

Դուք միշտ յիշողը,
Եւ ճիշտ յուշողը,
Անհաշտ դատողը,
Դատապարտողը,

Մարդասպանի
Արիւն խմելը,
Այդքան աւարը,
Այսքան աւերը,

Դուք՝ վերածնուած
Առիւծ Մհերը,
Մեր արդար Դատի
Իրաւատէրը,

Սասնայ Ծռերը...

ԱՐՄԱՆՏ

Բոստոն, Մայիս 1992

ԱՍԿԵՐԱՆ

«ԵՍ ԱՆՅԱՂԹ ԵՄ, ԹԷԿՈՒԶԵՒ ԳԵՐԵԶՄԱՆՈՒՄ»...

Նրա հրամանատար Բաղդասար Մկրտչեանի պատմածով մի մեծածաւալ օպերացիայի ժամանակ գինեալ ազերիներին գիւղից փախչելիս ոչնչացրել էին։ Դա հիմնականում Արմէնի գործն էր։

Մենք բոլորս ճանաչում ենք նրան։ Մի փոքր թէ յիշողութիւններս յարենք, աչքներիս առաջ կը պատկերանայ հինգ տարի առաջ քաղաքը ուսանելու եկած բարձրահասակ, թիկնեղ, լայնաժպիտ ու գեղեցկադէմ Արմէնը։ 88թ Փետրուարի 13ին նա էր Հայաստանի դրօշը գլխավերեւում պարզած, խրոխտ քայլով, գիւղատնտեսական տեխնիկումի ուսանողութեանը յետեւից տանելով, առաջինը հրապարակ մտել՝ մարզկոմի ղեկավարութեան քթի տակ ծածանել Հայաստանի դրօշը։ Կամ մի՞թէ չէիք յիշում բոլորիս հիացմունք ու ուրախութիւն պարգեւած նրա յաջորդ արարքը։ Նախկին մարզդատարանի շէնքի շուրջ խմբուած տասնեակ հազարաւոր երիտասարդներից նա՝ ամենաճարպիկ ու համարձակ Արմէնն էր, որ դրսից ինչոր հնարքով բարձրացաւ շէնքի երկրորդ յարկ, սենեակներից մէկի պատուհանը ջարդեց, մտաւ ներս, որ ազատի նրանում կալանաւորուած մեր լիդրներից մէկին եւ կարեւոր թղթեր։ Ոտքն էլ մնասուել էր ցատկելուց։ Գուցէ նաեւ ոսկոր էր ճաքել։ Այդպէս էլ բժշկի մօտ չգնաց, բայց երկար ժամանակ կաղալով էր ման գալիս։ Իսկ տանը (այստեղ ապրող մեծ քրոջ Զուլիետայի մօտ էր մնում), ոչինչ չասաց։

Արմէնի քաղաք գալը համընկել էր այստեղ սկսուած Շարժմանը։ Միանգամից, յախուռն, արեան կանչով, ինքնամոռաց նետուեց նրա յորձանուտը եւ մինչեւ վերջին... Նրան շատ շուտ էին նկատել։ «Կռուունկ» կոմիտէի անդամ էր, յետոյ՝ Զանգեզուրի համայնքում էր։ Սկսել էին պատասխանատու, լուրջ յանձնարարութիւններ տալ։ Անունը մտել էր Պոլեանիչկո-Սաֆոնով դահիճներին յանձնած մեկուսացման ենթակայ, Արցախի անհնազանդների ցուցակի մէջ։ Ամէն օր, ամէն ժամի կարող էր բռնուել, յետոյ ազատում չէր լինի։

Այս ամէնին համընթաց մի տան երդ, յոյսի փարոս Արմէնի կերպարը ցաւ ու դաւի մէջ յայտնուած մի ողջ ժողովի մարդկանց սրտում ու հոգում հիւսւում, օր օրի թրծւում ստանում էր հեթանոս հերոսի կերպար, պաշտամունքի ուժ։ Եւ հեքիաթ էր յիշեցնում ամէն ինչ, բայց միայն իրական հեքիաթ...

1967ին չափարեցի Բենիկ Սաղեանի յարկի տակ չորս դստեր գլխին արու զաւակ էր լոյս աշխարհ եկել։ Մեծ ցնծութիւն, տօն էր ողջ գիւղի համար։ Հայ գեղջուկը այդպէս է եղել դարեր շարունակ։ Երբ թալանչի հարեւանի աչքը շարունակ տնկած է քո ապրուստի, արած-թողածի վրայ եւ վաղը, մեծանալով քո արու զաւակը կարող է նրա թալանող ձեռքը բռնել, իսկ թէ քոյրդ-ծիրն այդ թրով կը գայ վրադ։ Թրից էլ նրան ճամբայ դնել, հասկանալի է, տօն ու ցնծութիւն պիտի լինէր գիւղում։ Ջմոռանանք նաեւ 60ականներն եւ ալեկոծութեան տարիներ էին։

Արմէնի ուրախութեանը ուրախութիւն չէր հասնում, երբ առաջին անգամ շօշափելիութեան աստիճան զգաց ինքն իրեն պաշտպանելու իր վերականգնուած իրաւունքը։ Այլեւս անհետացել էր այն քստմնելի վախը, թէ՝ պաշտպան կոչուող չէկ մագերով կամ նեղաչք զինուորը կարող է ցանկացած պահի վերեւից եկող հրամանով ապանել քեզ։ Հասել էր թշնամուն հատուցելու ժամը։ Աւտոմատը տուել էին ձեռքը։ Ի՞նչ էր խանգարում, կարողանո՞ւմ ես, կու�ը ու յաղթիր։ Ջնո՞ւ կարողանում, էլ ո՞ւմ ես մեղադրում։ Դէ, էլ ո՞ւմ պիտի տային։ Ձեռքին՝ ինչպէս խաղալիք էր բանեցնում աւտոմատը։ Ընկերները, հրամանատարները արդէն ակսել էին մէկը միւսից հետաքրքիր դրուագներ պատմել մարտադաշտում կատարած նրա քաջագործութիւններից։ Նրա հրամանատար Բաղդասար Մկրտչեանի պատմածով մի մեծաչաւալ օպերացիայի ժամանակ զինեալ ազերիներին գիւղից փախչելիս ոչնչացրել էին։ Դա հիմնականում Արմէնի գործն էր։ Նա միշտ ամենակարեւոր դիրքում էր նստում եւ նրա գնդացիրի բերանից պրծուն չկար։ Գիտէին Արմէնի գնդակները վերջացել էին։ Սակայն հրամայուած էր էլ գնդակ չտար։ Ինչքա՜ն ռացիայով խնդրեց, պատասխանեցին, որ գնդակ չկայ։ Եթէ տային, պիտի գիւղը թողնող թուրք խաղաղ բնակչութեանն էլ կոտորէր։ Օպերացիայի յաջող աւարտից յետոյ, երբ խմացաւ բանն ինչումն է, խռովկան երեխայի պէս մի լաց դրեց, ի՞նչ լաց։ Երկար ժամանակ հանգստացնել չէր լինում։ Վիրաւորուել էր մինչեւ հոգու խորքը։ Թուրքի ձեռքով ապանուած համագիւղացի տասնեակից աւելի մարդկանց անուններն էր տալիս ու հեկեկում՝ թէ բա էդ մարդկանց ու նրանց նման մեր հարիւրաւոր անմեղ հայերին ազերիները ո՞ր մեղքի համար են ապանել։

Ջհաւատաց, այդպէս էլ մինչեւ վերջ գլխում չէր տեղաւորւում, թէ ինչպէս իրենց գիւղը թողեցին թշնամուն։

Վերջին անգամ նրան քաղաքում դէպի իրենց տունը բարձրանալիս տեսայ։ Մեր սովորական ձեռքսեղմումներից յետոյ շատ հարցուփորձ արեցի։ Ուզում էի ինձ համար պարզել, թէ ինչից է նրա

այդ անարատ հաւատը մեր յաղթանակի նկատմամբ եւ պահպանւո՞ւմ է արդեօք այն։ Ասացի՝ Մարտակերտը տուել ենք, իսկ դու թէ ամէն ինչ լաւ կը լինի, ինչպէս հասկանալ դա։ Էֆ՛հ,— պատասխանեց նա,— շատ չեմ ասում, մի կազմակերպող լինի, մեր լաւ, կռուող տղաներով միասին գնանք, մի օրում Թուրքին մինչեւ ուր պէտք է՝ կը քշենք։ Ես գիտեմ նրանց կռուելը, շատ եմ տեսել՝ ինչպէս են վայ դադաշ կանչելով ճողոպրում...

Ցեռոյ կռահեց, ինչու եմ այս անգամ այդքան շատ հարցեր տալիս եւ վարակիչ, բարի ժպիտը աչքերում, զգուշացրեց՝ տեսէք հա, յանկարծ իմ մասին ինչ-որ բան գրելու համար չլինեն այդ հարցերը։ Իմ գիւղը, իմ տունը Թուրքի ձեռքին, իմ մասին ինչ պիտի գրէք։ Ընկերները, չափարեցի Աւետը, Բորիկը, Արմէնը, Իգորը, Այբերտը պատմում են, որ նրան շատ անգամ են առաջարկել մնալ շտաբում, մանել հրամանատարական կազմի մէջ...։ Միշտ հրաժարուել է՝ պատճառ բռնելով, թէ երբ ինքը իր գործը սկսի վատ կատարել, էն ժամանակ թող այդպիսի բան ասեն։

Ընկերների հետ գնացել են ԼՂՀ պաշտպանութեան պետական կոմիտէի Մարտակերտի լիազօր ներկայացուցիչ Բորիս Բաբայեանի մօտ։ Գուցէ վերջինս էր կանչել, նրանց յայտնի չէր։

Ասում էր, թշնամու գնդակը ինձ չի կպչի, չհաւատաք։ Պէտք է իմ գնդացիրը լռի, որ նրանք կարողանան ինձ վրայ կրակել։ Բա ես թողնո՞ւմ եմ, որ լռի։ Այդպէս էլ եղաւ։ Արմէնը նաեւ մեծ գուշակող դուրս եկաւ։

Ցարութիւնագոմերը ազատագրելուց յետոյ, տունդարձի ճանապարհին, մեքենան վթարի ենթարկուեց։ Ընկերները բժիշկներին շուրջկալ արել եւ խնդրում, աղաչում էին՝ վերցրէք մեր արեան վերջին կաթիլը, սրսկէք Արմէնին, միայն թէ նրան ոչինչ չպատահի։ Ասացին՝ բժիշկների վրայ աւտոմատ քաշող էլ է եղել։ —Արմէնի գլուխը մի բան եկաւ, կը սպանեմ բոլորիդ,— ասել էր նրանցից մէկը։ Արմէնը վերջին խօսքով կանխել է ընկերներին.

—Պէտք չէ, տղերք,— ասել է,— ինձանից լաւ տղաներ էլ են մահացել... բայց մէկ է՝ ես... ես...,— եւ բառերը սառել են նրա շրթներին։

Արմէնը գրպանում սիրած աղջկանը հասցէագրուած անաւարտ նամակ-օրագիր ունէր պահած։ Ես, որ տասնհակից աւելի վերնագրեր էի մտածել նրա մասին ասուելիք իմ այս ամփոփ խօսքի համար, քրոջ՝ Ջուլիետայի ինձ յանձնած նամակը կարդալով, փոխեցի մտադրութիւնս, քանզի նրա մի տողում կար իմ խօսքի թ՛ւ վերնագիրը, թ՛ւ Արմէնի անաւարտ խօսքը. «Ես անյաղթ եմ, թէկուզեւ գերեզմանում»... (Մեքենագիր)։

ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՉԵԱՆ

ՆԱ ՋԻՆՈՒՈՐ ԷՐ ՆԱԵԻ՝ ԵՐԳԻՉ

Երասխաւանի կռուի առաջին օրերին Արտակը ո՛չ միայն առաջին շարքերում էր, այլեւ՝ այն սակաւներից մէկը, որոնք զէնք ու զինամթերք էին հայթայթում...

Նա եկաւ աշխարհին ամբողջ ձայնով գոռալու իր ազգի արդար կըռիւը, ու ինքն էլ դառնալով այդ կռուի մէկ մասնիկը, իր կամքն ու զօրութիւնը խառնեց այն քաջում զօրեղներին, որոնք թիզ առ թիզ մաքառեցին հայրենի հողի ու մի բուռ ազգի ճակատագրի համար՝ դառնալով այդ արդար կռուի անվեհեր նահատակները։ Դեռ 31 գարունը չբոլորած՝ նա հանգաւ գարնան շնչի նման՝ սերունդներին թողնելով գարնանային իր բոյրը։

Անունը Արտակ էր։ Արտակ Օհանեան, կամ պարզապէս Գուսան։ Թէերը դիտէին նրա իսկական անունը եւ համատարած Գուսան էին կոչում։ Սիրում էր գրել ու նաեւ երգել, որի համար էլ ստացել էր «Գուսան» մականունը։ Անսահման ցաւով էր ապրում իւրաքանչիւր հայրենու մահը, դառնում ամէն վճռական, մոռնոտ ու լառակեաց՝ կարծես զգալով այդ ամէնի մէջ իր ճակատագրի վախճանը։

Երասխաւանի կռուի առաջին օրերին Արտակը ո՛չ միայն առաջին շարքերում էր, այլեւ՝ այն սակաւներից մէկը, որոնք զէնք ու զինամթերք էին հայթայթում՝ լաւ զինուած թշնամու դէմ որսորդական հրացաններով կռուող հայ կամաւորին զինելու համար։

Ցաղթանակի մեծ ոգեկոչումով էլ նրա մարտական ուղին ձգուեց Երասխաւանից մինչեւ Գեռաչէն ու Շահումեան, Լաչին ու Գիւլիստան։ Դեռ 91ին Գեռաչէնի անհաւասար մարտում, երկու ընկերների հետ ճեղքելով թշնամու շղթան, կարողացել էր թափանցել շրջապատուած գիւղը, աչառելից դուրս բերել շրջապատման օղակում վիճդուողդ երեխաներին, կիներին ու հիւանդներին։ Արտակը իսկական մարտական ընկեր էր՝ հաւատարիմ իր գործին։ Սիրում էր ծիծաղն ու կատակը։ Նա ինքն էր հայոց զինուորի կողմից քիմիական յորինուած զէնքի առաջին կիրառողներից ու փորձարկողներից մէկը, որը իրականում ինքնասպան ու սովորական արկ էր եւ ուրիշ ոչինչ։

Ջնայած արդէն 30 տարեկան հասակին, Արտակը չէր ուզում ամուսնանալ, անընդհատ կրկնելով դեռ ազգը պիտի փրկենք, յետոյ՝ չատացընենք։ Բայց, անսալով մօր ու հարազատների թախանձանքներին, 91ին ամուսնացաւ։ Աւա՜ղ, 93ը դարձաւ նրա կեանքի վերջին գարունը։ Թողնելով հինգամեայ զոյգերը, կնոջը, մօրն ու հարազատներին, յուշերն ու անմոռաց պահերը եւ մարտական ընկերներին՝ նա գնաց իր ամբիւնը խառնելու այն հազարաւոր նահատակներին, ովքեր դեռ չատ գործ ունէին անելու, բայց գերազանցին հայրենիքի փրկութեան մեծ գործը՝ ոգեկոչուելով անմահութեան պսակով (28 Հոկտեմբեր 1993)։

«ԵՐԿԻՐ»

Աղասի Վարդերեսեան

ԿԱՐԶԱԽԸ

«Ցանուց մեր նահատակուած ընկերների, յանուն մեր սրբազան հողի՝ ովքեր կարող եմ զէնք վերցնել՝ եկէք միացէք մեզ, տանք մեր կոիւը սրբազան, ժամն է օրհասական, վաղը ուշ կը լինի...»։

Եւ ստացուեց այնպէս, որ 1992ի ամառը Արցախի քաջարի ազատամարտիկները ստիպուած էին թշնամուն զիջել Շահումեանն ու Մարտակերտի բազմաթիւ բնակավայրերը։ Աղասի Վարդերեսեանը մի քանի անգամ դիմեց զինուորական ծառայութեան անցնելու համար. 55ամեայ ինժեներին մերժեցին՝ պատճառաբանելով տարիքը։ Եղբը գտնուեց. կամաւորական ջոկատի գլուխ անցած՝ Աղասին յայտնուեց Մարտակերտի ռազմաճակատում։ Կուում էր եւ սրտի ցաւով տեսնում, թէ ինչպէս ոմանք, ընկնելով ու տեղի տալով, թողնում էին տուն ու տեղ, հող ու հայրենիք ու հեռանում Արցախից։ Խմբագրութեանը հասցէագրած «Ժամն է օրհասական, վաղը ուշ կը լինի...» կոչ-նամակում Աղասին ռազմաճակատից դիմում էր նրանց. «Դու խուսափում ես զէնք վերցնելուց, թաքնուում ես քո նոր հանգրուանում, ինչպէ՞ս ես նայում կնոջդ, զաւակներիդ, քոյրերիդ աչքերին, երբ այստեղ՝ Մարտակերտի անտառներում եւ դաշտերում, արհամարհելով մահը, կուում են մի բուռ հայորդիներ՝ եկած Երեւանից, Գիւմրիից, Լոռիից, Զանգեզուրից, Ջաւախքից, Սեւանից, Արարատեան դաշտից եւ այլ տեղերից...»։

Մարտերից մէկում ծանր վիրաւորուած Աղասուն տեղափոխեցին Երեւան։ Ապաքինումը երկար տեւեց։ Ամրանը հայրենի Կարզախ գիւղում՝ Ջաւախքի ամենահեռաւոր բնակավայրում, պէտք է տեղի ունենայ հայ նահատակների յիշատակը յաւերժացնող յուշարձանակոթողի բացումը, որը Աղասու եւ «Ջիւանի» միութեան իր ընկերների 3 տարուայ քրտնաջան աշխատանքի արդասիքն է։ Անհամբեր ու ոգեւորուած սպասում էիր այդ օրուան։

Սակայն Արցախ հայրենիքում նորից հնչեց ռազմի փողը։ Դեռ նոր ապաքինուած՝ Աղասին իր կամաւորական ջոկատով նորից

ԱՐՑԱԽՈՒՄ

«Եւ դո՛ւ, հայաստանաբնակ հայ,
եւ դո՛ւ, երեւանցի, լաւ իմացիր.
Ղարաբաղի կռիւը միայն
ղարաբաղցունը չէ, այն կռիւն է
համայն հայութեան՝ մեր
սրբազան հողի եւ հայրենիքի
համար»։

Գառնիկ Աբրահամեան

Մարտակերտեան ճակատի թէժ բոլում էր։ Այս անգամ ջոկատին էր միացել նրա համագիւղացին՝ Գառնիկ Աբրահամեանը։ Քաջարի երիտասարդը թողել ընտանիքը, երեք անչափահաս երեխաներին եւ զէնքը ձեռքին հասաւ կռուի դաշտ...։ Ազատագրում էին գիւղ գիւղի յետեւից. ոգեւորութիւնը մեծ էր, շուտով կը հասնեն Մարտակերտի մատոյցներին...

Կռւում էին կողք կողքի յաղթանակի անսասան հաւատով։ Ցիշատակուած նամակում Աղասին գրում էր. «Ամէն մէկը ի՞նքն է իր պարտքը տալու հայրենիքին, իր բաժին կռիւն անելու հայրենիքի համար։ Ցանուն մեր նահատակուած ընկերների, յանուն մեր սրբազան հողի՝ ովքեր կարող են զէնք վերցնել՝ եկէք միացէք մեզ, տանք մեր կռիւը սրբազան, ժամն է օրհասական, վաղը ուշ կը լինի...»։

Ու մի օր էլ, հերթական գործողութիւնը կատարելիս, Աղասին, Գառնիկը ու եւս երեք արցախցի յաւէտ կորան մոայլ մշուշում՝ զինակից ընկերներին ժառանգութիւն թողնելով յաղթանակի անսասան հաւատն ու կամքը։

Ամբանը կարգախում կը բացուի հայ նահատակների յուշարձանը, որին Աղասին ու Գառնիկը կը մասնակցեն որպէս սուրբ անուններ՝ հարիւրաւոր սրբացուցակներ չփակուած անուանացանկում, եւ այդ սուրբ անուններից կը ճառագայթի Աղասու հաւատոյ հանգանակը. «Եւ դո՛ւ, հայաստանաբնակ հայ, եւ դո՛ւ, երեւանցի, լաւ իմացիր. Ղարաբաղի կռիւը միայն ղարաբաղցունը չէ, այն կռիւն է համայն հայութեան՝ մեր սրբազան հողի եւ հայրենիքի համար»
(15 *Մայիս* 1993)։

«ԱՍՊԱՐԷԶ»

ԶՈՀՈՒԱԾ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԵՂԲԱՅՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ



Արմէնի համար, ճիշտ է, դժուար է Մովսէսից յետոյ...։ Վաչիկի, Լևոնիկի, Սամուէլի, Տուրիկի, Արմէնի, Կարոյի, միւսների մահից յետոյ, սակայն շարունակուող պատերազմի պայմաններում աւելի կարգապահ ու զգօն մնալը թշնամուն յաղթելու միակ ելքն է։

Սօսում եմ եղայ մի ամբողջ շաբաթ։ Հիմնականում անհրաժեշտ էր այդ գիւղի նահատակների լուսանկարներն ու կենսագրութիւնները, որոնք բարեխղճօրէն կազմակերպում էին գիւղական համայնքի գործկոմի նախագահ Լևոն Մուքանեանը, վաշտի հրամանատար՝ Արմէն Պետրոսեանը։ Սակայն ես ուզում էի գոնէ ինձ համար պարզել, թէ ինչպիսի մարդ է հրամանատարը։

Եթէ մենք ինչ-որ տեղ աւելորդ զոհեր ենք տուել, մի կասկածէ՛ք, որ մեր որոշ կրտսեր հրամանատարների անուսումնական ու զինուորական գործին չտիրապետելու երեսից է եղել։ Ու նաեւ նրա համար, որ իննսունականների սկզբից մարտնչող երիտասարդ սրցախցիները կռուելու արուեստին կռուելով են տիրապետել։

Մովսէս Պետրոսեան...։ Աւա՜ղ, նա այնքան գրագէտ էր, որ երբեմն գիւղում շատերը կասկածում էին, թէ կը մնար գիւղում ու կը պաշտպանէր Արցախը, քանի որ գիւղի որոշ գրագէտներ ու փսիխոքներ գերադասել էին ծննդավայրից հեռու մնալ ու նրա կրակէ շապիկների մէջ չայրուել։

Մովսէս Պետրոսեանը կազմակերպեց իր հայրենի գիւղի առաջին Ֆիդայական Պարտիզանը, որի հիմքի վրայ հետագայում հաստատուեց հրաձգային վաշտը։ Շատ մարտերի է մասնակցել։ Սակայն Դաւալու խուրձ բարձունքի առման համար նա արեց հերոսականը։ Երեւանի ճարտարապետական (նախկին պոլիտեխնիկական) ինստիտուտի նախկին շրջանաւարտը անմնացորդ կերպով տրուեց Արցախեան ազատագրական պայքարին։

Վաշտը կորցրեց իր թիւ 1 զինուորին ու հրամանատարին։

Իսկ երբ նոր հրամանատարի նշանակման պահն եկաւ, բոլորը միանշանակ արտայայտուեցին. «Արմէնից բացի ո՞վ կարող է գլխաւորել գումարտակ ու վաշտ...»։

...Արմէն Պետրոսեան...

Նոր հրամանատարը։ Զոհուած հրամանատարի եղբայրը։ Շուրջ 150 հոգի են մասնակցում երկրապահութեանը։ Բոլոր կարգի պաշտպանական

մարտերին ու գիրքային պաշտպանությանը։ Պաշտպանական գիծն ամուր են պահում։ Սակայն այս վաշտում, որը ես տեսայ սեփական աչքերով, առկայ են բնատուր կարգապահությունն ու փոխադարձ ոգին։

Արմենի համար, ճիշտ է, դժուար է Մովսիսից յետոյ..., Վալիկի, Լեոնիկի, Սամուէլի, Շուրիկի, Արմենի, Կարոյի, միւսների մահից յետոյ, սակայն շարունակուող պատերազմի պայմաններում աւելի կարգապահ ու զգօն մնալը թշնամուն յաղթելու միակ ելքն է։

Այս լուսանկարները առուել են այս տարուայ Ապրիլին, երբ ես Սասում էի. տղաները հաշխատանք ունէին, պէտք է գրաւուէր Խալպատարը՝ Ամարասի եկեղեցական համալիրից դէպի հարաւ-արեւմուտք ընկած բարձրիկ լեռն իր շրջելիգուակներով, որպէսզի թշնամին հնարաւորութիւն չունենայ արկակոծելու Ջալունց գետի (Ամարասադեսի) աւազանն ընդգրկող գիւղերը։

Տղաները այդ առաջադրանքը կատարեցին գերազանց։ Թշնամին ո՛չ միայն Խալպատարից, այլեւ միւս ստրատեգիական բարձունքներից եւ քաշուեց մինչեւ Ցիգուլի քաղաքի նախագռները։

Այդ մարտավարութեանը մասնակցել է ինքը՝ Արմենը եւ նրա վաշտի տղաները։ Գուցէ անուն առ անուն թուարկելու հարկը չկա՞յ առայժմ։ Այդպիսինն է հրամանատարը, զոհուած հրամանատարի եղբայր հրամանատարը («Անդրադարձ», 1993)։

ԷՐՆԵՍՏ ԵՍԱՅԵԱՆ

ԵՐԿՈՒ ՄՈՎՍԷՍ

Հայոց ճողի տաք արգանդից ծնուած քաջեր՝
Երկու Մովսէս, երկու այր մարդ,
Մէկը պատմիչ, միւսը՝ զինուոր,
Մէկի ձեռքին՝ փետուրեայ գրիչ,
Իսկ միւսին՝ Եռագոյն դրօշ։
Երկու Մովսէս, երկու արծիւ,
Թորգոմի տան երկու սիւներ, երկու ճրագ,
Որ էութեամբ իրենց ազգին
Ազգի համար դարձան փարոս,
Որ միշտ լոյս տան,
Հայոց նաւը չխորտակուի, առաջ գնայ,
Փոթորկայոյզ ովկիանոսից դէպի ապ գայ։

ԱՆՆԱ ԵՐԷՄԵԱՆ

(Ձեռագիր)

ՄԱՀԱՊԱՐՏԸ

Ռազմիկի աքիլլէսեան գարշապարն իր բազկի դողն է։ Ամրոցի ամենախոցելի տեղն իր պաշտպանների թերահաւատութիւնն է։ Ժողովրդի անկման պատճառն իր հանդէպ վստահութեան եւ հաւատի կորուստն է։

Այս պատերազմը մեզ շատ բան սովորեցրեց։ Վերստին հաւատացինք մեր ոգուն, բազկին, զօրութեանը։ Սովորեցինք տեսնել եւ ճանաչել մեզ։ Ու տեսանք, որ ջինջու եւ նենգ դաւ է վախկոտ ու ստրուկ հայի առասպելը. մեր բուն էութեան հազարաւոր ծալքերից մէկի ճապաղ մեկնութիւնն է։ Եւ նմանապէս սուտ է անմիաբան ու դաւաճան հայի խարանը, որ յամառօրէն ճգնել են դաջել մեր ճակատին Հիւսիսի բարեկամն ու հարաւի թշնամին, արեւելքի ներքինին ու Արեւմուտքի քաղաքադէտը։ Ռազմիկի աքիլլէսեան գարշապարն իր բազկի դողն է։ Ամրոցի ամենախոցելի տեղն իր պաշտպանների թերահաւատութիւնն է։ Ժողովրդի անկման պատճառն իր հանդէպ վստահութեան եւ հաւատի կորուստն է։ Մենամարտիկները նախ եւ առաջ մարտնչում են հայեացքով։ Եւ որ յաղթեց հայեացքով՝ ուրեմն՝ նրանն է սրի յաղթանակը։ Ու ձգտել են բեկել մեր հայեացքը։ Ձգտել են հաւատացնել մեզ, որ Հայկ Նահապետի, Սասունցի Դաւթի, Վարդանի ու Անդրանիկի զարմը չենք, այլ ետնեալ ճիւղը Ցուան Վերդոյի, Վասակի, Ղուկասների ու Աւիսների։ Մենք էլ մէկ-մէկ հաւատացել ենք այդ դաւին։ Ժողովուրդ ենք, ու մեր մէջ էլ կան մարդ արարածին բնորոշ արատներ։ Բոլոր ժողովուրդների մէջ կան։ Սակայն քչերն են իրենց թերութիւնները դարձնում ազգային միֆ ու դրա շուրջ կերպար ձեւաւորում։ Մենք դա արել ենք երբեմն։ Բայց առաւել յաճախ ուէր ենք կանգնել մեր ճշմարիտ միֆին, որ հաւատի ու նուիրումի հզօր լեցք ունի իր մէջ ու մղում է ինքնազոհութեան։

Այս պատերազմը մեզ շատ բան սովորեցրեց։ Սովորեցինք տեսնել ու ճանաչել մեզ։ Ու ճանաչեցինք յաղթանակի համը։ Ու ճանաչեցինք յաղթանակի ճանապարհը՝ նուիրում, հաւատ եւ կազմակերպուածութիւն, մահապարտի ոգի՝ յաղթանակ կերտող կառոյցի

մէջ։ Ճանաչեցինք սխալների ու անդառնալի կորուստների գնով։ Լոկ մահապարտների գնդով յաղթելու խաբկանքից թօթափուելու գնով։ Նաեւ նրանց կեանքի գնով։ Նաեւ Մասիս գիւղի 38ամեայ զաւակ Խաժակ Շահբազեանի կեանքի գնով։

Հզօր, վիթխարի ճիչ էր մահապարտների գնդին անդամագրուելու կոչը։ Պարզունակ էր ու հլքը դա չէր։ ասպետական մենամարտերի ժամանակները չեն այլեւս։ հաւաքական ջանքի ու մտքի՝ բանակի ժամանակներ են։ Բայց ոչու կանչ էր, ու բազում հայորդիներ արձագանգեցին այդ կանչին։ Դարձան մահապարտ։ Մահապարտների գնդում կար «Այսիւ-2» գումարտակ, որի զինուորն էր նաեւ Խաժակը։ Իր եօթը ընկերներով եօթը օր ու գիշեր պաշտպանեցին Մարտակերտի շրջանի Վաղուհաս գիւղը։ Կռուեցին խիզախորէն, մահապարտի նման։ Բայց վիրաւորուեցին ու գերի ընկան։ Ազգայ ռազմիկի համար առաւել անտանելի վիճակ՝ քան գերութիւնը։ Թշնամին անարգ է, նենգ, ստոր ու արիւնարբու։ Խոշտանգեցին հայ մարտիկներին ու սպանեցին։ Նրանք զոհուեցին։ Մեռան՝ ինչպէս հատիկն է մահանում հողում ծիլ տալով։ Նաեւ դաս ու օրինակ եղան ապրողներիս համար։ Այդ են վկայում նորանոր նուիրեալներն ու բանակն հայոց։ Այդ են վկայում վերջին յաղթանակները։ Օրհնեալ լինի կեանքդ, մահապարտ, որ մատաղ արեցիր հայոց հողին, քանզի գործդ արդար է, եւ ճակատդ՝ համբուրելի

(«Երկիր», 12 Մարտ 1993)։

Ց. Ս.

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՏԱԳՆԱՊ

Թերի պատմութիւն՝ Ղարաբաղով հիւանդացած ազատամարտիկի մասին։ Նրա մասին, ով բազում մարտերի մասնակցելուց յետոյ ոչ թէ գնդակից մահացաւ, այլ Ղարաբաղում չլինելու տագնապից։

Քոյրերը խօսում էին անկապ ու կցկտուր, յաճախ լռում էին, նայում միմեանց՝ մէկ-մէկ՝ հիասթափուած. այնքա՛ն բան ասելու էին եկել, այնքա՛ն բան ունէին իրենց եղբօր մասին պատմելու, բայց չէին կարողանում...

Իսկ պատմութիւնն այս է. Գագիկ Մաթեւոսեան, ծնուած Երեւանում, 42 տարեկան, չորս երեխաների հայր, բանուոր մարդ, աշխատել է Արզնիում, Ծխախոտի գործարանում, տպարանում։ Երկրաշարժից յետոյ շատերի նման գնացել է Աղէտի գօտի, մասնակցել փրկարարական աշխատանքների։ Արցախեան ազատամարտի սկզբից, ջէրի նման զէնք է վերցրել, անդամագրուել «Տիգրան Մեծ» ջոկատին։ Հիմնականում մարտնչել է Շահումեանում։ Կռուել է, բայց տեսել է նաեւ փախուստ ու տեղահանութիւն։ Չի սիրել խօսել կրուիների մասին։ Ընկերների պատմածով լսել են, որ իրենց հեզ, բարի ու մեղմաբարոյ եղբայրը մարտադաշտում իրեն պահել է առիւծի նման։ «Մեր ջոկատի Անդրանիկն էր»,— ասել է հրամանատարը՝ Նորիկը։ Հայրաբար հոգ է տարել երիտասարդ ու խենթ մարտական ընկերների մասին, հրամանատարները, հաշուի առնելով նրա կենսափորձն ու բնատուր խորաթափանցութիւնը, յաճախ խորհրդակցել են նրա հետ։ Անխօս կատարել է բոլոր հրամանները։ Միայն մի անգամ չի ենթարկուել. երբ առաջարկել են ուղղաթիռ նստել ու թռչել Շահումեանից։ Շահումեանի անկումից յետոյ հիւանդացել է. սոսմոքի սուր, գեսին տապալող ցաւեր. խոց։ Բայց շարունակել է գնալ Ղարաբաղ։ Խնդրել, աղաչել են՝ գոնէ բուժուիր, նոր գնայ, չի լսել, գնացել է։ Վերջին գնալուց առաջ մայրը մտել է տուն, տեսել՝ հագել է զինուորական շորերը, կանգնել պատուհանի առջեւ, դուրս է նայում. «Էլի՞ հագար էգ շորերը»,— ասել է մայրը։ «Հա մամ, պիտի գնամ»,— պատասխանել է որդին։ Գնացել է։ Վերադարձել հիւծուած, ուժասպառ՝ կաշի ու ոսկոր։ Մի կերպ համոզել, տարել են հիւանդանոց։ Ցանկացել են վիրահատել՝ չի համաձայնել, ասել է՝ «ժամանակը չէ»։ Ոմանք առաջարկել են հաշմանդամութեան կարգ հանել (օրէնքով հասնում էր), երեխաների օրհաց փողն ապահովել, նոր գնալ։ Սիրթնել է, գունատուել,

երբեք չէր հայհոյում, բայց այս անգամ հայհոյել է, բոլորին դուրս արել հիւանդասենեակից։ Մի ամսի չափ պահել են հիւանդանոցում։ Փոքր-ինչ ապաքինուել։ Փոքր-ինչ կազդուրուել։ Սկսել է մաշել չտաբի դռները։ Համոզել են, յորդորել, գոռգոռացել։ Չի ենթարկուել։ Ի վերջոյ համաձայնութիւն է կորզել։ Դուրս է ելել փողոց, արձակել վերնաշապիկի կոճակները, խորը, շատ խորը շունչ քաշել ու... ընկել։ Մահացել է։ Բժշկական եզրակացութիւնը՝ մի բառ. ինֆարկտ. սրտի տագնապ։

Ահա այսքանը. բազում չասուած բառեր, ապրումներ, դէպքեր, մանրամասներ։ Թերի պատմութիւն՝ Ղարաբաղով հիւանդացած ազատամարտիկի մասին։ Նրա մասին, ով բազում մարտերի մասնակցելուց յետոյ ոչ թէ գնդակից մահացաւ, այլ Ղարաբաղում չլինելու տագնապից։ Մի նոր հիւանդութիւն է սա, հայկական հիւանդութիւն։ Բոյրերը այդ հիւանդութեան մասին էին պատմում («Երկիր», 2 Սեպտեմբեր 1993)։

Ց. Ս.

Շահումեանէն տեսարան մը

ԶՈՀՈՒԵՑ ԾՆՆԴԵԱՆ ՕՐԸ

Իր ծննդեան օրը կեանքը հայրենիքին նուիրաբերեց 23ամեայ դաշնակցական Արսէն Հայրեանը։

Գանգուր մազերով, ծիծաղկոտ դէմքով այս պատանին՝ Արսէն Հայրեանը, ծնուել է Մոսկվի բազուկներով ու ջլապինդ կիրճերով շրջանակուած Շահումեանում։ Պապը՝ Հայրունց Սահակը, եւ հայրը՝ Անդրանիկը, հռչակաւոր որսորդներ էին։ Նրանց հետ մանկուց շրջել էր հայրենի լեռներով, տեսել, ճանաչել, ու գիտէր իւրաքանչիւր ծառ ու թուփ, քերծ ու արահետ։ Գիտէր զէնքի լեզուն։ Որսորդ էր։ Մեն-մենակ արջի դէմ էր ելել։ Բանակում ծառայելիս ուզում էին պահել գերժամկէտ. մարտիկ էր իր ողջ էութեամբ։ Սակայն նաեւ ողջ էութեամբ կապուած էր հայրենիքին. ականջներում հնչում էր Սեւ գետի վշտոցը, ալքերի առջեւ Նահատակի եւ Խաչին ձորերն էին, Մեծ հողը, Սպիտակ աղբիւրը, Ճաղատ իրիցանց թաւան...

88թ երկրաշարժից յետոյ Արսէնը շահումեանցիների եւ արցախցիների յատուկ բրիգադի կազմում եկաւ Հայաստան՝ օգնելու Աղէտի գօտու բնակիչներին։ Աշխատում էր Ստեփանաւանում։ 90թ Յունուարի սկզբներին մի քանի օրով այցի գնաց ծնողներին ու... ամսի 12ի վաղ առաւօտեան հնչեց տագնապի ահազանգը. ՕՄՕՆականները յարձակուել էին շրջանի հիւսիսում գտնուող Մանաշիդ գիւղի վրայ։ Արսէնը վերցրեց պապի հրացանն ու ընկերոջ մեքենայով մեկնեց մարտադաշտ։ Թշնամին զինուած էր աւտոմատներով ու գնդացիրներով։ Մերոնք՝ որսորդական հրացաններով էին, կար ընդամէնը մէկ աւտոմատ։ Բայց յաջողութեամբ դիմագրաւեցին թշնամուն։ Կռիւը դադարեցնելու համար Ստեփանակերտից ուղղաթիռով ժամանեցին զինուորականներ։ Թուրքերը չէին ենթարկւում զինադադարի պահանջին, շարունակում էին կրակել։ Վիրաւորուեց զինուորականների հրամանատարը։ Ի վերջոյ բազմաթիւ զոհեր տալով ու մարտադաշտում բաւական զէնք թողնելով՝ թուրքերը փախուստի դիմեցին։ Արսէնը մարտի ամենաակտիւ մասնակիցներից էր։

Յետոյ... մտաւ Բուզլուխ գիւղը պաշտպանող ջոկատ, 91ի Դեկտեմբերին մասնակցեց Թոդան գիւղի կրակակէտերի լուծման գործողութեանը, Դեկտեմբերի 31ին ընկերների հետ յետ շպրտեց թուրքերի յարձակումը Թալիշ եւ Ջայլու գիւղերի վրայ... Նոր տարի էր գալիս։ 92 թ. Յունուարի 1ին լրանում էր Արսէնի ծննդեան 23 տարին։ Բայց... ահազանգ եկաւ. թուրքերը Սարիսու գիւղից մեծաթիւ ուժերով գրոհում են Բուզլուխի վրայ։ Ազատամարտիկները շտապեցին օգնութեան։ Ուժերը դարձեալ անհաւասար էին։ Ստիպուած էին նահանջել։ Արսէնը մի պահ նկատեց, որ ընկերները ծանր դրութեան մէջ են ընկել, Աշոտ Մովսիսեանի հետ նետուեց օգնութեան, բայց... թշնամու գնդակը հասաւ նրանց...։ Մահացու խոցուած ընկան հայրենի հողի պաշտպանները։ Իր ծննդեան օրը կեանքը հայրենիքին նուիրաբերեց 23ամեայ դաշնակցական Արսէն Հայրեանը։

Արսէնին ու Աշոտին հողին յանձնեցին հայրենի գիւղում, բարձր բլրի գագաթին։ Հիմա նրանց շիրիմները գերութեան մէջ են։ Բայց ազատագրուելու են՝ ինչպէս ազատագրուեցին Շուշին ու Մարտակերտը, ինչպէս ազատագրուել են հայրենիքի համար զոհուած բոլոր նահատակների շիրիմները (21 Յուլիս 1993)։

«ԵՐԿԻՐ»

ԹՈԴԱՆ

Գանատայի «Հորիզոն»ի 26 Ապրիլ 1993 թուակիր համարէն անխառուած ու արդէն համակարգիչէն անցած էր ազատամարտիկ Վիգէն Գրիգորեանի մասին Ր. սկզբնատառով ստորագրուած հետաքրքիր գրութիւնը, երբ խմբագրութեանս արամադրութեան տակ դրուեցաւ նոյն ազատամարտիկը կենսագրող ու բնութագրող մեքենագիր 27 էջնոց ծաւալուն գրութիւն մը։

Իր ամբողջութեանը մէջ յոյժ շահեկան գրութիւն մը նաեւ այս մէկը, հարուստ՝ իր աշխարհով ու դերակատարներով, որոնք Հայոց պատմութեան թելադրանքով ծաւալած գործունէութեամբ հայրենական յաւերժաշունչ վաստակ մը կուտակեցին ու զոհաբերական իրենց արիւնով դարձան նոր պատմութեան ամէնէն «պինդ» շաղախը։

Հերոսին կողակիցին՝ Գրետա Աւետիսեանին կողմէ ստորագրուած այդ գրութիւնը, զոր հնարաւոր չեղաւ տեղաւորել այս բացառիկին մէջ, պիտի տանք «Բագին»ի յառաջիկայ տարուան Յուլիսի համարով։

ԻՆԿԱՒ ՆԱԵՒ ԸՆԿ. ՎԻԳԷՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Քիչեր գիտէին, թէ Վրէժ էր մարտական անունը...: Ցաւումով իմացայ իր մահուան գոյժը ու որքան դժուար եղաւ հաւատալ, հաշտուիլ անոր կորուստին:

Արցախի մեր հերոսական հողի եւ պահանջատէր ժողովուրդին մօտ գտնուած ժամանակ, բացառիկ առիթը ունեցայ Հադրութի Տող գիւղին մէջ զինք ճանչնալու. բախտաւոր կը զգամ, որ գտնուած եմ իր տոհմական տան մէջ, բաժնած եմ իր սեղանը, վայելած իր ընտանիքի անդամներուն գուրգուրանքը, յատիշտակութեամբ ունկնդրած իր պատմած դրուագները, դէպքերը, որոնք Ռուբէնի յուշերը վերապրելու հարազատութիւնը տուին ինծի. խոստացաւ Ղարաբաղի ազատագրական շարժման

իր յուշերը գրի առնել բայց հաւանաբար առանց այդ աշխատանքը սկսելու, աղաւէտ մեզմէ բաժնուեցաւ:

Հայրենիքի պաշտպանութեան մարտերու ընթացքին, ամէն զոհուածի հետ ակամայ կը մտածեմ, թէ գացին ամենալաւերը. սակայն այս պարագային, ընկ. Վիգէն Գրիգորեան ո՛չ միայն լաւագոյններէն էր, այլեւ կարելի է զինք դասել անփոխարինելիներու շարքին: Արցախի այս հաւատաւոր զաւակը կը մարմնաւորէր ե՛ւ Արարատի ըմբոստ նկարագիրը, արիութիւնը, ե՛ւ Հրայր Դժոխքի կազմակերպչական տաղանդը, ե՛ւ Նիկոլ Դումանի ռազմագիտական ընդունակութիւնը, ուժականութիւնը:

1988ին, երբ Ղարաբաղեան շարժումը սկսաւ, տողեցիներուն համար կրկնակի պայքար էր, որովհետեւ գիւղին մէջ հայերն ու ազերիները կողք կողքի կ'ապրէին, երբեմն տուները իրարու կպած էին. այդ պատճառով իսկ համերաշխութեամբ ապրիլը շատ դժուար էր. թշնամական տրամադրութիւններ ստեղծուած էին գիւղի 750 հայ եւ հազար թուրք բնակիչներուն միջեւ, ու ամէն օր՝ հայերն ու թուրքերը իրարու հետ կը վիճէին, իրարու հետ բռունցքով կը կռուէին, իրար կը քարկոծէին: Հետագային քարերը փոխարինուեցան որսորդական հրացաններով եւ Վիգէն ահա դարձաւ Տողի հայութեան ըմբոստացման ոգին, ինքնապաշտպանութեան մղիչ ու կազմակերպիչ ուժը: Բաքուի ուժը: Բաքուի մէջ իր բարձրագոյն ուսումը ստացած եւ ուսուցիչի ասպարէզ ընտրած փոքրիկ հասակով, ժպտերես ու հանդարտ բնաւորութեան տէր արցախցին շուտով դարձաւ Շարժման աչքառու դէմքերէն մէկը: Ան կը պատկանի նուիրեալներու առաջին փաղանգին, որ գործօն յանձնառութիւն ստանձնեց Ադրբեջանի ստրկութեան, յանուն Հայրենիքի հետ միանալու թեան:

Մինչեւ 1991 թուականը, Տող գիւղին մէջ համարեա՛ միշտ կռիւներ էին, վէճեր, սակայն առանց սպանութեան. Ֆիզուլիի թուրքերը ակտիւօրէն կը մասնակցին ընդհարումներուն: Այդ ժամանակ հայ կտրիճները արդէն ստացած են իրենց առաջին արագահարուածները. անոնց մասին անդրադառնալով, Վիգէն պատկառանքով եւ խանդավառութեամբ պատմեց, թէ Հադրութի մէջ, ինչպէս եւ ամբողջ Արցախի, հայ ազատամարտիկները իրենց առաջին արագահարուածները ստացած էին Հայ Յեղափոխական Դաշնակցութենէն ու ըսաւ. «Մենք այդ զէնքերը շա՜տ կը սիրենք. մենք զանոնք օգտագործեցինք տեղին. ես այդ զէնքերը տեսել էի Խորհրդային բանակում ծառայելու ժամանակ. դա պետական էր եւ զօրացրուելուց յետոյ զայն յանձնեցի. իսկ այստեղ ստացայ այս զէնքը եւ երդուեցի մինչեւ վերջ պահել», ապա աւելցուց՝ «Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գաղափարը ամէնէն ճիշտն է եւ ազգը պահպանելու համար պէտք է միայն ու միայն ընդունել այդ գաղափարը». եւ ղարաբաղցի այս լեռնականին համար Դաշնակցութիւնը դաձաւ սրբութիւն մը, Հայրենիքի ազատագրումը՝ գերագոյն նպատակ:

Մոսկուայի եւ Բաքուի մէջ նախագծուած ծրագիրը, որուն նպատակը էր բռնագաղթով հայաթափել Արցախը, արդէն Ապրիլ 1991ի կէսերուն սկսաւ գործադրութեան դրուիլ: Հադրութի շրջանին մէջ հաստատուեցաւ անձնագրային ստուգում, ձեռնարկուեցան հայկական բնակավայ-

ներու լայնածաւալ խուզարկութիւններ, կատարուեցան ձերբակալութիւններ նախապէս պատրաստուած ցուցակներով, որոնց մէջ կար նաեւ Վիգէնի անունը. եւ Ապրիլ 16ի գիշերը, նախապէս տեղեկանալով իր ձերբակալութեան հաւանականութեան մասին, երեք երեխաներու հայրը կը ձգէ սեփական օջախը, հայրենի գիւղը ու իր անբաժան մարտական եւ գաղափարի ընկերոջ Գ.էի հետ կ'ապաստանի շրջանի անտառները. այսպէսով կը սկսի Վիգէնի արկածալից ու ընդյատակեայ գործունէութիւնը:

Ազերի ՕՄՕՆականներու խուզարկութիւններն ու բռնութիւնները կը սաստկանան, հայաբնակ գիւղերը պաշարման տակ կ'առնուին քարոյալքումի ալիք յառաջացնելով սարսափահար հայ բնակչութեան մօտ. հարկաւոր էր ամէն գնով սանձել թշնամին ու ժողովուրդին կորովը բարձրացնել. եւ հայ ազատամարտիկներու հարուածը չ'ուշանար. Վիգէնն ու Գ.ն կը դիմեն տեռորի մեթոտին եւ Մայիս 1ին Ֆիզուլի-Տող ճամբուն վրայ կը պայթեցնեն Հադրութի շրջկոմի քարտուղար Նիեազ Ջհանգերովի ինքնաշարժը, որուն հետեւանքով կը սպանուին երեք ազերիներ, սակայն քարտուղարը մէջը չ'ըլլար: Այնուհետեւ, փախստական ընկերներու դաւադրական-ահաբեկչական գործողութիւնները կը շարունակուին ու իրենց ձեռքով իսկ կազմուած ոմբային ծրարները մահացու կ'ըլլան թուրքին համար, ո՛չ միայն Հադրութի մէջ, այլեւ մինչեւ Ստեփանակերտ-Ծուշի ճանապարհը: Ազատամարտիկներու ջոկատները կ'անցնին փարթիզանական յարձակումներու՝ Մայիս-Յունիս 1991ին, Հադրութի մէջ Խորհրդային բանակի կողմէ 14 հայաթափուած եւ ազերիներով վերաբնակեցուած գիւղերու վրայ: Անհրաժեշտ էր թշնամին անընդհատ հարուածել, իր կեցութիւնը Արցախի բնակավայրերու մէջ անապահով դարձնել, որպէսզի զգայ, թէ այս հողի տէրը ինքը չէ:

Ծնորհիւ իր նուիրուածութեան ու մարդասիրութեան, Արցախի այս հաւատաւոր ազատամարտիկը հեղինակութիւն դարձաւ ու ժողովուրդը իր վստահութեան քուէն տուաւ՝ զինք ընտրելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անդրանիկ Գերագոյն խորհուրդի պատգամաւոր: Սակայն, քաղաքական գործունէութեան առընթեր՝ Վիգէն միշտ պատնէշի վրայ մնաց իր զինակից ընկերներուն հետ: Ղարաբաղի ինքնապաշտպանութեան ուժերու վերակազմաւորումէն ետք, ան դարձաւ Տողի գումարտակի շտաբի հրամանատար ու մասնակցեցաւ Հադրութի գրեթէ բոլոր կարեւոր կռիւներուն: Ամբողջութեամբ կլանուած էր անկախութեան գործընթացով եւ իր մտահոգութիւններն ու պարտաւորութիւնները բազմաթիւ էին՝ զէնքի, զինամթերքի, հագուստի, սննդամթերքի, վառելանիւթի պարենաւորում, խրամատներու, դիրքերու ամրակնդում, զինուորական գործողութիւններու մշակում, պատանդներու եւ զոհուածներու դիակներու փոխանակման բարդ աշխատանք, գիւղատնտեսական արդիւնաբերութեան ապահովում: Առհասարակ գիւղացիք եւ զինուորները իրենց անձնական կարիքներուն համար իրեն կը դիմէին եւ Վիգէն ամենայն համբերութեամբ կը զրուցէր, կը խրատէր: Ցատուկ հոգատարութիւն, գուրգուրանք ցոյց կու տար իր գումարտակի շատ երիտասարդ երկու տասնեակ տղաներուն հանդէպ եւ եռանդով լծուած էր անոնց գաղա-

փարական-զինուորական դաստիարակութեան, հաւատալով որ, այդ տղաքը շուտով պիտի դառնան Արցախի բանակի պրոֆեսիոնալ զինուորները:

Եւ երբ իրեն վստահուեցաւ նաեւ Արցախի Հ.Յ.Դ. Կկի անդամի պատասխանատու պարտականութիւնը, ընկ. Վիգէն բնաւ չկորսնցուց իր համեստութիւնը եւ ինչպէս միշտ, հաւատարիմ մնաց իր յանձնառութիւններուն. եւ Ապրիլ ամսուն 5ին, գնաց հերոսաբար նահատակուելու կռուի առաջին գծերուն վրայ, ցուցաբերելով դաշնակցական մարդու զոհաբերութեան ոգին, անոր ինքնամոռացութեան ու ամբողջական նուիրումը գաղափարին, գործին, արցախահայութեան գոյութեան պայքարին:

Զրոյցի ժամանակ, ողբացեալ ընկերը հետեւեալ անկեղծ ու անմոռանալի խօսքերը փոխանցեց. «Երդուել ենք որպէսզի մեր հողը այլեւս թուրքի ոտքը չընկնի. մենք պատրաստ ենք միշտ պայքարելու մեր հողի համար, մեր գաղափարի համար եւ թոյլ չենք տայ, որ մեր կանայք ու երեխաներ զոհ դառնան կամ գերի ընկնեն թուրքերին. թող մեր հայրենակիցները Սփիւռքում անհոգ լինեն, մենք այս պատերազմը յաղթանակով կ'աւարտենք եւ հետագայում կը ստեղծենք այնպիսի մի կամուրջ, որպէսզի սփիւռքահայերը հնարաւորութիւնը ունենան այցելելու Արցախ աշխարհը եւ տեսնելու ինչքա՜ն քաղցր հող է ու այս հողի վրայ ապրում են հերոսական արցախցիները»:

Ափսոս սակայն, որ այդ վճռական յաղթանակի արշալոյսը չվայելած՝ Վիգէն կեանքէն հեռացաւ, բայց գնաց ջան ֆիդայիներու պանթէոնը հանգչած հայ յեղափոխական առաքեալներուն, հարիւրամեայ պայքարի նահատակներուն ընելու, որ անխոով մնան, քանի դեռ Արցախի մէջ կան Հ.Յ.Դաշնակցութեան մարտական եւ բարոյական աւանդութիւնները. գնաց զեկուցելու իր մարտական նահատակ ընկերներուն՝ Արթուր Մկրտչեանին, Բեկոր Աշոտին, Մաջկալաշէնի Արմէնին, որ, հայրենի լեռներուն ու դաշտերուն վրայ, իրենց զինակից եղբայրները պիտի չհրաժարին արեան գնով իսկ իրենց սրբազան հողը ազատագրելու պայքարէն ու վճռած են զինաթափ չընլալ, զէնքը վար չդնել, որովհետեւ զէնքի ուժն է միակ երաշխիքը արցախահայութեան գոյատեւման եւ յաղթանակին («Հորիզոն», 26 Ապրիլ 1993):

Բ.

«ՇԱՐՈՒՆԱԿԷՔ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԳՈՐԾԸ»

«...Եթէ ամէն ոք միայն իր տան համար կռուի՝ արդիւնքի չենք հասնի։ Մարտակերտն էլ Հայաստանի մի մասն է։ Այնտեղ ծանր է՝ գնում եմ»։

Լճացման ժամանակների սառն ալիքները չարագուշակ ստորջրեայ զօրութիւն ունէին։ Ադրբեջանն անկատ հայաթափում էր Արցախը։ Նոյնքան անկատ ադրբեջանանում էր Հայաստանը։ Նրանք մեր հողում բազմանում էին առնէտների նման։ Իսկ հայ երիտասարդներից շատերը, կենսական տարածութիւն փնտռելով, ստիպուած լքում էին Հայաստանը։ Եթէ այդպէս շարունակուէր՝ աղէտ էր լինելու, Հայաստանը դառնալու էր թուրքարնակ։ Բարեբախտաբար, երեւի նախախնամութեան կամքով, սկսուեց Ղարաբաղեան շարժումը եւ անկախ բոլոր հետեւանքներից ու դրդապատճառներից, միայն այն, որ Հայաստանի եւ Արցախի հողը մաքրուեց թուրքից, բաւական է Ղարաբաղեան շարժումը ըստ արժանւոյն գնահատելու համար։

Արցախեան շարժումը մոգական ուժ ունէր։ Ինչպէս մագնիսն է ձգում, մոռացութեան խորքից յայտնաբերում տարիներ շարունակ անվերադարձ կորսուած համարուող իրեր, այնպէս էլ Արցախեան ազատամարտը հայոց հոգում արթնացրեց մոռացուած ու կորսուած թուացող մարտական ոգին, Միացեալ Հայաստանի հաւատը, ձգեց, Արցախի շուրջ համախմբեց հայորդիներ Հայաստանից, Սփիւռքից, նախկին ԽՍՀՄ հանրապետութիւններից։

Արցախը մագնիս էր։ Շատերը եկան նրա կանչով։ Շատերը վերադարձան։ Շատերն արթնացան։

Վերադարձողներից մէկը Աւետիս Օհանեանն էր։

Ծնուել է 1963ին՝ Գորիսում, ապրել՝ Մեղրու շրջանի Ագարակ գիւղում, աւարտել՝ Գորիսի գիւղատնտեսական տեխնիկումը, բնակութիւն հաստատել Ղրիմի Կեչ քաղաքում։ Հայց ազատամարտի ձգողական ուժը նրան հայրենիք վերադարձրեց։ 90ին եկաւ, նուիրուեց հայրենիքի պաշտպանութեանը, շարունակեց հերոս ֆիդայիների սուրբ գործը։ Հ.Յ.Դ. «Արեւիք» կոմիտէի անդամ էր։ Երեք արու զաւակ ունէր։ Մարտընչում էր Կապան-Մեղրի հատուածում։ Սակայն մի օր որոշեց Մարտակերտում կռուել։ Երբ ընկերները հարցրեցին, թէ Մեղրին ու Կապանն

էլ վտանգի տակ են, ինչո՞ւ է գնում, զարմացած պատասխանեց. «Չէ՞ որ այնտեղ աւելի շատ է զինուորի կարիք զգացւում: Եթէ ամէն ոք միայն իր տան համար կռուի՝ արդիւնքի չենք հասնի: Մարտակերտն էլ Հայաստանի մի մասն է: Այնտեղ ծանր է՝ գնում եմ»:

Երդուեալ դաշնակցական էր Աւոն, «Մահ կամ Ազատութիւն»ը նրա համար սոսկ նշանաբան չէր՝ ապրելու կերպ էր, առօրեայ կեանքի անբաժան մասը: Այդպէս ապրեց: Այդպէս զոհուեց: Ընկաւ Մայիսի 26ին, Կուսապատի բարձունքներում: Ցանուն Արցախի ազատութեան:

Լաւ զինուոր էր: Խիզախ էր, համեստ, նուիրուած: Վայելում էր ընկերների յարգանքը: Մարտական ընկերների գնահատականը զինուորին ամենաթանկ պարգեւն է: Ահա թէ յուղարկաւորութեան ժամանակ ինչ է ասել Աւոյի մարտական ընկերներից մէկը՝ Թաթուլը. «*Վստահ եմ, որ եթէ Աւոն հիմա ինչ-որ բան ասելու հնարաւորութիւն ունենար, ասելու էր սիրած երգի խօսքերը.*

Ահա հանգիստ հող կը մտնեմ,
Ցոյսս դուք էք, ընկերներ,
Շարունակէք մեր սուրբ գործը,
Դաշնակցութեան վեհ քաջեր...»:

(«Երկիր», 7 Յուլիս 1993)

Ց. Մ.

Մարտակերտ, դաշտային շրջան



ԱՅՆՏԵՂ, ՈՒՐ ԿԱՆՉՈՒՄ Է ՀԱՅՐԵՆԻՔԸ

Սմբատ Միրզոյեանը առաջիններից մէկն էր, որ բառիս ուղղակի իմաստով, բահի փոխարէն զէնքը ձեռքն առաւ: Ներքին ձայնի հրամանն էր ու Ասկերանի Խնձրստան գիւղի ծնունդ նախնիների կանչը:

Երկրաշարժի առաջին գիշերն արդէն Աղէտի գօտում էր: Մնաց՝ քանի դեռ իր կարիքը զգացւում էր: Գուցէ երկար կամ ընդմիշտ մնար: Բայց մութ ամպեր էին կուտակւում Արցախի գլխին: Ադրբեջանը փորձում էր զէնքի ուժով ճզմել Արցախեան ազատամարտի նորաբողբոջ ծիլը, արմատախիլ անել հայոց ազատատենչ ոգին: Արցախը ոգեղէն նեցուկի՝ զէնքը ձեռքին մարտնչող զինուորի կարիք ունէր: Եւ Սմբատը առաջիններից մէկն էր, որ բառիս ուղղակի իմաստով, բահի փոխարէն զէնքը ձեռքն առաւ: Ներքին ձայնի հրամանն էր ու Ասկերանի Խնձրստան գիւղի ծնունդ նախնիների կանչը:

Անդամագրուեց ազատամարտիկների հզօր փաղանգին, գնաց հայրենիքը փլատակների վերածող բռնակալութեան դէմ մարտնչելու:

Վաղուհաս գիւղի մօտ մղուած ծանր մարտերում վիրաւորուեց: Երեք տեղից: Երկար ժամանակ գամուած էր անկողնին: Շատերին թւում էր՝ ապաքինուելուց յետոյ այլեւս զէնք չի վերցնի, իր պարտքը կատարած կը համարի, կը բաւարարուի այդքանով: Մա՛նաւանդ՝ որ վէրքերը ծանր էին, դժուար էին բուժւում: Սակայն ուրիշ էր Սմբատը, վէրքերի ցաւերը նրա հոգում այլ յիշողութիւններ ու նպատակներ էին արթնացնում. մարտադաշտը դարձեալ կանչում էր նրան, դարձեալ պիտի այնտեղ լինէր, ուր օգնութեան ու զինուորի կարիք կար, ուր ցաւ կար ամոքելու:

Երկարատեւ բուժումից յետոյ, դեռ լրիւ չապաքինուած՝ կրկին մեկնեց Արցախ, կրկին զէնք վերցրեց, հայրենի գիւղերից ու շէներից հալածեց անարգ թշնամուն: Կրկին աւերակների տակից դիակներ հանեց՝ թուրքի ձեռքով գլխատուած հայերի դիակներ: Երդուել էր մարտնչել մինչեւ Արցախի վերջնական ազատագրումը: Բայց թերի մնաց նպատակը. հերոսաբար ընկաւ Մարտակերտի ազատագրման մարտերում:

...Նրա մարմինը հանգչում է հայրենի Խնձրստան գիւղում: Իսկ հոգին մարտադաշտում է, այնտեղ՝ ուր մարտնչում է հայրենիքը (12 Հոկտեմբեր 1993):

«ԵՐԿԻՐ»



Լեռնային Ղարաբաղի քաղաքական քարտեզը

ԱՐՄԷՆ 20

(Արմէն Գասպարեան)

«Անկասկած Վիգէնն ու Արմէնչոն ուղիղ շառաւիղներն են Նիկոլ Դումանի, Դրոյի, Անդրանիկի, Համազասպի այն սերնդի, որոնք ազատագրական պայքարի սկիզբ են դրել»:

Արմէնչոյի հայրը եղած է ազգային-ազատագրական շարժումներու ջատագովներէն մէկը, իսկ ինք հայրենասիրութեամբ տոգորուած բացառիկ երիտասարդ մը, որ պայքարի մէջ կը մտնէ 1988 թուականին, առաջին հերթին թուրքերը կորովազրկող թռուցիկներ ցրուելով անոնց բնակարաններուն մէջ:

1991 Յունուար 16ին սկսած Հադրութի շրջանի հայաթափումը կասեցնելու համար՝ Վիգէն Գրիգորեանի (տե՛ս էջ 410) ջոկատին հետ Արմէնչոն կը մեկնի այդ վայրերը եւ շնորհիւ իրենց ցուցաբերած քաջութեան՝ կը ձախողի ազերի ՕՄՕՆականներու ձեռնարկած հին-թաղլարցիներուն տեղահանութիւնը:

Ապա՝ Տող գիւղին մէջ կը ստեղծուի զինուորական շտաբ, որուն պետ կը նշանակուի Վիգէն Գրիգորեան, իսկ զինուորական ընդհանուր գործով կը զբաղի Արմէնչոն: Ապրիլ 4ին՝ անոր ղեկավարած Տողի գումարտակով կ'ազատագրուի Ֆիզուլիի մօտիկը գտնուող Ղովշաթլի գիւղը:

Ազերի 1000 եւ հայ 700 ընտանիք հաշուող Տողի մէջ երբ լարուածութիւնը ծանրագոյն չափերու կը հասնի երկու կողմերու միջեւ, Վիգէնի եւ Արմէնչոյի գլխաւորած տողեցի քաջերուն եւ Բեկորի ու Վլադիմիր Բաբայեանի ջոկատներուն շնորհիւ՝ շրջանը ամբողջովին կը պարպուի ազերիներէն:

Բարեկամ մը կը գրէ Վիգէնին տիկնոջ՝ Գրետա Աւետիսեանին. «Անկասկած Վիգէնն ու Արմէնչոն ուղիղ շառաւիղներն են Նիկոլ Դումանի, Դրոյի, Անդրանիկի, Համազասպի այն սերնդի, որոնք ազատագրական պայքարի սկիզբ են դրել»:

Իսկ Արմէնչոն յաճախ կը սիրէր կրկնել. «Այս Ծարժման ուղեղը Վիգէնն է, իսկ ոտքերը՝ ես»:

Վիգէնի նահատակութենէն ետք, իսկ իր զարնուելէն երեք ամիս առաջ, Արմէնչօ կ'ըսէ Վիգէնին տիկնոջ. «Գիտես ի՞նչ, Գրետա, ես չեմ պատկերացնում, որ պիտի ապրեմ այլեւս, երեւի շուտով պիտի գնամ իրա մօտ. այլեւս չեմ կարող ապրել առանց իրան: Առաջ որ գնում էի մարտի, զգում էի, որ թիկունքում ինքն է. ես չեմ կարող առանց նրան դիմանալ»:

Այժմ երկուքը կը հանգչին կողք կողքի, Տող գիւղին մէջ, շտաբի շէնքին քակը:

(Քաղուած՝ Գրետա Աւետիսեանի յուշերէն)

ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԷՍՔԻԶ

Ես քեզ չեմ տեսել, քանի որ դու իմ սրտի մէջ ես՝ քո հայկական արիւնով, քո ահեղ լռութեամբ, քո անհանգիստ կամքով... Ես քեզ միայն զգացել եմ։ Որքան հիանալի գոյն ու ձեւեր կարելի է տալ քեզ, որոնք միաժամանակ էլ ի վիճակի չեն արտայայտելու քո ամբողջական էութիւնը, որն ունի մի հրաշք բառ-անուն՝ Ազատամարտիկ։ Քո պայն ու ապու-պապը, մինչեւ, է՛, Մեծն Վարդան եւ ուրիշ հեռուներ, ֆիդան է՝ միշտ պատրաստ իրեն զոհաբերելու ամենադժուարին, բարձր ու գեղեցիկ՝ հայ-բնեաց սիրոյն, որն ո՛չ սկիզբն է երեւում Հայոց աշխարհում եւ ոչ իսկ վերջը... որովհետեւ... անսկիզբ-անվերջ է մերոնց մաքառման ճակա-տագիրը։ Դու մի սակէ օղակն ես այդ վեհ ու ողբերգակ յաւերժու-թեան։

Դու լգնացիր, այլ կրկին ու դարձեալ եկար, դու մի անվերջ վե-րադարձ ես։ Քո մասին է ժողովուրդը երգում. «Կայլնէ, ֆիդան, բոյիդ ղուրբանդ։ Մարգարիտ բառեր են, չէ՞, յատկապէս՝ ղուրբանը, քեզ զոհ ու նուէր դառնամ, բոյ-բուսաթիդ մատաղ լինեմ, ինչպէս դու քեզ զոհ ու մատաղ արիր տառապած հայրենի հողին։

Դու չընկար, ո՞վ է ասում, թէ դու ընկել ես, ասողի լեզուն չորա-նայ եւ աչքը քոռանայ։ դու մահացար կանգնած, ինչպէս ծառերն են մահանում՝ իրենց խէժ արիւնը մարդկանց անմնացորդ տալուց յետոյ։ Դու կանգնած էլ պիտի յաւերժես, դատապարտուած ես այդպէս ապրելու երկրորդ կեանքում, որ, գիտե՞ս, հիմնականն է եւ առաջինը, դա քո միակ դիրքն է այստուհետ... մեր պաշտելի լերան պէս բարձր ու վսեմ... իմացիր, բոլորիս սրտի աչքերը քեզ են ուղղուած, քեզ են սիրում ու կարօտում եւ հպարտօրէն մղկտում են քեզ համար։

Դու, ի հարկէ, դու ես, քո անկրկնելի դէմքով, ահա այս պաշտելի հօր ու մօր զաւակը, Հայնդ՝ միայն քոնը, ժպիտդ ու ցասումդ՝ միայն քոնը, սէրդ՝ միայն քոնը... բայց դու աւելի նման ես ոչ թէ քեզ, այլ ուրիշներին, շատերի... որոնց լաւագոյն մասը ժողովուրդ է կոչւում...։ Դու ժողովուրդն ես, քո անուան արտասանութեամբ՝ նրա անունը, նրա ճանապարհը, եւ կեանքն ու բախտը նրա...։ Նրա հոգին ու ոգին, որն անկերպարանք էութիւն է՝ ինչպէս պաղ ջրի մէջ լուծուած մեղրը, մինչեւ իսկ ոչ հազար ու բիւր ծաղիկներից, այլ ժողովրդի սրտից քամ-ուած։

Դու ապրեցիր քո կարճ կեանքը...։ Դա ընդամէնը փաստ է եւ փաստագրութիւն...

Քո այդ ակնթարթը չնչում է ժողովրդի տխուր-հերոսական երգով, ուրեմն նաեւ պատմութիւնն ես՝ փաստից շատ ու շատ աւելի բարձր ու լուսաւոր՝ անցեալը, մեր այս ներկան եւ գալիք օրը զուգակշռող մատենադարան։

Ես քեզ տեսնում եմ իբրեւ սեւ-մուխ ամպերում փայլատակող կայ-ծակ, թուր կեծակի, թրէ չանթ, չանթեղէն թուր, որ իջնում, մահաբեր ու լուսեղէն մոլեգնութեամբ իջնում հա՛ իջնում է վայրի, գորշ գայլ ու բորենիների, օձաբոյ ցեղերի վրայ։ Այս ես դու, դուրբան։ Այս-պէս պիտի խոսես ինձ հետ մի օր հայրենիքիդ մայրաքաղաքի գլխաւոր հրապարակից։ Դու ես մեր ազատութիւնը եւ դու ես մեր անկախութիւ-նը (Մեքենագիր)։

ՆՈՐԱՅՐ ԱԴԱԼԵԱՆ

Ի ՍԷՐ ՅԻՍՈՒՍԻ

Ջոճուած ազատամարտիկների յիշատակին

Գարնան պէս կանաչ ձեր հագուկապով,
Ձեր ջոկատների անունով տարբեր,
Երբ խուժում էիք խրոխտ կեցուածքով
Գրողների տան իմ սենեակը ցուրտ,
Մի հզօր ուժ էր գրկում ինձ վերուստ,
Որ պաշտպան ունեմ եւ հողերիս տէր...
Ձեր աչքերի մէջ՝ քնքշանքի կրակ,
Սրտերում հազար տենչեր ու կարօտ,
Դուք մի տաք խօսքով, բառով մտերիմ
Համբոյրներ էիք յղում մեր կանանց
Ու աղջիկներին,
Որ բրդէ նախշուն գուլպաներ գործել,
Թոթրոտուն տողեր դրել ծալքերում,
Ձեզ մաղթում էին բարի վերադարձ...
Դուք ամէն մէկդ մի-մի տան հրաց,
Դուք ամէն մէկդ՝ մի օջախի սիւն...

Բայց ո՞ւր էք հիմա,
Ինչպէս հաւատամ, որ ետ չէք գալու...
Ա՜խ, թւում է ինձ,
Թէ՝ մի օր յանկարծ դուռս կը բացուի
Եւ առաջուայ պէս
Կը խուժէք ներէն,
Ու կատակներով, ձեր խենթ ծիծաղով,
Կը շերմացնէք իմ սենեակը ցուրտ,
Բայց, աւա՜ղ, չկաք,
Իմ կանաչ-կարմիր արքաներ կորած...

Մի՞թէ այս կեանքում հրաշքներ չկան,
Մի՞թէ յարութիւն չկայ երկրային,
Թէ՞, մեր օրերի հրաշքը միակ,
Դո՛ւք էք մնալու, իմ յաւից-յաւեր...

Ցանուն Արցախի ու ձեր մայր հողի
Նահատակուեցիք,
Եւ արքագործուած հոգիները ձեր,
Աստծոյ երկնագոյն խաչերը գրկած
Մեզ շշնջում են խորհուրդը յոյսի.
Թէ՝ աղօթեցէք, միշտ աղօթեցէք,
Քանզի սուրբ մի օր,
Մե՛նք ենք յաղթելու ի սէր Յիսուսի...

(Մեքենագիր) **ՄԵՏԱՔՍԻ**

ՆՈԹԵՐ

Պարտք կը զգանք արձանագրել, որ՝

Ներկայ բացառիկին առաջնահերթ նպատակը եղած է հերոս-նահատակներուն մասին մանրամասնութիւն մը աւելի հաղորդելու նախանձախնդրութիւնը։

Պատճառներէն մէկը այդ էր, ու միւսը՝ տեղի անձկութիւնը, որ որոշ յապաւումներ կատարուեցաւ գրութիւններուն խորհրդածութեանց բաժիններէն, մա՛նաւանդ՝ որ անոնց համարժէքներուն դժուար պիտի չըլլայ հանդիպիլ նոյն մտաւորականներուն կամ ուրիշներու ստորագրած տարբեր էջերու վրայ։

Կատարուած պրպտումներուն ընթացքին, հայրենի թէ արտասահմանի թերթերուն մէջ մեզի տրուեցաւ հանդիպիլ ներկայացուած շարք մը այլ հերոսներու, որոնք, լուսանկարներու չգոյութեան եւ կենսագրական գիծերու անբաւարարութեան հետեւանքով, դուրս մնացին ներկայ բացառիկէն։

Նոյնպէս, դուրս մնացին այն հերոսները, որոնք ինկան սոյն էջերուն կազմութենէն ետք։

Առ ի չգոյէ լստակ լուսանկարներու, հարկադրուեցանք տեղ տալ մամուլին մէջ երեւցած ոչ-այնքան մաքուր նմոյշներուն։

Տեղանուններու եւ նոր կնքուած սրբավայրերու պատկերներուն համար օգտուեցանք բարեկամներու անձնական ալպոմներէն։

Շահէն Մեղրեանին եւ Վիգէն Գրիգորեանին նուիրուած էջերուն առիթով յայտնուած նոթերը կրկնելով՝ յայտնենք, որ Արթուր Մկրտչեանի, Բերդաձորի Անդոյի եւ այլ հերոսներու մասին ստացած ենք այս բացառիկին մէջ չսեղմուող ծաւալուն գրութիւններ, զորս հերթով պիտի ներկայացնենք մեր յառաջիկայ համարներով։

Այս աշխատանքին սկսելու ատեն կը մտածէինք կենսագրական տեղեկութիւններուն ու բնութագրումներուն ընկերացնել նաեւ պաշտօնական մարմիններուն կողմէ տրուած մահագրները, մամուլին մէջ լոյս տեսած յու-

ղարկաւորութեանց թղթակցութիւններն ու հերոսներու շիրիմներու լուսանկարչական պատճէնները, բայց տեղի անձկութեան միեւնոյն պատճառով կարելի եղաւ մէկ-տեղուած նիւթերէն նմոյշներ տալ միայն:

Գրութեանց մէջ կարելի սահմաններու մէջ յարգուած են տառադարձութիւններու, կէտադրութիւններու, գլխագիր-ներու, մէջբերուած թեւաւոր խօսքերու ու բառական ձե-ւերու հեղինակային նախասիրութիւնները:

Մեր հետազօտութեանց ընթացքին հանդիպեցանք շփոթ ստեղծող կարգ մը տեղեկութիւններու ու յատուկ անուն-ներու, որոնցմէ երբեմն կրցանք խուսափիլ, եւ երբեմն՝ ոչ: Օրինակ, «Երկիր» օրաթերթի 30 Յունիս 1993 թը-ւակիր համարին մէջ Նանէ Վարդանեանի լոյս ընծայած **«Ազատութեան նուիրեալը»** *անուն գրութեան հետ, ի դէմս Զաքար Սլաի Աւանէսեանի տրուած է կոփա-մարտիկի մը նկարը, որ նոյն ամսաթիւն ու տարեթիւը կրող* **«Անդրադարձ»***ի 14րդ էջին վրայ ստորագրած Լիլիթ Սեդրակեանի գրութեան հետ ներկայացուած է* **«Մի նոր բռնցքամարտիկ՝ 17ամեայ Արթուր Սա-րիբեկեանը»***: Ստուգումը հնարաւոր չեղաւ, հետեւա-բար՝ վերապահեցինք նաեւ գրութիւնը:*

Ղարաբաղեան շարժման տարիներուն, կարգ մը դէմքեր ինկան մարտադաշտերէն հեռու, զոհ՝ անողոք հիւան-դութեանց, անհեթեթ արկածներու կամ մութ դաւերու: Կազմակերպչական ու մարտական ասպարէզներու մէջ նշանակալի վաստակ կուտակած ըլլալնուն շնորհիւ՝ ա-նոնք տեղ գտան հերոս-նահատակներուն նուիրուած այս բացառիկին մէջ:

Շնորհակալութիւն՝ Հայաստանի, Արցախի թէ Սփիւռքի մէջ ապրող **«Բագին»***ի բոլոր այն բարեկամներուն, որոնք այս կամ այն ձեւով ու չափով օգտակար հանդիսացան ներկայ ձեռնարկին:*

Շնորհակալութիւն մեր բոլորին կողմէ ու բոլորով սրտիւ մա՛նաւանդ այր եւ կին այն բոլոր յօդուածագիրներուն ու բանաստեղծներուն, որոնք վաղուան չձգեցին հերոս-նահատակներուն գրաւոր պսակներ հիւսելու նուիրական գործը եւ շուտափոյթ թուղթին յանձնեցին կենսագրա-կան ու բնութագրական այնպիսի էջեր, որոնք իրենց վաւերականութեամբ ու ողողուն ապրումներով անփոխա-րինելի են ու անփոխարինելի պիտի մնան ընդմիշտ...

ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿԸ

ԱԲԳԱՐԵԱՆ ԱՐՇԱԿ 270
ԱԲԳԱՐԵԱՆ ՖԱՐԻԴ (ԱԼԱՋ) 357
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԱԼԵՆ 197
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԳԱՌՆԻԿ 401
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՑԱՐՈՒԹԻՒՆ 99
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՋՈՒԱՆ 48
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՌՈՒԴԻԿ 114
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ 95
ԱԳՐԱՆԵԱՆ ԱՐԿԱԴԻԱ 107
ԱԶԳԱԼԴԵԱՆ ԼԵՈՆԻԴ 298
ԱԹԱԲԵԿԵԱՆ ՀԱՄԼԵՏ 162
ԱԹԱԲԵԿԵԱՆ ՆԵԼՍՈՆ 174
ԱԼԲԵՐՏ 327
ԱԼԻԽԱՆԵԱՆ ԱՐՏԱՒԱԶԴ 332
ԱՂԱԲԵԿԵԱՆ ԱՐԱՄ 330
ԱՂԱԲԵԿԵԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ 187
ԱՂԱՄԱԼԵԱՆ ՎԼԱԴԻԿ 107
ԱՂԱՋԱՆԵԱՆ ՍՊԱՐՏԱԿ 380
ԱՅՎԱԶԵԱՆ ԱՐՄԷՆ 240
ԱՅՎԱԶԵԱՆ ԱՒԵՏ 282
ԱՆՏՈՆԵԱՆ ԼԵՒՈՆ 110
ԱՉԻԳԿԷՕԶԵԱՆ ՍԻՄՈՆ 33
ԱՌԱՔԵԼԵԱՆ ԳԷՈՐԳ 16
ԱՌԱՔԵԼԵԱՆ ԳՈՒՐԳԷՆ 52
ԱՌԱՔԵԼԵԱՆ ԿԱՐԷՆ 282
ԱՌԱՔԵԼԵԱՆ ՎԼԱԴԻԿ 268
ԱՌՈՒՇԱՆԵԱՆ ԿԱՐԷՆ 88
ԱՌՈՒՇԱՆԵԱՆ ՎԱՂԻՆԱԿ 86
ԱՍԼԱՆԵԱՆ ԱՐՇԱՒԻՐ 59
ԱՍՐԵԱՆ ՄՈՒՐԱԴ 330
ԱՐԱԲՕ–ԱՆՈՒՇԱՒԱՆ 42
ԱՐԱՑԻԿ 327
ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ ԱՐՏԱԿ 209
ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ ՌԱՖԻԿ 96
ԱՐԹՈՒՐ 327
ԱՐԾՈՒԻԿ 26
ԱՐՄԷՆՅՕ 418
ԱՐՄԷՆ 180
ԱՐՄԷՆԵԱՆ ՍՏԵՊԱՆ 227
ԱՐՏԱԿ 227

ղարկաւորութեանց թղթակցութիւններն ու հերոսներու շիրիմներու լուսանկարչական պատճէնները, բայց տեղի անձկութեան միւնոյն պատճառով կարելի եղաւ մէկ-տեղուած նիւթերէն նմոյշներ տալ միայն:

Գրութեանց մէջ կարելի սահմաններու մէջ յարգուած են տառադարձութիւններու, կէտադրութիւններու, գլխագիր-ներու, մէջբերուած թեւաւոր խօսքերու ու բառական ձե-ւերու հեղինակային նախասիրութիւնները:

Մեր հետազօտութեանց ընթացքին հանդիպեցանք շփոթ ստեղծող կարգ մը տեղեկութիւններու ու յատուկ անուն-ներու, որոնցմէ երբեմն կրցանք խուսափիլ, եւ երբեմն՝ ոչ: Օրինակ, «Երկիր» օրաթերթի 30 Յունիս 1993 թը-ւակիր համարին մէջ Նանէ Վարդանեանի լոյս ընծայած **«Ազատութեան նուիրեալը»** *անուն գրութեան հետ, ի դէմս Զաքար Սլաի Աւանէսեանի տրուած է կոփա-մարտիկի մը նկարը, որ նոյն ամսաթիւն ու տարեթիւը կրող* **«Անդրադարձ»***ի 14րդ էջին վրայ ստորագրած Լիլիթ Սեդրակեանի գրութեան հետ ներկայացուած է* **«Մի նոր բռնցքամարտիկ՝ 17ամեայ Արթուր Սա-րիբեկեանը»***: Ստուգումը հնարաւոր չեղաւ, հետեւա-բար՝ վերապահեցինք նաեւ գրութիւնը:*

Զարաբաղեան շարժման տարիներուն, կարգ մը դէմքեր ինկան մարտադաշտերէն հեռու, զոհ՝ անողոք հիւանդ-ութեանց, անհեթեթ արկածներու կամ մութ դաւերու: Կազմակերպչական ու մարտական ասպարէզներու մէջ նշանակալի վաստակ կուտակած ըլլալնուն շնորհիւ՝ ա-նոնք տեղ գտան հերոս-նահատակներուն նուիրուած այս բացառիկին մէջ:

Շնորհակալութիւն՝ Հայաստանի, Արցախի թէ Սփիւռքի մէջ ապրող «Բագին»ի բոլոր այն բարեկամներուն, որոնք այս կամ այն ձեւով ու չափով օգտակար հանդիսացան ներկայ ձեռնարկին:

Շնորհակալութիւն մեր բոլորին կողմէ ու բոլորով սրտիւ մա՛նաւանդ այր եւ կին այն բոլոր յօդուածագիրներուն ու բանաստեղծներուն, որոնք վաղուան չձգեցին հերոս-նահատակներուն գրաւոր պսակներ հիւսելու նուիրական գործը եւ շուտափոյթ թուղթին յանձնեցին կենսագրա-կան ու բնութագրական այնպիսի էջեր, որոնք իրենց վաւերականութեամբ ու ողողուն ապրումներով անփոխա-րինելի են ու անփոխարինելի պիտի մնան ընդմիշտ...

ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿԸ

ԱԲԳԱՐԵԱՆ ԱՐՇԱԿ 270
ԱԲԳԱՐԵԱՆ ՖԱՐԻԴ (ՍԼԱՔ) 357
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԱԼԵՆ 197
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ԳԱՌՆԻԿ 401
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՑԱՐՈՒԹԻՒՆ 99
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՋԻՒԱՆ 48
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՌՈՒԴԻԿ 114
ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ 95
ԱԴՐԱՆԵԱՆ ԱՐԿԱԴԻԱ 107
ԱԶԳԱԼԴԵԱՆ ԼԵՈՆԻԴ 298
ԱԹԱԲԵԿԵԱՆ ՀԱՄԼԵՏ 162
ԱԹԱԲԵԿԵԱՆ ՆԵԼՍՈՆ 174
ԱԼԲԵՐՏ 327
ԱԼԻԽԱՆԵԱՆ ԱՐՏԱՒԱԶԴ 332
ԱՂԱԲԵԿԵԱՆ ԱՐԱՄ 330
ԱՂԱԲԵԿԵԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ 187
ԱՂԱՄԱԼԵԱՆ ՎԼԱԴԻԿ 107
ԱՂԱՋԱՆԵԱՆ ՍՊԱՐՏԱԿ 380
ԱՑՎԱՋԵԱՆ ԱՐՄԷՆ 240
ԱՑՎԱՋԵԱՆ ԱՒԵՏ 282
ԱՆՏՈՆԵԱՆ ԼԵՒՈՆ 110
ԱՋԻԳԿԷՕՋԵԱՆ ՍԻՄՈՆ 33
ԱՌԱՔԵԼԵԱՆ ԳԷՈՐԳ 16
ԱՌԱՔԵԼԵԱՆ ԳՈՒՐԳԷՆ 52
ԱՌԱՔԵԼԵԱՆ ԿԱՐԷՆ 282
ԱՌԱՔԵԼԵԱՆ ՎԼԱԴԻԿ 268
ԱՌՈՒՇԱՆԵԱՆ ԿԱՐԷՆ 88
ԱՌՈՒՇԱՆԵԱՆ ՎԱՂԻՆԱԿ 86
ԱՍԼԱՆԵԱՆ ԱՐՇԱՒԻՐ 59
ԱՍՐԵԱՆ ՄՈՒՐԱԴ 330
ԱՐԱԲՕ–ԱՆՈՒՇԱՒԱՆ 42
ԱՐԱՅԻԿ 327
ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ ԱՐՏԱԿ 209
ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ ՌԱՖԻԿ 98
ԱՐԹՈՒՐ 327
ԱՐԾՈՒԻԿ 26
ԱՐՄԷՆՀՕ 418
ԱՐՄԷՆ 180
ԱՐՄԷՆԵԱՆ ՍՏԵՓԱՆ 176
ԱՐՏԱԿ 227

ԱԻԱԳԵԱՆ ԱՐԱ (ԱՐԱՑԻԿ) 172
ԱԻԱԳԵԱՆ ԱՐՄԷՆ 160
ԱԻԱԳԵԱՆ ԱՐՄԷՆ 119
ԱԻԱՆՆԻՍԵԱՆ ԱՐԱՄ 290
ԱԻԱՆՆԻՍԵԱՆ ԳՈՒՐԳԷՆ (ԱԼԱԶԱՆ ԳՈՒԳՕ) 102
ԱԻԱՆՆԻՍԵԱՆ ՅԱԿՈԲ 282
ԱԻԵՏԻՍԵԱՆ ԱՐՏԱՒԱԶԴ 120
ԱԻԵՏՍԵԱՆ ԿԱՐԷՆ 14

ԲԱԲԱՑԵԱՆ ԱՐԻՍ (ՊԱՊ). 164
ԲԱԲԱՑԵԱՆ ՎԱՀՐԱՄ (ՎԱԳՐ). 333
ԲԱԲԱՋԱՆԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ. 398
ԲԱԴԱԼԵԱՆ ՍԱՐԳԻՍ. 238
ԲԱԴԱԼԵԱՆ ՍՈՒՐԷՆ. 306
ԲԱՋԻԿԵԱՆ ՌՈՒԲԷՆ. 9
ԲԱԼԱՅԵԱՆ ՌՈՒԲԷՆ. 313
ԲԱԽՇԵԱՆ ՎԱՐԴԱՆ. 70
ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԱՇՈՏ. 282
ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԳԱԼՈՒՍՏ. 244
ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ԳԱՐԻԿ. 282
ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ. 328
ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ՍԱՄՈՒԷԼ. 343
ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ՍՏԵՓԱՆ. 220
ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ ՎԱՀԷ. 360
ԲԱՂՐԵԱՆ ԳԱՐՍԵՒԱՆ. 190
ԲԵԳԼԱՐԵԱՆ ՍԱՆԱՍԱՐ (ՍԱՆՕ). 386
ԲԵԺԱՆԵԱՆ ԳՐԻԳՈՐ. 228
ԲԵՐԴԱՋՈՐԻ ՆՈՐԱՑՐ. 12
ԲԵՐԴԱՋՈՐԻ ՍՏԵՓԱՆ. 20
ԲԷՐԲԷՐԵԱՆ ՆԵՐՍԷՍ. 45
ԲՈՐԻԿ. 175

ԳԱԼՍՏԵԱՆ ՆԻԿՈԼ 294
ԳԱԼՍՏԵԱՆ ՆՈՐԱՑՐ 191
ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՐՏԱՒԱԶԴ 95
ԳԱՍՊԱՐԵԱՆ ՆԵԼՍՈՆ 112
ԳԷՈՐԳԵԱՆ ԳԱՌՆԻԿ 320
ԳԷՈՐԳԵԱՆ ԵՈՒՐԻ 149
ԳԷՈՐԳԵԱՆ ԿԱՐԻՆԷ 354
ԳԷՈՐԳԵԱՆ ՌՈԲԵՐՏ 214
ԳԷՈՐԳԵԱՆ ՍԱՄՈՒԷԼ 78
ԳՈՐԳԻՍԵԱՆ ՄՈՎՍԷՍ 5
ԳՐԻԳՈՐԵԱՆ ԱՐՇԱԿ 260

ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳԱԳԻԿ 76
ԳՐԻԳՈՐԵԱՆ ԳՐԻԳՈՐ 350
ԳՐԻԳՈՐԵԱՆ ԼՈՐԻՍ 259
ԳՐԻԳՈՐԵԱՆ ԿԻՄ 255
ԳՐԻԳՈՐԵԱՆ ՄԵՀՐԱԲ 245
ԳՐԻԳՈՐԵԱՆ ՄԻՇԱ 330
ԳՐԻԳՈՐԵԱՆ ՄԽԻԹԱՐ 283
ԳՐԻԳՈՐԵԱՆ ՆՈՐԻԿ 197
ԳՐԻԳՈՐԵԱՆ ՎԻԳԷՆ 410

ԴԱՆԻԷԼԵԱՆ ԱԼԻՔ 141
ԴԱՆԻԷԼԵԱՆ ԱՐԹՈՒՐ 280
ԴԱՆԻԷԼԵԱՆ ԳԱՌՆԻԿ 235
ԴԱՆԻԷԼԵԱՆ ՋԱՐՋԱՆԴ (ՀՐԱՉ) 47
ԴԱՆԻԷԼԵԱՆ ՆՈՐԱՑՐ 300
ԴԱՐԲԻՆԵԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ (ԲԵՆՕ) 142
ԴՈՒՐԻՆԵԱՆ ԿԱՐԷՆ 82

ԵԱՐԻՆՋԵԱՆ ԱՇՈՏ 103
ԵՂԻԱԶԱՐԵԱՆ ՍՈՒՐԷՆ 99
ԵՈՒՐԻԿ 326
ԵՍԱՅԵԱՆ ԿԱՄՕ 219
ԵՍԱՅԵԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ 272
ԵՐԻՑԵԱՆ ԱՐՄԷՆ (ԵՐՕ) 171

ԶԱՋԱՐԵԱՆ ԳԵՂԱՄ 230
ԶԱՋԱՐԵԱՆ ՎԱՂԻՆԱԿ 18
ԶԱՋԱՐԵԱՆ ՎԻԳԷՆ 126
ԶԷՅՆԱԼԵԱՆ ԳԵՈՐԳ 6

ԷԴՕ (ԱՐՋ) 161
ԷԼԲԱԿԵԱՆ ԱՐԱՐԱՏ 104

ԹԱԴԵՈՍԵԱՆ ՍԱՇԱ 232
ԹԱՆԳԱՄԵԱՆ ՄԵԼՍԻԿ 262
ԹՈՎՄԱՍԵԱՆ ԳԵՈՐԳ 198
ԹՈՎՄԱՍԵԱՆ ՀՐԱՆՏ 156
ԹՈՎՄԱՍԵԱՆ ՏԻԳՐԱՆ 99
ԹՈՒՄԱՍԵԱՆ ՄԽԻԹԱՐ 248

ԺԱՄՀԱՐԵԱՆ ՊԱՐԳԵՎ 308

ԻՇԽԱՆԵԱՆ ԱՐՄԷՆ 94
ԻՇԽԱՆԵԱՆ ԳԱԳԻԿ 95

ԽԱՉԱՏՐԵԱՆ ԱԼԵՔՍԱՆՏՐ (ՇՈՒՐԻԿ) 201
ԽԱՉԱՏՐԵԱՆ ԱՇՈՏ 45
ԽԱՉԱՏՐԵԱՆ ԱՇՈՏ (ՎԱՂԱՐՇԱԿ) 213
ԽԱՉԱՏՐԵԱՆ ԱՐՏԱԿ 352
ԽԱՉԱՏՐԵԱՆ ԳԱՐԻԿ 381
ԽԱՉԱՏՐԵԱՆ ԼԵՈՎԱ 378
ԽԱՉԱՏՐԵԱՆ ԼԵՒՈՆ 381
ԽԱՉԱՏՐԵԱՆ ԿԱՐԷՆ 325
ԽԱՉԱՏՐԵԱՆ ՑՈՎԱԿԻՄ 392
ԽԱՉԱՏՐԵԱՆ ՆՈՐԻԿ 154
ԽԱՉԱՏՐԵԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ 219
ԽԱՉԱՏՐԵԱՆ ՖԵԼԻՔՍ (ՃՈՒՏՕ) 344
ԽԱՉԻԿԵԱՆ ԷԴՈՒԱՐԴ 235
ԽԵՀՈՅԵԱՆ ԵԱՊՈՆ 188
ԽԻԹԱՐԵԱՆ ՍԱՐԳԻՍ 54
ԽԼՂԱԹԵԱՆ ԳԵՂԱՄ 108

ԾԱՏՐԵԱՆ ԳՈՒՐԳԷՆ 93

ԿԱՄՕ 291
ԿԱՄՕ 327
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԱՐԹՈՒՐ 24
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՀՐԱՅՐ 340
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՍԱՄՈՒԷԼ 328
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՎԱՉԻԿ 106
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ 158
ԿԱՐԷՆ 291
ԿԱՐՕՏ 261
ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ՀՐԱՅՐ 234
ԿՈԹՈՒԼԵԱՆ ԱՐՄԷՆ 253
ԿՈՍԵԱՆ ՌՈՄԱ 107
ԿՐՊԷԵԱՆ ԹԱԹՈՒԼ 28

ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ ԱՇՈՏ 287
ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ԱՐԹՈՒՐ 150
ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ՆԻԿՈԼԱՅ 48
ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ՍԵՐԳ 194
ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ՍԼԱՒԻԿ 200
ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ ՎԼԱԴԻԿ 282
ՀԱՅՐԵԱՆ ԱՐՄԷՆ 408
ՀԱՅՐԻԵԱՆ ՍԵՈՄԱ 94
ՀԱՍՐԱԹԵԱՆ ԻԳՈՐ 132
ՀԱՍՐԱԹԵԱՆ ՅՈՎՍԷՓ 256
ՀԵՐՄԻՆԷ 274
ՀՐԱՉԻԿ 322

ՂԱՐԱԲԱՂՅԵԱՆ ԷԴՈՒԱՐԴ 246
ՂԱՐԻԲԵԱՆ ԱՐԹՈՒՐ 239
ՂՈՒԼԵԱՆ ԱՇՈՏ (ՌԵԿՈՐ) 202
ՂՈՒԿԱՍԵԱՆ ՎԱՀԱՆ 255
ՂՈՒՆԵԱՆ ԱՐՄԷՆ 38

ՄԱԹԵՒՈՍԵԱՆ ԳԱԳԻԿ 406
ՄԱԹԵՒՈՍԵԱՆ ՍԱՐԳԻՍ 44
ՄԱԿԱՐԵԱՆ ԱՐՄԷՆ 99
ՄԱԿԵԱՆ ԱՆԱՏՈԼԻ 107
ՄԱԿԵԱՆ ՍԱՐՕ 107
ՄԱԿԵԱՆ ՕԼԵԳ 107
ՄԱՂԱՔԵԱՆ ՄԻՀՐԱՆ (ԳՆԷԼ) 262
ՄԱՄԲՐԷԵԱՆ ՊԱՒԼԻԿ 262
ՄԱՆԱՍԱՐԵԱՆ ՆՈՐԱՅՐ 92
ՄԱՌԷՆ 377
ՄԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐԱՅՐ 318
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ԱՐԱՄ 309
ՄԵԺԼՈՒՄԵԱՆ ԱՐԱՐԱՏ 151
ՄԵԼՔՈՆԵԱՆ ՄՈՆԹԷ (ԱԻՕ) 360
ՄԵՂՐԵԱՆ ՇԱՀԷՆ 345
ՄԵՂՐԵԱՆ ԱՐԹՈՒՐ 17
ՄԵՍՐՈՊԵԱՆ ԱՐԹՈՒՐ 122
ՄԻՆԱՍԵԱՆ ԱՐՄԱՒԻՐ (ԱԼԵՈՇԱ) 384
ՄԻՆԱՍԵԱՆ ԱՂՈՒԱՆ 41
ՄԻՆԱՍԵԱՆ ՀԱՄԼԵՏ 288
ՄԻՍԱԿԵԱՆ ԱՐՄԷՆ 254
ՄԻՐԶՈՅԵԱՆ ՇԱՀԷՆ 109
ՄԻՐԶՈՅԵԱՆ ՍԱՐԳԻՍ 416
ՄԻՐԶՈՅԵԱՆ ՍՄԲԱՏ 416

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԳԱԳԻԿ 245
ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԳՐԻՇԱ 87
ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԴԱՒԻԹ 100
ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԵՍՐՈՊ 264
ՄԽՈՅԵԱՆ ՄՈՒՇԵՂ (ՄԻՇԻԿ) 51
ՄԿՐՏՉԵԱՆ ԱՐԹՈՒՐ 116
ՄԿՐՏՉԵԱՆ ԱՐՄԷՆ 131
ՄԿՐՏՉԵԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ 236
ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ ԿԱՐԷՆ 99
ՄՆԱՑԵԱՆ ԱՐԱՄ 336
ՄՆԱՑԵԱՆ ՀՐԱՆՏ 307
ՄՆԱՑԵԱՆ ՌԱԼԻՊ 107
ՄՈՍԻԵԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ 370
ՄՈՒՐԱԴԵԱՆ ՍԱՄՈՒԷԼ 250

ՅԱԿՈԲԵԱՆ ԱՇՈՏ 144
ՅԱԿՈԲԵԱՆ ԱՐԾՐՈՒՆ 244
ՅԱԿՈԲԵԱՆ ԺՈՐԻԿ 99
ՅԱԿՈԲԵԱՆ ԿՈԼԻԱ 298
ՅԱԿՈԲԵԱՆ ՀԱՄԼԵՏ 246
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱՐԱ 317
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱՐԱ 341
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ (ԲԵՐԴԱՋՈՐԻ ԱՆԴՕ) 208
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԱՆՈՒՇԱՒԱՆ 90
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԳՐԻԳՈՐ (ՆՇԱՆ) 168
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՍԱՄՈՒԷԼ 15
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՍԱՐԳԻՍ 336
ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՄԱՅԻՍ 46
ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՄՈՒՐԱԴ 169
ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ 178
ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՌՈՒԼԱՆ 107
ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՍԱՄՈՒԷԼ 231
ՅՈՎՍԷՓԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ 282
ՅՈՒՆԱՆԵԱՆ ԱՐՄԷՆ 115
ՅՈՒՆԱՆԵԱՆ ՅՈՒՆԱՆ 243

ՆԱՋԱՐԷԹԵԱՆ ՎԱԼԵՐԻ 47
ՆԵՐՍԷՍԵԱՆ ՀԱՅԿ 388
ՆԻԿՈՂՈՍԵԱՆ ԱՐՄԷՆ 153

ՇԱՀԲԱԶԵԱՆ ԽԱԺԱԿ 404
ՇԱՀԲԱԶԵԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ 390

ՇԱՀՄՈՒՐԱԴԵԱՆ ՍԱՄՈՒԷԼ 222
ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ 22
ՇԱՀՈՒՄԵԱՆՑԻ ՖՈՒՐՄԱՆ 226
ՇԻՆԴԵԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ 119
ՇԻՐԻՆԵԱՆ ՎԻԳԷՆ 84

ՈՍԿԱՆԵԱՆ ՎՈՒՐԳ 337
ՈՒԹՈՒՄԵԱՆ ՄԽԻԹԱՐ 358

ՉԻԼԻՆԳԱՐԵԱՆ ԱՐԹՈՒՐ 99

ՊԱՊԻԿԵԱՆ ՎԱՐԴԱՆ 8
ՊԵՊԻՍԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ 68
ՊԵՏՐՈՍԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ 49
ՊԵՏՐՈՍԵԱՆ ԱՇՈՏ 231
ՊԵՏՐՈՍԵԱՆ ԱՐՄԷՆ 402
ՊԵՏՐՈՍԵԱՆ ԱՐՇԱԼՈՅՍ 193
ՊԵՏՐՈՍԵԱՆ ԳԵՆԱ 282
ՊԵՏՐՈՍԵԱՆ ՄՈՎՍԷՍ 402
ՊԵՏՐՈՍԵԱՆ ՎԱԶԳԷՆ 331
ՊՕՂՈՍԵԱՆ ԳԱՌՆԻԿ 252

ՋԱՀԱՆԳԻՐԵԱՆ ՍԱՄՈՒԷԼ 182
ՋԱԽԱԴԵԱՆ ՍԵՐԳԷՅ 316
ՋՈՒԼՀԱԺԵԱՆ ՄՀԵՐ 374

ՌՈՍՏՈՄԵԱՆ ՎԱՉԷ 73

ՍԱՀԱԿԵԱՆ ԱՐԱՄԱՅԻՍ 11
ՍԱՀԱԿԵԱՆ ՄԱՆՈՒԿ 302
ՍԱՂԵԱՆ ԱՐՄԷՆ 10
ՍԱՂՈՒՄԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ 310
ՍԱՄՈՒԷԼ 327
ՍԱՄՈՒԷԼ 284
ՍԱՐԱՊԵԱՆ ԴԱՒԻԹ (ԴԵՒ) 107
ՍԱՐԳՍԵԱՆ ԺՈՐԱ 296
ՍԱՐԳՍԵԱՆ ԼԵՐՄԵՆՏ (ՍՕՍ) 322
ՍԱՐԳՍԵԱՆ ՀԱՄԼԵՏ 66
ՍԱՐԳՍԵԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ 66

ՍԱՐԳՍԵԱՆ ՆՈՐԱՑՐ 245
ՍԱՐԳՍԵԱՆ ՍՏԵՓԱՆ . . . . . .
3 3 1
ՍԱՐԳՍԵԱՆ ՏԻԳՐԱՆ 64
ՍԱՐԻԲԵԿԵԱՆ ԿԱՄՕ 99
ՍԵՄԵՐՋԵԱՆ ԱՐԿԱԴԻ 304
ՍԵՒԵԱՆ ԿԱՐԷՆ 282
ՍԻՄՈՆԵԱՆ ՌՈՄԱ 94
ՍԷՑՐԱՆ 291
ՍԼԱՒԻԿ 278
ՍՄԲԱՏԵԱՆ ԱՆԱՆԻԱ 99
ՍՏԵՓԱՆԵԱՆ ՎԱՐԴԱՆ (ԴՈՒՇՄԱՆ) 170

ՎԱՀԱՆԵԱՆ ՎԱՐԴԱՆ 336
ՎԱՐԴԱՆԵԱՆ ԱԹԱԲԵԿ (ԱԹՕ) 56, 63
ՎԱՐԴԱՆԵԱՆ ԱՐԱ 183
ՎԱՐԴԱՆԵԱՆ ԱՐՄԷՆ 146
ՎԱՐԴԵՐԵՍԵԱՆ ԱՂԱՍԻ 400
ՎԵՐԴԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ 185

ՏԷՐՏԷՐԵԱՆ ՎԱՐԴԱՆ 50

ՔԱԼԱՇԵԱՆ ՅՈՎԻԿ (ՈՒՋԲԵԿ) 276
ՔԷՇԻՇԵԱՆ ՄԱՆՈՒԷԼ 321

ՕԼԵԳ 327
ՕՀԱՆԵԱՆ ԱՐՏԱԿ 399
ՕՀԱՆԵԱՆ ԱՒԵՏԻՍ 414
ՕՀԱՆԵԱՆ ԼԵՒՈՆ 314
ՕՐԴԵԱՆ ՋԱՒԷՆ 312

ՆԿԱՐՆԵՐՈՒ ՑԱՆԿ

ՄԵՂՐԻ 14
ԲԵՐԴԱՔՈՐԻ ՀԻՆ ՇԷՆ ԳԻՒՂԸ 21
ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ՑՈՒՇԱՐՔԱՆԸ 26
ԳԵՏԱՇԷՆ 31
ՔԱՐՏԷՍ 43
ՄԱՆԱՇԻԴ 53
ԲՈՒՔԼՈՒ 55
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 83
ՔԱՐԻՆՏԱԿ 92
ԿՐԿԺԱՆ 97
ԳԻՒԼԻՍՏԱՆԻ ԲԵՐԴԱՄՐՈՑԸ 105
ԳԻՒԼԻՍՏԱՆ ԳԻՒՂԸ 111
ՖԻՔՐՈՒԼԻ 113
ՇՈՒՇԻ 121
ԳԾԱՆԿԱՐ 124
ՎԻԳԷՆ ՔԱՔԱՐԵԱՆԻ ՑՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ 128
ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ՇՐՋԱՆ – ԵՐԵՔ ՄԱՆԿՈՒՆՔ ՎԱՆՔԸ 157
ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ՀՐԱՍԱՅԼ 163
ԱՇՈՏ ՂՈՒԼԵԱՆԻ (ԲԵԿՈՐ) ՇԻՐԻՄԸ 205
ԽՈՋԱԼՈՒ. 217
ԲՈՒՔԼՈՒԽ. 227
ՄԱՐՏՈՒՆԻ. 237
ԼԱՉԻՆԸ՝ ԳՈՐԻՍԷՆ ԴԻՏՈՒԱԾ 242
ԼԱՉԻՆԻ ՄՐՐԻԿ ԳԻՒՂԷՆ ՏԵՍԱՐԱՆ ՄԸ 247
ՏԵՍԱՐԱՆ ՄԸ ԼԱՉԻՆԷՆ 249
ՂԱՓԱՆ 251
ԼԱՉԻՆԻ ՄԷՋ ՎԱՐԱՋԿՈՄ ԵԿԵՂԵՑԻՆ 269
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 279
ՀԱԳՐՈՒԹ 286
ՇՈՒՇԻ 299
ՄԱՆԱՇԻԴ 303
ՔԱՐՏԷՍ 311
ԼԱՉԻՆ 315
ԳԵՏԱՇԷՆ 329
ՎՈՒՐԳԻ ԹԱՂՈՒՄԸ 338
ՍԻՍԻԱՆ 385
ԼԱՉԻՆ 391
ԱՍԿԵՐԱՆ 395
ՇԱՀՈՒՄԵԱՆ 407
ԹՈՐԴԱՆ 409
ՄԱՐՏԱԿԵՐՏ 415
ՔԱՐՏԷՍ 417

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

4.—ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿ	Երգ (Մ. Գորգիսեանի յիշատակին)
27.—ՌԱՋՄԻԿ ԳԱԼՍՏԵԱՆ	Ազատամարտիկ Արթուր Կարապետեանի յիշատակին
29.—ԳՈՒԱՆ ՀԱՄԱՋԱՍՊ	Թալինցի Թաթուլ
30.—ՌԱՋՄԻԿ ԳԱԼՍՏԵԱՆ	Սիրելի ուսուցիչ Թաթուլ Կրպէեանի յիշատակին
32.—ԳԱՌՆԻԿ ԱՐՍԷՆԵԱՆ	Ազատամարտիկներին
36.—ՎԱՀՐԱՄ ԹԱԹԻԿԵԱՆ	Տայ Աստուած
63.—ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿ	Քաջ Ֆիդայիներ
82.—ԿԱՐԷՆ ԴՈՒՐԻՆԵԱՆ	Հերոսի մահով
82.— » »	Ծնուած օրուանից
121.—ՌԱՋՄԻԿ ԴԱՒՈՅԵԱՆ	Թագուհի մայր Շուշի
124.—ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ	Եռագոյնը Շուշուայ բերդին
127.—ՍԻՓԱՆ ՇԻՐԱԶ	Հաւատարմութիւն
130.—ՆՈՐԱՅՐ ՂԱՋԱՐԵԱՆ	Շուշի
138.—ՍՈՒՍ. ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ	Եղերերգ
140.—ՍՈԿՐԱՏ ԽԱՆԵԱՆ	Տեսիլք
145.—ԲՈՐԻՍ ՆԱՐԻՄԱՆԵԱՆ	Ա. Յակոբեանի անմահ յիշատակին
147.—ՄԱՐՏՈՒՆ ԱՍԱՍԵԱՆ	Մենախօսութիւն անմահութեան ճանապարհին
155.—ԳՐԻՇԱ ՂՈՒԼԵԱՆ	Անմահութիւն
166.—ԳԱՅԵԱՆԷ ՓԱՅՏԵԱՆ	Յիշենք նրան
166.—ՅԱՍՄԻԿ ԲԱԲԱՅԵԱՆ	Հայեացք
196.—ՍԵՐԺ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ	Մուսայիս
208.—ՎԱՀԱԳՆ ԴԱՒԹԵԱՆ	Շատ չեղա՞ւ, Տէ՛ր...
210.—ԱՆԴ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ	Կանչ նահատակաց
225.—ԳՈՒՐԳԷՆ ԳԱԲՐԻԷԼԵԱՆ	Սամուէլ
267.—ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐԵԱՆ	Ես եմ արքան
275.—ԱՆԴՐԱՆԻԿ ՏԷՐՏԷՐԵԱՆ	Յիշատակի խաչքար
293.—ՍԱՄՈՒԷԼ ԽԱՉԻԿԵԱՆ	Լէոնիդ Ազգալդեանի անմահ յիշատակին
335.—ՀԱՅՈՒՀԻ	Յիշատակ
339.—ՍԱՀՄԵԴ ԳՐԻԳՈՐԵԱՆ	Ընկերոջս
347.—ՀՐԱՉ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	Ոգեկոչում
349.—ՎԱՐԱՆԴ	Գիւլիստանի արծիւը
369.—ՄԿՐՏԻՉ ՄԿՐՏՉԵԱՆ	Մոնթէ Մելքոնեանի յիշատակին
373.—Կ. ԲԱՍԵՆՅԻ	Մեր ուժը
376.—ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿ	Ախպէրս ու ես
394.—ԱՐՄԱՆՏ	Դուք...
404.—ԱՆՆԱ ԵՐԵՄԵԱՆ	Երկու Մովսէս
419.—ՆՈՐԱՅՐ ԱԴԱԼԵԱՆ	Անմահութեան յուշարձանի էսքիզ
420.—ՄԵՏԱՔՍԷ	Ի սէր Յիսուսի

Հայրենի-Արցախ Սարգսեանի հայրը՝ Մարտիրոս Սարգսեանը. ասելիք ունի նաեւ Եռաբլուրի մասին:

—Մինչ գերեզմանոցների մասին ասելիք չունեմ, բայց այստեղ՝ Եռաբլուրում, պէտք է հաւասարութիւն լինի: Ում հարազատները հարուստ ու կարող մարդիկ են, շքեղ ու հոյակերտ շիրմաքարեր են կանգնեցրել: Ով թողել է միայն ծեր ծնողներին ու որբ երեխաներին, գերազմանն անշուք է: Կը ցանկանայի, որ մեր կառավարութիւնը մի միասնական ձեւ մշակէր, բոլորի վրայ տեղադրէր միանման ու հաւասար շիրմաքարեր: Չէ որ նրանք, անկախ քաջագործութիւնների ու կարողութիւնների չափից, նուիրուել են հաւասարապէս ու ամէն ինչ տուել հայրենիքի համար: Այդպէս էլ պէտք է վարուի հայրենիքը ու խտրութիւն չունի նրանց միջեւ»:

Եռաբլուրի ձեւաւորման համար պէտք է մրցանակաբաշխութիւն յայտարարուի, որին մասնակցեն թէ՛ հայրենիքի, թէ՛ Ստիւռքի ճարտարապետներն ու քանդակագործները: Չէ որ այստեղ են ամփոփուած նոր Աւարայրի ու նոր Սարդարապատի հերոսների աճիւնները (Մեքենագիր):

ՄԱՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Տարեկան բաժնեգին՝
40 ամերիկեան տոլար

Հատավաճառ՝
Պայմանագրային

باكين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية

المدير المسؤول

السيد ارتين كارنيك قزانجيان

•

PAKINE

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

•

ԲԱԳԻՆ

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄՆԱՊԵԱՆ

Խմբագրութեան անդամ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հացէ՝

Centre Culturel SHAGHZOYAN
Bourdj Hammoud — Liban